3. Morgen Witzel, Management from the Masters: From Confucius to Warren Buffett Twenty Timeless Principles for Business, 2014:
4. Mickey W. Mantle & Ron Lichty, Managing the Unmanageable: Rules, Tools, and Insights for Managing Software People and Teams, 2012:
5. Urwick, L. F., "The Manager's Span of Control" in the May-June 1956 issue of the Harvard Business Review, pp. 39-47:
6. <https://asue.am/am/asue/asue-structure>
7. <https://www.economicdiscussion.net/organisational-structure/functional-organisational-structure/31595>
8. Harold Koontz & Heinz Weihrich, Essentials of Management, 2009:
9. Daniel A. Wren & Arthur G. Bedeian, The Evolution of Management Thought, 2020:
10. P N P & Reddy Tripathi, Principles of Management, 2005:
11. Gene Burton Manab Thakur, Management Today: Principles and Practice, 1998:
12. Bernard M. Bass & Ruth Bass, The Bass Handbook of Leadership: Theory Reseach & Managerial Applications, 2008:
13. R. C. Agrawal & Sanjay Gupta, Management Principles and Applications, 2020:
14. Eugene L. Magad & John M. Amos, Total Materials Management: Achieving Maximum Profits Through Materials/ Logistics Operations, 2013:
15. N. S. Gupta & Alka Gupta, Management Principles, Practices and Techniques, 1992:

16. Parag Divan, Management Principles and Practices, 2011:
17. K Anbuvelan, Principles of Management, 2007:
18. Յ. Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ, Մենեջմենթ, 2016:
19. <https://www.businessmanagementideas.com/management/fundamentals-of-organising/span-of-management-meaning-factors-and-theory/4877>

### СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ НОРМЫ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ НА ПРИМЕРЕ НЕКОТОРЫХ СТРУКТУРНЫХ ПОДРАЗДЕЛЕНИЙ АГЭУ

**Аревик Оганесян**

АГЭУ, кафедра Менеджмента, к.э.н. доцент

**Арамаис Симонян**

АГЭУ, факультета Менеджмента, студент

Создавая любую организацию, необходимо четко определить ее организационную структуру и норму управления. Данная статья направлена раскрыть сущность нормы управляемости и влияющие на нее факторы. Наилучшая версия нормы корпоративного управления была спорным вопросом, но теоретик менеджмента Грейкунас предложил математическую формулу для ее расчета, которая дает количественную картину возможных коммуникаций между руководителем и его подчиненными. Мы изучили некоторые структурные подразделения АГЭУ, чтобы понять ситуацию с точки зрения нормы управления.

**Ключевые слова:** Организация, организационная структура, норма управляемости, отношения руководитель-подчиненный, АГЭУ

### THE CURRENT STATE OF THE SPAN OF MANAGEMENT BY THE EXAMPLE OF SOME STRUCTURAL SUBDIVISIONS OF ASUE

**Arevik Hovhannisyan**

ASUE, Chair of Management, PhD in Economics, Associate Professor

**Aramayis Simonyan**

ASUE, Department of Management, Student

When establishing any organization, it is necessary to clearly define its organizational structure and span of management. The article aims to reveal the essence of the span of management and the factors influencing it. The best version of the span of management has continuously been subject to debate, but management theorist Graicunas has proposed a mathematical formula for calculating it, which provides a quantitative picture of the possible communications of managers and subordinates. We have studied some structural subdivisions of ASUE to understand the situation there in terms of the span of management.

**Keywords:** Organizing, organizational structure, span of management, manager-subordinate relationships, ASUE

*Տրվել է պաշարության՝ 12.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 05.11.2020թ.*

---

## MANAGERAL ASPECTS OF BLOCKCHAIN AND SMART CONTRACTS IN SUPPLY CHAINS

**Hamidreza Mahjoub**

*EU, Chair of Management, Researcher  
mahjub@gmail.com, +374 93 914873*

*Blockchain can be used as an effective tool to facilitate managerial operations and decision making. For this reason, smart contracts and decentralized ledger technology are the main parts of realization of this application of blockchain. As Business Process and Business Rules Systems are used inside an organization to automate managerial operations and decision making, blockchain do these functions beyond the scope of one organization by decentralized autonomous organizations (DAO). This is possible due to the global scope of DLT, which make the access to the same data by all beneficiary organizations. Despite decentralized and trustless property of smart contract which is its inner property, digital ledger does not have this property intrinsically. This cause the researcher to find solutions to give this property to Oracles who feed data into smart contracts. By these new method of data provision, the whole DAO and necessary data system will be trustless and secure and benefits from all properties of blockchain technology. Realizations of decentralized autonomous organizations and elimination of physical managers hugely reduce managerial costs and increase organizations efficiency and opens the doors to the future of interconnected world of internet of things.*

**Keywords:** *Blockchain, Smart Contract, Business Process Management System, Business Rules Management System, Decentralized Autonomous Organizations, Decentralized Ledger Technology*

### **Introduction**

Using the technology to replace human operations and decision-making process and delegating those operations to machines were the fundamentals of digital transformation era. With the growth of transactions between corporations and globalization of manufacturing and production,

the need of efficient interconnection between organizations becomes a vital necessity in supply chain managements. Despite different efforts and creation of standards in this field, there are still several issues to implement efficient and easy communication process between different types of organizations in a supply chain. Blockchain has appropriate proposal to address these issues and introduce new type of business management process and decision making system among a group of different types of organizations in a supply chain.

### **Research results**

What we want to inspect in this article is the usage of blockchain in supply chain management from managerial point of view and management functions. In order to analyze the features that blockchain offers in management field, we consider supply chain, as one of the biggest structures that have a number of subunits. Each of these subunits can be behaved as an independent organization that has its own management system and have connections to other organizations inside the supply chain.


Blockchain technology provides two major functions in managerial field, information provision and operation automation. The first one is provision of secured information which is easily accessible to everyone connected to blockchain. This information is trustable under the structure of decentralized ledger technology, DLT. The second feature of blockchain in management process is provision of automatic organization, process management and rule management. This feature of blockchain helps running business processes and decision making without the need of humankind managers. This type of organization which runs without any human intervention is named as decentralized autonomous organization, DAO. As Management Information Systems and digital transformation already exists and brings business process and business rules systems to management space, we want to see how exactly blockchain is different from these currently available technologies.

As an information system delivers information to control operations, decision making, problem analyzing and complex-subjects visualization in

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

different management levels and functions [1], its scope and functionality is commonly inside the organization. Information systems provides different level of services on different levels of management in organizations and different functions inside each level, as shown in figure 1.

**Figure 1: Different levels of Information System in Organizations [2]**



In each organizational level function, there are appropriate information systems to support managerial operations in that section. For example, in operational level, there are four different Transaction Processing Systems (TPS) that help operational managers in elementary and transactional

Because DLT can provide a common secure and trusted database between all organizations inside a supply chain, it is possible to have a global BPM/BRM system that governs organizing and decision making process of all parties related to that database. This global BPM/BRM will be identified as a smart contract. In this case, smart contract behaves each party in



## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

---

supply chain like as a subsystem and acts like a major program which each organization database looks like a local database for it. By the help of DLT, smart contract do decision making in each part of supply chain as a BRM system do inside a local organization. activities, each of them in one of sale, production, finance and human resource functions. The same way, there are four different information systems in each of managerial (MIS<sup>1</sup> and DSS<sup>2</sup>) and strategic (ESS<sup>3</sup>) levels [3]. At best case these information systems are interconnected to each other to create a comprehensive information system to help managers operations and decision making processes.

The simplest implementation of this system is when it get input information from organization internal operation related to the level and function of the system, process the information and create report to the related manager. In this case, the external factors like customers, suppliers, competitors, stakeholders and regulators are also interact with information system. Managers get report, use them in their operations or decision making and refine their business processes. The output of system will also be used as feedback to evaluate and reconcile information system input process. One step further than this methodology in information system is when with combination of other softwares and IT components, business operations and decision making becomes automatic, which results Business Process Management and Business Rules Management systems (BPM and BRM).

BPM and BRM systems are the systems that automate some or all part of the responsibilities, managers do with interaction with information systems. Business process and rules management have many advantages for organizations that help managers to achieve their goals and objectives. Figure 2 shows main benefits of these systems for organizations. These disciplines provide governance for organizations that model their business processes.

---

<sup>1</sup> Management Information System

<sup>2</sup> Decision Support System


<sup>3</sup> Executive Support System

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

When we see BMP and BRM as a big picture, they are nothing more than IT systems that work based on the organizational database. This means the scope of their operation is limited to the database they related to. Since organizations have rarely interconnected database, BPM/BRM can not act as an inter-organization or globally decision making or organizing blocks in management operations. What actually DLT provides in this scope is the provision of this inter-organizational or global database for the management systems that have many organizations involved within them to reach a common goal. Supply chains are such mechanism that have different types of organizations to reach the unique goal which is the production of a high quality product to satisfy consumers and brings benefits to supply chain partners.

More importantly, the equivalent of BPM for an organization in smart contract is identified as a decentralized autonomous organization (DAO)

**Figure 2: BPM and BRM advantages for organizations [4]**



## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

---

DLT and DAO lift issues of standard protocols to be established between companies to be able to have inter-organizational operations. On the other hand they lift the issues of management data security, authentication and authorization, management data validity, and most importantly, central data control. This means data is decentralized and no central party have the control of data creation and maintenance. On the other hand, DAO is a decentralized business process management system that continuously operate based on its defined instructions and usage of decentralized ledger data. Likewise all automation systems, if there are some flaws in DAO program codes, or if the DLT-DAO system have some breaches, the whole process will go under risk and damage.

Despite the fact that immutability and perpetuity are good properties for a DAO to achieve a consistent and sustainable method of management and organizing, there can be a drawback for the system if there are breaches inside the system. Even a small flaw in data or smart contract program can result huge damages and waste in the whole blockchain based connected organizations. Because smart contracts can not be changed by anyone, even the author of smart contract, the implementation of such a system has more steps of verifications and validation than ordinary automation software systems.

After accuracy of smart contract, accuracy of data for smart contracts is the top most important issue for proper operation of its operation and for organization automation process. Because smart contracts need data corresponding to outside environmental information and external events, and smart contracts can not feed those data into themselves, they need to use a data feed mechanism named oracles. These oracles can be hardware based, like smart sensors that send location or environmental parameters, or it can be softwares that feed external events and data by some interfaces. In both cases, oracles are single sources of data provision for smart contracts that can dilute the decentralized property of smart contract. They can impose the danger of single point of failure, risk of tamper, probability of mistakes or possibility of unauthorized penetration to the smart contract process which erode all the benefits of a decentralized blockchain system.

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

---

There are scientific researches addressing this limitation and vulnerability that oracles may impose to smart contracts. These proposed solutions are mainly based on decentralized oracles [5] [6]. Creating reliable decentralized oracles and providing mechanism for verification and disputation for them brings trustless environment to data field of decentralized autonomous organizations and make both smart contract and its necessary data feed work in a decentralized, trustless, secure environment.

### References:

1. Kenneth C. Laudon, Jane P. Laudon, Management Information Systems: Managing the Digital Firm (9th Edition), ISBN-13: 978-0131538412.
2. Management Information Systems: Managing the Digital Firm (9th Edition), by Kenneth C. Laudon, Jane P. Laudon.
3. Mishra, Umakant, Management Information Systems vs. Other Information Systems (August 12, 2013). Available at SSRN: <https://ssrn.com/abstract=2308846> or <http://dx.doi.org/10.2139/ssrn.2308846>
4. Butt, Javaid. (2020). A Conceptual Framework to Support Digital Transformation in Manufacturing using an Integrated Business Process Management Approach. Designs. 4. 17. 10.3390/designs4030017. p 10.
5. L. Ma, K. Kaneko, S. Sharma and K. Sakurai, "Reliable Decentralized Oracle with Mechanisms for Verification and Disputation," 2019 Seventh International Symposium on Computing and Networking Workshops (CANDARW), Nagasaki, Japan, 2019, pp. 346-352
6. Liu, Xiaolong and Muhammad, Khan and Lloret, Jaime and Chen, Yu-Wen and Yuan, Shyan-Ming, (2019). Elastic and cost-effective data carrier architecture for smart contract in blockchain. Future Generation Computer Systems. 100. 10.1016/j.future.2019.05.042.

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՐՔԱՆԵՐՈՒՄ ԲԼԵՔՉԵՅՆԻ ԵՎ ՍՄԱՐՑ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

#### Համիդնեզա Մահջուբ

Ե Հ, Կառավարման ամբիոն, հայցորդ

Մարդկային գործառնությունները և տեղեկատվական տեխնոլոգիաներով կառավարչական որոշումներ կայացնելու գործընթացները թվայնացված տնտեսական դարաշրջանի հիմքերն են: Կորպորացիաների միջև գործարքների աճի և արտադրության համաշխարհայնացման հետ մեկտեղ, կազմակերպությունների միջև արդյունավետ փոխկապակցման անհրաժեշտությունը դառնում է մատակարարման շղթայի կառավարման կարևոր անհրաժեշտություն: Չնայած այս ոլորտում տարբեր ջանքերին և կառավարչական մոտեցումներին, մատակարարման շղթայում տարբեր տեսակի կազմակերպությունների միջև արդյունավետ և հեշտ հաղորդակցման գործընթաց իրականացնելու մի շարք հիմնախնդիրներ կան: Հոդվածում քննարկվում են Բլոկչեյնի հնարավորությունները այդ հիմնախնդիրների լուծման շրջանակում, ներկայացնելով նաև մատակարարման շղթայի մասնակից տարբեր կազմակերպությունների միջև բիզնեսի կառավարման գործընթացը:

**Հիմնաբառեր.** Բլոկչեյն, խելացի պայմանագիր, բիզնես գործընթացների կառավարման համակարգ, բիզնեսի կանոնների կառավարման համակարգ, ապակենտրոնացված ինքնավար կազմակերպություններ, ապակենտրոնացված գրանցամատյանների տեխնոլոգիայի և որոշումների կայացման նոր համակարգի ներդրման մոտեցումները:

### АСПЕКТЫ УПРАВЛЕНИЯ БЛОКЧЕЙНА И СМАРТ КОНТРАКТОВ В ЦЕПОЧКЕ ПОСТАВОК

#### Амидреза Махджуб

ЕУ, кафедра Управления, соискатель

Человеческие операции и процессы принятия управленческих решений с использованием ИТ - основа цифровой эпохи. С ростом тран-

## ՇՈՒՇԱՐՈՒՄ

---

закций между корпорациями и глобализацией производства, потребность в эффективном взаимодействии между организациями становится жизненно важной потребностью в управлении цепочкой поставок. Несмотря на различные усилия в этой области и существующих подходов к управлению, существует ряд проблем с эффективным и простым общением между различными типами организаций в цепочке поставок. В статье обсуждаются возможности Blockchain в решении этих проблем, а также подходы к внедрению нового процесса управления бизнесом и системы принятия решений между различными организациями, участвующими в цепочке поставок.

**Ключевые слова:** Блокчейн, смарт-контракт, система управления бизнес-процессами, система управления бизнес-правилами, децентрализованные автономные организации, децентрализованная технология регистрационных журналов.

*Տրվել է րիպադրուիթյան՝ 05.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 05.11.2020թ.*

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՄԻՁՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ, ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՉ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԼԻՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

#### **Հասմիկ Դավթյան**

ԵՀ, Կառավարման ամբիոն, հայցորդ  
hasmikdvtn@rambler.ru, +374 93 634968

Հոդվածում ուսումնասիրվել է մոտիվացիոն միջոցառումների հիմնական ձևերը, դրանց փարատեսակները և մեխանիզմները: Ներկայացվել է մոտիվացիոն մեխանիզմների ոչ արդյունավետ լինելու հնարավոր պատճառները: Դիտարկվել են մոտիվացիոն գործոնները, դրանց դասակարգումը: Ներկայացվել է մոտիվացիոն գործոնների աղյուսակ, և վերլուծվել է այդ գործոններից յուրաքանչյուրի ազդեցությունը աշխատողների վրա: Տրվել են մոտիվացիոն մեխանիզմի գործունեության արդյունավետության բարձրացման մի շարք մոտեցումներ:

**Հիմնաբառեր.** *Մոտիվացիա, աշխատող, մոտիվացիոն գործոններ, մոտիվացիոն միջոցառումներ, ոչ արդյունավետ մոտիվացիա:*

Կազմակերպության արդյունավետ գործունեության համար լավ աշխատող ունենալը և նրան բարձր աշխատավարձ տալը դեռևս բավարար չէ, կարևոր է նաև կարողանալ նրան պահել կազմակերպությունում: Իսկ լավ աշխատողին կազմակերպությունում պահելը ենթադրում է փորձեր կատարել գտնելու շահադրդման գործոնների այնպիսի համադրություններ, որոնք առավել նպատակահարմար կլինեն աշխատողի պահանջմունքների բավարարման տեսանկյունից: Մարդու վարքը և տրամադրությունը կարելի է կառավարել միջավայր ձևավորելով և/կամ անմիջականորեն նրա անհատականության վրա ազդելով: Վարքի վրա ազդելով, մարդը հեշտությամբ է կառավարվում[1,с16]: Այս տեսանկյունից մոտիվացիոն մեխանիզմներ կիրառելիս առավել տարածված սխալներից են.

- մոտիվացիայի անհատական մոտեցում չցուցաբերելը,
- մոտիվացվող աշխատողին հստակ չնպատակադրելը,

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- մոտիվացիոն միջոցառումների արդյունավետության ցուցիչները և արդյունավետության գնահատման մեխանիզմները հաշվի չառնելը: Մոտիվացիոն միջոցառումների հիմնական ձևերն են.
  - ✓ նյութական խթաններ [2,с46], դրանք բազմազան են, թվարկենք առավել հիմնականները,
- լրավճարի ներդրում ընկերությունում որոշակի աշխատանքային փորձի դեպքում,
- պարգևավճարային համակարգի կիրառում(օր՝ տարվա արդյունքներին համապատասխան),
- բազային աշխատավարձին փոփոխական բոնուսային մասի ավելացում անհատական կամ խմբային արդյունքների համար,
- ընկերության բաժնետոմսերի ձեռք բերման հնարավորություն,
- անտոկոս կամ ցածր տոկոսային փոխառությունների տրամադրում,
- հանգստյան և բուժման ծախսերի փոխհատուցում,
- բջջային հեռախոսից օգտվելու ծախսերի փոխհատուցում,
- ընդմիջման ծախսի փոխհատուցում,
- ծառայողական նպատակներով անձնական մեքենայի օգտագործման դեպքում ծախսերի փոխհատուցում:
- ✓ Մասնակցությունը կազմակերպության գործունեությանը:
- ✓ Սոցիալական փաթեթ: Մասնավորապես դրանցից են.
  - բժշկական կամ կենսաթոշակային ապահովագրություն:
  - աշխատակցի ընտանիքի անդամների ապահովագրությունը:
  - ներկրպորատիվ կամ արտաքին ուսուցումը և այլն:

Բայց որպեսզի հասկանալի լինի, թե մոտիվացիոն որ միջոցառումները կարելի է կիրառել ընկերությունում, հարկավոր է մանրամասն ուսումնասիրել և հաշվի առնել աշխատակիցների վրա ազդող մոտիվացիոն գործոնները.

✓ Իմիջ: Մարդկանց որոշակի խումբ առավել զգայուն է դիրքի հարցում: Այդ պատճառով էլ խթանման համար կարելի է օգտագործել «դիրքային» տարրեր՝ ուղղված աշխատանքային պայմանների բարելավմանը, օրինակ՝ նոր համակարգիչ, լրացուցիչ տեխնիկա, առանձին



## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

աշխատասենյակի տրամադրում, ծառայողական մեքենայի տրամադրում, առանձին հեռախոսային գծի տրամադրում և այլն: Այստեղ պակաս դեր չի խաղում աշխատակցի արտաքին տեսքը և հագուստը: Կարևոր է նաև գրասենյակի ոճային ձևավորումը, աշխատանքային տարածքի, սեղանների ձևավորումը[3, c23-24]:

✓ Պաշտոնական դիրք: Որոշ ընկերություններում հիերարխիան այնքան էլ մասշտաբային չէ: Խելացի ղեկավարները նման դեպքերում հորինում են հատուկ պաշտոններ՝ «առաջին մակարդակի մենեջերներ», «երկրորդ մակարդակի մենեջերներ» և այդպես շարունակ (կամ էլ «առաջին մակարդակի մարզիչ», «երկրորդ մակարդակի մարզիչ» եթե խոսքը գնում է օրինակ ֆիտնես ակումբների մասին): Դեպքեր են լինում, երբ բաժնի ղեկավարի այցեքարտի վրա գրվում է «ղեկարտամենտի փոխտնօրեն»: Դիրքը կարևոր է գրեթե բոլորի համար: Պաշտոնի անվանումը ամենասովորական և էֆեկտիվ մոտիվացիայի միջոցներից է: Հեղինակություն վայելող անվանումներով պաշտոնները և բաժնի անվանումները թույլ են տալիս ոչ միայն պահպանել հին աշխատակիցներին այլ նաև ներգրավել նորերին[4, c106]:

✓ Ուսուցում: Այստեղ գործատուի և աշխատակցի հետաքրքրությունները համընկնում են: Ընկերությանը հարկավոր են ավելի իրազեկ աշխատակիցներ, իսկ կարիերայի աճի համար աշխատակիցը ցանկանում է ձեռք բերել անհրաժեշտ հմտություններ և գիտելիքներ: Ուսուցման ծրագրերը ծախսատար են, սակայն արդյունքն էլ ակնառու է: Այս խմբի մեջ են մտնում մասնագետների ադապտացման ակումբները, նորեկների համար հատուկ սեմինարները, կորպորատիվ խմբային թրեյնինգները և այլն: Փորձը ցույց է տալիս, որ հաջողակ են դառնում միայն այն ընկերությունները, որոնք չեն վախենում ներդրում կատարել մարդկային ռեսուրսների վրա, որոնք մտահոգված են անձակազմի ուսուցման հարցով, և մշտապես զբաղվում են դրանով: Որքան քիչ են ընկերությունում աշխատակիցներին ուսուցանում, այնքան հաջողության հասնելը դժվար է, քանի որ դրանում կա ռիսկ՝ ուսուցանված պրոֆեսիոնալին կարող են արագորեն գրավել: Բայց այդ ռիսկը արդարացված է, քանի որ աշխատակցին միշտ էլ հնարավոր է պահել՝ առաջար-

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

կելով նրան կարիերայի աճի հնարավորություն կամ աշխատավարձի բարձրացում:

✓ Մրցակցություն: Հաճախ են կազմակերպվում տարբեր «մրցույթներ» բաժինների կամ պարզապես մի քանի աշխատակիցների միջև: Սահմանվում են որոշակի չափանիշներ՝ նոր հաճախորդների ներգրավում, վաճառքի ծավալների ավելացում, արդյունավետ աշխատանք մշտական հաճախորդների հետ, ծախսերի կրճատում և այլն: Այստեղ կարևորը «չափը չանցնելն է»: Լինում են դեպքեր, երբ մշտական մրցույթների արդյունքում զգալի ընկնում է թիմային ոգին կազմակերպությունում, դրական մթնոլորտը վերանում է, քանի որ նման իրավիճակում յուրաքանչյուրը աշխատում է իր համար, և չի ձգտում հասնել օգնության գործընկերոջը, որը հայտնվել է դժվար իրավիճակում: Անգամ սկսում են միմյանցից տանել հաճախորդներ: Կարևոր է զգալ, թե երբ է մրցումը ի օգուտ ընկերության, իսկ երբ՝ ի վնաս:

Կազմակերպությունում աշխատողներին «պահելու» և աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար վերոնշյալ միջոցառումներից իրավիճակի համար առավել հարմար տարբերակը ընտրելու գործում կարևոր է վերլուծել մոտիվացիոն գործոնները և նրանցից յուրաքանչյուրի ազդեցությունը աշխատակցի վրա:

Աշխատողների մոտիվացիայի գործոնները բազմազան են և նրանցից յուրաքանչյուրը իր ազդեցություն է ունենում աշխատակցի վրա (տես աղյուսակ 1) [3, c24-25]: Աշխատանքային մոտիվացիայի բոլոր գործոնները կարելի է բաժանել 4 խմբի.

1. Տնտեսական գործոններ, որոնք նպաստում են այն նյութական պահանջմունքների բավարարմանը, առանց որի մարդը գոյատևել չի կարող[6]:
2. Սոցիալական գործոններ, որոնք ուղղված են սոցիալական պահանջմունքների բավարարմանը՝ ինքնաարտահայտում, մասնակցություն[5,c96]:
3. Կազմակերպական գործոններ, որոնք ուղղված են աշխատանքի հետ կապված պահանջմունքների բավարարմանը

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

4. Հոգեբանական գործոններ, որոնք ուղղված են անհատական և էսթետիկ պահանջմունքներին, և բնորոշ են կոնկրետ անհատին [6]:

*Աղյուսակ 1*

*Մոտիվացիոն գործոնների դերը և ազդեցությունը [3, c22]*

<b>Մոտիվացիոն գործոն</b>	<b>Ինչու՞մ է կայանում գործոնի ազդեցությունը</b>
ՍԵՌ	Տղամարդկանց և կանանց համար կան ընդհանուր մոտիվացիոն գործոններ: Բայց առկա են նաև որոշակի տարբերություններ: Մասնավորապես, կանանց համար կարևոր է կայունությունը, հնարավորությունը ընտանիքին ժամանակ տրամադրել(եթե նա ունի ընտանիք) դրական հոգեբանական մթնոլորտը աշխատանքում, «մարդկային» վերաբերմունքը, հարգանքը և հետաքրքրությունը ղեկավարության կողմից: Իսկ տղամարդուն հոգեբանական մթնոլորտը այնքան էլ կարևոր չէ: Նրան ավելի շատ գրավում են կարիերայի աճը, բարձր վարձատրությունը և նոր ծրագրերը:
ՏԱՐԻՔ	Երիտասարդների համար չափազանց կարևոր է շփումը: 25-35 տարեկանում ցանկանում են հավաքույթներ հանգստյան օրերին և այլ միջոցառումներ: Երիտասարդներին գրավում են նոր ծրագրերը արագ կարիերայի աճը: Իսկ 40-45 տարեկաններին շփումը արդեն այնքան էլ շատ չի հետաքրքրում (արդեն նրանցից յուրաքանչյուրը ունի իր շրջապատը և ընտանիքը): Նրանց ավելի հետաքրքիր է կայունությունը, վստահությունը և աշխատավարձի բարձրացումը:
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	Նրանք ուժքեր ավարտել են միայն դպրոցը այլ պահանջմունքներ ունեն, իսկ նրանք ուժքեր դիպլոմավորված մասնագետ են՝ լրիվ այլ պահանջմունքներ ունեն: Բարձրագույն կրթությամբ աշխատողները պահանջում են կորպորատիվ կուլտուրայի որոշակի նորմեր: Նրանք ցանկանում են,

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

	որպեսզի իրենց հարգեն, գնահատեն (ինչպես անհատականություն և մասնագետ): Նրանց համար կարևոր է նաև այնպիսի գործոնները, ինչպիսիք են հետաքրքիր և բարդ ծրագրերի հետ աշխատանքը, կարգավիճակը, իմիջը, և կարիերայի աճը:
ԿԱԶՄԱԿԵՐ-ՊՈՒԹՅԱՆ ԻՄԻՋ	Որքան լավն է իմիջը, այնքան հեշտ է մոտիվացնել աշխատակցին: Ինչպես օրինակ երկու մրցակցող Արևմտյան Գերմանիայի մեքենա արտադրող կոնցեռներից մեկում աշխատակիցներին մրցակիցների մասին ասում էին հետևալը «Այո, նրա աշխատավարձը ավելի է, սակայն մեր իմիջն է բարձր»: Սա հաշվի առնելով աշխատակիցները մնում էին նույն ընկերությունում:
ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ	Կարևոր նշանակություն ունեն նաև ղեկավարի մասնագիտական փորձը, ունակություններն ու հաղորդակցվող լինելը: Երբեմն հեղինակությունը բարձրացնելու համար օգտագործվում է լեզբենդայնությունը (հերոսական «միֆերի») ներկայացրած ընկերության ստեղծման և այդ գործում ղեկավարության դերի մասին և այլն):
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	Որքան հստակ է ձևավորված բիզնեսի մոդելը և դրա իրագործումը, այնքան բարձր է աշխատողների մոտիվացիան:
ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱԿԱՐԴԱԿ	Ընկերությունում ձևավորված վարձատրության աստիճանը այլ նման ընկերությունների հետ համեմատած, կարևոր մոտիվացիոն գործոն է աշխատողների հոսունությունից խուսափելու համար:
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	Ինչ «մոտիվացիոն» ռեսուրսների է տիրապետում(ֆինանսական, կազմակերպական և այլն) ընկերությունը: Արդյոք ընկերությունը ունի անձնակազմի մոտիվացիայի մասնագետներ:

Մի շարք մոտիվացիոն միջոցառումներ հաճախ արդյունք չեն տալիս, հենց այն պատճառով, որ ուշադրություն չի դարձվում այս բոլոր գործոններին, կամ դրանցից որոշները չեն կիրառվում: Այս առումով

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

շատ կարևոր է գործել միանգամից մի քանի ուղղություններով, դրանք են՝

- դնել հստակ նպատակ՝ ում է պետք մոտիվացնել, ինչպես է մոտիվացիոն պլանը համաձայնեցվում ընկերության ռազմավարության հետ[6]:
- ցուցաբերել անհատական մոտեցում յուրաքանչյուր աշխատողի նկատմամբ: Յուրաքանչյուրի համար պետք է մշակել իր մոտիվացիոն պլանը: Կամ կարելի է մոտիվացիոն պլան մշակել աշխատողների տարբեր խմբերի համար, օրինակ, բարձր օղակների համար, կամ բաժնի վարիչների համար: Կարելի է նաև կիրառել մեկ այլ տարբերակ՝ մշակել մոտիվացիոն պլան ողջ ընկերության համար՝ օրինակ կենտրոնանալ իմիջի, դիրքի, ուսուցման հնարավորությունների վրա: Այնուհետև անցնում կատարել առանձին ստորաբաժանումների մոտիվացմանը (եթե կա դրա անհրաժեշտությունը) կամ էլ կոնկրետ աշխատակիցների,
- իրականացնել աշխատանքի մշտական գնահատում և անձնակազմի ատեստավորում,
- մշակել արդյունավետության գնահատման չափանիշներ յուրաքանչյուր մոտիվացիոն միջոցառման համար,
- կատարել պարբերական մոնիթորինգ ուղղված աշխատողների մոտիվացվածության աստիճանի բացահայտմանը՝ պարզելու համար այն մեծանում է, մնում է նույն մակարդակում, թե անկում է ապրում, չնայած բոլոր ձեռնարկած միջոցառումների [3 c21]:

Այսպիսով, կազմակերպությունում աշխատողների մոտիվացիային ուղղված քայլեր ձեռնարկելիս հարկ է հաշվի առնել, որ յուրաքանչյուր աշխատակից անհատականություն է, ուստի հարկավոր է հասկանալ նրա պահանջումները, արժեքների համակարգը, ինչպես նաև հետաքրքրությունների շրջանակը: Կարևոր է հիշել, որ մարդու համար մեծ նշանակություն ունի աշխատանքի հետաքրքրի լինելը, կազմակերպության հեռանկարային լինելը, նրա իմիջը և որ ամենակարևորներից է տվյալ կազմակերպությունում ինքնաիրացման հնարավորություններ:

## ՎԱՌԱՎԱՐՈՒՄ

---

րը: Ուստի մեծ նշանակություն ունի կարողանալ աշխատողի համար աշխատանքը դարձնել հետաքրքիր, անհատի հետաքրքրությունների վերլուծության հիման վրա ընտրել աշխատողներ, ում մոտիվացիան կհամապատասխանի պաշտոնին, և կիրառել մոտիվացիոն միջոցառումների հավասարակշռված համադրություն:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Спивак В.А, Управление персоналом для менеджеров: учебное пособие. «Эксмо» 2012г.
2. Трапицына С. Ю. Мотивация персонала в современной организации «СанктПетербург» Учебное пособие 2007
3. Вагин И.О. Управление персоналом, «Игорь Вагин»2017г.
4. Егоршин А. П. Мотивация трудовой деятельности «Нижний Новгород» 2003
5. Данилюк А. А. Мотивация и стимулирование трудовой деятельности. Учебное пособие «Тюмень: Издательство Тюменского государственного университета» 2015.
6. Копылова О.В. Мотивация Рынок труда. Управление человеческими ресурсами. Вестник КарГУ 2007. <https://articlekz.com/article/6001/19.09.2020/>.

### **ОСНОВНЫЕ ВИДЫ МОТИВАЦИОННЫХ МЕРОПРИЯТИЙ, ФАКТОРЫ И ПРИЧИНЫ ИХ НЕЭФФЕКТИВНОСТИ**

**Асмик Давтян**

ЕУ, кафедра Управления, соискатель

В статье были изучены основные виды мотивационных мероприятий, их разновидности и механизмы. Представлены возможные причины неэффективных мотивационных механизмов. Рассмотрены мотивационные факторы и их классификация. Представлена таблица мотивационных факторов и изучено влияние каждого из факторов на

подчиненных. Представлен ряд подходов по повышению эффективности мотивационного механизма.

**Ключевые слова:** Мотивация, потребности, работник, мотивационные факторы, мотивационные механизмы, неэффективная мотивация.

### THE MAIN SORTS OF MOTIVATIONAL ACTIONS, FACTORS AND REASONS OF THEIR INEFFECTIVENESS.

**Hasmik Davtyan**

EU, Chair of Management, Researcher

In the following article the main sorts of motivational actions, their varieties and mechanism are being studied. There are presented Probable reasons of ineffective motivational mechanisms. Motivational factors and their classification are considered. There are presented the table of motivational factors and are analyzed effects of each factor on employees. There are presented series of approaches for improving the effectiveness of the motivational mechanism.

**Keywords:** Motivation, needs, employee, motivational factors, motivational mechanisms, ineffective motivation.

*Տրվել է պատգարրության՝ 14.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 02.11.2020թ.*

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### ՆՈՐ ՏԵՍԱԿԻ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ (COVID-19) ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՎՐԱ

**Աննա Հանիսյան**

տնտ. թ.

anna.hanisyan@gmail.com, +374 55 071017

**Լուսինե Թումյան**

ԵՀ, Կառավարման ամբիոն, տնտ. թ.

lusine.tumyan@gov.am, +374 91 416749

Նոր կորոնավիրուսային համավարակն ընդգծեց ինտեգրացիոն միավորումների ակտիվ գործունեության կարևորությունը: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ երրորդ երկրների հետ ԵԱՏՄ անդամ պետությունների համախառն արտաքին առևտրի ծավալը 2020թ. հունվար-հուլիս ժամանակահատվածում կազմել է շուրջ 342 մլրդ ԱՄՆ դոլար, այդ թվում՝ արտահանումը՝ 202,9 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 139,1 մլրդ ԱՄՆ դոլար: 2019թ. նույն ժամանակահատվածի համեմատ ԵԱՏՄ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կրճատվել է 17,3%-ով, այսինքն՝ 71,6 մլրդ ԱՄՆ դոլարով, ընդ որում՝ արտահանումը կրճատվել է 22,7%-ով (59,5 մլրդ ԱՄՆ դոլարով), իսկ ներմուծումը՝ 8 %-ով (12,1 մլրդ ԱՄՆ դոլարով): Զգալիորեն կրճատվել են հանքային արտադրանքների, ինչպես նաև մեքենաների, սարքավորումների ու տրանսպորտային միջոցների վաճառքները, սակայն մեծացել է պարենային ապրանքների և գյուղատնտեսական հումքի արտահանման ծավալը:

Հայաստանի Հանրապետության՝ երրորդ երկրներ արտահանման ծավալը, 2019թ. համապատասխան ժամանակահատվածի համեմատ, կրճատվել է ընդամենը 2,6%-ով, ընդ որում՝ ՀՀ-ից հանքային արտադրանքների մատակարարումներն ավելացել են, իսկ ՀՀ ներմուծման ծավալը նվազել է 22,7%-ով, սակայն նշենք, որ Հայաստանի ներմուծման ընդհանուր ծավալում մեծացել է ԵԱՏՄ երկրներից ներմուծման մասնաբաժինը: Հայաստանի արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագ-



## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

րական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ արտահանման ծավալները որոշ ապրանքների մասով գերազանցել են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ծավալները, իսկ որոշ ապրանքային խմբերի մասով ներմուծման ծավալը կրճատվել է չնչին:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ ԵԱՏՄ շրջանակներում, ինչպես նաև ՀՀ կողմից իրականացվող նոր տեսակի կորոնավիրուսային համավարակի ազդեցության հետևանքների մեղմմանն ու վերացմանն ուղղված համատեղ միջոցառումների համատեքստում դիտարկվող ժամանակահատվածում համավարակը, ճիշտ է, ունեցել է բացասական ազդեցություն, կրճատվել են արտաքին առևտրաշրջանառության ծավալները, բայց, ինչպես ցույց տվեցին մեր վերլուծությունները, որոշակի դեպքերում արձանագրվել են նաև դրական միտումներ:

**Հիմնաբանք.** Արտաքին առևտուր, ԵԱՏՄ, կորոնավիրուսային համավարակ (COVID-19), առևտրաշրջանառություն, ներմուծում, արտահանում, առևտրային համաձայնագրեր, առևտրի ապրանքային կառուցվածք, առևտրի կառուցվածք ըստ երկրների, վիճակագրական տվյալների վերլուծություն:

2020 թվականն աշխարհում սկսվեց նոր տեսակի կորոնավիրուսային (հիվանդության անվանումը՝ COVID-19, վարակի մակնշումը՝ 2019-nCoV) համավարակով, որը սկզբում Չինաստանին, ապա և ամբողջ աշխարհին ստիպեց սահմանափակումների գնալ տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում: Հայաստանը ևս բացառություն չէր, և 2020թ. մարտի 16-ին ՀՀ կառավարության որոշմամբ երկրում հայտարարվեց արտակարգ դրություն՝ համապատասխան սահմանափակումների սահմանմամբ:

Այս համատեքստում առաջնային կարևորություն ստացավ այն հարցը, թե համավարակով պայմանավորված սահմանափակումներն ինչպիսի ազդեցություն կունենան Հայաստանի տնտեսության, ինչպես նաև արտաքին առևտրի վրա: Համավարակային ճգնաժամն ընդգծեց ոչ միայն առողջապահական համակարգի, այլև ինտեգրացիոն միավորումների ակտիվ գործունեության կարևորությունը:

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ինչպես հայտնի է, 2014թ. Հայաստանի Հանրապետությունը միացել է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին (միանալու պայմանագիրը ստորագրվել է 2014թ. հոկտեմբերի 10-ին, ուժի մեջ է մտել 2015թ. հունվարի 2-ին): Նշենք, որ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր), որն էլ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ երկրների նախագահների կողմից ստորագրվել է 2014թ. մայիսի 29-ին Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի (ԵՏԲԽ) նիստում և ուժի մեջ մտել 2015թ. հունվարի 1-ից, կողմերը հիմնադրել են Եվրասիական տնտեսական միությունը (այսուհետ՝ ԵԱՏՄ), որն իրենից ներկայացնում է միջազգային իրավասությունները ունեցող տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն [1]:

Պայմանագրի համաձայն՝ ԵԱՏՄ շրջանակներում ապահովվում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի տեղաշարժի ազատությունը, Պայմանագրով և ԵԱՏՄ շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսության ճյուղերում միասնական, համակարգված կամ համաձայնեցված քաղաքականության իրականացումը [1]:

Պայմանագրով նախատեսված է, որ ԵԱՏՄ անդամ պետությունները (այսինքն՝ Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը, Հայաստանի Հանրապետությունը և Ղրղզստանի Հանրապետությունը) ներքին շուկայի գործունեության շրջանակներում ապրանքների փոխադարձ առևտրում չեն կիրառում ներմուծման ու արտահանման մաքսատուրքեր (համարժեք այլ տուրքեր, հարկեր և հավաքագրումներ), ոչ սակագնային կարգավորման միջոցներ, ինչպես նաև հատուկ պաշտպանական, հակազնագցման ու փոխհատուցման միջոցներ՝ բացառությամբ Պայմանագրով նախատեսված դեպքերի [1]:

Միաժամանակ, Պայմանագրով հստակ նշված է, որ ԵԱՏՄ արտաքին առևտրային քաղաքականությունը, ուղղված լինելով անդամ պետությունների կայուն տնտեսական զարգացման խթանմանը, նորարարության զարգացմանը, տնտեսության բազմազանեցմանը, առևտրի ու

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ներդրումների ծավալների մեծացմանը և կառուցվածքի բարելավմանը, համաշխարհային տնտեսության շրջանակներում ԵԱՏՄ՝ որպես արդյունավետ ու մրցունակ կազմակերպության հետագա զարգացման ապահովմանը, ինչպես նաև ինտեգրացիոն գործընթացների արագացմանը, իրականացվում է ԵԱՏՄ կողմից ինքնուրույն կամ անդամ պետությունների հետ այն ոլորտներում, որտեղ ԵԱՏՄ մարմիններն ընդունում են անդամ պետությունների կողմից պարտադիր կատարման ենթակա որոշումներ երրորդ կողմի հետ միջազգային պայմանագրեր կնքելու, արտաքին առևտրային քաղաքականության միջոցներ ու մեխանիզմներ ինքնուրույն կիրառելու կամ միջազգային կազմակերպություններում մասնակցելու միջոցով [1]:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ԵԱՏՄ առևտրային քաղաքականության գործիքներն են միության մաքսային տարածքում կիրառվող ԵԱՏՄ Միասնական ԱՏԳ ԱԱ-ն (արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկն) ու ԵԱՏՄ ՄՍՍ-ը (միասնական մաքսային սակագինը): Պայմանագրի համաձայն՝ ԵԱՏՄ անդամակցած պետությունն իրավունք ունի կիրառելու ԵԱՏՄ ՄՍՍ-ից տարբերվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր՝ ապրանքների անվանացանկին և դրույքաչափերին համապատասխան, որոնք հաստատվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) կողմից՝ ԵԱՏՄ տվյալ անդամ պետության անդամակցության մասին միջազգային պայմանագրի հիման վրա: Ընդ որում՝ ԵԱՏՄ անդամակցած պետությունը պարտավոր է ապահովել այն ապրանքների՝ միայն իր տարածքի սահմաններում օգտագործումը, որոնց նկատմամբ կիրառվել են ԵԱՏՄ ՄՍՍ-ի հետ համեմատած ավելի ցածր ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր և թույլ չտալ այլ անդամ պետություններ այդպիսի ապրանքների արտահանումը՝ առանց վճարելու ԵԱՏՄ ՄՍՍ դրույքաչափերով հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի գումարների և ապրանքները ներմուծելիս վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարների տարբերության չափով ներմուծման մաքսատուրքերը [1]:

ԵԱՏՄ-ին անդամակցելիս Հայաստանն անցումային ժամանակաշրջանի համար՝ մինչև 2022թ. վերջը, առանձին ապրանքատեսակ-

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ների մասով ստացել էր արտոնություն՝ նախկինում ունեցած (այսինքն՝ ավելի ցածր) ներմուծման մաքսատուրքերը կիրառելու համար [2], իսկ մոտ 930 սպառողական զամբյուղում ընդգրկված, ինչպես նաև՝ որոշ արդյունաբերական ապրանքատեսակների մասով այդ արտոնյալ ժամկետն ավարտվելու էր 2020 թվականի հունվարի 1-ին: ՀՀ կողմից կատարված աշխատանքների արդյունքում 2019թ. դեկտեմբերի 20-ին Սանկտ Պետերբուրգում ԵՏԲԻ կողմից որոշում է կայացվել ՀՀ արտոնությունների կիրառումը ևս մեկ տարով երկարաձգելու մասին՝ բացառությամբ 87 ապրանքային խմբում ընդգրկված վերգետնյա տրանսպորտային միջոցների: 2020թ. մայիսի 27-ին ՀՀ-ն վավերացրել է արձանագրությունը, որով Հայաստանը ԵԱՏՄ շրջանակում ստանում է երրորդ երկրներից ապրանքների ներմուծման արտոնյալ մաքսատուրքերի ժամկետի երկարաձգման հնարավորություն: Արդյունքում թվով շուրջ 647 ապրանքատեսակների (այդ թվում՝ կարագը, խոշոր եղջերավոր անասունի սառեցված միսը, ընտանի թռչնամիսը, մարգարիներ և այլ յուղեր, արևածաղկի յուղը, մանկական պատրաստի սնունդը, անտառանյութը, մշակված կաշվե հումքը, թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերը և այլն)՝ երրորդ երկրներից ներմուծման մաքսատուրքերը 2020թ. լինելու են նախորդ տարի կիրառվող նույն մաքսատուրքերը, ինչը, կարծում ենք, կարևոր դրական քայլ էր նաև կորոնավիրուսային համավարակի տարածման հետևանքների մեղմման տեսանկյունից:

ԵԱՏՄ անդամ երկրների, այդ թվում՝ Հայաստանի առևտրի վրա համավարակի բացասական ազդեցությունը զսպող կարևոր միջոցառումներ կարելի է համարել ԵԱՏՄ ներքին սպառման համար կրիտիկական ներմուծման ապրանքների ցանկի հաստատումը, որոնք որոշակի ժամանակահատվածով ազատվում են ներմուծման մաքսատուրքից (դրանցից են կաղամբը, կարտոֆիլը, սխտորը, սոխը, որոշ դեղամիջոցներ և այլն), ինչպես նաև կորոնավիրուսային համավարակի նախազգուշացմանը և տարածման կանխարգելմանն ուղղված ԵԱՏՄ միջոցառումների իրականացման նպատակով ներքին սպառման համար ԵԱՏՄ մաքսային տարածք ներմուծվող այլ ապրանքների ցանկի հաստատումը, որոնք ևս որոշակի ժամանակահատվածով ազատվում են ներմուծման մաքսատուրքից:

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Եվրասիական տնտեսական միությունն ինչպես ակտիվորեն զարգացնում է ներմուծումը փոխարինելու ծրագիր, այնպես էլ ակտիվորեն գործունեություն է ծավալում արտաքին տնտեսական կապերն ընդլայնելու ուղղությամբ, ինչը համավարակի պայմաններում, գտնում ենք, որ շատ ավելի անհրաժեշտ է:

Ներկայումս ԵԱՏՄ շրջանակներում գործում են հետևյալ առևտրային համաձայնագրերը՝

➤ «Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի մասին» համաձայնագիրը [3].

Համաձայնագիրը ստորագրվել է 2015թ. մայիսի 29-ին, այն պարունակում է երկրների միջև առևտրի սակագնային ազատականացման պայմանները՝ ներմուծման մաքսատուրքերի նվազեցման կամ զրոյացման հաշվին: Այս համաձայնագրի կարևորությունը պայմանավորված է նախ և առաջ նրանով, որ ԵԱՏՄ-ից և Վիետնամից արտահանվող ապրանքները կարող են փոխլրացնել միմյանց, ուժեղ մրցակցություն հնարավոր է միայն առանձին ճյուղերում, որոնք էլ կարելի է պաշտպանել նշված համաձայնագրի շրջանակներում: Վիետնամական շուկան շատ մեծ է և դինամիկ զարգացող, այսինքն՝ հետաքրքիր է նաև հայաստանյան արտադրողների համար, ՀՀ-ն Վիետնամից մեծամասամբ ներկրում է հագուստ, իսկ արտահանում՝ հիմնականում ալկոհոլային խմիչքներ:

➤ ԵԱՏՄ և Իրանի միջև ազատ առևտրի գոտու ձևավորմանն ուղղված ժամանակավոր համաձայնագիրը [4].

Հայաստանը համաձայնագիրը վավերացրել է 2019թ. ապրիլի 3-ին, այն ուժի մեջ է մտել 2019թ. հոկտեմբերի 27-ից: ՀՀ համար համաձայնագրում ներառված արտահանման հետաքրքրություն ունեցող հիմնական ապրանքներն են՝ տավարի միս, հանքային և գազավորված ջրեր, ոչ ոգելից խմիչքներ, կակաո պարունակող սննդամթերք և շոկոլադե, հրուշակեղեն, դեղամիջոցներ, կուտակիչներ և տրիկոտաժե արտադրանք:

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

➤ «ԵԱՏՄ և Չինաստանի միջև տնտեսական և առևտրային համագործակցության մասին» համաձայնագիրը [5].

ՀՀ-ն համաձայնագիրը վավերացրել է 2019թ. մայիսի 2-ին, այն ուժի մեջ է մտել 2019թ. հոկտեմբերի 25-ից: Համաձայնագրի կիրառումը թույլ կտա դյուրացնել ՀՀ և ԵԱՏՄ մյուս անդամ պետությունների տնտեսվարող սուբյեկտների մուտքը դեպի չինական շուկա առևտրային գործընթացների պարզեցման, թափանցիկության մակարդակի բարձրացման, ինչպես նաև առևտրային համագործակցության մի շարք բնագավառներում փոխգործակցության խորացման միջոցով:

Վավերացման փուլում են գտնվում հետևյալ առևտրային համաձայնագրերը՝

➤ «Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Սերբիայի Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի մասին» համաձայնագիրը [6],

Համաձայնագիրը ստորագրվել է 2019թ. հոկտեմբերի 25-ին Մոսկվայում կայացած Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին: Սերբիա արտահանման ծավալների ավելացման համար նոր հնարավորություններ ստանալու տեսանկյունից Հայաստանի համար ներուժ պարունակվում է ավանդական արտահանման ապրանքների՝ թունդ, ալկոհոլի և ծխախոտի, սննդի արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքի արտահանումն ավելացնելու մեջ:

➤ «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև համապարփակ տնտեսական համագործակցության մասին» շրջանակային համաձայնագիրը [7],

Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագիրը [8]:

Համաձայնագրերը կնքվել են 2019թ. հոկտեմբերի 1-ին Երևանում կայացած ԵՏԲԽ նիստի շրջանակներում: Բանակցություններն իրականացվել են ինչպես ապրանքների առևտրի, այնպես էլ ծառայությունների և ներդրումների իրականացման մասով՝ հաշվի առնելով Սինգապուրի առևտրատնտեսական առանձնահատկությունները: Որպես համա-

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ձայնագրի նպատակներ պետք է նշել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ու փոխադարձ առևտրային հարաբերությունների զարգացման ոլորտներում կողմերի միջև տնտեսական համագործակցության խթանման համար շահավետ միջավայր և պայմաններ ստեղծելը, ինչպես նաև կողմերի միջև առևտրային և ներդրումային խոչընդոտները վերացնելը, գործարար ծախսերը նվազեցնելն ու տնտեսական արդյունավետությունը բարձրացնելը:

Ըստ վերոնշյալ համաձայնագրի՝ Սինգապուրը պարտավորվում է չկիրառել ներմուծման մաքսատուրքեր ԵԱՏՄ երկրների ծագման բոլոր ապրանքների նկատմամբ: ԵԱՏՄ պարտավորություններով ամրագրված անվանացանկում ընդգրկված է թվով 12.229 ապրանք, որոնցից 4.858 ապրանքատեսակի համար կիրառվելու է 0% ներմուծման մաքսատուրք՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո անմիջապես, 597 ապրանքատեսակի համար՝ ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի մինչև 0% իջեցում՝ 3 տարի անց, 2.340 ապրանքատեսակի համար՝ իջեցում մինչև 0%՝ 5 տարի անց, 2.201 ապրանքատեսակի համար՝ մաքսատուրքի դրույքաչափի մինչև 0% իջեցում՝ 7 տարի անց և 716 ապրանքատեսակի մասով՝ իջեցում մինչև 0%՝ 10 տարի անց: Նշված համաձայնագրով նախատեսված են նաև հանումներ՝ թվով 1.517 ապրանքատեսակի մասով:

Ներկայումս ԵԱՏՄ կողմից առևտրային համաձայնագրերի կնքման շուրջ բանակցություններ են տարվում նաև Իսրայելի, Հնդկաստանի և Եգիպտոսի հետ, ինչպես նաև համատեղ հետազոտություններ են իրականացվում Մոնղոլիայի, Ինդոնեզիայի և այլ երկրների ու միավորումների հետ, որոնք կարող են հանգեցնել արդյունավետ բանակցային աշխատանքների:

Հաշվի առնելով, որ նոր տեսակի կորոնավիրուսային համավարակը ԵԱՏՄ երկրներում սկսվեց տարածվել 2020թ. առաջին եռամսյակից, վերլուծենք ԵԱՏՄ արտաքին առևտրի վիճակագրական տվյալները 2020թ. հունվար-հուլիս կտրվածքով՝ համեմատելով նախորդ տարվա նույն ցուցանիշների հետ:

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

*Աղյուսակ 1. Երրորդ երկրների հետ ԵԱՏՄ անդամ պետությունների արտաքին առևտրի ծավալները 2020թ. հունվար-հուլիս ժամանակահատվածում, մլն ԱՄՆ դոլար [9]*

	Շրջանառություն	Արտահանում	Ներմուծում	Սալդո	2019թ. հունվար-հուլիսի նկատմամբ, %		
					Շրջանառություն	Արտահանում	Ներմուծում
<b>ԵԱՏՄ</b>	<b>341956,8</b>	<b>202865,0</b>	<b>139091,8</b>	<b>63773,2</b>	<b>82,7</b>	<b>77,3</b>	<b>92,0</b>
<i>այդ թվում՝</i>							
<b>Հայաստան</b>	2468,6	992,9	1475,7	-482,8	84,3	97,4	77,3
<b>Բելառուս</b>	16553,4	7719,0	8834,4	-1115,4	81,4	72,4	91,3
<b>Ղազախստան</b>	38346,0	25783,3	12562,7	13220,6	89,5	87,4	94,0
<b>Ղրղզստան</b>	1795,0	849,8	945,2	-95,4	75,7	114,0	58,2
<b>Ռուսաստան</b>	282793,8	167520,0	115273,8	52246,2	81,9	76,0	92,5

Ինչպես երևում է Աղյուսակ 1-ից, երրորդ երկրների հետ ԵԱՏՄ անդամ պետությունների համախառն արտաքին առևտրի ծավալը 2020թ. հունվար-հուլիս ժամանակահատվածում կազմել է շուրջ 342 մլրդ ԱՄՆ դոլար, այդ թվում՝ արտահանումը՝ 202,9 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 139,1 մլրդ ԱՄՆ դոլար: 2019թ. նույն ժամանակահատվածի համեմատ ԵԱՏՄ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կրճատվել է 17,3%-ով, այսինքն՝ 71,6 մլրդ ԱՄՆ դոլարով, ընդ որում՝ արտահանումը կրճատվել է 22,7%-ով (59,5 մլրդ ԱՄՆ դոլարով), իսկ ներմուծումը՝ 8%-ով (12,1 մլրդ ԱՄՆ դոլարով): Փաստորեն, դիտարկվող ժամանակահատվածում ԵԱՏՄ արտաքին առևտրի պրոֆիցիտը կազմել է 63,8 մլրդ ԱՄՆ դոլար այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն շրջանում այն կազմել է 111,2 մլրդ ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 1-ում ներկայացված վիճակագրական տվյալներից երևում է, որ Հայաստանի Հանրապետությունում երրորդ երկրների




## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ


հետ համախառն արտաքին առևտրի ծավալը 2020թ. հունվար-հուլիս ժամանակահատվածում կազմել է շուրջ 2.5 մլրդ ԱՄՆ դոլար, այսինքն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 15,7%-ով պակաս, ընդ որում՝ արտահանումը կազմել է մոտ 1 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ մոտ 1,5 մլրդ ԱՄՆ դոլար, այսինքն՝ բացասական սալդոն կազմել է մոտ 0,5 մլրդ ԱՄՆ դոլար: Տեսնում ենք, որ 2019թ. հունվար-հուլիս ժամանակահատվածի համեմատ համեմատաբար քիչ է կրճատվել ՀՀ արտահանումը՝ ընդամենը 2,6%-ով է պակաս, մինչդեռ ներմուծման ծավալը նվազել է 22,7%-ով:

Կարող ենք փաստել, որ ԵԱՏՄ արտաքին առևտրաշրջանառության ծավալների կրճատումը 2020թ. հունվար-հուլիս ժամանակահատվածում մեծամասամբ պայմանավորված է եղել նոր տեսակի կորոնավիրուսային համավարակի ազդեցությամբ:

ԵԱՏՄ երկրներից յուրաքանչյուրի «մասնակցությունը» արտաքին առևտրի համախառն ցուցանիշներում ներկայացված է Գծապատկեր 1-ում:



## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ



**Գծապատկեր 1. ԵԱՏՄ երկրներից յուրաքանչյուրի «մասնակցությունը» արտաքին առևտրի համախառն ցուցանիշներում 2020թ. հունվար-հուլիս ժամանակահատվածում, %**

Այժմ դիտարկվող ժամանակահատվածի համար ուսումնասիրենք ԵԱՏՄ արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը:

**Աղյուսակ 2. ԵԱՏՄ արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը 2020թ. հունվար-հուլիս ժամանակահատվածում [9]**

Ապրանքը	Արտահանում			Ներմուծում		
	2020թ. հունվար-հուլիս, մլն ԱՄՆ դոլար	Ընդհանուրի նկատմամբ, %	2019թ. հունվար-հուլիսի նկատմամբ, %	2020թ. հունվար-հուլիս, մլն ԱՄՆ դոլար	Ընդհանուրի նկատմամբ, %	2019թ. հունվար-հուլիսի նկատմամբ, %
Բոլոր ապրանքները	202,865.0	100.0	77.3	139,091.8	100.0	92.0
այդ թվում՝						

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

պարենային ապրանքներ և գյուղատնտեսական հումք	14,685.2	7.2	114.2	16,858.9	12.1	97.2
հանքային ապրանքներ	117,983.2	58.2	66.6	1,851.3	1.3	81.8
քիմիական արդյունաբերության արտադրանք	13,514.8	6.7	87.0	26,493.2	19.0	93.0
փայտանյութ և ցելյուլոզաթղթային արտադրանք	7,140.1	3.5	93.3	2,048.8	1.5	88.4
տեքստիլ, տեքստիլային արտադրանք և կոշիկեղեն	558.2	0.3	89.2	9,029.5	6.5	89.8
մետաղներ և դրանցից պատրաստված արտադրանքներ	20,960.2	10.3	85.7	9,557.6	6.9	87.7
մեքենաներ, սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ	6,211.4	3.1	75.6	60,393.3	43.4	91.8
այլ ապրանքներ	21,811.9	10.7	138.1	12,859.2	9.3	91.3

Դիտարկվող ժամանակահատվածի համար ԵԱՏՄ արտահանման ապրանքային կառուցվածքն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ դեպի երրորդ երկրներ ԵԱՏՄ արտահանված ապրանքների մեջ գերակշ-

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ռել են հանքային արտադրանքները (ընդհանուր արտահանման 58,2%-ը), մետաղները և դրանցից պատրաստված իրերը (10,3%), պարենային ապրանքներն ու գյուղատնտեսական հումքը (7,2%):

2020թ. հունվար-հուլիս ժամանակահատվածում ԵԱՏՄ ներմուծման ապրանքային կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են ունեցել մեքենաները, սարքավորումները և տրանսպորտային միջոցները (ընդհանուր ներմուծման 43,4%-ը), քիմիական արդյունաբերական արտադրանքը (19%), պարենային ապրանքներն ու գյուղատնտեսական հումքը (12,1%):

When calculating the average daily rate of securing payments from own funds, the Central Bank of Armenia took into account the ratio of payments made in AMD accounts at the beginning of the day in liquidity accounts. The indicator does not include bank receipts (opposite payments), which is intended to conduct a stress analysis to assess the solvency of banks in the absence of additional liquidity during the day (see Figure 4). That is, to what extent can banks secure their payments only of their own funds available at the beginning of the day.

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ



**Figure 3** *Daly payments and liquidity interrelation in electronic payments system RA [9]*



**Figure 4** *Average daily balance in electronic payment payment system RA [9]*

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

---

On the other hand, the N2 standard imposed by the Central Bank of Armenia, in our opinion, does not create equivalence in comparing assets and liabilities in payment and settlement organizations. Thus, according to the central bank regulations, when calculating liquidity, high liquid assets owned by payment and settlement organizations are compared with current liabilities. However, in terms of time, if the highly liquid assets have a two- to three-day conversion period, the current liabilities, according to International Accounting Standards, may be repaid within one year.

Therefore, we believe that the items “highly liquid assets” and “urgent liabilities” should be combined within the liquidity management of payment and settlement organizations. In this case, the assessment of the ability to repay the liabilities of the organizations will be proportionate in terms of time. However, since the calculation of the N2 standard set by the Central Bank of Armenia envisages the inclusion of current liabilities rather than urgent ones, causing a gap in the adequacy of financial resources to compensate liabilities, in our opinion, it can be leveled case of including unfinished transaction financial recourses in scope of liquidity management of payment and settlement organizations.

### References:

1. The law on the Central Bank of the RA”, 1996, item 3
2. Basel Committee on Banking Supervision. Basel III: A global regulatory framework for more resilient banks and banking system. - Bank for International Settlements, December 2010 (rev. June 2011). - Mode of Access: <http://www.bis.org/publ/bcbs189.pdf>.
3. RA Law on Banks and Banking, chapter 5, 1996
4. Global systemically important banks assessment methodology and the additional loss absorbency requirement Rules text, November 2011, BCBS, pages 152-155.
5. Basel III A global regulatory framework for more resilient banks and banking systems - revised version June 2011, BCBS, May 2011.

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

---

6. Basel Committee on Banking Supervision. Guidance for national authorities operating the countercyclical capital buffer. - Bank for International Settlements, December 2010
7. Law of RA, “Payment and Settlement Systems and Payment and Settlement Organizations”, 2004 article 19
8. Financial Stability Report, 2020, // Central Bank of Armenia, page 39

### ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ- ՈՒՄ

#### **Բեհնուդ Սուրի**

ԵՀ, Կառավարման ամբիոն, հայցորդ

Վճարահաշվարկային համակարգի գործունեության հաջողությունը պայմանավորված է ոչ միայն ֆինանսական արդյունավետ մենեջմենթի կիրառմամբ, այլև վճարային և քլիրինգային գործարքները կարգավորող նորմատիվային դաշտի առկայությամբ: Ֆինանսական ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպություններում կիրառվում են ֆինանսատնտեսական նորմատիվներ, որոնք սահմանվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: Հոդվածում ներկայացվում են առաջարկներ վճարահաշվարկային կազմակերպությունների իրացվելիության դաշտը կարգավորող նորմատիվների բարելավման ուղղությամբ, որոնք ուղղված են վճարունակության կառավարման բարելավմանը:

**Հիմնաբառեր.** ֆինանսական նորմատիվներ, վճարունակություն, էլեկտրոնային փոխանցումներ, վճարահաշվարկային համակարգ



### ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ ЛИКВИДНОСТИ ПЛАТЕЖНЫХ И РАСЧЕТНЫХ ОРГАНИЗАЦИЙ В АРМЕНИИ

**Бейнуд Сури**

ЕУ, кафедра Управления, соискатель

Успех платежно-расчетной системы обусловлен не только применением эффективного финансового менеджмента, но и наличием нормативной базы, регулирующей платежно-клиринговые операции. Финансовые и экономические стандарты, установленные Центральным банком РА, применяются в организациях, работающих в финансовом секторе. В статье представлены предложения по совершенствованию финансово-экономических стандартов, регулирующих сферу ликвидности платежно-расчетных организаций, и направленные на совершенствование управления платежеспособностью.

**Ключевые слова:** Финансовые нормативы, платежеспособность, электронные переводы, платежная система.

*Տրվել է րւշադրութեան՝ 06.10.2020թ.*

*Գրախոսւել է՝ 02.11.2020թ.*

---

## НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ И ПРОБЛЕМЫ СТРАТЕГИИ УПРАВЛЕНИЯ ГОРОДСКИМ ХОЗЯЙСТВОМ «УМНЫЙ ГОРОД»

**Арман Аветян**

*РАУ, кафедра Управления, бизнеса и туризма, соискатель*

*НИУО МО РА*

*armavetian@mail.ru, +374 94 088811*

*Развитие современных технологий привело к преобразованию жизнедеятельности человечества. Процесс ускорился и еще в результате распространения новой коронавирусной инфекции, что привело к вынужденной минимизации живого общения и переходу на виртуальную платформу. Все эти процессы не могут обойти и городское хозяйство.*

*Эффективную модель решения предлагает стратегия «Умный город», который подразумевает широкое использование информационно – коммуникационных технологий (ИКТ) и интернета вещей (IoT) в процессе управления городским хозяйством. Данная статья посвящена выявлению некоторых особенностей и проблем стратегии управления городским хозяйством «Умный город».*

**Ключевые слова:** *высокие технологии, городское хозяйство, интернет вещей, парадигма, стратегия.*

Город – основная социально – экономическая единица государства, которая отличается от других образований высокой интенсивностью жизнедеятельности населения. Сегодня практически во всех развитых и большей части развивающихся стран наблюдается высокий показатель урбанизации. По разным прогнозам, к 2030 году 2/3 мирового населения будут жить в городах, создавая 80% мирового ВВП.[1] Ежедневно в крупные города мира въезжает или выезжает несколько миллионов человек, которых привлекает не только заработок, но и городская среда и образ жизнедеятельности. Представленные и многие другие процессы определенным образом влияют на развитие

городских образований, которое очень часто превращается в хаотичный процесс. Рациональные решения по систематизации данного процесса предлагает стратегия «Умный город». Стратегия и применяемые в ней высокие технологии будут автоматически реагировать на происходящие изменения и тем самым повысят эффективность управления городским хозяйством.

Современные технологии обеспечили переход человечества на новый тип мировой экономики – цифровой, которая подразумевает цифровизацию всей жизнедеятельности человека. Данный процесс ускорился и в результате возникновения новой коронавирусной пандемии, в результате чего во многих странах организации были вынуждены перейти на удаленный вид работы. И в XXI веке уже город подстраивается под деятельность своих жителей. Он должен обеспечить удовлетворение их потребностей уже по новой философии. Этот человек больше не желает стоять на пробках или очередях. Он желает получить нужную ему информацию на телефон и избегать поездки в администрацию для решения своих проблем.

Стратегия «Умный город» превращает городское образование в некий центр современных и высоких технологий, которые используются для удовлетворения повседневных нужд его жителей (транспортное перемещение, энергоснабжение и др.). Эффективное и опережающее удовлетворение этих нужд приводит к повышению качества жизни населения и эффективному распределению ресурсов на территории города.

Из объектов городского управления в первую очередь в модернизации нуждаются органы управления города (предоставляемые ими услуги), инфраструктуры и муниципальное хозяйство.

Н. Комнинос в своей книге “The age of intelligent cities” дает следующее определение “Smart city”: инфраструктура, основанная на взаимодействии информационных и коммуникативных технологий (ИКТ) и интернета вещей (IoT) и предназначенная для управления городским имуществом (электростанции, дороги, школы, транспортное передвижение, водоснабжение и др.). [2]

Выделим некоторые характерные черты и особенности «умного» города: [3]

1. **Интегрированная информационно – технологическая инфраструктура.** Город оснащается беспроводными сенсорными сетями, которые передают в единый центр управления различную информацию (транспортно – пассажирские потоки, загрязнение воздуха, работа систем энергоснабжения и др.).

2. **Эффективная система и культура управления.** Вышепредставленный единый центр в онлайн режиме будет предоставлять городским властям огромное количество информации. В результате этого меняется культура управления, которая уже выстраивает свою структуру исходя из информационных потоков. Эффективность такой системы обеспечивается и за счет оперативного реагирования на определенные изменения и сигналы как из внешней среды, так и из внутренней.

3. **Высококвалифицированный персонал.** Для опережающего удовлетворения повседневных нужд горожан и управления всеми технологиями обязательно нужны высококвалифицированные специалисты. Для создания такого персонала необходимо образовать единую культуру непрерывного образования (lifelong learning).

4. **«Умные» жители.** Такие жители, например, уже не тратят свое время на пробки и многолюдные очереди. С помощью быстродоступных услуг они могут эффективно управлять этим временем и получить доступ практически ко всем услугам городской администрации.

5. **Общегородская территориализация.** Стратегия объединяет ИКТ и людей. В данном аспекте необходимо повысить эффективность их сочетания. Следует подчеркнуть, что до сих пор не существует единого взгляда на счет соотношения человека и ИКТ в процессе управления. Но однозначно то утверждение, что постепенно это соотношение идет в сторону ИКТ. Удаленное обслуживание с помощью ИКТ меняет и территориально – пространственное понятие городской администрации. Если раньше услуги предоставлялись только в здании

администрации города, то уже сегодня в руках у каждого жителя находится средство прямого доступа практически ко всем муниципальным услугам.

Существует множество методологий оценки «умных» городов. К числу «умных» по разным версиям относят Сингапур, Сеул, Токио, Шанхай, Нью-Йорк, Лос-Анджелес, Дубай, Амстердам, Барселону, Копенгаген, Москву, Монреаль и другие города земного шара. Следует отметить, что правильно разработанная и реализованная стратегия позволила перечисленным городам из социально – экономических центров государств превратиться в крупные технологические центры инноваций мирового масштаба, что позволило им генерировать ВВП, в несколько раз превышающую показатели многих развивающихся стран (со средним уровнем развития).

Исходя из статистики уже реализованных стратегий, городам удалось ежегодно экономить в среднем 30% энергоресурсов, 25% времени перемещений, 20% финансовых расходов на содержание администрации и т.д.

Как уже было отмечено, роль ИКТ и IoT увеличилась и в результате распространения новой коронавирусной инфекции, что заставило многих людей перейти на удаленную жизнедеятельность. Активное использование ИКТ и IoT уже привело многим компаниям к переходу удаленной работе на постоянное время. Например, в одном из своих интервью СМИ президент ПАО «Сбербанк России» Г. Греф заявил, что в ближайшем будущем компания планирует перевести 30% сотрудников бэк – офиса на удаленный вид работы. [4]

Многие развитые города с помощью блокчейна и технологий «Big Data Analytics» управляют огромными данными своих жителей и предоставляют различные онлайн услуги. Управление большими данными дает возможность муниципальным образованиям сразу находить нарушения или любые неполадки в системах муниципального обслуживания. В мире существуют несколько стратегий внедрения (полного, частичного или поэтапного) этих технологий.

Однако не стоит и игнорировать возникающие риски и проблемы в результате разработки и реализации стратегии «Умный город».

Многие ученые критикуют стратегию за ее неопределенность, поскольку она не решает проблемы, а предлагает лишь применение ИКТ и IoT в уже определенных процессах управления городским хозяйством.

Другой проблемой является высокая стоимость реализации стратегии и ограниченность ресурсов городских образований. С целью привлечения необходимых ресурсов очень часто в процесс включаются государство или частные организации, у которых бывают и другие цели. Участие, например, государства приведет уменьшению роли города и городской администрации, которая и без того во многих странах и не высокая. С другой стороны, низкая привлекательность моделей государственно – частного партнерства (ГЧП) и высокие инвестиционные риски заставляют многих инвесторов серьезно задуматься перед каждым инвестированием. Для решения данной проблемы городское образование должно применить активные инструменты финансового рынка – выпуск акций и облигаций. Это позволит создать новый имидж городского образования и создать новую модель сотрудничества, например, и с жителями города.

Реализация стратегии неэффективна еще и в обществах с низким социальным уровнем, поскольку у многих жителей нету возможности подключения к сетям и системам. В результате этого нарушаются основополагающие принципы местного самоуправления. Кроме того, в таких обществах умные технологии воспринимаются не однозначно, и очень часто наблюдаются случаи вандализма и воровства. Для поддержания распространения стратегии и ее инструментов среди жителей городская администрация должна разработать специальные программы обучения и поддержки малоимущих слоев населения и специально для них разработать поэтапный план перехода на «умные» технологии.

Для реализации стратегии необходимо концентрация всех располагаемых городом ресурсов. Среди них важное место занимает человеческий капитал. Важно, чтобы стратегия действительно учитывала

общественные интересы и потребности, поскольку главными ее носителями должны стать именно жители города. В противном случае городская администрация разработает стратегию, и будет высокий риск ее непризнания жителями города. Эффективным решением этой проблемы может стать краудсорсинг, который подразумевает разработку и реализацию стратегии путем непосредственного участия жителей города. Это позволит обеспечить обратную связь в процессе управления городским хозяйством и тем самым создаст атмосферу взаимного доверия между администрацией и обществом.

Сложность использования высоких технологий повышает необходимость высококвалифицированных кадров, дефицит которых наблюдается практически везде. Для решения этой проблемы городская администрация должна акцентировать свое внимание на культуру образования и работы. На территории города должны быть созданы инженерные кластеры и специальные центры, которые будут заниматься подготовкой и переподготовкой нужных специалистов. Необходимо рассмотреть и решения, которые предлагаются опять таки высокими технологиями. В мире пока что избегают удаленного вида работы в органах государственного и муниципального управления, но с уверенностью можно сказать, что рано или поздно экономия государственных средств государственного бюджета приведет к пересмотру данного мнения.

Таким образом, «Умный город» предлагает новую систему и философию решения городских проблем, в конечном итоге оказывая значительное влияние на процессы развития городского хозяйства. Следует еще раз отметить о важности концентрации всех ресурсов, располагаемых городским образованием.

Несмотря на указанные проблемы, стратегия обладает серьезным потенциалом, который поможет человечеству решить множество проблем, даже глобальных масштабов.

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### Литература

1. World cities report 2020: The value of sustainable urbanization. UN. 2020. <https://unhabitat.org/wcr/>
2. Komninos N. The age of intelligent cities – Routledge, 2014. – p. 25.
3. Умный город: рождение детальной концепции // CNews Аналитика, 2013, 36 с.
4. Финансовый форум ВС. <https://vc.ru/office/146087-sberbank-zaplaniroval-perevesti-na-postoyannuyu-udalenu-do-30-shtata>
5. Намиот Д.Е. Умные города 2016 // International Journal of Open Information Technologies. 2016. №1 С.1-3.
6. Ганин О.Б., Ганин И.О. «Умный город»: перспективы и тенденции развития // Журнал ARSADMINISTRANDI, №1, 2014.

### **ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ «ԽԵԼԱՑԻ ՔԱՂԱՔ» ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

#### **Արման Ավետյան**

ՀՈՀ, Կառավարման, բիզնեսի և զբոսաշրջության ամբիոն, հայցորդ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ

Ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրել է մարդու կենսագործունեության վերափոխմանը: Գործընթացը արագացել է նաև նոր կորոնավիրուսային վարակի տարածման հետևանքով, ինչի արդյունքում շատ մարդիկ ստիպված են եղել նվազագույնի հասցնել կենդանի շփումը և անցնել վիրտուալ հարթակի: Այս բոլոր գործընթացները չեն կարող շրջանցել նաև քաղաքային տնտեսությանը:

Լուծման արդյունավետ մոդել է առաջարկում «Խելացի քաղաք» ռազմավարությունը, որը ենթադրում է տեղեկատվական – հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) և իրերի ինտերնետի (ԻԻ) լայն կիրառում քաղաքային տնտեսության կառավարման գործընթացում: Հողվածը նվիրված է բացահայտելու քաղաքային տնտեսության կառա-



վարման «Խելացի քաղաք» ռազմավարության որոշ առանձնահատկություններ և հիմնախնդիրներ:

**Հիմնաբառեր.** Բարձր տեխնոլոգիաներ, իրերի ինտերնետ, հարացույց, ռազմավարություն, քաղաքային տնտեսություն:

### **SOME FEATURES AND PROBLEMS OF THE URBAN MANAGEMENT STRATEGY «SMART CITY»**

**Arman Avetyan**

RAU, Chair of Management, Business and Tourism, Researcher  
National Defense Research University, MoD RA

The development of modern technologies has led to the transformation of human life. The process also accelerated as a result of the spread of a new coronavirus infection, which led to the forced minimization of live communication and the transition to a virtual platform. All these processes can't be bypassed by the urban economy.

An effective solution is offered by the «Smart city» strategy, which implies the widespread use of information and communication technologies (ICT) and the Internet of things (IoT) in the process of urban management. This article is devoted to identifying some features and problems of the «Smart city» urban management strategy.

**Keywords:** High technologies, internet of things, paradigm, strategy, urban economy.

*Տրվել է տպագրության՝ 20.10.2020թ.  
Գրախոսվել է՝ 11.11.2020թ.*

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

#### **Թաթույ Մանասերյան**

ԵՀ, Ֆինանսների և փնտրագիտության ամբիոն, փնտ.դ., պրոֆեսոր  
tatoulm@gmail.com, +374 91 458910

Ագրարային ոլորտում առողջ մրցակցության համար բարենպաստ պայմաններ ձևավորելու հետ մեկտեղ, պետության հիմնական գործառույթների կիրառության շնորհիվ անհրաժեշտ է իրականացնել նպատակային և ծրագրված ագրարային քաղաքականություն: Ստեղծված իրավիճակում պետության դերը կարող է ակտիվանալ ոչ միայն գյուղացիական կոոպերացիայի մասին օրենքի կիրարկմամբ, այլև արտոնյալ վարկերի տրամադրմամբ և պետական մթերումների (պետական պատվերի) նվազագույն քանակով գյուղմթերքների արտադրության խթանմամբ:

**Հիմնաբառեր.** Ագրարային քաղաքականություն, գյուղատնտեսության մրցունակություն, աղքատության մակարդակ, պետական ռազմավարություն

Հանրապետությունում առկա սոցիալական խնդիրները մեղմելու, ազգաբնակչության պարենային անվտանգությունն ապահովելու, գյուղատնտեսության առջև ծառայած խնդիրները քննարկելիս հաճախ հիշատակվում է երկրում աղքատության մակարդակը և դրա կրճատմանը միտված քաղաքականության անհրաժեշտությունը: Ավելին, տարիներ առաջ կառավարության և փորձագիտական հանրության ջանքերով մշակվեց նաև Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ԱՀՌԾ): Կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ տվյալ դեպքում աղքատությունը ոչ թե պատճառ է, այլ հետևանք, ուստի պետք է պայքարել ոչ թե հետևանքի դեմ, այլ այն ծնող պատճառի դեմ: Արդյունքում, նման ծրագրի իրականացումը կհանգեցնի այսօր ագրարային ոլորտում տեղ գտած բացասական երևույթների մի զգալի մասի կրճատմանը կամ վերացմանը:

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### Նյութը և մեթոդները

Տնտեսության տարբեր ճյուղերից Հայաստանի համար առանձնահատուկ կարևորվում է գյուղատնտեսությունը, որը մեր ուսումնասիրության կարևոր առանցքն է ոչ միայն աշխատուժի ներգրավածության բարձր տեսակարար կշռի և աշխատանքի ցածր արդյունավետության մտահոգիչ գործոնների, այլև Առևտրի համաշխարհային կազմակերպության պահանջների կատարման և հայրենական ապրանքների մրցունակության բարձրացման հրամայականն իրականություն դարձնելու պատճառով [WTO, Armenia, 2005]: Առկա խնդիրների ուսումնասիրությունը հիմնված է վիճակագրական տվյալների վերլուծության, առանձին երևույթներից դեպի ավելի ընդհանրական հիմնահարցերի բացահայտման և ընդհանրացումների, ոլորտում առկա միտումների և զարգացումների պատճառահետևանքային կապերի բացահայտման, փորձագիտական գնահատականների համադրման և այլ մեթոդների վրա: 2020թ. ինչպես համավարակի, այնպես էլ պատերազմական գործողությունների անուղակի և անմիջական ազդեցության ներքո տնտեսական իրավիճակի շարունակական վատթարացման արդյունքում տնտեսական անկումն առաջին ինն ամիսների կտրվածքով կազմել է 6,6 տոկոս: Ներկայումս գյուղատնտեսության ոլորտը գտնվում է որոշակի ճգնաժամային միտումների պայմաններում. ագրարային ոլորտում զբաղվածների թիվն ընդհանուրի մեկ երրորդից ավելին է, ինչը նշանակում է, որ ներգրավված աշխատուժի սոցիալական պայմանների վատթարացումը կհանգեցնի նաև հիշյալ ցուցանիշի մակարդակի վատթարացմանն ամբողջ երկրով մեկ: Իր հերթին, սա ավելացնում է ուրբանիզացիայի գործընթացը, ինչն էլ սնուցում է անցանկալի ծավալների հասած արտագաղթը, որը փորձագետների վկայությամբ միայն կես տարում կազմել է 45000 [Արամ Սաֆարյան, 2019]: Գյուղատնտեսության ոլորտի անկման պատճառների հիմքում ընկած է գյուղատնտեսության նախարարության լուծարումը, պարենային անվտանգությանը միտված հստակ աշխատանքային ծրագրի, ինչպես նաև ավելի լայն առումով՝ ագրարային քաղաքականության փաստացի բացակայությունը, փոքր տնտեսությունների հետ պետության համագործակցու-

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

թյան դադարեցումը և այլն [Թ.Մանասերյան, 2020]: Ընդհանուր առմամբ, տնտեսական ակտիվությունը Հայաստանում 9 ամսվա ընթացքում գրանցել է 6.6% անկում, բայց սեպտեմբերին մեկ ամսվա ընթացքում աճել է 10.6%: 2020-ի սեպտեմբերին, 2019-ի սեպտեմբերի համեմատ, անկումը կազմել է 7,5%, իսկ 2020-ի օգոստոսի համեմատ՝ տնտեսական ակտիվության ցուցանիշը, ընդհակառակը, աճել է 10,6% -ով: Գյուղատնտեսության ոլորտում, այս տարվա առաջին ինն ամիսների ընթացքում, արտադրության ծավալը կազմել է 555 211,4 մլն դրամ՝ 2019 թվականի հունվար-սեպտեմբերի համեմատ աճելով 0,5% -ով [ԱՎԾ, 2020]: Կարևոր է նկատել, որ այսօր երկրի ՀՆԱ-ի 40%-ն արտադրվում է 340 հազար գյուղացիական տնտեսությունների կողմից: Այն կազմում է ապրանքաշրջանառության մեկ հինգերորդ մասը: Ցածր է աշխատանքի արտադրողականությունը, ու թեև Հայաստանում այն ունի աճի միտում, սակայն աճի տեմպը դեռևս զիջում է համաշխարհային միջին մակարդակին: Վերջինս ենթադրում է արտադրողականության աճ՝ մրցակիցներին գերազանցող տեմպերով: Հայաստանում վերջին տասնամյակում մեկ աշխատողի հաշվով համախառն ավելացված արժեքը (ՀԱԱ) նկատելի աճ է գրանցել: Մեկ աշխատողի հաշվով ՀԱԱ-ն ավելացել է շուրջ 1,700 ԱՄՆ դոլարով (հաստատուն ԱՄՆ դոլար, 2010)՝ 3% միջին տարեկան աճի տեմպով: Մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԱ-ի միջին տարեկան աճի տեմպն էլ ավելի բարձր է՝ 5% [Արմենպրես, 2019]:

### Արդյունքները և վերլուծությունը

Մեր դիտարկմամբ առանց մրցունակության մակարդակի բարձրացման և արտահանման ծավալների ավելացման իրական զարգացման մասին խոսք լինել չի կարող: Արտադրողականության աճն էական ազդեցություն կարող է թողնել ոչ միայն գյուղատնտեսության, այլև այս ոլորտին առնչվող այլ արտադրությունների և ծառայությունների վրա: Իր հերթին, աշխատուժի շուկայում մրցակցությունը կարող է հանգեցնել արտահանող արտադրություններում եկամուտների աճին: Այս ամենը պայմանավորված է որոշակի տնտեսական բարեփոխումներով, ո-

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

րոնց մասշտաբն ու արդյունքները մեծապես պայմանավորված կլինեն ավանդական ոլորտների, մասնավորապես՝ գյուղատնտեսության զարգացմամբ: Ակնկալվում է, որ այս ոլորտներում արտադրողականության աճը կհանգեցնի որոշակի աշխատատեղերի զուտ կորստի (կգերազանցի ընդլայնված արտադրության շնորհիվ ստեղծված աշխատատեղերի թիվը): Տնտեսության արտահանելի ոլորտներում ստեղծված հնարավորությունները պետք է կարողանան կլանել ավանդական ոլորտների և գյուղատնտեսական հատվածի ավելցուկ աշխատուժը՝ առաջացնելով կառուցվածքային փոփոխությունների և հմտությունների զարգացման անհրաժեշտություն [Արմենպրես, 2019]: Նման վերափոխումներից՝ հողի համատարած սեփականաշնորհումն իր դրական արդյունքների հետ միասին, անսպասելի բացասական շրջադարձեր է բերել հայ գյուղացու համար: Հայաստանում գյուղատնտեսական նշանակության հողերը բավականին մասնատված են, հատկապես Արարատյան դաշտավայրում: Օրինակ՝ Արարատի մարզում սեփականաշնորհված 1 հողաբաժնի միջին չափը կազմում է 0.48 հա. Արմավիրում՝ 0.68 հա, որոնք էլ տրոհված են 3-4 հողակտորների: Հողատարածքների մասնատվածությունն անհնար է դարձնում գյուղտեխնիկայի և մեխանիզացիայի օգտագործումը: Մասնավորապես, դժվարացել է հողերի մշակումը լեռնային բնակավայրերում, որտեղ պահանջվում է տվյալ տեղանքին համապատասխան գյուղտեխնիկա: Չի ձևավորվել նաև հողի շուկան, որը դանդաղեցնում է գյուղատնտեսության զարգացումը՝ ողջ երկրի տարածքում: Մյուս կողմից, նկատվում է հատկապես բերրի հողատարածքների զանգվածային կենտրոնացում՝ համեմատաբար սահմանափակ թվով մարդկանց ձեռքին: Հողատարածքներն այդպիսով վերածվում են լատիֆունդիաների, որոնք անհամատեղելի են ազատ մրցակցության հոչակած սկզբունքների հետ: Մեր համոզմամբ, այնքան վտանգավոր չէ հողերի կենտրոնացման բուն գործընթացը, որքան այն փաստը, որ հողի սեփականատերերից շատերը չեն շտապում զբաղվել հողի մշակմամբ՝ այն մատնելով պարապուրդի, հետևաբար, ժամանակի ընթացքում հանգեցնելով հողի որակի անկման և երկրի տնտեսության համար այնքան կարևոր առանց այն էլ սահմանափակ պիտանի հողատարածքների ընդհանուր ծավալի կրճատման:

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սեփականատերերն, այդպիսով, սպասում են հարմար պահի՝ խորհրդանշական գումարներով ձեռք բերած հողատարածքներն առավելագույն շահավետությամբ վերավաճառելու համար [Մայթրիշ, Դիլիփ, 2014]:

Շրջանառությունից ակամայից դուրս մնացած հողատարածքները վերստին օգտագործելու և սեփականատերերին տնտեսապես հողօգտագործումը հարկադրելու նպատակով մեր կողմից առաջարկվում է չօգտագործվող հողատարածքներից գանձել չօգտագործման հարկ՝ այն ամեն տարի երկրաչափական պրոգրեսիայով ավելացնելով մինչ այն աստիճան, որ սեփականատերերին ձեռնտու չլինի չօգտագործվող տարածքների համար մեծ գումարներ վճարել: Արդյունքում անհրաժեշտություն կառաջանա կամ մատչելի շուկայական գներով հողը զիջել դրա իրական արժեքը գնահատողներին կամ սեփական ուժերով կազմակերպել հողերի մշակում, որը բնականաբար նվազագույնի կիջեցնի նաև հարկային բեռը [Ն.Մանասերյան, 2005]:

Այսօր ավելի, քան երբևէ, կարևոր է բարձրացնել գյուղատնտեսության ոլորտում աշխատանքի արդյունավետությունը, այն աստիճանաբար տեղափոխելով արդյունաբերական և տեխնոլոգիական բարձր հիմքերի վրա: Միայն մրցունակության բարձր մակարդակը թույլ կտա լուծել երկրի պարենային անվտանգության խնդիրը: Ընդամին, երկիրը կերակրող գյուղացին ինքն այսօր սոցիալական պաշտպանության և համակարգային աջակցության խնդիր ունի: Թեև վերջին շրջանում որոշակի միջոցներ են ձեռնարկվում հակակարկտային ցանցերով գյուղացիական տնտեսություններին աջակցելու, կաթիլային համակարգերի տեղադրումն առավել մատչելի դարձնելու և համեմատաբար էժան գներով պարարտանյութեր մատակարարելու ուղղությամբ, ապահովագրական համակարգի ներդրումը գյուղատնտեսության բնագավառում առանց պետության մասնակցության անիրատեսական է ներկայանում: Անհարժեշտություն է առաջացել առաջնահերթ քայլեր ձեռնարկելու սելեկցիոն անվտանգության ապահովման ասպարեզում, ինչը թույլ կտա նվազագույնի հասցնելու գենետիկորեն մոդիֆիկացված սննդամթերքից առաջացող սպառնալիքները: Հայ սելեկցիոներների

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

առջև պետությունը պետք է խնդիրներ դնի օգնի դրանց հանգուցալուծմանը:

Գյուղատնտեսության ոլորտում հիշատակված և այլ խնդիրների արդյունավետ լուծումը թույլ կտա նաև արդյունավետ լուծումներ գտնել հայկական գյուղերի ամրացման, համայնքների և տարածքների համաչափ զարգացման, ամայացած գյուղերի ու շեների տարաբնակեցման, և առաջին հերթին՝ սահմանամերձ համայնքների ըստ ամենայնի զարգացման:

Գյուղերի և գյուղացիական տնտեսությունների ամրապնդումը, գյուղատնտեսության ոլորտում կենսական նշանակության ծրագրերի մշակումն ու իրականացումը պետք է զուգորդվեն ոլորտի փորձագետների մասնակցությամբ պետության կողմից ընթացիկ և հեռանկարային ագրարային քաղաքականության հիմնադրույթների մշակման և դրանց իրականացման հետ:

Համաշխարհային փորձը վկայում է, որ հատկապես գյուղատնտեսության ոլորտում պետության դերը ոչ թե նվազում է, այլ ավելի ակտիվանում է՝ հաշվի առնելով նաև այն պատասխանատվությունը, որ կրում է պետությունը՝ ոլորտի զարգացման, ազգաբնակչությանը որակյալ պարենով ապահովելու և տնտեսության այս ճյուղի մրցունակությունը բարձր պահելու գործում: Խոսքից պետք է գործնական կիրառություն ստանա գյուղացիական կոոպերացիան, գյուղացուն խորհրդանշական տոկոսադրույքով վարկերի և դրանց նպատակային օգտագործման համար խորհրդատվության տրամադրումը, պետական մթերումների որակապես նոր համակարգի ստեղծումը: Ի վերջո, դա են պահանջում պետության կողմից իրագործվող կարգավորիչ, վերահսկիչ գործառույթները: Համեմատության համար նշենք, որ ոչ միայն զարգացած, այլև զարգացող բազմաթիվ երկրներ հսկայածավալ սուբսիդիաներ են ուղղում գյուղատնտեսության զարգացմանը: Իսկ մի շարք երկրներում ֆերմերային տնտեսություններն ու ագրոբիզնեսը շատ ավելի շահութաբեր են դառնում հենց պետության անմիջական օժանդակությամբ:

Ցանկալի է նպաստավոր պայմաններ ստեղծել գյուղերում միկրո և փոքր բիզնեսի, փոքր ու միջին արտադրությունների կայացման համար: Պակաս կարևոր չեն նաև ժողովրդական արհեստները, հուշան-

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

վերների արտադրությունը, մրգի տարբեր տեսակներից ստացված խմիչքների, պահածոների փառատոնները:

Ավելի համարձակ քայլերով պետք է նպաստել փոքր ավիացիայի վերագործարկմանը, որը կարող է զգալիորեն իջեցնել գյուղացու կողմից կատարվող ծախսերը թունաքիմիկատների օգտագործման, վնասատուներից, զանգվածային բուսական հիվանդությունների բուժման, արհեստական անձրևներ առաջացնելու ինչպես նաև առանձին դեպքերում ստացված շուտ փչացող բերքը սպառման շուկա հասցնելու և այլ հարցերում:

Կարևոր է նաև հուսալի տեղեկատվություն ստանալ հանրապետության բոլոր համայնքներից՝ մշակովի տարածքների, գյուղատնտեսական բերքի և այլ հարցերի վերաբերյալ, որը թույլ կտա հաշվառել գյուղատնտեսության ոլորտի ներուժն ու մրցակցային առավելությունները, մշակել ամեն համայնքի անձնագիր ու բոլոր ենթաճյուղերի մանրակրկիտ քարտեզագրում:

### **Եզրակացություն**

Ուսումնասիրության արդյունքում հարկ է կատարել հետևյալ հիմնական եզրահանգումները.

- Ոլորտում առկա բազմաթիվ խնդիրներին համարժեք լուծումներ տալու համար պետք մշակել և իրականացնել հանրապետության առանձնահատկություններից բխող և ոլորտի ու հայկական գյուղի զարգացմանը միտված համապարփակ ագրարային քաղաքականություն;
- կարևորելով պետության դերը գյուղատնտեսության զարգացման բնագավառում, անհրաժեշտ է նաև մշտապես իրականացնել պետության կողմից հայրենական արտադրության գյուղմթերքների և դրանց վերամշակումից ստացված ապրանքների համար արտերկրի շուկաների բազմաստիճան և բազմակողմանի ուսումնասիրություն, ինչպես նաև հայրենական ապրանքների ցուցահանդեսների ավելի հավակնոտ աջակցություն և գովազդ;
- հայրենական ապրանքների գովազդի ամենաարդյունավետ միջոցներից մեկը պետության գործադիր մարմնի ներկայացու-



## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- ցիչների և գործարարների արտերկրի այցելությունների ժամանակ հայրենական ապրանքների ներկայացումն ու պատշաճ ներկայացումն է և որպես հուշանվեր դրանց տարածումը;
- քանի որ արտերկրի շուկաների խորը և համակողմանի ուսումնասիրությունն ու գյուղմթերքների մրցունակության բարձրացումը, դրանց իրացման արդիական ձևերի կիրառումն իրենց չեն կարող թույլ տալ անգամ գյուղացիական տնտեսություններից ամենահաջողակները կամ ագրարային հատվածում մեծ կարողություններ ձևավորած միջին կամ խոշոր տնտեսավարողները, պետության աջակցությունը պետք է լինի հասցեական և նպատակային;
  - երկրի իմիջի և մրցակցային կարողությունների իրացման հարցում պետության դերը գնալով կարող է աճել՝ դիմակայելու տարբեր երկրների կողմից նետված անարդար մրցակցության մարտահրավերը<sup>12</sup> [Առևտրի Համաշխարհային Կազմակերպություն, 2015];
  - արտաքին տնտեսական կապերի արդյունավետ համադրումը պետք է դիտարկել որպես կարևոր պետական գործառույթ՝ հիմնված գյուղացիական տնտեսությունների ամենակենսական և առանցքային կարիքների հաշվառման վրա;
  - կարևոր է ուսումնասիրել ոչ միայն և ոչ այնքան զարգացած երկրների տնտեսավարման մոդելները, որոնք, իհարկե, ձեռք են բերվում զարգացող երկրների համար անհասանելի միջոցներով, այլ հիմնականում տնտեսության զարգացման համադրելի մակարդակում գտնվող երկրների հաջողության պատմություն-

---

<sup>12</sup> WTO հաշվարկների սպառողները և կառավարությունները զարգացած երկրներում վճարում են տարեկան 350 մլրդ ԱՄՆ դոլար՝ գյուղատնտեսության սուբսիդավորման համար, այլ խոսքով այդ ծախսերը բավարար է, որ 41 մլն կովեր տարին մեկ և կես անգամ բիզնես կարգով ինքնաթիռով պտույտ կատարեն աշխարհի շուրջ: Մեկ այլ հաշվարկով մեկ կովի վրա ԵՄ կողմից կատարվող ծախսերն ավելին են, քան Ռուսաստանի գյուղատնտեսությունում մեկ շնչին ընկնող եկամուտները  
([http://www.wto.org/english/res\\_e/doload\\_e/10b\\_e.pdf](http://www.wto.org/english/res_e/doload_e/10b_e.pdf)):

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ները՝ դրանք փորձելով հարստացնել ու կիրառել հիմնականում տեղայնացման ճանապարհով;<sup>13</sup>

- արտաքին կապերի համադրումը միջազգային կառույցների հետ աշխատանքները կարելի է ավելի արդյունավետ դարձնել նաև Հայաստանում հավատարմագրված միջազգային կառույցների, Սփյուռքի տարբեր կառույցների հետ համատեղ ծրագրերով:
- ինչպես գյուղատնտեսության ներկա կարողության առաջարկվող գույքագրումը, ագրարային հատվածի կարիքները ևս հաշվառման կարիք ունեն. այն պահանջում է հետևողական և համակարգված մոտեցում;

Հայաստանի գյուղատնտեսության զարգացման համար առկա տնտեսական ներուժը, միջազգային կառույցների և Սփյուռքի կարողությունը լիովին բավարար են մրցակցային առավելությունների լիարժեք բացահայտման, դրանց շահավետ իրացման և երկրի տնտեսական առաջընթացին շոշափելի ազդակ հաղորդելու համար:

### Օգտագործված գրականության ցանկ

1. ISS/UNDP Land, Poverty and Public Action Policy Paper No. 6 Land Reform, Rural Poverty and Inequality in Armenia: A Pro-Poor Approach to Land Policies Max Spoor Institute of Social Studies (ISS) – Centre for

---

<sup>13</sup> Ուշադրության է արժանի, մասնավորապես, Թայլանդում OTOP՝ one tamboon one product ծրագրի հաջող իրագործումը, որի նպատակն է բացահայտել մրցակցային առավելությունը յուրաքանչյուր բնակավայրում և աստիճանաբար կենտրոնացնել բոլոր մարդկային, ֆինանսական և հումքային ռեսուրսները դրա արտադրության վրա: Կառավարության կողմից տրամադրված փոքր վարկերի գերակշիռ մասը վերադարձվել են 1-2 տարում, երկրի տարբեր բնակավայրերի միջև աշխուժացել է ապրանքափոխանակությունը, աճել է մասնագիտացված արտադրությունների մրցունակ ապրանքների արտահանումը: Ուսանելի փորձ է կուտակված նաև Հնդկաստանում՝ «Կանաչ հեղափոխության» իրականացման արդյունքում: Նպատակային ծրագրերի իրագործման օրինակ է նաև Չինաստանի ներմուծման փոխարինման արդյունավետ քաղաքականությունը:

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

the Study of Transition and Development (CESTRAD) and CIDOB, Barcelona September 2005, pp.19-26.

<http://citeseerx.ist.psu.edu/viewdoc/download?doi=10.1.1.111.5689&rep=rep1&type=pdf>

2. Մենք տնտեսական աճ կարող ենք գրանցել. Թաթուլ Մանասերյան, <https://newarmenia.am/%D5%B4%D5%A5%D5%B6%D6%84-%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%B3-%D5%AF%D5%A1%D6%80%D5%B8%D5%B2-%D5%A5%D5%B6%D6%84-%D5%A3%D6%80%D5%A1%D5%B6%D6%81%D5%A5%D5%AC-%D5%A9%D5%A1/>
3. Экономическая активность в Армении за 9 месяцев зарегистрировала спад на 6,6%, но в сентябре за месяц выросла на 10,6%; [http://arka.am/ru/news/economy/ekonomicheskaya\\_aktivnost\\_v\\_armenii\\_z\\_a\\_9\\_mesyatsev\\_zaregistrirovala\\_spad\\_na\\_6\\_6\\_no\\_v\\_sentyabre\\_za\\_me/](http://arka.am/ru/news/economy/ekonomicheskaya_aktivnost_v_armenii_z_a_9_mesyatsev_zaregistrirovala_spad_na_6_6_no_v_sentyabre_za_me/)
4. Արմենպրես, Հայաստանում վերջին տասնամյակում մեկ աշխատողի հաշվով ավելացված արժեքը նկատելի աճ է գրանցել <https://armenpress.am/arm/news/899255/>
5. Maitreesh Ghatak, Dilip Mookherjee, Land acquisition for industrialization and compensation of displaced farmers, Journal of Development Economics
6. Volume 110, September 2014, Pages 303-312,, <https://doi.org/10.1016/j.jdeveco.2013.01.001>
7. Նորայր Մանասերյան «Ագրարային հարցը երեկ և այսօր», Երևան, «Տնտեսագետ», 2005թ. էջ 35-74:
8. Առևտրի համաշխարհային կազմակերպության կայք էջը, ([http://www.wto.org/english/res\\_e/doload\\_e/10b\\_e.pdf](http://www.wto.org/english/res_e/doload_e/10b_e.pdf)):

### АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА АРМЕНИИ И РОЛЬ ГОСУДАРСТВА

**Татул Манасерян**

ЕУ, кафедра Финансов и экономики, д.э.н., профессор

Наряду с созданием условий, способствующих здоровой конкуренции в аграрном секторе, необходимо осуществлять целенаправленную аграрную политику, используя основные функции государства. В этой ситуации роль государства может быть активизирована не только за счет реализации Закона о сельской кооперации, но и путем предоставления льготных кредитов и стимулирования производства сельскохозяйственной продукции с минимальным объемом государственных закупок.

**Ключевые слова:** Аграрная политика, конкурентоспособность сельского хозяйства, уровень бедности, государственная стратегия

### CONTEMPORARY ISSUES OF ARMENIA'S AGRICULTURE AND THE ROLE OF THE STATE

**Tatul Manaseryan**

EU, Chair of Finance and Economics, Doctor of Economics, Professor

Some targeted and planned agrarian policies need to be implemented through the use of the main functions of the state along with the creation of conditions conducive to fair competition in the agrarian sector. In mentioned situation, the role of the state can be activated not only by the application of the Law on Rural Cooperation, but also by granting of preferential loans to farmers and by stimulating the production of agricultural products with a minimal amount of state procurement.

**Keywords.** Agrarian policy, competitiveness of agricultural production, poverty level,, government strategy

*Տրվել է փաշտոնաթան՝ 20.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 11.11.2020թ.*

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

#### **Արմեն Քթոյան**

ՀՊՏՀ, Վիճակագրության ամբիոն, րն.ր. թ., դոցենտ  
arm.ktoyan@gmail.com, +374 99 779027

#### **Ելենա Մանուկյան**

ՀՊՏՀ, Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոն, րն.ր. թ.,  
դոցենտ  
yelenaman@yahoo.com

#### **Անուշ Շիրինյան**

ՀՊՏՀ, Վիճակագրության ամբիոն, րն.ր. թ., դոցենտ  
shirinyananush@mail.ru, +374 93 522201

#### **Աննա Մադինյան**

ՀՊՏՀ, Վիճակագրության ամբիոն, ասիստենտ  
matinyan1971@mail.ru, +374 99 240540

#### **Դավիթ Հարությունյան**

ՀՊՏՀ, Վիճակագրության ամբիոն, ասպիրանտ  
davit.harutiunian@gmail.com, +374 93 507411

Կրթության ծախսերի արդյունավետության գնահատման համակարգում կարևոր տեղ է զբաղեցնում ելակետային ցուցանիշների ընդհանրացումը: Սույն հոդվածում գործոնային վերլուծության և ինդեքսային մեթոդների համադրությամբ մշակվել են կրթության ներդրանքն ու վերջնարդյունքները նկարագրող ցուցանիշների համախմբությունների ընդհանրացման բանաձևեր, որոնց կիրառությամբ կատարվել են համապատասխան գնահատումներ:

Ընդհանուր առմամբ, սրացված արդյունքները ներառում են կրթության ծախսերի արդյունավետության գնահատման մեթոդական մոտեցումների հիմնական ուղղությունները և ունեն գիտամեթոդական հիմնավորում: Կատարված հետազոտությունը լայն հնարավորություն է ընձեռում կրթական հաստատությունների գործունեության ֆինանսավորման գնահատման համակարգերի մշակման ընթացքում մեթոդական ապահովման խնդիրների լուծման համար:

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**Հիմնաբառեր.** Կրթության ներդրանք, կրթության վերջնարդյունք, արդյունավետության ցուցիչ, ընդհանրացված գնահատական, գործոնային վերլուծություն:

Արդի պայմաններում կրթական համակարգում լայնորեն կիրառվում են արդյունքի չափորոշիչների վրա հիմնված արդյունավետության գնահատման մոդելները, որոնք կարևոր նշանակություն ունեն կրթական գործառնությունների վերջնարդյունքների կանխատեսման, ինչպես նաև կրթական համակարգի կարևոր բնութագրիչների նկարագրության գործում [3, p. 56]:

Կրթության ոլորտում օգտագործվում է արդյունքի չափորոշիչների լայն շրջանակ, ինչը որոշակիորեն բարդացնում է թիրախային կառավարչական որոշումների կայացման գործընթացը: Ուստի անհրաժեշտություն է առաջանում արդյունքի մասնակի ցուցիչները ընդհանրացնել մեկ միասնական կամ մի քանի խմբային ցուցիչներում, որոնք էլ, ըստ էության, կհանդիսանան արդյունավետության հիմնական ցուցիչների գնահատականները կամ արժեքները:

Նկարագրված խնդրի լուծման լուրջ ներուժ է պարունակում գործոնային վերլուծությունը: Այն հնարավորություն է տալիս նվազեցնել ցուցանիշների համախմբության չափողականությունը, վերհանել այն հենքային օրինաչափությունները, որոնք ընկած են դիտարկվող ցուցանիշների հիմքում և այդ օրինաչափությունների ընդհանրացմամբ ստանալ լատենտային փոփոխականներ՝ վերջինները հետագայում ընդունելով որպես ոլորտի կամ դրա առանձին խոշոր ուղղության միասնական բնութագրիչներ:

Սույն հոդվածի նպատակն է իրականացնել կրթության ներդրանքն ու վերջնարդյունքները նկարագրող ցուցանիշների համախմբությունների ընդհանրացում՝ գործոնային վերլուծության գործիքակազմի կիրառմամբ, և ստացված ընդհանրական գնահատականները կիրառել կրթության ոլորտում ֆինանսական և ռեսուրսային ծախսումների արդյունավետության գնահատման համար:

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության շրջանակներում կրթության ներդրանքի (input) և վերջնարդյունքի գնահատման մոդելի դուրսբերումն իրականացվել է հետևյալ ընթացակարգով՝

- ցուցանիշների շրջանակի հստակեցում,
- գործոնային վերլուծության իրականացում,
- կշիռների հաշվարկ, ցուցիչների կառուցում,
- ցուցիչների արժեքների հաշվարկ [4, ր. 1-7]:

Որպես կրթության ոլորտում ներդրանքի բաղադրիչներ դիտարկվել են հետևյալ ցուցանիշները.

1. Կրթական առաջին մակարդակում սովորողների զուտ ընդգրկվածությունը, տոկոսներով
2. Կրթական երկրորդ մակարդակում սովորողների համախառն ընդգրկվածությունը, տոկոսներով
3. Կրթական երրորդ մակարդակում սովորողների համախառն ընդգրկվածությունը, տոկոսներով
4. Հանրակրթության հաստատություններում համացանցի հասանելիությունը
5. Ուսուցիչ/աշակերտ հարաբերակցությունը հանրակրթությունում
6. Տարրական կրթության ընդհանրական քանակային բնութագրիչը
7. Կրթության քանակային ընդհանրական ցուցիչ

Ընտրանքում ներառվել են զարգացման տարբեր մակարդակ ունեցող 94 երկրներ: Գործոնային վերլուծությունը կատարվել է գլխավոր բաղադրիչների եղանակով [2, c. 121]: Ստորև ներկայացված աղյուսակներում ամփոփված են գործոնային վերլուծության արդյունքները:

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**Աղյուսակ 1. Ընդհանրություններ<sup>1</sup>**

<b>Ցուցանիշ</b>	<b>Սկզբնական</b>	<b>Արդաձում</b>
Կրթական առաջին մակարդակում սովորողների զուտ ընդգրկվածությունը, տոկոսներով	1.000	.668
Կրթական երկրորդ մակարդակում սովորողների ընդգրկվածությունը, համախառն, տոկոսներով	1.000	.849
Կրթական երրորդ մակարդակում սովորողների համախառն ընդգրկվածությունը, տոկոսներով	1.000	.756
Կրթության քանակային ընդհանրական ցուցիչ	1.000	.902
Հանրակրթության հաստատություններում համացանցի հասանելիությունը	1.000	.601
Ուսուցիչ.աշակերտ հարաբերակցությունը հանրակրթությունում	1.000	.723
Տարրական կրթության ընդհանրական քանակային բնութագրիչը	1.000	.805

**Աղյուսակ 2. Գործոնային վերլուծության արդյունքները. բացատրված ընդհանուր վարիացիան**

<b>Բաղադրիչը</b>	<b>Սեփական արժեքներ</b>		
	<b>Ընդամենը</b>	<b>Վարիացիայի %</b>	<b>Կուտակային տոկոս %</b>
<b>1</b>	5.304	75.770	75.770
<b>2</b>	.594	8.488	84.258
<b>3</b>	.521	7.441	91.699
<b>4</b>	.321	4.590	96.289
<b>5</b>	.173	2.468	98.757
<b>6</b>	.060	.863	99.620
<b>7</b>	.027	.380	100.000

<sup>1</sup> Այս և մյուս աղյուսակներում ամփոփված են հեղինակների կողմից կատարված գործոնային վերլուծության արդյունքները՝ SPSS փաթեթի կիրառմամբ:



## **ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միայն մեկ բաղադրիչի պարագայում է սեփական արժեքը մեծ 1-ից, նաև այն, որ հենց այդ բաղադրիչը նկարագրում է ընդհանուր վարիացիայի մոտ 76 տոկոսը, ապա կարող ենք հետևություն անել, որ ցուցանիշների նկարագրված կազմի չափողականությունը կարող ենք նվազեցնել ընդհուպ մինչև 1-ի: Այսինքն՝ արդարացված և հիմնավորված է դիտվում 7 ցուցանիշների ընդհանրացումը մեկի մեջ:

Ընդհանրական ցուցիչի բաղադրիչների հարաբերական կարևորության գնահատականների դուրսբերումը կատարվել է ընդհանրությունների ցուցանիշի վրա [1, էջ 76-77], որոնց ձևափոխությունների արդյունքում ստացվել են ստորև աղյուսակում բերված գործակիցները:

**Աղյուսակ 3. Ներդրանքի ընդհանրական ցուցանիշի բաղադրիչների հարաբերական կարևորությունն արտացոլող կշռային գործակիցները.**


<b>Ցուցանիշ</b>	<b>Կշիռ</b>
<i>Կրթական առաջին մակարդակում սովորողների զուտ ընդգրկվածությունը, տոկոսներով</i>	0.126
<i>Կրթական երկրորդ մակարդակում սովորողների ընդգրկվածությունը, համախառն, տոկոսներով</i>	0.160
<i>Կրթական երրորդ մակարդակում սովորողների համախառն ընդգրկվածությունը, տոկոսներով</i>	0.143
<i>Կրթության քանակային ընդհանրական ցուցիչ</i>	0.170
<i>Հանրակրթության հաստատություններում համացանցի հասանելիությունը</i>	0.113
<i>Ուսուցիչ.աշակերտ հարաբերակցությունը հանրակրթությունում</i>	0.136
<i>Տարրական կրթության ընդհանրական քանակային բնույթագրիչը</i>	0.152

Աղյուսակ 3-ում ներկայացված գործակիցների օգտագործմամբ կառուցվել է կրթության ներդրանքի ընդհանրական ցուցիչ, որի արժեքները հաշվարկվել են վերլուծության մեջ ներառված 94 երկրների հա-


## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

մար: Ցուցանիշի առավել պատկերավորության համար այն ներկայացվել է 100 միավորային սանդղակով:

Հետազոտական հետաքրքրություն է ներկայացնում ներդրանքի ընդհանրական ցուցանիշի դիտարկումը կրթության ծախսային տարբեր ցուցանիշների կամ պարզապես երկրների ռեսուրսային տարբեր կարողությունների համար: Ըստ այդմ, ստորև ներկայացված են կրթության ծախսը բնութագրող տարբեր ցուցանիշների դեպքում կրթության ոլորտի ներդրանքն ըստ դիտարկվող երկրների:




**Գծապատկեր 1. Կրթության ոլորտում ներդրանքի ընդհանրական գնահատականը ըստ բյուջեային ծախսերի կառուցվածքում կրթության ծախսերի մասնաբաժնի<sup>2</sup>**




**Գծապատկեր 2. Կրթության ոլորտում ներդրանքի ընդհանրական գնահատականը ՀՆԱ նկատմամբ բյուջեային ծախսերի տարբեր մակարդակների դեպքում**

<sup>2</sup> Այս և մյուս գծապատկերները կառուցվել են հեղինակների կողմից: Տվյալների աղբյուրը՝ գործոնային վերլուծության արդյունքում ստացված ընդհանրական ցուցիչները, ելակետային տվյալների աղբյուրները՝ Համաշխարհային բանկի և Գլոբալ տնտեսական համաժողովի տվյալների բազաներ:

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



**Գծապատկեր 3. Կրթության ներդրանքի ընդհանրական գնահատականն ըստ մեկ շնչի հաշվով կրթության ծախսի փարբեր մակարդակների (ԳՀ ԱՄՆ դոլար)**



**Գծապատկեր 4. Կրթության ներդրանքի ընդհանրական գնահատականն ըստ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի փարբեր մակարդակների (ԳՀ ԱՄՆ դոլար)**

Կարելի է արձանագրել, որ կրթության ոլորտում ներդրանքի ընդհանրական ցուցիչի արժեքը կրթության ոլորտում ծախսերի հարաբերական մեծությամբ նշանակալիորեն պայմանավորված չէ: Մյուս կողմից, ներդրանքի վրա էական ազդեցություն ունեն կրթության բյուջետային ծախսերի բացարձակ մեծությունը, նաև՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն: Ըստ այդմ, կրթության ներդրանքի կայուն և արագ աճ կարելի է ապահովել մեկ շնչի հաշվով կրթության ծախսերի մինչև 1000 ԱՄՆ դոլարի սահմանը, որից սկսած աճի տեմպերը էականորեն թուլանում են (գծապատկեր 3):

Նկարագրված ընթացակարգերով կառուցվել է նաև կրթության վերջնարդյունքի գնահատման ընդհանրական ցուցիչ, որով կատարվել են հաշվարկներ՝ երկրների նույն խմբերի համար: Հաշվի առնելով վերջնարդյունքի բնութագրման համար կիրառման ենթակա ցուցանիշների լայն շրջանակը՝ նպատակահարմար է դիտվել վերջնարդյունքի մի քանի մակարդակների գնահատականների կառուցումն ու հաշվարկը: Այսպես, առաջնային մոտարկմամբ կառուցվել են կրթության վերջնարդյունքների առաջնային և երկրորդային ցուցիչներ, որոնց պայմանականորեն կարելի է անվանել համապատասխանաբար առաջին և

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երկրորդ մակարդակի վերջնարդյունքի ընդհանրական գնահատականներ:

Առաջին մակարդակի վերջնարդյունքը դիտարկվել է որպես հետևյալ բաղադրիչների ամբողջություն.

1. Առաջնային կրթության որակը
2. Կրթական համակարգի որակը
3. Մաթեմատիկական և բնագիտական կրթության որակը
4. Հասարակագիտական կրթության որակը
5. Կրթության ընդհանրական որակը
6. Բարձրագույն կրթության և վերապատրաստումների ինտենսիվությունը
7. Վարձու աշխատողների աշխատանքի արտադրողականության և վարձատրության հարաբերակցությունը

Երկրորդ մակարդակի վերջնարդյունքը մեր կողմից դիտարկվել է որպես հետևյալ մասնակի ցուցանիշների համակցություն.

1. Տաղանդներ ստեղծելու երկրի կարողությունը
2. Տաղանդներ պահելու երկրի կարողությունը
3. Ֆիրմայի մակարդակում տեխնոլոգիաների կլանման կարողությունը
4. Գիտահետազոտական ինստիտուտների որակը
5. Համալսարան-արտադրություն համագործակցությունը գիտական հետազոտությունների և մշակումների ոլորտում
6. Գյուտի արտոնագրման հայտերի թիվը, 1 մլն բնակչի հաշվով
7. Ինովացիոն զարգացման ընդհանրական մակարդակը

Վերջնարդյունքը ձևավորող ցուցանիշների ներկայացված խմբերի համար ևս կատարվել է գործոնային վերլուծություն:

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### **Աղյուսակ 4. Վերջնարդյունքների առաջին և երկրորդ մակարդակների ընդհանրական ցուցիչների կշռային գործակիցները**


<b>Առաջին մակարդակի վերջնարդյունք</b>		<b>Երկրորդ մակարդակի վերջնարդյունք</b>	
<b>Ցուցանիշը</b>	<b>Կշիռը</b>	<b>Ցուցանիշը</b>	<b>Կշիռը</b>
Առաջնային կրթության որակը	0.157	Տաղանդներ ստեղծելու երկրի կարողությունը	0.137
Կրթական համակարգի որակը	0.153	Տաղանդներ պահելու երկրի կարողությունը	0.122
Մաթեմատիկական և բնագիտական կրթության որակը	0.139	Ֆիրմայի մակարդակում տեխնոլոգիաների կլանման կարողությունը	0.145
Հասարակագիտական կրթության որակը	0.122	Գիտահետազոտական ինստիտուտների որակը	0.145
Կրթության ընդհանրական որակը	0.170	Համալսարան-արտադրություն համագործակցությունը գիտական հետազոտությունների և մշակումների ոլորտում	0.158
Բարձրագույն կրթության և վերապատրաստումների ինտենսիվությունը	0.132	Գյուլի արտոնագրման հայտերի թիվը, 1 մլն բնակչի հաշվով	0.122
Վարձու աշխատողների աշխատանքի արտադրողականության և վարձատրության հարաբերակցությունը	0.128	Ինովացիոն զարգացման ընդհանրական մակարդակը	0.170

Աղյուսակ 4-ում ներկայացված են արդեն նկարագրված ընթացակարգով դուրսբերված կշռային գործակիցները, որոնք կիրառվել են առաջին և երկրորդ մակարդակների վերջնարդյունքների ընդհանրական ցուցիչի ստացման համար:


## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակում ներկայացված կշռային գործակիցների օգտագործմամբ կառուցվել են կրթության առաջին և երկրորդ մակարդակների վերջնարդյունքների ընդհանրական ցուցիչներ, որոնց արժեքները հաշվարկվել են հետաազոտական ընտրանքում ներառված թվով 94 երկրների համար: Ցուցանիշի առավել պատկերավորության համար այն ներկայացվել է 100 միավորային սանդղակով:

Ստորև ներկայացված են կրթության ոլորտում ծախսի հարաբերական և բացարձակ ցուցանիշների ու առաջին և երկրորդ մակարդակների վերջնարդյունքները առնչությունը նկարագրող գծապատկերներ:




**Գծապատկեր 5. Առաջին մակարդակի վերջնարդյունքը կրթության բյուջեփային ծախս/ընդամենը բյուջեփային ծախս հարաբերակցության փարբեր արժեքների դեպքում**




**Գծապատկեր 6. Երկրորդ մակարդակի վերջնարդյունքը կրթության բյուջեփային ծախս/ընդամենը բյուջեփային ծախս հարաբերակցության փարբեր արժեքների դեպքում**


## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



**Գծապատկեր 7. Առաջին մակարդակի վերջնարդյունքը կրթության բյուջեփային ծախս/ՀՆԱ հարաբերակցության փարբեր արժեքների դեպքում**




**Գծապատկեր 8. Երկրորդ մակարդակի վերջնարդյունքը կրթության բյուջեփային ծախս/ՀՆԱ հարաբերակցության փարբեր արժեքների դեպքում**




**Գծապատկեր 9. Առաջին մակարդակի վերջնարդյունքը մեկ շնչի հաշվով կրթության ծախսի (ԳՀ ԱՄՆ դոլար) փարբեր արժեքների դեպքում**

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ




**Գծապատկեր 10. Երկրորդ մակարդակի վերջնարդյունքը մեկ շնչի հաշվով կրթության ծախսի (ԳՀ ԱՄՆ դոլար) փարբեր արժեքների դեպքում**



**Գծապատկեր 11. Առաջին մակարդակի վերջնարդյունքը մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ԳՀ ԱՄՆ դոլար) փարբեր արժեքների դեպքում**



## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



**Գծապատկեր 12. Երկրորդ մակարդակի վերջնարդյունքը մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ԳՀ ԱՄՆ դոլար) փարբեր արժեքների դեպքում**

Ներկայացված արդյունքները արտացոլում են նույնանման իրողություն, ինչ արձանագրվել էր ներդրանքի պարազայում. կրթության ծախսերի հարաբերական ցուցանիշների նույն մակարդակով կարելի է ապահովել վերջնարդյունքի ինչպես համեմատաբար ցածր, այնպես էլ բավականին բարձր ցուցիչներ: Մինչդեռ ծախսի բացարձակ ցուցանիշների փոփոխությունն ավելի հստակ և ուղղակի ներգործություն է թողնում կրթության վերջնարդյունքների վրա: Հարկ է ընդգծել, որ ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ մակարդակի վերջնարդյունքների համեմատաբար կայուն և բարձր տեմպով աճ կարելի է ապահովել մինչև մեկ շնչի հաշվով կրթության բյուջետային ծախսերի 2000-2500 ԱՄՆ դոլար մակարդակը, որից հետո կրթության վերջնարդյունքի ընդլայնման դանդաղում է արձանագրվում:

Այս ամենով հանդերձ, առանձին խնդիրների լուծման և մասնավորապես՝ կրթության բյուջետային ծախսերի արդյունավետության միասնական գնահատականի ստացման անհրաժեշտությունից ելնելով՝ նպատակահարմար է առաջին և երկրորդ մակարդակի վերջնարդյունքների ընդհանրական գնահատականներից անցում կատարել վերջնարդյունքի միասնական ընդհանրական գնահատականի ստացմանը:

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ


Սույն նպատակի կենսագործման համար, ինչպես և նախորդ դեպքերում, կատարվել է գործոնային վերլուծություն: Աղյուսակում ներկայացված են արդեն նկարագրված ընթացակարգով դուրսբերված կշռային գործակիցները, որոնք կիրառվել են կրթության վերջնարդյունքի ընդհանրական ցուցիչի ստացման համար:

### **Աղյուսակ 5. Միացյալ վերջնարդյունք. կշիռները**


<b>Ցուցանիշ</b>	<b>Կշիռներ</b>
<i>Առաջնային կրթության որակը</i>	0.078
<i>Կրթական համակարգի որակը</i>	0.073
<i>Մաթեմատիկական և բնագիտական կրթության որակը</i>	0.076
<i>Հասարակագիտական կրթության որակը</i>	0.066
<i>Կրթության ընդհանրական որակը</i>	0.082
<i>Բարձրագույն կրթության և վերապատրաստումների ինտենսիվությունը</i>	0.070
<i>Վարձու աշխատողների աշխատանքի արտադրողականության և վարձատրության հարաբերակցությունը</i>	0.062
<i>Տաղանդներ սրբեղծելու երկրի կարողությունը</i>	0.080
<i>Տաղանդներ պահելու երկրի կարողությունը</i>	0.076
<i>Ֆիրմայի մակարդակում տեխնոլոգիաների կլանման կարողությունը</i>	0.069
<i>Գիտահետազոտական ինստիտուտների որակը</i>	0.071
<i>Համալսարան-արտադրություն համագործակցությունը գիտական հետազոտությունների և մշակումների ոլորտում</i>	0.071
<i>Գյուլի արտոնագրման հայտերի թիվը, 1 մլն բնակչի հաշվով</i>	0.052
<i>Ինովացիոն զարգացման ընդհանրական մակարդակը</i>	0.078

Գծապատկերներ 13-16-ում բերված է կրթության ընդհանրական վերջնարդյունքի ցրվածությունը կրթության ծախսային ցուցանիշների և շնչային ՀՆԱ-ի տարբեր մակարդակների դեպքում:

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ




**Գծապատկեր 13.** Կրթության ընդհանրական վերջնարդյունքի գրվածությունն ըստ կրթության բյուջեդային ծախս/ընդամենը բյուջեդային ծախս ցուցանիշի, տոկոս




**Գծապատկեր 14.** Կրթության ընդհանրական վերջնարդյունքի գրվածությունն ըստ կրթության բյուջեդային ծախս/ՀՆԱ ցուցանիշի, տոկոս

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



**Գծապատկեր 15. Կրթության ընդհանրական վերջնարդյունքի ցրվածությունն ըստ մեկ շնչի հաշվով կրթության ծախս ցուցանիշի (ԳՀ, ԱՄՆ դոլար)**



**Գծապատկեր 16. Կրթության ընդհանրական վերջնարդյունքի ցրվածությունն ըստ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշի (ԳՀ, ԱՄՆ դոլար)**

Ընդհանրական վերջնարդյունքի պարագայում ևս ծախսային փոփոխականների հետ առնչությունն ունի նույն բնույթը և ուղղվածությունը, այն է՝ կրթության ծախսերի հարաբերական ցուցանիշների նույն մակարդակով կարելի է ապահովել վերջնարդյունքի ինչպես համեմատաբար ցածր, այնպես էլ բավականին բարձր ցուցիչներ: Կրթության

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

բյուջետային ծախսի բացարձակ մեծության փոփոխությունն ավելի հստակ և ուղղակի ներգործություն է թողնում կրթության վերջնարդյունքների վրա: Կրթության ընդհանրական վերջնարդյունքի համեմատաբար արագ ընդլայնում կարելի է ապահովել մինչև մեկ շնչի հաշվով կրթության բյուջետային ծախսերի 2000-2500 ԱՄՆ դոլար մակարդակը, որից հետո կրթության վերջնարդյունքի ընդլայնման դանդաղում է արձանագրվում:

Ամփոփելով աշխատանքը՝ կարելի է նշել, որ արդյունավետության գնահատման մեթոդական մոտեցումների մեծ մասում կարևորվում է արդյունքը նկարագրող ցուցիչների հստակեցումը, կատարված ծախսերի հետ դրանց համադրությունը: Այն ոլորտներում, որտեղ արդյունքն ունի տարբեր դիտակետեր, դրսևորումներ, բաղադրիչներ, նպատակահարմար է մասնակի ցուցանիշների ընդհանրացման, ագրեգացված ցուցիչի դուրսբերման մեթոդաբանության կիրառությունը:

Այս համատեքստում գործոնային վերլուծությունը հնարավորություն է տալիս ստանալ կրթության ներդրանքն ու վերջնարդյունքները նկարագրող ցուցանիշների համախմբությունների ընդհանրական գնահատականներ: Արդյունավետության ցուցիչների ընդհանրացման, արդյունավետության հիմնական ցուցիչների համար ամփոփ գնահատականների ստացման ներկայացված մեթոդական մոտեցումները կարող են կիրառվել կրթության ոլորտում ֆինանսական և ռեսուրսային ծախսումների արդյունավետության գնահատման համար: Նկարագրված մոտեցմամբ կարելի է նաև ստանալ արդյունքային չափորոշիչներ՝ ըստ կրթության և գիտության ոլորտում իրականացվող հիմնական բյուջետային ծրագրերի և դրանց համապատասխան միջոցառումների:

Կատարված հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել կրթության պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացման խնդիրների լուծման համար:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Սոցիալ-տնտեսական ցուցանիշների գնահատումը հայաստանում SPSS փաթեթի կիրառմամբ: Հետազոտական աշխատանք, ՀՊՏՀ.-Եր.: Տնտեսագետ, 2016.- 101 էջ:
2. Дронов С.В. Многомерный статистический анализ.: Учебное пособие. Барнаул: Изд-во Алт. гос. ун-та, 2003. 213 с.
3. Levin H. M. "Waiting for Godot: Cost-Effectiveness Analysis in Education." In Evaluation Findings that Surprise, ed. Richard Light. San Francisco: Jossey-Bass. 2001. – pp. 55-68.
4. Osborne, J. W. Best practices in exploratory factor analysis. Scotts Valley, CA: CreateSpace Independent Publishing, 2014. 77p.

### ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ БЮДЖЕТНЫХ РАСХОДОВ НА ОБРАЗОВАНИЕ С ИСПОЛЬЗОВАНИЕМ ИНСТРУМЕНТАРИЯ ФАКТОРНОГО АНАЛИЗА.

#### **Армен Ктоян**

ԱԳՁԱ, կադրերի Տատիստիկա, կ.Ձ.Ն., զոցենտ

#### **Елена Манукян**

ԱԳՁԱ, կադրերի Ձոնոմիկո-մաթեմատիկական մեթոդներ, կ.Ձ.Ն., զոցենտ

#### **Ануш Ширинян**

ԱԳՁԱ, կադրերի Տատիստիկա, կ.Ձ.Ն., զոցենտ

#### **Анна Матинян**

ԱԳՁԱ, կադրերի Տատիստիկա, ասսիստենտ

#### **Давид Арутюнян**

ԱԳՁԱ, կադրերի Տատիստիկա, ասպիրանտ

Յ սիստեմե օցենկի էֆֆեկտիվնոստի բյուդձեթնիկ ռասձոդո՜ն ռա օբրազօձո՜ն վաձնօնե մեոտօ ձանիադա օբօբոձո՜նի օնոմալնիկ օկազադեղի. Յ զանօնի ստադե ս օոչեդանիեմ ֆադրօնօնիկ անալիզա և օնդեքսնիկ մեթոդներ ռազրադանադ ֆօրմուղա զոձա օբօբոձո՜նի օոձօկօոքնօստի օկազա-

телей, описывающих вклад в образование и результаты обучения, с использованием которых были сделаны соответствующие оценки.

В целом полученные результаты включают основные направления методических подходов к оценке эффективности расходов на образование и имеют научно-методическую обоснованность. Проведенное исследование дает широкую возможность для решения задач методического обеспечения при разработке систем оценки финансирования деятельности образовательных учреждений.

**Ключевые слова:** Вклад в образование, результат обучения, показатель эффективности, обобщенная оценка, факторный анализ.

### ESTIMATION OF THE EFFICIENCY OF EDUCATION EXPENDITURES USING FACTOR ANALYSIS.

#### **Armen Ktoyan**

ASUE, Chair of Statistics, PhD in Economics, Associate Professor

#### **Yelena Manukyan**

ASUE, Chair of Mathematical Methods in Economics, PhD in Economics, Associate Professor

#### **Anush Shirinyan**

ASUE, Chair of Statistics, PhD in Economics, Associate Professor

#### **Anna Matinyan**

ASUE, Chair of Statistics, Assistant Professor

#### **Davit Harutyunyan**

ASUE, Chair of Statistics, PhD student

Generalization of baseline indicators plays an important role in the system of evaluating cost-effectiveness of education. In this article, a combination of factor analysis and indexing methods has been developed to generalize combinations of indicators describing education input and output by the help of which the corresponding assessments were made.

In general, obtained results include the primary ways of methodological approaches of evaluating cost-effectiveness of education,

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

based on scientifically based methods, the results of which provide wide opportunity for solving methodological issues in the development of systems for financing educational institutions.

**Keywords:** Education input, education output, efficiency indicator, generalized estimation, factor analysis.

*Տրվել է պայագրության՝ 20.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 11.11.2020թ.*



## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

#### Կարինե Հաջյան

ՀՀ ՊԿԱ, Կառավարման ամբիոն, հայցորդ  
karinehajyan@mail.ru, +374 98 899978

Առողջության ապահովագրության շուկան ազգային տնտեսության կարևոր բաղադրիչ է, որի հիմնական խնդիրն առողջապահական համակարգում լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման ֆինանսական մեխանիզմի ստեղծումն է առողջության ապահովագրության սուբյեկտների համապարփակ, ժամանակին բարձրորակ բժշկական օգնություն ստանալու իրավունքի ապահովման համար: Առողջության ապահովագրության շուկայի կայուն զարգացումը պահանջում է ֆինանսական ներուժի ձևավորման, իրացման և ավելացման վերաբերյալ հետազոտություն, ինչը հնարավորություն է տալիս պարզել առողջության ապահովագրության շուկայի հետագա գործառնման հեռանկարները: Հոդվածում քննարկվում է Հայաստանի Հանրապետության առողջության ապահովագրության շուկայի ֆինանսական ներուժի ավելացման նպատակահարմարությունը՝ առողջապահական ապահովագրավճարների դինամիկայի և տնտեսական, ժողովրդագրական, առողջապահական ոլորտի հիմնական ցուցանիշների միջև կոռելյացիոն կապերի միջոցով:

**Հիմնաբառեր.** Բազմաչափ ռեգրեսիոն վերլուծություն, առողջության ապահովագրություն, ֆինանսական ներուժ, տնտեսական գործոններ, ժողովրդագրական գործոններ, առողջապահության ոլորտի գործոններ:

ՀՀ առողջության ապահովագրության իրացված ֆինանսական ներուժը բնութագրվում է ապահովագրական շուկայի ֆինանսական ռեսուրսներով՝ առողջության պարտադիր ապահովագրավճարների

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ծավալով և կամավոր ապահովագրության գծով կատարված կամավոր ներդրումներով: Ներգրավված ֆինանսական ռեսուրսների ծավալները որոշվում են շուկայի գրավչությամբ և կապիտալի այլ շուկաների հետ համեմատությամբ մրցակցային առավելությունների օգտագործմամբ: Առողջության ապահովագրության շուկայի ֆինանսական ներուժի ավելացման համար անհրաժեշտ է բարձրացնել ապահովագրական շուկայի գրավչությունը, ինչը հնարավորություն կընձեռի ձեռք բերել բավարար ֆինանսական ռեսուրսներ, իսկ խնայողությունների հասցեատերերին՝ համապատասխան որակյալ բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Վերջինս առողջության ապահովագրության շուկայի առանցքային խնդիրներից է, որի լուծմամբ ի հայտ են գալիս տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման ներուժային հնարավորություններ և առողջապահության ոլորտի քաղաքականության օպտիմալացման տարբերակներ:

Առողջության ապահովագրության շուկայի վրա սոցիալ-տնտեսական գործոնների ռեգրեսիոն վերլուծության առանձին փորձեր կատարվել են ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայ հետազոտողների կողմից: Սակայն, չնայած բավարար թվով հետազոտություններին, առողջության ապահովագրության շուկայի ներուժի ավելացման վրա սոցիալ-ժողովրդագրական գործոնների ազդեցության վերաբերյալ չկա միասնական ամփոփ գնահատական:

Ս.Վ. Շիշկինը և Ի.Մ. Շեյմանը պարտադիր բժշկական ապահովագրության և բյուջետային ֆինանսավորման մոդելների համեմատության շրջանակներում հաշվարկներ են կատարել հետխորհրդային 28 երկրների համար 1991-2012 թթ. ժամանակային շարքերով: Օգտագործելով էկոնոմետրիկ վերլուծության տարբեր մեթոդներ՝ հետազոտել են ֆինանսավորման մոդելների (բյուջետային և ապահովագրական համակարգ) ազդեցությունն առողջապահության ֆինանսավորման երեք ցուցանիշի (ընդհանուր, պետական և մասնավոր ծախսերը բնակչության մեկ շնչի հաշվով), մահացության տասնութ ցուցանիշի (համակցված և առանձին հիվանդությունների համար), կառուցվածքային արդյունավետության վեց ցուցանիշի վրա (հոսպիտալացման մակարդակը, մահճակալների զբաղվածությունը և այլն): Հաշվի է առնվել երկու լրա-

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ցուցիչ գործոնի՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և 65 տարեկանից բարձր բնակչության մասնաբաժնի ազդեցությունը [1, c. 71-72]:

Օ.Ա. Խոխլովան և Ա.Բ. Շատոնովը համահեղինակությամբ գիտական հոդվածի [2, c. 38-45] շրջանակներում քննության են առնում տարածաշրջանային տնտեսության զարգացման վրա առողջության ապահովագրության ազդեցության փոփոխությունները: Նշվում է, որ սոցիալ-տնտեսական տարածքի վերափոխման համատեքստում այս ոլորտը դառնում է տարածաշրջանային տնտեսության հավասար մասնակից, ներդրումների անփոխարինելի աղբյուր, մարդկային կապիտալի զարգացման հիմք: Հեղինակները մշակել են վիճակագրական ցուցանիշների համակարգ, որը հնարավորություն է տալիս համապարփակ վերլուծել առողջության ապահովագրության վիճակը և բնակչության կենսամակարդակը, տարածաշրջանի ընդհանուր մակրոտնտեսական ցուցանիշները, ապահովագրական ծառայությունների մատչելիությունը բնութագրող գործոնների միջև կապը:

Ե.Գ. Սպոդարևան իր թեկնածուականատենախոսության մեջ [3, c. 115-143] հետազոտել է սոցիալ-տնտեսական և առողջապահական համակարգի վիճակը բնութագրող գործոնների ազդեցությունն առողջության ապահովագրության շուկայի ֆինանսական ներուժի վրա՝ առանձնացնելով դրա վրա առավել նշանակալի ազդեցություն ունեցող գործոնը կամ գործոնների համախումբը:

Ազգային տնտեսության զարգացման և առողջապահության ոլորտում բնակչության ապահովագրական պաշտպանության համակարգի միջև փոխազդեցության հիմնախնդիրն ուսումնասիրվել է Վ. Ավետիսյանի կողմից [4]:

Առողջության ապահովագրության շուկայի ներուժային հնարավորությունների վերհանմանն ուղղված ռեգրեսիոն վերլուծության ընթացքում նպատակահարմար է մոդելի մեջ ներառել գործոնների մի քանի խումբ, այսինքն՝ կառուցել բազմաչափ գծային ռեգրեսիայի մոդել: Առողջության ապահովագրության շուկայի ֆինանսական ներուժի գնահատման առումով բազմաչափ գծային ռեգրեսիայի մոդելի հիմնական նպատակը բազմաթիվ գործոններ պարունակող մոդելի ձևավորումն է, որը հնարավորություն է տալիս ներկայացնել գործոններից յուրաքանչ-

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

յուրի ազդեցությունն առանձին-առանձին, ինչպես նաև վերջիններիս համակցված ազդեցությունը մոդելավորված ցուցանիշների վրա [5]: Մոդելում ներառված գործոններին ներկայացվող պահանջները հետևյալն են՝ գործոնները պետք է լինեն քանակապես չափելի: Մոդելում քանակական չափում չունեցող որակական գործոն ընդգրկելու համար անհրաժեշտ է վերջինիս տալ քանակական որոշակիություն, ինչպես նաև գործոնները չպետք է լինեն միջկոռելացված և պետք է գտնվեն ճշգրիտ ֆունկցիոնալ կապերի մեջ:

Գործոնների և ռեգրեսիայի միջև մուլտիկոլինեարությունից խուսափելու համար կազմենք ռեգրեսիոն հավասարում գործոնների յուրաքանչյուր խմբի համար առանձին-առանձին: Ռեգրեսիայի ֆունկցիան ունի հետևյալ տեսքը.

$$Y = f(x_1, x_2, \dots, x_k) \quad (1)$$

որտեղ  $X_1, X_2, \dots, X_k$  – տնտեսական, ժողովրդագրական կամ առողջապահական ոլորտի գործոնների վեկտորն է:

Բազմաչափ գծային ռեգրեսիայի մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$y_i = \alpha_0 + \alpha_1 x_{i1} + \alpha_2 x_{i2} + \dots + \alpha_k x_{ik} + \varepsilon_i, i = \overline{1, n} \quad (2)$$

որտեղ  $\alpha_0 \dots \alpha_k, (j = \overline{1, k})$  ռեգրեսիայի գործակիցներն են, իսկ  $\varepsilon_i$ -ն՝ պատահական տրենդը (ռեգրեսիայի սխալը):

Բարձր միջկոռելացիոն գործոնների ներառումը մոդելում, երբ  $Ryx_1 < Rx_1x_2$  կախվածության դեպքում  $y = \alpha_0 + \alpha_1 x_1 + \alpha_2 x_2 + \varepsilon_i$  է, կարող է հանգեցնել անցանկալի հետևանքների, նորմալ հավասարումների համակարգը կարող է վերածվել վատ հիմնավորված հավասարման և հանգեցնել ռեգրեսիայի գործակիցների գնահատումների անկայունության և անվստահելիության:

Եթե գործոնների միջև առկա է բարձր կոռելյացիա, ապա անհնար է որոշել դրանց մեկուսացված ազդեցությունն արդյունքային ցուցանիշների վրա, և այդ դեպքում ռեգրեսիոն հավասարման չափանիշները չեն կարող մեկնաբանվել:

Բազմաչափ գծային ռեգրեսիայի մոդելի մեջ ներառված գործոնները պետք է բացատրեն անկախ վարիացիաների փոփոխությունը: Եթե մոդելը կառուցվում է մի շարք  $p$  գործոնների համախմբով, ապա վերջինիս համար հաշվարկվում է դետերմինացիայի  $R^2$  գործակիցը,

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

որը ցույց է տալիս արդյունքային փոփոխականի վարիացիայում հետազոտվող  $p$  գործոնների ազդեցությամբ պայմանավորված վարիացիայի մասնաբաժինը, այսինքն՝ բնութագրում է, թե  $Y$ -ի վարիացիայի որ մասն է հաշվի առնվել մոդելում և պայմանավորված մոդելում ներառված գործոնների՝ իր վրա ունեցած ազդեցությամբ [6, էջ 9]: Մոդելում հաշվի չառնված այլ գործոնների ազդեցությունը գնահատվում է որպես  $(1 - R^2)$  համապատասխան  $S^2$  դիսպերսիոն մնացորդին: Ռեգրեսիայում  $p + 1$  գործոնի լրացուցիչ ներառմամբ մեծանում է դետերմինացիայի գործակիցը, իսկ դիսպերսիոն մնացորդը նվազում է.

$$R_{p+1}^2 > R_p^2 \text{ և } S_{p+1}^2 < S_p^2 \quad (3)$$

Եթե վերոնշյալը տեղի չի ունենում, և այդ ցուցանիշները գործնականում միմյանցից քիչ են տարբերվում, ապա վերլուծության մեջ ներառված  $p + 1$  գործոնը չի բարելավում մոդելը և գործնականում ավելորդ է:

Գործոնների ընտրությունն իրականացվում է հետևյալ կերպ. գործոններն ընտրվում են՝ հաշվի առնելով հիմնախնդրի բնույթը, ռեգրեսիայի չափանիշների համար  $t$ - վիճակագրությունը որոշվում է կոռելյացիոն ցուցանիշների մատրիցայի հիման վրա:

Բացատրող փոփոխականների միջև կոռելյացիոն գործակիցները (միջկոռելյացիայի գործակիցները) թույլ են տալիս կրկնվող գործոնները բացառել մոդելից: Ենթադրվում է, որ երկու փոփոխականներն ակնհայտորեն կոլինեար են, այսինքն՝ գծայնորեն միմյանցից կախված են, եթե  $r_{x_i x_j} = 0,7$ :

Քանի որ բազմաչափ գծային ռեգրեսիայի մոդելի կառուցման պայմաններից մեկը գործոնների գործառութային անկախությունն է, այսինքն՝  $R_{x_i x_j} = 0$ , ապա գործոնների կոլինեարությունը խախտում է այս պայմանը: Եթե գործոններն ակնհայտորեն կոլինեար են, ապա դրանք կրկնում են միմյանց, և դրանցից մեկն առաջարկվում է բացառել ռեգրեսիայից: Այս դեպքում նախապատվությունը տրվում է այն գործոնին, որն արդյունքի հետ բավականին սերտ կապվածության պարագայում նվազագույն կապ ունի այլ գործոնների հետ: Զուգային գործակիցներով կոռելյացիաների մատրիցան սերտ կապերի ցուցանիշների չափման հիմքն է (աղյուսակ 1): Մատրիցայից կարելի է

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

դատողություններ անել արդյունքային ցուցանիշների և գործոնների միջև սերտ կապի վերաբերյալ: Չնայած բոլոր ցուցանիշները վերաբերում են զույգային կապերին, մատրիցան կարող է օգտագործվել բազմաչափ գծային ռեգրեսիայի մոդելում ներառվող գործոնների նախնական ընտրության համար: Խորհուրդ չի տրվում ներառել ռեգրեսիոն հավասարման մեջ գործոնները, որոնք թույլ են կապված արդյունքային ցուցանիշների հետ, բայց սերտորեն կապված են այլ գործոնների հետ:

*Աղյուսակ 1. Զույգային գործակիցներով կոռելյացիաների մատրիցա [7]*

Հատկանիշներ	y	X <sub>1</sub>	...	X <sub>k</sub>
Y	1			
X <sub>1</sub>	R <sub>yx1</sub>			
.	.	.	.	
.	r <sub>yxj</sub>	r <sub>x1xj</sub>		
.	.	.	...	
X <sub>k</sub>	r <sub>yxk</sub>	r <sub>x1xk</sub>	r <sub>xjxk</sub>	1

Զույգային գործակիցներով կոռելյացիայի մեծությամբ բացահայտվում է միայն գործոնների բացահայտ կոլինեարությունը: Բազմաչափ գծային ռեգրեսիայի մոդելի համակարգերի օգտագործման մեծագույն դժվարությունները ծագում են գործոնների մուլտիկոլինեարության առկայության դեպքում, երբ երկուսից ավելի գործոններ կապված են միմյանց հետ գծային կախվածությամբ, այսինքն՝ միմյանց վրա գործոնների համակցված փոխազդեցություն կա: Գործոնների մուլտիկոլինեարության առկայությունը կարող է նշանակել, որ որոշ գործոններ միշտ գործելու են համակցված: Մոդելում մուլտիկոլինեար գործոնների ընդգրկումն անցանկալի է հետևյալ պատճառներով. դժվար է մեկնաբանել բազմաչափ ռեգրեսիայի չափանիշները՝ որպես «մաքուր» տեսքով գործոնների գործառության բնութագրեր, քանի որ գործոնները կոռելյացված են: Բացի այդ, բազմաչափ գծային ռեգրեսիայի մոդելի չափանիշները կորցնում են իրենց տնտեսական նշանակությունը: Չափանիշների գնահատումները վստահելի չեն. դրանք բացահայտում են

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

մեծ ստանդարտ սխալներ և փոփոխվում են դիտումների ծավալի փոփոխությամբ ոչ միայն ըստ մեծության, այլև նշանով, ինչը մոդելը ոչ պիտանի է դարձնում վերլուծության և կանխատեսման տեսանկյունից:

Բազմաչափ ռեգրեսիա կառուցելու համար ընտրվել են առողջության ապահովագրության շուկայի ձևավորման գործընթացի վրա ազդող հիմնական գործոնները, որոնք կարելի է բաժանել երեք խմբի՝ տնտեսական, ժողովրդագրական և առողջապահական համակարգի վիճակը բնութագրող գործոններ (աղյուսակ 2):

Ռեգրեսիոն վերլուծության նախնական փուլը գործոնների ընտրությունն է, որը նախևառաջ որոշվում է արդյունքային հատկանիշի և այլ ցուցանիշների փոխկապվածության վերաբերյալ տեսական վերլուծության հիման վրա՝ միաժամանակ օգտագործելով վիճակագրամաթեմատիկական չափանիշները: Որպես արդյունքային հատկանիշ վերցվել է առողջության ապահովագրավճարների ծավալը ( $Y_1$ ): Առողջության ապահովագրավճարների արդյունքային հատկանիշի համար հիմք են հանդիսացել «Հայաստանի առողջապահության ազգային հաշիվներ» զեկույցում ներկայացված «Առողջության կամավոր վճարումների մեխանիզմներ» ֆինանսավորման սխեմայի ցուցանիշները:

Հետազոտության մեջ անկախ փոփոխականներից՝ ՀՀ առողջապահական արդյունաբերության զարգացման վրա ազդող հիմնական տնտեսական, ժողովրդագրական և առողջապահական վիճակագրական ցուցանիշներից բազմագործոն ռեգրեսիոն վերլուծության ելքային տվյալների փաստացի կախվածության ստուգումը (առողջության ապահովագրավճարների ծավալը) ներկայացրել ենք 2008-2019 թվականների համար ժամանակային շարքերի տեսքով [8-14]: Չափանիշների գնահատումն իրականացվել է IBM SPSS 26 և Microsoft Excel ծրագրային փաթեթների միջոցով:

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Աղյուսակ 2. Առողջության ապահովագրության շուկայի զարգացման վրա ազդող գործոնները<sup>1</sup>*

Գործոնների խումբը	Գործոնները
1	2
<b>Տնտեսական գործոններ</b>	<p>ՀՆԱ, մլրդ դրամ (e1)</p> <p>Միջին ամսական անվանական աշխատավարձը, հազար դրամ (e2)</p> <p>Նվազագույն աշխատավարձը, հազար դրամ (e3)</p> <p>Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ (e4)</p> <p>Պետական բյուջեի ծախսերը, մլրդ դրամ (e5)</p> <p>Բնակչության դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով, հազար դրամ (e6)</p> <p>Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը, հազար մարդ (e7)</p> <p>Գործազուրկների թվաքանակը, հազար մարդ (e8)</p> <p>Գործազրկության մակարդակը, % (e9)</p> <p>Գնաճի ինդեքսը, % (e10)</p> <p>Բանկային ավանդները, մլրդ դրամ (e11)</p>
<b>Ժողովրդագրական գործոններ</b>	<p>Մշտական բնակչության թվաքանակը, մլն մարդ (d1)</p> <p>Ծնելիության ընդհանուր գործակիցը, 1000 բնակչի հաշվով (%) (d2)</p> <p>Մահացության ընդհանուր գործակիցը, 1000 բնակչի հաշվով (%) (d3)</p> <p>Բնական հավելաճի գործակիցը, 1000 բնակչի հաշվով, % (d4)</p> <p>Կյանքի սպասվող տևողությունը ծննդից, ընդամենը, տարի (d5)</p> <p>Արյան շրջանառության համակարգի հիվանդություններից մահացությունների թվաքանակը, հազար մարդ (d6)</p> <p>Մահացությունների թվաքանակը չարորակ նորագոյացություններից, հազար մարդ (d7)</p> <p>Շնչառական օրգանների հիվանդություններից մահացությունների թվաքանակը, հազար մարդ (d8)</p>

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:



## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

	Արտաքին պատճառներից (դժբախտ պատահարներից, վնասվածքներից և թունավորումներից) մահացությունների թվաքանակը, հազար մարդ (d9)
<b>Առողջապահության ոլորտի գործոններ</b>	<p>Բնակչության հիվանդացությունը, հազար մարդ (m1)</p> <p>Բոլոր մասնագիտությունների բժիշկների թվաքանակը, հազար մարդ (m2)</p> <p>Միջին բժշկական անձնակազմի թվաքանակը, հազար մարդ (m3)</p> <p>Հիվանդանոցային հիմնարկների քանակը, (m4)</p> <p>Հիվանդանոցային մահճակալների քանակը, (m5)</p> <p>ԱԱՊ ծառայություն մատուցող հաստատությունների քանակը, (m6)</p> <p>Հաճախումների քանակն ԱԱՊ ծառայություն մատուցող հաստատություններում, հազար մարդ (m7)</p> <p>Առողջապահության ոլորտի համախմբված բյուջետային ծախսերը, մլրդ դրամ (m8)</p> <p>Առողջապահության ոլորտի պետական բյուջեի ծախսերը, մլրդ դրամ (m9)</p>

Բազմաքայլ ռեգրեսիոն վերլուծությունը սկսելիս նախ ստուգվել է մուլտիկոլենեարության երևույթի առկայությունը: Արդյունքում բացահայտվել է, որ որոշ գործոնների միջև առկա է կոռելյացիոն մեծ կապ (զույգային կոռելյացիայի գործակիցները բացարձակ արժեքով գերազանցում են 0.7-ը): Նշված գործոնների ներառումը մոդելի մեջ կարող էր հանգեցնել կոլինեար փոփոխականների համապատասխան ռեգրեսիոն գործակիցների անկայունությանը: Այնուհետև մոդելի մեջ հաջորդաբար ներառվել են մնացած այն գործոնները, որոնց զույգային կոռելյացիայի գործակիցն արդյունքային հատկանիշի հետ առավելագույնն է: Ընդ որում, յուրաքանչյուր քայլում p-արժեքի միջոցով ստուգվել է մոդելի համապատասխանությունը. եթե p-արժեքը փոքր է եղել ընտրած  $\alpha$  նշանակալիության մակարդակից, ապա ռեգրեսիայի հավասարման մեջ տեղ գտած կապերի գոյության անհամապատասխանության մասին գրոյական վարկածը ժխտվել է և գործոնը ներառվել է ռեգրեսիոն մոդելի մեջ: Այս գործընթացը շարունակվել է այնքան ժամանակ, մինչև գործոնը մոդելի մեջ ներառելիս p-արժեքը  $\alpha$

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

նշանակալիության մակարդակից մեծ է ստացվել, ինչը նշանակում է, որ մոդելն այլևս ադեկվատ չէ և տվյալ գործոնը նպատակահարմար չէ ներառել մոդելում [15, c. 960]:

Տնտեսական, ժողովրդագրական և առողջապահական համակարգի վիճակը բնութագրող գործոններից արդյունքային փոփոխականների կախվածության գնահատման արդյունքները (ԱԿ ապահովագրավճարների ծավալը) ներկայացված են համապատասխանաբար 3-5 աղյուսակներում: Ռեգրեսիայի գործակիցը ցույց է տալիս, թե միջինում որքանով է փոփոխվելու արդյունքային հայտանիշը, եթե  $x_j$  գործոնը փոխվի չափման մեկ միավորով՝ մոդելում ներառված մյուս փոփոխականների ֆիքսված արժեքների դեպքում:

*Աղյուսակ 3. ՀՀ-ում տնտեսական գործոններից արդյունքային փոփոխականների կախվածության գնահատման արդյունքները (ԱԿ ապահովագրավճարների ծավալը)*

	Ոչստանդարտացված գործակիցներ		Ստանդարտացված գործակիցներ	t-չափանիշ	Նշանակալ. B
(Հաստատուն)	B -6600.435	Ստանդարտ շեղում 1095.171	Beta	-6.027	0.000
ՀՆԱ, մլրդ դրամ (e1)	2.165	0.230	0.948	9.423	0.000
R <sup>2</sup>			0.899		
F-չափանիշ			88.792		

«t-չափանիշ» սյունակը հաշվարկվում է Սոյուդենտի t չափանիշի օգնությամբ, որն օգտագործվում է ռեգրեսիայի և կոռելյացիայի գործակիցների վիճակագրական նշանակալիությունը գնահատելու համար, ռեգրեսիայի հավասարման j-րդ չափանիշի (ազատ անդամից

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

բացի) զրոյական լինելու վերաբերյալ հիպոթեզի ստուգման միջոցով: «F-չափանիշ» սյունակը գնահատում է բազմաչափ ռեգրեսիայի մոդելի ճշգրտությունը:

Տնտեսական գործոններից ԱԿ ապահովագրավճարների ծավալների կախվածության արդյունքների հիման վրա ստացվում են հետևյալ ռեգրեսիոն հավասարումը և դրա ճշգրտության գործակիցները.

$$Y_1 = -6600.435 + 0.948e_1$$

$$R^2 = 0.899$$

Կոռելացիայի կախվածության արդյունքները ցույց են տալիս, որ ԱԿ ապահովագրավճարներն ուղիղ կախված են ՀՆԱ ծավալից: Այլ կերպ ասած, ՀՆԱ ծավալի 1 միավոր աճը կհանգեցնի ԱԿ ապահովագրավճարների ծավալի աճի 0.948 միավորով: Դետերմինացիայի բազմակի գործակիցը վկայում է, որ ԱԿ ապահովագրավճարների ծավալի վարիացիան 89.9%-ով պայմանավորված է մոդելում ներառված գործոնների ազդեցությամբ:

Ժողովրդագրական գործոններից արդյունքային փոփոխականների կախվածության գնահատման արդյունքները (ԱԿ ապահովագրավճարների ծավալը) ներկայացված են աղյուսակ 4-ում:

*Աղյուսակ 4. ՀՀ-ում ժողովրդագրական գործոններից արդյունքային փոփոխականների կախվածության գնահատման արդյունքները (ԿԲԱ ապահովագրավճարների ծավալը)*

	Ոչստանդարտացված գործակիցներ		Ստանդարտացված գործակիցներ	t-չափանիշ	Նշանակալ. B
(Հաստատուն)	B - 160905. 176	Ստանդարտ շեղում 14231.9 98	Beta	-11.306	0.000

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կյանքի սպասվող տևողությունը ծննդից, ընդամենը, տարի (d5)	2202.568	190.674	0.965	11.551	0.000
R <sup>2</sup>	0.93				
F-չափանիշ	133.436				

Ժողովրդագրական գործոններից ԱԿ ապահովագրավճարների ծավալի կախվածության գնահատման արդյունքներով ստացվել է հետևյալ ռեգրեսիոն հավասարումը.

$$Y_1 = -160905.176 + 0.965d_5$$

$$R^2 = 0.93$$

Հավասարումից պարզ է դառնում, որ ծննդյան պահից կյանքի սպասվող տևողության բարձրացումը մեկ տարով կհանգեցնի ԱԿ ապահովագրավճարների աճին 0.965 միլիոն դրամով, ինչը հաստատում է առողջապահական համակարգի հավելյալ ֆինանսավորման համար ԱԿ զարգացման նպատակահարմարությունը: Դետերմինացիայի բազմակի գործակիցը վկայում է, որ ԱԿ ապահովագրավճարների ծավալի վարիացիան 93%-ով պայմանավորված է մոդելում ներառված գործոնների ազդեցությամբ:

ՀՀ-ում առողջապահական համակարգի վիճակը բնութագրող գործոններից արդյունքային փոփոխականների կախվածության գնահատման արդյունքները (ԱԿ ապահովագրավճարների ծավալը) ներկայացված են աղյուսակ 5-ում:

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Աղյուսակ 5. ՀՀ-ում առողջապահական համակարգի վիճակը բնութագրող գործոններից արդյունքային փոփոխականների կախվածության գնահատման արդյունքները (ԱԿ ապահովագրավճարների ծավալը)*

	Ոչստանդարտացված գործակիցներ		Ստանդարտացված գործակիցներ	t-չափանիշ	Նշանակալ. B
(Հաստատուն)	B 624.896	Ստանդարտ շեղում 17309.684	Beta	0.036	0.972
Միջին բժշկական անձնակազմի թվաքանակը, հազար մարդ (m3)	-2.303	.405	-0.797	-5.690	0.000
Առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցող հաստատությունների քանակը, (m6)	88.011	30.689	0.401	2.868	0.019
R <sup>2</sup>	0.824				
F-չափանիշ	21.068				

ՀՀ-ում առողջապահական համակարգի վիճակը բնութագրող գործոններից ապահովագրավճարների ծավալի կախվածության գնահատման արդյունքներով ստացվել է հետևյալ բազմաչափ ռեգրեսիոն մոդելը.

$$Y_1 = 624,896 - 0.797m_3 + 0.401m_6$$

$$R^2 = 0.824$$

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բազմաչափ գծային ռեգրեսիոն մոդելից պարզ է դառնում, որ ԱԿ ապահովագրավճարների ծավալի և առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցող հաստատությունների քանակի միջև առկա է ուղղակի կախվածություն, ինչպես նաև առկա է հետադարձ կախվածություն միջին բժշկական անձնակազմի թվաքանակից: Ստացված արդյունքները կարելի է մեկնաբանել այսպես. միջին բժշկական անձնակազմի թվաքանակի աճը հազար մարդով կհանգեցնի ապահովագրավճարների ծավալի նվազման 0.797 միլիոն դրամով, իսկ ԱԱՊ ծառայություն մատուցող հաստատությունների քանակի 1 միավորով աճը՝ ապահովագրավճարների ծավալի աճի 0.401 միլիոն դրամով: Դետերմինացիայի բազմակի գործակիցը վկայում է, որ ապահովագրավճարների ծավալի վարիացիան 82.4%-ով պայմանավորված է մոդելում ներառված գործոնների ազդեցությամբ:

Հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին և մատնանշել առողջության ապահովագրության շուկայի ֆինանսական ներուժի ավելացման հնարավորությունները:

- Ռեգրեսիոն հավասարումներից պարզվում է, որ ապահովագրավճարների ծավալի փոփոխությունները մեծ մասամբ կախված են երկրի և նրա բնակչության նյութական բարեկեցությունից, ՀՆԱ-ից, կյանքի սպասվելիք տևողությունից, ԱԱՊ ծառայություն մատուցող հաստատությունների քանակից և միջին բժշկական անձնակազմի թվաքանակից, ավելի քիչ չափով՝ բժշկական օգնության հասանելիությունից և որակից, ինչպես նաև աշխատանքային շուկայի ներկա վիճակից:
- Բնակչության ծախսերի ցածր մակարդակը, այդ թվում՝ առողջապահական կարիքներին ուղղված ծախսերը, խանգարում են առողջության ապահովագրության շուկայի զարգացմանը:
- Առողջության ապահովագրավճարների ծավալի մեծացման և բնակչությանն առավել հասանելի և որակյալ բժշկական ծառայություններով ապահովելու համար ՀՀ տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ՀՆԱ ծավալի և բնակչության եկամուտների մեծացմանը, գործազրկության մակարդակի նվազեցմանը և առողջապահական ոլորտը բարձր որակավոր-

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

րում ունեցող մասնագետներով ապահովմանը: ՀՆԱ-ի աճը կարող է կենսագործվել արտադրության մեջ լրացուցիչ ռեսուրսների ներգրավմամբ, առաջին հերթին լրացուցիչ ֆիզիկական կապիտալի և աշխատուժի, ինչպես նաև գիտատեխնիկական առաջընթացի արդյունքում արտադրության գործընթացում արտադրողականության մեծացմամբ:

- Բնակչության դրամական եկամուտների ավելացման համար անհրաժեշտ է ձեռնարկել համալիր միջոցառումներ, որոնք կօգնեն դրամական եկամուտների մակարդակում հարթել տարածքային անհամաչափությունները, մշակել տնտեսական տարբեր գործունեությամբ զբաղված բնակչության աշխատավարձի հավասարակշռման մեխանիզմ, օժանդակել նվազագույն աշխատավարձ ստացողների զբաղվածության պահպանմանը: Ինչպես նաև անհրաժեշտ է կիրառել բոլոր հնարավոր միջոցները գնաճի և տնային տնտեսությունների եկամուտների արժեզրկման դեմ պայքարելու համար:
- Առողջության ապահովագրության գծով պարտադիր ներդրումների տեսքով չիրացված ֆինանսական ներուժի ավելացումը կհանգեցնի առողջապահության ոլորտի պետական բյուջեի ծախսերի նվազմանը:
- Առողջության ապահովագրավճարների ծավալի ավելացումն առաջիկայում կհանգեցնի ծնելիության գործակցի, ծննդյան պահից հաշվարկված կյանքի սպասվող միջին տևողության բարձրացմանը:

Այսպիսով, ՀՀ առողջության ապահովագրության շուկայի հետագա զարգացումը և ապահովագրավճարների ծավալի մեծացումը նշանակում է առողջապահության ոլորտի գործառնման նորմատիվ-իրավական, կազմակերպչական և մեթոդական աջակցության փոփոխություններ, ինչը հնարավորություն կտա լավագույնս փոխել առողջապահության ոլորտի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների ձևավորման և իրացման ընթացքը, ինչպես նաև ավելացնել առողջության ապահովագրության շուկայի ֆինանսական ներուժը:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Шишкин С.В., Шейман И.М., Абдин А.А., Боярский С.Г., Сажина С.В., Российское здравоохранение в новых экономических условиях: вызовы и перспективы [Текст]: Доклад НИУ ВШЭ по проблемам развития системы здравоохранения / рук. авт. колл. С. В. Шишкин; Нац. исслед. ун-т «Высшая школа экономики». – М.: Изд. дом Высшей школы экономики, 2016. – 84 с.
2. Хохлова А.О., Шатонов А.Б., Медицинское страхование: роль в региональной экономике и оценка факторов развития / А.О. Хохлова, А.Б. Шаторов // Региональная экономика: теория и практика. 2013. № 28 (307). С. 38-45.
3. Сподарева Е.Г. Развитие медицинского страхования в системе финансирования экономики государства: диссертация ... кандидата экономических наук: 08.00.10 / Сподарева Елена Григорьевна; [Место защиты: «Донецкая академия управления и государственной службы при Главе Донецкой Народной Республики»].- Донецк. 2017. 277 с.
4. Պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում / Վահան Ավետիսյան, Արման Դադունց, Միհրան Հակոբյան, Գիտ. Խմբ.՝ Վ. Լ. Հարությունյան, Երևան: Գիտություն, 2010, 126 էջ:
5. Власов М.П. Моделирование экономических процессов: учебное издание/ М. П. Власов, П. Д. Шимко. – Ростов н/Д: Феникс, 2005. – 409 с.
6. Տնտեսագիտական խնդիրների վիճակագրական վերլուծությունը SPSS փաթեթի գործադրմամբ: Ուսումնամեթոդական ձեռնարկ / Արմեն Քթոյան տ.գ.թ. դոցենտ, Սոս Խաչիկյան տ.գ.թ. դոցենտ, Մանուկ Մովսիսյան տ.գ.թ. դոցենտ, Կարեն Հակոբյան տ.գ.թ. դոցենտ - Եղեգնաձոր: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղ, 2015.- 71 էջ:
7. Сподарева Е.Г. Влияние социально-экономических факторов на развитие обязательного медицинского страхования, Вестник



## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Уральского института экономики, Управления и права. Издательство: Уральский институт экономики, управления и права (Екатеринбург). № 4, 2018. С. 56-65.

8. ՀՀ Ազգային ժողովի որոշումը «ՀՀ կառավարության ծրագրին հավանություն տալու մասին», ԱԺՈ-002-Ն, ՀՀՊՏ 2019.02.20/14(1467):
9. ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու և ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի № 1207-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», № 442-Ն, ՀՀՊՏ 2014.05.07/23(1036).1:
10. «Հայաստանի առողջապահության ազգային հաշիվներ» (2009-2019 թթ.):
11. ՀՀ Վիճակագրական կոմիտե, «Գների և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում» (2009-2020 թթ.):
12. ՀՀ Վիճակագրական կոմիտե, «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու» (2009-2019 թթ.):
13. ՀՀ Վիճակագրական կոմիտե, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (2009-2019 թթ.):
14. ՀՀ Վիճակագրական կոմիտե, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» (2009-2019 թթ.):
15. Левин Д.М., Стефан Д., Кребиль Т.С., Беренсон М.Л. Статистика для менеджеров с использованием Microsoft Excel, 4-е изд. – Пер. с англ. – М.: Вильямс, 2004. – 1312 с.

**ВОЗМОЖНОСТИ ПОВЫШЕНИЯ ФИНАНСОВОГО ПОТЕНЦИАЛА  
РЫНКА МЕДИЦИНСКОГО СТРАХОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ  
АРМЕНИЯ**

**Карине Аджян**

АГУ РА, кафедра Управления, соискатель

Рынок медицинского страхования является важной составляющей экономики государства, главная задача которого создание финансового механизма для привлечения дополнительных финансовых ресурсов в систему здравоохранения с целью обеспечения полного, своевременного и качественного медицинского обслуживания субъектов медицинского страхования. Устойчивое развитие медицинского страхования требует исследования формирования, реализации и наращивания его финансового потенциала, позволяющего выявить перспективы дальнейшего его функционирования. В статье обсуждается целесообразность увеличения финансового потенциала рынка медицинского страхования Республики Армения с помощью корреляционной связи между динамикой страховых премий по медицинскому страхованию и основными показателями отрасли здравоохранения, экономическими и демографическими показателями.

**Ключевые слова:** Многомерный регрессионный анализ, медицинское страхование, финансовый потенциал, экономические факторы, демографические факторы, факторы отрасли здравоохранения.

**OPPORTUNITIES TO INCREASE THE FINANCIAL POTENTIAL OF THE  
HEALTH INSURANCE MARKET IN THE REPUBLIC OF ARMENIA**

**Karine Hajjan**

PAA RA, Chair of Management, Researcher

The health insurance market is an important component of the national economy, the main task of which is to create a financial mechanism

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

for attracting additional financial resources in the healthcare system to ensure the right of health insurance subjects to receive comprehensive, timely and high-quality medical care. Sustainable development of health insurance market requires research of the formation, implementation and increase of its financial potential, which makes it possible to find out the prospects for its further functioning. The article discusses the expediency of increasing the financial potential of the health insurance market in the Republic of Armenia with the help of a correlation between the dynamics of health insurance premiums and the main indicators of the healthcare industry, economic and demographic indicators.

**Keywords.** Multidimensional regression analysis, health insurance, financial potential, economic factors, demographic factors, health sector factors.

*Տրվել է տպագրության՝ 05.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 02.11.2020թ.*

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆՈՐ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

#### **Նարինե Տոնյան**

Ե Հ, Իրավագիտության ամբիոն, ի.գ.թ., դոցենտ  
tnarik@rambler.ru, +374 91 200012

#### **Լևոն Խաչատրյան**

Ե Հ, Իրավագիտության ամբիոն, ուսանող  
levonkhachatryan@gmail.com, +374 98 636353

ՀՀ Սահմանադրության բարեփոխումները միտված են Սահմանադրության դրույթների հստակեցմանը, Սահմանադրությունում հասարակության բոլոր ինստիտուտների ու խմբերի ընդգրկվածության ապահովմանը: Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրական բարեփոխումները սկսվել են դեռևս 1995թ.-ից և շարունակվում են մինչ օրս:

Հոդվածում ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրական բարեփոխումների իրականացման ընթացակարգը: Քննարկվել են մինչ օրս իրականացված սահմանադրական բարեփոխումները, բացահայտվել են իրականացված բարեփոխումների բացթողումները, առաջարկվել են դրանց վերացման մոտեցումներ: Հիմնավորվել է Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրական նոր բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությունը, ներկայացվել են Սահմանադրության փոփոխության ենթակա դրույթները:

**Հիմնաբառեր.** Սահմանադրություն, Սահմանադրական բարեփոխումներ, Սահմանադրական դատարան, Սահմանադրական կարգ, Սահմանադրության դրույթներ:

Սահմանադրությունը Հայաստանի Հանրապետությունում իր ուրույն տեղն է զբաղեցնում: ՀՀ-ում և մի շարք այլ երկրներում առաջնահերթ տեղ է զբաղեցնում սահմանադրական կարգի պահպանումը: Սահմանադրական կարգի պահպանումը միտված է երաշխավորել պե-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

տության օղակների գործունեությունը, ինչպես նաև հասարակության անդամների իրավունքները[7]:

Դեռևս 1995 թվականից ի վեր սկսվել է սահմանադրական բարեփոխումների համալիր ռազմավարական ծրագիրը, որը շարունակվում է մինչ օրս: Այն ուղղված է հասարակության մի շարք կարևորագույն գործառույթների ապահովմանը: Սահմանադրական բարեփոխումների անրաժեշտությունը առաջանում է մշտապես, քանի որ հասարակության անդամների իրավահարաբերությունները զարգանում են մշտապես:

Սահմանադրական բարեփոխումները մշակվում են սահմանադրական բարեփոխումների մշտական հանձնաժողովի կողմից, որն իր գործունեությունը ծավալում է ելնելով սահմանադրական բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությունից: Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը մշակում է համալիր ռազմավարություն, որի միջոցով էլ կառուցվում է սահմանադրական բարեփոխումների ծրագիրը: Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը վեր է հանում մի շարք խնդիրներ որոնք պետք է ստանան իրենց իրավակարգավորումը Սահմանադրության միջոցով: Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը հիմնվում է նաև այլ երկրների սահմանադրությունների վրա, որոնք գրեթե կատարյալ են, և այդ օրինակներով փորձում են փոփոխություններ կատարել մեր երկրում:

Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը մշակեց սահմանադրական բարեփոխումների մի քանի առաջնային ուղղություններ, որոնցից է մարդու հիմնական իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրապնդումը, այդ իրավունքների հնարավոր սահմանափակման շրջանակների հստակեցումը՝ ելնելով միջազգային իրավունքի, մասնավորապես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի դրույթներից:

Մինչև 2005 թվականը Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումները իրենց արդյունքը չէին տալիս: Առկա էին մի շարք ոլորտներում բացեր, որոնք պետք է լրաց-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

վեին: Այդպիսի օրինակ էր, երբ Հայաստանի Հանրապետությունում այդ ժամանակ լիակատար չէր գործում իշխանությունների տարանջատման սկզբունքը: Դեռևս հստակ չէր ընդգծվել նախագահի ինստիտուտի դերը, չէր հստակեցվել օրենսդիր և գործադիր մարմինների կառավարման օղակների բուն գործունեությունը: Առկա էին նաև մի շարք կարևոր խնդիրներ դատական իշխանության համակարգում:

2005 թվականի սահմանադրական բարեփոխումները անհրաժեշտ սահմանադրական նախադրյալներ չստեղծեցին իրավունքի գերակայության սկզբունքի առավել հետևողական իրացման և այս հարցում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների արդյունավետ կատարումը երաշխավորելու առումով: 2005 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո Հայաստանի Հանրապետության համար կրկին բաց մնացին պետական կառավարման մի շարք օղակների սահմանադրական կարգավորումները, ինչն ավելի արդյունավետ կդարձներ նրանց գործառույթը: Մի շարք իրավաբան գիտնականներ կարծում են, որ 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում չհաջողվեց իրականացնել հետևողական անցում իշխանակենտրոն սահմանադրական լուծումների համակարգից դեպի մարդակենտրոն համակարգի:

2005 թվականից հետո էլ շարունակվեցին սահմանադրական բարեփոխումները: Եվ արդեն 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումները մի շարք փոփոխություններ մտցրեցին Հայաստանի Հանրապետության քաղաքական և հասարակական կյանքում: 2015թ փոփոխություններով նոր լիազորություններ տրվեցին Հայաստանի Հանրապետության վարչապետին: ՀՀ Նախագահի լիազորությունները ևս փոփոխվեցին: ՀՀ վարչապետին էին վերապահվում մի շարք լիազորություններ, այդ թվում երկրի գերագույն գլխավոր հրամանատարի լիազորությունները [1]:

ԽՍՀՄ անկախությունից հետո ԽՍՀՄ նախկին պետություններից շատերը որդեգրեցին այս կառավարման մոդելը, շատ պետություններ էլ մնացին նախագահական կառավարման մոդելին[6]: Ընդհարապես, իրավական պետությունում պետք է բացառվի քաղաքական, տնտեսական և վարչական ներուժի սերտաճումը, երաշխավորված ու ապա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

հովված պետք է լինի քաղաքական ուժերի նպատակների ու գործունեության սահմանադրականությունը: Իսկ Հայաստանի Հանրապետությունը փորձում է որդեգրել այս մոտեցումը, իհարկե Սահմանադրության կատարելագործման միջոցով:

Ինչպես և Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ ԽՍՀՄ նախկին պետություններում Սահմանադրության փոփոխությունների շնորհիվ կարգավորվում է նաև ընտրական համակարգը, հանրաքվեի ինստիտուտը: Եթե համեմատենք նախորդ տարիների հետ, ապա ակնհայտ են դրական փոփոխությունները: Այդպիսի դրական փոփոխություններին պետք է ներազդեն երկրի քաղաքական ուժերը: Քաղաքական ուժերի միջոցով կարող են միայն տեղի ունենալ ազատ, անկախ և թափանցիկ ընտրություններ: Պետության գործոնը այս պարագայում միայն հետևողական աշխատանքներ տանելն է, և հասարակության անդամների մեջ եղած տարիների ընթացքում ձևավորված «վատ» ավանդույթների վերացումը: Այդպիսի ավանդույթ է համարվում Հայաստանում ընտրակաշառքը, որի միջոցով ընտրակեղծիքներ են տեղի ունեցել տարիներ շարունակ: Իսկ ընտրական ինստիտուտը կատարելագործման կարիք ունի միշտ, և եթե նրա անկախությունը չապահովի պետության կողմից մենք չենք կարող համարել սահմանադրական բարեփոխումներն իրականացված:

Ինչպես գիտենք սահմանադրական բարեփոխումները տեղի են ունենում հանրաքվեի միջոցով:

Սահմանադրության վերահսկողությունը իրականացնում է սահմանադրական դատարանը: Սահմանադրական դատարանի դերը շատ մեծ է սահմանադրական գերակայությունը իրականացնելու գործընթացում: Սահմանադրական կարգը և դրա իսկ պաշպանությունը հանդիսանում են պետության առջև ծառայած կարևորագույն խնդիրներից մեկը: Սահմանադրական կարգի պաշպանության գործում առաջնային դեր է ստանձնում սահմանադրական դատարանը[2]: Սահմանադրական կարգ ասված եզրույթի տակ ներառվում են մի շարք կարևոր ելակետային սկզբունքներ որոնցով էլ կառուցվում է սահմանադրությունը: Դրանցից կարող ենք առանձնացնել մի քանիսը՝ մարդու անձնական իրավունքներին վերաբերող սկզբունքը, իշխանություններ-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

րի բաժանման և հավասարակշռման սկզբունքը, և մի շարք այլ սկզբունքներ: Մարդու անձնական իրավունքներն ու արժանապատվությունը պետության կողմից ճանաչվում են որպես բարձրագույն արժեք և նրանք նույնպես իրենց ամրագրումը ստացել են պետության կողմից ամենաբարձր իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթի մեջ, որը Սահմանադրությունն է: Սահմանադրության միջոցով են պաշտպանվում նաև հասարակության անդամների անձնական իրավունքներն ու արժանապատվությունը:

Ընդհարապես, սահմանադրական կարգի ստեղծման և պահպանման համար կարևոր դեր են խաղում ՀՀ սահմանադրությամբ նախատեսված հիմնարար սկզբունքերը: Այդ սկզբունքները ուղղված են պետության և հասարակության անդամների բնականոն գործունեության համար անհրաժեշտ մի շարք կարևոր խնդիրների լուծմանը: Սահմանադրության սկզբունքների մեջ է մտնում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը[1], որը հիմք է հանդիսանում պետության գործունեության համար: Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը հստակ նշում է իշխանության ճյուղերի անկախության երաշխիքները, այսինքն իրավական նորմով հստակ առանձնացվում են դատական իշխանության, գործադիր մարմնի, և օրենսդիր մարմնի դերերը ու գործառույթները: Հարկ է նշել, որ իշխանության ճյուղերի մեկի մյուսի նկատմամբ ճնշումները անթույլատրելի են և հակասահմանադրական[4]:

Նորանկախ Հայաստանի համար այս գործընթացը դեռևս զարգացման կարիք ունի: Եթե համեմատություն անցկացնենք նախկին ԽՍՀՄ ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցող իշխանության ճյուղերի գործունեությանը, ապա ակնհայտ են մի շարք փոփոխություններ, որոնցից ամենազլխավորը իշխանության ճյուղերի անկախությունն է: Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրության ընդունումից հետո հիմք դրվեց այս գործընթացին: Եթե համեմատություն անցկացնենք այժմյան իրականության և 2000-ականների հետ, ապա կրկին կտեսնենք մեծ փոփոխություններ: Այդ կարևոր փոփոխություններից են, օրինակ, դատական իշխանության անկախության համար տարվող մի շարք ռազմավարական միջոցառումներ: Այդ միջո-



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ցառումների արդյունքը լինելու է այն, որ դատական իշխանության հանդեպ հասարակության անվտանգության վերաբերմունքը կվերանա և վտանգությունը դեպի դատական իշխանությունը ավելի կմեծանա: Համեմատելով այլ հասարակարգերը և դրանց պահանջմունքները, ապա պարզվում է, որ այդ հասարակարգերի պահանջմունքները, որոնք ամրագրված են սահմանադրության մեջ, մեզ համար և մի շարք այլ պետությունների համար խորթ են: Այդպիսին է ԱՄՆ-ի Սահմանադրությունը որի մեջ ամրագրված է մի իրավական նորմ, որով թույլատրվում է հասարակության ֆիզիկապես և հոգեպես առողջ անդամներին ունենալ զենք և կրել: Շատ իրավաբան գիտնականներ գտնում են, որ այս երևույթը տիպիկ հասարակության պահանջ է, քանի որ ԱՄՆ-ի ամբողջ տարածքում ապրում են տարբեր ազգի ներկայացուցիչներ և հասարակության ստվար զանգվածի կարծիքով պետությունը լիարժեք չի կարող ապահովել հասարակության անդամների անվտանգությունը: Նշենք նաև, որ ԱՄՆ-ի Սահմանադրությունը համարվում է աշխարհում ամենակատարյալ սահմանադրություններից մեկը և հիմք է հանդիսանում շատ երկրների համար սեփական Սահմանադրության որոշակի դրոյթներ ձևավորելու համար[5]:

Իսկ ինչ վերաբերում է քաղաքական իշխանությանը՝ սահմանադրական կարգի փոփոխություններ կատարելու հարցում, ապա տեսանելի է դառնում տվյալ ժամանակահատված իշխող քաղաքական ուժի նկատառումները սահմանադրական բարեփոխումներ իրականացնելու, քանի որ ամեն մի նոր եկած քաղաքական ուժ փորձում է շտկել «նախորդների սխալները»:

Մեր կարծիքով, մինչ հանրաքվեի գնալը, անհրաժեշտ է Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթների մշակման գործընթացում սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի աշխատանքներին ներգրավել նաև հասարակության բոլոր շերտերին: Քանի որ նախ և առաջ դա կնպաստի հասարակության իրավական գիտելիքների բարձրացմանը, երկրորդը ավելի կնպաստի սահմանադրական բարեփոխումների ավելի արդյունավետ իրականացմանը և ամենակարևորը զերծ կպահի որևիցե քաղաքական ուժի ներազդեցությունից սահմանադրական բարեփոխումների գործընթացում:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրական բարեփոխումները ընդգրկում են լայն շրջանակ, և այդ շրջանակի բոլոր խնդրահարույց հարցերը քննարկելը խլում է ժամանակ: Դեռևս Հայաստանի Հանրապետությունում մի քանի անգամ տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումները իրենց արդյունքը լիովին չեն տվել: Մեր պետության Սահմանադրությունը դեռևս մի շարք ոլորտներում բացեր ուներ, որոնք լրացվել են սահմանադրական վերջին բարեփոխումների ժամանակ: Այդպիսի բաց էին համարվում դատական իշխանության վերաբերող մի շարք դրույթներ, որոնք իրենց իրավական կարգավորումը ստացան վերջին սահմանադրական բարեփոխումների ժամանակ:

Հարկ է նշել, որ սահմանադրական բարեփոխումները պետք է իրականացվեն միայն դրա ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Սահմանադրական բարեփոխումներ իրականացնելը չպետք է ունենա քաղաքական որևիցե ազդեցություն: Կան մի շարք նախկին ԽՍՀՄ պետություններ, որտեղ սահմանադրությունը փոփոխությունների է ենթարկվում միայն այն պատճառով, որ տվյալ երկրի ղեկավարը կարողանա ավելի շատ ղեկավարել[8]:

Հասարակության պահանջումները ուսումնասիրելը ավելի շատ հնարավորություն կտա արդյունավետ դարձնելու սահմանադրական բարեփոխումները: Իհարկե, սահմանադրական բարեփոխումներ անցկացնելու ժամանակ հաշվի են առնվում մի շարք միջազգային պայմանագրեր և համաձայնագրեր, որոնք վավերացրել է Հայաստանի Հանրապետությունը:

Այն, ինչ վերաբերում է սահմանադրական կարգի պաշտպանությանը, այդ խնդրի առջև կանգնած են մի շարք երկրներ: Կան նաև երկրներ, որտեղ տեղի է ունեցել այսպես կոչված «հեղափոխություն» և դրա արդյունքում էլ սահմանադրական կարգը չի խախտվել: Իսկ սահմանադրական կարգի դեմ ուղղված բոլոր գործողությունները պատժելի արարքներ են, անկախ պետական պաշտոնյայի զբաղեցրած դիրքից[3]:

Այժմ էլ մեր երկիրը կանգնած է սահմանադրական բարեփոխումների ճանապարհին: Սահմանադրական յուրաքանչյուր փոփոխություն պետք է հիմնավորվի պետության կողմից: Դեռևս քննարկման փուլում են գտնվում մի շարք դրույթներ, որոնք ելակետային են համարվում

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

սահմանադրական դատարանի համար: Այդպիսի խնդիր է սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարման խնդիրը, քանզի նոր սահմանադրական բարեփոխումների ծրագրով նախատեսվում է փոփոխություններ մտցնել սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարման ժամանակահատվածում, որը կհանգեցնի նաև մի շարք անցումային դրույթների փոփոխության:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված՝ 1995 թվականի հուլիսի 5-ին, 2005թ. նոյեմբերի 27-ի և 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով):
2. ՀՀ դատական օրենսգիրք Սահմանադրական օրենք՝ ընդունված 2018թ. վերջին փոփոխություններով և լրացումներով:
3. Գ. Հարությունյան, Սահմանադրականություն. Ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ, Երևան, Զանգակ, 2017, 132 էջ
4. Գ. Ղազինյան, Դատական իշխանության անկախության ապահովման սահմանադրական հիմքերը, ([http://www.y-su.am/files/04G\\_Ghazinyan.pdf](http://www.y-su.am/files/04G_Ghazinyan.pdf)):
5. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. խմբ. իրավ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ն. Այվազյան/գիրք առաջին, 6-րդ լրամշակված հրատարակություն, դասագիրք բուհերի համար, Երևան, Տիգրան Մեծ, 2016
6. Конституционное право зарубежных стран, Учебник для вузов, Москва, Издательство НОРМА, 2004, 832 с.
7. Конституционное право зарубежных стран, Учебник, Под общ. ред. М.В. Баглая, Ю.И. Лейбо, Л.М. Энтина, 4-е изд., перераб. и доп. М.: Юр.Норма, НИЦ ИНФРА-М, 2016. 976 с.
8. Козлова Е. И., Кутафин О. Е., Конституционное право России. Учебник, Издательство: Проспект, 2020, 592 с.
9. Arlis.am

УПУЩЕНИЯ КОНСТИТУЦИОННЫХ РЕФОРМ  
И НЕОБХОДИМОСТЬ ВНЕДРЕНИЯ НОВЫХ РЕФОРМ В  
РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**Нарине Тоноян**

ЕУ, кафедра Правоведения, к.ю.н., доцент

**Левон Хачатрян**

ЕУ, кафедра Правоведения, студент

Реформы Конституции РА направлены на уточнение положений Конституции, обеспечение включения в Конституцию всех институтов и групп общества. Конституционные реформы в Республике Армения начались в 1995 году и продолжают по сей день.

В статье представлен порядок проведения конституционных реформ в Республике Армения. Обсуждены осуществленные конституционные реформы, выявлены недостатки проведенных реформ, предложены подходы к их устранению. Обоснована необходимость проведения новых конституционных реформ в Республике Армения, представлены положения, в которые вносятся изменения в Конституцию.

**Ключевые слова:** Конституция, Конституционные реформы, Конституционный суд, конституционный порядок, Положения Конституции

OMISSIONS OF CONSTITUTIONAL REFORMS  
AND THE NEED FOR IMPLEMENTATION OF NEW REFORMS IN THE  
REPUBLIC OF ARMENIA

**Narine Tonoyan**

EU, Chair of Jurisprudence, PhD in Law, Associate Professor

**Levon Khachatryan**

EU, Chair of Jurisprudence, Student

The amendments to the RA Constitution are aimed at clarifying the provisions of the Constitution, ensuring the inclusion of all institutions and groups of the society in the Constitution. The Constitutional reforms in the Republic of Armenia started in 1995 and continue to this day.

The article presents the procedure for the implementation of Constitutional reforms in the Republic of Armenia. The constitutional reforms implemented so far have been discussed, the shortcomings of the implemented reforms were revealed, approaches to their elimination were proposed. The need to implement new Constitutional reforms in the Republic of Armenia was substantiated, the provisions subject to amendment of the Constitution were presented.

**Keywords:** Constitution, Constitutional Reforms, Constitutional Court, Constitutional Procedure, Provisions of the Constitution

*Տրվել է պաշարության՝ 14.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 10.11.2020թ.*

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

*Աիդա Թադևոսյան*

*ԵՀ, Իրավագիտության ամբիոն, ի.գ.թ.  
aida.tad\_15@mail.ru, +374 93 548432*

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների առանցքային հիմնահարցերից մեկը մարդու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական երաշխիքների ամրագրումն է, որոնք ուղղված են նաև քրեական դատավարության ընթացքում օրինականության պահպանմանը և կամայականության բացառմանը: Միևնույն ժամանակ, իրականացվող բարեփոխումները միտված են բարձրացնելու թե՛ նախնական քննության, և թե՛ դատական քննության արդյունավետությունը՝ նպաստելով առավել արդյունավետ քրեադատավարական կառուցակարգերի ստեղծմանը:

Սույն աշխատանքի շրջանակներում ներկայացվում է հեղինակի դիրքորոշումը ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծով նախատեսված՝ մեղադրյալի՝ իբրև քրեական դատավարության «կենտրոնական» սուբյեկտներից մեկի դատավարական կարգավիճակին, նրա լրության իրավունքի և սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև մեղադրյալի պաշտպանության իրավունքին առնչվող որոշակի հիմնահարցերի վերաբերյալ:

**Հիմնաբառեր.** *Մեղադրյալ, լրության իրավունք, սուտ ցուցմունք, քրեական դատավարություն, քրեական վարույթ:*

Հայաստանի Հանրապետության որպես իրավական պետության կայացման կարևոր նախադրյալներից մեկը մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորմանն ու պաշտպանությանն ուղղված

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

արդյունավետ իրավամիջոցների և պետական կառուցակարգերի ստեղծումն է:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածը հռչակում է մարդու, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների և ազատությունների բարձրագույն արժեքներ լինելու գաղափարը՝ պետության վրա դնելով դրանց պաշտպանությունն ապահովելու սահմանադրական պարտավորություն:

Սահմանադրաիրավական խնդրո առարկա պահանջն առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում հատկապես պետական գործունեության այն ոլորտներում, որտեղ էականորեն սահմանափակվում են մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները: Նման սահմանափակումները հատուկ են, մասնավորապես, քրեադատավարական օրենսդրությանը և իրենց համարժեք անդրադարձն ունեն նաև մեղադրյալի՝ որպես քրեական դատավարության առանձին սուբյեկտի դատավարական կարգավիճակի բովանդակության վրա:

1) Մեղադրյալի՝ որպես քրեական դատավարության ինքնուրույն սուբյեկտի առանցքային գործառույթն իրեն առաջադրված մեղադրանքից պաշտպանվելն է, որի իրականացման նպատակով ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգիրքը (հոդված 65) (այսուհետ՝ ՀՀ ՔԴՕ) վերջինիս օժտել է դատավարական իրավունքների որոշակի ծավալով: Պաշտպանության այդ իրավունքը ընդգրկում է նաև մեղադրյալի՝ ցուցմունք տալու կամ դրանից հրաժարվելու իրավունքը (ՀՀ ՔԴՕ, հոդված 65, 1-ին մաս, կետ 6): Խնդրո առարկա հարցի շրջանակներում առանձնակի ուշադրության է արժանի նաև ՀՀ գործող ՔԴՕ-ի 65-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի մեղադրյալի վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իր տված ցուցմունքների և բացատրությունների համար, բացի այն դեպքերից, երբ նա հայտարարել է հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու մասին: Քննարկվող հոդվածով, փաստորեն, մեղադրյալը չի նախազգուշացվում սուտ ցուցմունք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 338):

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հատկանշական է, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով մեղադրյալի պաշտպանության իրավունքի ծավալը որոշակիորեն կրճատվում է, քանզի վերջինս, ինչպես և դատավարության մյուս մասնակիցները, սուտ ցուցմունք տալու համար ենթակա է լինելու համապատասխան քրեական պատասխանատվության, մասնավորապես՝ ՀՀ նոր ՔԴՕ նախագծի 43-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսվում է մեղադրյալի՝ միայն լռության պահպանության կամ պաշտպանի ներկայությամբ ցուցմունք տալու իրավունքը:

Լռության իրավունքի քննարկման համատեքստում հարկ է անդրադառնալ նաև անձի՝ իր, ամուսնու և մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք չտալու իր իրավունքին, որն իր ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածում: Քննարկվող սահմանադրաիրավական կարգավորումն անձի իրավունքների պաշտպանության գործուն երաշխիքներից է: Այն ունի բավականին լուրջ և խորը բարոյական նախադրյալներ: Օրենսդիրը ելնում է նաև հանրային և մասնավոր շահերի միասնական, փոխապայմանավորված հարաբերակցությունից, այն է՝ հանրային շահը պահանջում է, որ մարդը պարտավոր է աջակցել իրավապահպան և դատական իշխանության մարմիններին իրավախախտումները բացահայտելու և զսպելու գործում՝ ցուցմունք տալով, բայց և այնպես, այդ աջակցությունը չպետք է ապահովվի անձանց անընդունելի բարոյական զրկանքներ պատճառելով: Մասնավոր անձինք և պաշտոնատար անձինք հավասարապես պարտավոր չեն գործել ռուտ հանրային շահերի՝ իրավախախտումների բացահայտման անհրաժեշտ արդյունքին հասնելու համար [4, էջ 260]: Սահմանելով ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իրավունքը՝ կոնկրետ դեպքերում, օրենսդիրը վերացնում է ցուցմունք տալու հարցում հանրային և մասնավոր շահերի միջև հակասության դրսևորումներից մեկը՝ նախապատվություն տալով անձնական շահերին:

Հավելենք, որ ՀՀ նոր ՔԴՕ նախագծում ամրագրում ստացած այս մոտեցումը միանգամայն համապատասխանում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) դիրքորոշմանը: Վերջինիս պրակտիկայում մեղադրյալի լռության և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը դիտվում է որպես արդարացի դատական



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

քննության իրավունքի բաղադրիչ (Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, 6-րդ հոդված): ՄԻԵԴ-ը նշում է, որ թեև լռության և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքները Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ուղղակիորեն նախատեսված չեն, այնուամենայնիվ, դիտվում են որպես 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության հասկացության հիմքում ընկած համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային չափորոշիչներ (Heaney and McGuinness v. Ireland, Judgment of 21 December 2000. Para. 40 ; Quinn v. Ireland, Judgement of 21 December 2000. Para 40.) [6, էջ 177-178]:

Մասնավորապես՝ Հենին և ՄաքԳահինեսն ընդդեմ Իռլանդիայի (Heaney and McGuinness v. Ireland, Para 58), 34720/97, 21.12.2000թ. գործով Դատարանը նշել է. «...Անվտանգության և հասարակական կարգի վերաբերյալ Կառավարության փաստարկները չեն կարող արդարացնել այնպիսի դրույթը, որը վերացնում է դիմողի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված լռության և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքները...»: Փաստորեն, ՄԻԵԴ-ն այս իրավունքը դիտում է իբրև մեղադրյալի անքակտելի և անվիճելի իրավունք, որի սահմանափակումը չի կարող արդարացվել և ոչ մի պարագայում: Իսկ Վան Վոնդելն ընդդեմ Նիդեռլանդների (Van Vondel v. Netherlands, Para. 58) (dec.), 38258/03, 23.03.2006թ. գործով ՄԻԵԴ-ը ընդգծել է. «...Ինքնախոստովանական ցուցմունք չտալու իրավունքն առավելապես վերաբերում է քրեական դատավարությունում մեղադրվող անձի՝ լռություն պահպանելու ցանկությունը հարգելուն և քրեական մեղադրանքում կամավոր տրված տեղեկության կիրառմանը...»: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ ՄԻԵԴ-ը լռության և ինքնախոստովանական ցուցմունք չտալու իրավունքը մեկնաբանում է բավականին լայն իմաստով, ներառելով նաև ոչ վերբալ արտահայտչամիջոցները. մասնավորապես՝ Յալոն ընդդեմ Գերմանիայի (Jalloh v. Germany, Para. 113,118,120 ) [GC], 54810/00, 11.07.2006թ. գործով Դատարանը նշել է. «...Քննարկվող ապացույցը, մասնավորապես՝ դիմողի օրգանում թաքնված թմրամիջոցները, որոնք ձեռք էին բերվել հարկադրաբար որձկումներ առաջացնելու միջոցով, կարող են դիտվել որպես միջոց-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ներ, որոնք ստացվել են կասկածյալի ազատ կամքի բացակայության պայմաններում, և որոնց կիրառումը քրեական դատավարությունում չի արգելվում, սակայն դիմողի նկատմամբ կիրառված ընթացակարգը խիստ հակասում է օրինականությանը...»: Դատարանը նշում է, որ դիմողին թմրամիջոցները ործկալ հարկադրելն ակնհայտորեն հանդիսացել է միջամտություն նրա ֆիզիկական ամբողջականությանը: Այդպիսով դիմողից փաստորեն կորզվել է ինքնախոստովանական ցուցմունք, ինչն ուղղակիորեն հանդիսացել է վերոհիշյալ գործողությունների արդյունք: Այսպիսով, դատարանը ընդգծել է, որ դիմողի գործով հարկադրաբար որձկումներ առաջացնելու միջոցով ձեռք բերված ապացույցների կիրառությունը թույլ տալը խախտում է իր դեմ ցուցմունք չտալու նրա իրավունքը և, հետևաբար, ընդհանուր առմամբ հանգեցնում է նրա նկատմամբ հարուցված վարույթի անարդարությանը:

***Այպիսով՝ ամրագրելով մեղադրյալի լուռության իրավունքը, նախևառաջ, անհրաժեշտ է հստակեցնել դրա իրականացման եղանակները և դիտարկել այն ամենալայն մեկնաբանման իմաստով, որպեսզի պրակտիկայում բացառվի այդ իրավունքի սահմանափակման հնարավորությունը:***

Ինչ վերաբերում է մեղադրյալին սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության ենթարկելուն, ապա կարծում ենք, որ քննարկվող օրենսդրական փոփոխությունը բավականին անբարենպաստ հետևանքներ կարող է ունենալ մեղադրյալի համար: Փաստացի, վերջինս բացի իրեն ներկայացված մեղադրանքից, ստիպված է լինելու պաշտպանվել նաև սուտ ցուցմունք տալու կապակցությամբ առաջադրված մեղադրանքից (չնայած ապացուցման պարտականությունը ընկած է վարույթն իրականացնող մարմնի վրա), մինչդեռ պրակտիկայում չի բացառվում նաև դատական սխալների հնարավորությունը, որի արդյունքում անձը կարող է ապօրինաբար քրեական պատասխանատվության ենթարկվել, ինչի հետևանքով, փաստացի մեղադրյալի կողմից տրված ճշմարիտ ցուցմունքը կարող է որակվել իբրև սուտ ցուցմունք՝ առաջ բերելով համապատասխան պատասխանատվություն:

Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնել նաև խնդրի հոգեբանական ասպեկտները: Ինչպես նշում է հոգեբանական գիտությունների

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

դոկտոր, Մոսկվայի պետական իրավաբանական ակադեմիայի հոգեբանության և կրիմինալոգիայի ամբիոնի պրոֆեսոր Մ. Ի. Ենիկենը, անձին որպես մեղադրյալ ներգրավելուց հետո նրա վարքագիծը կառուցվում է հակազդող պաշտպանողական ռեակցիաների հիման վրա, որոնք կարող են լինել ինչպես ակտիվ՝ դրսևորվելով, օրինակ, սուտ ցուցմունք տալով, կամ պասիվ՝ լռություն պահպանելով, ընդ որում՝ վերոհիշյալ երկու ուղղություններից մեկը անձը որդեգրում է ոչ թե գիտակցաբար, այլ ենթագիտակցության մակարդակով [9, էջ 105-106]: Միննույն ժամանակ, մեղադրյալի անձը բնութագրվում է բարձր զգայունությամբ և, կախված կոնկրետ անձի անձնային հատկանիշներից՝ երբեմն նաև իրականության ոչ ադեկվատ գնահատականով, ինչը կարող է հանգեցնել «սպառնացող գերազնահատված վտանգից պաշտպանվելու սխալ միջոցների ընտրության» [9, էջ 106]:

Հաշվի առնելով խնդրի և՛ իրավական, և՛ հոգեբանական ասպեկտները, կարծում ենք, մեղադրյալին՝ սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության ինստիտուտի նման կտրուկ ներմուծումը, կարող է լուրջ վնաս հասցնել վերջինիս պաշտպանության իրավունքի իրականացմանը: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ սուտ ցուցմունք տալը դատավարության որևէ սուբյեկտի կողմից կարող է «օրինականացվել»: Միանշանակ, քննարկվող փոփոխությունը կնպաստի գործի արագ և արդյունավետ քննությանը, և «սթափեցնող» ազեցություն կունենա մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձանց համար: ***Կարծում ենք, որ սուտ ցուցմունք տալու համար մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձինք չպետք է վկայի կամ տուժողի հետ հավասար պայմաններում ենթարկվի քրեական պատասխանատվության: Հաշվի առնելով մեղադրյալի կարգավիճակը՝ կարծում ենք, որ առավել նպատակահարմար է սուտ ցուցմունք տալու համար նրանց պատիժը նախադեսել միայն տուգանքի ձևով:***

2) Ինչպես ՀՀ գործող ՔԴՕ-ն, այնպես էլ նոր ՔԴՕ-ի նախագիծն ամրագրում են մեղադրյալի պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացմանն ուղղված ներքոհիշյալ կարևոր երաշխիքներից մեկը. ՀՀ գործող ՔԴՕ 105-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

մեղադրանքի կողմի թույլ տված քրեադատավարական օրենքի պահանջների խախտման հետևանքով ապացուցողական նշանակությունը կորցնելու ենթակա նյութը պաշտպանության կողմի միջնորդությամբ կարող է թույլատրվել որպես ապացույց: Այդպիսի ապացույցը թույլատրվում է միայն համապատասխան կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ:

Համանման ձևակերպում ունի նաև ՀՀ նոր ՔԴՕ-ի նախագծի 97-րդ հոդվածի 9-րդ մասը. այն տվյալները, որոնք ստացվել են վարույթի հանրային մասնակցի թույլ տված՝ օրենքի պահանջների խախտմամբ, կարող են մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջնորդությամբ օգտագործվել որպես ապացույց, եթե այդ խախտմամբ չեն ոտնահարվել որևէ անձի իրավաչափ շահերը: Այդպիսի ապացույցը կարող է օգտագործվել միայն ի շահ տվյալ մեղադրյալի:

Խնդրո առարկա հարցի շուրջ մասնագիտական գրականության շրջանակներում արտահայտվել են բավականին հակասական դիրքորոշումներ: Հեղինակների մի մասը գտնում է, որ հիշյալ դրույթը ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասին, համաձայն որի հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է [5, էջ 283]: Հատկանշական է, որ սահմանադրական այս նորմը ոչ մի բացառություն չի նախատեսում:

Հեղինակների մեկ այլ խումբ նշում է, որ օրենքով սահմանված կարգի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն անթույլատրելի ճանաչելու հետևանքների հետ կապված պետք է քննարկել թույլատրելիության ասիմետրիայի (անհամաչափության) հարցը, որի համաձայն մեղադրանքի կողմի թույլ տված դատավարական օրենքի պահանջների խախտման հետևանքով ապացուցողական նշանակությունը կորցնելու ենթակա նյութը պաշտպանության կողմի միջնորդությամբ կարող է թույլատրվել որպես ապացույց [4, էջ 266]: Քանի որ ապացույցների թույլատրելիության ինստիտուտի սահմանադրական ամրագրման նպատակը նախ և առաջ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է, ապացույցների թույլատրելիության սահմանադրական ձևակերպման շրջանակներում տեղավորվում է մեղադրանքի

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

կողմի թույլ տված դատավարական օրենքի պահանջների խախտման հետևանքով ապացուցողական նշանակությունը կորցնելու ենթակա նյութի պաշտպանության նպատակներով օգտագործման հնարավորությունը: Փաստորեն, եթե իր բնույթով արդարացնող ապացույցը ստացվել է մեղադրյալի այս կամ այն դատավարական իրավունքի խախտմամբ, այն կարող է թույլատրելի համարվել պաշտպանության կողմի միջնորդությամբ, քանի որ, վերջին հաշվով, դրանք կարող են ծառայել իբրև մեղադրյալի պաշտպանության իրավունքի իրականացման արդյունավետ միջոց:

***Կարծում ենք՝ մեղադրյալին պաշտպանության քննարկվող միջոցից զրկելը կարող է խաթարել կողմերի մրցակցության սկզբունքի արդյունավետ իրականացումը, քանզի պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ պաշտպանության կողմը մինչդարական վարույթում զրկված է մեղադրանքի կողմի հետ հավասար ապացույց հավաքելու իրավունքից, և բացի այդ, չի բացառվում, որ ապացուցողական նշանակություն ունեցող տվյալ նյութը գործի արդարացի լուծման համար ունենա էական նշանակություն: Այնուամենայնիվ, քննարկվող դրույթի առերևույթ հակասությունը ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասի տրամաբանությանը կարիք ունի համապատասխան օրենդրական լուծման:***

3) Մասնագիտական գրականության մեջ մեղադրյալը բնորոշվում է որպես քրեական դատավարության ինքնուրույն, գործի ելքով անմիջականորեն շահագրգռվածություն ունեցող սուբյեկտ, ով քրեական դատավարության շրջանակներում իրականացնում է պաշտպանության ֆունկցիա [7, էջ 354]:

ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ԲԴՕ) 64-րդ հոդվածը սահմանում է, որ մեղադրյալն այն անձն է, որի նկատմամբ որոշում է կայացված որպես մեղադրյալ ներգրավելու մասին, իսկ մեղադրյալը, որի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատարանի դատավճիռ, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն մեղադրական է, կոչվում է դատապարտյալ, իսկ եթե դատավճիռն ամբողջությամբ արդարացման է՝ արդարացված:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Նոր Քրիստոսի նախագծում «մեղադրյալի» որպես ինքնուրույն դատավարական սուբյեկտի նման ընդգրկումն բնորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ի տարբերություն գործող Քրիստոսի՝ առաջինս հրաժարվել է «արդարացված» և «դատապարտյալ» եզրույթներից՝ նրանց համապատասխանաբար փոխարինելով «արդարացված մեղադրյալ» և «դատապարտված մեղադրյալ» եզրույթներով՝ մեկ անգամ ևս ընդգծելով այն հանգամանքը, որ վերջիններս քրեական դատավարության ինքնուրույն սուբյեկտներ չեն: Հիշյալ քայլով, փաստորեն, որոշակիորեն լուծվել է մասնագիտական գրականության շրջանակներում արտահայտված անհամաձայնությունը գործող Քրիստոսի 6-րդ հոդվածի 42-րդ կետով և 66-րդ հոդվածով նախատեսված «արդարացվածին»՝ որպես քրեական դատավարության առանձին սուբյեկտ ճանաչելու փաստի վերաբերյալ: Մասնավորապես, տվյալ դիրքորոշումը հիմնավորվում է այն հանգամանքով, որ «արդարացվածը» որպես այդպիսին քրեական դատավարության ինքնուրույն սուբյեկտ չի հանդիսանում, քանզի չի բավարարում քրեական դատավարության սուբյեկտներին ներկայացվող կարևորագույն պահանջներից մեկը, այն է՝ օժտված չի կոնկրետ ֆունկցիաներով (մեղադրանքի, պաշտպանության, գործի լուծման) կամ չի օժանդակում այդ ֆունկցիաների իրականացմանը [8, էջ 187]: Վերջինս, պարզապես ի հայտ է գալիս որպես «դատավարության ողջ ընթացքի արդյունք», քանզի դատավարության ընթացքում հանդես է գալիս միայն մեղադրյալի կարգավիճակով և իրականացնում պաշտպանության ֆունկցիա:

Հարկ է ընդգծել, որ Նախագծը որպես արդարացված մեղադրյալ դիտում է մեղադրյալին, ում նկատմամբ առկա է օրինական ուժի մեջ չմտած արդարացման վերդիկտ՝ չնախատեսելով մինչդատական վարույթում քրեական հետապնդումը անմեղության հիմքով դադարեցնելու դեպքերը:

***Այսպիսով, ըստ նախագծի տրամաբանության, «արդարացված մեղադրյալը» չի դիտարկվում իբրև քրեական դատավարության ինքնուրույն սուբյեկտ, և որպես այդպիսին ի հայտ է գալիս դատարանի կողմից արդարացման վերդիկտ կայացնելու ժամանակ, որպիսի իրավակարգավորումը մեր կարծիքով թերի է:***

### Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն (06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ., ՀՀՊՏ 2015.12.21/):
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ՀՕ-248, ՀՀՊՏ 1998.09.21/22(55), 01.07.1998թ.:
3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ:
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., Իրավունք, 2010 – 1086 էջ:
5. Դիլբանդյան Ա., Հարությունյան Ա., Ղազինյան Գ., Ղուկասյան Հ., Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության իրավունք, ընդհանուր մաս (4-րդ հրատ., լր. և փոփ.), Երևան, ԵՊՀ հրատ., 2006 - 416 էջ:
6. Մաքրրայդ Ջերեմի, Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան.- Եր.: Անտարես, 2009.- 468 էջ:
7. Уголовный процесс. Под ред. Божьева В.П., 3-е изд., испр. и доп. - М.: Спарк, 2002. – 704 с.:
8. Уголовный процесс. Учебник для студентов юридических вузов и факультетов (под ред. К.Ф. Гуценко). – Изд-во "Зерцало", 2005 г. - 736 с.:
9. Юридическая психология. Краткий учебный курс. Еникеев М.И. М.: Норма, 2003. – 256 с.:

### НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ, СВЯЗАННЫЕ СО СТАТУСОМ ОБВИНЯЕМОГО В СВЕТЕ ПРОЕКТА НОВОГО УГОЛОВНО- ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА РА

**Аида Тадевосян**

ЕУ, кафедра Правоведения, к.ю.н.

Одним из ключевых вопросов судебной реформы, в последние годы проводимой в Республике Армения, является закрепление основных прав человека (конституционных гарантий свобод), которые направлены на поддержание верховенства закона в уголовном судопроизводстве и исключение произвола. В то же время проводимые реформы направлены на повышение эффективности как предварительного следствия, так и судебного процесса, способствуя созданию более эффективных структур уголовного правосудия.

Данная статья посвящена исследованию одного из ключевых институтов уголовного производства, в частности право обвиняемого давать показания, право на молчание, а также некоторые вопросы, связанные с правом на защиту в свете проекта нового Уголовно-процессуального кодекса РА

**Ключевые слова:** Обвиняемый, право на молчание, лжесвидетельство, уголовный процесс, уголовное производство.

### SOME ISSUES RELATED TO THE STATUS OF THE ACCUSED IN THE LIGHT OF THE DRAFT NEW CRIMINAL PROCEDURE CODE OF RA

**Aida Tadevosyan**

EU, Chair of Jurisprudence, PhD in Law

One of the key issues of the judicial reform carried out in the Republic of Armenia in recent years is the consolidation of fundamental human rights (constitutional guarantees of freedoms), which are aimed at maintaining the rule of law in criminal proceedings and eliminating arbitrariness. At the



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

same time, ongoing reforms are aimed at improving the efficiency of both the preliminary investigation and the judicial process, contributing to the creation of more effective criminal justice structures.

This article is devoted to the study of one of the key institutions of criminal proceedings, in particular, the right of the accused to testify, the right to silence, as well as some issues related to the right to defense in the light of the draft of the new RA Criminal Procedure Code.

**Keywords:** Accused, right to silence, perjury, criminal proceedings, criminal procedure.

*Տրվել է տպագրության՝ 22.09.2020թ.  
Գրախոսվել է՝ 27.10.2020թ.*

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ՓՈԽՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

#### **Դավիթ Թումասյան**

ՀՌՀ, Իրավունքի տեսության և սահմանադրական  
իրավունքի ամբիոն, ի.գ.թ., դոցենտ  
davidtumasyan@gmail.com, +374 93 003095

#### **Մանե Մելիքսեթյան**

ՀՌՀ, Իրավունքի տեսության և սահմանադրական  
իրավունքի ամբիոն, մագիստրոս  
mane.meliksetyan.98@mail.ru +374 41 402441

Ներկայումս ոչ մի պետություն ի վիճակի չէ ամբողջ ծավալով բավարարել փոխապարվաստման նպատակով օգտագործվող մարդու օրգանների կամ հյուսվածքների պահանջարկը, և փոխապարվաստման վիրահատության սպասող անձանց թիվն ավելի արագ է աճում, քան այդ օրգանների կամ հյուսվածքների առաջարկը: Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապարվաստելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ինչպես միջազգային իրավական բազմաթիվ գործիքներով, այնպես էլ՝ ազգային իրավական ակտերով, որոնք պետք է զուգահեռաբար բարեփոխվեն՝ հաշվի առնելով բժշկության արագ զարգացումները և նորարարությունների ներմուծումը: Փոխապարվաստման վիրահատություն կատարելու կանոնները խախտելու համար քրեական պատասխանատվությունը հանդիսանում է պետության կողմից առավել խիստ միջամտության եղանակ:

**Հիմնաբաներ.** փոխապարվաստում, մարդու օրգաններ, մարդու հյուսվածքներ, քրեական պատասխանատվություն, վիրահատության կանոնները խախտել:

Բժշկության զարգացմանը զուգահեռ ավելանում են նաև այդ ոլորտում իրականացվող իրավախախտումները: Բացառություն չէ բժշկագիտության արագ զարգացող ոլորտ հանդիսացող տրանսպլանտոլոգիան, որը կարող է վերածվել եկամտաբեր հանցավոր գործունեու-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

թյան, քանի որ օրգանների կամ հյուսվածքների պահանջարկն ամբողջ աշխարհում գերազանցում է առաջարկը, իսկ ստեղծված իրավիճակը չի կարող չհետաքրքրել տարբեր հանցավոր խմբավորումներին և վրիպել նրանց ուշադրությունից: Հետևաբար, օրգանների կամ հյուսվածքների շրջանառությունն արդեն տասնյակ տարիներ հանդիսանում է նաև քրեաիրավական ուսումնասիրության առարկա: Բացառություն չէ նաև Հայաստանը, որտեղ 2003թ.-ին ընդունված քրեական օրենսգրքով (այսուհետ՝ քր. օր.) սահմանվել են հողվածներ, որոնցով պաշտպանվում են օրգաններին և (կամ) հյուսվածքներին վերաբերող հասարակական հարաբերությունները: Մասնավորապես, ՀՀ քր. օր.-ում մարդու օրգանների և (կամ) հյուսվածքների հետ կապված հանցակազմերի շրջանակը հետևյալն է՝

1. ՀՀ քր. օր.-ի 125-րդ հոդված՝ Փոխպատվաստման վիրահատություն կատարելու կանոնները խախտելը,
2. ՀՀ քր. օր.-ի 125.1-րդ հոդված՝ Մարդու օրգանների (և) կամ հյուսվածքների ապօրինի շրջանառությունը,
3. ՀՀ քր. օր.-ի 127-րդ հոդված՝ Անձին առանց իր համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելը,
4. ՀՀ քր. օր.-ի 127.1-րդ հոդված՝ Եվգենիկական փորձեր իրականացնելը,
5. ՀՀ քր. օր.-ի 130-րդ հոդված՝ Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը,
6. ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդված՝ Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը,
7. ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդված՝ Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը,
8. ՀՀ քր. օր.-ի 280-րդ հոդված՝ Մասնավոր բժշկական կամ դեղագործական գործունեությամբ ապօրինաբար զբաղվելը, կեղծ դեղեր պատրաստելը կամ արտադրելը կամ իրացնելը,

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

9. ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետը՝ տուժողի մարմնի մասերի կամ հյուսվածքների օգտագործման նպատակով կատարված սպանություն,
10. ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետը՝ տուժողի մարմնի մասերի կամ հյուսվածքների օգտագործման նպատակով դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը [1]: Մասնագիտական գրականության մեջ տարբերում են մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու հետ կապված հանցագործությունների երկու խումբ՝
- մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու հետ կապված հանցագործություններ, որոնց սուբյեկտն ընդհանուր է (ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետ, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ, 125.1-րդ, 132-րդ, 132.2-րդ և 280-րդ հոդվածներ).
  - մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու հետ կապված հանցագործություններ, որոնց սուբյեկտը հատուկ է (ՀՀ քր. օր.-ի 125-րդ, 127-րդ և 130-րդ հոդվածներ):

Քրեաիրավական պաշտպանության հարցի քննարկումն անմիջականորեն կապված է պաշտպանության առարկայի պարզման հետ: Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու հետ կապված հարաբերությունները կրում են անդրազգային բնույթ և կարգավորվում են միջազգային իրավական բազմաթիվ գործիքներով, մասնավորապես համապատասխան դրույթներ պարունակում են հետևյալ ակտերը՝ Եվրոպայում հիվանդի իրավունքների ապահովման ոլորտում իրականացվող քաղաքականության վերաբերյալ 1994թ.-ի ԱՀԿ հռչակագիրը, Հիվանդի իրավունքների մասին Լիսաբոնի 1981թ.-ի հռչակագիրը, Կենդանի օրգանների առուվաճառքի վերաբերյալ 1985թ.-ի հայտարարությունը, Երեխաների առողջության պահպանման ոլորտում իրականացվող քաղաքականության վերաբերյալ 1987թ.-ի հայտարարությունը, Արիեստական բեղմնավորման և էմբրիոնների փոխպատվաստման վերաբերյալ 1987թ.-ի հայտարարությունը, Մարդու օրգանների փոխպատվաստման վերաբերյալ 1987թ.-ի

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

հոշակագիրը, «Մարդու գենոմ» նախագծի վերաբերյալ 1992թ.-ի հոշակագիրը, Ստամբուլյան հոշակագիրը և այլն:

Մարդու օրգանների փոխպատվաստման մասին հոշակագիրն առաջարկում է մարդու օրգանների փոխպատվաստմամբ զբաղվող բոլոր բժիշկներին պահպանել հետևյալ սկզբունքները՝

- դոնորի և ռեցիպիենտի իրավունքների պահպանում.
- պոտենցիալ դոնորին բժշկական օգնություն ցույց տալիս ընդունված չափանիշների պահպանում (ցուցաբերվող բժշկական օգնության մակարդակը չի կարող կախված լինել այն հանգամանքից, թե հիվանդը հանդես է գալու որպես դոնոր, թե՛ ոչ).
- մահվան փաստի արձանագրման ժամանակ անհրաժեշտ ժամանակակից չափանիշների պահպանում.
- մարդուն կենդանիների կամ արհեստական օրգանների փորձնական փոխպատվաստում իրականացնելիս Հելսինկյան հոշակագրում ամրագրված՝
- մարդկանց նկատմամբ բժշկակենսաբանական հետազոտություններին մասնակցող բժիշկների համար նախատեսված հանձնարարականների պահպանումը.
- դոնորի և ռեցիպիենտի, իսկ այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ, նրանց ընտանիքների անդամների կամ օրինական ներկայացուցիչների տեղեկացված, կամավոր և գիտակցված համաձայնության ստացում.
- ակնկալվող ռիսկի և բուժման այլընտրանքային հնարավոր մեթոդների իրական և օբյեկտիվ ներկայացում[2]:

Բացի միջազգային մեծածավալ փաստաթղթերից՝ առկա են մարդուն օրգանների կամ հյուսվածքների փոխպատվաստումների վերաբերյալ կարգավորող/պաշտպանող բնույթ ունեցող բազմաթիվ ազգային իրավական ակտեր: Մասնավորապես, դրանց թվին են պատկանում՝ ՀՀ քր. օր.-ը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը, «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» 2002թ.-ի ապրիլի 16-ի ՀՀ օրենքը, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» 1996թ.-ի մարտի 4-ի ՀՀ օրենքը, «Մարդու վերարտադրողա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

կան առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» 2002թ.-ի դեկտեմբերի 11-ի ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության «Փոխպատվաստման նպատակով մարդու դոնորական օրգանների և (կամ) հյուսվածքների ներմուծման, արյան և դրա բաղադրամասերի, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի կամ դրանց պրեկուրսորների ներմուծման, արյան և դրա բաղադրամասերի ներմուծման և արտահանման կարգն ու դրանց ցանկերը հաստատելու և ՀՀ կառավարության 2007թ.-ի ապրիլի 26-ի N 551-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2016թ.-ի մարտի 31-ի N 335-Ն որոշումը, ՀՀ կառավարության «Ազատագրկման վայրում գտնվող անձից փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու պայմանները, ինչպես նաև օրգանը և (կամ) հյուսվածքը վերցնելուց հետո ազատագրկման վայրում գտնվող անձի բժշկական օգնության և խնամքի N 1450-Ն որոշումը, ՀՀ առողջապահության նախարարի «Փոխպատվաստման օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու կանոնները և փոխպատվաստումն իրականացնելու կարգը հաստատելու մասին» 2019թ.-ի փետրվարի 1-ի N 04-Ն հրամանը, ՀՀ առողջապահության նախարարի «Փոխպատվաստման ենթակա օրգանների և (կամ) հյուսվածքների ցանկը հաստատելու մասին» 2019թ.-ի փետրվարի 1-ի N 03-Ն հրամանը և այլ իրավական ակտեր: Այդ հրամանի համաձայն՝ ՀՀ-ում փոխպատվաստման ենթակա են հետևյալ օրգանները կամ հյուսվածքները՝ երիկամ, եղջերաթաղանթ և լյարդ[3]:

ՀՀ իրավակարգավորումների շրջանակներում ստացվում է, որ *փոխպատվաստումը*՝ բացակայող կամ ախտաբանական գործընթացի հետևանքով վնասված հյուսվածքների կամ օրգանների փոխարինումն է սեփական կամ այլ օրգանիզմից վերցված հյուսվածքներով կամ օրգաններով, այսինքն՝ փոխպատվաստման վիրահատությունները լինում են 2 տեսակի՝

- 1 - սեփական օրգանիզմից վերցված հյուսվածքներով կամ օրգաններով փոխպատվաստում (աուտոտրանսպլանտացիա),
- 2 - այլ օրգանիզմից վերցված հյուսվածքներով կամ օրգաններով փոխպատվաստում (հետերոտրանսպլանտացիա):

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գրականության մեջ չկա անգամ միասնական մոտեցում, թե օրգանների կամ հյուսվածքների ապօրինի շրջանառությանը վերաբերող հոդվածներն ինչ օբյեկտի դեմ են ուղղված: Այսպես, Ս.Ս. Տիխոնովայի կարծիքով մարդու օրգանների կամ հյուսվածքների ապօրինի շրջանառությունը պետք է համարվի բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություն, քանի որ մարդու օրգանների կամ հյուսվածքների հատուցելի շրջանառությունը վտանգավոր է հասարակության և բարոյականության համար՝ դարձնելով բարոյականությունը մարդու գործունեության կամայականության արդյունք՝ օտարելով անձին հասարակությունից[4, էջ 119]:

Նման կարծիք հայտնել է նաև Ջ. Շխագափսուկը՝ հավելելով, որ քրեորեն պատժելի (հասարակության համար վտանգավոր) պետք է լինի նաև ֆիզիոլոգիական հեղուկների ապօրինի շրջանառությունը [5, էջ 9]:

Սակայն, նման մոտեցումն այդքան էլ արդարացված չէ, քանի որ՝

1 – արարքի վտանգավորությունն ուղղված է ոչ թե ազգաբնակչության դեմ, այլ կոնկրետ մարդու դեմ և նմանեցնել այս հանցագործությունը թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ, տրամաբանական չէ [6, էջ 185],

2 – ազգաբնակչության առողջության դեմ ուղղված հանցագործության ձևաչափով այս հանցանքն ընկալելու դեպքում քրեական պատասխանատվության կենթարկվի նաև դոնորը, ինչը նպատակահարմար չէ այն դեպքում, երբ անձը հարկադրված է եղել տալ օրգանը կամ հյուսվածքը (պարտադիր չէ, որ հարկադրվածությունը պայմանավորված լինի երրորդ անձի կողմից հարկադրանքով,

Այն կարող է պայմանավորված լինի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պայմաններով, օրինակ, ընտանեկան խնդրով, ֆինանսական ծանր վիճակով և այլն), իսկ եթե անգամ նման եղանակներ վերջինիս նկատմամբ չի կիրառվել, ապա քրեական պատասխանատվությունը համարվում է ոչ համաչափ: Այս դեպքում առավել արդյունավետ կլինի պատասխանատվության չենթարկելու հարցի քննարկումը՝ առավել ևս հաշվի առնելով այդ քայլին դիմելու պատճառներն ու պայմանները:

Հայրենական գրականության համաձայն՝ առողջության դեմ ուղղված հանցագործությունների, ներառյալ՝ ՀՀ քր. օր.-ի 125-րդ հոդվածով

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Նախատեսված հանցագործության տեսակային օբյեկտը մարդու առողջությունն ապահովող հասարակական հարաբերություններն են: Դա էլ հիմք է տվել, որ օրենսդիրն այս հանցագործությունները դասի մարդու դեմ ուղղված հանցագործությունների թվին:

Հարկ է նշել, որ ՀՀ քր. օր.-ի 125-րդ հոդվածը չի կարգավորում բջիջների փոխպատվաստումը և դրանց հետ ապօրինի գործողությունների կատարումը քրեորեն պատժելի չէ:

«Առողջություն» եզրույթը պետք չէ շփոթել մարդու ֆիզիկական կատարելության կամ առողջ լինելու հետ: ՀՀ քր. օր.-ի համար լիովին կարևոր չէ՝ վնասը հասցնելու ժամանակ մարդն ֆիզիկապես լիարժեք առողջ է եղել, թե՛ ոչ: Ընդ որում, առողջ լինելն ինքնին հարաբերական հասկացություն է և այս հասկացության սահմանումը պետք է որոնել բժշկական գրականությունում: Մասնավորապես, բժշկական հանրագիտարանի համաձայն՝ «առողջությունն օրգանիզմի կենսագործունեության որակ է, որին բնորոշ է օրգանիզմի կատարյալ հարմարվողականությունը բնական միջավայրի գործոնների ազդեցությանը, որդեծնության ունակությունը՝ հաշվի առնելով տարիքը և ֆիզիկական զարգացման աղետվատությունը, որն ապահովում է օրգանիզմի բոլոր օրգանների և ֆիզիոլոգիական համակարգերի նորմալ ֆունկցիան՝ օրգանների կառուցվածքի սաստկացող խախտումների բացակայության դեպքում, և որն արտահայտվում է անձի ֆիզիկական և հոգևոր բարօրության մեջ նրա տարբեր տեսակի ակտիվ, մասնավորապես՝ աշխատանքային գործունեության ընթացքում» [7, էջեր 224-225]:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է հանցավորի որոշակի այնպիսի գործողության կամ անգործության մեջ, որով խախտվում են մարդու առողջության ու կյանքի անվտանգությունն ապահովող՝ մարդու մարմնի մասը կամ հյուսվածքները վերցնելու կամ փոխպատվաստման օրենքով նախատեսված պայմաններն ու կարգը, ինչի արդյունքում էլ մարմնի մասեր կամ հյուսվածքներ տվողին կամ ընդունողին պատճառվում է ծանր կամ միջին ծանրության վնաս կամ մահ է պատճառվում: Ընդ որում, տուժողի առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը կամ մահը տվյալ դեպքում պետք է պատճառական կապի մեջ գտնվի հանցավորի արարքի հետ: ՀՀ քր.



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

օր.-ի 125-րդ հոդվածի դիսպոզիցիայի տառացի մեկնաբանությունից բխում է, որ օբյեկտիվ կողմից բնութագրվում է մարմնի մասը կամ հյուսվածքը վերցնելու կամ փոխպատվաստելու՝ օրենքով նախատեսված պայմաններն ու կարգը խախտելու մեջ, որը կարող է արտահայտվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ:

Մինչդեռ, մարմնի մասը կամ հյուսվածքը վերցնելու կամ փոխպատվաստելու պայմաններն ու կարգը կարող են կարգավորվել ոչ միայն օրենքով, այլ նաև տարբեր ենթաօրենսդրական ակտերով (հրաման, կարգադրություն, ուղեցույց և այլն), որոնցում ամրագրված են փոխպատվաստման վիրահատություն իրականացնելու՝ բժշկական գիտության կողմից մշակված կանոնները: Քննարկվող հանցագործությունն ունի նյութական հանցակազմ, հետևաբար պետք է առկա լինեն հետևանքներ՝ առողջության միջին ծանրության կամ ծանր վնաս կամ մահ:

ՀՀ քր. օր.-ի 125-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտը հատուկ է, որպես այդպիսին կարող է հանդես գալ միայն այն անձը, ում վրա դրված մարդու մարմնի մասը կամ հյուսվածքը վերցնելու կամ փոխպատվաստելու՝ օրենքով նախատեսված պայմաններն ու կարգը պահպանելու պարտականություն:

Հատուկ սուբյեկտ նախատեսող՝ մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու հետ կապված հանցագործությունների կապակցությամբ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հանցակցության խնդիրը, որի կապակցությամբ քրեական իրավունքի տեսության մեջ երկու մոտեցում կա: Այսպես, առաջին մոտեցման համաձայն՝ հատուկ սուբյեկտի կողմից կատարվող հանցագործություններին ընդհանուր սուբյեկտը չի կարող հանցակցել [8, էջեր 148-149]: Երկրորդ մոտեցման համաձայն՝ հատուկ սուբյեկտի կողմից կատարվող հանցագործություններին ընդհանուր սուբյեկտի հանցակցությունը հնարավոր է, բացառությամբ այն հանցագործությունների, որոնց հանցակազմի օբյեկտիվ կողմը որոշակի առանձնահատկություններ ունի [9, էջեր 130-133]:

Հատուկ սուբյեկտի հետ հանցակցության կապակցությամբ քրեական իրավունքի տեսության մեջ վիճահարույց է կատարողի անձնային

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

հատկանիշները մյուս հանցակիցներին վերագրելու հարցը: Այս հարցի վերաբերյալ տեսության մեջ տարբեր մոտեցումներ են արտահայտվել: Մասնավորապես, առաջարկվում է կատարողի անձնային հատկանիշները վերագրել միայն կատարողին[10, էջ 67]:

Տ.Մ. Կաֆարովի և Ս.Վ. Բորոդինի կարծիքով, կատարողի անձնային հատկանիշները, որոնք նախատեսված են որպես հանցակազմի կոնստրուկտիվ հատկանիշ, պետք է վերագրվեն այլ հանցակիցների կամ չպետք է ազդեն հանցակիցների արարքների որակման վրա, եթե ամրագրված են որպես հանցակազմի որակյալ հատկանիշ[11, էջեր 172-174, էջ 124]:

Սուբյեկտիվ կողմից ելնելով՝ պետք է հստակ պատկերացնել, որ հանցագործության սուբյեկտը, մասնագիտական գործունեության հիման վրա կամ ի պաշտոնե, գիտի մարդու մարմնի մասը կամ հյուսվածքները վերցնելու կամ փոխպատվաստման օրենքով նախատեսված պայմաններն ու կարգը և կամ չի իրականացնում դա կամ թերի է իրականացնում, ինչի արդյունքում առաջանում են ՀՀ քր. օր.-ի 125-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հետևանքը:

ՀՀ քր. օր.-ի 125-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծանրացնող է համարվում նույն արարքի կատարումը, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ: Սուբյեկտիվ կողմից անզգուշությամբ մահ պատճառելը կարող է դրսևորվել թե՛ ինքնավստահությամբ, և թե՛ անփութությամբ: Այսինքն՝ ՀՀ քր. օր.-ի 125-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության համար պատասխանատվությունը վրա է հասնում այն դեպքերում, երբ արարքը կատարողը՝

1) նախատեսել է իր գործողությունների (անգործության) հետևանքով մեկ ուրիշին մահ պատճառելու հնարավորությունը, բայց առանց բավարար հիմքերի՝ թեթևամտորեն հույս է ունեցել կանխելու այն (հանցավոր ինքնավստահություն):

2) չի նախատեսել նման հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դա (հանցավոր անփութություն):

Ընդ որում, ընդհանուր կանոնի համաձայն՝ հանցավոր ինքնավստահությունն ավելի վտանգավոր է, քան հանցավոր անփութությունը,

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

քանի որ առաջին դեպքում հանցավորը գիտակցաբար խախտում է որոշակի կանոններ և նախատեսում իր արարքի հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, իսկ երկրորդում՝ ոչ: Սակայն դրանց պատժելիության առումով ՀՀ քր. օր.-ի 125-րդ հոդվածի 2-րդ մասը որևէ տարբերություն չի նախատեսում:

Անուղղակի դիտավորությամբ կատարված սպանությունից հանցավոր ինքնավստահությամբ մահ պատճառելը տարբերվում է նրանով, որ վերջինիս դեպքում հանցավորը ոչ թե թեթևամտորեն հույս է ունենում կանխել մահվան առաջացումը, այլ տուժողին կյանքից զրկել չցանկանալով հանդերձ՝ ոչ միայն անտարբեր վերաբերմունք է ցուցաբերում, այլև գիտակցաբար թույլ է տալիս դրա առաջացումը: Անուղղակի դիտավորությամբ կատարված սպանությունը, ի տարբերություն հանցավոր ինքնավստահությամբ մահ պատճառելու, առկա է նաև այն դեպքում, երբ տուժողի մահը վրա չհասնելու հավանականությունը հանցավորը կապում է պատահական երևույթների (օրինակ՝ բնության ուժերի ներգործության, պատահական հաջողության և այլնի) հետ:

Հանցավոր անփութությամբ մահ պատճառելը, ինչպես արդեն նշվել է, դրսևորվում է նրանում, որ հանցավորը չի նախատեսում իր գործողությունների արդյունքում ուրիշ մարդու մահվան առաջացումը, սակայն որոշակի հանգամանքներից ելնելով՝ պարտավոր էր և կարող էր դա անել, եթե գործեր ավելի զգույշ: Հետևաբար, արարքը նշված հատկանիշով որակելու համար անհրաժեշտ է հիմնվել ՀՀ քր. օր.-ի 30-րդ հոդվածի 3-րդ մասից բխող չափանիշների վրա:

Ամփոփելով սույն ուսումնասիրությունը, կարելի է նշել, որ ներկայումս ոչ մի պետություն ի վիճակի չէ ամբողջ ծավալով բավարարել փոխպատվաստման նպատակով օգտագործվող մարդու օրգանների կամ հյուսվածքների պահանջարկը, և փոխպատվաստման վիրահատության սպասող անձանց թիվն ավելի արագ է աճում, քան այդ օրգանների կամ հյուսվածքների առաջարկը: Նշված հանգամանքն օգտագործվում է հանցավոր կազմակերպությունների կողմից, քանի որ անհրաժեշտ օրգանների կամ հյուսվածքների սակավության պայմաններում այս ոլորտում իրականացվող հանցավոր գործունեությունն առավել եկամտաբեր է: Մարդուն օրգանների և հյուսվածքների փոխ-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

պատվաստումները եղել են, կան և կլինեն սովետային տնտեսության բաղկացուցիչ մաս բազմաթիվ պետություններում, մասնավորապես զարգացող երկրներում, սոցիալապես անապահով ընտանիքների անդամների նկատմամբ:

Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ինչպես միջազգային իրավական բազմաթիվ

գործիքներով, այնպես էլ՝ ազգային իրավական ակտերով, որոնք պետք է զուգահեռաբար բարեփոխվեն՝ հաշվի առնելով բժշկության արագ զարգացումները և նորարարությունների ներմուծումը:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է, որ յուրաքանչյուր պետություն ունենա հստակ և երբեմն խիստ օրենսդրություն փոխպատվաստման վիրահատությունների ապօրինի դրսևորումների դեմ արդյունավետ պայքարն իրականացնելու գործում, ինչպես նաև ՀՀ քր. օր.-ի 125-րդ հոդվածում փոփոխվի պաշտպանության ենթակա հանցագործության առարկաների շրջանակը, և բջիջների ապօրինի փոխպատվաստումը և դրանց հետ ապօրինի այլ գործողությունների կատարումը նույնպես քրեորեն պատժելի լինի (այս դեպքում կարող է վերանայվի նաև հանցավոր հետևանքի պարտադիր լինելու պայմանը կամ դրա ծանրության աստիճանը):

### Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ընդունված 2003թ. ապրիլի 18-ին:
2. Մարդու օրգանների փոխպատվաստման մասին հռչակագիր:
3. ՀՀ առողջապահության նախարարի «Փոխպատվաստման ենթակա օրգանների և (կամ) հյուսվածքների ցանկը հաստատելու մասին» 2019թ.-ի փետրվարի 1-ի N 03-Ն հրամանը:
4. Тихонова С.С. Прижизненное и посмертное донорство в РФ. СПб., 2002, էջ 119:
5. Шагапсоев З.Л. Проблемы уголовной ответственности за трансплантацию// Общество и право, 2009, №2, էջ 9:

6. Савельев О.Ю. Уголовная ответственность за преступления против личности, связанные с изъятием и использованием органов или тканей человека// Вектор науки Тольятинского государственного университета, 2010, №3(3), էջ 185:
7. Малая медицинская энциклопедия (том 2)/ Под ред. акад. АМН СССР В.И. Покровского. М., Издательство Советская энциклопедия, 1991, էջեր 224-225:
8. Тельнов П.Ф. Ответственность за соучастие в преступлении. М., 1974, էջեր 148-149:
9. Орымбаев Р. Специальный субъект преступления. Алма-Ата, 1977, էջեր 130-133:
10. Гаухман Л.Д. Квалификация преступлений. М., 1991, էջ 16; Малыхин В.И. Квалификация преступлений. Теоретические вопросы. Куйбышев, 1981, էջ 67:
11. Մանրմանի տե՛ւ՝ Кафаров Т.М. Проблема рецидива в советском уголовном праве. Баку, 1972, էջեր 172-174; Бородин С.В. Квалификация преступлений против личности. М., 1977, էջ 124:

### **ОБЩАЯ УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА НАРУШЕНИЙ ПРАВИЛ ПРОВЕДЕНИЯ ОПЕРАЦИИ ПО ТРАНСПЛАНТАЦИИ**

**Давид Тумасян**

РАУ, кафедра Теории права и конституционного права, к.ю.н. доцент

**Мане Меликсетян**

РАУ, кафедра Теории права и конституционного права, магистр

В настоящее время ни одно государство не в состоянии в полном объеме удовлетворить потребности органов или тканей человека, необходимых для трансплантации, и число лиц, ожидающих трансплантацию, растет быстрее, чем предложение этих органов или тканей: Отношения, связанные с пересадкой органов и (или) тканей человека, регулируются как многочисленными международно-правовыми инструментами, так и национальными правовыми актами, кото-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

рые должны быть параллельно реформированы с учетом быстрого развития медицины и внедрения инноваций. Уголовная ответственность за нарушение правил проведения операций по трансплантации является наиболее суровой формой государственного вмешательства.

**Ключевые слова:** Трансплантация, органы человека, ткани человека, уголовная ответственность, нарушение правил проведения операции.

### GENERAL CRIMINAL LEGAL CHARACTERISTIC OF VIOLATIONS OF THE RULES FOR CONDUCTING THE TRANSPLANTATION OPERATION

#### **Davit Tumasyan**

RAU, Chair of Theory of Law and Constitutional law

PhD in law, Assistant Professor

#### **Mane Meliksetyan**

RAU, Chair of Theory of Law and Constitutional Law, Master

Currently, no state is able to fully meet the needs of human organs or tissues required for transplantation, and the people awaiting transplantation is growing faster than the supply of these organs or tissues. Relationships associated with transplantation of human organs and (or) tissues are regulated by numerous international legal instruments and national legal acts, which should be simultaneously reformed taking into account the rapid development of medicine and the introduction of innovations. Criminal liability for violating the rules for conducting the transplantation operations is the most severe form of government intervention.

**Keywords:** Transplantation, human organs, human tissue, criminal liability, violation of the rules of the operation.

*Ընդունվել է փաշտոնաթղթի 08.10.2020թ.  
Գրախոսվել է՝ 02.11.2020թ.*

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

**Արփինե Բիշարյան**

ԵՀ, Իրավագիտության ամբիոն, հայցորդ  
a.bisharyan@mail.ru, +374 77 310189

Չլինելով պետական կառավարման համակարգի տարր՝ տեղական ինքնակառավարումը պատմական զարգացման տարբեր ժամանակներում տարբեր կերպ է դրսևորվել, ինչպես կազմակերպման, այնպես էլ գործառույթների իրականացման առումով:

Պատմականորեն ձևավորված տեղական ինքնակառավարման համակարգերը այսօր էլ արդիական են պետությունների տեղական ինքնակառավարման կազմակերպման գործում:

Հոդվածը նվիրված է տեղական ինքնակառավարման իրավական համակարգերին, դրանց առանձնահատկություններին:

**Հիմնաբառեր.** Տեղական ինքնակառավարում, իրավական համակարգ, կառավարիչ, քաղաքային խորհուրդ, քաղաքապետ:

Տեղական ինքնակառավարման հայեցակարգերի և տեսությունների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում ձևավորվեցին տեղական ինքնակառավարման այնպիսի համակարգեր, որոնք բովանդակում են պետական կառավարման համակարգում տեղական ինքնակառավարմանը բնորոշ հատկանիշներ և որպես տեղական ինքնակառավարման մոդել, կիրառում են այժմյան պետությունները:

Տեղական ինքնակառավարման համակարգերի դասակարգման վերաբերյալ մասնագետների շրջանում գոյություն ունեն տարբեր կարծիքներ: Առանձնացվող հիմնական համակարգերն են՝ **Ֆրանսիական (մայրցամաքային կամ միաձույլ), անգլոսաքսոնական (անգլոամերիկյան կամ երկատված), խառը. իբերական և խորհրդային** [1, c. 45.]: Սակայն տեղական ինքնակառավարման համակարգերի բազմազանությունը նշված ձևերով չի սահմանափակվում, և հաճախ առանձնացվում են նաև այլ մոդելներ և մասնագետների կողմից դառնում են

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ինքնուրույն ուսումնասիրման առարկա: Իհարկե, տարբեր դասակարգումների շրջանակներում մոդելների այդ ցանկը համալրվում կամ պակասեցվում է, սակայն տեղական ինքնակառավարման համակարգի կառուցվածք-գործառնության հիմնարար ընդհանրությունները և առանցքային տարբերությունները հնարավոր է ներկայացնել հենց այդ երեք մոդելի միջոցով: Ընդ որում՝ նման դասակարգման հիմքում առանցքային նշանակություն է տրվում առավելապես պետական և ՏԻՄ-երի միջև լիազորությունների բաշխման հիմնախնդրին [2, c. 325]: Մինչ համակարգերին և դրանց առանձնահատկություններին անցնելը, անդրադառնանք այն միտումներին, որոնք համընդհանուր են գրեթե բոլոր համակարգերին՝

- ա) կառավարման ողջ համակարգի ապակենտրոնացում, որի դեպքում նախապատվությունը տրվում է տեղական ինքնակառավարման լիազորությունների ընդլայնմանը,
- բ) գործադիր իշխանության ներսում կառավարման կենտրոնացվածություն,
- գ) կառավարման կենտրոնացվածության և ապակենտրոնացվածության սկզբունքների ներդաշնակ համադրում, որի արդյունքում առաջնային նշանակություն է ձեռք բերում տեղական ինքնակառավարման ինստիտուտի կատարելագործման նպատակը: Այս միտումները, բնականաբար, ևս ունեն դրսևորման որոշակի տարբերություններ, որոնք էլ կանխորոշում են համակարգերի առանձնահատկությունները [3, էջ 58]:

Միաժամանակ, բոլոր համակարգերի դեպքում պահպանվում են հետևյալ ընդհանուր հատկանիշները՝

- ա) տեղական ինքնակառավարման մարմիններն առավելապես հանդես են գալիս, որպես ներկայացուցչական մարմիններ,
- բ) տեղական նշանակության գործերով կառավարում իրականացնելիս չեն ենթարկվում պետական իշխանության մարմիններին,
- գ) լիազորությունները սահմանվում են միայն օրենքներով,
- դ) ունեն իրենց սեփականությունը և սեփականության ձևավորման ինքնուրույն աղբյուրները,



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ե) տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորումը տեղի է ունենում առանց պետական իշխանության մարմինների միջամտության [3]:

Տեղական ինքնակառավարման անգլոֆոնապոնական մոդելը ձևավորվել է դասական մունիցիպալիզմի հայրենիքը համարվող Մեծ Բրիտանիայում, որտեղ դեռևս 11-րդ դարում համայնքները ձեռք բերեցին ինքնակառավարման լայն իրավասություններ ոչ միայն պետական որոշումները և տեղերում պետական կառավարումն իրականացնելու գործընթացներում, այլև ինքնուրույն որոշումներ կայացնելու, օրենքներ ընդունելու և տեղային բյուջե ունենալու առումներով [4, c. 54.]:

Այս մոդելի հիմնական առանձնահատկությունն այն է, որ ենթադրում ու նախատեսում է տեղական ինքնակառավարման համակարգի՝ պետական կառավարումից բավականին անկախ և ինքնուրույն գործելու լայն հնարավորություններ: Նախ՝ տեղական ինքնակառավարման անգլոֆոնապոնական իրավական համակարգն իր կիրառումն է ստացել Ամերիկայի Միացյալ Նահանգներում (որպես համակարգի կիրառման դասական օրինակ), Կանադայում, Ավստրալիայում, Նոր Զելանդիայում և այլ երկրներում: Այս ձևաչափին բնորոշ է այն, որ ներկայացուցչական և գործադիր մարմինների ձևավորումն իրականացվում է բնակչության կողմից ընտրությունների միջոցով՝ բացառելով տեղերում տեղական նշանակության հարցերի լուծմանը պետական իշխանության ներկայացուցչի մասնակցությունը [5, p. 423]: Նկատենք, որ ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ կենտրոնական իշխանությունը վարչական և դատական կարգով, իրականացնում է հսկողություն՝ ֆինանսական և այլ ստուգումների կատարման միջոցով: Անգլոֆոնապոնական համակարգի համար նաև հատկանշական է ՏԻՄ-երի լիազորությունների սպառիչ ցանկի՝ բացառապես օրենքով ամրագրման պահանջի առկայությունը, դրանով ՏԻՄ-երը դիտարկվում են՝ որպես խորհրդարանի կողմից տրված լիազորությունների իրականացնող սուբյեկտ [6, c. 181]:

Անգլոֆոնապոնական մոդելում տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինները գործում են որպես պառլամենտի կողմից իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ինքնուրույն գործող կառույցներ, որոնք, փաստորեն, չունեն որևէ ուղղակի ենթակայություն պետական կառույցներին և առաջին հերթին պատասխանատու են համայնքի բնակիչների առջև: Միևնույն ժամանակ տեղական ինքնակառավարման և կենտրոնական իշխանության միջև հարաբերությունները սահմանվում են «տրված լիազորությունների շրջանակներում գործելու» սկզբունքով, այսինքն՝ տեղական ինքնակառավարման մարմինները կարող են իրականացնել միայն այնպիսի գործառույթներ, որոնք իրենց վերապահված են օրենքով, կամ որոնք դուրս են պետական իշխանության լիազորություններից: Այս ձևաչափին բնորոշ է այն, որ ներկայացուցչական և գործադիր մարմինների ձևավորումն իրականացվում է բնակչության կողմից ընտրությունների միջոցով՝ բացառելով տեղեկում տեղական նշանակության հարցերի լուծմանը պետական իշխանության ներկայացուցչի մասնակցությունը [5]:

Անգլո-սաքսոնական համակարգի համար նաև հատկանշական է ՏԻՄ-երի լիազորությունների սպառիչ ցանկի՝ բացառապես օրենքով ամրագրման պահանջի առկայությունը, դրանով ՏԻՄ-երը դիտարկվում են՝ որպես խորհրդարանի կողմից տրված լիազորությունների իրականացնող սուբյեկտ [6, c. 143]:

Ամերիկացի իրավագետ Թոմաս Դայնը, անդրադառնալով այս համակարգի բովանդակային նշանակությանը, գրել է, որ «չնայած այն հանգամանքին, որ ԱՄՆ Սահմանադրության մեջ տեղական ինքնակառավարման մասին խոսք չի գնում, այնուամենայնիվ, ամերիկյան իշխանության համակարգը դիտարկվում է դաշնային, նահանգային և տեղական իշխանությունների ամբողջություն, որտեղ նահանգային իշխանության կողմից ՏԻՄ-երին վերապահվել են այնպիսի գործառույթների իրականացում, ինչպիսիք են՝ հարկեր հավաքելը, բնակչության կյանքը կարգավորելը և այլն» [7, c. 159-179]: Այս բնորոշումից հետևում է, որ, մի կողմից, կենտրոնական և տեղական իշխանությունների հիմնական խնդիրն է հասարակության անդամներ բարեկեցության ապահովումը, իսկ մյուս կողմից, կասկածի տակ է դրվում տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը: Այս համակարգի համար նաև հատկանշական է ՏԻՄ-երի լիազորությունների սպառիչ ցանկի՝ բացա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ռապես օրենքով ամրագրման պահանջի առկայությունը, դրանով ՏԻՄ-երը դիտարկվում են՝ որպես խորհրդարանի կողմից տրված լիազորությունների իրականացնող սուբյեկտ [6]: Ուշագրավ է ԱՄՆ-ի քաղաքային ինքնակառավարման համակարգը. ԱՄՆ-ում քաղաքային ինքնակառավարման էվոլյուցիոն զարգացման արդյունքում կազմավորվել է քաղաքային կառավարման կազմակերպման երեք հիմնական ձև: «Քաղաքապետ-խորհուրդ» համակարգը գործում է ԱՄՆ-ի ինքնակառավարվող քաղաքների ավելի քան կեսում: Ընդ որում, կարելի է խոսել ինչպես «ուժեղ» քաղաքապետի, այնպես էլ «թույլ» քաղաքապետի մասին, քանի որ քաղաքապետի իրական իշխանությունը տարբեր համայնքներում ամենևին էլ նույնը չէ [8, էջ 156]: Քաղաքապետի իշխանության ծավալի, մունիցիպալ կառավարման համակարգում նրա դիրքերի վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպես նրա ընտրության ընթացակարգը, լիազորությունների ժամկետը, խորհրդի որոշման վրա արգելք դնելու իրավունքը և այլն:

ԱՄՆ-ում քաղաքային ինքնակառավարման երրորդ ձևը հանձնաժողովն է, որը բավականին հազվադեպ է կիրառվում. այն գոյություն ունի ոչ մեծ քաղաքներում: Քաղաքային կառավարումն իրականացնում է հինգ անդամից բաղկացած հանձնաժողովը, որի անդամներն ընտրվում են ընդհանուր քվեարկությամբ: Հանձնաժողովի անդամները միաժամանակ կատարում են խորհրդի և մունիցիպալ կառավարման աշխատակազմի հիմնական ստորաբաժանումների ղեկավարների գործառույթները:

Այսպիսով, կարելի է առանձնացնել անգլո-սաքսոնական մոդելի հետևյալ առանձնահատկությունները՝

- ա) տեղական կառավարման մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակներում մեծ ինքնուրույնությամբ օժտվածությունը, որոնք սակայն, լինելով ինքնավար, գտնվում են կառավարության և դատական վերահսկողության ներքո,
- բ) տեղական կառավարման մարմիններում կենտրոնից նշանակված պաշտոնյաների բացակայությունը,

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- զ) տեղական կառավարման մարմինները կարող են գործել միայն օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներում,
- դ) տեղական կառավարման մարմինները կարող են կատարել այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված են օրենքով,
- ե) տեղական կառավարման մարմինները ընտրվում են համայնքի բնակչության կողմից ընտրությունների միջոցով:

Տեղական ինքնակառավարման՝ միջազգային պրակտիկայում լայն տարածում ստացած մյուս մոդելը մայրցամաքայինն է: Այն անգլո-սաքսոնական մոդելի հիմնական դրույթներին հակադրվող մոդել է: Այս մոդելը առաջացել է Ֆրանսիայում, դրա համար այն անվանում են նաև ֆրանսիական: Համակարգի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ արմատները գալիս են դեռևս հին ժամանակներից, երբ թագավորական իշխանությանը ծառայում էին միապետի ներկայացուցիչները, ոչ թե միապետի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչը [9]: Եվ ինչպես Վ. Մակլակովն է նշում՝ «ֆրանսիական տեղական կառավարումը արևմտա-եվրոպական երկրների կառավարման համակարգի ձևավորման հիմք է եղել, որն աչքի է ընկել դաժան աստիճանակարգությամբ և կենտրոնական իշխանությանը ենթակայությամբ» [10, c. 96]:

Մասնավորապես, մայրցամաքային մոդելում շեշտադրվում է պետության և տեղական ինքնակառավարման մարմինների անքակտելի ու ամուր կապը: Այս մոդելը, որը տարածված է Եվրոպայում (Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա, Բելգիա), ինչպես նաև Լատինական Ամերիկայի, Մերձավոր Արևելքի, Աֆրիկայի մի շարք երկրներում, տեղերում իրականացնում է պետական կառավարում տեղական ինքնակառավարման զուգորդմամբ, ինչը նշանակում է, որ գործում է տեղական ինքնակառավարման դասական, բրգաձև համակարգ, որի դեպքում ներքևում, այսինքն՝ տեղերում գործող իշխանությունները զտնվում են վերադաս մարմինների անմիջական ենթակայության ներքո [11]:

Տեղական ինքնակառավարման այս համակարգին բնորոշ է կառավարման բնագավառում կենտրոնացման բարձր աստիճանի և պետության կողմից այդ մարմինների նկատմամբ խիստ հսկողական հա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

մակարգի առկայությամբ: Սակայն, դա չի խանգարում տեղական մարմինների արդյունավետ գործունեության իրականացմանը, այլ ընդհակառակը, նպաստում է պետական ռեսուրսների՝ տեղական նշանակության խնդիրների լուծման ներգրավմանը, դրանով ապահովելով պետական մեխանիզմների տարրերի հետ տեղական կառավարման ինտեգրումը, ինչը գործադիր իշխանության արդյունավետության բարձրացման հիմնական երաշխիքն է [12, c. 118-143]:

Այս մոդելի դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունը բավականին սահմանափակված է, ինչը պայմանավորված է նրանով, որ տեղերում գործում են պետական կառավարման ներկայացուցիչներ, որոնց անմիջական վերահսկողության ներքո էլ գտնվում են տեղական ինքնակառավարման մարմինները [13, c. 176.]: Համայնքներում (քաղաքներ, գյուղեր, ավաններ, գյուղական միավորումներ) գոյություն ունեն միայն ընտրովի ներկայացուցչական մարմիններ (ավագանի, խորհուրդ, ժողով և այլն) և գործադիր մարմիններ (քաղաքապետ, համայնքի ղեկավար, գյուղապետ և այլն): Ընդ որում՝ թե՛ ներկայացուցչական մարմինը, թե՛ գործադիր մարմինն ընտրվում են համայնքի բնակչության կողմից անմիջական ընտրությունների միջոցով, պետական իշխանության մարմնի կողմից այդ մարմինների ձևավորմանը որևէ մասնակցություն չի ցուցաբերվում: Չնայած որ ֆրանսիական օրենսդրությունում այդպես էլ չեն գործածվում «տեղական կառավարում» կամ «տեղական ինքնակառավարում» եզրույթները, այնուամենայնիվ, կառավարման այդ մակարդակը կոչվում է «տարածքային ապակենտրոնացում» կամ «մունիցիպալ իշխանություն»:

Ֆրանսիայի համար մշտապես հատկանշական է եղել տեղական կառավարման և ինքնակառավարման կենտրոնացվածության բարձր աստիճանը: Դա դրսևորվեց տեղական մարմինների նկատմամբ կենտրոնական իշխանության վարչական վերահսկողության համակարգի զարգացման, կենտրոնի և տեղերի փոխհարաբերությունների բյուրոկրատական ենթակարգության մեջ [14, c. 209.]: Ֆրանսիայի՝ 1982թ. իրականացված ապակենտրոնացումը (Մորուայի բարեփոխումներ) ընդլայնեց տարածքային կոլեկտիվների լիազորությունները, ապահովեց

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

նրանց ավելի մեծ ինքնուրույնությունը սեփական հարցերը լուծելիս, և միաժամանակ պահպանեց տեղերում կենտրոնական իշխանության բավականին ազդեցիկ դիրքերը: Իշխանության ապակենտրոնացված կառավարման նոր քաղաքականության իրագործման նպատակով 1983թ. ընդունվեցին կոմունանների, դեպարտամենտների, տարածաշրջանների և պետության իրավասությունների սահմանազատման մասին օրենքը և ֆինանսավորման աղբյուրների սահմանազատման մասին օրենքը [8, էջ 156]:

Այսպիսով, տեղական ինքնակառավարման ֆրանսիական մոդելի համար հատկանշական է կառավարության՝ տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վերահսկողություն իրականացնող հատուկ լիազորի առկայությունը:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում տեղական ինքնակառավարման համակարգում տեղի ունեցող լուրջ և շարունակական բարեփոխումները հանգեցրին տեղական ինքնակառավարման գործող մոդելների ու տեսական մոտեցումների մերձեցման, ինչի շնորհիվ ձևավորվեցին տեղական ինքնակառավարման խառը մոդելը և դրա տեսական հիմքը կազմող երկակիության կամ դուալիստական տեսությունը: Այս մոդելի դասական երկիր է համարվում Գերմանիան:

Պրուսական նախարար բարոն Հայնրիխ Ֆոն Շտայնի բարեփոխումները մեծ դեր խաղացին այս մոդելի զարգացման գործում: Տեղական ինքնակառավարման զարգացման նպատակով քաղաքային ներկայացուցչական մարմնի կողքին ստեղծվեց կոլեգիալ մարմին՝ մագիստրատ, որը գլխավորում էր բուրգոմիստրը՝ միաժամանակ լինելով ներկայացուցչական մարմնի նախագահ: Գերմանիայում ներկայումս տեղական ինքնակառավարումը իրականացվում է շրջաններում, քաղաքներում և համայնքներում, ընդ որում, շրջանների և քաղաքների կարգավիճակները հավասարեցված են [15, c. 232]: Գոյություն ունեն համայնքների կազմակերպման կառուցվածքի տարբեր մոդելներ՝ մագիստրական, բուրգոմիստական, հյուսիսգերմանական, հարավգերմանական [16, c. 31]:

Մագիստրական մոդելում բնակչությունն ընտրությունների միջոցով ձևավորում է տեղական ինքնակառավարման խորհուրդ, որն

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

իր կազմից ընտրում է խորհրդի նախագահ: Վերջինս նախագահում է խորհրդի նիստում, կազմում է օրակարգերը: Միաժամանակ, խորհուրդը քվեարկության միջոցով ձևավորում է կոլեգիալ գործադիր մարմին՝ մագիստրատ, որը չի կարող լինել խորհրդի կազմից: Այն ներկայացնում է համայնքի շահերը և ղեկավարում համայնքի վարչակազմը: Խորհուրդը մագիստրատի ներկայացմամբ նշանակում է բուրգոմիստր, որը ղեկավարում է մագիստրատը: Հյուսիսգերմանական մոդելը նման է անգլոսաքսոնական մոդելին և բաղկացած է խորհուրդից ու ղեկավարից: Հասարակության կողմից ընտրված ներկայացուցչական մարմինը ձևավորում է գործադիր կոմիտե, որը տեղական վարչակազմ չէ, այլ միայն պատրաստում է ներկայացուցչական մարմնի որոշումները:

Հարավգերմանական մոդելում ներկայացուցչական իշխանության մարմնի հետ մեկտեղ, համայնքի գլխավոր մարմին է դիտվում նաև օբերբուրգոմիստրը, որն ընտրվում է քաղաքացիների կողմից: Նա պատասխանատու է տեղական ինքնակառավարման ընթացիկ հարցերի լուծման համար և նախագահում է համայնքի ներկայացուցչական մարմնի նիստում: Կենտրոնական իշխանության միջամտություն կարող է լինել, եթե այն պայմանավորված է վերապահված լիազորությունների չկատարմամբ [17, c.26]: Գերմանիայում տեղական ինքնակառավարման մարմինները իրավունք ունեն բողոքարկել իշխանության ընդունած ակտերը հանրաքվեով և դատական կարգով:

Հատկանշական է այն, որ Գերմանիայում չկա տեղական ինքնակառավարման մասին օրենք, այն միայն ամրագրված է Սահմանադրության մեջ: Գերմանիայի 1949թ. Սահմանադրության 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքը օրենքի շրջանակներում սեփական պատասխանատվությամբ իրականացնում է համայնքային գործերը:

Ըստ Ռ. Շտրեբրի՝ համայնքային հողերի կառավարման օրենսդրական թույլ կարգավորումն էլ հանդիսանում է գերմանական մոդելի թերությունը [18, c. 26]:

Տեղական ինքնակառավարման մեկ այլ համակարգի՝ իբերական անվանումը ծագել է իսպանական «Iberia» բառից և նշանակում է՝ բնակիչ[19]: Այս համակարգով իրականացվում է տեղական ինքնակառավարում՝ Բրազիլիայում, Լատինական Ամերիկայի իսպանալեզու պե-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

տություններում, ընդ որում, ունենալով տարբեր դրսևորումներ այս կամ այն երկրում: Այսպես, օրինակ՝ եթե երկրների մի մասում (Մեքսիկա, Նիկարագուա, Արգենտինա, Կոլումբիա և այլն) տեղական ինքնակառավարման ներկայացուցչական և գործադիր մարմիններն ընտրվում են բնակչության կողմից, ապա առանձին երկրներում (Պանամա, Պերու և այլն) նախ, ընտրում են ներկայացուցչական մարմին, այնուհետև՝ վերջինս ընտրում է գործադիր մարմնի ղեկավարին [20, c. 223-225]: Միննույն ժամանակ, գործադիր մարմնի ղեկավարը հանդիսանալով ներկայացուցչական մարմնի ղեկավար, այդ պաշտոնում հաստատվում է երկրի նախագահի կամ արտաքին գործերի նախարարի կողմից՝ արդեն որպես այդ համայնքում պետական իշխանության ներկայացուցիչ: Նկատենք, որ գործադիր մարմնի ղեկավարը ներկայացուցչական մարմնի գործունեության նկատմամբ իրականացնում է հսկողություն և օժտված է լայն լիազորություններով:

Տեղական կառավարման խորհրդային համակարգն սկզբունքորեն տարբերվում է վերը հիշատակված համակարգերից և բնորոշ է հետխորհրդային ու հետսոցիալիստական երկրներին: Ներկայումս այս համակարգը՝ իր որոշակի փոխակերպված տարրերով, լայն կիրառություն ունի Չինաստանում, Կուբայում և Հյուսիսային Կորեայում: Այս համակարգի տրամաբանությունից բխում է, որ տեղերում ներկայացուցչական մարմինը՝ խորհուրդը հանդիսանում է պետական իշխանության մարմին, որն իր հերթին ընտրում է պետական իշխանության մեկ այլ մարմին՝ գործադիր իշխանությանը [20, c. 159-169]: Այս համակարգում առանձին պետական իշխանության ներկայացուցիչներ չեն նշանակվում, քանի որ ՏԻՄ-երն արդեն իսկ հանդիսանում են պետական մարմիններ: Տեղական ինքնակառավարման էության բացահայտման հաջորդ կարևոր տարրերից է վարչատարածքային բաժանման և այդ համակարգի ներկայացուցչական ու գործադիր մարմինների ձևավորման առանձնահատկությունների ու գործունեության հարաբերակցության սահմանումը [20]: Այս համակարգում առանձին պետական իշխանության ներկայացուցիչներ չեն նշանակվում, քանի որ ՏԻՄ-երն արդեն իսկ հանդիսանում են պետական մարմիններ:



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տեղական ինքնակառավարման համակարգերի ուսումնասիրությունից ելնելով՝ նկատենք, որ տեղական ինքնակառավարման տարբեր իրավական համակարգերի ձևավորումը տարբեր երկրներում կախված է այդ երկրի պատմական, աշխարհաքաղաքական մի շարք հանգամանքներից, քաղաքական ռեժիմից և իրավական համակարգից: Եվ որպես կանոն, ՏԻՄ-երը ձևավորվում են երկրի վարչատարածքային բաժանմանը համապատասխան, ինչը միատարր պետություններում պետական իշխանության բացառիկ իրավասությունն է, իսկ դաշնադիր պետություններում այդ իրավասությունը վերապահված է դաշնության կազմի մեջ մտնող սուբյեկտներին:

Տեղական ինքնակառավարման համակարգերի բազմազանությունից նկատեցինք, որ Եվրոպայում չկա տեղական ինքնակառավարման մեկ միասնական մոդել, քանի որ այն պայմանավորված է յուրաքանչյուր երկրի պատմական, տնտեսական և քաղաքական զարգացմամբ, ինչպես նաև սովորութային, ժողովրդագրական, աշխարհագրական և այլ առանձնահատկություններով:

Ավա՛ղ, Եվրոպան առ այսօր չի ստեղծել մեկ միասնական կառավարման համակարգ, որը իր տեսակով ընդունելի կլինի շատ երկրների համար: Սակայն մեկ կարևոր քայլ արված է. տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը պաշտպանելու, ամրապնդելու և որպես կառավարման ձևաչափ ճանաչելու և երաշխավորելու նպատակով, միջազգային կարևորագույն կառույց հանդիսացող Եվրոպայի խորհուրդը իր ծրագրերում հատուկ տեղ նախատեսեց տեղական ինքնակառավարման համակարգի միասնական սկզբունքներին: Արդյունքում այս կազմակերպության Խորհրդարանական վեհաժողովը 1968թ. ընդունեց «Տեղական ինքնակառավարման սկզբունքների մասին» հռչակագիրը, որի հիմքի վրա 1985թ. ընդունվեց Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիան (ի դեպ, Խարտիան իր բովանդակությամբ առաջին միջազգային փաստաթուղթն է տեղական ինքնակառավարման մասին): Այս փաստաթուղթը այսօր հանդիսանում է Եվրոպայի խորհրդին անդամակցելու նախապայման և Խարտիայի 2009թ. Ուտրեխտի լրացուցիչ արձանագրությամբ ևս Խորհրդի Տեղական և տարածաշրջանային կոմիտեն անդամ-պետությունների հետ ամենամ-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

յա հանդիպումների շրջանակներում (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը) մշակում են գործող տեղական ինքնակառավարման համակարգի արդիականացման և տեղական ժողովրդավարության ամրապնդմանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ:

Ինչպես Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայի 3-րդ հոդվածում է նշված՝ «Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը և կարողությունն է օրենքի շրջանակներում կանոնակարգելու և կառավարելու պետական գործերի զգալի մասը՝ սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերից ելնելով»: Խարտիայի 3-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներում ասվում է, որ «այդ իրավունքն իրականացվում է ազատ, գաղտնի, հավասար, ուղղակի և ընդհանուր քվեարկության միջոցով ընտրված անդամներից բաղկացած խորհուրդների կամ ժողովների կողմից», ինչպես նաև անմիջական ժողովրդավարության ձևերի միջոցով: Իհարկե, Խարտիայի դրույթները անդամ-պետությունների համար հենքային նշանակություն ունեն օրենսդրական կարգավորումների գործընթացում:

Այսպես, տեղական ինքնակառավարման մոդելների, միջազգային փորձի և դրանց հիմքում ընկած տեսական մոտեցումների ուսումնասիրությունը թույլ է տալիս դատողություններ անել Հայաստանում գործող տեղական ինքնակառավարման մոդելի և վերջինիս հիմնական առանձնահատկությունների ու բնութագրիչների մասին: Վերլուծելով տեղական ինքնակառավարման հայաստանյան համակարգի հիմնական բնութագրիչները, կառուցվածքային և գործառութային առանձնահատկությունները՝ ՀՀ-ում գործող տեղական ինքնակառավարման համակարգը իր բնույթով հարում է նաև խառը մոդելին [21, էջ 19], որովհետև այդ կախվածությունը շատ ավելի խորն է ու բազմաբնույթ և առաջին հերթին դրսևորվում է ֆինանսական կախվածության տեսքով: Ինչպես և խառը մոդելը որդեգրած այլ երկրներում, Հայաստանում ևս տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն օրենքով սահմանված սեփական և պատվիրակված լիազորություններ: Օրենսդրական մակարդակում այդ ընդհանրությունն ակնհայտ է և դրսևորվում է սեփական ու պետության կողմից պատվիրակված լիազորությունների

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ինստիտուտի միջոցով: Ընդ որում, եթե սեփական լիազորությունների իրազորման ընթացքում ՏԻՄ-երը գործում են լիովին անկախ և ինքնուրույն՝ պետական կառավարման մարմիններից աջակցություն ստանալով հիմնականում օրենսդրական կարգավորումների տեսքով, ապա պատվիրակված լիազորությունների առումով տեղական ինքնակառավարման մարմինները գործում են որպես պետության ներկայացուցիչներ տեղերում և իրազորում են պետության գործառույթները վարչատարածքային տվյալ միավորման շրջանակում:

Անշուշտ, ամեն մի երկրի տեղական ինքնակառավարման համակարգը բնութագրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդ համակարգի յուրահատկությունը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զուգակցումն ու փոխգործակցությունը մեծապես պայմանավորված է այս կամ այն երկրի պատմական, աշխարհագրական, ժողովրդավարական առանձնահատկություններով: Եվ այդ բազմազան համակարգերի նմանություններն ու տարբերությունները գնահատելու համար հարկ է դիտարկել դրանք ըստ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական կարգավիճակի, կազմավորման ձևի, կարգավորմանը վերապահված խնդիրների շրջանակի և նրանց նկատմամբ կենտրոնի կողմից իրականացվող վերահսկողության միջոցների [21, էջ 18]:

Այսպիսով, տեղական ինքնակառավարման իրավական համակարգերի և դրանց մարմինների գործունեության համեմատական-իրավական հետազոտության փորձը ցույց է տալիս, որ՝ ա) գործնականում ժողովրդավարական բոլոր երկրներում պետական կառավարումն անխուսափելիորեն զուգակցվում է տեղական ինքնակառավարման հետ, բ) տեղական և պետական իշխանություններն ունեն ընդհանրական հատկանիշներ, այդ թվում՝ միևնույն սոցիալական խնդիրների առկայությամբ և դրանց լուծումների առաջնահերթությամբ, գ) տեղական ինքնակառավարումը և պետական կառավարումն իրականացվում են վարչատարածքային բաժանման հատկանիշի հիման վրա, դ) միայն տեղական ինքնակառավարման և պետական մարմինները կարող են սահմանել հարկեր, ընդունել իրավական ակտեր ու կիրառել պետական հարկադրանքի միջոցներ, ե) բոլոր համակարգերում ՏԻՄ-երի լիազոր-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

րությունների իրականացման նկատմամբ պետական վերահսկողությունը կիրառելի է և այլն:

Այնուամենայնիվ, տեղական ինքնակառավարման վերաբերյալ տարբեր համակարգերի համալիր վերլուծությունը փաստում է այդ ինստիտուտի՝ որպես պետական-իրավական կարևորագույն տարրի էության ու նշանակության բացահայտման, ինչպես նաև այդ համակարգերի զարգացման միտումների մասին: Վերջապես, տեղական ինքնակառավարման տեսությունում և պրակտիկայում ակնհայտ է դառնում, որ տեղական ինքնակառավարման ժամանակակից համակարգերը մերժում են տեղական ինքնակառավարումը՝ պետությանը հակադրելու և լիովին անկախ գործելու գաղափարից:

Այսպիսով, տեղական ինքնակառավարման համակարգերը, արձանագրելով որոշակի առանձնահատկություններ, այնուամենայնիվ, հակված են հնարավորինս համընդանուր հատկանիշներ ձեռք բերելուն, ինչը հնարավորություն կտա մոտ ապագայում ձևավորելու տեղական ինքնակառավարման առավել միասնական չափանիշներ:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Миналёва Н. В., Конституционно-правовые модели местного управления и местного самоуправления. Диссертация,. Канд. Юрид. Наук.-М., 2005
2. Кутафин О. Е., Фадеев В. И., Муниципальное право Российской Федерации.- М., 2005, 325 с.
3. ՀՀ մունիցիպալ իրավունք, ընդհ. խմբ. Գ.Դանիելյանի, ուսումնական ձեռնարկ, Երևանի պետ. համալս. – ԵՊՀ. հրատ., 2015, 387 էջ:
4. Саначев И. Д., Сравнительный анализ моделей России, США и Западной Европы. Владивосток, Изд-во ВГУУЭС, 2005, №2
5. Davies K., Local government law. – L.: Butterworths, 1983, 423 p.
6. Болотенко Ю.Н., Правовые основы организации и деятельности органов местного самоуправления на районном уровне: Дис.,канд. юрид. Наук.-М., 1998. 181 с.

7. Козлова Н. Ю., Англия: институты самоуправления в условиях конституционной монархии, Институты самоуправления: историко-правовое исследование. – М., 2008, 398 с.
8. Խալիփյան Բ. Ե., Հանրային կառավարման համակարգի արտասահմանյան երկրներում, Եր., Տնտեսագետ, Ոսումնական ձեռնարկ, 2012, 68 էջ:
9. Конати Э., Реформа местного самоуправления в Великобритании и управление на уровне местных сообществ (Neighbourhood Management) / Эльза Конати // Практика муниципального управления. – 2011.–№12
10. Маклаков В. В., Реформы местного управления во Французской Пятой республике, Реформы местного управления в странах Западной Европы. М.: ИНИОН, 1993. с. 96.
11. Шустов В. Г., Основные модели местного самоуправления, Вып. 2, 2011, № 5
12. Транин А. А., Местные органы Франции, М., 2006, 403 с.
13. Кузнецов А., Конституционно-правовые аспекты развития местного самоуправления в Российской Федерации в свете Европейской Хартии местного самоуправления, М.: 2005, 314 с.
14. Евдокимов В. Б., Старцев Я. Ю. Местные органы власти зарубежных стран: правовые аспекты. – М.: Спарк, 2001, 251 с.
15. Тимофеев Н. С. “Комунальное право ФРГ, М., МГУ, 1982, 137 с.
16. Переходов В. А., Зарубежные модели взаимодействия органов государственной власти и местного самоуправления. сравнительный анализ, научная статья, 2012.
17. Штобер Р., Практические требования и опасности местного самоуправления в Германии, Местное самоуправление: теория и практика: сб. М., 1997, № 8
18. Чиркин В. Е., Конституционное право зарубежных стран, изд. Юрист, М., 2007, 784 с.
19. [https://ru.wikipedia.org/wiki/%D0%94%D0%BE%D0%B8%D1%81%D1%82%D0%BE%D1%80%D0%B8%D1%87%D0%B5%D1%81%D0%BA%D0%B0%D1%8F\\_%D0%98%D0%B1%D0%B5%D1%80%D0%B8%D1%8F](https://ru.wikipedia.org/wiki/%D0%94%D0%BE%D0%B8%D1%81%D1%82%D0%BE%D1%80%D0%B8%D1%87%D0%B5%D1%81%D0%BA%D0%B0%D1%8F_%D0%98%D0%B1%D0%B5%D1%80%D0%B8%D1%8F)

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

20. Հարությունյան Ա. Շ., ՀՀ մունիցիպալ իրավունք, 2-րդ հրատ., լրաց. և փոփոխ., Երևան, Պետական ծառայություն, Երևան, 2004. 359 էջ:
21. Օրդյան Է. Հ., Տեղական ինքնակառավարման հիմունքներ, Երևան, Պետական ծառայություն 2000, էջ 420:

### МОДЕЛИ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ: СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ

#### Արպине Бишарян

ЕУ, кафедра Правоведения, соискатель

Не являясь элементом системы государственного управления, местное самоуправление в разные периоды исторического развития проявлялось по-разному с точки зрения организации и реализации функций. Исторически сложившиеся системы местного самоуправления до сих пор актуальны для организации местного самоуправления.

Статья посвящена правовым системам местного самоуправления и их особенностям.

**Ключевые слова:** Местное самоуправление, правовая система, менеджер, городской совет, мэр.

### LOCAL GOVERNANCE MODELS; COMPARATIVE-LEGAL ANALYSIS

#### Arpine Bisharyan

EU, Chair of Jurisprudence, Researcher

Although the local self-government is not considered to be an element of the public administration system, it has manifested itself in different ways in terms of organization and implementation of functions. Historically established systems of local self-government are still relevant for the organization of local self-government.

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

The article is devoted to the legal systems of local self-government and their features.

**Keywords:** local government, legal system, manager, city council, mayor.

*Տրվել է տպագրության՝ 14.09.2020թ.  
Գրախոսվել է՝ 26.10.2020թ.*

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄՈՂԵԼԸ

**Լիլիթ Սուքիասյան**

ԵՀ, Իրավագիտության ամբիոն  
lilitsukiasyan@yahoo.com, +374 94 900000

Հոդվածում անդրադարձ է կատարվում ընտրական իրավունքի սահմանափակման գերմանական մոդելին՝ վեր հանելով դրա պարամիտրական հիմքերն ու բարոյաէթիկական բնույթը: Մանրամասնվում են ընտրական իրավունքի ընդհանրության և հավասարության սկզբունքների և դրա սահմանափակման սահմանադրականության հարցերը՝ քննարկելով ԳՖՀ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումները: Անդրադարձ է կատարվում նաև ՄԻԵԴ ընտրական իրավունքի սահմանափակմանը վերաբերող անկյունաքարային գործի և ԳՖՀ իրավակարգավորումների համապատասխանությանը: Աշխատանքում ԳՖՀ ընտրական իրավունքի սահմանափակման հարցը ներկայացվում է գերմանական քրեական իրավունքում տեղ գտած պարզի լրացուցիչ հետևանքների նպատակայնության և համաչափության համատեքստում:

**Հիմնաբառեր.** ընտրական իրավունք, սահմանափակում, զրկում, Գերմանիա, ԳՖՀ, հիմքեր, սահմանադրական դատարան

Գերմանիայում ընտրական իրավունքի սահմանափակումը տեղի ունի միայն առանձին հանցագործությունների համար, որ ամրագրված են Քրեական օրենսգրքում, և դատարանը դրա մասին հայտնում է վճիռը կարդալիս: Այսինքն՝ ընտրական իրավունքի սահմանափակումը որոշակի ժամկետով պատժի յուրօրինակ տեսակ է, որ գերմանական քրեական իրավունքում հանդիպում է որպես լրացուցիչ հետևանք: Ընտրական իրավունքի սահմանափակման հիմնավորումները հասկանալու համար պետք է դառնալ դրա ակունքներին, որ ձգվում են մինչև անտիկ շրջան:



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ինչպես եվրոպական մայրցամաքային մյուս երկրներում՝ այնպես էլ Գերմանիայում, դարեր շարունակ ընդունված էր կիրառել պատժի ուղեկցող հետևանքների համախումբը: Դրանք, որպես կանոն, վերաբերում էին անձի պատվին (*Ehrenstrafen*), և պատվի կորուստը նշանակում էր քաղաքացու կարգավիճակից բխող իրավունքների կորուստ: Իհարկե այս մոտեցումը հակասում էր հավասարության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներին, քանզի իրավունքները չէին դիտվում որպես ի բնե մարդուն պատկանող, այլ կախվածության մեջ էին դրվում նրա քաղաքացիություն ունենալու հանգամանքից: Տևտոններ կոչվող գերմանական ցեղերը զարգացրել էին անհատական պատվի և պատասխանատվության ինստիտուտը, ինչը նշանակում էր, որ պատվի կորուստը թողնված էր ոչ թե պետության հայեցողությանը, այլ ուղղակիորեն շաղկապված էր անձի կատարած հակահրավական արարքին: Անհատական պատվի և պատասխանատվության հիմքի վրա էլ ծնունդ առավ և զարգացավ գերմանական *Ehrenstrafen*-ը [1, p. 757]: Չնայած նրան, որ բազմաթիվ իրավագետ գիտնականներ քննադատություններ էին հնչեցնում «պատվի կորստի» ինստիտուտի առնչությամբ՝ Գերմանիայում այն պահպանվեց մինչև 1960-ականներ:

Գերմանական կայսրության հիմնումից ի վեր պատժի ուղեկցող հետևանքները կոչվում էին *Nebenstrafen*, և կյանքի էին կոչվում ոչ թե կայացված դատավճռի հիմքով, այլ հենց կատարված հանցագործության, ինչն ինքնաբերաբար հանգեցնում էր պատվի կորստի: Հաճախ դա հետևանք էր *Zuchthaus*-ում (հատուկ խստության փակ տիպի ուղղիչ հիմնարկ) ազատագրկման դատապարտման, ինչը բերում էր քաղաքացիական և քաղաքական իրավունքների ավտոմատ դադարեցման:

1931թ. Գերմանիայի օրենսդիր մարմինը քաղաքացիական իրավունքների ցմահ սահմանափակման վերացմանն ուղղված օրենսդրական նախաձեռնությամբ հանդես եկավ, ըստ որի իրավունքների սահմանափակման տևողությունը պետք է որոշվեր ըստ հանցանք կատարած անձի՝ այդ իրավունքը չարաշահելու հավանականության: Սրանով օրենսդիր մարմինը ի ցույց էր դնում իր հավատն առ այն, որ հանցանք կատարած անձը կարող է փոխվել և վերադառնալ լիարժեք կյանքի: Սակայն այս օրենսդրական նախաձեռնությունը, որ կարող էր տրա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

մագծորեն փոխել իրավունքների, այդ թվում ընտրական իրավունքի սահմանափակման ընկալումը, չընդունվեց:

Այնուամենայնիվ, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընտրական իրավունքի սահմանափակման հարցը թողնվեց դատարանների հայեցողությանը, նույնիսկ այն դեպքերում, երբ անձը դատապարտվում էր ազատազրկման Zuchthaus-ում: Միայն սուտ վկայության հանցակազմի դեպքում էր ավտոմատ կերպով վրա հասնում ընտրական իրավունքի սահմանափակումը: Մյուս դեպքերում ընտրական իրավունքը կարող էր սահմանափակվել միայն որոշակի ժամանակահատվածով՝ 2-10 տարի ժամկետով Zuchthaus-ում և 1-5տարի ժամկետով այլ քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման դատապարտվելիս [2, p.36]: Բանն այն է, որ 1960ականներից սկսած այս հավելյալ «պատիժը» սկսեց բազում հարցեր ծնել և արժանանալ բազմակողմանի քննադատության նաև այլ երկրների կողմից: 1969թ. փոփոխությունների ենթարկվեց Գերմանիայի Քրեական օրենսգիրքը, ինչի արդյունքում վերանայվեցին նաև պատժի հետ վրա հասնող ուղեկցող հետևանքները: Վերացվեցին նաև Zuchthaus-ի և այլ տիպի քրեակատարողական հիմնարկների տարբերությունները, քանի որ պատժի կրման պայմանների դաժանությունն ու իրավունքների սահմանափակումները խոչընդոտում էին հանցանք կատարած անձի հետագա ինտեգրմանն ու վերականգնմանը՝ փոխարենը գործնականում ցույց չտալով ոչ մի տեսանելի առավելություն [3, 83-87]: Սակայն այս փոփոխությունները նույնպես ընտրական իրավունքի սահմանափակման հարցը թողեցին դատարանների հայեցողության տիրույթում: Պետք է այնուամենայնիվ նշել, որ փոփոխություններ առաջարկող երկու խմբերից մեկը անհրաժեշտ էր համարում ընտրական իրավունքի սահմանափակման վերացումը, ինչը հետաձգվեց այն պատճառաբանությամբ, որ մոտ 150 ֆեդերալ և տեղական օրենքներ պետք է փոխվեն, ինչն անհնար էր սովյալ օրենսդրական տարվա ընթացքում [1, p. 759]: Այդպես մինչ օրս ընտրական իրավունքի սահմանափակման հարցը ամեն առանձին դեպքում որոշվում է դատական ակտով: Բացի այդ 1969թ փոփոխությունները անցյալում թողեցին Zuchthaus-ում ազատազրկման դատապարտված անձանց համար ավտոմատ կերպով

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

վրա հասնող «ուղեկցող հետևանքները», որոնց թվում էր նաև ընտրական իրավունքի սահմանափակումը:

Այժմ գործնականում չկան ընտրական իրավունքի սահմանափակմանը հակադրվող հասարակական կամ քաղաքական ճնշումներ: Ժողովրդախիշխանության իրացման ամենակարևոր գործիքի՝ ընտրական իրավունքի սահմանափակման հարցը կարծես դուրս է մնացել նաև Գերմանիայի իրավաբան-գիտնականների ուսումնասիրությունների տիրույթից: Այս թեմայով գրեթե չկան գիտական աշխատություններ: Ենթադրում ենք, որ պատճառը այս լրացուցիչ պատժի խիստ հազվադեպ կիրառությունն է (տարեկան 2-3 վճիռ): Թվում է, թե ընտրական իրավունքի սահմանափակման գերմանական մոդելը հավանության է արժանանում նաև միջազգային իրավաբանական գրականության մեջ:

Ընտրական իրավունքի սահմանափակումը կարգավորվում է Գերմանիայի Քրեական օերնսգրքի 45րդ հոդվածով, որը վերաբերում է դատարանի որոշմամբ ինչպես ակտիվ և պասիվ ընտրական իրավունքի սահմանափակմանը 2-5տարի ժամկետով, այնպես էլ որոշակի ժամկետով հանրային պաշտոններ զբաղեցնելու արգելքին: Հատկանշական է, որ ցանկացած անձ, որ դատապարտվում է մեկ տարուց ավելի ժամկետով, ավտոմատ կերպով կորցնում է ընտրվելու իրավունքը հինգ տարի ժամկետով: Այս իրավունքի սահմանափակման հարցը առաջ է գալիս պետության սահմանադրական կարգին սպառնացող հանցագործություններ կատարելու դեպքում, ինչպես օրինակ պատերազմ և թշնամանք հրահրելը, ապստամբությունը, ընտրական հանցագործությունները, այդ թվում նաև ընտրակաշառք բաժանելը, արգելված քաղաքական կազմակերպությունների խորհրդանիշներ օգտագործելը և այլն: Ի դեպ, սա վերաբերում է նաև հանցափորձին և նախապատրաստությանը: Գերմանական օրենսդրությունը դատարանին իրավասություն է տալիս նաև վերանայել ակտիվ ընտրական իրավունքի սահմանափակման հարցը, եթե հանցանք կատարած անձը կրել է նախատեսված պատժի կեսը, և եթե այդ իրավունքի սահմանափակման վերացումը կնպաստի անձի դրական վարքագծի դրսևորմանն ու հետագայում կիեշտացնի նրա ինտեգրումը հասարակությանը:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Օրենսդրական կարգավորման տեսանկյունից բաց է մնում հանցանք կատարած անչափահասների և 18-21 [4, հոդված 38, 2րդ մաս] տարեկան անձանց հարցը, քանի որ նրանք կարող են լինել այս պատժի կիրառման սուբյեկտներ, բայց փաստացի չեն հասել ընտրական իրավունքի տարիքի (18 տարեկան ակտիվ, 21՝ պասիվ ընտրական իրավունքի համար ֆեդերացիայի որոշ երկրամասերում):

Ընտրական իրավունքի սահմանափակումը որպես լրացուցիչ պատժի տեսակ իրավաբան-գիտնականների կողմից ենթարկվում է բազմակողմանի քննադատության: Նրանց մի մասը գտնում է, որ ընտրական իրավունքի սահմանափակումը հակասում է երկրի սահմանադրությամբ պաշտպանվող ֆունդամենտալ արժեքներին, մասնավորապես ընտրական իրավունքի ընդհանրության և հավասարության սկզբունքներին: ԳՖՀ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով ընտրական իրավունքի սահմանափակման և այդ իրավունքի ընդհանրության և հավասարության սկզբունքների միջև խզմանը, սահմանում է, որ յուրաքանչյուր քաղաքացի պետք է հնարավորություն ունենա իրացնելու իշխանության ձևավորմանը մասնակցելու իր իրավունքը առավելագույն հավասար հիմունքներով: Այս արդյունքին հասնելու համար պետությունը նեգատիվ գործառույթ է իրականացնում՝ արգելելով քաղաքացիների ընտրական իրավունքի սահմանափակումն **սուսնց հիմքի** [5], ինչպես օրինակ որոշակի խումբ անձանց ընտրական իրավունքի սահմանափակումը քաղաքական, տնտեսական կամ սոցիալական պատճառներով [6]: Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանը մեկ այլ գործի շրջանակներում սահմանում է, որ ընդհանուր ընտրական իրավունքը չի նշանակում քաղաքացիների տարբերակման բացարձակ արգելք, և որ ընտրական իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է հիմնավորված լինի Սահմանադրությամբ և համեմատելի ու համարժեք ընտրական իրավունքի ընդհանրության սկզբունքին [7]: ԳՖՀ Սահմանադրական դատարանը ժողովրդավարական ընտրական գործընթացը և դրա արդյունքում ձևավորվող իշխանության մարմինների հետ քաղաքացիների կապը դիտում է որպես **հաղորդակցություն**, և ընդունելի է համարում օրենսդրի այն մոտեցումը, ըստ որի որոշակի հակաիրավական արարք կատարած անձինք կարող

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

են չհամապատասխանել պետական մարմինների և քաղաքացիների միջև առկա հաղորդակցությանը [8] :

Հետաքրքրական է այս առնչությամբ ՄԻԵԴ-ի դիրքորոշումը, որն արտահայտվել է ընտրական իրավունքի սահմանափակման նպատակայնության տեսանկյունից անկյունաքարային համարվող Հրսթնն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործում: Բանն այն է, որ Մեծ Բրիտանիան սահմանափակում է ազատագրկման դատապարտված բոլոր անձանց ընտրական իրավունքը: Երկրի կառավարությունը գտնում է, որ հանցավոր արարք գործելով և հակասոցիալական վարքագիծ դրսևորելով, անձը գրկվում է պետական կառավարման գործընթացին մասնակցելու իրավունքից պատժի կրման ժամանակահատվածում: Այս մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ ընտրական իրավունքը բացարձակ իրավունք չէ, և որ դրա սահմանափակումը համաչափ է հետապնդած նպատակին. այն է՝ հանցավոր արարքը պատժելը, սոցիալական պատասխանատվության մակարդակը բարձրացնելն ու օրենքի հանդեպ հարգանքի ձևավորումը [9, p. 445]: Այս դիրքորոշման հակընդդեմ փաստարկները Հրսթնն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործում ընտրական իրավունքի սահմանափակման և հանցագործության կանխման կամ օրենքի գերակայության հանդեպ հարգանքի խրախուսման միջև կապը հարցականի տակ են դնում [10, para 45]: Գործում վեր է հանվում կապը այս իրավունքի սահմանափակման և ազատագրկման ժամանակահատվածի ընթացքում անցկացվող ընտրությունների առկայության միջև: Առանց տարբերակման բոլոր հանցանք կատարած և պատիժը կրող անձանց ընտրական իրավունքի սահմանափակման հիմնավորումն այսպիսով մնում է բարոյական դաշտում՝ հանգելով նրան, որ այդ քաղաքացիներն արժանի չեն ընտրություններին մասնակցելու, ինչը դարերի խորքից արձագանքող «քաղաքացիական մահվան» գաղափարի ուղղակի շարունակությունն է: Արդեն ՄԻԵԴ Մեծ պալատի կողմից 2005թ. քննված այս գործում ՄԲ կառավարությունը պնդում էր, որ ընտրական իրավունքի սահմանափակումը համաչափ է պատժի հետապնդած նպատակներին, սակայն ՄԻԵԴ-ը որոշեց, որ այդպիսի բացարձակ սահմանափակմամբ խախտվում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայի» 1-ին արձանագրության

3-րդ հոդվածը, մասնավորապես՝ «*ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս*», ինչն ուղղակիորեն վերաբերում է ընտրական իրավունքի իրացմանը:

ԳՖՀ նորմատիվ իրավական ակտերը, մասնավորապես Քրեական օրենսգրքի 1969թ. փոփոխություններից հետո, առանց տարբերակման ընտրական իրավունքի սահմանափակման խնդիրը լուծել են: Վերը բերված ՄԻԵԴ գործի եզրակացության մասով էլ Գերմանական մոդելը տեղավորվում է «ազատագրված դատապարտված անձանց ընտրական իրավունքի իրացման թույլատրելի սահմանափակումների սահմաններում» [10, para 8], քանի որ ընտրական իրավունքի սահմանափակումը վրա է հասնում որոշակի ժամկետով և միայն հանցագործությունների նեղ շրջանակի համար, որ հիմնականում առնչվում են պետության սահմանադրական կարգի և ընտրական գործընթացի օրինականության դեմ ուղղված հակաիրավական արարքներին: Բացի այդ, ընտրական իրավունքի սահմանափակումը կյանքի է կոչվում ամեն առանձին դեպքում դատարանի վճռով:

Գերմանական քրեական իրավունքում, ՀՀ նմանությամբ, հանդիպում են պատժի երկու համախումբ՝ առաջնային/հիմնական և լրացուցիչ հետևանքներ<sup>1</sup>: Ընտրական իրավունքի սահմանափակումն ու որոշակի ժամկետով հանրային ծառայության անցնելու արգելքը հանդես են գալիս որպես լրացուցիչ պատժ/հետևանք (Nebenfolge): Եվ դատարանի վրա է դրված ամեն առանձին դեպքի համար այս լրացուցիչ պատժների կիրառությունը՝ կախված կատարված հակաիրավական արարքի և պատժի հետապնդած նպատակի համաչափությունից: Խնդիրն այն է, որ հիմնական պատժի տեսակներն արդեն ուղղված են հակաիրավական արարքները կանխարգելելու նպատակին, և բաց է մնում պատասխանատվության լրացուցիչ տեսակի՝ այս դեպքում ընտրական իրավունքի սահմանափակման նպատակայնության հարցը: Որոշ իրավաբան-գիտնականներ հարցը դիտարկում են հանրության՝ օրենքի գերակայության հանդեպ տածած վստահության ամրացման համատեքստում, ուրիշները ընտրական իրավունքի սահմանափակու-

<sup>1</sup> ԳՖՀ Քրեական օրենսգրքում հանդիպում է որպես լրացուցիչ հետևանք. Հոդ. 45

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

մը ներկայացնում են որպես կատարված հակաիրավական արարքի գուտ խորհրդանշական հետևանք, որ վրա է հասնում ազատագրկման դատապարտված անձի կողմից «հասարակական դաշինքը» խախտելու համար: Այսինքն ընտրական իրավունքի սահմանափակումը դիտարկվում է ոչ թե որպես պատիժ, որ պետք է համաչափ լինի հետապնդած նպատակին, այլ որպես լրացուցիչ հետևանք (պատահական չէ ԳՖՀ Քր. Օր.-ում հենց «հետևանք» տերմինի գործածությունը), որ կոչված է ապահովելու «հասարակական կյանքի մաքրությունը», ինչին կարելի է հասնել որոշակի հանցանք կատարած անձանց իշխանության ձևավորման գործում ընտրության հնարավորությունից որոշակի ժամկետով զրկելով: Ավելի շատ բարոյական և էթիկական հարթությունում գտնվող այսօրինակ հիմնավորումը շատ նման է «քվեատուփը մաքրագործելու» [11] ամերիկյան մոտեցմանը: Սակայն Ընտրական իրավունքի սահմանափակման այս հիմնավորումը նույնպես բազում հարցեր է ծնում: Բանն այն է, որ գերմանական քրեական իրավունքում լրացուցիչ պատիժ/հետևանք (Nebenfolge)-ից զատ հանդիպում են նաև հասարակական անվտանգության ապահովման միջոցները (Massregel), որ նախատեսում են անհատական իրավունքների սահմանափակում: Այնինչ ընտրական իրավունքի սահմանափակումը ԳՖՀ Քրեական օրենսգրքում իր տեքստային տեղակայմամբ գտնվում է պատժի տեսակների մեջ: Դրանից բացի՝ այս իրավունքի սահմանափակումը որևէ էական կանխարգելիչ ազդեցություն չի կարող ունենալ հասարակության անվտանգությանը սպառնացող հակաիրավական արարքների կանխման տեսանկյունից:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հանգում ենք նրան, որ ընտրական իրավունքի սահմանափակման գերմանական մոդելը, նույն Մեծ Բրիտանիայի իրավակարգավորումների համեմատությամբ, յուրօրինակ փոխզիջումային տարբերակ է պետության սահմանադրական կարգի պահպանության, հասարակական պահանջի և քաղաքացու՝ իշխանության կրողի իրավունքների իրացման միջև, քանի որ ընտրական իրավունքը սահմանափակվում է միայն խիստ որոշակի դեպքերում և հիմնականում սահմանադրական կարգի դեմ ուղղված ծանր հանցագործությունների համար:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Nora V. Demleitner, *Continuing Payment of One's Debt to Society: The German Model of Felon Disenfranchisement as an Alternative*, Washington and Lee University School of Law, 2000
2. O. Schwartz, *Criminal Disenfranchisement in an International Perspective*, Cambridge university press, 2009
3. Claus Roxin, *Strafrecht: Allgemeiner teil*, Berlin, 1992
4. <https://www.btg-bestellservice.de/pdf/80201000.pdf>
5. BVerfGE 36, 139-141
6. BVerfGE 15, 165-167
7. BVerfGE 42, 312, 340- 341
8. BVerfGE 132, 39, 51, 34
9. Susan Easton, *Electing the Electorate: The Problem of Prisoner Disenfranchisement*. *Modern Law Review*, Vol. 69, No. 3, 2006
10. Hirst v. UK (N2), application No 74025/01
11. *Washington v. State*, 75 Ala. 582, 585 (1884)
12. ԳՖՀ Սահմանադրություն
13. ԳՖՀ Քրեական օրենսգիրք

### НЕМЕЦКАЯ МОДЕЛЬ ОГРАНИЧЕНИЯ ИЗБИРАТЕЛЬНОГО ПРАВА

**Лилит Сукиасян**

ЕУ, кафедра Правоведения

В статье представлена немецкая модель ограничения избирательного права, раскрывая ее историко-правовые основы и морально-этический характер. Подробно рассматриваются вопросы универсальности избирательного права, принципов равенства и конституционности его ограничения, обсуждаются соответствующие решения Конституционного суда Федеративной Республики Германии. Работа также ссылается на соответствие правовых норм Германии с краеугольным



делом ЕСПЧ об ограничении избирательного права. Рассматривается вопрос ограничения избирательного права в контексте целесообразности и соразмерности дополнительных последствий приговора в уголовном праве Германии.

**Ключевые слова:** Избирательное право, ограничение, лишение, Германия, основания, Конституционный суд.

### THE GERMAN MODEL OF DISENFRANCHISEMENT

**Lilit Sukiasyan**

EU, Chair of Jurisprudence

The article refers to the German model of disenfranchisement, revealing its historical-legal bases and moral-ethical nature. It focuses on the issues of the universal suffrage of the right to vote, the principle of equality, and the constitutionality of the deprivation of the right to vote. The relevant decisions of the Constitutional Court of the Federal Republic of Germany are discussed. Reference is also made to the compliance of the legal regulations of the Federal Republic of Germany with the ECHR cornerstone case concerning the restriction of the right to vote. The article presents the issue of disenfranchisement in the context of the expediency and proportionality of the additional consequences of the sentence in German criminal law.

**Keywords:** Suffrage, disenfranchisement, restriction, deprivation, Germany, legal, philosophical, grounds, Constitutional Court

*Տրվել է րազմադրույթան՝ 20.10.2020թ.  
Գրախոսվել է՝ 03.11.2020թ.*

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

#### *Անուշավան Մուշեղյան*

*ԵՀ, Իրավագիտության ամբիոն, հայցորդ  
law.planet.am@gmail.com, +374 93 401919*

Հետազոտությունը նվիրված է դատական համակարգի անկախությանը, դրա կայացման գործում առկա խոչընդոտներին: Նման հետազոտության համար նախադրյալ հանդիսացան դատական համակարգի նկատմամբ ձևավորված ներկայիս քննադատական մոտեցումները: Դատարանի նկատմամբ հասարակության վստահությունն է այն իրական գնահատանքը, ինչի համար իրենց տեղերում պայքարում են արհեստավարժ դատավորները: Խնդիր է դրվել վեր հանել դատարանների որպես անկախ անաչառ ինստիտուտի կայացման և այդ ինստիտուտի նկատմամբ հասարակության վստահության բարձրացման գործում խոչընդոտող հիմնախնդիրները:

**Հիմնաբառեր.** Անկախ, անաչառ դատարան, ներքին անկախություն, ինստիտուցիոնալ անկախություն:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կարևորելով դատական իշխանության անկախությունը՝ պետք է արձանագրենք, որ անկախ դատարանի կողմից լաված լինելու իրավունքի ապահովումը պետության պոզիտիվ պարտականությունն է: Անկախ դատական համակարգը հանդիսանում է սոցիալական պաշտպանական գործիք, այն իմաստով, որ նրանց դերը կարևորվում է հանրության գիտակցության, վարքագծի և այդ վարքագծի համապատասխանեցումն այլոց իրավունքների և շահերի հետ գործում: Դատարանները ապահովում են քաղաքական, սոցիալական, իրավական և տնտեսական բալանս հանրության մեջ:

Դատական համակարգի անկախությունը հանդիսանում է այն չափանիշներից մեկը, որով կարող է գնահատվել պետության իրավական և ժողովրդավարական լինելը: Համաշխարհային փորձը վկայում է այն

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

մասին, որ իրավական պետությունը կարող է գոյություն ունենալ միայն այն պայմաններում, երբ համապատասխան երկրում գործում են անկախ, ինքնիշխան և հեղինակավոր դատարաններ: Դա է հիմնական նախադրյալը, հենքը ժողովրդավարական պետության կայացման գործում: «Օրենքով ստեղծված անկախ և անկողմնակալ դատարան» և «արդար դատաքննության» հիմնարար սկզբունքներն ամրագրված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում և բազմաթիվ ազգային և միջազգային իրավական փաստաթղթերում: Մարդու իրավունքների պահպանման, օրենքի գերակայության ապահովման և ժողովրդավար պետության երաշխավորը հանդիսանում է անկախ, անաչառ, անկողմնակալ, որակյալ դատական իշխանությունը: Դատական համակարգը պետք է պաշտպանված լինի, ոչ միայն օրենսդիր կամ գործադիր իշխանությունների կողմից կատարվող անօրինական միջամտությունից, այլ նաև անհատ պաշտոնյանների կամ կուսակցությունների անօրինական ազդեցությունից: Իշխանությունների տարանջատման ֆոնին դատական համակարգի անկախությունը կենսական նշանակություն ունի պետության ժողովրդավար կառավարման մոդել ունենալու համար: Դատավորների և դատական իշխանությունների անկախությունը նախևառաջ պետք է ամրագրվի Սահմանադրությամբ կամ իրավական մակարդակում մեկ այլ բարձր նորմով: Այս կանոններով նախատեսված կառուցվածքային մեխանիզմները պետք է սահմանեն լիազորությունների հստակ բաժանում գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների միջև: Համաձայն՝ ՀՀ սահմանադրության 162-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է: Համաձայն՝ 164-րդ հոդվածի 1-ին մասի՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Անկախ դատարանի կողմից լսված լինելու իրավունքը ենթադրում է նաև, որ դատավորները չունենան նախապես ձևավորված կարծիք քննվող գործի կամ ներգրավված կողմերի վերաբերյալ և որևէ անձնա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

կան շահ որոշակի գործով: Գործերի վերաբերյալ որոշումները պետք է հրապարակվեն միայն «փաստերի հիման վրա և այդ փաստերի վերաբերյալ օրենքի կիրառման համապատասխան՝ առանց որևէ սահմանափակումների»: Այդ նպատակով պետական մարմինները և այլոք պարտավոր են զերծ մնալ դատավորների վրա անհարկի ճնշում գործադրելուց, դատավորները՝ որոշումներ կայացնելիս, պետք է զերծ լինեն սպառնալիքից, ճնշումներից, ցանկացած ազդեցությունից: Դատավորները համապատասխան լիազորությունները իրականացնելիս պետք է լինեն անկախ: Դատարանները պետք է ի վիճակի լինեն պաշտպանել անհատների, փոքրամասնություն ներկայացնող խմբերի, կազմակերպությունների և այլոց իրավունքները ու շահերը:

Էմպիրիկ արդյունքները հիմնավոր են դարձնում, որ ընկալվող անկախության վրա ազդող մեխանիզմները բոլոր երկրներում նույնը չեն և կախված են երկրներում առկա ժողովրդավարական ավանդույթից:

Այնուամենայնիվ, ներկայումս շատ և շատ երկրներում դատական իշխանության ինստիտուցիոնալ անկախությունը՝ գործադիր և օրենսդիր մարմիններից անհանգստացնող ազդակ է դատական համակարգի համար: Ազդեցություն կիրառելու որոշակի փորձերը եղել են և կան՝ լծակներ օգտագործելով, փորձեր են արվում դատարանին ցուցումներ տալ՝ դրանով իսկ խարխլելով համակարգի անկախությունը:

Դատական անկախության ներառելով տարբեր ասպեկտներ, որոնք գործում են տարբեր մակարդակներում տարբերակված է՝ արտաքին և ներքին անկախություն, ինստիտուցիոնալ և անհատական անկախություն:

Ինստիտուցիոնալ անկախությունը վերաբերում է դատական իշխանության անկախությունը քաղաքական ճյուղերից (Գործադիր և օրենսդիր իշխանություն), ինչպես նաև ցանկացած այլ՝ ոչ դատական համակարգի դերակատարներից:

Անհատական անկախությունը կենտրոնանում է այն երաշխիքների վրա, որոնք ուղղված են պաշտպանել անհատ դատավորներին դատական համակարգի ներսում անհարկի ճնշումից այլ դատավորների կողմից, (կլինի վերադաս դատարանի, թե նույն ատյանի դատարանի կողմից): Օրինակ, դատարանի նախագահները կարող են վերահսկողու-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

թյուն իրականացնել դատարանների կառավարման վրա (կախված դատական համակարգի կառուցակարգից), բայց նրանք որևէ կերպ չպետք է ազդեն դատավորների որոշումների կայացման վրա:

Անդրադառնալով դատական իշխանության ինստիտուցիոնալ անկախությանը հարկ է նշել, որ դրա հիմքը կայանում է, որ դատական իշխանությունը պետք է օժտված լինի իրական և իրացվելի լիազորություններով, որոնք իրականում հնարավորություն կտան հարկ եղած դեպքում հակակշռելու և զսպելու իշխանության մյուս թևերին:

Ինստիտուցիոնալ անկախությունը վերաբերում է պետության կողմից նախապես մշակված ինստիտուցիոնալ և իրավական կառուցակարգերին՝ դատավորներին անտեղի ճնշումից և ազդեցությունից պաշտպանելու համար: Այս տեսանկյունից ամենակարևոր գործոնները վերաբերում են դատավորների ընտրման, նշանակման, գնահատման, կարգապահության ձևին, դատական համակարգի և դատարանների վարչարարության կառավարմանը: Սովորաբար, այդ ասպեկտները կարգավորվում են Սահմանադրությամբ կամ դատական համակարգին վերաբերող հատուկ կանոնակարգված նորմերով: Այնուամենայնիվ, փաստ այն է, որ ինստիտուցիոնալ անկախությունը կարող է աշխատել տարբեր ձևերով՝ համաձայն այդ համատեքստում, և դա ինքնին չի երաշխավորում, որ դատավորներն իրականում վարվում են ինքնուրույն: Ուստի անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն ինստիտուցիոնալ անկախությունը, այլ նաև դատավորների կոնկրետ վարքագիծը: Այս հարցը վերաբերում է դատավորների անհատական անկախությանը, այսինքն՝ նրանց հոգեվիճակը և կոնկրետ վարքագիծը, ինչը կախված է նրանց մասնագիտական սոցիալականացումից և մասնագիտական արժեքների ներքինացման ուղղուց: Չնայած ինստիտուցիոնալ անկախությունը անհատի անկախության անհրաժեշտ պայմանն է, երկու հասկացությունները տարբեր են: Պահանջվում է, որ և՛ անհատ դատավորը, և՛ դատարանը պետք է լինեն անկախ և ընկալվեն, որպես անկախ:

Ինչպես նշված է Բանգալորի սկզբունքների մեկնաբանության մեջ. «դատական անկախության սահմանադրական հռչակագրերի ընդու-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

նումը ինքնաբերաբար չի ստեղծում և չի պահպանում անկախ դատական համակարգը» (2007, պար. 25):

Դատարանների՝ ընդհանրապես և դատավորների՝ մասնավորապես անկախությունը առանցքային, հիմնաքարային դեր է կատարում ցանկացած ժողովրդավարական պետության կայացման գործում, հաշվի առնելով այն փաստը, որ հենց դատարաններն են ապահովում սահմանադրության և օրենքների գերակայությունը իրավական պետությունում: Դատական իշխանությունը իր լիզորություններով օժտված իրավական կառուցակարգերի և իրավական տեխնիկայի խստագույն պահպանման արդյունքում կոչված է ապահովելու և պաշտպանելու մարդու իրավունքները և ազատությունները: Դատարանները իրենց դերով պայմանավորված նաև կոչված են որպես իրավական հարցերի լուծման մարմիններ կայացնելու որոշումներ, որոնք պարտադիր են և կատարման ենթակա բոլոր պետական մարմինների, կազմակերպությունների, պետական պաշտոնատար անձանց, տեղական ինքնակառավարման մարմինների և անձանց համար:

Առանձին դատավորների անկախությունն ապահովվում է ընդհանուր առմամբ դատական համակարգի անկախությամբ: Սա օրենքի գերակայության հիմնարար բաղադրիչներից մեկն է:

Անկախությունն ու անկողմնակալությունը սերտորեն կապված են միմյանց հետ, և դատարանները հաճախ են փոխկապակցված՝ մեկ փաթեթում դիտարկում այս հասկացությունները: Այնուամենայնիվ, նրանցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն նշանակությունը: Ընդհանուր իմաստով «անկախություն» նշանակում է առանձին դատավորի կամ դատարանի ինքնավարություն գործերը որոշելու հարցում՝ օրենքը կիրառելով փաստերի նկատմամբ: Անկախությունը վերաբերում է դատական համակարգին որպես ինստիտուտ (անկախություն կառավարման այլ ճյուղերից, որոնք կոչվում են «ինստիտուցիոնալ անկախություն») և որոշակի դատավորի անկախություն դատական համակարգի այլ անդամներից («անհատական անկախություն»): Դա է նշանակում դատական համակարգը պետք է անկախ լինի կառավարության մնացած մասից, մասնավորապես գործադիրից և խորհրդարանից, որոնք, ինչպես մյուս պետական հաստատությունները, պարտավոր են հարգել և հա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

մապատասխանել դատարանների որոշումներին: Այս սկզբունքը պաշտպանում է որոշումների վերաբերյալ տարածայնություններից և այլ հաստատությունների կողմից այդ որոշումների հնարավոր չկատարումը: Նման անկախությունը, ինչպես նաև որոշում կայացնելիս անկախությունը, կարևոր է օրենքի գերակայությունը և մարդու իրավունքները պաշտպանելու համար:

«Անկախությունը» պահանջում է, որ դատական համակարգում ոչ մի դատական գործ ենթակա չլինեն այլոց միջամտումներին, և ոչ էլ այն կազմող դատավորները ենթակա չլինեն այլ իշխանության ճյուղերին:

«Անաչառությունը», մյուս կողմից, բնութագրում է դատավորի կամ դատարանի վերաբերմունքը քննարկվող գործի և դրա կողմերի նկատմամբ:

Դատարանի անաչառությունը կարող է սահմանվել որպես կողմնակալության, թշնամանքի կամ համակրանքի բացակայություն, ցանկացած կողմի նկատմամբ: Այնուամենայնիվ, կան դեպքեր, երբ այդ կողմնակալությունը կարող է ոչ միայն ակնհայտ չլինել, այլ նաև լավ քողարկված լինել:

Դատավորների անկախությունը պետք է դիտարկել որպես ազատության, մարդու իրավունքների հարգման և օրենքի անաչառ կիրառման երաշխիքներից մեկը: Դատավորների անաչառությունն ու անկախությունը էական են դատարանների առջև կողմերի հավասարության ապահովման համար:

Դատական համակարգի և դրա անմիջական կրողների՝ դատավորների անկախության մասին խոսելիս ուշադրության են արժանացել հետևյալ խնդիրները.

➤ Դատավորների նշանակման և առաջխաղացման ընթացակարգերը առանցքային են դատական համակարգի անկախությունը պաշտպանելու համար: Դրան զուգահեռ այլ կարևոր հարցն այն է, որ դատավորներին պետք է երաշխավորվի, որ նրանք կմնան իրենց պաշտոններում (անփոփոխելիության սկզբունք) մինչև կենսաթոշակային պարտադիր տարիքը լրանալը, և որ ավելի կարևոր է, նրանք չպետք է վախենան աշխատանքից հեռացվելուց՝ իրենց կայացրած որոշումների համար:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

➤ Յուրաքանչյուր դատավոր պարտավոր է խթանել և պաշտպանել դատական համակարգի անկախությունը: Անհրաժեշտ է խորհրդակցել դատավորների և դատական համակարգի հետ և ապահովել նրանց մասնակցությունը իրենց կարգավիճակին վերաբերող օրենսդրության նախապատրաստմանը և ընդհանուր առմամբ, դատական համակարգի գործունեությանը:

➤ Դատավորների, դատական իշխանության մասին խոսելիս իրենց մեկնաբանություններում գործադիր և օրենսդիր իշխանության ներկայացուցիչները պետք է խուսափեն ինչպես այնպիսի քննադատություններից, որոնք խաթարում են դատական համակարգի անկախությունը կամ հասարակության վստահությունը դրանում, այնպես էլ այն գործողություններից, որոնք կարող են կասկածի տակ դնել պետական մարմինների ներկայացուցիչների պատրաստակամությունը կատարելու դատարանի որոշումները (բացառությամբ նրանց բողոքարկելու մտադրության հայտարարության): (2016-ին Եվրոպական արդարադատության դատարանը որոշում կայացրեց Բական ընդդեմ Հունգարիայի, որը վերաբերում էր դիմումատուին Հունգարիայի Գերագույն դատարանի նախագահի և Արդարադատության ազգային խորհրդի պաշտոնից վաղաժամկետ հեռացնելուն, քանի որ, իր մասնագիտական կարողությամբ, նա քննադատում էր Հունգարիայի օրենսդրական բարեփոխումները, որոնք ազդում էին դատական համակարգի վրա: Դատարանը, *inter alia*, գտավ դիմումատուի խոսքի ազատության իրավունքի խախտում՝ շեշտելով, որ յուրաքանչյուր դատավոր պարտավոր է խթանել և պաշտպանել դատական համակարգի անկախությունը, և որ անհրաժեշտ է խորհրդակցել դատավորների և դատական մարմինների հետ և ապահովել նրանց մասնակցությունը դատական համակարգում իրենց կարգավիճակի և գործունեության վերաբերյալ օրենսդրության մշակմանը):

Հաշվի առնելով այն, որ դատավորների գործունեության անկախությունը կախված է նաև մի շարք արտաքին գործոններից, ինչպիսին է՝ գործող օրենսդրության որակը, ահնրաժեշտ է օրենսդրական կարգավորումները հնարավորինս հստակ սահմանել առանց տարակարծություններ առաջացնելու, հստակ սահմանազատել իշխանություններ



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

րի համապատասխան լիազորությունները, գծել օրենսդրական այն բաժանարարը, որը իրավաբանական բալանսավորման արդյուքում կերաշխավորի համապատասխան մարմինների անկախությունը:

Անհրաժեշտ է սահմանել այնպիսի օրենսդրական մեխանիզմներ որոնք կբացառեն դատավորի ընտրության հարցում քրոնիզմի և նեպոտիզմի երևույթների գոյությունը:

Անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություններ անել՝ հնարավորինս սպառիչ կերպով հստակեցնել դատավորին պատասխանատվության ենթարկելու հիմքերը, պատասխանատվության ենթարկող անձանց, որոնց ընտրություն կատարել այն նկատառումից ելնելով, որ այդ գործընթացի և՛ փուլում, և՛ արդյունքում դատավորի անկախության խոցելի չի դառնա:

### Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ սահմանադրություն
2. «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք
3. Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները (ընդունված 2002 թվականի նոյեմբերի 26-ին)
4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Բական ընդդեմ Հունգարիայի», Մեծ պալատ, թիվ 20261/12, 2016 թվականի հունիսի 23 վճիռ

### ПРОБЛЕМЫ НЕЗАВИСИМОСТИ СУДЕБНОЙ ВЛАСТИ

**Анушаван Мушегян**

ЕУ, кафедра Правоведения, соискатель

Исследование посвящено независимости судебной власти и препятствиям на ее пути. Предпосылкой для такого исследования был нынешний критический подход к судебной системе. Доверие общества к суду - это реальная оценка того, за что борются профессиональные судьи на своем месте. Была поставлена задача поднять вопросы,

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

препятствующие становлению судов как независимого беспристрастного института, и повысить доверие общества к этому институту.

**Ключевые слова:** Независимая, беспристрастная судебная система, внутренняя независимость, институциональная независимость.

### ISSUES OF JUDICIAL INDEPENDENCE

**Anushavan Musheghyan**

EU, Chair of Jurisprudence, Researcher

The research is dedicated to the independence of the judiciary and the obstacles to its establishment. Prerequisite for such research was the current critical approach to the judiciary. Public confidence in the court is the real assessment of what professional judges are fighting for in their place. The task was to raise the issues that hinder the establishment of the courts as an independent impartial institution and the increase of public trust in that institution.

**Keywords:** Independent, impartial judiciary, internal independence, institutional independence.

*Տրվել է պաշարության՝ 12.10.2020թ.  
Գրախոսվել է՝ 05.11.2020թ.*

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁՆ ՈՐՊԵՍ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՐՈՂ. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

**Արման Գրիգորյան**

ԵՀ, իրավագիտության ամբիոն, ասպիրանտ  
armangrgoryan1996@gmail.com, +374 99 523404

Սույն հոդվածը նվիրված է իրավաբանական անձի՝ որպես վնասի հատուցման հիմնական անձի կրողը լինելու հարցերին: Քննարկման հիմնական առարկա է դարձել ոչ նյութական վնասի մասով իրավաբանական անձի՝ նշված հիմնական իրավունքի կրողը լինելու հնարավորությունը՝ հաշվի առնելով նաև մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան:

Այս հարցերի ուսումնասիրումը, գրնում ենք, օգտակար կլինի վնասի հատուցման հիմնական իրավունքի կրողների ճշգրիտ շրջանակը պարզելու և այդպիսով նրանց իրավունքների խախտումներից խուսափելու հարցում:

**Հիմնաբառեր.** Իրավաբանական անձ, ոչ նյութական վնաս, իրավական էություն, փոխհատուցում, իրավահավասարություն:

Իրավաբանական անձանց հիմնական իրավունքների և ազատությունների իրավագոր սուբյեկտ դիտելու նորմատիվ հիմքը հանդիսանում է ՀՀ սահմանադրության 74-րդ հոդվածը, որի համաձայն՝ *հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությանը կիրառելի են դրանց նկատմամբ:* [1, էջ 170] Ներկայացված նորմից հետևում է, որ իրավաբանական անձը կարող է համարվել հիմնական իրավունքների և ազատությունների կրող միայն այնքանով, որքանով դա կբխի իր էությունից:

Մեկնաբանելով վնասի հատուցման իրավունքին նվիրված ՀՀ սահմանադրության 62-րդ հոդվածը՝ ՀՀ սահմանադրական դատարանը գործերից մեկով նշել է, որ «Սահմանադրության 62-րդ հոդվածի բո-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*վանդակության վերլուծությունը վկայում է, որ վնասի հատուցման իրավունքի էության հիմքում «վնաս» եզրույթն ունի ընդհանրական իրավական բովանդակություն, և Սահմանադրության մակարդակում վնասի նյութական և ոչ նյութական տեսակները տարբերակված չեն:» [2, կետ 4.4]*

Ընդհանուր առմամբ վնասը կարելի է բնորոշել որպես անձանց իրավունքների, օրենքով պաշտպանվող շահերի ոտնահարման արդյունքում վրա հասնող որևէ բացասական հետևանք, սահմանադրական մակարդակում «վնաս» եզրույթը ունի ընդհանրական իրավական բովանդակություն: Իր հերթին, առանձնացվում են երկու հիմնական խումբ վնասներ՝ նյութական վնաս և ոչ նյութական վնաս:

Նյութական վնասը այն վնասն է, որը կարելի է հաշվել, իսկ ոչ նյութականը հաշվել անհնար է: [3, էջ 14] Եթե կա վնաս (անձին պատճառված անբարենպաստ հետևանք), սակայն հնարավոր չէ պատասխանել այն հարցին, թե ինչքան է այն կազմում դրամական արտահայտությամբ, ապա գործ ունենք ոչ նյութական վնասի հետ:

Այս դեպքում առաջին հերթին էական է ոչ այնքան անձին պատկանող ոչ նյութական բնույթի բարիքների դեմ ոտնձգելը կամ նման իրավունքները խախտելը, որքան որևէ եղանակով (ոտնձգելով նրան պատկանող ցանկացած բնույթի իրավունքի կամ բարիքի դեմ) անձին այնպիսի վնաս պատճառելը, որի դրամական չափը հաշվել հնարավոր չէ: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ դեպքերի զգալի մասում ոչ նյութական վնասը առաջացնում է հենց անձին պատկանող ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգությունների կամ նման բնույթի իրավունքների խախտման հետևանքով:

Ասվածից հետևում է, որ իրավաբանական անձի՝ վնասի հատուցման հիմնական իրավունքի կրողը լինելու հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք վերջինս կարող է կրել նյութական և/կամ ոչ նյութական վնաս:

Հաշվի առնելով, որ իրավաբանական անձի բնորոշ հատկանիշներից է սեփականություն ունենալու և ֆիզիկական անձանց հետ հավասար հիմունքներով գույքային հարաբերություններին մասնակցելու հնարավորությունը՝ աներկբա է, որ վերջինս հանդիսանում է նյութա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

կան վնասի հատուցան հրավունքի լիիրավ կրողը: Սույն հոդվածի հետագա շարադրանքն արդեն նվիրված է իրավաբանական անձի կողմից ոչ նյութական բնույթի վնաս կրելու և այդ մասով վնասի հատուցման հիմնական իրավունքի կրողը լինելու հնարավորության հարցերին, որոնց ուսումնասիրումը, գտնում ենք, կնպաստի ընթացիկ օրենսդրությամբ և դատական պրակտիկայում որևէ վերաբերելի սուբյեկտի մասով վնասի հատուցման հիմնական իրավունքի կրողը լինելու հանգամանքի ժխտման դեպքերը բացառելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածը 1-ին մասում նշվում է, որ *սույն օրենսգրքի իմաստով ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան փառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատրկանող նյութական կամ ոչ նյութական բարիքների դեմ ուրնծգող կամ նրա անձնական գույքային կամ ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ:* [4]

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս ...:* [5] Չանցանքների մասով նույնաբովանդակ սահմանում է պարունակում ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 268-րդ հոդվածը: [6]

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Ոչ իրավաչափ վարչարարությամբ ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելու, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նրա պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելու միջոցով ոչ գույքային վնաս պատճառելու դեպքերում այդ անձն իրավունք ունի պահանջելու դրամական միջոցներով հատուցում կամ առաջացած հետևանքների վերացում՝ պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով:* [7]

Ներկայացված իրավական նորմերի համակարգային վերլուծությունից հանգում ենք նրան, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը դրա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

մական չափման չենթարկվող վնասների շարքին է դասում հոգեկան և ֆիզիկական տառապանքները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը ոչ նյութական վնասի հատուցման իրավունքի իրավազոր է դիտում միայն ֆիզիկական անձանց, ՀՀ քրեական դատավարության և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերը տուժող և ուրեմն հատուցման իրավունք ունեցող են ճանաչում այն անձին, ով իրավախախտման հետևանքով կարող է կրել գույքային, ֆիզիկական կամ բարոյական վնաս: Հավելենք նաև, որ ՀՀ օրենսդրության մեջ ոչ նյութական վնասին (ոչ գույքային, բարոյական վնաս) տրված միակ սահմանումը գետեղված է քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածում, և առնվազն որևէ հիմք չկա պնդելու, որ այլ իրավական ակտերում հիշատակվող նույն եզրույթը կարող է ունենալ տարբերվող բովանդակություն կամ մեկնաբանվել այլ կերպ:

Տեսական աղբյուրներում նշվում է, որ իրավաբանական անձը չի կարող կրել ֆիզիկական կամ հոգեկան տառապանքներ (այլ կերպ հաճախ հիշատակվում է որպես «բարոյական վնաս»), քանի որ դա հատուկ է միայն մարմին ու գիտակցություն ունեցող մարդուն:[8, ժ. 104] Իրոք, իրավաբանական անձը շնչավոր էակ չէ, օժտված չէ բանականությամբ, չի համարվում կենդանի օրգանիզմ և հետևաբար չի կարող կրել հոգեկան կամ ֆիզիկական բնույթի տառապանքներ:

Այսպիսով, ՀՀ օրենսդրությամբ ոչ նյութական վնասը սահմանվում է որպես կրած ֆիզիկական կամ հոգեկան տառապանք, իսկ իրավաբանական անձը, ելնելով իր բնույթից, չի կարող այդպիսիք վերապրել: Նշվածից կարելի է եզրահանգել, որ ՀՀ օրենսդրությունը չի ճանաչում իրավաբանական անձի կողմից ոչ նյութական վնաս կրելու հնարավորությունը, և հետևաբար, իրավաբանական անձի մոտ նման բնույթի վնասի դիմաց հատուցում պահանջելու իրավունքը:

Բոլոր դեպքերում այն, որ ոչ նյութական վնասի օրենսդրական սահմանումը թույլ չի տալիս իրավաբանական անձին դիտարկել որպես այդպիսի վնասի հատուցման պահանջով իրավազոր, ինքնին չի կարող բացառել այս մասով վերջինիս՝ հիմնական իրավունքի կրողը լինելու հնարավորությունը: Վնասի հատուցման հիմնական իրավունքը գոր-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ծում է անմիջականորեն և իրավական հետևանքներ առաջացնելու համար օրենսդրական ամրագրման կարիք չունի, իսկ «վնաս» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակություն ինքնավար է:

Հանրահայտ է, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ իրավաստեղծը պետք է որդեգրի նույնատեսակ մոտեցում, բացառությամբ այն իրավիճակների, երբ իրավունքի սուբյեկտի բնույթից բխում է հակառակը:

Եթե առհասարակ ճանաչվում է ոչ նյութական բնույթի վնասի հատուցման հնարավորությունը, ապա նման իրավունք պետք է տրամադրվի հավասարապես և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձանց: «Ոչ նյութական վնաս» եզրույթին պետք է տալ հանընդգրկուն բովանդակություն ունեցող սահմանում, որպեսզի իրավաբանական անձինք արհեստականորեն լուսանցքում չհայտնվեն, և իրավախախտմամբ նրանց պատճառված դրամական հաշվարկի չենթարկվող բացասական հետևանքները նույնպես դիտարկվեն (ինչպես ֆիզիկական անձանց դեպքում է) որպես փոխհատուցման տրամադրման հիմք:

Նշվածի կապակցությամբ ցանկանում ենք ներկայացնել Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի կողմից 03.12.2003 թ. կայացված N 508-Օ որոշումից մեկ հատված, որը վերաբերում է իրավաբանական անձի կրած ոչ նյութական վնասի հատուցման հարցերին.

*«Իրավաբանական անձի գործարար համբավի պաշտպանության նկատմամբ խախտված քաղաքացիական իրավունքների պաշտպանության որևէ միջոցի կիրառելիությունը որոշվում է՝ ելնելով իրավաբանական անձի էությունից:*

*Միաժամանակ, օրենքում իրավաբանական անձանց գործարար համբավի պաշտպանության միջոցի մասին անմիջական հիշատակության բացակայությունը նրանց չի զրկում «...» ոչ նյութական վնասի (որն ունի քաղաքացուն պատճառված քարոյական վնասից տարբերվող սեփական բովանդակություն) հատուցման պահանջ ներկայացնելու իրավունքից, որը բխում է խախտված ոչ նյութական իրավունքի էությունից և դրա հետևանքների բնույթից:» [9, пункт 2]*

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Այս որոշումից կարելի է եզրակացնել, որ ելնելով սուբյեկտիվ իրավունքի խախտման էությունից և դրա հետևանքների բնույթից՝ ՌԴ սահմանադրական դատարանը ոչ նյութական վնասի հատուցումը դիտարկում է որպես իրավաբանական անձանց նկատմամբ կիրառելի իրավունքի պաշտպանության միջոց:

Ընդհանրապես, ոչ նյութական վնասների հատուցման իմաստը կայանում է տուժողի համար ի հայտ եկած դրամական չափման չենթարկվող անբարենպաստ հետևանքները գումարի միջոցով հնարավորինս հարթելու մեջ: [9, p.28] Կարելի է ասել, որ սա վճար է կրած անբարենպաստ հետևանքների դիմաց:

Իրավաբանական անձի պարագայում ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցում ստանալու նախապայմանները նույնն են ինչ ֆիզիկական անձանց դեպքում. 1) ոչ իրավաչափ վարքագիծ, 2) վրա հասած դրամական չափման չենթարկվող անբարենպաստ հետևանքներ, որոնք արդեն իսկ տեղ են գտել ժամանակի մեջ, և այդ իսկ պատճառով հնարավոր չէ վերականգնել այն դրությունը, երբ տուժողը կհամարվի իրեն պատճառված բացասական հետևանքները չկրած:

Այլ կերպ, եթե ֆիզիկական անձն իր իրավունքների խախտման հետևանքով կրում է հոգեկան և ֆիզիկական տառապանքներ, որոնց վերապրումն արդեն անշրջելի իրողություն է, և այդ իսկ պատճառով հնարավոր է միայն դրանց դիմաց տրամադրել փոխհատուցում, ապա նույն կերպ իրավաբանական անձը, ով իր սուբյեկտիվ իրավունքների խախտման հետևանքով կրում է անցյալում արդեն իսկ տեղ գտած ու հաշվարկման չենթարկվող անբարենպաստ հետևանքներ, պետք իրավունք ունենա պահանջել դրանց դիմաց փոխհատուցում:

Հակառակ իրավիճակը, գտնում ենք, անհարկի կերպով իրավաբանական անձանց դնում է ֆիզիկական անձանց հանդեպ առավել վատթար դրության մեջ, ինչը իրավաչափ համարվել չի կարող: Կախված տուժող սուբյեկտի իրավական բնույթից՝ նրա կողմից կրած ոչ նյութական վնասի դրսևորումները կարող են տարբեր լինել, սակայն դրանք բոլորը պետք է հաշվի առնվեն և համարժեքորեն փոխհատուցվեն՝ իրավախախտման հետևանքները հնարավորինս չափով հարթելու նպատակը կյանքի կոչելու համար:



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Իրավաբանական անձի մոտ ոչ նյութական վնաս ձևավորվելու հնարավորության և դրա դիմաց դրամական հատուցման տրամադրման անհնրաժեշտության մասին համապատասխան դիրքորոշումներ է հայտնել նաև ՄԻԵԴ-ը *Comingersoll S.A. v Portugal* և *Freedom and Democracy Party (ÖZDEP) v. Turkey* գործերով:

*Comingersoll S.A. v Portugal* գործով ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ իրավաբանական անձի կողմից վկայակոչվող ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցման տրամադրումը սկզբունքորեն բացառված չէ, իսկ նման փոխհատուցման տրամադրման հարցի լուծումը կախված է յուրաքանչյուր գործի հանգամանքներից: [10, paaras 32-35] Սրանով ՄԻԵԴ-ը, փաստորեն, ճանաչել է իրավաբանական անձանց մոտ ոչ նյութական վնասի դիմաց դրամական հատուցում ստանալու իրավունքի առկայությունը, որն էլ իրենից ներկայացնում է խախտված իրավունքի պաշտպանության միջոց:

Ինչպես վերը նշվել է, ոչ նյութական վնասն այն է, որի հստակ դրամական չափը որոշել հնարավոր չէ: Ֆիզիկական անձի դեպքում դա կարող է արտահայտվել իրավախախտմամբ ուղեկցվող հոգեկան կամ ֆիզիկական տառապանքների մեջ, որոնք չունեն հստակ դրամական չափ: Իրավաբանական անձի դեպքում արդեն այդպիսի վնասն արտահայտվում է նրա բնականոն գործունեության իրականացման հարցում ի հայտ եկած լրացուցիչ անախորժությունների, դժվարությունների և այլ բացասական հետևանքների (անկախ նրանից դրանք հաղթահարվում են, թե ոչ) տեսքով, որոնք դրամական հաշվարկման չեն ենթարկվում, և չէին առաջանա, եթե իրավաբանական անձի գույքային կամ ոչ գույքային բնույթի իրավունքները չխախտվեին:

Անդրադառնալով իրավաբանական անձի մոտ ծագող ոչ նյութական վնասին՝ նույն *Comingersoll S.A. v Portugal* գործով մարդու իրավունքների եվրոպական դատարանը ( այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) նշել է հետևյալը.

*«Իր սեփական պրակտիկայի լույսի ներքո՝ Դատարանը չի կարող բացառել առևտրային կազմակերպությանը ոչ նյութական վնասի դիմաց նյութական փոխհատուցման տրամադրման հնարավորությունը:*

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Առևտրային կազմակերպության կրած ոչ նյութական վնասը կարող է ենթադրել պահանջներ, որոնց հիմքերը այս կամ այն չափով օբյեկտիվ են կամ սուբյեկտիվ: Դրանց շրջանակում պետք է հաշվի առնել կազմակերպության գործարար համբավը, անորոշությունը որոշումներ կայացնելու հարցում, կազմակերպության կառավարման խաթարումը (որի համար հետևանքների հաշվարկման հստակ մեթոդ չկա), և վերջապես, թեև առավել քիչ չափով, կառավարման թիմին պատճառված անհանգստությունը և անհարմարությունը:»

Այս գործով ՄԻԵԴ-ը, գտավ որ ողջամիտ ժամկետում իր գործի դատական քննության իրավունքի խախտումը (հոդված 6), կազմակերպությանը (նաև նրա բաժնետերերին և կառավարիչներին) պատճառել է զգալի անհարմարություն և երկարատև անորոշության՝ թեկուզ և վերջինիս առօրյա գործունեության մասով:

Ղեկավարվելով ՄԻԵԿ 41-րդ հոդվածի կանոններով՝ ՄԻԵԴ-ը իրավաբանական անձին շնորհեց ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցում՝ համարելով դա արդարացված կազմակերպությանը պատկանող գույքային պահանջի հետ կապված վեճը ողջամիտ ժամկետում չլուծելու հետևանքով վերջինիս ունեցած անորոշության պայմաններում:[10, paaras 35-36] Այս դեպքում, փաստորեն, իրավաբանական անձի կրած անբարենպաստ հետևանքը հանդիսացավ վերջինիս մոտ առկա անորոշությունը, որը բացասաբար է ազդում նրա գործունեության վրա, սակայն չափելի դրամական արտահայտություն չուներ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ իրավաբանական անձի իրավունքների խախտման պատճառով վերջինս հնարավոր է ենթարկվի որոշակի բացասական ազդեցությունների, որոնք անգամ եթե վերաբերեն նրա առևտրային գործունեությանը, ամեն դեպքում դրամական չափման չեն ենթարկվում, սակայն իրավախախտման հետևանքները հարթելու և մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը առավելագույնս (հնարավոր չէ ժամանակը հետ շրջել և հասնելի մի իրավիճակի, երբ տուժողը չկրի տեղ գտած խախտմամբ պատճառված վնասը) վերականգնելու նպատակով դրանց դիմաց պետք տրամադրվի դրամական հատուցում:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մեկ այլ՝ *Freedom and Democracy Party (ÖZDEP) v. Turkey* գործով, ՄԻԵԴ-ը, կրկին ղեկավարվելով ՄԻԵԿ 41-րդ հոդվածի դրույթներով, կուսակցությանը տրամադրել է ոչ նյութական վնասի դիմաց հատուցում՝ դրա հիմքում դնելով կուսակցության լուծարման հետևանքով վերջինիս հիմնադիրների ու անդամների կրած հիասթափությունը և տհաճությունը (անգլերեն բնագրում նշվում է՝ .... *ÖZDEP's dissolution must have been highly frustrating for its founders and members*):[11, paara 57] Այս գործով կայացված վճիռը նույնպես վկայում է ՄԻԵԴ-ի կողմից իրավաբանական անձին որպես ոչ նյութական վնասի դիմաց հատուցում պահանջելու իրավունք ունեցող սուբյեկտ ճանաչելու մասին:

Կազմակերպության անդամներին, դրա հիմնադիրներին, բաժնետերերին կամ կառավրիչներին պատճառված անհարմարությունները ՄԻԵԴ-ը, ինչպես հետևում է վերը ներկայացված շարադրանքից, դիտարկում է որպես ոչ նյութական վնասի դիմաց կազմակերպությանը նյութական փոխհատուցում շնորհելու հիմք:

Այս հանգամանքի հաշվառմամբ՝ կա մոտեցում, որ իրավաբանական անձին ոչ նյութական վնասի դիմաց հատուցում տրամադրելու հիմքը հանդիսանում է նրա իրավունքների խախտման պատճառով այն ֆիզիկական անձանց կրած տառապանքները, ում շահերի սպասարկման նպատակով հենց ստեղծվել է տուժող իրավաբանական անձը, կամ ովքեր իրավաբանական անձի հետ գտնվում են այլ բնույթի կապերի մեջ (խոսքը գնում է կազմակերպության ղեկավարության և աշխատակազմի մասին): [12, Ե. 56-60 ] Նման ընկալման հիմնավորումներն, ընդհանուր առմամբ, հանգում են հետևյալին.

Ֆիզիկական անձինք, ինքնուրույն չկարողանալով իրացնել իրենց շահերը, հաճախ այդ նպատակով միավորվում են խմբերի մեջ՝ ձևավորելով իրավական կարգավիճակ ունեցող կազմակերպություն, որը հանդիսանում է խմբի ինստիտուցիոնալ արտացոլումը: Կազմակերպության իրավունքների ոտնահարման հետևանքով հնարավոր է դրա հետ կապերի մեջ գտնվող ֆիզիկական անձինք ենթարկվեն նյութական արտահայտությունից զուրկ բացասական ազդեցության, վերապրեն տառապանքներ: Օրինակ, կրոնական կազմակերպության իրավունքների խախտման և գործունեության խաթարման պատճառով դրա անդամ-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ները կարող են ունենալ ծանր ապրումներ, քանզի վերջնարդյունքում խախտվելու է նրանց բնականոն հոգևոր կյանքը:

Եթե ֆիզիկական անձանց խմբի շահերի իրացումն ու պաշտպանությունը տեղի են ունենում իրավաբանական անձի քաղաքացիական շահերի, թե ոչ առևտրային բնույթի ձևավորման և գործունեության արդյունքում, ապա նրա իրավունքների խախտմամբ խմբին փրկանքներին պատճառված ոչ նյութական վնասի դիմաց հատուցում ստանալու իրավունքը պետք է վերապահվի իրավաբանական անձին, որը խմբի ձևական-իրավաբանական արտացոլումն է:

Այս մոտեցումը հաստատվում է, օրինակ, *Freedom and Democracy Party (ÖZDEP) v. Turkey* գործով ՄԻԵԴ-ի կողմից կուսակցությանը ոչ նյութական վնասի դիմաց հատուցում շնորհելու հանգամանքով՝ այն պատճառաբանությամբ, որ դրա լուծարումը տառապանքներ է պատճառել նրա հիմնադիրներին և անդամներին, այլ կերպ՝ ֆիզիկական անձանց խմբին:

Նույն հարցի վերաբերյալ կա նաև մրցակից մոտեցում, որն առաջին հերթին շեշտը դնում է իրավաբանական անձի ինքնուրույն իրավասուբյեկտության վրա:

Իրավաբանական անձը, լինելով իրավունքի առանձին սուբյեկտ, կարող է պահանջել անմիջապես իրեն պատճառված նյութական արտահայտություն չունեցող վնասների հատուցում: Այդպիսի վնասները, ինչպես վերն արդեն նշվել է, կազմակերպությանը վերագրելի բացասական անբարենպաստ հետևանքներն են, որոնց հնարավոր չէ տալ նյութական արտահայտություն, սակայն դրանք անտեսվել նույնպես չեն կարող և պետք է փոխհատուցվեն՝ ելնելով վնասների լրիվ ծավալով փոխհատուցման անհրաժեշտությունից: Արդեն ֆիզիկական անձանց կրած ոչ նյութական վնասների հատուցման պահանջի իրավունքն անհատապես պատկանում է տուժող ֆիզիկական անձին:

Քննարկվող երկրորդ մոտեցմանը համահունչ դիրքորոշում տեղ է գտել նաև վերը հիշատակված *Comingersoll S.A. v Portugal* գործով դատավորների ներկայացրած հատուկ կարծիքում, որտեղ անմիջապես շեշտադրվում են իրավաբանական անձի՝ իրավունքի ինքնուրույն սուբյեկտ հանդիսանալու, իր բնույթից բխող ոչ նյութական վնաս կրելու

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

հանգամանքները և իր իրավունքներն, ազատությունները և օրինական շահերը պաշտպանելու՝ ֆիզիկական անձանց հետ հավասար հնարավորություններով օժտված լինելու անհրաժեշտությունը:

Մենք առավել հակված ենք նախապատվությունը տալ ներկայացված երկրորդ մոտեցմանը, որը առաջին հերթին ուշադրություն է հրավիրում իրավաբանական անձի՝ իրավունքի առանձին սուբյեկտ լինելու և իր հիմնադիրներից, անդամներից կամ մասնակիցներից անկախ կարգավիճակ ունենա հանգամանքներին: Իրավաբանական անձին պատճառված ոչ նյութական վնասի հարցն ընդամենը պետք է դիտարկել՝ ելնելով իրավունքի այս սուբյեկտի բնույթից:

Կազմակերպությունը մարդկանց խումբ է, ովքեր համագործակցում են և որոնց գործունեությունը գիտակցված կորդինացվում է որոշակի ընդհանուր նպատակի (նպատակների) իրագործման համար: [13, էջ 18]

Իրավաբանական անձի (իրավունքի կողմից ճանաչված կազմակերպության) իրավունքների խախտումը կարող է հանգեցնել նրա համար նյութական արտահայտություն չունեցող լրացուցիչ անհարմարությունների, բացասական ազդեցությունների, որոնք իրենց հետևանքը կարող են ունենալ նաև աշխատակազմի (մասնավորապես ղեկավար կազմի) վրա՝ հանգեցնելով դրա անդամների մոտ լարվածության, անհանգստության, բացասական հույզերի և ապրումների ի հայտ գալուն:

Իրավաբանական անձի աշխատակազմի անդամներին պատճառված նյութական արտահայտություն չունեցող բացասական հետևանքները կարող են հաշվի առնվել իրավաբանական անձին ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելու հարցում, երբ այդպիսի հետևանքները նրանց մոտ վրա են հասնում՝ պայմանավորված կազմակերպությունում աշխատելու, աշխատակազմի անդամ ու համակարգի մասնիկ հանդիսանալու, այլ ոչ թե ուղղակիորեն որոշակի անհատին (թեկուզ որպես աշխատող) վերագրելի անձնային հանգամանքներով:

Սա բխում է նրանից, որ կազմակերպության աշխատողները (աշխատակազմը) հանդիսանում են դրա՝ որպես համակարգի, տարր, և այդ կարգավիճակում նրանց պատճառած նյութական արտահայտություն չունեցող անհարմարությունները, անհանգստությունը, լարվածու-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

թյունը վերագրելի են կազմակերպությանը՝ համակարգին: Այլ դեպքերում ֆիզիկական անձի կրած տառապանքների դիմաց իրավաբանական անձին փոխհատուցում չնորհելը, գտնում ենք, արդարացված չէ:

Երբ իրավաբանական անձի իրավունքների խախտման հետևանքով ֆիզիկական անձանց պատճառված տառապանքները անհատական բնույթ են կրում, ավելին վերջիններս իրավաբանական անձի հետ ներկազմակերպական հարաբերությունների մեջ չեն գտնվում, ոչ նյութական վնասի դիմաց հատուցման պահանջի իրավունքը պատկանում է հենց ֆիզիկական անձանց: Օրինակ, երբ առևտրային կազմակերպության իրավունքների խախտման պատճառով դրա բաժնետերը որոշակի բացասական հույզեր ու ապրումներ է ունենում, ապա դա առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ իրավաբանական անձի իրավունքների խախտումը վերջնարդյունքում ազդեցություն է ունենալու անձամբ բաժնետիրոջ վրա, և հետևաբար այս պարագայում իրավաբանական անձին իր բաժնետիրոջ կրած տառապանքների համար փոխհատուցում հատկացնելը տրամաբանական չէ:

Վնասի հատուցման պահանջի իրավունք ունենալու հիմքում ընկած է վնաս կրելու հանգամանքը, և եթե անգամ այն հետևանք է իրավաբանական անձի իրավունքների խախտմանը, պահանջի իրավունքը պետք է պատկանի տուժած ֆիզիկական անձին: Ամեն դեպքում կան իրավիճակներ, երբ խմբի անդամներին պատճառված տառապանքները դրա շահերի սպասարկումն ապահովող իրավաբանական անձին ոչ նյութական վնասի դիմաց հատուցում տրամադրելու հիմքում ղնելն արդարացված է: Սա վերաբերում է այն կազմակերպություններին, որոնց ինստիտուցիոնալ առանձնացվածությունը իր անդամներից բարձր մակարդակի վրա չի գտնվում:

Այդպիսի կազմակերպությունների թվին են դասվում կուսակցությունները, կրոնական կազմակերպությունները, այլ հասարակական միավորումները, առևտրային կամ սպառողական կոոպերատիվները: Այս դեպքում կազմակերպության գործունեության իրականացումն ապահովվում է բացառապես դրա անդամը հանդիսացող անձանց կողմից, իսկ բուն կազմակերպության և դրա անդամների սերտաճման աստիճանը շատ բարձր է:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տվյալ դեպքում խմբի շահերի սպասարկումն իրականացնող կազմակերպության գործունեության խաթարումը հանգեցնում է դրա անդամների կողմից որոշակի տառապանքներ կրելուն, ինչը բացառապես պայմանավորված է խմբին պատկանելիության, խմբային շահի կրողը լինելու փաստով և այդ շրջանակից դուրս չի գալիս:

Եթե տառապանքները կրում են խմբի անդամներն իրենց այն շահերի խախտման պատճառով, որոնք սպասարկվում են տուժող կազմակերպության կողմից, ապա ողջամիտ է հատուցումը տրամադրել հենց կազմակերպությանը, որն այն կուղղի նույն շահերի սպասարկումն առավելագույնս ապահովելուն: Այդպես վարվեց ՄԻԵԴ-ը «Ազատություն և Ժողովրդավարություն» կուսակցությունն ընդդեմ Թուրքիայի գործով, երբ կուսակցությանը տրամադրեց ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցում՝ պայմանավորված կուսակցության ոչ իրավաչափ լուծարմամբ դրա անդամներին, հիմնադիրներին բացասական ապրումներ և անհանգստացածություն պատճառված լինելու հանգամանքով:

Վերը հիշատակված բնույթի կազմակերպությունների անդամները միավորվելով ձևավորում են յուրահատուկ հանրույթներ, իսկ առևտրային կազմակերպությունների մասնակիցների կրած ապրումներն ու անհանգստությունը առաջին հերթին պայմանավորված են դրա իրավունքների խախտման արդյունքում նրանց անձանական գույքային տիրույթին վերաբերող շահերի վնասման հնարավորության հետ, և այս տեսանկյունից, ինչպես նշել ենք, առևտրային կազմակերպությունների մասնակիցների կրած տառապանքները առաջինին ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելիս հաշվի առնելն արդարացված չէ:

Ամփոփելով, ցանկանում ենք կատարել հետևյալ արձանագրումները.

1) Իրավաբանական անձը հանդիսանում է վնասի հատուցման սահմանադրական իրավունքի լրիվ ծավալով իրավագոր:

2) Ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ իրավաբանական անձանց դեպքում ոչ նյութական վնասը դրսևորվում է վերջիններիս վերագրելի այն բացասական հետևանքների մեջ, որոնց նյութական ար-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

տահայտություն տալ հնարավոր չէ, սակայն դրանք հաշվի չառնելն էլ իր հերթին իրավաչափ համարվել չի կարող:

3) Իրավաբանական անձի մոտ ի հայտ եկող ոչ նյութական վնասը բխում է իրավունքի այդ սուբյեկտի բնույթից, և հետևաբար «Ֆիզիկական կամ հոգեկան տառապանքեր» եզրույթը այս պարագայում չի ապահովում քննարկվող երևույթի համընդգրկուն նկարագրությունը: - Նույն նկատառումներից ելնելով՝ «բարոյական վնաս» եզրույթի օգտագործումը ևս խոցելի է:

Իրավաբանական անձանց պատճառված ոչ նյութական վնասի դրսևորումներ կարող են հանդիսանալ անորոշությունը որոշումներ կայացնելիս, կազմակերպության գործունեության խաթարումը, կազմակերպության գործարար համբավի արատավորման արդյունք հանդիսացող անբարենպաստ հետևանքները և այլն, որոնք դրամական հաշվարկի ենթակա չեն: Սա նշանակում է, որ իրավաբանական անձին պատճառված ոչ նյութական վնասը կարելի է սահմանել որպես նրան (նրա գործունեությանը) վերագրելի բացասական հետևանք, որի դրամական հաշվարկման եղանակ գոյություն չունի, այսինքն՝ այն նյութական արտահայտությունից զուրկ է:

4) Իրավաբանական անձին ոչ նյութական վնասի դիմաց հատուցում տրամադրելու հարցերում առաջին հերթին պետք է շարժվել իրավաբանական անձի և իր մասնակիցների՝ իրավունքի առանձին սուբյեկտներ լինելու հանգամանքից և վերջինի կրած տառապանքները չդնել առաջինին ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելու հիմքում:

Երբ իրավաբանական անձի իրավունքների խախտման հետևանքով դրա անդամներին (ֆիզիկական անձանց խմբին) պատճառվում են բացասական ապրումներ կամ հույզեր, որոնք **անմիջապես պայմանավորված են** սովորաբար իրավաբանական անձի կողմից իրացվող խմբային շահի կրողը լինելու հանգամանքով, ապա նրանց պատճառված նման հետևանքների դիմաց խմբային շահը սպասարկող իրավաբանական անձին փոխհատուցում տրամադրելը ընդունելի մոտեցում է:



### Օգտագործված գրականության ցանկ

1. Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան; Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ- Եր.: Տիգրան Մեծ, 2016:
2. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 17.12.19 թ.-ին ընդունված թիվ ՍԴՈ-1497 որոշում:
3. Բեքմեզյան Գ. Հ., «Արտապայմանագրային հարաբերություններ»; Երևան, ԵՊՀ հրատարակչություն; 2009 թ.:
4. 05 մայիսի 1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգիրք:
5. 01 հուլիսի 1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք:
6. 06 դեկտեմբերի 1985 թվականին ընդունված վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք:
7. Парыгина Н. Н., Компенсация нематериального вреда как способ защиты права юридического лица на деловую репутацию, Вестник Омского университета. Серия «Право». 2013. № 4 (37), <https://cyberleninka.ru/article/n/kompensatsiya-nematerialnogo-vreda-kak-sposob-zaschity-prava-yuridicheskogo-litsa-na-delovuyu-reputatsiyu/viewer> (05.10.2020թ.):
8. Определение конституционного суда Российской Федерации от 04.12.2003 г. N 508-О «Об отказе в принятии к рассмотрению жалобы гражданина Шлафмана Владимира Аркадьевича на нарушение его конституционных прав пунктом 7 статьи 152 Гражданского кодекса Российской Федерации» ; <http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&prevDoc=102137688&backlink=1&&nd=102087813> (05.10.2020 թ.):
9. Litvinoff S., Moral Damages, Louisiana Law Review, volume 38|number 1 (1977); <https://digitalcommons.law.lsu.edu/cgi/viewcontent.cgi?article=4310&context=lalrev> (05.10.2020թ.):

10. *Comingersoll S.A. v Portugal* [GC], no. 35382/97, ECHR 2000-IV; <https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22itemid%22%3A%22001-58562%22%7D> (05.10.2020 թ.):
11. *Freedom and Democracy Party (ÖZDEP) v. Turkey* [GC], no. 23885/94, ECHR 1999-VIII; <http://hudoc.echr.coe.int/fre?i=001-58562> (05.10.2020 թ.):
12. *Нешатаева Т.Н., Старженецкий В.В.* Возмещение нематериального ущерба в пользу юридического лица в деле компании «Комингерсоль» против Португалии// Вестник ВАС РФ №2 от 10 февраля 2001 года; <http://www.szrf.ru/szrf/doc.phtml?nb=107&issid=1072001002000&docid=18&fbclid=IwAR2medVI4QKz7zdi8AaA0Ywh9OgTPXS90RgMSF16zAcZ0FWFxmVpNjfnuE> (05.10.2020 թ.):
13. Տ.գ.դ, պրոֆ. Սուվարյան Յու.Մ.-ի ընդհանուր ղեկավարությամբ և խմբագրությամբ «Մենջմենթ» / (Երկրորդ լրացված, բարեփոխված հրատարակություն), - Եր.: Տնտեսագետ, 2002 թ.:

### ЮРИДИЧЕСКОЕ ЛИЦО КАК НОСИТЕЛЬ ОСНОВНОГО ПРАВА НА ВОЗМЕЩЕНИЕ ВРЕДА: ПРОБЛЕМЫ НЕМАТЕРИАЛЬНОГО ВРЕДА

**Арман Григорян**

ЕУ, кафедра Правоведения, аспирант

Данная сатья посвящена вопросам юридического лица, как будучи носителем основного права на возмещение вреда. Основным предметом обсуждения статьи является возможность юридического лица быть носителем данного основного права касаясь нематериального вреда, учитывая также практику европейского суда по правам человека.

Изучение этих вопросов, мы считаем, поможет определить четкий круг носителей основного права на возмещение вреда и тем самым избежать нарушения их прав.

**Ключевые слова:** Юридическое лицо, нематериальный вред, правовая природа, компенсация, равенство.

JURISTIC PERSON AS AN HOLDER OF FUNDAMENTAL RIGHT TO  
COMPENSATION: ISSUES CONCERNING NON-PECUNIARY DAMAGE

**Arman Grigoryan**

EU, Chair of Law, Postgraduate student

The article is devoted to the issues concerning a juristic person being a holder of the fundamental right to compensation. The main subject matter of the article is the possibility of a juristic person to be a holder of the mentioned fundamental right as regards the non-pecuniary damage, also taking into consideration the practice of European court of human rights.

The examination of such issues, we consider, would be useful to determine the accurate scope of the holders of the fundamental right to compensation and avoid the violation of their rights.

**Keywords:** Juristic person, non-pecuniary damage, legal nature, compensation, equality.

*Տրվել է տպագրության՝ 25.09.2020թ.*

*Գրախոսվել է՝ 27.10.2020թ.*

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

#### **Զոհրակ Ապրեսյան**

ԵՀ, Իրավագիտության ամբիոն, ասպիրանտ  
zohrak.apresyan@gmail.com, +374 93 410593

Հոդվածում խոսվում է սեփականության իրավունքի սահմանափակման ամենախիստ տեսակի՝ սեփականությունից զրկման սահմանադրական ինստիտուտի մասին, որի շրջանակներում ներկայացվում են դրա հասկացությունը, հատկանիշները, կիրառման իրավաչափության պայմանները, այդ թվում՝ սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխիք հանդիսացող սեփականությունից զրկման դատական կարգի ապահովումը: Հոդվածում անդրադարձ է կատարվում նաև սեփականությունից զրկման եզրույթի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանություններում արտահայտված առանձնահատկություններին և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված սեփականության իրավունքի հարկադիր դադարման առանձին տեսակների սահմանադրականության հարցին:

**Հիմնաբառեր.** *Սեփականության իրավունք, իրավունքի սահմանափակում, սեփականությունից զրկում, դատական կարգ, իրավունքի անհատույց դադարեցում, հարկադիր կատարում:*

Արդի հասարակությունում գրեթե ցանկացած անձի պահանջմունքների բավարարման համար կարևորագույն նշանակություն ունի սեփականության իրավունքով որոշակի զույքի պատկանելիությունը վերջինիս: Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքը նախատեսված է երկրի բարձրագույն իրավական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտով: Պետությունը պարտավոր է ինչպես պաշտպանել սեփականատիրոջ իրավունքները երրորդ անձանց ոտնձգություններից, այնպես էլ չմիջամտել սեփականատիրոջ կողմից սեփականության իրավունքի իրականացմանը:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սեփականության իրավունքը հանդիսանում է մարդու հիմնական իրավունքներից մեկը, իսկ դրա անխոչընդոտ իրականացման համար պետությունն ապահովում է մի շարք երաշխիքներ: Սակայն կարող են լինել դեպքեր, երբ սեփականության իրավունքի իրականացումը վնաս հասցնի հասարակության այլ անդամների իրավունքներին և օրինական շահերին, այդ թվում նաև՝ նրանց սեփականության իրավունքին: Հետևապես, առաջ է գալիս որոշակի չափով սեփականության իրավունքի սահմանափակումներ սահմանելու անհրաժեշտություն, սակայն այդ սահմանափակումները պետք է ուղղված լինեն միայն հստակ սահմանաված որոշակի նպատակների իրականացմանը, լինեն բավարար դրանց հասնելու համար և չխախտեն սեփականատիրոջ իրավունքները: Այսինքն՝ սեփականության իրավունքի սահմանափակումներն առնվազն պետք է ունենան հստակ որոշված նպատակ և ամրագրման կոնկրետ ձև:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրությունը սահմանում է, որ *սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով [1]:*

Սահմանադրությամբ սահմանված սեփականության իրավունքի սահմանափակման պայմանների ճշգրիտ պահպանումը արդար հավասարակշռություն է մտցնում հասարակության անդամների շահերի միջև, խոչընդոտում իրավունքի չարաշահման հնարավորությանը և պաշտպանում հասարակական հարաբերություններում անձանց իրավունքները:

Բայցևայնպես, սեփականության իրավունքի սահմանափակումը պետք է լինի հստակ և չիմաստագրկի այդ իրավունքի էությունը, չզրկի սեփականատիրոջն այդ իրավունքով տրված հնարավորություններից: Սահմանադրական դատարանը ևս անդրադառնում է սեփականության իրավունքի սահմանափակման սահմաններին՝ նշելով դրա իրականացման պայմանները, մասնավորապես՝ ՍԴՈ-1340 որոշմամբ սահմանվում է, թե որ պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում է հնարավոր սահմանափակել անձի սեփականության իրավունքը, այն է՝

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- սեփականության իրավունքի սահմանափակում կարող է սահմանվել միայն օրենքով (խոսքը վերաբերում է իրավական օրենքին),
- սեփականության իրավունքի սահմանափակումը հնարավոր է միայն կոնկրետ նպատակով, այն է՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանություն,
- սեփականության իրավունքի սահմանափակումը պետք է համապատասխանի որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին և չպետք է գերազանցի ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները [6]:

Սեփականության իրավունքի սահմանափակման ամենախիստ դրսևորումն է իրենից ներկայացնում անձին սեփականությունից զրկումը, ինչի մասին էլ կխոսվի սույն հոդվածի շրջանակներում:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին արձանագրության 1-ին հոդվածը սահմանում է սեփականության իրավունքի նկատմամբ կիրառվող միջամտության 2 տեսակ՝ սեփականությունից զրկում (deprivation of property)՝ նախատեսված հոդվածի 1-ին պարբերության 2-րդ նախադասությամբ, և սեփականության իրավունքի նկատմամբ վերահսկողություն (control of the use of property)՝ նախատեսված նույն հոդվածի 2-րդ պարբերությամբ:

Սեփականությունից զրկումը Կոնվենցիայի իմաստով, ի համեմատ Սահմանադրության<sup>1</sup>, մեկնաբանվում է բավական լայն: Այն ներառում է սեփականության հարկադիր փոխանցում մեկ սուբյեկտից այլ սուբյեկտի: Այն կարող է դրսևորվել ինչպես սեփականության իրավունքն անմիջականորեն վերցնելով (ուղղակի սեփականագրկում) և վաճառելուն պարտադրելով (անուղակի սեփականագրկում): Օրինակ՝ Håkansson and Stuesson գործով դիմողը աճուրդում գնել էր հողամաս, բայց

---

<sup>1</sup> Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի որոշումներում սեփականությունից զրկման ինստիտուտին տրված է այլ բնորոշում, որին կանդիդատնանք ստորև:

ստիպված էր այն վաճառել, քանի որ իշխանությունները հրաժարվեցին տալ նրան թույլտվություն, որն անհրաժեշտ էր հողամասը պահպանելու համար: Արդյունքում՝ իշխանության կողմից թույլտվություն տալու մերժումը պարտադրեց դիմողին վաճառել հողամասը:

Ֆորմալ սեփականության գրկումից բացի հողվածի կիրառության տակ է մտնում նաև **փաստացի (de facto) սեփականագրկումը**: Փաստացի սեփականագրկման հետևանքները նույնն են ինչ ֆորմալ սեփականագրկման դեպքում: Այլ խոսքով՝ տեղի է ունենում սեփականության իրավունքի փոխանցում՝ չհիմնված իրավական ընթացակարգի վրա: Մինևույն ժամանակ այն տարբերվում է սեփականության իրավունքի ոչնչացումից, քանի որ այդ պարագայում սեփականության իրավունքի փոխանցումը բացակայում է: ՄԻԵԴ-ը փաստացի սեփականագրկման առկայությունը հաստատել է *Papamichalopoulos and others v. Greece* գործով կայացված որոշմամբ, որտեղ դիմողը չէր կարող որևէ կերպ օգտվել իր գույքից, վաճառել, կտակել, կամ նվիրել: Նա գույքի նկատմամբ չունեի հասանելիություն [11, par. 43]:

**Սեփականության իրավունքի նկատմամբ վերահսկողության** դեպքում անձի սեփականության իրավունքը չի դադարում: Սեփականատերը շարունակում է հանդիսանալ գույքի սեփականատեր, սակայն սահմանափակվում է վերջինիս՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի իրավազորությունների իրականացումը: Թեև ՄԻԵԴ-ի որոշումներում նշվում է սեփականության օգտագործման սահմանափակման մասին (*use of property*), բայց խոսքը սեփականության իրավունքի բոլոր իրավազորությունների մասին է: Այսինքն՝ կարող են սահմանափակվել ինչպես սեփականտիրոջ գույքը տնօրինելու, այնպես էլ մյուս հնարավոր իրավազորությունները:

Ընդ որում՝ սեփականության իրավունքի նկատմամբ վերահսկողություն իրականացվում է 2 դեպքում՝ հանուն ընդհանուր շահի և հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

Դատական պրակտիկայի ընթացքում ձևավորվել է նաև միջամտության երրորդ տեսակը, որն իրականում հանդիսանում է վերոնշյալ երկու տեսակների խառնուրդը՝ **սեփականության իրավունք վերահս-**

**Կողություն կազմող սեփականությունից զրկումը:** Տվյալ տեսակն առկա է այն դեպքում, երբ սեփականության փոխանցումը այլ անձի դիտարկվում է ոչ թե որպես սեփականության իրավունքից զրկում, այլ վերահսկողություն:

Սա գործում է այն ժամանակ, երբ պետությունը հարկադրում է գործարքներ կնքել անձանց միջև: Նման օրինակ է սնանկությունը, որի դեպքում սնանկ ճանաչվածը կորցնում է իր գույքը, սակայն դա կազմում է ոչ թե սեփականությունից զրկում, այլ վերահսկողություն [12, page 26]:

Ինչպես արդեն նշեցինք՝ ՀՀ իրավական համակարգում սեփականության «**զրկում**» եզրույթին այլ՝ ավել նեղ մեկնաբանություն է տրվում, քան դա առկա է Կոնվենցիայում և ՄԻԵԴ-ի որոշումներում:

Նախ անդրադառնանք դրա ձևակերպանը մայր օրենքում: Այսպես՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ *ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի* [1]:

Սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկով ուղղակիորեն նշել է, որ սեփականությունից զրկումը բնութագրվում է որպես **պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն** [7], իսկ ՍԴՈ-903 որոշմամբ սահմանել է սեփականությունից զրկելու պարտադիր տարրերը՝

- *սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին և համաձայնությանը հակառակ տվյալ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի **անհատույց դադարեցում**,*
- *սեփականությունից զրկումը կիրառվում է **որպես պատասխանատվության միջոց**,*
- *սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ ունեցած՝ փրկապետման, փնտրիման և օգտագործման իրավագործությունների միաժամանակյա և լիակատար դադարում՝ **առանց շարունակականության երաշխավորման*** [8]:



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Եթե սեփականության իրավունքի դադարումը չի ուղեկցվում վերոնշյալ պայմանների հետ, ապա այդպիսի դադարումը չի հանդիսանում սեփականության իրավունքի զրկում:

Առանձնահատուկ ուսումնասիրության անհրաժեշտություն ունի **միայն դատական կարգով** սեփականությունից զրկման հնարավորության սահմանդրական կարգավորումը: Առանձին հարաբերություններ կարգավորող իրավանորմերի սահմանադրականության հարցը որոշելիս Սահմանադրական դատարանն անդրադառնում է այդ հանգամանքին: Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հնարավորություն է տալիս գրավառուին **առանց դատարան դիմելու** բռնագանձում տարածել գրավի առարկայի վրա, եթե առկա է դրա վերաբերյալ կողմերի գրավոր համաձայնությունը, այդ թվում՝ այն կարող է նաև արտացոլված լինել գրավի պայմանագրում [3]:

Վերոնշյալ կարգավորմանն անդրադառնալիս Սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ-1294 որոշմամբ արձանագրում է, որ **գրավի պայմանագրով կամ հետագայում տրված համաձայնությամբ գրավապուն տալիս է համաձայնություն այն մասին, որ հիմնական պարտավորության չկատարման դեպքում իրեն պատկանող գրավադրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է դադարել:**

Բացի դրանից՝ գրավապուն տալիս է իր համաձայնությունը այն մասին, որ հիմնական պարտավորության չկատարման դեպքում իր գույքի վրա բռնագանձում տարածվի **արտադատական կարգով** [9]:

Ինչպես հետևում է վերոգրյալից՝ արտադատական կարգով գույքի բռնագանձումը հնարավոր է **միայն գրավատուի կողմից տրված համաձայնությամբ:** Ընդ որում՝ այդ համաձայնությունը կարող է տրվել ինչպես գրավի պայմանագրով, այնպես էլ՝ հետագայում տրված գրավոր համաձայնությամբ: Գրավատու սեփականատիրոջ իրավունքների պաշտպանության հավելյալ երաշխիքի ապահովման տեսանկյունից օրենքով ուղղակիորեն նշվում է այդպիսի համաձայնության տրման գրավոր ձևը: Իսկ ինչպես արդեն նշվել է՝ սեփականությունից զրկման իսնտիտուտի առկայության համար անհրաժեշտ է, որ սեփականության իրավունքի դադարումը տեղի է ունենա **սեփականատիրոջ համաձայնությանը հակառակ:** Հետևապես, գրավի առարկայի նկատ-

մամբ արտադատական կարգով բռնագանձում իրականացնելու գրավատուի կողմից տրված համաձայնության առկայության պայմաններում՝ գրավատուի՝ գրավի առարկայի նկատմամբ արտադատական կարգով բռնագանձման իրականացման միջոցով **սեփականության իրավունքի դադարումը չի հանդիսանում սեփականությունից զրկում**: Ընդ որում՝ տվյալ դեպքում գրավատուն ինչպես տալիս է իր համաձայնությունը ապագայում սեփականության իրավունքի հնարավոր դադարման, այնպես էլ՝ բռնագանձման իրականացման արտադատական կարգի վերաբերյալ:

Սեփականությունից զրկման ինստիտուտի համատեքստում կարևոր նշանակություն ունի նաև հանրային իրավական դրամական միջոցների բռնագանձման իրավական կարգավորումը: Տվյալ դեպքում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանվում է նաև անբողոքարկելի վարչական ակտերի արտադատական կատարման կարգը [4]:

Օրենսդրական վերոնշյալ կարգավորումից կարելի է ենթադրել, որ պրակտիկայում անձի սեփականության իրավունքը կարող է դադարել նաև անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա՝ առանց դատարանի դիմելու: Հետևապես, անհրաժեշտություն է ծագում գնահատելու՝ արդյո՞ք սեփականության իրավունքի դադարումը դրսևորվում է սեփականությունից զրկման տեսքով, և եթե այո, ապա արդյո՞ք չի խախտվում սեփականությունից զրկման դատական կարգի ապահովման սահմանադրական պահանջը:

Ընդ որում՝ արտադատական կարգով անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա բռնագանձումների իրականացումը օրենսդրական երկար ճանապարհ է անցել: Սկզբում՝ վարչական մարմնի պահանջի հիման վրա՝ վարչական դատարանն արձակում էր վճարման կարգադրություններ, որոնք էլ և ներկայացվում էին հարկադիր կատարման: Կարծում ենք՝ նման ընթացակարգի նպատակը ձևական առումով սեփականության իրավունքի զրկման դատական կարգի ապահովումն էր: Տվյալ կարգավորմանն անդրադառնալով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **վճարման կարգադրության ինստիտուտն ինքնին դատական պաշտպանության վրա բովանդա-**

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*կային առումով չէր ազդում, քանզի նիստը չէր հրավիրվում, կողմերը ելույթ չէին ունենում, ակտի օրինականությունը չէր ստուգվում [10]:*

Այնուհետև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածը լրացվեց նոր՝ 1.1 մասով, որով սահմանվեց հանրային իրավական դրամական պահանջի չափը (200,000 ՀՀ դրամ), որի չգերազանցման դեպքում անբողոքարկելի վարչական ակտերը ենթակա են կատարման՝ առանց վարչական մարմնի կողմից դատարան դիմելու [5]:

Ներկայումս վերոնշյալ սահմանաչափի վերաբերյալ վերապահումը նույնպես ուժը կորցրել է, և անբողոքարկելի դարձած վարչական ակտերը միանգամից ուղարկվում են հարկադիր կատարման ծառայություն՝ դրանց հարկադիր կատարումն ապահովելու համար:

Սահմանադրական դատարանն անդրադարձել է տվյալ խնդրին իր թիվ ՍԴՈ-1210 որոշմամբ արձանագրելով, որ *տուգանքի նշանակումը, ինքնին, որպես պատասխանատվության միջոց, հանդես չի գալիս որպես սեփականագրկում*: Մինչույն ժամանակ վերջինս նշում է նաև, որ անձն իրավունք ունի իր **կամքով** վճարել տուգանքը՝ որպես պարտավորության կատարում, կամ բողոքարկել ընդունված վարչական ակտը [10]:

Այսինքն՝ այն դեպքում, երբ անձը կամովին կատարի տուգանքով նախատեսված պարտականությունը, ապա առկա չի լինի սեփականության իրավունքի գրկում, քանի որ սեփականության իրավունքի դադարումը տեղի չի ունենա սեփականատիրոջ **կամքին հակառակ**: Իսկ եթե անձը չի կատարում վարչական ակտով նախատեսված պարտականությունը՝ անկախ այն հանգամանքից վերջինս բողոքարկել է ընդունված վարչական ակտը, թե՛ ոչ, դրա հարկադիր կատարումն ինքնին նշանակում է սեփականության իրավունքի դադարում՝ **սեփականատիրոջ կամքին հակառակ**:

Եթե անձը չի բողոքարկում իր նկատմամբ կիրառված տուգանքը դատարանում, ապա դա ոչ մի դեպքում չի կարող մեկնաբանվել որպես սեփականության իրավունքի դադարման վերաբերյալ անձի համաձայնություն, հատկապես երբ տուգանք նախատեսող վարչական ակտն ուղարկվում են **հարկադիր** կատարման: Այլ խոսքով՝ վարչական ակտը

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

չբողոքարկելը չի կարող դիտարկվել որպես անձի՝ այդ ակտի հիման վրա իր սեփականության իրավունքի դադարման մասին կամքի և համաձայնության առկայության կանխավարկած:

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը կատարում է կարևոր հարցադրում, այն է՝ արդյո՞ք տուգանքի բռնագանձումը վարչական ակտի հիման վրա (առանց դատարան դիմելու) հանգեցնում է Սահմանադրությամբ նախատեսված սեփականությունից բացառապես դատական կարգով զրկելու սահմանադրական պահանջի խախտման» [10]: Որից հետո Սահմանադրական դատարանը մեջբերում է Janosevic v. Sweden գործով վճռի 106-րդ կետից մի հատված, որը հնարավոր է համարում կիրառման միջոցառումներն իրականացումը վարչական իշխանությունների որոշումների հիման վրա մինչև քննության առարկա հարկային վճարումներ կատարելու անձի պարտավորության հաստատումը դատարանի կողմից: Միևնույն ժամանակ այդ վճռով պետություններից պահանջվում է ողջամտորեն սահմանափակել նման կիրառումը, ինչը կպահպանի արդար հարաբերակցություն շահերի միջև [12]:

Միևնույն որոշմամբ Սահմանադրական դատարանը նշում է, որ տուգանքի արտադատական կարգով բռնագանձումը հանդիսանում է **վերահսկողություն սեփականության օգտագործման նկատմամբ** [10]:

Այսինքն՝ Սահմանադրական դատարանը արտադատական կարգով տուգանքի բռնագանձումը մենկաբանում է որպես Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված սահմանափակում: Սակայն արտադատական կարգով նման բռնագանձումների իրականացումն անհրաժեշտ է դիտարկել նաև Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասի համատեքստում՝ համեմատելով տուգանքների հարկադիր բռնագանձման կարգավորումը Սահմանադրական դատարանի կողմից թիվ ՍԴՌ-903 որոշմամբ մատնանշված սեփականության զրկման պայմանների հետ: Մասնավորապես՝ անբողոքարկելի վարչական ակտի հարկադիր կատարման պարագայում՝

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- վարչական ակտը կամովին չկատարած սեփականատիրոջ կամքին և համաձայնությանը հակառակ վերջինիս սեփականության իրավունքն **անհատույց դադարեցվում է**,
- սեփականության իրավունքի դադարումը տուգանքով կիրառվում է **որպես պատասխանավության միջոց**,
- սեփականության իրավունքի բոլոր իրավագործությունները միաժամանակ և լիակատար դադարում են՝ **առանց շարունակականության երաշխավորման**:

Այսինքն՝ անբողոքարկելի վարչական ակտերի հարկադիր կատարման արդյունքում Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասի և Սահմանադրական դատարանի կողմից այդ նորմին տրված մեկնաբանության տեսանկյունից տեղի է ունենում **սեփականության զրկում**: Իսկ սեփականության զրկման իրականացման համար Սահմանադրությամբ նախատեսված է բացառապես դատական կարգ:

Բնականաբար, Սահմանադրական դատարանը թիվ ՍԴՌ-1210 որոշմամբ արձանագրում է այն հանգամանքը, որ տուգանքներով բռնագանձումների հարկադիր իրականացման դեպքում պետք է ապահովվեն անձի դատական պաշտպանության անհրաժեշտ և բավարար երաշխիքներ: Ընդ որում՝ անձինք կարող ենք բողոքարկել իրենց նկատմամբ նշանակված տուգանքներն ինչպես վերադասության կարգով, այնպես էլ դատարանում: Սակայն անձինք ցանկացած պարագայում իրենց բոլոր հիմնական իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք ունեն: Անձի դատական պաշտպանության իրավունքը սահմանվում է Սահմանադրությամբ, և այն ենթակա չէ սահմանափակման: Այսինքն՝ բոլոր դեպքերում՝ ինչպես և այլ իրավունքների պաշտպանության, այնպես էլ սեփականության իրավունքի պաշտպանության համար անձինք կարող են դիմել դատարան:

Իսկ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասից ուղղակիորեն հետևում է, որ անձին սեփականությունից զրկելը պետք է ուղեկցվի **բացառապես դատական կարգով**: Այսինքն՝ սեփականության իրավունքի զրկման պարագայում պետք է մասնակցի արդարադատություն իրականացնող մարմին: Ընդ որում՝ վերջինս չպետք է ունենա ձևական

մասնակցություն, հակառակ դեպքում բովանդակային առումով կիմաստագրվի դատական պաշտպանության պարտադիր պահանջը:

Ճիշտ է՝ Janosevic v. Sweden գործով ՄԻԵԴ-ը հնարավոր է համարում վարչական ակտերի կիրառման իրականացումը մինչև դատական ակտով պարտավորության առկայության հաստատումը: Սակայն, նախ, դա անմիջականորեն չի վերաբերում **արտադատական կարգով** տուգանքների հարկադիր կատարմանը, և, երկրորդ, Սահմանադրությամբ նախատեսված է այլ՝ մարդու իրավունքների պաշտպանության տեսնակյունից ավելի բարենպաստ պահանջ՝ սեփականությունից զրկումը միայն դատական կարգով:

Դա նշանակում է, որ անկախ այն հանգամանքից անձն ինքը կրող քարկի իր նկատմամբ գումարի բռանգանձման պահանջ նախատեսող ոչ բարենպաստ վարչական ակտը, թե՛ ոչ, այդ ակտի օրինականությունը պետք է ստուգվի դատարանի կողմից՝ հաշվի առնելով ոտնձգվող իրավունքի կարևորությունը:

Ընդ որում՝ սահմանելով սեփականությունից զրկման դատական կարգ՝ Սահմանադրությունն ուղղակիորեն նախանշում է, որ սեփականությունից զրկելուն ուղղված **գործընթացը**, որի արդյունքը սեփականության իրավունքի հարկադիր դադարումն է, **իրականացվում է դատարանի մասնակցությամբ**: Այսինքն՝ դատարանի մասնակցությունը՝ սեփականության զրկմանն ուղղված **գործընթացի անցկացման կարգը**, որի ավարտին կայացվում է դատական ակտ, **նախորդում է սեփականության փաստացի զրկման պահին**՝ սեփականության իրավունքի հարկադիր դադարմանը:

Վերոնշյալից հետևում է, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասը ոչ միայն կրկին անգամ ամրագրում է աձնի հիմնական իրավունք հանդիսացող սեփականության իրավունքի դատական պաշտպանության երաշխիքը, այլ նաև սահմանում է սեփականության զրկման ընթացակարգին **դատարանի պարտադիր մասնակցությունը**: Սահմանադրությունում **«բացառապես դատական կարգով»** եզրույթի ամրագրումն ինքնանպատակ չէ, և այդ ձևակերպման բացակայության դեպքում էլ անձը բոլոր դեպքերում իր հիմնական իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում կկարողանար սեփականության

գրկումից հետո դիմել դատական պաշտպանության: Իսկ ներկայումս առկա սահմանումից ուղղակիորեն հետևում է, որ **արտադարական կարգով սեփականությունից զրկումը (Սահմանադրական դատարանի կողմից սահմանված տարրերի համապետություն) հակասում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասին:**

Ընդ որում՝ ինչպես արդեն նշեցինք՝ Սահմանադրությունը **«բացառապես դարական կարգով»** եզրույթով սահմանում է սեփականության զրկման կարգը, այսինքն՝ փաստացի սեփականության զրկմանը նախորդող գործընթացը: Դրանից հետևում է, ոչ միայն այն եզրահանգումը, որ առանց դատարանի մասնակցության ապահովման անձին չի կարելի զրկել սեփականությունից, այլ նաև սեփականության զրկումը կարող է բացառապես հաջորդել դատական ընթացակարգին:

Ընդհանուր առմամբ վերոգրյալ մեկնաբանություններից հետևում է նաև, որ Սահմանադրությունը տվյալ հարցում սահմանում է սեփականության իրավունքի պաշտպանության ավելի բարձր մակարդակ, քան Կոնվենցիան: Թեև Սահմանադրությամբ կարելի է սահմանել առաձնին դեպքերում (խոսքը վերաբերում է միայն Կոնվենցիայով և ՄԻԵԴ պրակտիկայում նախատեսված դեպքերին) սեփականությունից զրկման հնարավորություն՝ առանց դատարանի պարտադիր մասնակցության, սակայն դա ակնհայտորեն կհանդիսանա հետքայլ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Կարծում ենք, որ անհրաժեշտ է պահպանել Սահմանադրությամբ նախատեսված սեփականության իրավունքի պաշտպանության ներկայիս նշածողը և ամրապնդել այն ներպետական դատական պրակտիկայով: Զուգահեռաբար անհրաժեշտ է խուսափել միջազգային իրավունքի կիրարկումից այն մասով, որով այն սահմանում է մարդու իրավունքների պաշտպանության ավելի նվազ երաշխիքներ, քան մեր ներպետական օրենսդրությունը:

Միանշանակ արտադատական կարգով տուգանքների բռնագանձումը օպերատիվ և քիչ ծախսատար միջոց է պետության համար, ինչպես նաև զգալիորեն թեթևացնում է դատական համակարգի ծանրաբեռնվածությունը, սակայն մյուս կողմում առկա է բարձրագույն արժեք հանդիսացող անհատի հիմնական իրավունքի անհրաժեշտ պաշտպա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

նությունը, որը և տվյալ դեպքում չի պահպանվում Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասի համատեքստում:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ անձին սեփականությունից զրկման սահմանադրական կարգի ապահովման համար անհրաժեշտ է, որ սեփականությունից զրկումը իրականացվի բացառապես դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա: Ընդ որում՝ այդ դատական ակտը ժամանակագրական առումով պետք է նախորդի սեփականության զրկման փաստին:

### Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն (06.12.2015թ. փոփոխություններով)
2. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա (ընդունված՝ 04.11.1950թ.)
3. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունված՝ 05.05.1998թ.)
4. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք (ընդունված՝ 05.05.1998թ.)
5. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք (ընդունված՝ 18.02.2014թ.)
6. Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1340 որոշումը
7. Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-630 որոշումը
8. Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-903 որոշումը
9. Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1294 որոշումը
10. Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1210 որոշումը
11. Papamichalopoulos and others v. Greece
12. Janosevic v. Sweden 23.07.2002 (34619/97)
13. The European Convention on Human Rights and property rights, Council of Europe, 1998



---

КОНСТИТУЦИОННЫЕ УСЛОВИЯ ЛИШЕНИЯ СОБСТВЕННОСТИ

**Зорак Апресян**

ЕУ, кафедра Правоведения, аспирант

В статье рассматривается наиболее жесткая форма ограничения права собственности - конституционный институт лишения собственности, в контексте которого представлены его понятие, характеристики и условия правомерности применения, включая обеспечение судебного порядка при лишении собственности, что является конституционной гарантией защиты прав собственности. В статье также рассматриваются особенности, выраженные в комментариях Европейского Суда по правам человека о термине “лишения собственности” и конституционность некоторых видов принудительного прекращения прав собственности, предусмотренных законодательством РА.

**Ключевые слова:** Право собственности, ограничение права, лишение собственности, судебный порядок, безвозмездное прекращение права, принудительное исполнение.

THE CONSTITUTIONAL CONDITIONS OF DEPRIVATION OF  
PROPERTY

**Zohrak Apresyan**

EU, Chair of Law, Postgraduate student

This article deals with the most severe form of restriction of property right- the constitutional institution of the deprivation of property, in the context of which are presented the notion, the characteristics, and the conditions of its lawful application, including the provision of judicial order of deprivation of property, which is a constitutional guarantee of protection of right of ownership. The article also discusses specificities expressed in commentaries of the European Court of Human Rights on the term

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

“deprivation of property” and constitutionality of certain types of compulsory termination of property right provided by the legislation of RA.

**Keywords:** Right of ownership, restriction of right, deprivation of property, judicial procedure, gratuitous termination of right, compulsory execution.

*Տրվել է պաշարության՝ 19.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 11.11.2020թ.*

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ԱՆՁԻ ԼՍՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԽԱԽՏԵԼԸ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ (ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ)

#### **Ձավեն Սմբադյան**

ԵՀ, իրավագիտության ամբիոն, հայցորդ  
zavensmbatyan@mail.ru, +374 99 469933

Սույն հոդվածում հանգամանորեն քննարկվում է անձի լսված լինելու իրավունքը խախտելը որպես վարչական ակտի անվավերության հիմք (վարչական իրավախախտումների համալրեքսպրում) հանդիսանալու հնարավորությունները, պրակտիկայում առկա խնդիրները, ամփոփվում է դատական պրակտիկան: Իրավահամեմատական մեթոդի օգտագործմամբ՝ պրակտիկայում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկվում են լուծումներ:

**Հիմնարարներ.** Վարչական ակտ, պատշաճ վարչարարություն, լսված լինելու իրավունք, անվավեր, վարչական իրավախախտում, օրենք, դատական ակտ:

Մարդու իրավունքների և ազատությունների ապահովմանն ու պաշտպանությանն ուղղված արդյունավետ իրավական միջոցների և պետական կառուցակարգերի ստեղծումը ժողովրդավարական և իրավական պետության կայացման կարևոր նախապայմաններից մեկն է:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված դրույթները յուրահատուկ նշանակություն են ձեռք բերում հատկապես պետական գործունեության այն ոլորտներում, որտեղ ինչ-որ չափով սահմանափակվում են մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, կամ պարզապես առնչվում են դրանց հետ: Նման շփումները հատկապես ակնառու են վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության ոլորտում, որն առնչվում է հասարակության գրեթե բոլոր շերտերի հետ:

Լսված լինելու իրավունքը կամ արդարացի լուսմների իրավունքը («audiatur altera pars», «audi alteram partem») հանդիսանում է մարդու

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

բնական կամ այլ կերպ ասած հիմնարար իրավունք, որի վարչաիրավական էությունից բխում է, որ չպետք է կայացվի վարչական ակտ առանց անձի հնարավորություն ընձեռելու ներկայացնելու իր դիքորոշումը հարցի վերաբերյալ [7, էջ 204]:

Այսպիսով՝ պատշաճ վարչարարության իրավունքը, լաված լինելու իրավունքի հետ մեկտեղ, բխում է իրավունքի գերակայության սկզբունքից՝ հանդիսանալով այդ հիմնարար ելակետային սկզբունքի արտացոլանքը, հետևանքը և պարտադիր պահանջներից մեկը:

Հատկապես կարևոր է նկատել, որ այս սկզբունքը դառնում է հիմաստագործի, եթե անձը իրավական հնարավորություն չունի առարկել իր նկատմամբ կիրառվելիք և իր շահերին միջամտող հանրային-իշխանական գործողությունների դեմ: Ավելին, լաված լինելու իրավունքը համընդգրկուն, հիմնարար սկզբունք է, որը մի շարք ձևական բնույթներ կրող տարբերություններով հանդերձ, որոնք ունեն ոչ կորդինալ բնույթ, պաշտպանվում է գրեթե բոլոր կայացած իրավական համակարգ ունեցող պետություններում: [6, էջ 263]

Եվրոպական երկրներում սույն ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող իրավունքը դիտվում է որպես «առարկայական ընթակարգային պահանջ», ինչպես նաև ընկալվում է որպես «հիմնարար իրավունք» «իրավունքի համընդհանուր սկզբունք», «պահանջ, որը ենթակա է պարտադիր պահպանման»: [4, էջ 55]

Ասվածի լույսի ներքո լաված լինելու իրավունքը հանդիսանում է վարչական վարույթի շրջանակներում ֆիզիկական և իրավաբանական անձանց տրվող ընթացակարգային երաշխիքների անկյունաքարը և պատշաճ վարչարարության հիմնական չափանիշներից մեկը:

Լաված լինելու իրավունքի ճիշտ իրացումը նպաստում է ոչ միայն անհատի իրավական պաշտպանության, այլ նաև գործի փաստական հանգամանքների պարզմանը:

Գործող Սահմանադրության 50-րդ հոդվածը, նախատեսելով պատշաճ վարչարարության իրավունքը, որպես մարդու սուբյեկտիվ իրավունք, դրա տարրերի շարքում առանձնահատուկ կերպով նախատեսել է նաև վարչական մարմինների կողմից անձանց լսելու սկզբունք-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

քը: Այդ սկզբունքի բովանդակությունը բացահայտվում է վկայակոչված հոդվածի 3-րդ մասում:

Վարչական մարմինների կողմից իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա հիմնված իրականացվող պատշաճ վարչարարությունը իրավական պետության ձևավորման և կայացման կարևոր նախապայմաններից մեկն է: Անձի լաված լինելու իրավունքը կամ այլ կերպ ասած արդարացի լուծման իրավունքն ապահովելը վարչական մարմնի պարտավորությունն է որպես վարչական լծակներով օժտված մարմին: Այդ լծակները վերջինիս տալիս են առավելություն վարչական մարմնի և անհատի փոխհարաբերություններում, որպիսի անհավասարությունը վերացնելուն է ուղղված նախքան վարչական ակտ ընդունելը անձին լսելու վարչական մարմնի պարտականությունը:

Լաված լինելու իրավունքի շուրջ կան իրավակարգավորումներ որոնց տրամաբանությունը հանգեցնում է այդ իրավունքի օբյեկտի իրականությունում գոյություն ունենալուն, բայց հստակ իրավակարգավորման մասով առկա է օրենսդրական բաց, սակայն Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանն այն դասել է պատշաճ վարչարարության հիմքերի շարքին: Նմանօրինակ դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը իր մի շարք որոշումներում:

Օրինակ՝ վարչական իրավախախտման պարագայում վարչական իրավախախտման արձանագրությունը հանդիսանում է վարչական վարույթի հարուցման հիմքը պայմանավորված վարչական մարմնի աշխատանքային գործունեության հետ (վարչական վարույթը հարուցվում է վարչական մարմնի նախաձեռնությամբ):

Առանձին տեսակի, այլ կերպ ասած հատուկ վարչական վարույթների վերբերյալ առանձնահատկությունները, որոնք չեն կարգավորվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, կարող են կարգավորվել այլ օրենքներով և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով:

Վերոհիշյալ դրույթով ամրագրվել է այն հանրաճանաչ սկզբունքը, համաձայն որի՝ «հատուկ օրենքը վերացնում է ընդհանուրի գործողությունը» (*lex specialis derogat legi generali*), ինչը նշանակում է, որ բոլոր

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

այն դեպքերում, երբ իրականացվելու է վարչական որևէ վարույթ, այն իրականացնող վարչական մարմինը պետք է պարզի, թե արդյոք գոյություն ունեն իրեն վերապահված լիազորությունների շրջանակի մեջ մտնող հարցերով իրականացվող վարչական վարույթը կարգավորող հատուկ օրենքներ, և եթե գոյություն ունեն, ապա պետք է որոշի, թե ինչ չափով է այդ հատուկ օրենքով կարգավորված իր կողմից իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները:

Այս աստիճանակարգումով պայմանավորված վարչական իրավախախտման վերաբերյալ վարչական վարույթի շուրջ ծավալվող հարաբերությունները կանոնակարգվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածը սահմանում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը պետք է կազմվի ենթադրյալ իրավախախտի ներկայությամբ, այն պետք է ստորագրվի նրա կողմից և վերջինիս պետք է բացատրվեն նույն օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները: Նման իրավակարգավորումը հետապնդում է անձի լսված լինելու իրավունքի երաշխավորման նպատակ, սակայն արդյո՞ք արձանագրությունը անձի ներկայությամբ չկազմելը հանգեցնում է անձի լսված լինելու իրավունքի խաթարման: Ասվածի պարզման համար նախ անհրաժեշտ է հասկանալ լսված լինելու իրավունքի էությունը:

Լսված լինելու իրավունքը անձի խոսքը լսելի դարձնելն է, գործի հանգամանքների վերաբերյալ անձի դիրքորոշումն ու կարծիքը հենց իրենից լսելը: Հետևապես չի կարելի պնդել, որ արձանագրությունը անձի ներկայությամբ չկազմելը հանգեցնում է վերջինիս լսված լինելու իրավունքի խաթարման:

Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներից մեկում (ՀՀ վճռաբեկ դատարանի 22.03.2019 թվականին կայացված թիվ ՎԴ/0150/05/16 որոշում:) ևս մեկ անգամ անդրադառնալով վարչական իրավախախտման արձանագրությունը ենթադրյալ իրավախախտի ներկայությամբ կազմելու հարցին ընգծել է, որ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտի ներկայությամբ կազմելու օրենսդրի պա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

հանջն ունի իմպերատիվ բնույթ, հետևապես արձանագրությունը պետք է կազմվի վերջինիս ներկայությամբ:

Այստեղ առաջանում է հարց, արդյո՞ք բոլոր այն դեպքերում, երբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվել է ենթադրյալ իրավախախտի բացակայությամբ և այդ պայամաններում անձը ենթարկվել է վարչական պատասխանատվության, այսինքն վերջինիս նկատմամբ կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին որոշում, կայացված որոշումը ոչ իրավաչափ է:

Ըստ էության, վարչական իրավախախտման արձանագրությունը ենթադրյալ իրավախախտի ներկայությամբ կազմվելն ունի ընթացակարգային բնույթ և ինչպես նախորդիվ նշեցի՝ այն հետապնդում է անձի լաված լինելու իրավունքի ապահովման նպատակ:

Միաժամանակ հարկ է նշել, որ ըստ դիմումի Մ. Ալոյանի ընդդեմ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործով 02.03.2007 թվականին կայացված ՀՀ վճռաբեկ դատարանի հ. 3-185 (ՏԴ) որոշմամբ վերջինս եկել է եզրահանգման, որ վարչական ակտը դատարանի կողմից կարող է անվավեր ճանաչվել միայն երկու փաստերի միաժամանակյա առկայության դեպքում, առաջին ակտը պետք է հակասի ՀՀ օրենքներին, երկրորդ այդ ակտով պետք է խախտվի այն վիճարկելու մասին դիմողի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքն ու (կամ) ազատությունը:

Իսկ մեկ այլ որոշմամբ էլ ՀՀ վճռաբեկ դատարանն (տե՛ս հ. 4Դ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը) արձանագրել է, որ վարչական ակտը վիճարկելիս դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/6781/05/12 վարչական գործով արտահայտել է հետևյալ կ դիրքորոշումը՝ «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ի տարբերություն նյութական իրավունքի պահանջների խախտման, ընթացակարգային պահանջների խախտումը միշտ չէ, որ պետք է անվերապահորեն հանգեցնի վարչական ակտի վերացմանը հետևյալ պատճառաբանությամբ.

Գործող Սահմանադրության 50-րդ հոդվածի 3-րդ մասում տրված՝ լաված լինելու իրավունքի կամ այլ կերպ ասած արդարացի լուծման իրավունքի կարգավորման սահմանները ընդգծված են մի շարք հանգամանքներով, որոնք իրենցից ներկայացնում են, անձի լաված լինելու իրավունքի կիրառության ինստիտուցիոնալ, անձնական, նյութական և ընթացակարգային սահմանները:

Գործող Սահմանադրության վկայակոչված իրավադրույթում նշված՝ «(...) մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը (...)» եզրույթի տառացի մեկնաբանությունը առաջին հայացքից վկայում է այն մասին, որ անձն օժտված է վարչական վարույթում լաված լինելու իրավունքով միայն այն դեպքում, երբ տվյալ վարույթը հարուցվել է վարչական մարմնի նախաձեռնությամբ և ի վնաս այդ անձի:

Այլ կերպ ասած՝ կայացվել է մի վարչական ակտ, որով՝

1. մերժվում են անձանց իրավունքների իրականացմանն ուղղված պահանջները,
2. սահմանափակվում են նրանց իրավունքները,
3. որևէ պարտականություն է դրվում նրանց վրա,
4. որևէ այլ կերպ վատթարացվում է նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

Թեև իրավական պետությունում անձանց առնչվող վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության իրավաչափության միակ չափանիշը նյութական իրավունքը չէ, ինչպես նաև վարչական մարմնի կողմից իրականացվող վարչարարությունը պետք է համապատասխանի օրենսդիր մարմնի կողմից սահմանված ընթացա-



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

կարգային պահանջներին, սակայն դրա հետ մեկտեղ ընթացակարգային պահանջները ՀՀ գործող իրավահամակարգում ունեն օժանդակ բնույթ: [5, էջ 261],

Ընթացակարգային պահանջների օժանդակ բնույթը կրելը դրսևորվում է նրանում, որ ընթացակարգային պահանջներով առաջնորդվելու նպատակն իրավաչափ վարչական ակտ կայացնելն ու վարչական վարույթի հնարավոր ելքով շահագրգռված անձանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանությունն ապահովելն է, ինչպես նաև տվյալ իրավահարաբերություններում, որտեղ ընթացակարգային պահանջների պահպանման և իրավաչափ որոշում կայացնելու և շահագրգիռ անձանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանելու միջև ուղղակի, այլ կերպ ասած անմիջական կապը բացակայում է:

Ընթացակարգային պահանջները և դրանց խախտման իրավական հետևանքները հարաբերական բնույթ են կրում: Այսինքն՝ նյութական իրավունքի համեմատությամբ ընթացակարգային պահանջների օժանդակ գործառույթն արտահայտվում է նրանում, որ ընթացակարգային սխալները որոշիչ չեն, եթե չեն ազդում կայացվելիք վարչական ակտի նյութական իրավաչափության վրա և չեն խախտում գործի ելքով շահագրգիռ անձանց հիմնական իրավունքները:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ վարչական վարույթի հարուցման մասին իրազեկելու վարչական մարմնի պարտականության երաշխավորումը նպատակ է հետապնդում ապահովել վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքը, որը հնարավորություն կտա վերջինիս ամբողջական իրականացնելու իր իրավունքների պաշտպանությունը: Այս եզրահանգումը բխում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի և Կոնվենցիայի 13-րդ հոդվածի սահմանումներից, որոնցով նկարագրված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական և թե՛ տեսական առումներով, մասնավորապես այն առումով, որ պաշտպանության միջոցներից լիարժեք օգտվելը չպետք է անհիմն կերպով խոչընդոտվի վարչական մարմինների գործողություններով կամ անգործությամբ (տե՛ս, Ի-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

վանովն և այլոք ընդդեմ Բուլղարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.11.2006 թվականի վճիռը, պարբ. 70):

Վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի իրականացման մասին մասնակցին իրազեկելը պետք է իրականացվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցության հնարավորությունը վարչական վարույթին (տե՛ս, ըստ հայցի ՀՀ աշխատանքի պետական տեսչության ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյանիկովի թիվ ՎԴ/0016/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը):

Թեև վերագրյալի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից չկան կայացված դատական ակտեր, այնուամենայնիվ կան որոշ վճիռներ որոնցում տրված իրավական գնահատականները կաող են տեղայնացվել այս բնույթի իրավահարաբրությունների վրա, քանի որ դրանք ունեն նույնական բնույթ: Այսպես օրինակ՝ Garcia Ruiz V. Spain գործով 21.01.1999 թվականի վճռով (26-րդ կետը) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանների կողմից կայացվող որոշումները պետք է ողջամտորեն պարունակեն այդ դատական ակտերի կայացման համար հիմք հանդիսացած պատճառաբանություններ՝ կողմերի լսված լինելու հանգամանքը ցույց տալու, ինչպես նաև արդարադատության իրականացման նկատմամբ հրապարակային հսկողություն ապահովելու նպատակով, սակայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը չի կարող ընկալվել որպես պահանջ՝ մանրամասնորեն պատասխանելու կողմերի բարձրացրած բոլոր փաստարկներին:

Սակայն օրենսդիր մարմնի կողմից նախատեսված վարչական վարույթի մասնակիցներին լսելու վարչական մարմնի օբյեկտիվ պարտականության իրենից ենթադրում է ոչ միայն տվյալ մասնակիցների համար արդյունավետ անհատական պաշտպանություն ապահովումը, այն նպատակ է հետապնդում նաև, որ դրանով վարչական վարույթի

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

մասնակիցները նպաստեն գործի փաստական հանգամանքների պատշաճ պարզելու վարչական մարմնի օբյեկտիվ պարտականության կատարմանը:

Այսպիսով՝ առաջնային խնդիր է ոչ միայն պատշաճ վարչարարության վերաբերյալ իրավանորմերի սահմանումն այլ նաև դրանց պատշաճ իրացումը:

Անձի լաված լինելու իրավունքի վերաբերյալ իրավակարգավորումներ առկա են ոչ միայն ներպետական օրենսդրության մեջ, այլ նաև միջազգային:

Մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են ... իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը, ունի ... անկախ և անաչառ տրիբունալի կողմից ... արդարացի ... լուսմների իրավունք...:

Վերոնշվածը թեև ուղղակիորեն վերաբերում է քրեական վարույթի շուրջ ծավալվող իրավակարգավորումներին, սկայն անալոգիայի կիրառմամբ կարող է կիրառվել նաև վարչական վարույթի շրջանակներում ծավալվող իրավակարգավորումների վրա:

Նկատենք, որ ՀՀ գործող սահմանադրության 50-րդ հոդվածի 3-րդ մասը երաշխավորում է միայն միջամտող ակտի պարագայում լաված լինելու պահանջի իրավունքին: Ինչ վերաբերում է բարենպաստ ակտի պարագայում լաված լինելու պահանջի իրավունքին, ապա այն չունի հիմնական իրավունքի ռանգ, այլ կարգավորում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հանգում ենք այն եզրահանգման, որ եթե վարչական մարմինը չի ապահովում օրենսդրի այն պահանջը, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը պետք է կազմվի ենթադրյալ իրավախախտի ներկայությամբ, ուստի անալոգիայի սկզբունքով պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որոնցում անձը հնարավորություն կունենա ռեալիզացնելու իր լաված լինելու իրավունքը: Որպես այդպիսին կարող է դիտվել օրինակ՝ վարչական վարույթի նիստին հրավիրելը, փոստային առաքման եղանակով արձա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

նագրության օրինակը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ նախատեսված իրավունքների և պարտականությունների մասին ծանուցումը ենթադրյալ իրավախախտին ուղարկելը, արձանագրության կազմման համար ենթադրյալ իրավախախտին վարչակա մարմնի վարչական շենք հրավիրելը և այլն:

### Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն ընդունված 05.07.1995 թվականին, փոփոխված 2015 թվականին:
2. ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք ընդունված 06.12.1985 թվականին:
3. Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք ընդունված 12.02.2004 թվականին:
4. Կ. Հակոբյանի «Լսված լինելու իրավունքը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր» վերտառությամբ հոդվածի հետ-ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու հ. 1(1)2018) Երևան 2018 թվական 54-71 էջ:
5. Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք / խմբ.՝ Հ. Թովմասյան, Օ. Լուխթերիանդթ, Գ. Մուրադյան, Վ. Պողոսյան, Վ. Ռայմերս, Ռ. Ռուբել – Եր.: Բավիղ, 2011թ. 424 էջ:
6. Галиган Д., Полянский В.В., Стариков Ю.Н. Административное право: история развития и основные современные концепции. – М.: Юрист, 2002. 410 էջ:
7. Herwig C. H. Hofmann, Gerard C. Rowe and Alexander H. Türk, Administrative Law and Policy of the European Union, Oxford University Press, 2011, էջ 204:
8. ՀՀ վճռաբեկ դատարանի 22.03.2019 թվականին կայացված թիվ ՎԴ/0150/05/16 որոշում:
9. ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականին կայացված թիվ ՎԴ/0909/05/10 որոշում:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

10. ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականին կայացված թիվ ՎԴ/6781/05/12 որոշում:
11. ՀՀ վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականին կայացված թիվ 3-185 (ՏԴ) որոշում:
12. ՀՀ վճռաբեկ դատարանի 23.03.2012 թվականին կայացված թիվ ՎԴ/4519/05/10 որոշում:
13. ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականին կայացված թիվ ՎԴ/0016/05/08 որոշում:
14. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 21.01.1999 թվական վճիռ Garcia Ruiz V. Spain գործով:

### НАРУШЕНИЕ ПРАВА НА СЛУЧАЙ ЧЕЛОВЕКА КАК ОСНОВА НЕДЕЙСТВИТЕЛЬНОСТИ АДМИНИСТРАТИВНОГО АКТА (В КОНТЕКСТЕ АДМИНИСТРАТИВНЫХ НАРУШЕНИЙ)

#### **Завен Смбатян**

ЕУ, кафедра Правоведения, соискатель

В настоящей статье обстоятельно обсуждается нарушение права лица быть услышанным как основание недействительности административного акта (в контексте административных правонарушений), имеющиеся на практике проблемы, обобщается судебная практика: Используя право сравнительный метод предлагаются решения проблем на практике.

**Ключевые слова:** Административный акт, правильное администрирование, право быть услышанным, недействительным, административное правонарушение, закон, судебный акт.

**VIOLATION OF THE RIGHT TO BE HEARD AS A BASIS OF INVALIDITY  
OF ADMINISTRATIVE ACT (IN THE CONTEXT OF ADMINISTRATIVE  
VIOLATIONS)**

**Zaven Smbatyan**

EU, Chair of Jurisprudence, Researcher

The article discusses in detail the possibility of violating a person's right to be heard as a basis for invalidity of an administrative act (in the context of administrative offenses), problems in practice, judicial practice. Using the right comparative method solutions of problems in practice are offered.

**Keywords:** Administrative act, proper administration, right to be heard, invalid, administrative offense, law, judicial act:

*Տրվել է պատգարության՝ 12.10.2020թ.  
Գրախոսվել է՝ 02.11.2020թ.*

**ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԳՈՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Հայկ Ղազարյան**

ԵՀ, Իրավագիտության ամբիոն, հայցորդ  
ghazaryanhayk@yahoo.com, +374 99 811828

2019 թվականի նոյեմբերին ընդունվեց օրենսդրական փոփոխություն, որով անձի իրավունքների դատական կարգով պաշտպանությունը կախվածության մեջ է դրվել վարչական մարմնին բողոք ներկայացնելուց: Մասնավորապես դա ճանապարհային ոստիկանության կողմից կայացրած վարչական տույժ նշանակելու մասին որոշումները պարտադիր կերպով վերադասության կարգով բողոքարկելու ինստիտուտի ներդրումն է: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ ներկայումս վարչական դատարան հայցադիմումների ճշող մեծամասնությունը կազմում են հենց այդ մարմնի կողմից կայացված ակտերը: Սակայն այդ հանգամանքը ներկայումս ստեղծել է արդար դատաքննության և գործերը ողջամիտ ժամկետում լուծելու անհնարինության իրավիճակ, քանի որ վարչական մարմինը չունի այն ռեսուրսները և չի իրականացվում այնպիսի վարչարարություն, որը հիմնված կլինի դատական նախադեպերի և պրակտիկայի վրա և հետևաբար դա քաղաքացիներին երբ չի պահում դատարան դիմելու մտադրությունից: Դա գալիս է այն մտածելակերպից և ավանդույթներից, որը ձևավորվել է դեռևս սովետական տարիներին, որ նույն մարմնի ծառայողները իրար նկատմամբ լոյալ են վերաբերվում և չեն վերացնում նույն մարմնի կողմից կայացրած վարչական ակտերը: Դրա համար անհրաժեշտություն է առաջացել ստեղծել վարչական մարմիններում բողոքարկման վարույթով զբաղվող խորհուրդներ, որոնք ներկայացված կլինեն փաստաբաններով, իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչներով, ոլորտի իրավապաշտպաններով, որոնք անաչառ վարչարարություն կիրականացնեն վարչական մարմնի վերադասի հետ միասին:

Այս համակարգի առանց մեր նշված փաստարկների ներդրումը ներկայումս խախտում է ողջամիտ ժամկետում գործի քննությունը լուծելու սկզբունքը, որը բերում է գործերի տարիներով ձգձգմանը, խախ-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

տելով արդար դատաքննության և դատարան դիմելու մատչելիության սկզբունքը:

**Հիմնաբառեր.** Վերադատություն, վարչական բողոք, արտադատական կարգ, դատական կարգ, վարչական արդարադատություն

Բողոքարկման վարույթի նպատակը, վարչարարության ոլորտում անձանց իրավունքների պաշտպանությունն է, որը բխում է Սահմանադրության 18-րդ հոդվածի պահանջներից. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

Հայրենական օրենսդրությունը ելակետ է ընդունում սահմանադրական այն հիմնադրույթը, ըստ որի անձը դատական կարգով իր իրավունքների պաշտպանությունը պարտավոր չէ կախվածության մեջ դնել վարչական մարմին բողոք ներկայացնելուց:

Վարչական բողոք կարող է բերել բացառապես այն անձը, ով գտնում է, որ խախտվել են կամ կարող են խախտվել իր իրավունքները, իսկ այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան կարող են դիմել իրավասու կազմակերպություններն ու պետական մարմինները:

Սույն Օրենքի 70-րդ հոդվածի համաձայն[1], վարչական կարգով բողոք կարող է բերվել կամ վարչական ակտն ընդունած վարչական մարմին, կամ դրա վերադաս վարչական մարմին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով բողոքարկվելուց (գանգատարկվելուց) հետո [2]:

Մեր կարծիքով այս ինստիտուտի ներդրման նպատակը եղել է այն, որ այսօր վարչական դատարան մուտք եղած հայցադիմումների 90 տոկոսը կազմում են հենց Ճանապարհային ոստիկանության կողմից կայացված ակտերը և դա նպատակ ուներ թոթափելու դատարանի բեռը, այն թողնելով վարչական մարմնի վրա: Սակայն դա ինչքանով է ներկայումս պիտանի կուսումնասիրենք ներքևում:



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վարչական մարմնի գործողությունները կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների եվ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով (ՎՀՎՎՄ Օր., հոդ. 69) սահմանված կարգով (ՎՀՎՎՄ Օր., հոդ. 70): Համաձայն նշված հոդվածի, ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով: Վարչական կարգով բողոք կարող է ներկայացվել ակտն ընդունած վարչական մարմին, վարչական մարմնի վերադաս վարչական մարմին:

Հարկ է նշել, որ վարչարարության ոլորտում ծագող վեճերի լուծմանն ուղղված միակ ինստիտուտը վարչական արդարադատությունը չէ: Զուգահեռ գործում են վերադասության կարգով, մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի), հասարակական պաշտպանի, միջնորդ դատարանի, միջազգային դատարանի միջոցով և այլ նմանաբնույթ եղանակներով վեճերը քննարկելու ինստիտուտները [3, 5-14 էջ]:

Տվյալ պարագայում մեր կողմից քննարկման առարկա է դարձել վերադասության կարգով **պարտադիր** բողոքարկման հիմնախնդիրները՝ պարտադիրության նպատակահարմարությունը:

Այսպիսով, իրավական պետության կայացման շահերի տեսանկյունից անհատի և պետության միջև գործադիր իշխանության ոլորտում ձևավորվում են այնպիսի հարաբերություններ, որոնք հնարավոր չէ կանոնակարգել վարչական իրավունքի խորհրդային իրավունքի համակարգին բնորոշ սկզբունքներով ու նորմերով: Անխուսափելիորեն անհրաժեշտություն է դարձել միևնույն իրավունքի ճյուղի շրջանակներում կանոնակարգել ոչ միայն զուտ վերադասության կարգով քաղաքացիներից ստացված բողոքները, այլև նշված հարցադրումներով գործադիր իշխանության նկատմամբ իրականացվող դատական հսկողությունը դրանից բխող որոշակի իրավական հետևանքներով հանդերձ:

Արմատական իրավական բարեփոխումների անհրաժեշտությունը ցանկացած պետությանը ուղղորդում է, որպեսզի որպես ելակետ ընդունվեն ինչպես քաղաքակիրթ ժողովրդավարական երկրների իրավական համակարգերը, այնպես էլ միջազգային իրավունքի ինստիտուտները: Այս առումով բացառություն չեն նաև հետխորհրդային երկրները, որոնց իրավական համակարգի կատարելագործման գործընթացը ներկայումս պայմանավորված է հիշյալ գործոններով: Ընդ որում,

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

նշված երևույթը հատկապես ցայտուն է դրսևորվում այնպիսի իրավական ինստիտուտների ձևավորման գործընթացում, որոնք իրենց նախատիպը գրեթե չեն ունեցել խորհրդային իրավունքի համակարգում: Հետխորհրդային շրջանում նմանաբնույթ միտումը գլխավորապես թելադրված է այն մտավախությամբ, որ խորհրդային պետական համակարգի ինստիտուտները պարզապես ունակ չեն բարելավելու ընդհանուր վիճակը:

Սակայն դժվարությամբ ձեռք բերված հաջողությունները աստիճանաբար նպաստում են, որպեսզի ժողովրդավարության ինստիտուտների նկատմամբ ձևավորվեն առավել հանդուրժողական տրամադրություններ, այդ թվում և՛ իշխանության լծակներից օգտվող պաշտոնատար անձանց շրջանում: Այսինքն, պետական կառավարման մարմիններում ընդգրկված պաշտոնատար անձինք ևս աստիճանաբար համակերպվում են այն իրողության հետ, որ իրենց իրավական ակտերն ու գործողությունները, անգործությունը կարող են բողոքարկվել ոչ միայն վերահասության, այլև դատական կարգով:

Հիշյալ դատողությունները մասնավորապես վերաբերում են վարչական արդարադատության ինստիտուտին, որն իրավական առավել ժողովրդավարական համակարգեր ունեցող երկրներում կայացման համեմատաբար երկարատև փորձաշրջան չի անցել, իսկ մեր երկրում դեռևս գտնվում է սաղմնային փուլում:

Կոնկրետ վարչական վարույթի հարցադրումներին առավելապես նվիրված է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004թ. դեկտեմբերի 15-ին ընդունված թիվ R(2004)20 հանձնարարականը: Նշված հանձնարարականն էական նշանակություն ունի հատկապես վարչարարության հիմնարար սկզբունքների, վարչարարության կարևոր ինստիտուտների օրենսդրական կարգավորման ելակետային դրույթներ ամրագրելու տեսանկյունից:

Այս հանձնարարականը հանգում է նրան, որ դատարանը պետք է հնարավորություն ունենա վերանայել օրենքի ցանկացած խախտում, այդ թվում՝ իրավասության բացակայությունը, ընթացակարգային անհամատեղելիությունը և լիազորությունների չարաշահումը:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դատական վերանայումը պետք է մատչելի լինի ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ առնվազն այն վարչական ակտերի նկատմամբ, որոնք ուղղակիորեն ազդել են իրենց իրավունքների և շահերի վրա:

Ընդհանրապես վարչական կառավարման ոլորտում առկա է քաղաքացիների իրավունքների ու ազատությունների պաշտպանության հարցերին ավելի մեծ նշանակություն տալու միտում: Այդ ոլորտում ձևավորվել են կայուն կիրառություն ունեցող համընդհանուր սկզբունքներ, մինչդեռ կառավարման ոլորտում այդ գործընթացը մի շարք պատճառներով փոքր-ինչ անտեսված վիճակում է գտնվում:

Ի դեպ, վերոհիշյալ ոչ բարվոք իրավիճակը ևս ունի իր բացատրությունը. Կարծում ենք, որ ի տարբերություն գործադիր իշխանության՝ դատական իշխանության իրականացման ընթացակարգերը, դատավարության սկզբունքները, այնուամենայնիվ, առավել քիչ կախում ունեն այնպիսի գործոններից, ինչպիսիք են պետական կառուցվածքը, կառավարման ձևն ու պետական ռեժիմը, ինչը չի կարելի պնդել գործադիր իշխանության առնչությամբ: Մեր կարծիքով, եթե վարչարարության ոլորտում մարդու իրավունքների արտադատական պաշտպանության ընթացակարգերի առնչությամբ, դժվար է միասնական չափանիշներ սահմանելը, ապա դատական պաշտպանության ոլորտում հիշյալ խնդրի լուծումը միանգամայն հնարավոր է համարվում:

Նկատենք նաև, որ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող մի շարք հարաբերություններ այս կամ այն չափով արդեն իսկ իրենց իրավական ամրագրումն են ստացել միջազգային իրավական փաստաթղթերում, ինչը ևս նպաստում է ներպետական օրենսդրությունում վարչական արդարադատության առավել միասնական ու արդյունավետ դրույթներ սահմանելուն:

Վերլուծությունը, թերևս, վկայում է, որ հետխորհրդային երկրների իրավական համակարգում կատարված բարեփոխումներում՝ ընդհանրապես, և վարչական արդարադատության ինստիտուտի ձևավորման գործընթացում՝ մասնավորապես, նկատելի դերակատարում են ունեցել մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային ակտերը: Եվ եթե ներկայումս մենք հաճախ, մատնանշելով այդ ինս-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

տիտուտի խոցելի տեղերը, փորձում ենք առաջադրել առավել կատարյալ ընթացակարգեր, կամա թե ակամա, առանցքային ենք համարում այն հարցադրումը, թե այս կամ այն երկրում այդ ինստիտուտի տարրերը որքանով են համահունչ միջազգային-իրավական ակտերի դրույթներին:

Ներպետական օրենսդրության նկատմամբ միջազգային իրավունքի զգալի դերակատարություն մեծապես պայմանավորված է նաև այն կարևոր հանգամանքով, որ ձևավորվել է միջազգային կազմակերպությունների իրավական ակտերի և, հատկապես, միջազգային դատարանների վճիռների նկատմամբ նկատելի համարժեք արձագանք: Այսպես, օրինակ՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռներն ունեն կանխորոշիչ նշանակություն Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների օրենսդրության կատարելագործման ոլորտում, դրանցով են իրենց աշխատանքում առաջնորդվում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները [4, 9 էջ]:

Այսպես, օրինակ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված է արդար դատաքննության իրավունքը: Մեր պարագայում արդար դատաքննության իրավունքի սահմանափակում է տեղի ունենում այն իմաստով, որ ոչ միայն պետք է դիմել վերադաս մարմին, որի իրականացրած վարչարարությունը և կայացրած որոշումները հակասում են դատական պրակտիկայում ձևավորված նախադեպերին, այլև պետք է վճարվի պետական տուրք, որը ակնհայտորեն սահմանափակում է դատարան դիմելու մատչելիության սկզբունքը և մեկ փոքրածավալ գործի քննության տևողությունը տևում է տարիներ:

Ի դեպ, վերոհիշյալ եզրահանգման օգտին են վկայում ՀՀ Սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները, որոնցում առկա են հիշյալ 6-րդ հոդվածի դրույթների շրջանակներում, պետական կառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց իրավական ակտերի ու գործողությունների դատական կարգով վիճարկման գործընթացում արձանագրված խախտումներին անդրադառնալու վերաբերյալ բազմաթիվ օրինակներ:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հայտնի է, հետխորհրդային երկրներում հիմնականում նախապատվությունը տրվել է պետական կառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց իրավական ակտերի ու գործողությունների բողոքարկման, այսպես կոչված երկընտրանքային տարբերակին, որի դեպքում քաղաքացին կարող է իր իրավունքների պաշտպանությամբ դիմել ինչպես վերադաս պետական մարմին, այնպես էլ անմիջականորեն դատարան: Հարկ է նկատել, որ այս հարցում որևէ միջազգային իրավանորմով հիշյալ տարբերակը չի համարվում եզակի հնարավոր լուծում, մասնավորապես, չի բացառվում վարչական արդարադատության մինչդատական պարտադիր վարույթ սահմանելը: Թերևս, այս հանգամանքով կարելի է բացատրել այն, որ Եվրամիության անդամ հանդիսացող առանձին երկրներ պարտադիր են համարել մինչդատական վարույթը, օրինակ, Գերմանիայում, Ավստրիայում, Բելգիայում, Հոլանդիայում և այլն:

Ընդ որում, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայով հատուկ կանոնակարգման առարկա է դարձել նաև իրավունքների պաշտպանության արտադատական կարգը. «Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ, եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք» (13-րդ հոդված):

Այսպիսի իրավական լծակների առկայությունը վկայում է, որ միջազգային փաստաթղթերով ևս «խրախուսվում» է մարդու իրավունքների պաշտպանության արտադատական երաշխիքների առկայությունը: Ընդ որում, ակնհայտ է, որ նմանաբնույթ միջամտության հիմքում ընկած է այն կանխավարկածը, որ ներպետական ամենակատարյալ իրավական համակարգի պայմաններում անգամ չի բացառվում գործնականում պետական մարմինների կողմից մարդու իրավունքների խախտման այնպիսի իրավիճակ, երբ քաղաքացիներն այս կամ այն պատճառով (մասնավորապես, երբ ձևավորված է հետապնդվելու որոշակի վախ) ձեռնպահ են մնում դրանք վերականգնելու իրավական հնարավորությունն օգտագործելուց:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գիտական մեծ հետաքրքրություն ունի այն հարցադրումը, թե ինչպիսի կողմնորոշում է ամրագրված միջազգային-իրավական նորմերում՝ կապված վարչական արդարադատության իրականացման դատավարական ընթացակարգի ընտրության հետ: Ինչպես հայտնի է, այս հարցում գործնականում և տեսության մեջ դեռևս միասնական մոտեցումներ չկան: Մի մասը գտնում է, որ վարչական արդարադատության իրականացման համար բավարար են քաղաքացիական դատավարության ընթացակարգերը, իսկ մյուս մասը՝ որ նշված դատավարության սկզբունքները համատեղելի չեն վարչական արդարադատության ինստիտուտի բնույթի ու իրավական նշանակության հետ [5, 22-51 էջ]: Մեր դիրքորոշումն այն է, որ քաղաքացիական դատավարության սկզբունքները կիրառելի չեն վարչական արդարադատության դեպքում, քանի որ պետական կառավարման մարմինը, որպես դատավարական կողմ հանդես գալով, պետք է ստանձնի իր կողմից ընդունված իրավական ակտերի իրավաչափությունը հիմնավորելու հստակ պարտականություն:

Նկատենք, որ դատական կարգով իրավունքների պաշտպանության իրավունքն առանձին ներպետական օրենսդրական ակտերում ավելի երաշխավորված բնույթ է ստացել: Մասնավորապես, բացառվում է պետական մարմինների կողմից վարչական կարգով տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերը վերացնելը: Այսպես, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71 հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Պետական լիազորված մարմինը, ինչպես նաև համապատասխան մարզպետը կարող են տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, գործողությունները և անգործությունը բողոքարկել դատարան»:

Ցավոք, հիշյալ ակտերի դատական բողոքարկման ինստիտուտը գործնականում դեռևս բավարար կիրառում չունի [6], ինչը վկայում է, որ պետական կառավարման մարմինները ներկայացնող պաշտոնատար անձանց մոտ առայժմ չի ձևավորվել այն իրավագիտակցությունը, որ իրենք տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ օժտված չեն վերադասության իրավունքով, որ այդ մարմինները պետական կառավարման մարմինների մաս չեն կազմում, որ վերջիննե-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

րիս կողմից ընդունված իրավական ակտերը դատական կարգով բողոքարկելը համահունչ է ժողովրդավարության և քաղաքակրթության արդի չափանիշներին և բնավ չի նսեմացնում գործադիր իշխանության պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց հեղինակությունը:

Ցավոք, հիշյալ հոգեբանական կաշկանդվածությունը էլ ավելի մեծ չափով է առկա քաղաքացի և պետական կառավարման մարմին փոխհարաբերություններում, ինչը հաղթահարելու համար մեկ անգամ ևս ընդգծվում է միջազգային համապատասխան իրավական դրույթների անհրաժեշտությունը:

Այսպիսով, վերոհիշյալ դատողություններից հետևում է, որ ներպետական օրենսդրությունը միջազգային իրավունքի դրույթներին համապատասխանեցնելու և միասնական չափանիշներ ամրագրելու արդի հիմնախնդիրների լուծման ուղղությունները կանխորոշելու հարցը ներկայումս ունի գիտագործնական էական նշանակություն:

Հայրենական օրենսդրությունը ելակետ է ընդունում սահմանադրական այն հիմնադրույթը, ըստ որի անձը դատական կարգով իր իրավունքների պաշտպանությունը պարտավոր չէ կախվածության մեջ դնել վարչական մարմնին բողոք ներկայացնելուց: Արտասահմանյան երկրների փորձը ընթացել է այլ ուղղությամբ. որպես կանոն, դատարան դիմելու համար, նախ անհրաժեշտ է բողոք ներկայացնել վարչական վերադաս մարմնին, սակայն ինչպես նշվեց վերևում այդ երկրները դրան հասնելու համար հաղթահարել են բազմաթիվ խոչընդոտներ և մտածելակերպի փոփոխության շնորհից կարողացել են հասնել այդ արդյունքին:

Ընդ որում, բողոք ներկայացնելու այլընտրանքային տարբերակը սուսկ առաջին հայացքից է թվում առավել ժողովրդավարական, մինչդեռ վարչական կարգով բողոքարկման արդյունավետ ու երաշխավորված համակարգեր ներդնելու պարագայում իրավունքների վարչական կարգով պաշտպանության փուլ նախատեսվելն առավել հուսալի է դարձնում իրավունքների պաշտպանությունն ընդհանրապես, սակայն այն պետք է լինի արդյունավետ և մատչելի և չդառնա ավելի երկարատև պրոցեսի նախադրյալ: Վերջին հաշվով, վերադաս մարմինը պետք է

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ստանձնի հստակ պատասխանատվություն ստորադաս մարմնի թույլ տված խախտման համար և չբավարարվի «դիտորդի» կարգավիճակով: Մասնավորապես, որևէ տրամաբանության չի դիմանում այն իրավիճակը, երբ դատական ակտի հիման վրա վերադաս պաշտոնյան պատասխանատվության է ենթարկում ստորադաս պաշտոնյային: Տվյալ դեպքում հարց է ծագում. իսկ ինչու հենց ինքը սահմանված կարգով չի վերացրել այդ նույն խախտումը, ինչու չի փորձել ինքը գնահատական տալ վարչական ակտին: Իսկ եթե չի կողմնորոշվել կամ չի փորձել խորամուխ լինել, ապա վերջինս պետք է, ըստ էության, ենթարկվի առավել խիստ պատասխանատվության:

Բողոքարկման այս կարգը, թերևս, օգտագործվում է այն դեպքերում, երբ թույլ տված խախտումները ակնհայտ են կամ որևէ կերպ չեն առաջացնի տվյալ մարմնի համար լրացուցիչ խնդիրներ (օրինակ՝ պատասխանատվություն): Սակայն առավել հաճախ նույն վարչական մարմին բողոք ներկայացնելը պայմանավորված է լինում վերջինիս վերադաս վարչական մարմնի բացակայությամբ: *Ընդ որում, վերջին դեպքում վարչարարությունն առավել իրավաչափ կարող է համարվել, եթե այդ մարմիններում բողոքների քննարկման համար ձևավորվեն այնպիսի իրավասու կոլեգիալ մարմիններ, որոնց կազմում ներգրավված լինեն նաև հասարակայնության ներկայացուցիչներ, փաստաբաններ: Ավելին, նպատակահարմար է, որպեսզի նրանք մեծամասնություն կազմեն:*

Մեր կարծիքով ներկայումս նման կարգավորումներ չկան և դրա վկայությունն է ճանապարհային ոստիկանության կողմից կայացրած վարչական տույժ նշանակելու մասին որոշումները պարտադիր կերպով վերադասության կարգով բողոքարկելու ինստիտուտի ներդրումը: Սակայն այս ինստիտուտի ներդրումը ներկայումս ստեղծել է մի իրավիճակ, երբ չի իրականացվում պատշաճ վարչարարություն, քանի որ վարչական մարմինը չունի այն ռեսուրսները, որն ունի դատարանը և այնտեղ դեռևս գործում է նախկինում ձևավորված այն ավանդույթը, որ նույն մարմնի աշխատողները իրար նկատմամբ լոյալ են վերաբերվում և չեն վերացնում կոլեգայի գրված վարչական ակտերը: Դրա վառ վկայությունն է այն հանգամանքը, որ դատարանի կողմից բավարարված



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

վճիռները վերադաս մարմնի համար հետագայում իրենց վարչարարությունը փոփոխության ենթարկելու հիմք չեն հանդիսանում և միևնույն է քաղաքացին դիմում է դատարան իր իրավունքները վերականգնելու համար: Մեր կարծիքով վերադաս մարմինը պետք է այնպես կառուցի իր քաղաքականությունը, որպեսզի քաղաքացու մոտ ցանկություն չառաջանա դիմելու դատարան: Դրա համար վարչական մարմինը պետք է իրականացնի այնպիսի վարչարարություն, որ քաղաքացու համար հասկանալի և ընկալելի լինեն իր իրավունքներն ու պարտականությունները, որը ներկայումս չի իրականացվում, և հետևաբար, շատերը միևնույն է հաղթահարելով վարչական մարմնին դիմելու պարտադիր լինելու աստիճանը, դիմում են դատարան, որտեղ հասնում են հաջողության: Այդ հաջողությունը վկայում է այն մասին, որ ներկայումս վարչական մարմինը ուղղակի ունակ չէ իրականացնելու այնպիսի վարչարարություն, որը հիմնված կլիներ օրինականության վրա: Այդ համակարգը կաշխատեր այն պարագայում, եթե վերադասության կարգով բողոքարկումները չկրեին ձևական բնույթ և ձևավորվեր հատուկ կառույց (մարմին) հենց վարչական մարմնի ներսում:

Որպես օրինակ ներկայացնենք Վճռաբեկ դատարանի թիվ **ՎԴ/1570/05/14** գործով արտահայտած այն դիրքորոշումը, որ «*Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» «<< օրենքով սահմանված վարչական վարույթի իրականացման գլխավոր առանձնահատկությունը կայանում է նրանում, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի ընթացքում իրավախախտման փաստը համարվում է հաստատված, եթե տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի և իրավախախտման հատկանիշների միջև առկա է ակնհայտ համընկնում, որը որևէ կասկած չի հարուցում:*

Ներկայումս սույն որոշումը վարչական մարմնի համար հիմք չի հանդիսանում և ամբողջ այս ինստիտուտի անհիմն լինելը նկարագր-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

վում է նրանով, որ վարչական մարմինը մերժելով դիմումը, քաղաքացին դատարանում միշտ այս դեպքերով հասնում է հաջողության: Միայն այս իրավիճակը արդեն բավարար է նկարագրելու համար այս ինստիտուտի դեռևս նպատակահարմար չլինելը, քանի որ դրանով իսկ ձգձգվում է գործի քննությունը և նախկինի 3-4 ամսվա փոխարեն ներկայումս սույն գործերով քննությունը տևում է մինչև 8 ամիս, որը ակնհայտորեն ողջամիտ չէ, հաշվի առնելով և գործի բարդությունը, և դատարանի ծանրաբեռնվածությունը: Հետևաբար անհրաժեշտ է, որպեսզի վարչական մարմինը հետամուտ լինի դատական պրակտիկայում ձևավորվող նախադեպերին և քաղաքացիներին չծանրաբեռնի ավելորդ պարտականություններով, նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարան դիմելը ներկայումս դարձել է վճարովի, այսինքն մտցվել է պետական տուրքի ինստիտուտը:

ՎԻՎՕ-ի նոր փոփոխություններով, մասնավորապես 287-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կայացրած վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կարող է գանգատարկվել (բողոքարկվել) սույն օրենսգրքով սահմանված վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Վարչական ակտը չի կարող գանգատարկվել (բողոքարկվել) վարչական կարգով, եթե նույն վարչական ակտը վիճարկվել է դատական կարգով, իսկ եթե վարչական ակտի դեմ ներկայացված գանգատը (բողոքը) ընդունվել է վարույթ դատական կարգով վարչական ակտի վիճարկումից առաջ, ապա այդ դեպքում վարչական մարմնի հարուցած վարույթը ենթակա է կարճման:

ՎԻՎՕ-ի 123-րդ, 123.1-ին, 123.3-րդ, 123.4-րդ, 123.5-րդ (բացառությամբ 8-րդ, 9-րդ, 14-րդ և 15-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-րդ, 123.7-րդ, 124-124.4-րդ, 124.6-րդ, 125-րդ, 126-րդ, 128-րդ, 129.2-րդ, 129.3-րդ, 131-րդ, 132-րդ, 135.2-րդ և 140-րդ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կար-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

գով միայն վարչական կարգով գանգատարկվելուց (բողոքարկվելուց) հետո [7]: Որոշումը վարչական կարգով գանգատարկվում է (բողոքարկվում է) վարչական ակտն ընդունած վարչական մարմին, վարչական մարմնի վերադաս վարչական մարմին կամ օրենքով նախատեսված դեպքերում այլ իրավասու վարչական մարմին:

Մեթոդաբանության տեսանկյունից նկատենք, որ արտասահմանյան երկրներում նշված ինստիտուտների ձևավորման և զարգացման հարցադրումների ուսումնասիրության հիմքում նպատակահարմար ենք համարել ընդգրկել հրապարակային իշխանության նկատմամբ վերահսկողության և մարդու իրավունքների իրավական պաշտպանության ինչպես վարչական, այնպես էլ դատական ու վարչադատական եղանակները: Պատմահամեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ժողովրդավարության կայացած ինստիտուտներով հարուստ երկրներում վարչական արդարադատությունն իր սոցիալ-քաղաքական նշանակությամբ գրեթե համեմատվում է սահմանադրական վերահսկողության հետ [8, 645-696 էջ]:

Վարչական վարույթի հաջորդ առանձնահատկությունը, թերևս, այն է, որ արտասահմանյան երկրներում վարչական վարույթի բազմաթիվ կանոններ ամրագրվում են ինչպես օրենքներով, այնպես էլ ենթաօրենսդրական ակտերով, ինչը բացառվում է հայրենական իրավական համակարգում, քանզի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի համաձայն՝ հիշյալ հարաբերությունները կարող են կանոնակարգվել բացառապես օրենքներով: Որպես կանոն, վարչական արդարադատության ինստիտուտի անհրաժեշտության հիմնախնդրին անդրադառնում են, երբ դատաիրավական բարեփոխումներում զգալի առաջընթաց է արձանագրվում, իսկ այդ պարագայում, բնականաբար, նախապատվությունը տրվում է ոչ այնքան դեռևս նոր ձևավորված ինստիտուտների արմատական վերանայմանը, որքան վարչական արդարադատության ինստիտուտի ձևավորման ու զարգացման պահանջներին հարմարեցնելուն:

Ընդհանրապես նշված բնույթի դատարաններ ստեղծվում են օրենսդիր մարմինների ակտով, որով որոշվում է նաև դրանց կառուցվածքը, գործունեության ու ձևավորման կարգը: Ընդ որում, նշված կվա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

զի դատական մարմինների համար, որպես վերադաս դատական ատյան, հանդես է գալիս նույն վճռաբեկ դատարանը:

Վարչական արդարադատության ինստիտուտի հաջորդ կարևոր տարրը համարվում է բողոքարկման հիմքը: Ընդհանուր մոտեցումն այն է, որ բողոքարկման համար հիմք են հանդիսանում գործադիր իշխանության մարմինների անօրինական իրավական ակտերը կամ գործողությունները: Սակայն հանրային շահերի պաշտպանության դեպքում գործնականում ձևավորվել է «էական շահի հայեցակարգը», համաձայն որի դատական հսկողության առարկա կարող են լինել միայն այն բողոքները, որոնցով վիճարկվում է էական շահի խախտում: Այդ կերպ փորձ է արվել վարչական արդարադատությունը զերծ պահել անհարկի, ոչ էական բողոքներից, որոնք կարող են, վերջին հաշվով, խոչընդոտել դատական հսկողության բնականոն ընթացքը և նույնիսկ նախապայմաններ ստեղծել վերջինիս կազմալուծման համար:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ «էական շահ» հասկացությանը չի տրվում միասնական մեկնաբանություն. միևնույն իրավախախտումը տարբեր իրավիճակներում կարող է տարբեր իրավական գնահատման արժանանալ:

Ընդհանուր առմամբ հիշյալ երկրների օրենսդրության և դրանց առնչությամբ տեսական հետազոտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դեռևս գերակայությունն ամբողջովին չի տրվում վարչական վեճերի քննարկման դատական ընթացակարգին, որ դեռևս անհարկի մեծ է արտադատական քննարկումների սահմաններն ու իրավական նշանակությունը: Բացի այդ, նկատվում է, որ դեռևս չեն ձևավորվել միասնական մոտեցումներ՝ կապված վարչական արդարադատության շրջանակների, իրականացման եղանակների և նմանաբնույթ այլ հարցադրումների հետ: Լուրջ տարածայնություններ կան հատկապես այն հարցի շուրջ, թե կոնկրետ որ պետական մարմինների իրավական ակտերն ու գործողությունները կարող են քննարկման առարկա դառնալ:

Ընդհանուր մոտեցումը, թերևս, այն է, որ գրեթե բոլոր երկրներում վարչական վեճեր քննող մարմիններ են ճանաչված ինչպես դատական ատյանները, այնպես էլ պետական կառավարման մարմինները:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Այսպես, Լիտվայի Հանրապետության 1999թ. հունվարի 14-ին ընդունված «Վարչական վեճերի հանձնաժողովների մասին» «Վարչական վարույթների մասին օրենքների համաձայն վարչական վեճերը կարող են քննարկվել նաև մինչ դատական ընթացակարգով: Մասնավորապես» Վարչական վարույթների մասին օրենքի 12-րդ հոդվածի համաձայն. «Օրենքով սահմանված կարգով հանրային կառավարման մարմինների կողմից ընդունված առանձին ակտերը, ինչպես նաև դրանց գործողությունները (անգործությունը) կարող են վիճարկվել մինչև Վարչական տրիբունա դիմելը: Իսկ նույն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ հիշյալ վեճերը քննարկվում են համայնքային հանձնաժողովների, վարչական վեճերի մարզային հանձնաժողովների և Վարչական վեճերի գերագույն հանձնաժողովի կողմից:

Թերևս արտադատական կարգը ներկայումս առանձնանում է զգալի բարեփոխումներով: Մասնավորապես, որպես կանոն, մինչդատական վարույթ իրականացնող մարմիններն իրենց կարգավիճակով հնարավորինս անկախ են, դրանք ստեղծվում են կառավարության կազմի մեջ չմտնող հանձնաժողովների տեսքով: Արժեքավոր նորույթ է այն, որ դրանցում հիմնականում կարող են ներգրավվել բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձինք: Օրինակ՝ Լիտվայի Հանրապետության «Վարչական վեճերի հանձնաժողովների մասին օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքային և մարզային պետական հանձնաժողովների առնվազն նախագահը և քարտուղարը պետք է ունենան իրավաբանական բարձրագույն կրթություն, իսկ 7-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական վեճերի գլխավոր հանձնաժողովի բոլոր 5 անդամները պետք է ունենան բարձրագույն իրավաբանական կրթություն: Հիշյալ կառույցների արդյունավետ գործունեության հաջորդ գրավական է հանդիսանում նաև այն, որ վերջիններս վարչական վեճերի քննության գործընթացում գործադիր իշխանության մարմինների նկատմամբ օժտված են լայն լիազորություններով:

Ընդհանուր իրավասության դատարանների համակարգում իրենց ինքնուրույն տեղն ունեն Շվեյցարիայի վարչական դատարանները, որոնց իրավասությունն ու գործունեության կարգը սահմանված է 1971թ. Ընդունված Վարչական դատավարության մասին օրենքով: Վարչական

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

դատարանների համար, որպես վճռաբեկ ատյան, հանդես է գալիս Շվեյցարիայի վարչական դատարանը, որի անդամներին նշանակում է կառավարությունը: Վերջիններս, Գերագույն դատարանի անդամների հետ միասին, կազմում են Օրենսդիր խորհուրդը, որը կոչված է եզրակացություններ տալու կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով քննարկմամբ կայացված օրենքների նախագծերի վերաբերյալ:

Առանձին տարաբնույթ վարչական գործեր Շվեյցարիայում քննվում են հատուկ դատարանների կողմից, ինչպիսիք են, օրինակ, աշխատանքային վեճեր քննող դատարանները: Ընդ որում, հիշյալ դատարաններում ընդգրկված են ոչ միայն մասնագետ դատավորներ (իրավաբաններ), այլև կառավարության և արհմիության ներկայացուցիչներ:

Դրական ու ընդունելի կողմերի հետ մեկտեղ քննարկված համակարգերը, թերևս, կարող են Հայաստանի Հանրապետության համար կիրառելի լինել միայն որոշ վերապահումներով:

Միաժամանակ նկատենք, որ արտասահմանյան երկրների վարչական արդարադատության ինստիտուտի ձևավորման և գործունեության փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու այն օրինաչափությունները, որոնք բնորոշ են վերոհիշյալ համակարգերին և որոնք գործնական մեծ արժեք կարող են ունենալ Հայաստանի Հանրապետությունում վարչական արդարադատության կատարելագործման համար՝

- գործադիր իշխանության նկատմամբ դատական վերահսկողության ձևավորման գործընթացի բարդությունները հիմնականում պայմանավորված են եղել մի կողմից իշխանությունների տարանջատման սկզբունքն առանց որևէ վերապահումների ընդունելու միտումով, ինչն իր հերթին այդ սկզբունքի հոչակման սկզբնական փուլում եղել է սուսկ մակերեսային, դեռևս անհրաժեշտ գործնական փորձի հիման վրա չձևավորված պատկերացումների հետևանք, մյուս կողմից՝ ժողովրդավարության ընդհանուր կառույցների ոչ բավարար կազմավորմամբ և անհրաժեշտ ավանդույթների բացակայությամբ,

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- վարչական արդարադատության ճնավորման ու զարգացման գործընթացում էական նշանակություն է տրվում ոչ այնքան դատարանների կազմակերպմանը, որքան այն հարցադրմանը, թե որքանով են վերջիններս փաստացի անկախ գործադիր իշխանությունից:

Այսպիսով, քննարկման առարկա ինստիտուտների առնչությամբ առկա է հարուստ միջազգային փորձ, որի միայն համալիր վերլուծությունը և ուսումնասիրությունը կարող է բացահայտել այն ուղիները, որոնցով կարող են ընթանալ մեր երկրում իրականացվող դատաիրավական բարեփոխումները:

### Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ օրենքը վարչարարության հիմունքների եվ վարչական վարույթի մասին (Ընդունված է 2004 թվականի փետրվարի 18-ին)  
URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=137941>  
(մուտքի ամսաթիվ՝ 15.09.2020):
2. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք (Ընդունված է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին) URL:  
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=137942> (մուտքի ամսաթիվ՝ 15.09.2020):
3. Демин А.А., Административный процесс в развивающихся странах. Учебное пособие. Отв. ред. Н.А.Кыфакова. М., 1987. էջ 5-14:
4. Վլ. Հովհաննիսյան, Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Գործունեության առանձնահատկությունները, վճիռների իրավաբանական բնույթը և գանգատների ներկայացման կարգը, Եր. ՏիգրանՄեծ, 2002, էջ 9:
5. Хаманева Н.Ю., Судебный контроль за реализацией прав граждан в сфере исполнительной власти, Академический правовой институт при Институте государства и права РАН, Москва, 1999, էջ 22-51:
6. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի կողմից կատարված ամփոփումները վկայում են, որ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերն անվավեր ճանաչելու պահանջով մարզպետների կողմից 1996թ. Ներկայացվել է 2, 1997՝

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

- 4, 1998թ.՝ 5, 1999թ.՝ 14, 2000թ.՝ 8, 2001թ. 7, 2002թ.՝ 5, 2003թ.՝ 8, իսկ 2010թ.՝ 11 դիմում:
7. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք (Ընդունված է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին) URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=137921> (մուտքի ամսաթիվ՝ 15.09.2020):
8. Droit du contentieux administratif, Domat droit public, Rene Chapus, Paris 11, էջ 645-696

### ПРОБЛЕМЫ ОБЯЗАТЕЛЬНОГО ОБЖАЛОВАНИЯ АДМИНИСТРАТИВНОГО АКТА В ПОРЯДКЕ ПРЕВОСХОДСТВА

**Айк Казарян**

ЕУ, кафедра Правоведения, соискатель

В ноябре 2019 года была принята законодательная поправка, которая защищает права человека в суде в зависимости от подачи жалобы в административный орган. В частности, введение института принудительного обжалования решений о наложении административных штрафов ГАИ. Это связано с тем, что в настоящее время подавляющее большинство исков в административном суде предъявляются актами этого органа. Однако это обстоятельство создало ситуацию невозможности справедливого судебного разбирательства для разрешения дел в разумные сроки, поскольку административный орган не имеет ресурсов администрирование на основе прецедентного права не осуществляется, следовательно, это не удерживает граждан от обращения в суд. Это исходит из сложившихся в советские годы традиций менталитета, согласно которым сотрудники одного органа лояльно относятся друг к другу, не отменяют административные акты одного и того же органа. Поэтому в административных органах необходимо создать апелляционные комиссии, которые будут представлены юристами, представителями правозащитных организаций, правозащитниками на местах, которые будут осуществлять бесприс-



трасное администрирование вместе с руководителем административного органа.

Введение этой системы без вышеупомянутых аргументов в настоящее время нарушает принцип разрешения дела в разумные сроки, что приводит к многолетним задержкам, нарушая принцип справедливого судебного разбирательства и доступа к суду.

**Ключевые слова:** Первенство, административное обжалование, внесудебное производство, судебный процесс, административное правосудие

### PROBLEMS OF OBLIGATORY APPEAL OF THE ADMINISTRATIVE ACT BY THE WAY OF SUPERIORITY

**Hayk Ghazaryan**

EU, Chair of Jurisprudence, Researcher

In November 2019, a legislative correction was initiated, which enshrines the protection of human rights in the court in dependence on the submission of complaints to the administrative body. In part, the introduction of the institute of compulsory appeal solutions to the orders of the administrative screws Police. This is related to the fact that in the present time, giving a large number of cases in the administrative court precedes the act of this body. Since this circumstance has created a situation of impossibilities, justifiable court understanding has been resolved in a reasonable manner, since the administrative body does not have the resources to do so, no administration on the basis of a precedent has been exercised. This is a result of the complexity in the Soviet years of the traditional mentality, in accordance with which of the partners one organ is lolly related to another, the administrative acts are not excluded either and that organ. Therefore, in the administrative bodies, it is necessary to create appellate commissions, which will be representative systems, representatives of legal organizations, legal administrators in places, which will be very important.

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

Introduction of this system without all-reasoning arguments for a long time violates the principle of resolving acts in reasonable terms, which leads to multiple inclinations, violating the principle of just judgment and accessibility.

**Keywords:** Superiority, administrative appeal, extrajudicial procedure, judicial procedure, administrative justice

*Տրվել է պաշարության՝ 14.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 10.11.2020թ.*

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՏ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

**Լիդա Սարգսյան**

ԵՀ, իրավագիտության ամբիոն, հայցորդ  
lidasargsyan@gmail.com, +374 93 729768

Հայաստանի Հանրապետության, որպես ժողովրդավարական պետության, բարեհաջող ձևավորման և զարգացման գործում անկյունաքարային նշանակությունի ունի դատական իշխանությունը: Միաժամանակ, որպեսզի դատական իշխանությունն իրեն վերապահված գործառնությունները կարողանա արդյունավետ իրականացնել՝ անհրաժեշտ է, որ հասարակության մոտ ձևավորվի և պահպանվի դատարանների նկատմամբ լիարժեք վստահություն: Անվիճելի փաստ է, որ դատական համակարգը չի կարող լինել օրենքի կատարման իրական «երաշխավոր», եթե հասարակությունը չի վստահում դատարաններին և համոզված չէ, որ դատավորներն անկախ են և դատական ակտերը կայացվում են միայն օրենքի տառին համապատասխան:

Ներկայումս, հասարակության մոտ բացակայում է վստահությունն ինչպես արդար և անկողմնակալ դատարանի, այնպես էլ արդարադատության նկատմամբ առհասարակ: Հաշվի առնելով հասարակության մոտ ձևավորված կարծիքները՝ սույն աշխատությանը անդրադարձ է կատարվում դատական իշխանության նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանն ուղղված մեխանիզմներին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած որոշումներով հայտնած դիրքորոշումների համապրեքստում:

**Հիմնաբառեր.** Դատական իշխանություն, դատական համակարգ, վստահության բարձրացում, դատական ակտ, օրինականություն, օրենքի գերակայություն

Դատական իշխանության նկատմամբ վստահության հարցը, որը երկրի ժողովրդավարական զարգացման հիմնական լծակներից մեկն

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

է, էապես կարևոր նշանակություն ունի այսօրվա հասարակության համար, անկախ նրանից, թե որ երկրում են նրանք բնակվում: Հասարակության իրավագիտակցության մակարդակի զարգացման հետ մեկտեղ՝ սրվել է ուշադրությունը նաև դատական համակարգի և դրա՝ վստահության ամրապնդման հիմնական ասպեկտների նկատմամբ: Նշվածը պայմանավորված է նրանով, որ դատական իշխանությունը կոչված է պաշտպանել քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, անձանց և հասարակության օրինական շահերը:

Միաժամանակ դատական իշխանության (համակարգի) նկատմամբ վստահությունը սերտորեն կապված է դատավորների լեգիտիմության հետ, քանի որ այն ըստ էության իր մեջ ներառում է օրինականությունը (գործել օրենքին համապատասխան), ընդհանուր արժեքները (արժեքներ, որոնք կիսում են նրանք, ովքեր օժտված են իշխանական ուժով, և նրանք, ում վրա այդ ուժերը տարածվում են) և հասարակության կողմից ընդունելի լինելը (այլ կերպ՝ քաղաքացիների մոտ առկա զգացողությունը, որ իրենց բարոյական պարտականությունն է ենթարկվել օրենքին): Նշված տարրերն են, որ ըստ էության պետք է բնութագրեն դատական իշխանությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր կայացրած դատական ակտերում բազմիցս խոսել է հասարակության մոտ դատական իշխանության նկատմամբ վստահության բարձրացման, դրա դերի և անհրաժեշտության կարևորության մասին: Մասնավորապես, «Եվրոպական դատարանը բազմաթիվ անգամ ընդգծել է դատական համակարգի կարևոր դերը հասարակության մեջ, որը լինելով արդարության երաշխավոր, կրելով օրենքի գերակայության հիմնարար արժեքները, իր ֆունցիաները հաջողությամբ իրականացնելու համար պետք է օգտվի հասարակության վստահությունից» (*դե'ս, Եվրոպական դատարանի Մեծ պալատի վճիռը Baka v. Hungary գործով, կայացած 23.06.2016 թվականին թիվ 20261/12, թիվ 164 զանգարի հիման վրա*) [1]:

Հասարակության աջակցությունը և վստահությունը հատկապես կարևոր է դատական իշխանության համար, որը, անկախ լինելու սահմանադրական նորմ-սկզբունքի շնորհիվ, հաշվետու չէ որևիցե մեկի

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

առջև: Այդուհանդերձ, դատական իշխանության նկատմամբ վստահության ամրապնդումը չի կրում ինքնանպատակ բնույթ, հատկապես, երբ ներկայումս հասարակությունը բախվում է տարբեր փոփոխությունների և մարտահրավերների, իսկ դատարանների առաջնային նպատակն է պաշտպանել օրենքի գերակայությունը:

Միաժամանակ, եթե դատական համակարգի նկատմամբ վստահությունն ակնհայտորեն ամրագրվել է Եվրոպական դատարանի մի շարք վճիռներում, ապա դրա թաքնված ներկայությունը կարող է բացահայտվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) որոշ առանձին, բայց միմյանց հետ փոխկապակցված դրույթներում և տարբեր համատեքստերում:

Սույն աշխատությամբ վերոգրյալ խնդիրը քննարկման առարկա է դարձվում Եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերի լույսի ներքո: Մասնավորապես, ստորև, Եվրոպական դատարանի դատական ակտերի համատեքստում, անդրադարձ կկատարվի այն «ռազմավարություններին», որոնք կիրառվում են դատական իշխանության նկատմամբ վստահության ամրապնդման նպատակով, ինչպես նաև՝ հիմք են հանդիսանում բարձրացնելու պետական իշխանության այլ ճյուղերի պատասխանատվությունը՝ դատական համակարգի ամրապնդմանն ու պաշտպանությանն օժանդակելու համար:

Վերը նշվածի կապակցությամբ՝ Եվրոպական դատարանն իր նախադեպային դատական ակտերով անդրադարձել է այն գործոններին և խնդիրներին, որոնք ինչ-որ չափով կարող են ազդել դատական իշխանության նկատմամբ հասարակության վստահության անկմանը կամ հակառակը՝ բարձրացմանը: Այսպես, ըստ Եվրոպական դատարանի դիրքորոշումների, դատական իշխանության նկատմամբ հասարակության վստահության ձևավորման գործում էական նշանակություն ունեն հետևյալ գործոններն ու խնդիրները.

- ա. դատական համակարգի հեղինակության պահպանումը,
- բ. դատական ակտերի ոչ պատշաճ կատարումը,
- բ. զանգվածային լրատվամիջոցների դերը,

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- գ. դատական իշխանության արձագանքն անհատների կամ մամուլի կողմից իր հեղինակության անհարկի ոտնահարմանը,
- դ. դատավորների անձեռնմխելիությունը՝ ցանկացած տեսակի պատասխանատվությունից, իրենց պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում ձեռնարկված միջոցառումների համար, ինչպես նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթի իմաստով՝ դատարանի հասանելիության իրավունքը:

Եվրոպական դատարանը դատական իշխանության հեղինակության պահպանման կարևորությունը դիտարկել է գործադիր իշխանության մարմինների՝ դատավորի վարույթում գործերի վերաբերյալ հայտնած մեկնաբանությունների տեսանկյունից: Մասնավորապես, Եվրոպական դատարանը **Toni Kostadinov v Bulgaria** գործով 27.01.2015 թվականին կայացված վճռով, թիվ 37124/10 գանգատի հիման վրա [2] արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ [3] կետի խախտում, այն է՝ յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կազմակերպելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան: Նշված գործի փաստերի համաձայն՝ Բուլղարիայի ներքին գործերի նախարարը պնդել է Կոստանդինովի մեղավորության փաստը՝ նախքան նրան կողոպուտի վերաբերյալ մեղադրանք առաջադրելը: Կոստանդինովը Եվրոպական դատարան ներկայացված դիմումով հայտնել է, որ այդ հայտարարությունը խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված և պաշտպանվող՝ իր արդար դատաքննության իրավունքը: Եվրոպական դատարանը նշված դատական ակտով ամրագրել է, որ անմեղության կանխավարկածը կարող է ոտնահարվել ոչ միայն դատարանի, այլ նաև՝ այլ պետական մարմինների կողմից, ընդ որում՝ անձի անմեղության կանխավարկածը խախտելու մտադրության բացակայությունը չի կարող բացառել խախտման փաստը: Եվրոպական դատարանը նշել է, որ պետք է տարբերել այն որոշումները կամ հայտարարությունները, որոնք տպավորություն են ստեղծում, իբր համապատասխան անձը մեղավոր է, այն որոշումներից կամ հայտարարություններից, որ սահմանափակվում են կասկածի նկարագրությամբ: Հետևաբար՝ կարևոր է բացահայտել վիճարկվող հայտարարություններ-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

րի իրական իմաստը՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակը: Տվյալ դեպքում, Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում, քանի որ Բուլղարիայի ներքին գործերի նախարարի վիճահարույց հայտարարությունները կատարվել են նախորդ օրը կայացված մամուլի ասուլիսի ժամանակ, երբ Կոստադինովը պետք է ներկայանար դատարան: Ներքին գործերի նախարարի հայտարարություններում բարձրաձայնվել է Կոստադինովի անունը: Ընդ որում, այդ հայտարարությունները հնարավորություն են տվել ենթադրել, որ Կոստադինովը հանդիսանում է հանցավոր խմբի ազդեցիկ անդամ, որը կատարել է բազմաթիվ կոդուպուտներ:

1/ Փաստորեն, վերը նշվածից ակնհայտ է, որ անկախ այն հանգամանքից, թե դատարանի կայացրած դատական ակտը որքանով է եղել իրավաչափ, երկրի գործադիր մարմնի ներկայացուցչի կատարած հայտարարությունները հիմնավոր կասկած են հարուցել գործով մասնակիցների, հանրության մոտ: Հետևաբար՝ գործադիր մարմնի հայտարարությունը ուղղակիորեն ազդել է դատարանի նկատմամբ հանրության վստահությանը: Նման պայմաններում, Եվրոպական դատարանի վերը նշված դատական ակտը կարևոր նշանակություն ունի այնքանով, որ այն, որպես նախադեպային, պետք է հիմք ընդունեն և կիրառեն ոչ միայն ՀՀ դատական համակարգում, այլ նաև ՀՀ մյուս պետական մարմինների կողմից՝ խուսափելով նախքան դատական գործի քննության ավարտ գործին մասնակից անձանց, գործի հանգամանքների վերաբերյալ որևէ կոնկրետ կարծիք հայտնելուց:

2/ Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը փաստել է, որ դատական ակտերի ոչ պատշաճ կատարումը կարող է խաթարել դատական իշխանության հեղինակությունը: Եվրոպական դատարանի Մեծ Պալատը նման դիրքորոշում է հայտնել **Broniowski v. Poland** գործով թիվ 31443/96, թիվ 175 գանգատի հիման վրա 22.06.2004 թվականին կայացված վճռով [4] արձանագրել է Կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման փաստ [5]: Ըստ այդ հոդվածի՝ Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են նույն Կոնվենցիայի 1-ին «Ի-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

րավունքներ և ազատություններ» բաժնում: Մասնավորապես, այդ գործով դիմումատուն՝ Բրիոնիովսկին, որպես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սահմանների փոփոխության արդյունքում թողած իր սեփական գույքի դիմաց փոխհատուցում, իրավունք է ունեցել հողատարածք ստանալու: Լեհաստանի իշխանությունների կողմից ընդունված նոր օրենսդրությունը, սակայն խոչընդոտել է դիմումատուի պահանջը բավարարելուն: Չնայած Լեհաստանի Սահմանադրական դատարանի որոշմանը, որով նոր օրենսդրությունը ճանաչվել էր հակասահմանադրական, տարբեր պետական իրավասու մարմիններ հրաժարվել են կատարել կամ հետևել այդ որոշմանը: Արդյունքում, Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայով սահմանված՝ մարդու իրավունքները հարգելու պարտականության խախտում: Ըստ Եվրոպական դատարանի՝ պետական, ինչպես նաև՝ կատարողական մարմինների այդպիսի վարքագծերը դատական ակտի վերջնական և պարտադիր կատարմանը խոչընդոտելու փորձեր էին: Եվրոպական դատարանը գտել է, որ այդպիսի վարքագիծը չէր կարող բացատրվել օրինական հանրային կամ ամբողջ հասարակության շահերի առկայությամբ: Հակառակը, նման վարքագիծը կարող էր խարխիլել դատական մարմնի և նրա հեղինակության նկատմամբ վստահությունը, կասկածի տակ դնել նրա արդյունավետությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ այդ գործոններն ունեն առաջնային նշանակություն՝ Կոնվենցիայում ամրագրված հիմնարար սկզբունքների տեսանկյունից:

3/ Եվրոպական դատարանը, դատական համակարգի նկատմամբ վստահության բարձրացման հարցում, կարևորել է նաև ՋԼՄ-ների դերը: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատավորների հայեցողության պարտականությունն ունի հատուկ նպատակ. դատավորների հայտարարությունները, ի տարբերություն փաստաբանների, հասարակության կողմից ընկալվում է որպես օբյեկտիվ գնահատական, որն արտահայտում է ոչ միայն կոնկրետ անձի՝ դատավորի կարծիքը, այլ նաև՝ ողջ դատական համակարգի: Հետևաբար, դատական համակարգը, հանդիսանալով արդարադատության երաշխավոր, իր գործառույթների բարեհաջող իրականացման համար պետք է վայելի հասարակության վստահությունը:



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական դատարանի Մեծ պալատը **Morice v. France** գործով 23.04.2015 թվականի վճռով, կայացված թիվ 29369/10 գանգատի հիման վրա [6], արձանագրել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Մասնավորապես, այդ գործով դիմումատուին մեղադրանք էր առաջադրվել երկու դատավորների վերաբերյալ զրպարտչական հայտարարությունների համար, որոնց վարույթում են գտնվել այնպիսի գործեր, որոնք լայնածավալ լուսաբանման էին ենթարկվել լրատվամիջոցներում, իսկ դիմումատուն այդ գործերով հանդես էր եկել որպես փաստաբան: Դիմումատուի այդ հայտարարությունները հրպարակվել էին ֆրանսիական թերթերից մեկում: Եվրոպական դատարանը նշել է, որ «դատական իշխանության հեղինակություն» արտահայտությունն իր մեջ ներառում է մասնավորապես այն հասկացությունը, որ դատարանները, ըստ էության, իրավունքի վերաբերյալ վեճերը լուծելու պատշաճ հարթակ են, ինչպես նաև՝ հասարակությունը, ընդհանուր առմամբ, հարգանքով է վերաբերում դատարաններին՝ վստահ լինելով այդ գործառույթը կատարելու՝ դատարանի ունակությանը: Դրա հետ մեկտեղ, Եվրոպական դատարանն ամրագրել է, որ փաստաբանը պետք է հնարավորություն ունենա հրավիրել հասարակության ուշադրությունը դատական համակարգի հնարավոր թերությունների վրա: Եթե անհրաժեշտ է աջակցել դատական իշխանության հեղինակությանը և պաշտպանել այն որոշ քննադատություններից, ապա այն չի կարող հիմք հանդիսանալ արգելելու անհատներին իրենց կարծիքն արտահայտել արժեքավոր դատողությունների օգտագործման օգնությամբ, հատկապես, երբ առկա են բավարար փաստեր՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ: Եվրոպական դատարանը հանգել է այն եզրակացության, որ դիմումատուի նկատմամբ կայացված անձին զրպարտելու վերաբերյալ վճիռը կարելի է դիտարկել որպես ոչ համաչափ միջամտություն դիմումատուի իրավունքին իր կարծիքն ազատ արտահայտելու վերաբերյալ, որը Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն չի կարող դրսևորվել ժողովրդավարական հասարակության մեջ:

Վերոգրյալի համատեքստում Եվրոպական դատարանն անդրադարձել և կարևորել է այն դեպքերը, երբ դատական իշխանությունը որևէ կերպ արձագանքել է անհատների կամ մամուլի կողմից իր հեղի-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

նակությունն անհարկի ոտնահարելուն ուղղված դեպքերին: Տվյալ դեպքում, չնայած դատարանները կամ դատավորները կարող են որևէ կերպ արձագանքել այն ոտնձգություններին, որոնք, ըստ իրենց, հատկապես չափազանցված են, ինչպես նաև միջոցներ ձեռնարկեն դատական իշխանության հեղինակությունը պաշտպանելու համար, այդուհանդերձ՝ արձագանքները պետք է լինեն համամաչափ:

Եվրոպական դատարանն իր կողմից կայացված դատական ակտերում անդրադարձել է նաև հետևյալ խնդրին:

Մասնավորապես, **Slomka v. Poland** գործով, կայացված 06.12.2018 թվականին, թիվ 68924/12 գանգատի հիման վրա [7], Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ և 10-րդ հոդվածների խախտում: Նշված գործը վերաբերել է 14-օրյա ազատազրկման ձևով պատժին, որը նշանակվել էր դիմումատուին դատարանի նկատմամբ անարգանքի համար այն բանից հետո, երբ նա կարգախոսներ էր բղավել ի նշան բողոքի՝ կոմունիստական ժամանակաշրջանի գեներալների գործով, ովքեր 1980-ական թվականները ռազմական դրություն էին հայտարարել: Եվրոպական դատարանը որոշել է, որ դիմումատուի գործողություններն ուղղված են եղել դատական համակարգը քննադատելուն և արդարադատություն իրականացնելուց խուսափելը դատապարտելուն, այլ ոչ թե դատավորներին վիրավորելուն: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ դիմումատուն ազատազրկման ձևով պատժի է ենթարկվել նույն այն դատավորների կողմից, որոնց ուղղված են եղել դիմումատուի կարգախոսները՝ հնարավորություն չստանալով ներկայացնել առարկություններ: Միաժամանակ, դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելուց հետո, դատարանի որոշմամբ չեն վերացվել նշված դատավարական (ընթացակարգային) խախտումները: Եվրոպական դատարանը հանգել է այն եզրակացության, որ գործի հանգամանքները վկայում են դատարանի կողմնակալության մասին, ինչն էլ հանգեցրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման: Եվրոպական դատարանն արձանագրել է նաև, որ նշված գործով առկա է եղել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում, այն հիմնավորմամբ, որ տեղի է ունեցել միջամտություն դիմումատուի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքին, որը չի կարող որևէ կերպ դրսևորվել ժողովրդավարական հասարակության մեջ:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դատական համակարգի նկատմամբ վստահության բարձրացման տեսանկյունից Եվրոպական դատարանը կարևորել է նաև դատավորների անձեռնմխելիության փաստը ցանկացած տեսակի քաղաքացիական պատասխանատվությունից՝ իրենց պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում ձեռնարկած միջոցառումների համար:

Այսպես, **Sergey Zubarev v. Russia** գործով թիվ 5682/06 գանգառի հիման վրա 05.02.2015 թվականին կայացված վճռի [8] փաստերի համաձայն՝ տվյալ գործը վերաբերել է պատասխանող պետության դատարանների կողմից դիմումատուի հայցը՝ պատվի և արժանապատվության պահանջի վերաբերյալ, քննության առնելը մերժելուն: Լինելով փաստաբան՝ Ջուբարևը պատվի և արժանապատվության պաշտպանության վերաբերյալ հայց էր ներկայացրել դատավորի դեմ, ով 2005 թվականի ապրիլ ամսին դիմել էր համապատասխան փաստաբանական պալատ նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու նպատակով՝ որպես հիմք վկայակոչելով քաղաքացիական դատավարության ընթացքում վերջինիս վարքագիծը: Մասնավորապես, դատավորը պնդել էր, որ առանց հարգելի պատճառների դատական նիստերին չներկայանալով՝ Ջուբարևը ձգձգել է քաղաքացիական գործի քննությունը, որում վերջինս հանդես է եկել որպես ներկայացուցիչ: Դատարանները, 2005 թվականի մայիսին հրաժարվել են ընդունել Ջուբարևի հայցը և քննության առնել այն: Դատարանները որպես հիմք վկայակոչել են դատավորի անձեռնմխելիության փաստը՝ դատավարության ընթացքում իր կողմից կատարված գործողությունների վերաբերյալ: Այդ որոշումը, վերաքննության կարգով վերանայելուց հետո՝ 2005 թվականի հունիսին, թողնվել է անփոփոխ: Վկայակոչելով, մասնավորապես, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը՝ դիմումատուն պնդել է, որ Ռուսաստանի Դաշնության դատարանների կողմից պատվի և արժանապատվության վերաբերյալ իր պահանջները քննության չառնելը զրկել է իրեն դատարանի մատչելիության իրավունքից: Եվրոպական դատարանն արձանագրել է, որ արդարադատությունն իրականացնելիս՝ դատարանի անձեռնմխելիության և հասարակության շահերից բխող օրինական նպատակի միջև կարելի է դիտարկել ողջամիտ համաչափություն: Տվյալ դեպքում, Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չի արձանագրել:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, Եվրոպական դատարանի վերը նշված դիրքորոշումների ուսումնասիրության արդյունքում պետք է արձանագրել հետևյալը.

1. անկախ դատարանի կողմից կայացված դատական ակտի իրավաչափության մակարդակից՝ որևէ պետական մարմին իրավունք չունի արտահայտելու այնպիսի հայտարարություններ, որոնք հասարակության մոտ հիմնավոր կասկածներ կհարուցեն դատական ակտի՝ օրենքի պահանջների պահպանմամբ կայացված լինելու, դատական իշխանության անկախության և օբյեկտիվության վերաբերյալ, ինչպես նաև՝ կխաթարեն դատարանի նկատմամբ հանրության վստահությունը:

2. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ենթակա է կատարման՝ առանց որևէ արհեստածին խոչընդոտների: Այդ խոչընդոտները կարող են դրսևորվել պետական, տեղական ինքնակառավարման, հարկադիր կատարումն ապահովող, ինչպես նաև՝ իշխանական լծակ ունեցող որևէ այլ մարմինների վարքագծի, գործողությունների կամ անգործության տեսքով: Նման գործողությունները (անգործությունը) և/կամ վարքագծերը, սակայն դատական իշխանության հեղինակության, նրա նկատմամբ հասարակության վստահության անկման հիմք կարող են հանդիսանալ:

3. Դատական իշխանության մարմինները, դատական իշխանության ներկայացուցիչները և հատկապես դատավորները պետք է զերծ մնան ՁԼՄ-ներում, սոցիալական ցանցերում իրենց վերաբերյալ հայտնած զրպարտչական, վիրավորական հոդվածների, կարծիքների վերաբերյալ որևէ մեկնաբանություն տալուց, բացառությամբ այն դեպքերի, երբ դատավորը կամ դատական իշխանության այլ ներկայացուցիչը գտնում է, որ նմանատիպ հայտարարությունները կրում են իրենց պատիվն ու արժանապատվությունը ոտնահարող բնույթ: Նման դեպքերում, վերջիններս զրկված չեն դատական կարգով պաշտպանելու իրենց իրավունքների: Միաժամանակ, դատական իշխանության մարմինները պետք է խուսափեն նաև քաղաքական բնույթ կրող մեկնաբանություններ և հայտարարություններ կատարելուց ևս: Նշվածը հիմնավորվում է նրանով, որ ինչպես վերը նշվեց, դատական իշխանության ներկայացուցիչների և հատկապես դատավորների մեկնաբանությունները հասարակության կողմից ընկալվում են ոչ թե որպես կոնկրետ

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

անձի սուբյեկտիվ կարծիք, այլ դրանց տվում է օբյեկտիվ գնահատական ու դիտարկվում է որպես ողջ դատական համակարգի դիրքորոշում: Արդյունքում՝ դատական համակարգի նկատմամբ վստահությունը կարող է նվազել կամ նույնիսկ՝ վերանալ:

4. Հաշվի առնելով դատավորների անձեռնմխելիության փաստը՝ իրենց պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում ձեռնարկած միջոցառումների և գործողությունների համար դատավորները չպետք է ենթարկվեն ցանկացած տեսակի քաղաքացիական պատասխանատվության միջոցների:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության նկատմամբ հանրության վստահության բարձրացման տեսանկյունից Եվրոպական դատարանի վերոգրյալ դիրքորոշումներն ունեն առանցքային կարևորություն: Սույն աշխատությամբ վեր բարձրացված հարցերը, Եվրոպական դատարանի մեկնաբանությունների լույսի ներքո, հնարավորություն կտան ձևավորել հստակ մեխանիզմ նախ խուսափելու համար արդեն իսկ Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումները կրկին թույլ տալուց, որի արդյունքում հնարավոր կլինի նաև հաստատուն քայլեր կատարել հասարակության մեջ դատական իշխանության նկատմամբ վստահության ձևավորման և բարձրացման ուղղությամբ:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Strasbourg, European court of human rights, Grand Chamber, Judgment 23 June 2016, Case of Baka v. Hungary  
<https://www.icj.org/wp-content/uploads/2016/06/Hungary-CASE-OF-BAKA-v.-HUNGARY.pdf>
2. Affaire TONI KOSTADINOV c. BULGARIE, requête no 37124/10, 27.01.2015, Strasbourg  
<https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22%3A%22001-151067%22%7D>
3. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտանության մասին» Եվրոպական կոնվենցիա, 04.11.1950 թվական, Հոռն, 6-րդ հոդված, 2-րդ կետ  
[https://www.gov.am/u\\_files/file/kron/2%20EuoroConvent-Arm.pdf](https://www.gov.am/u_files/file/kron/2%20EuoroConvent-Arm.pdf)

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

4. Case of BRONIOWSKI v. POLAND, Application no. 31443/96, Judgment, 22.06.2004, Strasbourg  
<https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22itemid%22:%5B%22001-61828%22%7D>
5. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտանության մասին» եվրոպական կոնվենցիա, 04.11.1950 թվական, Հոռմ, Թիվ 1 արձանագրության 1-ին հոդված  
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=20870>
6. Case OF MORICE v. FRANCE, Application no. 29369/10, Judgment, 23.04.2015, Strasbourg  
<https://hudoc.echr.coe.int/rus#%7B%22itemid%22:%5B%22001-154265%22%7D>
7. Case of SŁOMKA v. POLAND, Application no. 68924/12, Judgment, 06.12.2018, Strasbourg  
<https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22itemid%22:%5B%22001-187940%22%7D>
8. Case of SERGEY ZUBAREV v. RUSSIA, Application no. 5682/06, Judgment, 05.02.2015, Strasbourg  
[file:///C:/Users/User/Downloads/001-150785%20\(1\).pdf](file:///C:/Users/User/Downloads/001-150785%20(1).pdf)

### ПОЗИЦИИ ЕВРОПЕЙСКОГО СУДА КАК ГАРАНТИЯ ДЛЯ ПОВЫШЕНИЯ ДОВЕРИЯ К СУДЕБНОЙ ВЛАСТИ

**Лида Саргсян**

ЕУ, кафедра Правоведения, соискатель

В Республике Армения, как в демократической республике, в процессе успешного формирования и развития очень важное значение имеет судебная власть. Одновременно, чтобы судебная власть эффективно реализовала возложенные на нее функции, необходимо чтобы у общества формировалось и сохранялось доверие. Неоспоримый факт, что судебная система не может быть гарантом реализации закона, если общество не доверяет судам и не уверено, что судьи независимы и судебные акты свершаются соответственно закону. В настоящее время, у общества отсутствует доверие как к справедливому и беспристрастному суду, так и к правосудию, в целом.

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

Имея ввиду сложное у общества мнение, данная работа направлена и описывает такие механизмы, с помощью которых подкрепляется и увеличивается вера общества по отношению к судебной власти. К ним относится механизм, выдвинутый в контексте выраженных позиций Европейским судом по правам человека.

**Ключевые слова:** Судебная власть, судебная система, поднятие доверия, судебный акт, законность, верховенство закона.

### POSITIONS OF THE EUROPEAN COURT AS A GUARANTEE OF INCREASED CONFIDENCE WITH THE JUDICIARY

**Lida Sargsyan**

EU, Chair of Jurisprudence, Researcher

In the Republic of Armenia, as in a democratic republic, in the process of successful formation and development, the judiciary is very important. At the same time, for the judicial branch to effectively implement its functions, it is necessary for the society to form and maintain trust. cannot be a guarantor of the implementation of the law if society does not trust the courts and is not sure that judges are independent and judicial acts are carried out in accordance with the law. Currently, society does not have confidence in both a fair and impartial court and in justice, in general. public opinion, this work is directed and describes such mechanisms with the help of which the public's faith in relation to the judiciary is strengthened and increased, such as the mechanism put forward in the context of the expressed positions of the European Court of Human Rights.

**Keywords:** Judicial branch, judicial system, confidence building, judicial act, legality, rule of law.

*Տրվել է րազմադրության՝ 14.10.2020թ.  
Գրախոսվել է՝ 11.11.2020թ.*

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՈՐՁԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

#### *Մերի Մինասյան*

*ԵՀ, իրավագիտության ամբիոն, հայցորդ  
maryminasyan5@gmail.com, +374 98 353410*

Մարդու իրավունքները համընդհանուր, անքակտելի սրանդարտներ են, որոնք իրենց մեջ ներառում են բոլոր մարդկային էակների արժանապատվությունը և պաշտպանում են այն: Մարդու իրավունքները կանոնակարգում են ոչ միայն անհատների գոյակցությունը միմյանց հետ և հասարակությունում, այլ նաև՝ նրանց հարաբերությունները պետության հետ, ինչպես նաև՝ պետության պարտավորությունները նրանց հանդեպ: Ընդ որում, պետություն-հասարակություն միասնական կապն ապահովվում է ոստիկանության համակարգի միջոցով: Հետևաբար, ոստիկանությունը՝ որպես համակարգ, և ոստիկանության ծառայողը՝ անհատապես, պետք է հասարակության առջև հանդես գան ոչ միայն որպես համապատասխան մասնագիտական գիտելիքների, ունակությունների կրողներ, այլ նաև՝ տիրապետեն ոստիկանության վարքագծի և էթիկայի բոլոր կանոններին:

Վերոգրյալի համատեքստում՝ սույն աշխատությանը, ներկայացնելով ոստիկանության էթիկայի ընդհանուր կանոնները, անդրադարձ կկատարվի նաև մարդու իրավունքների և ոստիկանության էթիկայի հարաբերակցությանը, ինչպես նաև կներկայացվի եվրոպական երկրների լավագույն փորձը:

**Հիմնաբառեր.** Ոստիկանության էթիկա, ոստիկանության դեոնտոլոգիա, խոշտանգում, կոռուպցիա, մարդու իրավունքներ, լուսայան կապույտ պատ:

Հասարակության, պետությունների զարգացման հետ մեկտեղ Եվրոպական, և հատկապես Արևելյան Եվրոպայի շատ երկրներ, միջոցներ են ձեռնարկել բարեփոխելու իրենց ոստիկանության համակար-



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

գերն ու ծառայությունները: Հայաստանի Հանրապետությունը նույնպես հայտարարել է իր հավատարմությունը Եվրոպական երկրների կողմից որդեգրված ոստիկանության համակարգի բարեփոխումներին ուղղված միջոցառումներին: Հարկ է նշել, որ այդ բարեփոխումների գործընթացում առանցքային նշանակություն է ստացել ոստիկանության մասնագիտական էթիկայի կանոնների հաստատումը:

Մասնավորապես, 2001 թվականի սեպտեմբերի 19-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ընդունվեց Ոստիկանության էթիկայի եվրոպական կանոնագիրքը: Այն Եվրոպայի խորհրդի անդամ երկրների համար հանդիսացավ ուղենիշ հետագայում ազգային օրենսդրության շրջանակներում ոստիկանության էթիկայի վերաբերյալ կանոնակարգերն ընդունելու համար:

Հատկանշական է, որ Եվրոպայի խորհրդի գործունեության ուղղություններից մեկը մշտապես եղել է անդամ պետությունների պետական համակարգերի օրենսդրական սկզբունքների հաստատման և տարածման գործընթացը: Հարկ է նշել, որ առաջնահերթությունն այս ոլորտում մշտապես պատկանել է մարդու իրավունքների ապահովմանը: Ընդ որում, ոստիկանի կողմից մասնագիտական էթիկայի կանոնների պահպանումը համահավասար է մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ պետություն-հասարակություն միասնական կապն ապահովվում է ոստիկանության համակարգի միջոցով՝ Եվրոպայի խորհրդի գործունեության շրջանակներում բազմիցս քննարկման առարկա են դարձել այն հարցերը, որոնք կապված են ժողովրդավարական հասարակությունում ոստիկանության դերի բարձրացման հետ: Արդյունքում, Եվրոպայի խորհրդի տարբեր մարմիններ, իրենց իրավասության սահմաններում, զարգացրել են ոստիկանության գործունեության շրջանակներում համապատասխան կառավարման սկզբունքներ:

Վերոգրյալի համատեքստում հատկապես հիշատակման են արժանի Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Խոշտանգումների հարկադրման և նվաստացուցիչ կամ անմարդկային վերաբերմունքի պատժի համար սկզբունքները», «Ոստիկանության գործունեության

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ընթացում խտրականության որևէ ձևի բացառման վերաբերյալ սկզբունքները», որոնք կիրառման են ենթակա ոստիկանության աշխատակիցների գործունեության ընթացքում, ինչպես նաև՝ Եվրոպական ժողովրդավարական հանձնաժողովի վերամշակված առաջարկությունները, որոնք վերաբերում են ոստիկանության գործունեության սահմանադրական ասպեկտներին:

Ոստիկանության էթիկայի եվրոպական կանոնագիրքն անդրադառնում է այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ ոստիկանության նպատակները, օրենքի գերակայության ներքո ոստիկանության գործունեության իրավական հիմքերը, ոստիկանության և այլ իրավապահ մարմինների հետ փոխհարաբերությունները, ոստիկանության գործունեության շրջանակը, ոստիկանության կազմակերպչական գործառույթները, ոստիկանության հաշվետվողականությունը և վերահսկողությունը, ինչպես նաև միջազգային համագործակցությունը [3]:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ ազգային ոստիկանության ոլորտում ընթացող բարեփոխումները պետք է ապահովեն ոստիկանության գործունեության համապատասխանությունը ժողովրդավարական պետության նորմերին և մարդու իրավունքների միջազգային չափանիշներին: Մասնավորապես, ՀՀ ոստիկանության բարեփոխման շրջանակներում ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» 23.04.2020 թվականի թիվ 683-L որոշմամբ ներ է դրվել պարեկային ծառայության ծրագիրը: Նշված ծրագրի համատեքստում նոր պարեկային ծառայության ոստիկաններին պատրաստելու նպատակով իրականացվելու են մասնագիտական որակավորումը բարձրացնող դասընթացներ: Այդ դասընթացների թվին է դասվում նաև «Ոստիկանության էթիկա» վերտառությամբ առարկայի դասավանդումը: Այդուհանդերձ, կարևոր է, որ նշված առարկայի դասավանդումը չկրի զուտ դեկլարատիվ բնույթ, այլ, ժամանակի ընթացքում, համապատասխան մարմինների ջանքերի շնորհիվ ոստիկանության էթիկան տեսականից անցում կկատարի գործնական փուլի:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատությամբ, հիմք ընդունելով Եվրոպական երկրների լավագույն փորձը, հաշվի առնելով ազգային՝ ներպետական, չափորոշիչները կներկայացվեն ոստիկանության էթիկայի ընդհանուր կանոնները, անդրադարձ կկատարվի նաև մարդու իրավունքների և ոստիկանության էթիկայի հարաբերակցությանը՝ Եվրոպական երկրների փորձի համատեքստում: Ընդ որում, որպես ոստիկանի մասնագիտական էթիկայի խախտումներ, կդիտարկվեն հետևյալ խախտումները՝

- ծառայողական վարքագծի կոպիտ խախտումներ,
- կոռուպցիա:

Ընդհանուր առմամբ, ոստիկանության բոլոր տեսակի իրավախախտումները կարելի է բաժանել երեք հիմնական կատեգորիաների՝

- քրեական հանցագործություններ,
- կարգապահական իրավախախտումներ
- մասնագիտական էթիկայի խախտումներ:

Ընդ որում, առաջին երկու կատեգորիաները՝ քրեական հանցագործությունները և կարգապահական իրավախախտումները, ինքնին մասնագիտական դեոնտոլոգիայի խախտումներ են: Նշվածի համատեքստում նպատակահարմար է քննարկել Եվրոպական դատարանի դիրքորոշումները:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) Գյոֆգենն ընդդեմ Գերմանիայի գործով (GÄFGEN v. GERMANY) թիվ 22978/05 գանգատի հիման վրա 2010 թվականի հունիսի 1-ին կայացված վճռով արձանագրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ (խոշտանգումների արգելում) և 5-րդ (ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք) հոդվածների խախտումներ [1]: Մասնավորապես, նշված գործի փաստերի համաձայն՝ Եվրոպական դատարանի Մեծ պալատն արձանագրել է, որ անձին խոշտանգումներով սպառնալն իր բնույթով առնվազն անմարդկային վերաբերմունք է: Եվրոպական դատարանը հաստատել է, որ դիմումատուի՝ Գյոֆգենի, բողոքները՝ ֆիզիկական բռնությունների, վնասվածքների և հարցաքննության ընթացքում սեռական բռնության ենթադրյալ սպառնալիքների մասին, կասկած չեն կարող հարուցել: Միա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ժամանակ, Եվրոպական դատարանը հանգել է այն եզրակացության, որ դիմումատուի անձին ուղղված ֆիզիկական սպառնալիքները գործի նյութերով ապացուցվել են՝ նկատի ունենալով, որ այդ սպառնալիքները չեն եղել ինքնաբուխ գործողությունների տեսքով, այլ կրել են կանխամտածված և դիտավորյալ բնույթ [4]:

Վերը նշված դատական ակտի փաստերի ուսումնասիրությունից պարզվում է, որ Գյոֆգենի անձի նկատմամբ խոշտանգումները կատարվել են Գերմանիայի Դաշնության ոստիկանության ծառայողների կողմից մասնագիտական էթիկայի կոպիտ խախտումներով: Եվրոպական դատարանի արձանագրած իրավանորմերի խախտումները, ըստ էության, ուղղված են ոստիկանության էթիկայի կանոնների խախտմանը: Հետևաբար, վերոգրյալ դատական ակտը կարող է ունենալ նախադատելի նշանակություն այլ երկրների, և մասնավորապես, ոստիկանության համակարգերի համար՝ հետագայում նմանատիպ գործելաճից խուսափելու նպատակով:

Եվրոպական մի շարք երկրներ, կարևորելով մարդու իրավունքների պաշտպանության գործում ոստիկանության էթիկայի դերը, վերջինիս իրավական կարգավիճակ են հաղորդել: Արդյունքում, 2001 թվականից սկսած բազմաթիվ եվրոպական երկրներ ընդունեցին ոստիկանության էթիկայի վերաբերյալ համապատասխան նորմատիվ իրավական ակտեր: Այսպես՝

Բուլղարիայի Ոստիկանության մասնագիտական էթիկայի օրենսգիրքը գործել է մինչև Եվրոպական միության 2001 թվականի Եվրոպական միության հանձնարարականների հրատարակումը: Նկատի ունենալով, որ Եվրոպական միությանն անդամակցելու կարևորագույն պայմաններից էր ոստիկանության գործունեության եվրոպական չափանիշներին համապատասխանումը՝ Բուլղարիայի ոստիկանությունը 2006 թվականին ամբողջությամբ վերանայեց մասնագիտական էթիկայի օրենսգիրքը՝ ընդունելով օրենսգրքի նոր տարբերակ:

Բելգիայի Ոստիկանության մասնագիտական վարքականոնների ստեղծման աշխատանքներն սկսվել են դեռևս 2001 թվականից: Օրենսգիրքն ուժի մեջ է մտել միայն հինգ տարի անց, ինչին նպաստել են

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

նաև մի շարք ոստիկանների կողմից կատարված ծանր հանցագործությունների դեպքերը:

Եվրոպական մեկ այլ երկրում՝ Ֆրանսիայում, նույն նպատակով 2011 թվականի մարտին ստեղծվել է «Իրավունքի պաշտպան» կոչվող անկախ սահմանադրական մարմինը: Վերջինս լիազորվել է վերահսկելու երկրում գործող բոլոր իրավապահ մարմինների, այդ թվում՝ ոստիկանների գործունեությունը, աջակցելու նրանց մասնագիտական էթիկայի սահմանված պահանջները պահպանելուն [6]:

Եվրոպական երկրների տեղի ունեցող բարեփոխումներին զուգահեռ՝ Հայաստանի Հանրապետությունում ևս կարևորվել է ոստիկանության էթիկայի դերը, արդյունքում՝ 2005 թվականին ընդունվել է ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը [2]:

Ոստիկանության տարեկան հաշվետվություններում զգալի են ոստիկանի վարքագծի կանոնների խախտման և պատասխանատվության ենթարկելու դեպքերը: Հարկ է նշել նաև, որ որոշ դեպքերում պաշտպանելով քաղաքացու իրավունքներն ու օրինական շահերը երբեմն խոցելի են դառնում և թիրախավորվում նաև ոստիկանության ծառայողները: Օրինակ՝ քիչ չեն քաղաքացիների կողմից սուտ մատնության դեպքերը (ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում հանցագործության մասին սուտ մատնության համար): Այդուհանդերձ, պետք է նշել, որ առկա է իրավական բաց այն առումով, որ որ Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ դեպքերը պատշաճ ուշադրության չեն արժանանում, արդյունքում՝ անհիմն պատասխանատվության է ենթարկվում ոստիկանության ծառայողը:

Անդրադառնալով ոստիկանության էթիկայի կանոնների խախտման մյուս տեսակին՝ կոռուպցիային, ապա հարկ է նշել, որ եվրոպական չափանիշներով ոստիկանի էթիկայի կոպտագույն խախտում է համարվում նաև կոռուպցիան: Պաշտոնապես միջազգային հանրությունը կոռուպցիայի դեմ պայքարի շուրջ իր մտահոգությունն ու պատրաստակամությունը հայտնեց միայն 1990-ականների վերջին՝ ընդունելով մի շարք իրավական «գործիքներ» ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի մակարդակում:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, 1999 թվականի հունվարի 27-ին ընդունվեց Կոռուպցիայի մասին Եվրոպայի խորհրդի քրեական իրավունքի կոնվենցիան, որը հռչակում էր՝ կոռուպցիան սպառնում է.

- օրենքի գերակայությանը,
- ժողովրդավարությանը,
- մարդու իրավունքներին:

Բացի վերը նշվածից ոստիկանության ծառայողների կողմից կատարվում են նաև ոստիկանության վարքագծի այնպիսի խախտումներ, որոնք միջազգային իրավունքում հայտնի են որպես կապույտ պատի լուռություն կամ կապույտ կոդ անվամբ:

Լռության կապույտ պատը (Blue Code of Silence) կամ կապույտ կոդը եզրույթներ են, որոնք հիմնականում օգտագործվում են ԱՄՆ-ի ոստիկանության աշխատակիցների կողմից որպես «ոչ պոզիտիվ օրենք» [5]: Տվյալ դեպքում, չեն հաղորդվում և/կամ բարձրաձայնվում համաժառայակիցների կողմից կատարված իրավախախտումները, հանցագործությունները կամ ծառայողական սխալները:

Այսպիսով՝ ուսումնասիրելով եվրոպական և միջազգային երկրների փորձը կարելի է հանգել այն եզրակացության, որ ոստիկանության էթիկայի կանոններն ունեն կարևոր նշանակություն այնքանով, որ այդ կանոնների պահպանումն ուղիղ համեմատական է մարդու իրավունքների պաշտպանությանը:

Ոստիկանության կողմից էթիկայի կանոնների խախտումները կարող են հանգեցնել ոչ միայն հասարակության մոտ վստահության և վարկանիշի անկման, այլև ունենալ ավելի լուրջ հետևանքներ՝ հանգեցնել ծանր հանցագործությունների: Սույն թեմայի արդիականությունը պայմանավորված էր, ոչ միայն վերը նշվածով, այլև Հայստանի Հանրապետությունում ոստիկանության բարեփոխումների ծրագրի ներդրմամբ:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

### Օգտագործված գրականության ցանկ

1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, Հռոմ, 4-ը նոյեմբերի, 1950 թ.
2. ՀՀ օրենքը «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնադիրքը հաստատելու մասին», Երևան, 2005
3. The European code of police ethics, Strasbourg, March 2002
4. CASE OF GÄFGEN v. GERMANY (Application no. 22978/05) STRASBOURG, 1 June 2010
5. Police Ethics and Integrity: Breaking the Blue Code of Silence, L. Westmarland, 19 Aug 2006
6. Toolkit on police integrity, Geneva, 5 March, 2012

### ВЗАИМОСВЯЗЬ ПРАВ ЧЕЛОВЕКА И ПОЛИЦЕЙСКОЙ ЭТИКИ В КОНТЕКСТЕ ЕВРОПЕЙСКОГО ОПЫТА

#### Мери Минасян

ЕУ, кафедра Правоведения, соискатель

Права человека всеобщие неразлучные стандарты, которые включают в себе достоинство всех людей и защищают их. Права человека регулируют не только сосуществование людей вместе и в обществе, но и их отношение с правительством, а также ответственность государства перед ними. Причем общая связь государства с обществом обеспечивается через систему полиции. Следовательно, полиция, как система, и сотрудник полиции, должны встать перед обществом не только как носители соответствующих профессиональных навыков, но и владеть всеми правилами этики полиции. В контексте вышесказанного, представив общие законы полицейской этики, этой работой будет сделана ссылка также на соотношение полицейской этики и этики прав человека. Также будет представлен лучший опыт европейских стран.

**Ключевые слова:** Полицейская этика, полицейская деонтология, пытки, коррупция, права человека, голубая стена молчания.

### THE RELATIONSHIP OF HUMAN RIGHTS AND POLICE ETHICS IN THE CONTEXT OF EUROPEAN EXPERIENCE

**Meri Minasyan**

EU, Chair of Jurisprudence, Researcher

Human rights are universal inseparable standards that embody the dignity of all people and protect them. Human rights regulate not only the coexistence of people together and in society, but also their relationship with the government, as well as the responsibility of the state to them. Moreover, the general relationship of the state with society is provided through the police system. Therefore, the police, as a system, and the police officer, must stand before society not only as bearers of the relevant professional skills, but also possess all the rules of police ethics. In the context of the above, by introducing general laws of police ethics, this work will be reference is also made to the relationship between police ethics and human rights ethics. Best practices of European countries will also be presented.

**Keywords:** Police ethics, police deontology, torture, corruption, human rights, blue wall of silence.

*Տրվել է արագրության՝ 14.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 10.11.2020թ.*



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՄԱՆ և ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՐՈՇ ԱՍՊԵԿՏՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՆԱԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ

*Անուշավան Մուշեղյան*

*ԵՀ, իրավագիտության ամբիոն, հայցորդ,  
law.planet.am@gmail.com, +374 93 401919*

Հոդվածը նվիրված է դատավորների ընտրման և նշանակման Հայաստանի և Ֆրանսիայի Հանրապետությունների և Իսպանիայի թավորության փորձին: Հոդվածում քննարկվում են

- մասնագիտացված դպրոցներում ապագա դատավորների նախապատրաստման չափանիշները
- պետական կառուցվածքների և դատական համայնքի մարմինների դերը դատավորների նախապատրաստման և նշանակման ընթացակարգում:

**Հիմնաբառեր.** Բարձրագույն դատական խորհուրդ, Արդարադատության ակադեմիա, դատավորի պաշտոն զբաղեցնելու մրցույթ, նշանակման կարգ:

### Ներածություն

Դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգումը, դրա արդյունքներով դատավորների թեկնածուների հավակնորդների, թեկնածուների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը, պաշտոնի նշանակումը համարվում է ժամանակակից պետության դատական համակարգի տարր: Պայմանավորված դատավորների, որպես բարձր ինտելեկտուալ և բարոյական հատկանիշներով օժտված անձի, դատավորների ընտրությունը, նախապատրաստությունը և հետագա վերապատրաստումը միտված է վերջիններիս անկախության, արհեստավարժության և պատասխանատվության ապահովման համար:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Խոսելով դատարանների հանդեպ հասարակության վստահության ամրապնդման մասին որպես սկզբնաքայլ, կարևոր դեր է կատարում դատավորների ընտրության կարգերի թափանցիկությունը, որակը, որն իր հերթին սկիզբ է առնում պետության, պատասխանատու մարմինների հանդեպ ձևավորված վստահությունից:

Չնայած համապատասխան կառույցների գործունեության, այդ ուղղության բարեփոխման մեջ զգալի հաջողություններին, դեռ վաղ է ասել, որ պետական քաղաքականությունը այդ կարևոր ոլորտի մեջ բոլոր խնդիրները լուծել է:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ Ֆրանսիայի Հանրապետություններում և Իսպանիայի թագավորությունում գոյություն ունեն դատավորների պատրաստման մասնագիտացված ուսումնական կենտրոններ:

Նախքան դատավորների՝ որպես կադրերի ընտրման, նախապատրաստման համակարգի վրա կանգ առնելը, հարկ է նշել, որ ոչ տարածաշրջանում և ոչ էլ աշխարհում այդ հարցում չկա իդեալական մոդել կամ մեկ ստանդարտ: Յուրաքանչյուր պետություն հաշվի առնելով մի շարք հանգամանքներ՝ միջազգային փորձը, արդարադատության ոլորտում պետական քաղաքականությունը և այլ բաներ, ինքն է մշակում և կյանքի կոչում իր համար նախընտրելի մոդել:

Գերմանիայում դատավորների հավակնորդների թեկնածուների հատուկ դպրոցներ չկան, նման գործառույթ դրված է համալսարանների իրավաբանական ֆակուլտետների վրա, որոնք գտնվում են ինչպես կրթության այնպես էլ արդարադատության նախարարությունների հովանու ներքո: Իսպանիայում համալսարանական կրթությամբ անձինք դատավորի պաշտոնի համար որակավորման քննությունների հաջող հանձնելուց հետո, անցնում են պարտադիր հատուկ ուսուցում ուսումնական կենտրոնում:

ՏՀԶԿ պետությունների փորձը տարբերվում է միմյանցից, սակայն այդ տարբերությամբ հանդերձ դատական համակարգում աշխատանքի կայունությունը և դատավորների աշխատանքից մեծ քանակի հեռացումների բացակայությունը վկայում է թեկնածուների ընտրման որակի մասին:

**Դատավորների հավակնորդների թեկնածուների նախապատրաստման աշխատանքների իրականացման Ֆրանսիայի Հանրապետության փորձի հակիրճ բովանդակությունը.**

Ֆրանսիայում դատավորների ընտրման և նշանակման մեխանիզմում մասնակցում են մի քանի փոխհամաձայնեցված կառույցներ: Դրանք են՝ Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդը, ծառայության մեջ պաշտոն նշանակելու Հանձնաժողովը, Արդարադատության նախարարությունը, Մագիստրատուրայի ազգային դպրոցը [4, էջ 8]: Հարկ էմ համարում ի սկզբանե բացահայտել, որ «մագիստրատը» դա ընդհանուր հասկացություն է: Մագիստրատ է համարվում ցանկացած պաշտոնատար անձ ով սահմանադրությամբ և օրենքներով օժտված է ընդունել որոշումներ, որոնց կատարումն երաշխավորվում է պետական իշխանության ուժով:

Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդն իր մեջ ներառում է երկու կազմ, որոնցից մեկի լիազորությունները տարածվում է դատավորների, մյուսը՝ դատախազների նկատմամբ:

Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդը ապահովում է՝

- դատավորների նշանակման և նրանց ծառայողական առաջխաղացման մեջ մասնակցությունը,
- դատախազների նշանակման և նրանց ծառայողական առաջխաղացման մեջ մասնակցությունը,
- որպես կարգապահական մարմին հանդես գալը:

Մագիստրատուրայի ազգային դպրոցը դա ուսումնական հաստատություն է, որը իրականացնում է մասնագիտական նախապատրաստում և վերապատրաստում թվով հինգ մագիստրատների կողմից (դատավորների և դատախազների): Ազգային դպրոցը գտնվում է արդարադատության նախարարության հսկողության ներքո: Իր կարգավիճակով պայմանավորված դպրոցը իր վարչական և ֆինանսական ռեսուրսների կառավարման մեջ ինքնավար է: Դպրոցի կառավարման բարձրագույն կոլեգիալ մարմինը դա դպրոցի խորհուրդն է, որի մեջ են մտնում Արդարադատության նախարարության ներկայացուցիչներ, նաև գիտնականներ, դատապաշտպաններ և այլոք: Խորհուրդը ընդունում է որոշումներ, որոնք վերաբերվում են ուսումնական ծրագրերին,

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

բյուջեի վերաբերյալ անցկացնում են քվեարկություն և ամեն տարի հաշվետվություններ են հաստատում ֆինանսական և վարչական գործունեության վերաբերյալ [3, էջ 8]: Դպրոցի մանկավարժական առաքելությունը բաժանված է երկու հիմնական վարչությունների՝ սկզբնական ուսուցման և ընտրության: Դպրոցի խորհրդի նախագահն է՝ Վճռաբեկ դատարանի նախագահը, իսկ փոխնախագահն է՝ Գլխավոր դատախազը:

Ազգային դպրոցում դատավորների պաշտոնին թեկնածուների ընտրման կարգը.

Վերը թվարկված մարմինները այս կամ այն չափով մասնակցում են դատական պաշտոններին ընտրման և նշանակման մեջ: Տվյալ կառույցների աշխատանքի հիման վրա ապահովվում է դատական մարմին ընդունվելու երկու եղանակ, համապատասխան փուլով՝

1. Հանձնելով փաստաթղթեր Մագիստրատուրայի ազգային դպրոց նախ որոշվում է՝ բավարարո՞ւմ է արդյոք դիմորդը նշված պահանջներին, որից հետո հանձնում է քննություններ որակավորման մրցակցություն հաղթահարելու նպատակով,
2. Հանձնաժողովի համաձայնությամբ դատական համակարգում ուղիղ ընտրության միջոցով:

Ընտրությունը դիմորդների որակական կազմից կատարվում է երեք ձևով՝

Առաջին ձևը կոչվում է «ուսանողական», որը նախատեսված է համալսարանական կրթությամբ անձանց համար, որոնք չունեն աշխատանքի ստաժ իրավաբանական մասնագիտությամբ: Այս դեպքում պարտադիր պահանջ է ազգային դիպլոմը երկրորդ բարձրագույն կրթության վերաբերյալ:

Երկրորդ ձևը նախատեսված է ատեստավորված պետական ծառայողների համար կամ պետական հիմնարկների համար, որոնք տվյալ մրցույթի անցկացման պահի դրությամբ ունեն 4 տարվա համապատասխան պաշտոնի աշխատանքային փորձ:

Երրորդ ձևը հնարավորություն է տալիս անձանց ովքեր ունեն առնվազ ութ տարվա մասնագիտական գործունեությամբ զբաղվելու փորձ և ունեն անձնական բարձր հեղինակություն տվյալ ոլորտում, այդ թվում

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

իրավագիտության դոկտորները՝ ազատված լինելով քննություններից, ընդունվել որպես ունկնդիրներ:

Սակայն, այս դեպքում էլ առկա է սահմանափակում թվային կազմի առումով՝ առանց քննությունների անցած ունկնդիրների թիվը չպետք է գերազանցի ունկնդիրների ընդհանուր թվի 1/3-րդը:

Մրցույթի առաջին փուլում դիմորդները հանձնում են գրավոր քննություն ընդհանուր ոլորտից: Այս փուլն հաղթահարած դիմորդները անցնում են հաջորդ՝ բանավոր փուլ իրավագիտության իմացության, օտար լեզվի իմացության ստուգում և ստուգում են դիմորդների բարոյա-սահմանափակման բնութագրի:

Բացի դա դիմորդները ընդհանուր բժշկական զննում են անցնում կապված ֆիզիկական վիճակի հետ:

Դիմորդների միայն գրեթե 10-15 տոկոսն են ընդունվում Ազգային դպրոց:

Դիմորդները, որոնք հաջողությամբ անցել են մրցույթը Արդարադատության նախարարի հրամանագրով համարվում են Ազգային մագիստրատուրայի ունկնդիրներ: Նրանց հետ պարտադիր կերպով առնվազն տաս տարվա ժամկետով կնքվում է աշխատանքային պայմանագիր այդ ոլորտում աշխատելու պայմանով: «Մագիստրատների կարգավիճակի» մասին Ֆրանսիայի Հանրապետության օրենքի համաձայն Ազգային դպրոց ընդունվելը փաստում է դատական պաշտոնի անցած նախնական ընտրության հանգամանքը, որի վերջնական փուլը դպրոցում հատուկ ուսման արդյունքում իրավասություններ ձեռք բերելուց հետո կարող է համարվել որակավորված մասնագետներ: Ունկնդիրներին վճարվում է աշխատավարձ առաջին ատյանի դատավորի աշխատավարձի պահումից հետո կանխիկ գումարի 75-80 տոկոսի չափով: Գործող դատավորների պատասխանատվությամբ ունկնդիրները մասնակցում են դատավարական գործողությունների մեջ, սակայն առանց որևէ փաստաթուղթ ստորագրելու իրավունքի: Նրանք նման գործողություններից առաջ երդում են տալիս պահպանել ծառայողական գաղտնիքը և որպես ունկնդիր դրսևորել պատշաճ և անկողմնակալ վարք: Ուսման կուրսը տևում է ընդհանուր 31 ամիս: Առանց քննությունների ընդունված ունկնդիրների համար ուսման ժամկետը կրճատվում է: Ուս-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ման առաջին տարին սկսվում է դատարանի դատական համակարգի երկշաբաթյա ծանոթացումից: Դրա մեջ է մտնում մեկ շաբաթ պրակտիկա և մեկ շաբաթ ուսուցում՝ փիլիոսոփայական թեմաներով: Ուսուցման հաջորդ փուլը դատարանից դուրս պրակտիկան է, որը տևում է 2,5 ամիս և ներառում ծանոթություն ձեռնարկությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և տարբեր այլ հիմնարկների հետ: Իսկ առաջին տարվա հետագա ութ ամիսները ունկնդիրներն անցկացնում են դպրոցում, յուրացնելով դատավարական գործառույթների մեթոդաբանությունը, դատական գործառույթների ֆունդամենտալ սկզբունքները, խորը ուսումնասիրում են դատավորի մասնագիտական էթիկան: Ունկնդիրները սովորում են տիրապետել նաև հռետորական արվեստին և հաղորդակցման հմտություններին: Ուսուցման երկրորդ տարին ունկնդիրները անցկացնում են դատարաններում պրակտիկայի պատասխանատուների հսկողության ներքո: Ուսուցման երրորդ տարում ունկնդիրը ստուգարքներ և քննություններ է հանձնում: Ուսուցման 31 ամսյա կուրսի ավարտից հետո որակավորման հանձնաժողովն ամփոփում է ունկնդիրների նախապատրաստման արդյունքները դատավորի աշխատանքի կատարման համար: Ունկնդիրներն իրենց ձեռք բերած բալերի հիման վրա զբաղեցնում են իրենց տեղը համապատասխան ցուցակում: Արդարադատության նախարարը ունկնդիրների ցուցակը ներկայացնում է եզրակացության Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդ, որից հետո դրական եզրակացության արդյունքում ներկայացվում է Ֆրանսիայի նախագահի հրամանագրմանը:

Ազգային դպրոցից դուրս Ֆրանսիայում դատավորներ կարող են նշանակվել պետական ծառայության ուրիշ ներկայացուցիչներ համապատասխան պահանջների բավարարման դեպքում, պետական խորհրդականներ, իրավաբան պրոֆեսորներ, որոնք ունեն առնվազն 10 տարի դասավանդման փորձ և համապատասխանում են այլ պահանջներին:

Դատավորների հավակնորդների թեկնածուների նախապատրաստման աշխատանքների իրականացման Իսպանիայի Թագավորության փորձի հակիրճ բովանդակությունը:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Իսպանիայում դատավորների ընտրության և նախնական ուսուցման սկզբունքները գրեթե նույնանում են, իհարկե կան որոշակի առանձնահատկություններ: Դրանցից է օրինակ ի տարբերություն Ֆրանսիայի Հանրապետության Ազգային դպրոցի, Իսպանիայի Թագավորության արդարադատության դպրոցի ունկնդիր կարող են հանդիսանալ միայն իրավաբանական կրթությամբ անձինք: Երկրորդ Իսպանիայի Թագավորության արդարադատության դպրոցը գտնվում է դատական իշխանության Բարձրագույն խորհրդի կառավարման ներքո: Բարձրագույն խորհուրդը ֆինանսավորում է արդարադատության դպրոցին և իրականացնում նրա ընդհանուր կառավարումը, կազմակերպում է ընդունելության քննությունները: Առաջին փուլում քննությունների թեստավորումն է, որը համարվում է գտիչ փուլ, արդյունքում շատ մասնակիցներ այս փուլը չեն հաղթահարում: Դրանից հետո նոր անցկացվում են գրավոր և բանավոր քննություններ: Քննությունները անցկացվում են բաց: Յուրաքանչյուր ոք կարող է հետևել դրա ընթացքին: Դիմորդները քննությունները հաղթահարելուց հետո ստանում են դատավորների թեկնածուների հավակնորդների կարգավիճակ: Նրանք ստանում են աշխատավարձ, որը համապատասխանում է դատավորի աշխատավարձի 75 տոկոսին: Ուսուցումը տևում է երկու տարի և իր մեջ ներառում է տեսական ուսուցում ինն ամիս տևողությամբ և տասնհինգ ամիս տևողությամբ պրակտիկա տարբեր իրավապահ մարմիններում և դատարանում: Ուսուցման գործընթացը նույնն է ինչ Ֆրանսիայում: Ուսումն ավարտելուց հետո ավարտական առանձին քննություն չեն հանձնում, այլ գնահատվում է ընդունելության քննության բալերի և պրակտիկայի ընթացքում հավաքած բալերի հանրագումարը: Դատական իշխանության բարձրագույն խորհրդի կողմից նշված բալերի հիման վրա ուսուցումն ավարտած ունկնդիրների ցուցակի հրապարակումից հետո Իսպանիայի Թագավորի հրամանագրով նշանակվում են դատավոր:

**Հայաստանի Հանրապետությունում դատավորների հավակնորդների թեկնածուների ընտրության, ուսուցման կարգի հակիրճ նկարագրությունը: Դրա բացասական կողմերը:**

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվել ցանկացող անձը, որն ունի համապատասխան ֆիզիկական-առողջական, մասնագիտական տվյալներ մասնակցում է գրավոր և բանավոր որակավորման ստուգմանը: Փաստաթղթերի հիման վրա Դատական դեպարտամենտի համապատասխան ստորաբաժանումը որոշում է անձի՝ դատավորների հավակնորդների համար օրենքով սահմանված պահանջների համապատասխանությունը: Որից հետո անձը մասնակցում է գրավոր քննությանը, և միայն այն հաղթահարելուց հետո թեկնածուի հավակնորդն մասնակցում է բանավոր փուլի: Այս փուլերի ընթացքում բացահայտվում են հավակնորդի անհրաժեշտ հմտություններն ու որակները, մասնագիտական աշխատանքի փորձառությունը, դատավոր դառնալու շարժառիթն ու ակնկալիքը, դատավորի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական հատկանիշները (մասնավորապես՝ ինքնատիրապետում, բարեվարքություն, վարվեցողություն, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառում, պատասխանատվության զգացում, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, արդարամտություն, վերլուծական կարողություններ և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշներ) գնահատելու միջոցով: Հարցազրույցն անցկացնում է Բարձրագույն դատական խորհուրդը, որին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել նաև հոգեբան:

Բարձրագույն դատական խորհուրդը որակավորման ստուգման արդյունքների հիման վրա կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը և այն ներկայացնում Արդարադատության ակադեմիա՝ նրանց ուսուցումը կազմակերպելու նպատակով [2, էջ 8]: Ուսուցումը տեղի է ունենում ուսումնական ծրագրերով և պլաններով նախատեսված դասընթացների և պրակտիկայի միջոցով: Պրակտիկան անց է կացվում դատարաններում համապատասխան դատավորների մոտ համաձայն Արդարադատության ակադեմիա պրակտիկայի պլանի: Դատավորների թեկնածուների հավակնորդները ուսուցման ընթացքում հանձնում են ստուգարք ընդհանուր ութ առարկաներից և գրավոր քննություն մասնագիտական առարկաներից:



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գրավոր քննության արդյունքում հավաքած միավորների հանրագումարից ցուցակում զբաղեցնում են համապատասխան տեղ: Դատավորի թեկնածուների հավակնորդների վարձատրությունը կազմում է առաջին ատյանի դատավորի զուտ աշատավարձի մոտ 25 տոկոսը: Ընդհանուր ուսումնառության տևում է մոտ յոթ ամիս: Որից հետո Բարձրագույն դատական խորհուրդը Արդարադատության ակադեմիայում ուսուցումն ավարտած դատավորների թեկնածուների հավակնորդներին ներառում է դատավորների թեկնածուների ցուցակներում՝ ըստ համապատասխան մասնագիտացումների: Առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը Հանրապետության նախագահի նշանակմանն առաջարկելու նպատակով թեկնածու ընտրելիս առաջարկություն է ներկայացնում [1, էջ 8]:

Հայաստանի, Ֆրանսիայի Հանրապետությունների և Իսպանիայի Թագավորության մոդելներն ունեն շատ նմանություններ, սակայն որոշակի հարցերով շատ տարբեր են: Սույն աշխատանքում, թերևս՝ Հայաստանի Հանրապետության մոդելի դեպքում, թիրախավորել ենք հետևյալ խնդիրները.

- Դիմորդների ցանկում չեն ցանկանում ներառվել լավ որակավորում ունեցող մասնագետներ, այն պատճառով, որ նախ ծանրաբեռնվածությունը առաջին ատյաններում շատ է, և դրան զուգահեռ այն հանգամանքը, որ նման մասնագետները մասնավոր ոլորտում շատ ավելի բարձր են վարձատրվում:
- Կապված ուսումնական փուլի հետ ՀՀ մոդելում ուսումնառության ժամանակահատվածը կարճ է, քան օրինակ Իսպանիայի մոդելում: Անդրադառնալով այդ ընթացքում ստացած վարձատրության՝ հարկ է նշել, որ Ֆրանսիայի և Իսպանիայի մոդելների հետ համեմատ այն չի էլ կազմում դրանց կեսը:
- ՀՀ-ի մոդելի դրական կողմն այն է, որ անկախ պետական մարմինն՝ Բարձրագույն դատական խորհրդին է պատվիրակված որակավորման ստուգման անցկացումը և դրա արդյունքների հիման վրա դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակի կազմումը և հաստատումը: Այս մասով կա որո-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

շակի ինստիտուցիոնալ անկախություն ի տարբերություն այլ երկրների մոդելների:

Բարձրացված հիմնախնդիրների լուծման համար առաջարկվում է միաժամանակ և՛ ավելացնել դատավորների հաստիքների քանակը, և՛ բարձրացնել վերջիններիս աշխատավարձը:

Ուսումնառության փուլում թեկնածուի հավակնորդի կողմից ստացած կրթաթոշակը հասցնել այն չափի (հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, սպառողական զամբյուղը, դատավորի աշխատավարձը, դատական համակարգում միջին և բարձր պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատավարձը), որը հնարավորություն կտա ուսումնառության ընթացքում օրենսդրական ճանապարհով արգելել աշխատելը այլ հաստատությունում, արդյունքում թեկնածուի հավակնորդը միազբաղ լինելով հնարավորություն կունենա ամբողջ ներուժ կենտրոնացնել ուսումնառության և պրակտիկայի վրա:

### Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ սահմանադրություն (2015թ. փոփոխություններով)
2. «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք (ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին)
3. Ордонанс Французской Республики № 58–1270 от 22 декабря 1958 г., содержащий органический закон «О статусе магистратуры» [Текст] // [Электронный ресурс]. – Режим доступа: <http://constitutions.ru/?p=8150> 3. Андреева И.А. Первоначальная профессиональная подготовка магистратов во Франции [Текст] // Право и образование. – 2013. – №4. – С.97.
4. Соловьев А.А. Высший совет магистратуры как орган судейского сообщества Французской Республики [Текст] // М., 2014. – С.56.
5. <http://court.am/hy>

НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ОТБОРА И ПОДГОТОВКИ КАНДИДАТОВ В  
СУДЬИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С УЧЕТОМ ОПЫТА  
ФРАНЦУЗСКОЙ РЕСПУБЛИКИ И КОРОЛЕВСТВА ИСПАНИЯ

**Анушаван Мушегян**

ЕУ, кафедра Правоведения, соискатель

Статья посвящена опыту Армении, Франции, Испании по вопросу отбора и назначения судей. В статье рассматриваются:

- Критерии подготовки будущих судей в специализированных школах
- Роль государственных структур и органов судейского сообщества в процессе назначения судей.

**Ключевые слова:** Высший судебный совет, Академия юстиции, конкурс на должность судьи, порядок назначения.

SOME ASPECTS OF THE SELECTION AND PREPARATION OF  
CANDIDATES FOR JUDGES IN THE REPUBLIC OF ARMENIA, TAKING  
INTO ACCOUNT ALSO THE EXPERIENCE OF THE REPUBLIC OF  
FRANCE AND THE KINGDOM OF SPAIN

**Anushavan Musheghyan**

EU, Chair of Jurisprudence, Researcher

The article is dedicated to the experience of the Republic of Armenia, the French Republic and the Kingdom of Spain in the selection and appointment of judges. The article discusses:

- Criteria for training future judges in specialized schools
- The role of state structures & judicial community bodies in the process of appointing judges.

**Keywords:** Supreme Judicial Council, Academy of Justice, competition for the position of a judge, appointment procedure.

*Տրվել է րազմարտի մասին՝ 12.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 05.11.2020թ.*

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ԳՐԱՎՈՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՄԱՍԻՆ ՀԱՍՑԵԱՏԻՐՈՋՆ ԻՐԱԶԵԿԵԼՈՒ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՊԱՏՇԱՃՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ԾԱՎԱԼՎՈՂ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

#### **Ջավեն Սմբաթյան**

ԵՀ, իրավագիտության ամբիոն, հայցորդ  
zavensmbatyan@mail.ru, +374 99 469933

Սույն հոդվածում հանգամանորեն քննարկվում են գրավոր վարչական ակտի մասին դրա հասցեատիրոջն իրազեկելու և իրազեկման պարզաճություն շուրջ ծավալվող հիմնահարցերը: Վեր են հանվում գործող իրավանորմերի բացերը և դրանց թերի կենսագործման դրսևորումները:

Իրավահամեմատական մեթոդի օգտագործմամբ՝ պրակտիկայում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկվում են լուծումներ:

**Հիմնաբառեր.** Վարչական ակտ, վարչարարություն, իրազեկում, օրենք:

Վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտը հանդիսանում է վարչական մարմիններին՝ այսինքն իշխանական լծակներով օժտված Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններին, Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններին և անձանց կապող հիմնական օղակներից մեկը, քանզի վարչական ակտն ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Գրավոր վարչական ակտի պարագայում ՀՀ գործող օրենսդրությունը հստակ նախատեսում է վարչական ակտն ընդունված համարելու պահը, այն է՝ վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրելը:

Այսպիսով՝ օրենսդրությունը նախատեսում է գրավոր վարչական ակտն ընդունված համարելու երկու էական տարր, որոնցից յուրաքանչ-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

յուրի առկայությունը անհրաժեշտ է, իսկ երկուսը միասին բավարար՝ գրավոր վարչական ակտն ընդունված համարելու համար: Դրանք են՝

- վարչական ակտը պետք է ստորագրվի,
- վարչական ակտը պետք է ստորագրվի հենց վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից:

ՀՀ վճռաբեկ դատարանը 19.07.2011 թվականի թիվ ՎԴ2/0286/05/10 վարչական գործով կայացված նախադեպային որոշմամբ արձանագրել է, որ վարչական ակտին տեղեկանալու իրավունքը պաշտպանվում (երաշխավորվում) է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածներով նախատեսված երաշխիքային նորմերով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) նախատեսում է ընդհանուր կանոն գրավոր վարչական ակտի մասին դրա հասցեատիրոջը իրազեկելու վերաբերյալ, համաձայն որի՝ գրավոր վարչական ակտը վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրվելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին:

Օրենսդրությունը նախատեսում է իրազեկման երեք եղանակ, այդ եղանակներն են՝

- իրազեկելը վարչական ակտի գոյության մասին պատվիրված փոստի միջոցով, այդ թվում՝ հասցեատիրոջ կողմից ստանալու փաստը հավաստող ծանուցմամբ,
- իրազեկելը վարչական ակտի գոյության մասին հասցեատիրոջը ձեռագիր ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով, (ուղղակի հանձնման ձև),
- իրազեկելը վարչական ակտի գոյության մասին հանձնման օրենսդրությամբ չարգելված այնպիսի եղանակներով, որոնք հնարավորություն կընձեռնեն հավաստել հասցեատիրոջ կողմից ակտը ստանալու կամ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված լինելու փաստը:

Իհարկե հանձնման մյուս միջոցները կիրառվում են այն դեպքում, երբ առկա է հիմնավոր պատճառ ստորագրությամբ առձեռն հանձնելու հնարավորության բացակայության համար, այդ թվում, եթե հասցեա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

տերն ինքը դիմել է վարչական մարմնին հանձնման այլ միջոցներ կիրառելու խնդրանքով: [5, էջ 258]

Վերոնշյալ իրավանորմի լույսի ներքո պարզ է դառնում, որ օրենսդիրը հստակ նախատեսելով վարչական ակտի մասին իրազեկման միմյանց հետ փոխկապակցված երեք եղանակ՝ նախատեսել է նաև մի իրավական կարգավորում, որի տարածական մեկնաբանման արդյուքնում հանգում ենք այն իրավական դիրքորոշմանը, որ գրավոր վարչական ակտի մասին իրազեկման օրենսդրորեն նախատեսված այլ եղանակները, քան վարչական ակտը առձեռն ստորագրությամբ դրա հասցեատիրոջը հանձնելն է՝ կիրառելի են միայն այն պարագայում, երբ վարչական մարմնի կողմից փորձ է կատարվել վարչական ակտն առձեռն ստորագրությամբ դրա հասցեատիրոջը հանձնել և իրենից անկախ՝ հարգելի պատճառներով վերջինս չի հասել ցանկալի արդյունքի:

Ակնառու է, որ հերթական հաջորդ եղանակը կիրառելի է միայն նախորդ եղանակը կիրառելու և ցանկալի արդյունքի չհասնելու պարագայում, ընդ որում օրենսդիրը մյուս երկու եղանակների մեջ առաջնայնություն չի նախատեսում, այսինքն՝ դրանցից յուրաքանչյուրի կիրառումը պայմանավորված չէ մյուսի կիրառման և ցանկալի արդյունքի չհասնելու հետ:

Պրակտիկայում սակայն կիրառվում է վարչական ակտի մասին իրազեկելը պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ: Նման պրակտիկայի ձևավորումը պայմանավորված է հատկապես այն հանգամանքով, որ Օրենքը հստակ չի նախատեսում գրավոր վարչական ակտը հանձնելու այլընտրանքային տարբերակներ՝ դրա ընտրությունը թողնելով վարչական մարմնի հայեցողությանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵՇԴ/3780/02/14 դատական գործի շրջանակներում անդրադառնալով հայեցողության ինստիտուտին արձանագրել է հետևյալը՝ ««Հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

տի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը:»:

Այսպիսով՝ վարչական մարմինը վարչական ակտի մասին դրա հասցեատիրոջն իրազակելու եղանակների առումով, որոշակի վերապահումներով ունենալով հայեցողական լիազորություններ, այսինքն թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորություն, այնուամենայնիվ, կաշկանդված է անձի իրավունքներով, և իրավունքի գերակայությամբ հայեցակարգով:

Տեղայնացնելով վերոգրյալ իրավական մեկնաբանությունները սույն հոդվածի քննարկման առարկա հանդիսացող թեմային՝ կարելի է եզրակացնել, որ վարչական մարմինը վարչական ակտը դրա հասցեատիրոջը առձեռն ստորագրությամբ հանձնելու անհնարինության դեպքում իր հայեցողական լիազորությունների իրացմամբ կարող է անձին վարչական ակտի գոյության մասին իրազեկել թե՛ վարչական ակտը փոստային առաքման եղանակով վերջինիս ուղարկելու և թե՛ հնարավոր այլ եղանակներով, որոնք կլինեն իրավաչափ, չեն խախտի անձանց իրավունքները և կբխեն իրավունքի գերակայության տրամաբանությունից:

Պայմանավորված այն հանգամանքով, որ վարչական մարմինները կիրառում են թվարկված իրազեկման եղանակներից միայն երկուսը՝ այն է վարչական ակտը դրա հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելը և փոստային առաքման եղանակով ուղարկելը՝ պրակտիկայում կարող են առաջանալ խնդիրներ՝ կապված օրինակ վարչական ակտի հարկադիր կատարման հետ, քանզի սպառելով հիշյալ եղանակները և չհասնելով ցանկալի արդյունքի, որը տվյալ պարագայում

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

վարչական ակտի մասին դրա հասցեատիրոջը իրազեկելն է՝ վարչական մարմինը ձեռնամուխ չի լինում այլընտրանքային եղանակներով իրազեկել վարչական ակտի գոյության մասին՝ խուսափելով ինչ որ կերպ ոտնահարել անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Թեև օրենսդիրը հստակ չի նախատեսում հնարավոր շրջանակ կապված վարչական ակտի գոյության մասին դրա հասցեատիրոջն իրազեկելու այլընտրանքային եղանակների հետ, այնուամենայնիվ, դրանք կարող են տարբեր լինել, որոնցից մեկ կամ երկուսին իրավա-նորմի տեսք տալը կլուծի բազմաթիվ ընթացակարգային խնդիրներ: Նման իրավիճակում կարևոր հարցը կայանում է նրանում արդյո՞ք իրազեկման այդ եղանակի կիրառումը չի խախտում անձի իրավունքներն ու օրինական շահերը:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրությունը նախատեսելով վարչական ակտի հրապարակման ինստիտուտը՝ ամրագրել է, որ վարչական ակտը պետք է հրապարակվի այն մասնակցի համար, որի համար այն նախատեսված է կամ ում վրա այն ազդեցություն ունի: Եթե առկա է վարչական ակտի հասցեատիրոջ կողմից լիազորված անձ, ծանուցումը կարող է փոխանցվել նրան:

Երկրի ներսում փոստով փոխանցված գրավոր վարչական ակտը համարվում է հրապարակված՝ փոստին հանձնելուց հետո երրորդ օրը: Երկրի ներսում կամ արտերկրում էլեկտրոնային եղանակով փոխանցված վարչական ակտը համարվում է հրապարակված ուղարկումից հետո երրորդ օրը:

Այն պարագայում, երբ կասկած է առաջանում վարչական ակտի հրապարակված լինելու վերաբերյալ, վարչական մարմինը պարտավոր է ապացուցել հրապարակված լինելու փաստը, այսինքն՝ վարչական մարմինը պետք է ապացուցի վարչական ակտի հասցեատիրոջը հասանելիությունը և հասանելության ժամանակը:

Շահագրգիռ անձի համաձայնությամբ էլեկտրոնային վարչական ակտը կարող է հրապարակվել շահագրգիռ անձի կամ նրա լիազորված անձի կողմից հանրամատչելի ցանցերի միջոցով այն ստանալու եղանակով: Վարչական մարմինը պարտավոր է երաշխավորել էլեկտրոնային եղանակով ստացուղ սուբյեկտի իսկությունը և նրա կողմից վարա-



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

չական ակտը պահպանելու իրավասությունը: Նման իրավիճակում վարչական ակտը հրապարակված է համարվում ուղարկելու հաջորդ օրը:

Վարչական ակտը կարող է հրապարակվել հրապարակայնորեն, եթե դա թույլատրված է օրենսդրությամբ: Ընդհանուր կարգադրությունը կարող է հրապարակայնորեն հայտարարվել, նույնիսկ եթե հայտարարությունը պարտադիր չէ շահագրգիռ կողմերի համար:

Գրավոր կամ էլեկտրոնային վարչական ակտի հրապարակային հրապարակումն իրականացվում է տեղական մակարդակում: Տեղական ծանուցման մեջ նշվում է, թե որտեղ կարող է քննվել վարչական ակտը, ինչպես նաև դրա հիմնավորումը: Վարչական ակտը հրապարակված է համարվում տեղական ծանուցումից երկու շաբաթ հետո:

Ինչպես տեսնում ենք Հայաստանյան մոդելը կորդինալ տարբերվում է գերմանական մոդելից: Ապրելով տեխնոլոգիական մեծ զարգացումների դարում, որտեղ շատ մեծ կարևորություն է տրվում վիրտուալ կյանքի գոյությանը, որպես իրազեկման միջոց կարող են դիտվել օրինակ սոցիալական կայքերը, որտեղ վարչական ակտի հասցեատերն ունի էջ իր անվամբ:

Իրազեկումը կարող է տեղի ունենալ նաև հեռախոսահամարի միջոցով, որն օգտագործվում է վարչական ակտի հասցեատիրոջ կողմից: Ընդ որում հեռախոսահամարի միջոցով իրազեկումը ևս իր հերթին կարող է լինել երկու տիպի՝ իրազեկում հաղորդագրության միջոցով և իրազեկում հեռախոսազանգի միջոցով:

Հաղորդագրության միջոցով վարչական ակտի գոյության մասին դրա հասցեատիրոջն իրազեկելու պրակտիկան օգտագործվում է օրինակ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության» ծառայության կողմից, որը քաղաքացու ցանկությամբ իր նկատմամբ կայացված վարչական տույժ նշանակելու մասին որոշումների գոյության մասին տեղեկացնում է հաղորդագրության միջոցով:

Նման եղանակով իրազեկելու շուրջ ծառայող խնդիրները ևս քիչ չեն՝ օրինակ վարչական մարմինը միշտ չէ, որ կարող է պարզել վարչական ակտի հասցեատիրոջ կողմից **իրապես** շահագործվող հեռախոսահամարը, քանի որ մեր իրականությունում շատ հաճախ են պատահում

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

հում դեպքեր, երբ հեռախոսահամարը ձեռք է բերվում մի անձի կողմից, սակայն շահագործվում է մեկ այլ անձի կողմից: Հենց այս խնդրից ելնելով՝ իրազեկման նման եղանակը արժանահավատ կոդիտվի և կհամարվի պատշաճ, եթե անձն ինքն է դիմել խնդրելով իրեն իրազեկել վարչական ակտի գոյության մասին որևէ կոնկրետ հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

Հեռախոսազանգի միջոցով իրազեկումը բացի նրանից, որ կարող է առաջ բերել նույնաբովանդակ խնդիրներ ինչ հաղորդագրության միջոցով իրազեկման շուրջ ծառայող խնդիրներն են, նաև ունի իրեն բնորոշ առանձնահատկությունները:

Հեռախոսազանգի միջոցով իրազեկումը կարող է խնդրահարույց լինել այն ասպեկտում, որ վարչական մարմինն իրազեկման փաստը հիմնավորելու նպատակով պետք է կատարի հեռախոսազանգի ծայնագրում, բացի այդ վարչական մարմինը կունենա պարտավորություն ապացուցելու այն փաստը, որ հեռախոսազանգով զրուցողը հենց վարչական ակտի հասցեատերն է:

Ինտերնետային հավելվածների միջոցով ևս կարող է վարչական ակտի մասին իրազեկում տեղի ունենալ (օրինակ viber, whatsapp և այլն): Իրազեկման այդ տեսակը ուղղակիորեն կապված է անձի հեռախոսահամարի հետ, սակայն առավել հավաստի է, քանզի առավել հիմնավոր է կատարվում նույնականացում՝ այդ հեռոսահամարի միջոցով բացված հավելվածը օգտագործվում է վարչական ակտի հասցեատիրոջ կողմից, թե ոչ (օրինակ՝ կարող է առկա լինել նկար, կամ գրված լինել օգտագործողի անունը):

Իրազեկման հնարավոր եղանակների շարքին կարող է դասվել էլեկտրոնային փոստի հասցեին վարչական ակտն ուղարկելը:

Իհարկե այս պարագայում կա խնդիր պարզելու յուրաքանչյուր առանձին վարչական վարույթի շրջանակներում կայացվելիք վարչական ակտի հասցեատիրոջ էլեկտրոնային հասցեն, սակայն այդ խնդիրը ևս կարող է ունենալ տրամաբանական լուծում:

Որպես բարձրացված խնդրի լուծում կարելի է կիրառել օրինակ հետևյալ մեթոդը.

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երբ յուրաքանչյուր անձի տրվում է անձնագիր կամ նույնականացման քարտ կարող են տրամադրվել նաև անհատական էլեկտրոնային հասցե, որին անհրաժեշտության պարագայում կարող է ուղարկվել վերջինիս վերաբերող առաքանիները՝ այդ թվում վարչական ակտը, որպիսի պարագայում վարչական ակտի հասցեատերը կհամարվի իրազեկված վարչական ակտի գոյության մասին:

Ի տարբերություն ընդհանուր իրավակարգավորումներ պարունակող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, հատուկ օրենքները կարող են նախատեսել առանձին խմբի վարչական ակտերի մասին դրանց հասցեատերերին իրազեկելու այլ մեխանիզմ քան «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մեխանիզմներն են, սակայն դա չի նշանակում, որ սպառելով հատուկ օրենքում նախատեսված վարչական ակտի գոյության մասին իրազեկելու միջոցները վարչական մարմինը չպետք է կիրառի իրազեկման ընդհանուր մեթոդները: Այսպես օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված դրույթի ուժով ուղարկված (հանձնվող) որոշումից հրաժարվելը չի կարող վարչական մարմնի կողմից դիտարկվել որպես վարչական ակտի հասցեատիրոջը պատշաճ իրազեկում, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածներով նախատեսված երաշխիքային նորմերը նախատեսում են վարչական ակտի ընդունման մասին իրազեկելու այլ եղանակներ ևս, որոնք ենթակա էին կիրառման:

Խոսելով վարչական ակտի մասին դրա հասցեատիրոջը իրազեկելու ինստիտուտի մասին շատ կարևոր է ընգծել, որ այն իրենից ենթադրում է վարչական ակտի իրավաբանական ուժ ձեռք բերելու նախապայման:

Այլ կերպ ասած՝ վարչական ակտի իրավական ուժ ստանալու համար անհրաժեշտ և պարտադիր պայման է վարչական ակտի հասցեատիրոջ օրենքով սահմանված կարգով ակտի մասին իրազեկված լինելը: Վարչական մարմնի ակտի հասցեատիրոջն իրազեկելու գործողությունների ավարտով էլ մեկնարկում է վարչական ակտի ուժի մեջ մտնելու իրավական գործընթացը, այսինքն վարչական ակտն իր հետևանքներ

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

րով հանդերձ սկսում է գործել վարչական մարմնի վերը նշված պարտականությունների կատարման արդյունքում:

Ամբողջ վերոգրյալով պայմանավորված առաջարկվում է «պատշաճ ծանուցման» եզրույթի հետևյալ հասկացությունը.

Ընդունված վարչական ակտի գոյության մասին դրա հասցեատիրոջն իրազեկելու վարչական մարմնի պարտականությունը համարվում է պատշաճ իրականացված, եթե վարչական մարմինը իրավունքի գերակայությանը առաջնահերթություն տալով կատարում է իրենից կախված բոլոր հնարավոր գործողությունները՝ անձին կայացված վարչական ակտի գոյության մասին փաստցի իրազեկելու համար, որպիսի պայմաններում անձն առնվազն օբյեկտիվ հնարավորություն է ունեցել իրազեկվել վարչական ակտի գոյության մասին:

Վերոգրյալ հասկացության ներդրումը ՀՀ գործող օրենսդրությունում, կօզնի ազատվել այնպիսի արատավոր երևույթից, ինչպիսին է անձի կողմից իր սուբյեկտի իրավունքների չարաշահումը: Օրինակ՝ անձը, ով ունի գույքահարկի վճարման չկատարված պարտավորություն, հնարավոր եղանակներ է գտնում իրեն ուղղված ծանուցումը չստանալու համար, որպիսի պայմաններում վարչական ակտն այդպես էլ չի մտնում ուժի մեջ, և վարչական ակտի պահանջը մնում է չկատարված, նման պայմաններում օրենսդրությունը բացառում է նաև այդ վարչական ակտերի հանրային իրավական դրամական պահանջի շրջանակներում հարկադիր կատարումը, քանի որ բացակայում է այդ վարչական ակտերը ուժի մեջ մտած լինելու և անբողոքարկելի դարձած լինելու մասին ապացույցը:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. ՀՀ Սահմանադրությունը ընդունված 05.07.1995 թվականին, փոփոխված 2015 թվականին:
2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք ընդունված 12.02.2004 թվականին:
3. ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք ընդունված 06.12.1985 թվականին

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

4. «Վարչական վարույթի մասին» ԳԴՀ օրենք ուժի մեջ է մտել 30.05.1976 թվականին:
5. Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք / խմբ.՝ Հ. Թովմասյան, Օ. Լուխթերիանդթ, Գ. Մուրադյան, Վ. Պողոսյան, Վ. Ռայմերս, Ռ. Ռուբել – Եր.: Բավիղ, 2011թ.
6. ՀՀ վճռաբեկ դատարանի 19.07.2011 թվականին կայացված թիվ ՎԴԶ/0286/05/10 որոշում:
7. ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականին կայացված թիվ ԵՇԴ/3780/02/14 որոշում:

### ВОПРОСЫ, СВЯЗАННЫЕ С ИНФОРМИРОВАНИЕМ АДРЕСАТА О ПИСЬМЕННОМ АДМИНИСТРАТИВНОМ АКТЕ И НАДЛЕЖАЩЕМ ИНФОРМИРОВАНИИ

#### **Завен Смбалян**

ЕУ, кафедра Правоведения, соискатель

В настоящей статье обстоятельно обсуждаются вопросы, касающиеся информирования его адресата о письменном административном акте и надлежащего информирования: Выявляются пробелы действующих правовых норм и проявления их неполноценной жизнедеятельности.

Используя право сравнительный метод предлагаются решения проблем на практике.

**Ключевые слова:** Административный акт, администрирование, информирование закон.

### ISSUES RELATED TO INFORMING THE ADDRESSEE OF THE WRITTEN ADMINISTRATIVE ACT AND THE PROPER NOTIFICATION

#### **Zaven Smbatyan**

EU, Chair of Jurisprudence, Researcher

This article discusses in detail the issues related to informing its addressee about the written administrative act and proper information:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

Gaps of existing legal norms and manifestations of his defective life are revealed:

Using the right comparative method solutions of problems in practice are offered.

**Keywords:** Administrative act, administration, informing, law.

*Տրվել է պաշտոնական՝ 12.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 02.11.2020թ.*

---

## МКНР И РЕПРОДУКТИВНЫЕ ПРАВА: ПРОГРЕСС, ПРОБЕЛЫ И ДАЛЬНЕЙШИЕ ПЕРСПЕКТИВЫ

**Вероника Петросян**

РАУ, кафедра Международного и европейского права, аспирант  
veronika05petrosyan@gmail.com, +374 98 780244

*Данная научная статья посвящена изучению МКНР и ее влияния на осуществление репродуктивных прав, достигнутого прогресса в данной области, выявлению существующих проблем и необходимых мер для достижения целей МКНР в полном объеме.*

*Консенсус МКНР стал поворотным пунктом и трансформирующей победой движения за репродуктивные права. После принятия Программы действий на МКНР мир добился значительного прогресса, достигнув успехов во многих областях. Во всем мире наблюдается сокращение материнской смертности, числа детских браков и случаев калечения женских половых органов. Расширение доступа к современным средствам контрацепции и снижение заболеваемости ВИЧ-инфекцией привели к резкому сокращению во всем мире числа взрослых и детей, умирающих от причин, связанных с ВИЧ. Однако многие проблемы все еще остаются нерешенными, и многие права женщин остаются нереализованными.*

**Ключевые слова:** МКНР, Программа действий, права человека, репродуктивное здоровье, репродуктивные права.

Пятьдесят лет назад во всем мире среднестатистическая женщина имела 4,9 ребенка, и 35 процентов замужних женщин использовали тот или иной метод контрацепции для задержки или предотвращения беременности; однако в наименее развитых странах среднестатистическая женщина имела 6,7 ребенка, и только около 2 процентов использовали контрацепцию[1]. Аборты были запрещены во многих странах мира, и женское освободительное движение боролось за равенство в доступе к образованию, трудоустройству и оплате труда,

браку и разводу, собственности и на ряде других фронтов. К 1969 году в результате мер общественного здравоохранения, направленных на снижение младенческой и детской смертности и увеличение продолжительности жизни, уровень рождаемости превысил уровень смертности во многих развивающихся странах. Опасения по поводу того, что возникающий в результате этого рост населения может нанести ущерб экономическому прогрессу и окружающей среде, способствовали стремлению лучше понять человеческую фертильность и управлять ею.

Международная конференция по народонаселению и развитию (далее - МКНР), состоявшаяся в Каире в 1994 году, ознаменовала принятие новой парадигмы в решении проблем воспроизводства и здоровья человека. Впервые был сделан четкий акцент на потребностях отдельных лиц и расширении прав и возможностей женщин, а также на появлении эволюционирующего дискурса о связи между правами человека и здоровьем, увязывающего новые концепции здоровья с борьбой за социальную справедливость и уважение человеческого достоинства.

Новое внимание к правам человека в МКНР ознаменовало собой отход от прежнего подхода, который рассматривал женщин как инструмент, с помощью которого можно осуществлять программы и политику в области народонаселения. Подход к репродуктивным правам и здоровью, принятый на МКНР, основан на точке зрения, согласно которой нужно ценить женщин по своей сути и искренне заботиться об их здоровье и благополучии. Репродуктивный потенциал женщин был превращен из объекта демографического контроля в вопрос расширения прав и возможностей женщин в плане осуществления личной автономии в отношении их сексуального и репродуктивного здоровья в рамках их социального, экономического и политического контекста. Здоровье женщин в целом, и их сексуальное и репродуктивное здоровье в частности, определяются не только их доступом к медицинским услугам, но и их положением в обществе и повсеместной дискриминацией по признаку пола.



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

Таким образом, МКНР провозглашает права женщин на личную репродуктивную автономию и коллективное гендерное равенство - в качестве основного принципа при разработке программ в области репродуктивного здоровья и народонаселения.

На конференции были определены три темы, имеющие основополагающее значение для реализации прав человека в контексте сексуального и репродуктивного здоровья:

1. **Равенство:** продвижение к социальной справедливости и прекращение дискриминации во всех ее формах. Кто был исключен и почему, барьеры, с которыми сталкиваются маргинализированные и исключенные группы, а также как обеспечить реализацию сексуальных и репродуктивных прав для всех.

2. **Качество:** соблюдение стандартов прав человека по оказанию услуг в области сексуального и репродуктивного здоровья, информации и образования.

3. **Подотчетность:** определение обязанностей ключевых субъектов и обеспечение соблюдения прав. Каким образом можно удовлетворить требования непрерывного круга подотчетности на протяжении всего цикла политики и программ, с тем чтобы люди могли привлекать правительство и других ключевых субъектов к ответственности и искать средства правовой защиты.

Дискуссии по этим трем темам были возложены как на государствах, так и негосударственных субъектах в качестве носителей обязанностей, и рассматривали многоуровневый, неравномерный прогресс, достигнутый в осуществлении обязательств МКНР в области прав человека по таким вопросам как правовая и политическая реформа, осуществление системы управления, предоставление услуг, мониторинг, оценка и, в частности, обеспечение соблюдения прав.

На МКНР правительства согласились с новаторской всеобъемлющей Программой действий, которая является консенсусным документом, конечным продуктом процесса переговоров и компромисса с участием более 179 государств[2]. В 115-страничном документе, принятом 13 сентября, одобряется новая стратегия, которая

подчеркивает многочисленные связи между народонаселением и развитием и фокусируется на удовлетворении потребностей отдельных женщин и мужчин, а не на достижении демографических целей. Программа выступает за обеспечение всеобщего доступа к планированию семьи к 2015 году или раньше в рамках более широкого подхода к репродуктивному здоровью и правам, дает оценку уровней национальных ресурсов и международной помощи, которые потребуются, и призывает правительства предоставить эти ресурсы. Программа действий включает цели в области образования, особенно для девочек, и дальнейшего снижения уровня младенческой, детской и материнской смертности. В нем также рассматриваются вопросы, касающиеся народонаселения, окружающей среды и моделей потребления; семьи; внутренней и международной миграции; профилактики пандемии ВИЧ/СПИДа и борьбы с ней; а также технологии, научных исследований и разработок.

Программа действий имеет принципиальное значение, поскольку впервые в международном консенсусном документе государства согласились с тем, что репродуктивные права являются правами человека, которые уже признаны во внутреннем и международном праве. Программа устанавливает, что «указанные права зиждутся на признании основного права всех супружеских пар и отдельных лиц свободно принимать ответственное решение относительно количества своих детей, интервалов между их рождением и времени их рождения и располагать для этого необходимой информацией и средствами и праве на достижение максимального высокого уровня сексуального и репродуктивного здоровья»[3].

В Программе действий МКНР признается, что реализация права на репродуктивное здоровье является важнейшим элементом обеспечения репродуктивных прав. Программа действий в широком смысле определяет репродуктивное здоровье как «состояние полного физического, умственного и социального благополучия, а не просто отсутствие болезней или недугов во всех вопросах, касающихся репродуктивной системы и ее функций и процессов».[4] Репродуктивное здо-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

ровые подразумевает, что у людей есть возможность иметь достойную удовлетворение и безопасную половую жизнь и что у них есть возможность воспроизводить себя, и что они вольны принимать решение о том, делать ли это, когда делать и как часто[5]. Правительства также признали наличие неразрывной связи между устойчивым развитием, искоренением нищеты и гендерным равенством и обязались решать эти вопросы совместно. Кроме того, государства согласились с тем, что принудительные законы, политика и практика, которые не уважают автономию индивидов и процесс принятия решений, должны быть ликвидированы. Принимая Программу действий, государства обязались принять правовые, политические, бюджетные и другие меры для осуществления принципов и прав, закрепленных в этом документе.

Таким образом, МКНР, одобрив Программу действий, обозначила следующие основы для действий, цели и меры, которые должны стать приоритетными для развития в следующих областях:

- Население, устойчивый экономический рост и устойчивое развитие
- Гендерное равенство и расширение прав и возможностей женщин
- Семья, ее роль, права, состав и структура
- Рост и структура населения
- Репродуктивные права и репродуктивное здоровье
- Здоровье, заболеваемость и смертность
- Распределение населения, урбанизация и внутренняя миграция
- Международная миграция
- Народонаселение, развитие и образование
- Технологии, исследования и разработки
- Национальные действия, международное сотрудничество и партнерство с неправительственным сектором.

За 26 лет, прошедших после МКНР, был достигнут значительный прогресс в определении репродуктивных прав и здоровья в междуна-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

родном праве прав человека. Прогресс очевиден по многим показателям расширения прав и возможностей женщин, включая:

- ✓ равенство между мальчиками и девочками при поступлении в начальные школы,
- ✓ снижение материнской смертности,
- ✓ снижение неудовлетворенной потребности в планировании семьи,
- ✓ улучшение отслеживания неравенства на рабочем месте,
- ✓ более широкое признание масштабов и последствий гендерного насилия и рост числа женщин в качестве политических лидеров.

Однако, несмотря на значительный прогресс, достигнутый в деле поощрения, защиты и гарантирования прав человека с 1994 года, Программа действий по-прежнему является невыполненным обещанием для миллионов женщин, девочек и маргинализированных и изолированных групп населения. Так, оценки показывают, что примерно треть женщин по-прежнему подвергаются той или иной форме насилия в своей жизни, в основном со стороны интимных партнеров[6]. «Насилие в отношении женщин и девочек затрагивает каждую третью женщину во всем мире», - заявил глава ООН, добавив, что в некоторых частях мира, а также во время конфликтов и чрезвычайных ситуаций это число «еще выше»[7]. Насилие влечет за собой серьезные краткосрочные и долгосрочные проблемы физического, психического, сексуального и репродуктивного здоровья жертв и их детей, а также приводят к высоким социальным и экономическим издержкам.


Актуальной проблемой по сей день остаются калечащие операции на женских половых органах (далее - КЖПО). Несмотря на то, что осуществление данной практики сократилось, тем не менее, число девочек, подвергающихся риску, увеличилось. Несмотря на снижение процентного показателя с 49,4% до 31,3%, число девочек, подвергающихся риску КЖПО в 30 странах, сильно затронутых этой проблемой, возросло с 3,6 миллиона до 3,8 миллиона[8].

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(Рисунок 1)

Число стран, законодательно запрещающих калечащие операции на женских половых органах, 1994 год–настоящее время


- Закон принят до 1994 года
- Закон принят до 2019 году
- Данные отсутствуют



Детские браки остаются широко игнорируемым нарушением прав девочек на здоровье и развитие. Доля молодых женщин в возрасте от 20 до 24 лет, вступивших в брак до достижения 18-летнего возраста, сократилась с 1994 по 2019 год с 34% до 25%, но абсолютное число девочек в возрасте до 18 лет, которым угрожает риск вступления в брак, увеличился с 10 миллионов до примерно 10,3 миллиона (см. таблицу 1)[9].


## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(Таблица 1)



МКНР признала образование ключевым фактором, позволяющим людям отстаивать свои права, делать выбор в пользу своей жизни и продвигать развитие. Все чаще образование девочек рассматривается в качестве одной из центральных стратегий борьбы с нищетой, улучшения здоровья и развития. Хотя во многих частях мира, особенно в Азии и Латинской Америке, девочки начинают посещать школу в гораздо большем количестве, девочки часто не могут оставаться в школе, учитывая такие культурные традиции, как калечащие операции на женских половых органах, и требования к девочкам помогать дома и на полях[10]. Валовой коэффициент охвата средним образованием остается серьезно низким в Африке (43%), Океании, исключая Австралию и Новую Зеландию (55%), и в целом в наименее развитых странах (45%); во многих странах с уровнем дохода ниже среднего уровень охвата высшим образованием составляет менее 20% (см. рисунок 2)[11].

Доля девочек младшего школьного возраста, не посещающих школу (2019 год)



Таким образом, рассмотренные выше примеры являются малой частью тех проблем, которые международному праву и международному сообществу еще предстоит разрешить. Без полного уважения, реализации и защиты репродуктивных прав амбициозные цели Программы действий МКНР не могут быть реализованы[12]. С этой целью необходимо, чтобы государства:

- ратифицировали международные и региональные договоры по правам человека, снимая оговорки к договорным положениям, касающимся репродуктивных прав;
- привели национальные рамки политики в соответствии с МКНР, применяя принципы равенства и недискриминации;
- включили в свои периодические доклады информацию о конкретном прогрессе в области репродуктивных прав, средствах правовой защиты и превентивных мерах, принятых ими для их реализации;
- искоренили гендерное насилие и вредную практику путем устранения коренных причин, таких как гендерное неравенство, а также обеспечения психо-социальной поддержки и

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

доступа к правосудию, и эффективным средствам правовой защиты для выживших;

- укрепили национальную политику в области образования и обеспечили равный доступ девочек и маргинализированных групп к образованию на всех уровнях.

### Литература

1. «Unfinished business the pursuit of rights and choices for all», UNFPA report 2019
2. Dr. Carmel Shalev, «Rights to Sexual and Reproductive Health - the ICPD and the Convention on the Elimination of All Forms of Discrimination Against Women», International Conference on Reproductive Health, Mumbai (India), 15-19 March 1998
3. Programme of Action of the International Conference on Population and Development, Cairo, Egypt, Sept. 5-13, 1994, para. 7.3, U.N. Doc. A/CONF.171/13/Rev.1 (1995)
4. См. Там же, п. 7.2
5. Programme of Action of the International Conference on Population and Development, Cairo, Egypt, Sept. 5-13, 1994, para. 7.2, U.N. Doc. A/CONF.171/13/Rev.1 (1995)
6. «Fulfilling the ICPD promise progress, Gaps and working at scale», review of the implementation of the Programme of Action of the International conference on population and development, UNFPA 2019
7. Secretary-General's remarks to General Assembly plenary meeting marking the 25th anniversary of the International Conference on Population and Development, 16 July 2019  
<https://www.un.org/sg/en/content/sg/statement/2019-07-16/secretary-generals-remarks-general-assembly-plenary-meeting-marking-the-25th-anniversary-of-the-international-conference-population-and-development-delivered>
8. Banks, E. and others, 2006. «Female Genital Mutilation and Obstetric Outcome: WHO Collaborative Prospective Study in Six African Countries.» Lancet 367: 1835–1841



## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

9. «Ending child marriage: A guide for global policy action», International Planned Parenthood Federation and the Forum on Marriage and the Rights of Women and Girls  
<https://www.unfpa.org/sites/default/files/pub-pdf/endchildmarriage.pdf>
10. Murray, Anne Firth. From Outrage to Courage: the Unjust and Unhealthy Situation of Women in Poorer Countries and What They Are Doing about It. Monroe, Me.:Common Courage Press, 2013.
11. UNESCO Institute for Statistics, 2019
12. «Human rights and ICPD+25», Center for Reproductive Rights, August 2019

### **ԱԶՄՀ-Ն ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ. ԱՌԱՋՆԹԱՑ, ԲԱՑԵՐ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՀՆՈՒՆԿԱՐՆԵՐԸ**

#### **Վերոնիկա Պետրոսյան**

ՀՌՀ, Միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոն, ասպիրանտ

Սույն գիտական հոդվածը նվիրված է ԱԶՄՀ-ի և վերարտադրողական իրավունքների իրականացման վրա դրա ազդեցությանը, տվյալ ոլորտում հասած առաջընթացի, առկա խնդիրների բացահայտման և ԱԶՄՀ-ի նպատակների ամբողջ ծավալով իրագործելու համար անհրաժեշտ միջոցների ուսումնասիրությանը:

ԱԶՄՀ-ի կոնսենսուսը դարձավ շրջադարձային կետ և վերարտադրողական իրավունքների շարժման փոխակերպող հաղթանակ: ԱԶՄՀ-ի Գործողությունների ծրագրի ընդունումից հետո աշխարհը զգալի առաջընթաց գրանցեց՝ հաջողություններ արձանագրելով բազմաթիվ ոլորտներում: Ամբողջ աշխարհում նկատվում է մայրական մահացության, մանկական ամուսնությունների թվի և կանանց սեռական օրգանների խեղման դեպքերի նվազում: Ժամանակակից հակաբեղմնավորման միջոցների հասանելիության ընդլայնումը և ՄԻԱՎ-ով հիվանդացությունների թվի նվազումը հանգեցրել է ամբողջ աշխարհում, վերջինիս հետ կապված պատճառներից, մեծահասակների և երեխաների մահացության թվի կտրուկ նվազման: Սակայն, շատ խնդիրներ

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

դեռևս մնում են չլուծված, և կանանց շատ իրավունքներ՝ անիրագործելի:

**Հիմնաբառեր.** ԱԶՄՀ, Գործողությունների ծրագիր, մարդու իրավունքներ, վերարտադրողական առողջություն, վերարտադրողական իրավունքներ:

### ICPD AND REPRODUCTIVE RIGHTS: PROGRESS, GAPS AND FUTURE PROSPECTS

**Veronika Petrosyan**

RAU, Chair of International and European law, Postgraduate Student

The presenting scientific article is devoted to the study of the ICPD and its influence on the implementation of reproductive rights, the progress made in this area, identifying existing problems and necessary measures to achieve the goals of the ICPD Programme of Action fully.

The ICPD consensus was a turning point and a transformative victory for the reproductive rights movement. With the adoption of ICPD Programme of Action, the world has made significant progress, making success in many areas. Worldwide, there has been a reduction in maternal mortality, child marriage and female genital mutilation. Increased access to modern contraceptives and a decrease in the incidence of HIV infection have led to a sharp reduction in the number of adults and children dying from HIV-related causes worldwide. However, many challenges still remain, and many women's rights remain unfulfilled.

**Keywords:** ICPD, Programme of Action, human rights, reproductive health, reproductive rights.

*Տրվել է պապարության՝ 13.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 10.11.2020թ.*

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

### ԻՐԱԿԱՆ ԹՎԻ ԱՄԲՈՂՋ ԿԱՍ ԿՈՏՈՐԱԿԱՅԻՆ ՄԱՍ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՈՐՈՇ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

#### **Գագիկ Նիկողոսյան**

ՇՊՀ, Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոն, ֆ.-մ.գ.թ.  
gagonik@mail.ru, +374 98 457767

#### **Վարդան Մանուկյան**

ՇՊՀ, Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոն, ֆ.-մ. գ. թ., դոցենտ  
mvardan\_1972@mail.ru, +374 93 464903

Աշխատանքը նվիրված է մաթեմատիկայի դպրոցական դասընթացում հանդիպող իրական թվի ամբողջ կամ կոտորակային մաս պարունակող որոշ տիպային և ոչ տիպային հավասարումների և անհավասարումների քննարկմանը, ինչպես նաև նմանատիպ հավասարումների և անհավասարումների լուծման որոշ տարրական եղանակների վեր հանմանը: Հոդվածում նախապես հնարավորինս հակիրճ կնշենք իրական թվի ամբողջ և կոտորակային մասերի հետ կապված որոշ հայտնի հատկություններ, որից հետո, վերջիններիս կիրառմամբ կնշենք կոնկրետ մոտեցումներ վերոգրյալ տարբեր տիպային և ոչ տիպային հավասարումների և անհավասարումների լուծման համար:

**Հիմնաբառեր.** Հանրահաշիվ, հավասարում, անհավասարում, իրական թվի ամբողջ մաս, իրական թվի կոտորակային մաս:

ՀՀ-ում անցնելով տասներկուամյա կրթական համակարգի՝ մաթեմատիկայի դպրոցական դասընթացի ուսումնական ծրագրերում, ինչպես նաև դասագրքերում կատարվեցին որոշակի փոփոխություններ. ավելացան նոր բաժիններ, կամ էլ եղած բաժիններում մատուցվող նյութը դարձավ առավել ընդգրկուն:

Մասնավորապես, 11-րդ դասարանի բնագիտամաթեմատիկական հոսքի հանրահաշիվի դպրոցական դասընթացում «Ֆունկցիա» գլխի «Ֆունկցիայի պարբերականությունը» պարագրաֆում սահմանվեցին իրական թվի ամբողջ և կոտորակային մասերը, ինչպես նաև շատ հակիրճ թվարկվեցին վերջիններիս սահմանումներից բխող մեկ, երկու

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ակնհայտ անհավասարություններ [1,119–120]: Կարծում ենք դասագրքում նյութի առկա սուղ ծավալը հնարավորություն չի ընձեռում աշակերտներին հավուր պատշաճի ընկալելու իրական թվի ամբողջ և կոտորակային մասերի էությունը, հիմնական հատկություններն ու վերջիններիս կիրառելիության սահմանները: Մինչդեռ, այս թեմատիկային վերաբերող խնդիրները մշտապես հանդիպում են դպրոցականների մաթեմատիկայի օլիմպիադաների տարբեր փուլերում:

Հիմնական պրոբլեմը կայանում է նրանում, որ հանդիպելով իրական թվի ամբողջ կամ կոտորակային մաս պարունակող որևէ հավասարման կամ անհավասարման՝ աշակերտները, ծանոթ չլինելով նմանատիպ հավասարումների կամ անհավասարումների լուծման տարրական եղանակներին և մոտեցումներին, չեն կարողանում «ազատվել» այդ ամբողջ կամ կոտորակային մասերից, մինչդեռ, ինչպես ստորև կհամոզվենք, տարբեր հատկությունների կիրառմամբ, հեշտությամբ կարելի է «ազատվել» այդ ամբողջ կամ կոտորակային մասերից և խնդիրը հանգեցնել հայտնի տիպային (գծային, քառակուսային, կոտորակառացիոնալ և այլն) հավասարման կամ անհավասարման լուծման:

Սույն աշխատանքը նվիրված է իրական թվի ամբողջ կամ կոտորակային մաս պարունակող տարբեր տիպային հավասարումների և անհավասարումների լուծման որոշ տարրական եղանակների վեր հանմանը, ինչում էլ կայանում է աշխատանքի գիտամանկավարժական նորույթը: Կարծում ենք, այդպիսի մեթոդների տիրապետումն աշակերտներին ոչ միայն կօգնի հաղթահարել առանձին օլիմպիական առաջադրանքներ, այլև կխթանի նրանց էվրիստիկ և ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Ստորև, նախ կնշենք իրական թվի ամբողջ կամ կոտորակային մաս պարունակող, ընդհանուր տեսքով տրված որոշակի տիպի հավասարման կամ անհավասարման լուծման եղանակի էությունը, որից հետո կքննարկենք հավասարման կամ անհավասարման այդ տիպին վերաբերող ինչպես հայտնի խնդրագրքերից վերցված, այնպես էլ հեղինակային կոնկրետ օրինակներ:

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նախապես նշենք իրական թվի ամբողջ և կոտորակային մասերի սահմանումները և այդ սահմանումներից անմիջականորեն բխող մի քանի հատկություններ:

**Սահմանում 1:**  $a$  իրական թիվը չգերազանցող ամենամեծ ամբողջ թիվը կոչվում է  $a$  իրական թվի ամբողջ մաս և նշանակվում հետևյալ կերպ՝  $[a]$ : [1,119]

**Սահմանում 2:**  $a - [a]$  տարբերությունը կոչվում է  $a$  իրական թվի կոտորակային մաս և նշանակվում հետևյալ կերպ՝  $\{a\}$ , այսինքն՝  $\{a\} = a - [a]$ : [1,119]

Վերոգրյալ սահմանումներից անմիջականորեն բխում են հետևյալ կարևոր հատկությունները, որոնցում  $a$ -ն կամայական իրական թիվ է ( $a \in R$ ), իսկ  $n$ -ը՝ կամայական ամբողջ թիվ ( $n \in Z$ ).

$$[a] \leq a < [a] + 1, \quad (1)$$

$$a - 1 < [a] \leq a, \quad (2)$$

$$0 \leq \{a\} < 1, \quad (3)$$

$$[a + n] = [a] + n, \quad (4)$$

$$\{a + n\} = \{a\}: \quad (5)$$

Այժմ քննարկենք իրական թվի ամբողջ կամ կոտորակային մաս պարունակող մի քանի պարզագույն տիպային հավասարումներ և անհավասարումներ, որոնցում  $a$ -ն և  $\alpha$ -ն կամայական իրական թվեր են ( $a, \alpha \in R$ ):

### 1. Դիտարկենք $[f(x)] = a$ հավասարումը:

Նկատենք, որ հավասարման ԹԱԲ-ում ծախ մասը միշտ ընդունում է ամբողջ արժեքներ, հետևաբար ոչ ամբողջ  $a$ -երի դեպքում տրված հավասարումը լուծում չի ունենա, իսկ ամբողջ  $a$ -երի դեպքում, ի նկատի ունենալով սահմանում 1-ը և (1)–(2) հատկությունները,

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

կունենանք՝  $a \leq f(x) < a+1$ : Այսպիսով, դիտարկվող հավասարման համար ստացանք՝

$$[f(x)] = a \Leftrightarrow \begin{cases} a \in Z \Rightarrow a \leq f(x) < a+1 \\ a \in R \setminus Z \Rightarrow x \in \emptyset \end{cases} : \quad (6)$$

Քննարկենք երկու օրինակ.

**Օրինակ 1:** Լուծել  $[x^2 - 5x + 6] = \frac{2020}{2021}$  հավասարումը:

**Լուծում:** Քանի որ  $\frac{2020}{2021} \notin Z$  և  $[x^2 - 5x + 6] \in Z$ , ուստի համաձայն (6)-ի կունենանք՝  $x \in \emptyset$ :

**Պատ.**՝  $x \in \emptyset$ :

**Օրինակ 2:** Լուծել  $[2x + 5] = -3$  հավասարումը:  $[2, 47]$

**Լուծում:** Համաձայն (6)-ի ունենք՝

$$\begin{aligned} -3 \in Z \Rightarrow [2x + 5] = -3 &\Leftrightarrow -3 \leq 2x + 5 < -2 \Leftrightarrow \\ &\Leftrightarrow -4 \leq x < -3,5 \Leftrightarrow x \in [-4; -3,5): \end{aligned}$$

**Պատ.**՝  $x \in [-4; -3,5)$ :

**2. Դիտարկենք  $[f(x)] > a$  անհավասարումը:**

(2) հատկության համաձայն ունենք՝  $a < [a] + 1 \leq a + 1$ , հետևաբար, ի նկատի ունենալով սահմանում 1-ը, դիտարկվող հավասարման համար կունենանք՝

$$[f(x)] > a \Leftrightarrow f(x) \geq [a] + 1: \quad (7)$$

Քննարկենք մեկ օրինակ:

**Օրինակ 3:** Լուծել  $[1 - x^2] > -4$  անհավասարումը:  $[2, 48]$

**Լուծում:** Համաձայն (7)-ի ունենք՝

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

$$\lceil 1-x^2 \rceil > -4 \Leftrightarrow 1-x^2 \geq \lceil -4 \rceil + 1 \Leftrightarrow x^2 \leq 4 \Leftrightarrow x \in [-2; 2]:$$

**Պատ.**՝  $x \in [-2; 2]:$

**3. Դիտարկենք**  $\lceil f(x) \rceil < a$  **անհավասարումը:**

Հեշտ է նկատել, որ երբ  $a \in Z$ , ապա  $\lceil f(x) \rceil < a \Leftrightarrow f(x) < a$ , իսկ երբ  $a \notin Z$ , ապա ի նկատի ունենալով (1) հատկությունը, կունենանք՝  $\lceil f(x) \rceil < a \Leftrightarrow f(x) < \lceil a \rceil + 1$ : Այսպիսով, դիտարկվող հավասարման համար ստացանք՝

$$\lceil f(x) \rceil < a \Leftrightarrow \begin{cases} a \in Z \Rightarrow f(x) < a \\ a \in R \setminus Z \Rightarrow f(x) < \lceil a \rceil + 1 \end{cases} : \quad (8)$$

Քննարկենք երկու օրինակ:

**Օրինակ 4:** Լուծել  $\lceil x^2 - 7x + 5 \rceil < -7$  **անհավասարումը:**

**Լուծում:** Համաձայն (8)-ի ունենք՝

$$\begin{aligned} a = -7 \in Z &\Rightarrow \lceil x^2 - 7x + 5 \rceil < -7 \Leftrightarrow \\ \Leftrightarrow x^2 - 7x + 5 < -7 &\Leftrightarrow x^2 - 7x + 12 < 0 \Leftrightarrow x \in (3; 4): \end{aligned}$$

**Պատ.**՝  $x \in (3; 4):$

**Օրինակ 5:** Լուծել  $\lceil \frac{1-3x}{2} \rceil < 10,3$  **անհավասարումը:**  $[2, 48]$

**Լուծում:** Համաձայն (8)-ի ունենք՝

$$\begin{aligned} a = 10,3 \in R \setminus Z &\Rightarrow \lceil \frac{1-3x}{2} \rceil < 10,3 \Leftrightarrow \\ \Leftrightarrow \frac{1-3x}{2} < \lceil 10,3 \rceil + 1 &\Leftrightarrow 1-3x < 22 \Leftrightarrow x > -7 \Leftrightarrow x \in (-7; +\infty): \end{aligned}$$

**Պատ.**՝  $x \in (-7; +\infty):$

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

### 4. Դիտարկենք $\{f(x)\} = \alpha$ հավասարումը:

Համաձայն (3) հատկության, հավասարման ԹԱԲ-ում ձախ մասը միշտ ընդունում է արժեքներ  $[0;1)$  տիրույթից, հետևաբար  $\alpha \notin [0;1)$  դեպքում տրված հավասարումը լուծում չի ունենա, իսկ  $\alpha \in [0;1)$  դեպքում, ի նկատի ունենալով սահմանում 2-ը և (5) հատկությունը, կունենանք՝  $f(x) = n + \alpha; n \in Z$ : Այսպիսով, դիտարկվող հավասարման համար ստացանք՝

$$\{f(x)\} = \alpha \Leftrightarrow \begin{cases} \alpha \in [0;1) \Rightarrow f(x) = n + \alpha; n \in Z \\ \alpha \in R \setminus [0;1) \Rightarrow x \in \emptyset \end{cases} : \quad (9)$$

Քննարկենք երկու օրինակ:

**Օրինակ 6:** Լուծել  $\{7x - 1\} = -0,7$  հավասարումը:

**Լուծում:** Համաձայն (9) -ի ունենք՝

$$\alpha = -0,7 \in R \setminus [0;1) \Rightarrow \{7x - 1\} = -0,7 \Leftrightarrow x \in \emptyset:$$

**Պատ.**՝  $x \in \emptyset$ :

**Օրինակ 7:** Լուծել  $\left\{\frac{1-3x}{2}\right\} = \frac{1}{3}$  հավասարումը:  $[3,39]$

**Լուծում:** Համաձայն (9) -ի ունենք՝

$$\begin{aligned} \alpha = \frac{1}{3} \in [0;1) &\Rightarrow \left\{\frac{1-3x}{2}\right\} = \frac{1}{3} \Leftrightarrow \frac{1-3x}{2} = \\ &= n + \frac{1}{3}; n \in Z \Leftrightarrow x = \frac{1}{3} \left(\frac{1}{3} - 2n\right); n \in Z: \end{aligned}$$

**Պատ.**՝  $x = \frac{1}{3} \left(\frac{1}{3} - 2n\right); n \in Z$ :



**5. Դիտարկենք  $\{f(x)\} > \alpha$  անհավասարումը:**

Համաձայն (3) հատկության, անհավասարման ԹԱԲ-ում ձախ մասը միշտ ընդունում է արժեքներ  $[0;1)$  տիրույթից, հետևաբար, հեշտ է նկատել, որ  $\alpha < 0$  դեպքում անհավասարման ԹԱԲ-ի յուրաքանչյուր արժեք կբավարարի դիտարկվող անհավասարմանը,  $\alpha \geq 1$  դեպքում տրված անհավասարումը լուծում չի ունենա, իսկ  $\alpha \in [0;1)$  դեպքում, ի նկատի ունենալով սահմանում 2-ը և (5) հատկությունը, կունենանք՝

$$\{f(x)\} > \alpha \Leftrightarrow \begin{cases} \alpha \in (-\infty; 0) \Rightarrow x \in D(f) \\ \alpha \in [0; 1) \Rightarrow n + \alpha < f(x) < n + 1; n \in Z, \\ \alpha \in [1; +\infty) \Rightarrow x \in \emptyset \end{cases} \quad (10)$$

Քննարկենք երեք օրինակ:

**Օրինակ 8:** Լուծել  $\{\sqrt{1-x}\} > -1$  անհավասարումը:  $[4, 127]$

**Լուծում:** Համաձայն (10)-ի ունենք՝

$$\begin{aligned} \alpha = -1 \in (-\infty; 0) &\Rightarrow \{\sqrt{1-x}\} > -1 \Leftrightarrow \\ &\Leftrightarrow 1-x \geq 0 \Leftrightarrow x \leq 1 \Leftrightarrow x \in (-\infty; 1]: \end{aligned}$$

**Պատ.**՝  $x \in (-\infty; 1]$ :

**Օրինակ 9:** Լուծել  $\{2020 - 2019x\} > 2021$  անհավասարումը:

**Լուծում:** Համաձայն (10)-ի ունենք՝

$$\alpha = 2021 \in [1; +\infty) \Rightarrow \{2020 - 2019x\} > 2021 \Leftrightarrow x \in \emptyset:$$

**Պատ.**՝  $x \in \emptyset$ :

**Օրինակ 10:** Գտնել  $\{\sin x\} > \frac{3}{4}$  անհավասարման այն լուծումները, որոնք պատկանում են  $x \in \left[-\frac{\pi}{2}; \frac{\pi}{2}\right]$  միջակայքին:  $[4, 128]$

**Լուծում:** Համաձայն (10)-ի ունենք՝

$$\alpha = \frac{3}{4} \in [0; 1) \Rightarrow \{\sin x\} > \frac{3}{4} \Leftrightarrow n + \frac{3}{4} < \sin x < n + 1; n \in Z \Leftrightarrow$$

$$\Leftrightarrow \begin{cases} n = -1 \\ n = 0 \\ x \in \left[-\frac{\pi}{2}; \frac{\pi}{2}\right] \end{cases} \Leftrightarrow \begin{cases} -\frac{1}{4} < \sin x < 0 \\ \frac{3}{4} < \sin x < 1 \\ x \in \left[-\frac{\pi}{2}; \frac{\pi}{2}\right] \end{cases} \Leftrightarrow x \in \left(-\arcsin \frac{1}{4}; 0\right) \cup \left(\arcsin \frac{3}{4}; \frac{\pi}{2}\right):$$

**Պատ.**՝  $x \in \left(-\arcsin \frac{1}{4}; 0\right) \cup \left(\arcsin \frac{3}{4}; \frac{\pi}{2}\right):$

**6. Դիտարկենք  $\{f(x)\} < \alpha$  անհավասարումը:**

Համաձայն (3) հատկության, անհավասարման ԹԱԲ-ում ձախ մասը միշտ ընդունում է արժեքներ  $[0; 1)$  տիրույթից, հետևաբար հեշտ է նկատել, որ  $\alpha \leq 0$  դեպքում տրված անհավասարումը լուծում չի ունենա, իսկ  $\alpha \geq 1$  դեպքում անհավասարման ԹԱԲ-ի յուրաքանչյուր արժեք կբավարարի դիտարկվող անհավասարմանը, իսկ  $\alpha \in (0; 1)$  դեպքում, ի նկատի ունենալով սահմանում 2-ը և (5) հատկությունը, կունենանք՝  $n \leq f(x) < n + \alpha; n \in Z$ : Այսպիսով, դիտարկվող անհավասարման համար ստացանք՝

$$\{f(x)\} < \alpha \Leftrightarrow \begin{cases} \alpha \in (-\infty; 0] \Rightarrow x \in \emptyset \\ \alpha \in (0; 1) \Rightarrow n \leq f(x) < n + \alpha; n \in Z: \\ \alpha \in [1; +\infty) \Rightarrow x \in D(f) \end{cases} \quad (11)$$

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Քննարկենք երեք օրինակ:

**Օրինակ 11:** Լուծել  $\{\cos x\} < -1$  անհավասարումը:

**Լուծում:** Համաձայն (11)-ի ունենք՝

$$\alpha = -1 \in (-\infty; 0] \Rightarrow \{\cos x\} < -1 \Leftrightarrow x \in \emptyset:$$

**Պատ.**՝  $x \in \emptyset$ :

**Օրինակ 12:** Լուծել  $\{\log_{2020}(1-x)\} < 3$  անհավասարումը:

**Լուծում:** Համաձայն (11)-ի ունենք՝

$$\alpha = 3 \in [1; +\infty) \Rightarrow \{\log_{2020}(1-x)\} < 3 \Leftrightarrow 1-x > 0 \Leftrightarrow x \in (-\infty; 1):$$

**Պատ.**՝  $x \in (-\infty; 1)$ :

**Օրինակ 13:** Գտնել  $\{\cos x\} < \frac{1}{4}$  անհավասարման այն լուծումները,

որոնք պատկանում են  $x \in [0; \pi]$  միջակայքին: [4,128]

**Լուծում:** Համաձայն (11)-ի ունենք՝

$$\alpha = \frac{1}{4} \in (0; 1) \Rightarrow \{\cos x\} < \frac{1}{4} \Leftrightarrow n \leq \cos x < n + \frac{1}{4}; n \in Z \Leftrightarrow$$

$$\Leftrightarrow \begin{cases} n = -1 \\ n = 0 \\ x \in [0; \pi] \end{cases} \Leftrightarrow \begin{cases} -1 \leq \cos x < -\frac{3}{4} \\ 0 \leq \cos x < \frac{1}{4} \\ x \in [0; \pi] \end{cases} \Leftrightarrow x \in \left(0; \arccos \frac{1}{4}\right) \cup \left(\pi - \arccos \frac{3}{4}; \pi\right):$$

**Պատ.**՝  $x \in \left(0; \arccos \frac{1}{4}\right) \cup \left(\pi - \arccos \frac{3}{4}; \pi\right)$ :

**7. Դիտարկենք  $[f(x)] = g(x)$  հավասարումը:**

Ենթա է նկատել, որ տրված հավասարումը լուծում կունենա այն և միայն այն դեպքում, երբ  $g(x)$ -ը կընդունի ամբողջ արժեքներ: Մյուս

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

կողմից, (3) հատկության և սահմանում 2-ի համաձայն ունենք՝  
 $0 \leq \{f(x)\} < 1 \Leftrightarrow 0 \leq f(x) - [f(x)] < 1$ , հետևաբար, դիտարկվող  
 հավասարման համար կունենանք՝

$$[f(x)] = g(x) \Leftrightarrow \begin{cases} 0 \leq f(x) - g(x) < 1 \\ g(x) \in Z \end{cases} : \quad (12)$$

Քննարկենք մեկ օրինակ.

**Օրինակ 14:** Լուծել  $\left[ \frac{6x+5}{8} \right] = \frac{15x-7}{5}$  հավասարումը:  $[4, 136]$

**Լուծում:** Համաձայն (12)-ի ունենք՝

$$\begin{aligned} \left[ \frac{6x+5}{8} \right] = \frac{15x-7}{5} &\Leftrightarrow \begin{cases} 0 \leq \frac{6x+5}{8} - \frac{15x-7}{5} < 1 \\ \frac{15x-7}{5} \in Z \end{cases} \Leftrightarrow \\ \Leftrightarrow \begin{cases} 0 \leq 81 - 90x < 40 \\ \frac{15x-7}{5} = n; \quad n \in Z \end{cases} &\Leftrightarrow \begin{cases} 0 \leq 81 - 6(5n+7) < 40 \\ 15x = 5n+7 \\ n \in Z \end{cases} \Leftrightarrow \\ \Leftrightarrow \begin{cases} -\frac{1}{30} < n \leq \frac{39}{30} \\ 15x = 5n+7 \\ n \in Z \end{cases} &\Leftrightarrow \begin{cases} n=0 \\ n=1 \\ 15x = 5n+7 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = \frac{7}{15} \\ x = \frac{4}{5} \end{cases} : \end{aligned}$$

**Պատ.**՝  $x_1 = \frac{7}{15}; x_2 = \frac{4}{5}$ :

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**8. Դիտարկենք**  $\{f(x)\} = g(x)$  **հավասարումը:**

Ի նկատի ունենալով սահմանում 2-ը, հեշտ է նկատել, որ դիտարկվող հավասարումը համարժեք է  $[f(x)] = f(x) - g(x)$  հավասարմանը, որը նախորդ ենթակետում արդեն քննարկել ենք:  
Քննարկենք մեկ օրինակ:

**Օրինակ 15:** Լուծել  $\{x\} = \frac{8x - x^2 - 7}{8}$  հավասարումը:  $[5, 249]$

**Լուծում:** Համաձայն սահմանում 2-ի, ունենք՝  
 $x - [x] = \frac{8x - x^2 - 7}{8} \Leftrightarrow [x] = \frac{x^2 + 7}{8}$ , որտեղից, ի նկատի ունենալով (12)-ը, կստանանք.

$$\begin{cases} 0 \leq x - \frac{x^2 + 7}{8} < 1 \\ \frac{x^2 + 7}{8} = [x] \in Z \end{cases} \Leftrightarrow \begin{cases} 0 \leq 8x - x^2 - 7 < 8 \\ \frac{x^2 + 7}{8} = [x] \in Z \end{cases} \Leftrightarrow$$

$$\Leftrightarrow \begin{cases} x \in [1; 3) \cup (5; 7] \\ \frac{x^2 + 7}{8} = [x] \in Z \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x \in [1; 3) \cup (5; 7] \\ \frac{x^2 + 7}{8} = [x] \in Z : \\ [x] \in \{1; 2; 5; 6; 7\} \end{cases}$$

Այժմ առանձին-առանձին քննարկենք  $[x]$ -ի բոլոր հնարավոր արժեքները:

$$[x] = 1 \Rightarrow \begin{cases} \frac{x^2 + 7}{8} = 1 \\ x \in [1; 3) \cup (5; 7] \end{cases} \Leftrightarrow x_1 = 1; \quad [x] = 2 \Rightarrow \begin{cases} \frac{x^2 + 7}{8} = 2 \\ x \in [1; 3) \cup (5; 7] \end{cases} \Leftrightarrow x \in \emptyset;$$

$$[x] = 5 \Rightarrow \begin{cases} \frac{x^2 + 7}{8} = 5 \\ x \in [1; 3) \cup (5; 7] \end{cases} \Leftrightarrow x_2 = \sqrt{33}; \quad [x] = 6 \Rightarrow \begin{cases} \frac{x^2 + 7}{8} = 6 \\ x \in [1; 3) \cup (5; 7] \end{cases} \Leftrightarrow x_3 = \sqrt{41};$$

$$[x]=7 \Rightarrow \begin{cases} \frac{x^2+7}{8}=7 \\ x \in [1;3) \cup (5;7] \end{cases} \Leftrightarrow x_4=7:$$

**Պատ.**՝  $x_1=1; x_2=\sqrt{33}; x_3=\sqrt{41}; x_4=7:$

Ամփոփելով կարող ենք փաստել, որ իրական թվի ամբողջ կամ կոտորակային մաս պարունակող վերոգրյալ տիպային հավասարումների և անհավասարումների լուծման տարրական եղանակների տիրապետումն աշակերտներին հնարավորություն կտա համանման տարբեր ոչ տիպային հավասարումների և անհավասարումների հանդիպելիս ցուցաբերել ստեղծագործական մոտեցում և նշված (1)–(5) հատկությունների կիրառմամբ, «ազատվելով» ամբողջ կամ կոտորակային մասերից, խնդիրը բերել մաթեմատիկայի դպրոցական դասընթացում քննարկվող տիպային հավասարման կամ անհավասարման (գծային, քառակուսային, կոտորակագծային, իռացիոնալ, լոգարիթմական և այլն) լուծման:

Հուսով ենք աշխատանքը կհետաքրքրի ինչպես աշակերտներին և ուսուցիչներին, այնպես էլ, առհասարակ, մաթեմատիկայով զբաղվողներին և կնպաստի ավելի խորն ընկալելու իրական թվի ամբողջ և կոտորակային մասերի հետ կապված հարցերը:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Գևորգյան Գ.Գ., Սահակյան Ա.Ա., Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր: Ավագ դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք (քնագիտամաթեմատիկական հոսքի համար.), Երևան, «Տիգրան Մեծ», 2009.-208էջ:
2. Деза Е.И., Котова Л.В., Сборник задач по теории чисел, М.: Книжный дом «ЛИБРОКОМ», 2012.-224с.
3. Шень А., Задачи по математике, М.: МЦНМО, 2000.-272с.
4. Ибатулин И.Ж., Математические олимпиады: теория и практика. М.: БИНОМ. Лаборатория знаний, 2013.-358с.

5. Яковлев Г.Н., Купцов Л.П., Резниченко С.В., Гусятников П.Б., Всероссийские математические олимпиады школьников, М.: Просвещение, 1992.-383с.

## О НЕКОТОРЫХ УРАВНЕНИЯХ И НЕРАВЕНСТВАХ, СОДЕРЖАЩИХ ЦЕЛУЮ ИЛИ ДРОБНУЮ ЧАСТЬ ДЕЙСТВИТЕЛЬНОГО ЧИСЛА

**Гагик Никогосян**

ШГУ, кафедра Математики, физики и информационных технологий,  
к.ф.-м.н.

**Вардан Манукян**

ШГУ, кафедра математики,  
физики и информационных технологий, к.ф.-м.н., доцент

Работа посвящена обсуждению некоторых типовых и не типовых уравнений и неравенств, содержащих целую или дробную часть действительного числа, встречающиеся в школьном курсе математики, а также выявлению некоторых основных способов решения подобных уравнений и неравенств.

В статье изначально кратко упомянем некоторые известные свойства, связанные с целой и дробной частями действительного числа, после чего, используя их, упомянем конкретные подходы к решению вышеупомянутых различных типовых и не типовых уравнений и неравенств.

**Ключевые слова:** Алгебра, уравнение, неравенство, целая часть действительного числа, дробная часть действительного числа.

ON SOME EQUATIONS AND INEQUALITIES CONTAINING AN  
INTEGRAL OR FRACTIONAL PART OF A REAL NUMBER

**Gagik Nikoghosyan**

SHSU, Chair of Mathematics, Physics and Information Technologies  
Candidate of physical and mathematical sciences

**Vardan Manukyan**

SHSU, Chair of Mathematics, Physics and Information Technologies  
Candidate of physical and mathematical sciences, Associate Professor

The work is devoted to a discussion of some typical and non-typical equations and inequalities containing an integer or fractional part of a real number, found in the school mathematics course, as well as identifying some of the main ways to solve such equations and inequalities.

In the article, we briefly mention some well-known properties associated with the integer and fractional parts of a real number. Then using them, we mention specific approaches to solving the above-mentioned various typical and non-typical equations and inequalities.

**Keywords:** Algebra, equation, inequality, integer part of a real number, fractional part of a real number.

*Տրվել է պատգարության՝ 14.10.2020թ.  
Գրախոսվել է՝ 11.11.2020թ.*



## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԱՆԳԼԱԼԵԶՈՒ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԳՈՎԱԶԴԻ ԲԱՌԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### **Հրանուշ Թովմասյան**

ԲՊՀ, Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոն,  
ԵՀ Կիրառական լեզվաբանության ամբիոն, ք.գ.դ., դոցենտ  
anushtovmasyan@yahoo.com, +374 91 483398

#### **Արփինե Դարբինյան**

ԲՊՀ, Միջազգային տուրիզմի բակալավր  
arpine.darbinyan@mail.ru, +374 93 839383

Հետազոտությունը նվիրված է անգլալեզու զբոսաշրջային գովազդի բառազործառական առանձնահատկություններին: Հոդվածում քննարկման առարկա են դարձել գովազդի լեզու և գովազդային տեքստի հասկացությունները, դրանց ստեղծման բառային և գործառական առանձնահատկությունները և դրսևորման յուրահատկությունները անգլալեզու զբոսաշրջային կայքերում: Ուսումնասիրությունը կատարել ենք համեմատական և իմաստի վերլուծության մեթոդներով: Արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ անգլալեզու գովազդային տեքստն ունի մի շարք կանոնակարգված բառային և գործառական առանձնահատկություններ՝ միավերաբերականություն, հակիրճություն, նորաբանություններ, հիմնաբառեր, իրակություններ (լենգուիջինգ) և գործառույթներ՝ բանական փաստարկման և հուզական փաստարկման տեխնիկաները:

**Հիմնաբառեր.** Անգլալեզու գովազդ, մասնագիտական բառապաշար, նորաստեղծ բառակապակցություն, գովազդային շուկա, բառային միջոցներ, լեզվական մշակույթ, նորաբանություններ, հակիրճություն, հիմնաբառեր, իրակություն (լենգուիջինգ)

Գովազդը միշտ մեծ նշանակություն է ունեցել ապրանքների ու ծառայությունների վաճառքի առաջխաղացման գործում: Գովազդի նպատակներից է այս կամ այն ապրանքի հանդեպ որոշակի նախասիրության ձևավորումը, որը կատարվում է ապրանքանիշի, գովազդային հաղորդումների, փաթեթավորման ու այլ միջոցների օգնությամբ, ո-

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

րոնք առանձնահատուկ են դարձնում գովազդվող ապրանքը: Գովազդի ներգործման ազդեցությունն անշուշտ որոշվում է գովազդային տեքստի առանձնահատկություններով:

Խոսելով զբոսաշրջային գովազդի մասին՝ հարկ է նշել, որ այն կարող է հազարավոր մարդիկ: Դրա լեզվական առավելություններն ու հատկապես թերությունները մեծապես ազդում են հաճախորդի վրա:

Առհասարակ, լեզվաբանության տեսանկյունից գովազդը գնորդի և վաճառողի միջև հաղորդակցության տեսակ է, որի հիմնական նպատակը ապրանքների և ծառայությունների նկատմամբ առաջարկի և պահանջարկի կարգավորումն է: Այսօր գովազդի ստեղծմամբ զբաղվող մասնագետները զբաղվում են տեքստային յուրահատուկ արտադրանքի ձևավորմամբ, որտեղ կիրառում են լեզվական և ոչ լեզվական միջոցներ: [5, էջ 347]

Գովազդային տեքստի գործառական-ոճական առանձնահատկությունների ուսումնասիրման համար, նախևառաջ, անհրաժեշտ է հասկանալ «գովազդի լեզու» հասկացությունը: Այսպես, օրինակ, Ե. Ժդանովան իր «Գովազդային տեքստը որպես լեզվաբանական ուսումնասիրության օբյեկտ» աշխատանքում գովազդային տեքստը սահմանում է որպես «յուրահատուկ լեզվական կառույց, որն ապահովում է հասցեատիրոջ կողմից որոշակի տեղեկատվության ընկալումը՝ լեզվամշակութաբանական և սոցիալ-լեզվաբանական առանձնահատկությունների հաշվի առնմամբ»: [4, էջ 82]

Զբոսաշրջային գովազդի ոճական կողմն ուսումնասիրելիս կարևոր է հասկանալ, թե հատկապես ո՞ր սկզբունքներն ու ոճական առանձնահատկություններն են ապահովում թիրախային լսարանի վրա ներգործությունը: Գովազդային տեքստը պետք է համապատասխանի հետևյալ սկզբունքներին.

1. Այն պետք է լինի *համառոտ*, որը թույլ է տալիս փոխանցել ուղերձի իմաստը: Հետևաբար, գովազդային տեքստը պետք է զերծ լինի ավելորդ բառերից, որոնք կարող են ծանրաբեռնել ուղերձը լրացուցիչ տեղեկատվությամբ: Այնուամենայնիվ, պետք չէ խուսափել այնպիսի բառերից և արտահայտություններից, որոնք կարող են փոխանցել գովազդի իմաստն ու պահպանել անհրաժեշտ ռիթմը:

## ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2. Այն պետք է *հստակ* լինի: Ցանկացած, այդ թվում նաև զբոսաշրջային գովազդի տեքստ ստեղծելիս պետք է կենտրոնանալ առաջարկի վրա, խուսափել ավելորդ տեղեկատվությունից, քանի որ վերջինս կարող է թյուրըմբռնման պատճառ հանդիսանալ:

3. Այն պետք է *տրամաբանական* լինի: Այսինքն՝ անհրաժեշտ է, որ գովազդային տեքստում առաջարկների միջև լինի իմաստային կապ: Չնայած համառոտ շարադրանքին՝ պետք է խուսափել տեղեկատվության կորստից:

4. Այն պետք է *տեղեկատվական* լինի: Գովազդային ուղերձը պետք է որոշակի տեղեկատվություն հաղորդի թիրախային լսարանին: Ուստի, անհրաժեշտ է ապահովել փաստարկների հստակ հաջորդականություն: Պետք է խուսափել երկիմաստ, ոչ միանշանակ արտահայտություններից: Բացի այդ, գովազդային տեքստի միջոցով պետք է կանխատեսել այն հնարավոր հարցերը, որոնք կարող են ծագել սպառողների շրջանում և արձագանքել դրանց:

5. Այն պետք է *պարզ* լինի: Այս սկզբունքը հատկապես կարևոր է զբոսաշրջային գովազդի տեքստի ձևավորման համար: Անհրաժեշտ է առավելագույնս պարզ և հասանելի ձևով գովազդի նպատակը, տեղեկատվությունը հասցնել թիրախային լսարանին, այդ իսկ պատճառով պետք է խուսափել շարադրման կերպարային ոճից:

6. Այն պետք է *ինքնափոխ* լինի. պետք է խուսափել երկար թվարկումներից, քանի որ ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն պետք է լինի տեղին և ըստ էության: Շատ հաճախ գովազդի հեղինակները կիրառում են անավարտ մտքի տեխնիկան՝ թիրախային լսարանի ուշադրությունը գրավելու համար:

7. Այն պետք է *արտահայտիչ* լինի: Սա արդյունավետ զբոսաշրջային գովազդի ստեղծման կարևոր նախապայմաններից է: Անհրաժեշտ է կիրառել վառ կերպարներ և արդյունավետ արտահայտություններ, ինչպես նաև խոսքային հատուկ ձևեր: [2, էջ 198]

Հատկանշական է, որ անգլալեզու գովազդը այդքան էլ ազատ չէ լեզվական արտահայտչամիջոցների ընտրության տեսանկյունից: Այս երևույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ գովազդը սահմանափակված է բառերի և արտահայտությունների ընտրությամբ. վեր-

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ջիններս կարող են շփոթեցնել սպառողներին և չհաղորդել զբոսաշրջային արտադրանքի կամ ծառայության իրական հատկանիշները:

Անգլալեզու գովազդի առանձնահատկությունները վերհանելու համար պետք է վերլուծության ենթարկել այսպիսի տեքստերում կիրառվող ոճական և բառային հնարները, օրինակ, կիրառվում են ներգործության ուժգնացման, տեքստերում արտահայտչության ավելացման համար և այլն:

Վերջերս համացանցային գովազդը դարձել է սպառողներին տեղեկատվության փոխանցման ամենատարածված միջոցը: Համացանցում առաջխաղացումը բարդ, համալիր գործընթաց է, որն ընդգրկում է համացանցային ռեսուրսների միջոցով ապրանքների կամ ծառայությունների գովազդը, սպառողների հետ փոխհարաբերությունները, միջնորդների ներգրավումը և այլն:

Էլեկտրոնային զբոսաշրջային տեքստերը պարունակում են բազմաթիվ պատմական իրադարձություններ և մշակութային հասկացություններ: Դա է պատճառը, որ գովազդային տեքստի վերլուծության գործընթացում հետազոտողներն առավել հաճախ են բախվում լեզվական իրողությունների խնդրին: [3, էջ 192]

Առանձնացնենք զբոսաշրջային գովազդի հիմնական բառային առանձնահատկությունները՝

- **միավերաբերականություն,**
- **հակիրճություն,**
- **նորաբանություններ,**
- **հիմնաբառեր,**
- **իրակություններ (լենգուիջինգ):** [1, էջ 50]

Այսպես, **միավերաբերականության** դեպքում լեզվական միավորն ունի միայն մեկ վերաբերելի տվյալ համատեքստում, այս դեպքում՝ զբոսաշրջային խոսույթում:

Օրինակ՝ package holidays, bed & breakfast, 24-hour front desk, front desk, wake-up call, porter service, room service և այլն:

**Հակիրճությունն** առկայանում է մի շարք շարահյուսական կաղապարների միջոցով՝

- *պարզեցում*

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- գործողությունը կատարողի զեղչում
- կրավորական սեռի կիրառում
- գոյականի ածականացում
- համադրություն՝ հապավումների միջոցով:

**Պարզեցման** օրինակներ են հետևյալ բառակապակցությունները՝

- addon – any component of a package tour that is not included in the package price
- after-departure charge – expenses such as telephone charges that do not appear on a guest’s account at check out
- back-to-back – tours operating on consistent, continuing basis, usually without time between:

*Գործողությունը կատարողի սղման և բայի կրավորական ձևի կիրառման* օրինակներ են՝

accompanied child – **children** under 14 years old travelling with their parents,

unaccompanied **child** or separated **child** - is a child without the presence of a legal guardian:

*Գոյականի ածականացման* օրինակներ են՝

tour operator, airline ticket, charter flight, travel agency, first-class fare, nature reserved:

Զբոսաշրջային գովազդում որպես լեզվական հնար շատ է օգտագործվում *համադրությունը՝ հապավման միջոցով*: Անգլերենում շատ բառեր և բառախմբեր համառոտագրվում են, որը նախկինում արվել է քիչ տեղ զբաղեցնելու նպատակով: Զբոսաշրջային գովազդում նմանատիպ կրճատումները հիմնականում կատարվում են կարճ ժամանակահատվածում՝ հնարավորինս շատ նյութ հաղորդելու համար:

Այդպիսիք են օրինակ՝

- BB = Bed and Breakfast,
- HB = Half Board
- RO = Room only:

Զբոսաշրջային գովազդային բառապաշարին հատուկ կարևորություն է տրվում լենգուիջինգի (linguaging – իրակություններ/ոեալիաներ) և հիմնաբառերի կիրառությանը:

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Լենգուիջինգը** զբոսաշրջային լեզվաբանական և հանրալեզվաբանական ուսումնասիրություններում որակվում է որպես անհատի՝ որոշակի հասարակական համատեքստում սեփական ինքնությունը դրսևորելու միջոց: Տեղական լեզվի կամ բարբառային ձևերի ներմուծումը՝ որպես օտարաբանություն, նպատակ ունի օգնելու զբոսաշրջիկին ներգրավելու տվյալ մշակույթ և ձեռք բերելու տվյալ երկրի լեզվամշակութային զգացողություն: [6, էջ 354]

Հայաստանը ներկայացնող կայքերից առանձնացրել ենք ազգային մշակույթի տարբեր ոլորտներում կենցաղավարող languaging-ի բառամիավորներից մի շարք օրինակներ՝ duduk, tsiranapogh, carpet, basturma, Dolma, Qufta, Lavash, Zhengyalov Hats, Spas, Sujukh, Ghaurma, Khash, Khorovats, Gata, Oghi, Vernisaj, Matenadaran, Aragats, Garni-Geghard, Tsakhkadzor, Jermuk, Tsitsernakaberd, Karahoonj և այլն: Այլազգի ընթերցողին ընկալելի լինելու համար հայերեն բառերն ու բառակապակցությունները գրվում են տառադարձմամբ:

Կենցաղավարող languaging-ի բառամիավորներ կարող ենք հանդիպել շատ կայքերում, որոնցում ներկայացված են հայկական ավանդույթներն ու սովորույթները:

Օրինակ՝ *People are very supportive in the villages. For example, if there is some celebration in someone's house (wedding, baptizing and etc) everyone will come to help in preparations. The one who is good at making cakes is responsible for the sweets of the festive table, the other will make dolma.*

**Հիմնաբառերը** նույնպես զբոսաշրջային լեզվի առանձնահատկություններից են. զբոսաշրջային գովազդը վառ արտահայտչականությամբ, հակիրճ, տպավորիչ և հիմնաբառերով հարուստ տեքստ է: Նշված առանձնահատկությունների նպատակն է ազդեցիկ բառերի շնորհիվ ապահովել պարզ, հասկանալի և հստակ տեղեկատվություն և խթանել երևակայությունը:

Զբոսաշրջային գովազդում հաճախ հանդիպող հիմնաբառերի օրինակներ են away, distance, destination, adventure, escape, dream, imagination, lust, pleasure, genuine, authentic, real thing, sanctuary, of unusual interest և այլն: [7, էջ 174-175]

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Օրինակ՝ *And it's no surprise Paris is one of the most popular tourist destinations in the world as its famous for its art, culture and history.* [18]

Զբոսաշրջությունը զարգացող ոլորտ է, և այստեղ **նորաբանությունների** ձևավորումը կոչված է ներկայացնելու նոր զբոսաշրջային զարգացող ուղղություններ, զբոսաշրջային ընկերություններ, գրավիչ վայրեր և ոլորտին վերաբերող այլ տարրեր:

Ներկայումս զբոսաշրջային ոլորտի նորաբանությունները սկիզբ են առնում անգլախոս երկրներից: Սա պայմանավորված է նրանով, որ անգլերենը միջազգային բիզնեսի լեզուն է: Գլոբալիզացիայի շնորհիվ այս նորաբանությունները տարածվում և օգտագործվում են ամբողջ աշխարհում՝ ընդհուպ մինչև ոչ անգլախոս երկրներ: [8, էջ 213]

Ռազմական ոլորտում և զինծառայության պայմաններում կարևոր է կարգապահության խնդիրը: Կարգապահության հաստատումն ու ամրապնդումն ունեն իրենց յուրահատկությունները՝ կախված նրանից, թե ինչպես է ընթանում զինծառայողի հարմարումը: Ցանկացած նորակոչիկի մոտ ի հայտ է գալիս սոցիալ-հոգեբանական հարմարման խնդիր, որի արդյունավետ կամ ոչ արդյունավետ հաղթահարումը կախված է տվյալ անձի առանձնահատկություններից: Զինծառայության կարգապահական նորմերին հարմարվելու ընթացքը պայմանավորված է մինչ զորակոչային ժամանակահատվածում զինվորական ծառայության հանդեպ նրա ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական նախադրամադրվածությամբ: Զինծառայության պայմաններում՝ զորամասում, զինծառայողների սոցիալ-հոգեբանական ադապտացիայի հատկանշական խոչընդոտներից են միջդերային կոնֆլիկտները, դերային պարտականությունների բաշխումը և նմանատիպ մի շարք այլ դրդապատճառներ, որոնք զինծառայողի մոտ հանգեցնում են վարքի փոփոխության:

**Հիմնաբառեր.** Զինծառայող, վարք, ագրեսիվություն, հարմարում, ապահարմարում, կարգապահություն:

Ներկայումս կարգապահություն /դիսցիպլինա/ ասելով հասկանում են սիստեմավորված ուսուցում, վարժություններ, մտավոր, բարոյական և ֆիզիկական ընդունակությունների զարգացում և դրանց վրա հսկելու ընդունակություն, ինչպես նաև ուսուցման ու վերահսկողության համակարգ, որի խնդիրը օրինական իշխանությանը ենթարկվելն է, ինքնա-



## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

վերահսկողությունը և այնպիսի վարքագիծ ապահովելը, որը համապատասխանում է ՁՈւ-ում գոյություն ունեցող կարգերին:

Դիմելով անգլիական բացատրական հաջողված բառարաններից մեկին, մենք տեսնում ենք, որ «կարգապահություն» /դիսցիպլինա/ բառի արմատը discile բառն է, որ նշանակում է «աշակերտ, սովորող»:

*Հողվածի նպատակն է* ուսումնասիրել զինծառայության պայմաններում իրականացվող և դրսևորվող վարքի ձևերն ու վարքականոնները, մասնավորապես կարգապահությունը զինծառայության պայմաններում, անկարգապահության հետևանքները, որոնք հանգեցնում են կարգապահական տույժերի, զինծառայողների կարգապահությունը պայմանավորված ագրեսիայի մակարդակով և հարմարման /ադապտացիայի/, ապահարմարման /դեզադապտացիայի/ գործընթացով: Աշխատանքի նպատակն է վեր հանել զինծառայողների շրջանում դրսևորվող վարքի շարժառիթներն ու հարմարման դերը կանոնակարգային վարքի պահպանման գործում: Մեր կողմից ծրագրված շարունակական հետազոտության շրջանակում առաջադրված *խնդիրներից են*. ուսումնասիրել և համակարգել մասնագիտական գրականության մեջ առկա մոտեցումները ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ, իրականացնել ՀՀ և ԱՀ ՊԲ-ում գրանցված և չգրանցված իրավախախտումների հոգեբանական վերլուծություն /case-study/, ուսումնասիրել հետազոտվող զինծառայողների վարքաձևերի առանձնահատկությունները: Հենց նշված խնդիրների իրականացմամբ էլ թելադրված է սույն հոդվածում արծարծված հիմնախնդրի հրատապությունն ու արդիականությունը:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են case-study-ներ և մասնագիտական թեստեր:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ զինծառայողի հարմարումը և ագրեսիվության ցածր աստիճանը նպաստում են զինծառայողի կարգապահ վարքի դրսևորմանը:

Զինվորական կարգապահությունը ՀՀ օրենքներով, զինվորական կանոնադրությունով և հրամանատարների հրամաններով սահմանված կարգուկանոնի խստիվ ու ճշգրիտ պահպանումն է: Դրա նպատակը զինծառայողների իրավունքները սահմանափակելը չէ, այլ՝ ՀՀ ՁՈՒ-ի առջև ծառայած խնդիրները կատարելու համար զինծառայողների

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

մարտական պատրաստությունն ապահովելը: Լատիներեն կարգապահություն /դիսցիպլինա/ բառը նշանակում է խիստ կարգուկանոն: «Կարգապահությունը բոլոր զինծառայողների կողմից օրենքներով, զինվորական հրամաններով և հրամանատարների կողմից հաստատված կարգուկանոնի խիստ և հատուկ պահպանումն է» [5, էջ 167]:

Ձինվորական կարգապահությունը յուրաքանչյուր զինծառայողի զինվորական պարտքի և անձնական պատասխանատվության գիտակցումն է: Բարձր կարգապահության հասնելու համար նախ և առաջ պետք է զինծառայողների շրջանում գործադրել դաստիարակչական բոլոր ձևերն ու եղանակները, իրականացնել բացատրական մեծ աշխատանք՝ նկատի ունենալով, որ յուրաքանչյուր զինծառայող ունի ինքնատիպ խառնվածք, հոգեբանություն, գիտակցության և ինտելեկտի աստիճան: Կարգապահության պահպանման առումով հրամանատարի գործունեությունը գնահատվում է ոչ թե նրա տված տույժերի քանակով, այլ օրենքների և զինվորական կանոնադրությունների ճշգրիտ պահպանմամբ [1, էջ 11-12]:

Ձինծառայողները սկզբից ևեթ տեղեկանում են ՁՈՒ-ի ներքին կանոնադրությանն ու պարտավորվում կատարել հրամանատարի հրամանները, ինչպես նաև անհրաժեշտ է յուրաքանչյուր զինվորի գիտակցությունը հասանելի դարձնել, թե որն է կարգապահության նշանակությունն ու անհրաժեշտությունը: «Կարգապահության գլխավոր նշանակությունը անհատների խումբը կազմակերպված կոլեկտիվի վերածելն է, որը գործում է որպես մեկ միասնություն, ուղղված է միասնական նպատակի նվաճմանը և ենթարկվում է միասնական կամքի» [6, էջ 41]:

Ադապտացիայի հիմնական խնդիրները զինծառայողների մոտ ծագում են զինծառայության հենց սկզբնական շրջանում: Սթրեսի հիմնական պատճառներից է հին սոցիալական կապերից կտրվելը, նոր միջավայրում լինելն ու նոր ծանոթություններ, շփումներ հաստատելու անհրաժեշտությունն ու կարողությունը: Ձինծառայողների զգալի մասը ծառայության երկրորդ ամսից հետո սկսում է հաղթահարել և դուրս գալ խորթության զգացումից, նոր պայմանները աստիճանաբար դառնում են սովորական, նորակոչիկը ձեռք է բերում նոր պայմաններում գործելու ռազմավարություն: Արդեն հինգից վեց ամիս հետո նորակոչիկների մեծա-

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

մասնության մեջ սկսում է գերակայել ժամանակավոր իրադրական ադապտացվածություն, իսկ ավելի բարենպաստ դեպքում կայուն իրադրական ադապտացվածության վիճակ: Եթե զինծառայողը ծառայության առաջին ամիսների ընթացքում գոնե ժամանակավոր իրադրական հարմավածության չի հասնում, ապա հետևությունը մեկն է. առկա է անհաղթահարելի գործոն, որին հոգեկանը դեռևս ի գորու չէ հարմարվել [3, էջ 182-183]: Զինծառայության սկզբնական շրջանում նորակոչիկը պետք է հարմարվի իր որոշ ազատությունների սահմանափակմանը, հրամաններին ենթարկվելուն, օրակարգային և կանոնակարգված առօրյային, ֆիզիկական ծանրաբեռնվածությանը, զինվորական կենցաղին ու ինքնուրույն կյանքին: Այս փուլերը հաղթահարելով զինծառայողը կհամարվի կարգապահ և հարմարված զինծառայության պայմաններին, իսկ հակառակ դեպքում՝ կունենանք իրավախախտումներ և դրանից բխող պատժամիջոցներ: Դ. Ջամայանի խոսքերով զինվորական ռեժիմին չհարմարվելու ավելի հակված կարող են լինել այն զինծառայողները, ովքեր քաղաքացիական կյանքում մոր հետ գերկապված են եղել, սովոր են հատուկ ուշադրության, ինչ-ինչ պատճառներով լիակատար կերպով պատրաստ չեն ինքնուրույն կյանքի: Այդպիսին կարող են լինել ընտանիքի կրտսեր կամ միակ որդիները: Նշված գործոնները կարող են պատճառ դառնալ, որպեսզի զինծառայության ոչ միայն սկզբնական շրջանում, այլև երբեմն ողջ ընթացքում, մոր հանդեպ հատուկ սրված կարոտն այդպես էլ չլքի երիտասարդին և որի հետևանքով ևս հնարավոր են իրավախախտումներ և վարքի փոփոխություններ: Բանակային պայմանները պահանջում են սովորական վարքի ձևերի փոփոխություն: Նոր վարքի պահանջները նրանց մեջ բողոք ու դժգոհություն են առաջացնում: Նոր պայմանները լարում են նորակոչիկներին մինչև նրանց հարմարումը: Ինչպես նշում է Դ. Ջամայանը, նորակոչիկի հարմարման գործընթացները ուղեկցվում են տագնապով և լքվածության, միայնակության զգացումով: Լքվածության և միայնակության զգացողությունը բացի իր բուն դրսևորումից, ունի նաև անուղղակի արտահայտություններ: Այդպիսին է, օրինակ, չափազանց սրված կարոտը ծնողների հանդեպ: Հատուկ նշենք, որ այստեղ խոսքը սովորական կարոտի մասին չէ: Ամենահարմարված զինծառայողն անգամ, կարոտում է

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

իր հարազատներին: Հոր հանդեպ ուժգնորեն արտահայտված կարոտը կարող է հուշել այն հոգեբանական իրողությունների մասին, որ զինծառայողն իրեն թույլ ու անպաշտպան է զգում և հենարանի կարիք ունի, թեկուզև այդ մասին ինքն իրեն անգամ չի ուզում խոստովանել: Զինծառայության պայմաններին ժամկետային զինծառայողի ադապտացիան չի կարող լինել լիարժեք [3, էջ 183-185]: Ներքուստ չհասկանալով և հաճախ չընդունելով զինծառայության պահանջները, իսկ որոշ դեպքերում պարզապես չիմանալով՝ զինծառայողները խախտումներ են թույլ տալիս: Առհասարակ, ամեն կերպ պետք է շեշտվի ռազմական առօրյայի խիստ կանոնակարգվածությունը, լակոնիզմը, խոսքի կառուցման, գործողությունների իրականացման առաջին հայացքից ձևական թվացող պաշտոնական ոճը: Այդ կերպ զինծառայողի մեջ ձևավորվում է և՛ կարգապահություն, և՛ ընդհանուրին պատկանելու զգացողություն՝ հատկապես համատեղ գործողությունների կատարման ժամանակ, որն էլ նպաստում է զինծառայողի ավելի արագ համարմանը: Երբ զինծառայողի մոտ ձևավորվում է «մենք»-ի և ընդհանուրին պատկանելու զգացում, ապա կարող ենք ասել, որ հարմարման ռազմավարությունը հաջողությամբ հաղթահարվում է զինծառայողի կողմից:

Թե ենթակայության կարգը, թե զինվորական պատվի կարգը, կազմում են զինվորական կարգապահության հիմնաքարերից մեկը: Ավելին, դրանց խախտման համար նախատեսվում են ոչ միայն կարգապահական կանոնադրությունով սահմանված տույժեր և պատիժներ, այլև քրեական պատասխանատվություն:

Ընտանիքում հատկապես սիրված, արտոնյալ, բացառիկ դիրք ունենալը նույնպես կարող է էապես դժվարացնել զորամասում ժամկետային զինծառայողի սոցիալ-հոգեբանական ադապտացիան: Այն երեխաներին, ում ընտանիքում շատ բան է ներվում, բավարարվում է գրեթե նրանց ցանկացած քմահաճույք: Այս ամենը նրանց մեջ ձևավորվում է բացառիկության զգացողություն, չափից ավելի եսակենտրոնություն, որի հետևանքով նման երեխաները ողջ կյանքի ընթացքում իրենց հանդեպ պահանջում են առանձնահատուկ վերաբերմունք, ցանկանում են լինել ուշադրության կենտրոնում, որպես կանոն մեծ դժվարությամբ են տանում իրենց ցանկությունների չիրականանալը, կյանքի դժվարություն-

ները: Նրանց համար շատ դժվար է համակերպվելը, երբ իրենց վերաբերվում են այնպես, ինչպես մյուսներին՝ բացառելով առանձնահատուկ մոտեցումները: Այս մարդիկ շատ հաճախ ուղղակի պատրաստ չեն լինում ինքնուրույն կյանք վարելու, քանի որ սովոր են, որ ամեն ինչ նրանց մատուցվի պատրաստի: Հենց դա է պատճառը, որ կարգապահական խախտումներ թույլ տված զինծառայողների ադապտացիան խոչընդոտող էական պատճառներից է այդ բացառիկության զգացողությունը, այն նեքին բողբոջը, որ ունենում է նա, երբ իրեն ընդունում են այնպես, ինչպես բոլորին: Այս մարդիկ իրենց հանդեպ սովորական վերաբերմունքը, հատուկ շեշտված ուշադրության բացակայությունը ընկալում են որպես վիրավորանք [3, էջ 187]: Ձինվորը կարգապահ է, երբ հաղթահարված են նրա պահանջմունքներն ու հարմարման գործընթանները: Տարբերում են կարգապահության երկու տեսակ. զանգվածների կարգապահություն և անհատի կարգապահություն: Չանգվածների կարգապահության վերաբերյալ Հենդերսոնն ասում է. «Վատ կարգապահություն ունեցող բանակում շատ ցածր մակարդակի վրա է նաև շարժունությունը: Հազար սվին ունեցող զումարտակը ժամանակին կռվի դաշտ դուրս բերելը հեշտ գործ չէ: Կռվի դաշտում հաջողության հասնելու գաղտնիքը վճռորոշ ուղղությամբ գերակշռող ուժեր կուտակելու կարողության մեջ է՝ լինեն դրանք բարոյական, նյութական, թե և՛ մեկը, և՛ մյուսը»: Կարգապահ զորքերը հարձակման ժամանակ մեծ եռանդ են դրսևորում: Կարգապահությունը զորքերի բարոյական վիճակի հիմքն է:

Մարտական հզոր ուժ դառնալու համար բանակը պետք է վերին աստիճանի կարգապահ լինի: Իսկ զորամասի կազապահությունը ձևավորվում է առանձին զինվորների կարգապահությունից: Ձինվորների կարգապահությունը ձեռք է բերվում նրանով, որ սխալ գործողությունների համար նրանց պատժում են, այլ նրանց վրա այնպիսի ազդեցություն գործելով, որպեսզի նրանք ճիշտ գործելու ցանկություն ունենան: Սկզբում զինվորին անհրաժեշտ է ամենայն մանրամասնությամբ սովորեցնել, թե ինչ պետք է անի, և հետո միայն հրամաններ տալ: Պետք է ի նկատի ունենալ այն փաստը, որ նորակոչիկները զինծառայության պայմաններին կարող են դժվարությամբ հարմարվել, նաև այն, որ կան ոչ միայն արագ, այլև ավելի դանդաղ սովորող զինվորներ, որոնց կրկին

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ու կրկին պետք է բացատրել, թե ինչ են կատարելու: Յուրաքանչյուր նոր հնար իր բոլոր բաղադրիչների հետ միասին անհրաժեշտ է սովորեցնել ամենայն մանրամասնությամբ: Եթե զորամասում շատ են կարգապահական լուրջ խախտումները, ապա վստահորեն կարելի է ասել, որ ժամանակին չեն կասեցվել այնպիսի մանր խախտումներ, ինչպիսիք են համազգեստը կրելու հարցում անփութությունը, ճշտապահության բացակայությունը և այլն:

Կարգապահական պրակտիկայի ոսկե կանոնն է. Հոգ տարեք մանրուքների մասին, և այդ դեպքում ավելի մեծ խնդիրներում բարդություններ չեք ունենա: Նորակոչիկների հետ անհրաժեշտ է բարեհամբույր զրուցել կարգապահական հարցերի մասին ընդ որում, իրենց այն իրավունքների և պարտականությունների լույսի ներքո, որոնք նախատեսված են կանոնագրքով: Անհրաժեշտ է մանրամասնորեն բացատրել, թե որն է պատիժներ սահմանելու նպատակը: Այդ նպատակը զանցանքները կանխելն է, այլ ոչ թե վրեժ լուծելը:

Հատկապես, լուրջ նախազգուշացում պետք է կատարել զանգվածային պատիժների կապակցությամբ: Օրինակ, երբ ամենշաբաթյա ստուգումների ժամանակ զորանոցի որևէ բաժնում անկարգություններ են հայտնաբերվում, ապա չի կարելի դրանց պատճառների անաչառ հետաքննություն կատարելու փոխարեն հախուռն կերպով պատժել անխտիր բոլոր զինծառայողներին՝ նրանց արտահերթ աշխատանքի ուղարկելով կամ որևէ այլ ձևով: Դա կարող է շատ վնասակար հետևանքներ ունենալ: Մարդկային խմբի հոգեբանությունը էականորեն տարբերվում է խումբը կազմող անհատներից յուրաքանչյուրի հոգեբանությունից: Երբ խումբն ամբողջությամբ համոզված է, որ անհիմն կերպով պատիժ է կրում, ապա բավականին վտանգավոր հոգեբանական հետևանքներ են ծագում: Այս դեպքում կարող է գերակայել խմբակային ազդեսիան, որն էլ կհանգեցնի վտանգավոր հետևանքների: Զանգվածային պատիժը հաճախ լուրջ հանցագործությունների է հանգեցնում, քանի որ այն, համախմբելով զինվորներին, խմբային բողոք է հարուցում [4, էջ 50]:

Խրախուսանքի դեպքում ամրապնդվում է տվյալ վարքը, իսկ հակառակ դեպքում՝ պատժվում, վարքը ուղղելու, վերաուղղելու նպատակով: Պատիժները սահմանված են ըստ ՀՀ ԶՈւ կանոնագրքի և օրենսգրքի:

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատիժ կրելիս չեն բավարարվում մարդու մի շարք կարևոր պահանջ-մունքներ: Ամերիկյան ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ագրեսիվ, հակասոցիալական վարքի հակված երեխաները տանը ենթարկվել են ֆիզիկական պատիժների [2, էջ 247]: Խրախուսանքը ուժեղացնում է ցանկալի վարքը, իսկ պատիժը կոչված է այն վերացնելու: Խրախուսանքի բացակայությունը նույնպես կարող է հանգեցնել անցանկալի վարքագծի մարելուն, իսկ պատժի իսպառ բացակայությունը կհանգեցնի անցանկալի վարքի սրմանը և ամենաթողության զգացման ձևավորմանը:

Զինվորի կողմից իրականացվող յուրաքանչյուր վարք գնահատվում է զինվորականի կողմից թե լավ իմաստով, թե՛ վատ: Զինվորի կողմից կատարվող այսպես ասած ծառայությանը ոչ համապատասխանող վարքը ենթարկում է զինվորին պատասխանատվության, սակայն եթե զինվորն ապահարմարված է և ունի ագրեսիվության բարձր մակարդակ, ապա պետք է նկատի ունենալ, որ տվյալ վարքը կրկնվելու միտում ունի. կապված չլինելով թե ինչ պատիժ է կիրառվել և ինչ դաստիարակչական աշխատանք է տարվել նրա՝ այդ վարքը կանխելու համար: Իրականացրած հետազոտական աշխատանքների վերլուծությունից մենք հանգեցինք այն եզրակացության, որ զինծառայողի վարքի դրսևորման գործում մեծ նշանակություն ունի զինծառայողի հարմարված լինելու հանգամանքը: Քանի որ հողվածի շրջանակներում չէինք կարող ներկայացնել կատարված բոլոր հետազոտական աշխատանքները, այս դեպքում սահմանափակվել ենք միայն case-study-ների վերլուծության արդյունքում ստացած եզրահանգմամբ, համաձայն որի զինծառայողի վարքը /կարգապահությունը/ մեծապես կախված է նրա հարմարումից: Որքան հարմարված է և արագ է ընթացել զինծառայողի ադապտացիան զինծառայության պայմաններում, այնքան զինծառայողի վարքը կբնորոշվի որպես կարգապահ: Case-study-ների /գրանցված և չգրանցված իրավախախտումներ/ բովանդակային վերլուծությունները վեր հանեցին զինծառայողների կողմից դրսևորվող իրավախախտումների դրդապատճառները: Համաձայն արձանագրված արդյունքների՝ իրավախախտումների հիմնական դրդապատճառ է հանդիսացել զինծառայողի ապահարմարվածությունը /ծառայության պայմաններին, զինակիցներին, կանոնակարգային վարքին և այլն/: Սրանից հետևություն, որ մեր վարկածն այն մասին, թե զին-

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծառայողի վարքը /կարգապահությունը/ ուղիղ համեմատական է զինծառայողի հարմարման հետ՝ հաստատվում է: Ձինծառայության պայմաններին պատանհներն ավելի արագ են հարմարվում, եթե ծառայելուց անձնական օգուտ քաղելու դիրքորոշում են ունենում, ըստ այդմ էլ կանխվում է անցանկալի վարքը զինծառայողի կողմից: Ձինծառայողների սոցիալ-հոգեբանական հարմարմանը նպաստելու համար ցանկալի է նրանց մեջ հետաքրքրություն առաջացնել կյանքի հանդեպ, օգնել, որպեսզի նրանք կենսական կարևորության նպատակներ առաջ քաշեն, իմաստավորեն իրենց կյանքը, ունենան պիտանելիության և կարևոր դեր կատարողի զգացում: Շատ կարևոր է նաև զինծառայողներին հնարավորություն ընձեռել, որպեսզի ադապտացիայի դժվարություններ ունեցող զինծառայողներն արտահայտվեն, խոսեն իրեց հուզող խնդիրների մասին: Դրան կարելի է հասնել հնարավորություն ստեղծելով և խթանելով զինծառայողների ստեղծագործական ակտիվությունը: Կարևոր է, որպեսզի ապահարմարված զինծառայողներն ունենան զինվորական կոլեկտիվի համար կարևոր լինելու զգացողություն: Շատ ազդեցիկ է լինում զինծառայողի համար դժվարին պահերին ծնողների, ընտանիքի այլ անդամների՝ իր ողջ-առողջ վերադարձին սպասելու հանգամանքը հիշեցնելը: Իավախախտումների մեծ մասը կապված է եղել հենց զորամասը ինքնական լքելու կամ կարոտից ելնելով զորամաս ուշ վերադարձի հետ:

### Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ ՊՆ «Հայրենիքի մարտիկ» -2, 2013
2. Նալչաջյան Ա. Ա., Անձ, խմբային սոցիալականացում և հոգեբանական ադապտացիա, Երևան, 1985
3. Ջամալյան Դ., Ռազմական հոգեբանության հիմունքներ 1, Երևան, «Լինգվա» հրատ., 2008
4. Քոուփլենդ Ն., Հոգեբանությունը և զինվորը; Երևան, «Լուսակն» հրատ., 2007
5. Военный энциклопедический словарь, том1., Москва, 2001
6. Коупленд Н., Психология и солдат, Москва, 1960



---

**ВЛИЯНИЕ ДЕЗАДАПТАЦИИ НА ПОВЕДЕНИЕ ВОЕННОСЛУЖАЩЕГО**

**Анна Надоян**

ЕУ, Кафедра психологии, к.п.н. доцент

**Гаяне Минасян**

ЕУ, Кафедра психологии, магистр

В военной сфере и в военной службе важной является вопрос дисциплины. Установление и укрепление дисциплины имеет свои особенности, в зависимости от того, как адаптируется военнослужащий. У каждого призывника проявляется проблема социально-психологической адаптации, эффективность или бесполезность преодоления проблемы зависит от особенности человека. Процесс адаптации к дисциплинарным нормам военнослужащих обусловлен его физической, психологической, и социальной предрасположенностью характерный до призывного периода. В условиях военной службы в воинской части проблема межролевых конфликтов распределяется ролевыми обязанностями, которые приводят к изменению поведения.

**Ключевые слова:** Военнослужащий, поведения, агрессивность, адаптация, дезадаптация, дисциплина.

**THE INFLUENCE OF DISADAPTED CONDITION ON THE BEHAVIOR OF SERVICEMEN**

**Anna Nadoyan**

EU, PhD in Psychology, Associate Professor

**Gayane Minasyan**

EU, Chair of Psychology, Master

The concept of discipline in the military sphere and under the conditions of military service is of eminent importance. The establishment and strengthening of the discipline has its own specifics, depending on how the serviceman adapts to that environment. Every recruit faces the problem

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

---

of social-psychological adjustment, while the effectiveness or ineffectiveness of overcoming it largely depends on the individual characteristics. The process of adapting to the disciplinary norms of military service is conditioned by the physical, psychological and social predisposition of the person to military service before the conscription period. During military service, the inter-role conflicts, the role distribution and responsibilities as well as a number of other similar grounds can be considered significant barriers to the social-psychological adaptation of servicemen to the military unit.

**Keywords:** Serviceman, behavior, aggressiveness, adaptation, disadaptation, discipline.

*Տրվել է պաշարության՝ 12.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 09.11.2020թ.*

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՑՆ ԱԶԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

**Մարի Քելոյան**

ԵՀ, Հոգեբանության ամբիոն, հ.գ.թ.  
marikeloyan@gmail.com +374 93 501327

Հոդվածում ներկայացվում են հոգեբանական հասունության վերաբերյալ մի շարք հեղինակների տեսական մոտեցումներ: Վերջիններիս համադրման արդյունքում փորձ է արվում ուրվագծել հոգեբանական հասունության հիմնական բաղադրիչները, որն էլ կարող է հանդես գալ որպես հոգեբանական հասունության ինտեգրատիվ մոդել:

Ներկայացվում է առաջին և չորրորդ կուրսերի աջակցող մասնագիտությունների ուսանողների (հոգեբան և սոցիալական մանկավարժ) հոգեբանական հասունության որոշ բաղադրիչների (պարասոսիանալոգիա, հանդուրժողականություն, ինքնազարգացում, պոզիտիվ մտածողություն, ինքնուրույնություն) շարժընթացը:

**Հիմնաբառեր.** Հոգեբանական հասունություն, հոգեբանական հասունության բաղադրիչներ, հոգեբանական հասունության ինտեգրատիվ մոդել, աջակցող մասնագիտությունների ուսանողներ:

Անձի կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ մասնավորապես մասնագիտական գործունեության, արդյունավետ լինելու կարևոր պայման է հանդիսանում նրա հոգեբանական հասունությունը: Հատկապես վերոհիշյալը կարևորվում է այն պարագայում, երբ մասնագիտական գործունեությունը առնչվում է մարդ-մարդ համակարգին, տվյալ դեպքում՝ աջակցող մասնագիտությունների ներկայացուցիչներին, ովքեր չունեն հոգեբանական հասունության համապատասխան մակարդակ, չեն կարող արդյունավետ կերպով իրականացնել իրենց մասնագիտական պարտականությունները: Սրանով է պայմանավորված թեմայի արդիականությունը:

## ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ

Անձի հոգեբանական հասունության հիմնախնդրի նկատմամբ հոգեբանների հետաքրքրությունը հատկապես աճեց այն ժամանակ, երբ անձի տեսությունները և ուսումնասիրությունները սկսեցին նրան դիտարկել կենսագործունեության տարբեր ոլորտներում՝ անդրադարձ կատարելով նրա՝ սեփական անձի նկատմամբ վերաբերմունքին, միջանձնային հարաբերություններում առկա դժվարություններին, մասնագիտական գործունեության ընթացքում գրանցված հաջողություններին կամ անհաջողություններին և այլն: Ժամանակակից հոգեբանության մեջ հոգեբանորեն հասուն անձի կառուցվածքում առանձնացնում են տարբեր բաղադրիչներ, որոնք պատկանում են ինչպես հոգեֆիզիոլոգիական, ճանաչողական, հուզական, հոգեբանական, այնպես էլ սոցիալական, արժեքային ոլորտներին [1]:

Հոգեբանական հասունության բազմաթիվ մոդելներ են մշակվել հոգեբանական տարբեր դպրոցների ներկայացուցիչների կողմից ( էքզիստենցիալ-հումանիստական հոգեբանության և հոգեթերապիայի մի շարք ներկայացուցիչներ՝ Կ.Ռոջերս, Ա.Մասլոու, Է.Ֆրոմմ, Ֆ.Պերլզ, զարգացման հոգեբանության մեջ՝ Է.Էրիկսոն, Բ.Գ.Անանև, Գ.Կրայզ, Դ.Լոլինգեր, Ա.Գ.Պորտովա, ակմեոլոգիայի տեսանկյունից՝ Ա.Ա.Բոդալով, Ա.Լ.Դերչակ, Ա.Ա.Ռեան, անձի հոգեբանության մեջ՝ Կ.Ա.Աբուլխանովա-Սլավսկայա, Լ.Ի.Անցիֆերովա, Ա.Գ.Ասմոլով, Բ.Ս.Բրատուս, Ա.Լ.Ժուրավլով, Դ.Ա.Լեոնտև) [1, 3-5]: Անձի հոգեբանական հասունությունը և շրջանավարտների մասնագիտական կոմպետենցիաները ուսումնասիրվել է Ֆ. Բրանտովայի կողմից և այլն [2]:

Հենվելով վերը նշված բոլոր տեսությունների վրա [1, 3-5]՝ կարելի է նշել, որ կոնկրետ որոշակի մեկնաբանություն գոյություն չունի անձի հոգեբանական հասունության վերաբերյալ, քանի որ բոլոր մոտեցումները հասուն անձի բաղադրիչների մեջ տարբեր հատկանիշներ և շեշտադրումներ են կարևորում: Այնուամենայնիվ, համադրելով բազմաթիվ մոտեցումներ, կարելի է ստանալ հոգեբանական հասունության հետևյալ բաղադրիչները (տես աղյուսակ 1)։

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1.

*Հոգեբանական հասունության բաղադրիչներն՝ ըստ հեղինակների*

<b>Բաղադրիչներ</b>	<b>Հեղինակներ</b>
Պատասխանատվություն	Ա.Ա.Ռեան, Ա.Գ.Ասմյուլ, Է.Ֆրոմ, Է.Էրիկսոն, Ռ.Կասսել
Տոլեռանտություն	Ա.Ա.Դերշակ, Ա.Ա. Բոդալով
Ինքնագարգացման ձգտում,	Կ.Ռոջերս, Ա.Ա.Ռեան
Էմպատիա, ինքնաճանաչում, գիտակցված անկախություն, ստեղծագործականություն	Կ. Ռոջերս
Ինքնաիրացման պահանջմունք	Ա.Մալլու
Լոկուս վերահսկողություն	Ս.Կ.Նարտովա-Բոչակեր
Իրական և իդեալական նպատակների տարբերակում	Բ.Ս.Բրատուս
Ավտոնոմիա, ինքնուրույնություն, ինքնաաջակցություն	Ֆ.Պերլզ, Դ.Լովինգեր
Ինքնաընդունում և ինքնահարգանք, անորոշության հաղթահարման ընդունակություն	Գ.Օլպորտ
Ռեֆլեքսիա	Գ.Ս.Սուխոբսկայա
Ինքնակառավարում	Բ. Գ.Անանև, Ռ.Մ.Շամիրով
Միջանձնային հարաբերությունների կառուցման հնարավորություն	Գ.Սալլիվան, Վ.Ն.Մյասիշև

Այսպիսով, հոգեբանական հասունության ինտեգրատիվ մոդելը ենթադրում է պատասխանատվություն, հանդուրժողականություն, ինքնագարգացում, ավտոնոմիա, ինքնուրույնություն, պոզիտիվ մտածողություն, ինքնակառավարում, միջանձնային հարաբերություններ կառուցելու կարողություն և այլն:

Վերոհիշյալ բաղադրիչների փոփոխական բնույթով պայմանավորված՝ կարելի է նկատել, որ անձի հոգեբանական հասունությունը դինամիկ, անվերջ տեղի ունեցող գործընթաց է, որը շարունակական ուղեկցում է նրան՝ իր ձևավորմանը ու զարգացմանը զուգընթաց: Այս դիտարկումը ենթադրում է, որ ուսումնառության ընթացքում ևս կարելի

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

է ակնկալել հոգեբանական հասունության և նրա առանձին բաղադրիչների շարժընթաց:

Հետազոտության նպատակն է պարզել աջակցող մասնագիտությունների ուսանողների հոգեբանական հասունության և նրա առանձին բաղադրիչների շարժընթացն առաջին և չորրորդ կուրսերում:

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ ենթադրվում է, որ աջակցող մասնագիտությունների ուսանողների հոգեբանական հասունության և նրա բաղադրիչների արտահայտվածությունը ավարտական կուրսում ավելի բարձր է, քան առաջին կուրսում:


Հետազոտության ընտրանքն են կազմում Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ 62 ուսանողներ (հոգեբան և սոցիալական մանկավարժ), որոնցից 28-ը՝ առաջին կուրսի, իսկ 34-ը՝ չորրորդ: Հետազոտությունն իրականացվել է 2019-2020 թվականների ընթացքում:

Հետազոտության ընթացքում կիրառվել է Անձի հասունության ախտորոշման մեթոդիկան (հեղ.՝ Վ.Ա. Ռուժենկով, Վ.Վ. Ռուժենկովա, Ի.Ս. Լուկյանցևա ), որը հնարավորություն է տալիս բացահայտել անձի հոգեբանական հասունության ընդհանուր մակարդակը, ինչպես նաև հոգեբանական հասունության առանձին բաղադրիչներից պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, ինքնազարգացումը, պոզիտիվ մտածողությունը, ինքնուրույնությունը: Համաձայն հարցարանի, արդյունքները մեկնաբանելիս պետք է նկատի ունենալ, որ «բարձր» են համարվում 21-30 (սանդղակների համար) և 101-150 (հոգեբանական ընդհանուր հասունության համար), «միջին»՝ 11-20 (սանդղակների համար) և 51-100 (հոգեբանական ընդհանուր հասունության համար), «ցածր»՝ 0-10 (սանդղակների համար) և 0-50 (հոգեբանական ընդհանուր հասունության համար) միավորները [6]:

Հետազոտության արդյունքները ներկայացված են միջին թվաբանական ցուցանիշներով, որից պարզ է դառնում, որ առաջին և չորրորդ կուրսերի ուսանողների հոգեբանական հասունության մակարդակը «միջին» արտահայտվածություն ունի՝ համապատասխանաբար 71.8 և 91.4, սակայն չորրորդ կուրսի ուսանողների հոգեբանական հասունության ցուցանիշը սահմանային է՝ ավելի մոտ «բարձր» մակարդակին (տես գծապատկեր 1):

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Իսկ ահա, հոգեբանական հասունության առանձին սանդղակների արդյունքներն այսպիսին են. *Պատասխանատվությունը*, եթե առաջին կուրսեցիների մոտ «միջին» արտահայտվածություն ունի՝ 17.3, ապա չորրորդում՝ «բարձր» 20.8 *հանդուրժողականությունը* ամենացածր արտահայտված սանդղակն է՝ 1-ին կուրս՝ 10.6 և 4-րդ կուրս՝ 15.2, *ինքնազարգացումը* ամենաքիչ շարժընթաց արձանագրած բաղադրիչն է՝ 1-ին կուրսի նկատմամբ (16.8) աճել է 0.8 միավորով՝ դառնալով 4-րդ կուրսում 17.6, *յոզիտիվ մտածողության* շարժընթացը 1-ին կուրսի նկատմամբ 4.4 միավոր է (1-ին կուրս՝ 14.5 և 4-րդ կուրս՝ 18.9), *իսկ ինքնուրույնությունը* ամենամեծ դինամիկան է արձանագրել՝ 6.3 միավոր (1-ին կուրս՝ 12.6 և 4-րդ կուրս՝ 18.9) (տես գծապատկեր 1):



**Գծապատկեր 1. Անձնային հասունության և նրա բաղադրիչների արտահայտվածությունը 1-ին և 4-րդ կուրսերում**

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ստացված հետազոտական տվյալները վկայում են, որ ուսումնառության ընթացքում աջակցող մասնագիտությունների ուսանողների հոգեբանական հասունությունը և նրա առանձին բաղադրիչները փոփոխվել են՝ արձանագրելով դրական շարժընթաց: Այս հանգամանքը կարելի է պայմանավորել աջակցող մասնագիտություններին հատուկ մասնագիտական գիտելիքների ընդլայնմամբ և կարողությունների զարգացմամբ, որոնք ամրագրված են համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերում:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Балык А.С., Цыбуленко О.П. Психологическая зрелость личности: теоретические концепции и подходы // Общество: социология, психология, педагогика. 2016.
2. Брантова Ф. С. Психологическая зрелость личности и компетентностная модель выпускника//Москва: науч.-пед. журнал, 2010-149 с.
3. Главатских М.М. «К проблеме изучения понятия социально-психологической зрелости личности» // Вестник Оренбургского государственного университета. - № 7. 2015.- С. 63–71.
4. Дерманова И.Б., Манукян В.Р. Личностная зрелость: к определению психологического содержания // Вестник С.-Петербур. ун-та. 2010. Сер. 12. Вып. 4. С. 68–73.
5. Олпорт Г. Становление личности.. М.: "Смысл", 2002 - 216 с.
6. Руженков В.А., Руженкова В.В., Лукьянцева И.С. /Методика диагностики личностной зрелости. Научные ведомости 2016. № 26 - 247 с. №12. URL:  
<https://cyberleninka.ru/article/n/psihologicheskaya-zrelost-lichnosti-teoreticheskie-kontseptsii-i-podhody> (дата обращения: 09.07.2019).



**ДИНАМИКА НЕКОТОРЫХ КОМПОНЕНТОВ ПСИХОЛОГИЧЕСКОЙ  
ЗРЕЛОСТИ СРЕДИ СТУДЕНТОВ ПОМОГАЮЩИХ ПРОФЕССИЙ**

**Мари Келоян**

ЕУ, кафедра Психологии, к.п.н.

В статье представлены теоретические подходы разных авторов к понятию «психологическая зрелость». В результате объединения последних делается попытка очертить основные компоненты психологической зрелости, которые могут служить целостной моделью психологической зрелости.

Представлена динамика некоторых компонентов психологической зрелости (ответственность, терпимость, саморазвитие, позитивное мышление и самостоятельность) студентов первого и четвертого курсов помогающих профессий (психолог, социальный педагог).

**Ключевые слова:** Психологическая зрелость, компоненты психологической зрелости, интегративная модель психологической зрелости, студенты помогающих профессий.

**THE DYNAMICS OF SOME COMPONENTS OF PSYCHOLOGICAL  
MATURITY AMONG THE STUDENTS OF HELPING PROFESSIONS**

**Mari Keloyan**

EU, Chair of Psychology, PhD in Psychology

In the article is presented the theoretical approaches of different authors on the concept of „psychological maturity”. As a result of combining the latter, an attempt is made to outline the main components of psychological maturity, which can serve as an integral model of psychological maturity.

Subsequently, the dynamics of some components of psychological maturity (responsibility, tolerance, self-development, positive thinking and

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

---

independence) of first-year and fourth-year students of helping professions (psychologist, social educator) is presented.

**Keywords:** Psychological maturity, components of psychological maturity, integrative model of psychological maturity, students in the helping professions.

*Տրվել է պատգարության՝ 12.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 09.11.2020թ.*

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԻՑ

**Նաիրա Հարությունյան**

ԵՀ, Հոգեբանության ամբիոն

harutyunyannaira@aspu.am, +374 91 858498

Սերունդը մարդկանց համախումբ է, որտեղ համախմբված են նույն պատմական ժամանակահատվածում ծնված և մինչույն իրադարձություններն ապրած մարդիկ: Ամերիկյան ժամանակակից հայեցակարգը փաստում է, որ այս հանգամանքը նշանակալի է ցանկացած սերնդի հոգեկերտվածքը հասկանալու համար: Ներկա հարյուրամյակում առանձնացվում են 4 սերունդներ: Երիտասարդությունը համարվում է ամենապրոդուկտիվ և ծաղկման ժամանակահատված: Այն այս տեսության շրջանակներում կազմում է միլենիալների սերունդը, որն ունի իր ուրույն բնութագիրն ու կառուցվածքը, որոնց վրա իրենց հետքն են թողնում էթնիկական պատկանելությունը, սոցիալ-տնտեսական գործոնները և կրթական համակարգն ու քաղաքական իրադարձությունները:

**Հիմնաբառեր.** Երիտասարդություն, միլենիալ, ցենտենիալ, սերունդների հոգեբանություն, խուսափման մոտիվացիա:

1991թ. միմյանցից անկախ հայտնի տնտեսագետ և դեմոգրաֆիայի ոլորտի ներկայացուցիչ Ն.Հոուլը և պատմաբան Վ.Շտրաուսը ստեղծեցին այսպես կոչված «սերունդների տեսությունը»: Հեղինակները, վերլուծելով ԱՄՆ-ի ողջ պատմությունը և առանձնահատուկ ուշադրություն դարձնելով 20-րդ դարին, հայտնաբերեցին մեկ ընդհանուր օրինաչափություն՝ այն է՝ գոյություն ունեն հատուկ ժամանակաշրջաններ, երբ մարդկանց մեծամասնությունը ունենում է միանման արժեքներ և բնութագրիչներ: Այս ժամանակաշրջանները կոչվեցին «սոցիալական սերունդներ» [2]:

Սերունդը մարդկանց խումբ է, որում ընդգրկված են մարդիկ, ովքեր ծնվել են մեկ ընդհանուր ժամանակաշրջանում և նույնանման պայ-

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

մաններում: Այս խմբի մարդիկ ցուցադրում են միանման բնութագրեր, նախասիրություններ և արժեքներ:

Հոուլն ու Շտրաուսը գտնում էին, որ սոցիալական սերունդը մարդկանց համախումբ է՝ ծնված մեկ ընդհանուր 20-ամյա տևողությամբ փուլում, որն ունի հետևյալ 3 անհրաժեշտ գծերը՝

- Պատմության մեջ տարիքային դիրքը, այսինքն՝ միևնույն պատմական իրադարձությունները գրեթե միևնույն տարիքում հանդիպելը,
- Ընդհանուր, միասնական արժեքներն ու վարքային միանման մոդելները,
- Նույն սերնդին պատկանելության զգացում [2]:

Հոուլ-Շտրաուս զույգը կարծում էր, որ պատմությունը զարգանում է ցիկլերով, որոնց տևողությունը հավասար է մարդու կյանքի տևողությանը՝ մոտ 80-90 տարի, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 4 փուլերից: Վերջիններից յուրաքանչյուրին բնորոշ է հասարակության մեջ ընդունված որոշակի արժեքներն ու դրույթները [1]:

Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, որ այս տեսությունը փորձում է ընդհանրացնել մարդուն, միջինացնել նրա բնորոշ գծերը՝ հերքելով նրա անհատականությունը, այդ թվում՝ հոգեբանական տիպը, բնավորությունը, անձնային դրդապատճառները և սոցիալական նախընտրությունները: Սակայն տեսությունը խորությամբ ուսումնասիրելիս, համոզվում ենք, որ անհատական որոշակի բնութագրերը պահպանելով հանդերձ, յուրաքանչյուր սերունդ այնուամենայնիվ ունի ընդհանուր առանցքային գծեր:

Առանձնացվում են հետևյալ սերունդները՝

- Ավանդապաշտներ՝ Մինչև 1945
- Բեբի-բումերներ՝ 1946 – 1964
- X սերունդ՝ 1965 – 1979
- Y սերունդ՝ 1981 – 1995 /որոշ գրականության մեջ՝ 2000/
- Z սերունդ՝ 1996 –ից հետո

Գրականության մեջ այս սերունդների թվագրությունների միջակայքը տատանվում է մոտ 5-10 տարվա կտրվածքով՝ կախված աշխարհագրական տարածքից. միևնույն համաշխարհային մասշտաբի իրա-

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

դարձությունը կարող է տարբեր կերպ ազդել տարբեր աշխարհամասերում կամ տարածաշրջաններում:

Կատարելով մեծ հետազոտություն՝ սկսած ամերիկյան մեծ դեպրեսիայի տարիներից մինչև այժմ, նրանք առանձնացրեցին հետևյալ սերունդները «կառուցողներ» կամ «հաղթողներ», «լուռ սերունդ», «բեքիբուներներ», «X սերունդ» «Y սերունդ» և «Z սերունդ»:

Տեսության հեղինակները յուրաքանչյուր սերնդի մեջ առանցքային և պարտադիր են համարում երկու կարևոր կետ՝ ճգնաժամ և վերելք: Ճգնաժամի պարագայում մարդիկ համախմբվում են ինչ-որ իրադարձության կամ ընդհանուր վտանգի առջև, որի հետևանքով ձևավորվում է նրանց մոտ ինքնազոհաբերման էթիկա և կարգուկանոնի ձգտում: Մինչդեռ վերելքի ժամանակ գերակշռում են ինդիվիդուալիստական գաղափարները, իսկ ինստիտուտները, ինչպես նաև ողջ ինստիտուցիոնալ համակարգը քննադատության է ենթարկվում սոցիալ-հոգևոր նոր իդեալների տեսանկյունից:

Համաձայն Բաննոնի և Ֆորդի, որպեսզի հնարավոր լինի հասկանալ «հայրերի և որդիների» հավերժական պայքարը և տարբեր սերունդների հոգեբանական առանձնահատկությունները, անհրաժեշտ է ընդունել, որ ոչ մի սերունդ նման չէ մյուսին, և յուրաքանչյուրը յուրովի է նայում աշխարհին [3]: Յուրաքանչյուր սերունդ ունի յուրահատուկ նախապատմություն, որը որոշում է նրանց վարքն ու հարաբերությունները [7]:

Հաշվի առնելով նրանց բնութագրերը և այն իրադարձությունները, որոնք որոշել են նրանց կյանքն ու կենսակերպը՝ գլոբալիզացիա, արագ տեխնիկական պրոգրես, դեմոգրաֆիական բազմազանության աճ և այլն, տարբեր հեղինակներ առաջարկում են տարբեր անվանումներ նույն անձանց խմբի համար: Այսպես, Բերնարդի աշխատության մեջ առաջարկվում է Y սերունդ, Միլենիալ, Նեքսթերներ և Նեքստուս սերունդ անվանումները [6]:

Ըստ Մայսթերի հաշվարկների՝ 2030 թվականի դրությամբ համաշխարհային աշխատաշուկայի 75 տոկոսը կկազմեն Y սերնդի ներկայացուցիչները: [7, էջ 1]

Թեմայի շուրջ ժամանակակից գրականությունը ենթադրում է, որ միլենիալները «ցանկանում են ամեն ինչ» և «ցանկանում են հիմա»,

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

օրինակ՝ լավ աշխատավարձ, աճ՝ մասնագիտական կարիերայով, անձնական կյանքում և աշխատանքում հավասարակշռություն, հետաքրքիր և բարդ աշխատանք, մեծ և նշանակալի ներդրում հասարակության մեջ:

Հաճախ գրականության մեջ նկարագրված է, որ միլենիալներն ունենում են բարձր սպասումներ, նույնիսկ շատ գործատուներ կատակում են այս հարցի շուրջ՝ նշելով, որ աշխատանքի ընդունելիս ոչ թե իրենք են հարցաքննում միլենիալներին, այլ վերջիններս՝ իրենց: Կա ենթադրություն, որ միլենիալների աշխատանքային նպատակները և սպասումները գերաբաժնորված են, անիրատեսական և կապված չեն խրախուսման հետ:

Գոյություն ունեցող սակավաթիվ գրականության հիման վրա առանձնացվում են 5 հիմնական թեմաներ, որոնք նշանակալի են միլենիալների համար: Դրանք են՝

- աշխատանք-կյանք հավասարակշռություն,
- առաջխաղացման հնարավորություններ,
- նշանակալի աշխատանք,
- լավ աշխատավարձ և բոնուսներ,
- բարենպաստ աշխատանքային միջավայր [7]

Թալգենն ու Մարտինը առանձնացնում են Y սերնդի 4 դրական ճշմարտություններ և նկարագրում սերունդը՝ որպես «պատմության մեջ նոր ինքնավստահություն ունեցող, լավատեսության և բարձր ինքնագնահատականի, առավել կրթված և մտածող սերունդ, որը ճանապարհ է հարթում դեպի ավելի բաց և հանդուրժող հասարակության համար» [8, էջ 4]:

Կան շատ կարծրատիպեր, որոնք արտասահմանյան գրականության մեջ հանդիպում են վերոնշյալ սերնդի նկարագրության համար: Այսպես Բեննոնն ու Բիկմանը նկարագրում են այս սերունդը՝ որպես տեխնիկապես կոփված, բազմաֆունկցիոնալ, հավակնոտ, եսակենտրոն, թիմային համագործակցությանը հակված և բարձր սպասումներ ունեցող սերունդ: Հեղինակները հաստատում են, որ միլենիալները, ի տարբերություն նախորդ և հաջորդ սերունդների, ավելի են գնահա-

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

տում բարձրագույն կրթությունը՝ հենվելով իրենց ծնողների ծանր և տքնաջան աշխատանքի վրա:

Ինչպես համաշխարհային տվյալները, այնպես էլ մեր հետազոտության արդյունքները փաստում են, որ միլենիալները չափազանց մեծ սպասումներ ունեն իրենց կյանքի տարբեր ոլորտներից՝ աշխատանքից, կարիերայից, ընտանիքից, հասարակություն տարբեր շերտերից, պետական իշխանություններից և այլն: Ինչը հաճախ իրականության հետ բախման արդյունքում դիսկոմֆորտի և հիասթափության պատճառ է դառնում: Միջին վիճակագրական միլենիալի նպատակները հիմնականում կապված են անձնային աճի, մասնագիտական զարգացման և կապերի ստեղծման հետ: Համաշխարհային վիճակագրությունը փաստում է, որ նրանց 86%-ը սուր անհրաժեշտություն է զգում հասնել բարձրունքների ֆինանսական ոլորտում և անձնական կյանքում:

Ամփոփելով համաշխարհային գրականության տվյալները միլենիալների հեզաբանական առանձնահատկությունների և բնորոշ գծերի վերաբերյալ, անհնար է չփաստել այն էական անհամապատասխանությունները, որոնք առկա են այս նկարագրությունների և հայ միլենիալների միջև:

Հայ միլենիալները տեսել են, թե ինչպես են իրենց ծնողները աշխատում Հայաստանի համար ծանր և դժվար ժամանակահատվածում, որը ժողովրդի մեջ հայտնի է «մութ ու ցուտ տարիներ» անվանմամբ: Նրանք ականատես են եղել, թե ինչպես է ծնողը պատրաստ ամեն աշխատանքի, միայն թե կարողանա պահել ընտանիքը, ինչպես են ընտանիքերը քայքայվում ծնողներից մեկի /հիմնականում հոր/ արտագնա աշխատանքի մեկնելու պատճառով, ինչպես են ծնողները աշխատում՝ առանց ախտավարձի հույսի, կրճատումների պայմաններում և այլն: Այս ամենն իր հետքն է թողել հայ երիտասարդների հոգեկերտվածքի վրա, ինչն էլ թույլ է տալիս մեզ որոշակի զուգահեռներ անցկացնել հայ միլենիալների և համաշխարհային միջին վիճակագրական միլենիալի միջև:

Մեր հետազոտության արդյունքում մենք կարող ենք առանձնացնել հայ միլենիալների հետևյալ առանձնահատկությունները՝

1. Ի տարբերություն ցենտենիալների (1996-ից հետո ծնվածների)՝ միլենիալները առավել զգայուն են գնահատականների և հակադարձ

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

կապի նկատմամբ: Նրանց համար նշանակալի է իրենց գործունեության արդյունքների և կատարված գործողությունների գնահատումը, արտաքին արձագանքը: Նրանց համար կարևոր է ունենալ իրավիճակի վերաբերյալ ամբողջական հստակ պատկերը և իրենց դերն ու նշանակությունը այդ իրավիճակում:

2. Միլենիալների համար կարևոր է ցանկացած գործունեության ներքին դրդապատճառը, ինչը նշանակում է, որ ինչով էլ զբաղվի միլենիալը, դա պետք է իրեն հաճելի լինի և առաջացնի ոգևորություն ու ներքին բավարարվածություն: Այսպես՝ այս կատեգորիայում միլենիալների քանակական ցուցանիշները 35 տոկոսով բարձր են, քան հաջորդ սերնդի քանակական տվյալները:

3. Միլենիալներին բնորոշ է ոչ թե նվաճման մոտիվացիան, այլ անհաջողությունից խուսափման մոտիվացիան: Հետազոտվողների 70 տոկոսը այս կատեգորիայում դրսևորել են բարձր արդյունքներ: Սա նշանակում է, որ նրանք վախենում են ցուցադրել ցածր արդյունավետություն, ձախողվել այս կամ այն ոլորտում, ինչի պատճառով զգույշ են իրենց քայլերում և գործողություններում: Այս բնութագրիչը կապված է առաջին բնութագրիչի հետ: Այսպես՝ միլենիալը ձգտում է ցանկացած իրավիճակում գործել այնպես, որ խուսափի անհաջողությունից, մասնավորապես այն ոլորտներում, որտեղ այդ գործողությունները կարող են գնահատվել այլ անձանց կողմից: Նրանք առավել սուր են հակազդում սխալներին և անհաջողություններին, այդ նպատակով նույնիսկ փոխելով նախնական կենսական պլաններն ու նպատակները:

4. Ֆոկուս խմբերի և քեյս-սթադիների կոնտենտ վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել, որ միլենիալներն այն սերունդն են, որոնց կրթությունը մեծամասամբ հիմնված է եղել նախկին Խորհրդային միության կրթական համակարգի վրա, որտեղ տեղ չունեին այնպիսի հմտությունների զարգացումը, ինչն այսօր անվանում են «փափուկ հմտություններ»: Փափուկ հմտությունները կարիերայի համար կարևոր, ոչ մասնագիտական վերմասնագիտական հմտությունների համալիր, որոնք պատասխանատու են աշխատանքային գործընթացին հաջող մասնակցության ու աշխատանքի բարձր արդյունավետության համար և համընդգրկող են, այսինքն, կապված չեն որոշակի ա-



## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ռարկայական ոլորտի հետ [4]: Հանրակրթական և բարձրագույն մասնագիտական կրթությունը ապահովել է միլենիալների միայն ակադեմիական գիտելիքների պաշարը, մինչդեռ այնպիսի որակներ, ինչպիսիք են ճկունությունը մարդկային հարաբերություններում, ադապտիվությունը, ինքնամոտիվացիան, հուզական ապրումակցումը, առաջնորդությունն ու ստեղծարարությունը մնացել են անբավարար զարգացման մակարդակում:

5. Որպես նախորդ կետի տրամաբանական շարունակություն՝ պետք է ընդգծել ստեղծարարությունը՝ որպես միլենիալներին չբնորոշող որակ: Հաշվի առնելով այն կրթական միջավայրը (մթնոլորտ, դասագրքեր, ուսուցիչներ, արժեքային համակարգ), որը տիրում էր միլենիալների դպրոցական տարիներին, ապա տարօրինակ չէ, որ այս սերունդը դժվարություններ է ունենում ստեղծարար, ոչ տրիվիալ քայլեր անելու, նոր մոտեցումներ և գաղափարներ փնտրելու, անհաջողություններին ու սխալներին դիմակայելու հարցերում: Հայ միլենիալների այս առանձնահատկությունը հակասում է համաշխարհային տվյալներին: Ամերիկյան հետազոտությունները, ի հակադրություն, փաստում են, որ միլենիալների գլխավոր ուժեղ որակը հենց ստեղծարարությունն է:

6. Թալգենն ու Մարտինը առանձնացնում են Y սերնդի բնորոշիչ որակ՝ հանդուրժողականությունը: Այս օրինաչափությունը հայ իրականության համար չի գործում: Հայ ազգը, լինելով մոնոէթնիկ ազգ, առհասարակ չի բնութագրվում չափազանց բարձր հանդուրժողականությամբ և նոր փորձի հանդեպ բաց լինելով: Միլենիալները բացառություն չեն կազմում: Մինչդեռ պատկերը նշանակալիորեն փոխվում է արդեն հաջորդ սերնդի՝ ցենտենիալների շրջանում [8, 9]

Որևէ սերնդի հոգեկերտվածքը հասկանալն ու ճանաչելը մարկետինգային և կրթական մեծ հնարավորություններ են պարունակում: Այս գիտելիքները թույլ են տալիս զինել նոր ժամանակի ուսուցիչներին և մենեջերներին համապատասխան գիտելիքներով և գործիքակազմով, որոնց տիրապետումը ապահովում է բարձր արդյունավետություն ապագա սերունդների կրթման և դաստիարակման գործընթացում:

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### Օգտագործված գրականության ցանկ

1. Савельева И. М. История и время. В поисках утраченного / И. М. Савельева, А. В. Полетаев. – М.: Языки русской культуры, 1997. – 486 с
2. Теория поколений н. Хоува и в. Штрауса. Возможности практического применения, Ожиганова Е. М., 2015, Иркутский государственный университет, г. Иркутск
3. Bannon, S., Ford, K., & Meltzer, L.. Understanding Millennials in the workplace. CPA Journal, 81(11), 2011 61-65.
4. Workforce connections, Key “soft skills” that foster youth workforce success: toward a consensus across fields Laura H. Lippman, Renee Ryberg, Rachel Carney, Kristin A. Moore Child Trends, 2015
5. Beekman, T.. Fill in the generation gap. Strategic Finance, 93(3), 2011 15-17.
6. Howe, N., & Strauss, W.. The next 20 years: How customer and workforce attitudes will evolve. Harvard Business Review, 85(7/8), 2007 41-52.
7. Meister, J.. Three reasons you need to adopt a Millennial mindset regardless of your age. Forbes 2012,
8. Tulgan, B., & Martin, C.. Managing Generation Y: Global citizens born in the late seventies and early eighties. Amherst, Massachusetts: HRD Press, Inc. 2001
9. Tulgan, B.. Not everyone gets a trophy: How to manage Generation Y. San Francisco, California: Jossey-Bass, 2009.

### ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ С ТОЧКИ ЗРЕНИЯ ТЕОРИИ ПОКОЛЕНИЙ

#### Наира Арутюнян

ԵՄ, кафедра Психологии

Поколение - это группа людей, рожденных в один исторический период, проживающих одни и те же события. Современная американская концепция доказывает, что это обстоятельство важно для

понимания менталитета любого поколения. В текущем веке выделяют 4 поколения. Молодость считается самым продуктивным периодом. В рамках этой теории он формирует поколение миллениалов, которое имеет свои особенности и структуру, на которой накладываются следы этнической принадлежности, социально-экономических факторов, системы образования и политических событий.

**Ключевые слова:** Молодежь, миллениалы, центениалы, теория поколений, мотивация избегания.

### THE PSYCHOLOGICAL FEATURES OF ARMENIAN YOUNG ADULTS FROM THE PERSPECTIVE OF GENERATION THEORY

**Naira Harutyunyan**

EU, Chair of Psychology

Generation is a group of people, who are born in the same historical period, living the same events. The modern American concept proves that this circumstance is significant for understanding the mentality of any generation. In the current century, 4 generations are distinguished. Youth is considered the most productive period. Within the framework of this theory, it forms the generation of millennials, which has its own characteristics and structure, on which traces of ethnicity, socio-economic factors, education system and political events leave their mark.

**Keywords:** Young-adulthood, millennials, centennials, generation theory, avoidance motivation

*Տրվել է րաշարրության՝ 12.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 10.11.2020թ.*

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՊԸ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԱՆՁԻ ԱԳՐԵՍԻՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԵՏ

**Անուշ Բաղրամյան**

ԵՀ, Գյումրու մասնաճյուղ  
baghramyana.96@mail.ru, +374 98 810747

Հողվածում ներկայացված են ՀՀ զինված ուժերում իրականացված հետազոտության արդյունքները, որոնցում դիտարկվում են բանակային միջավայրում ծագող միջանձնային կոնֆլիկտների յուրահատկությունները, դրանց առաջացման պատճառները, կանխարգելման ուղիները և հարթման մեխանիզմները: Աշխատանքի հիմնական նպատակն է հասկանալ, թե որքանով և ինչպե՞ս է կապված զինծառայողի անձի ագրեսիվության մակարդակը ծագող միջանձնային կոնֆլիկտների հետ՝ կախված զինծառայության յուրահատուկ պայմաններից, ինչպես նաև բացահայտել կոնֆլիկտոգեն վարքի էթիոլոգիան: Իրականացված հետազոտության հիմնական խնդիրներից է՝ ուսումնասիրել հոգեբանության մեջ առկա մոտեցումները ագրեսիայի և կոնֆլիկտի հիմնախնդիրներին, փորձարարական ուսումնասիրության ենթարկել առկա տեսական տվյալները՝ կապված ագրեսիայի և կոնֆլիկտների դրսևորումների հետ զինծառայողների շրջանում:

Աշխատանքի վարկածն է. որքան բարձր է զինծառայողի մոտ ֆիզիկական ագրեսիվության մակարդակը, այնքան բարձր է կոնֆլիկտային իրավիճակում նրա մրցակցային վարքի դրևորումը:

Հետազոտական աշխատանքներն իրականացվել են ՀՀ ՊՆ հակադատության հրեզանային թիվ N ուսումնական զորամասում: Փորձարարական հետազոտությունն անցկացվել է 2019 թ-ի հունվարից մինչև սույն թվականի ապրիլ ամիսը: Հետազոտական աշխատանքին մասնակցել են թվով 100 ժամկետային զինծառայողներ: Հիմնականում աշխատել ենք չորս մեթոդով. հոգեբանական զրույց, դիտում և երկու թեստ՝ Բասս-Պերրիի «Անձի ագրեսիվության ախտորոշման մեթոդիկա /BPAQ/» (տես՝ նկար 1) և Բ. Թոմասի «Կոնֆլիկտային վարքի նկատմամբ անձի կանխարդամադրվածության ախտորոշում» (տես՝ նկար 2):

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Հիմնաբառեր.** Չինձառայող, ագրեսիվ վարք, կոնֆլիկտ, կանխարգելում, ադապտացիա, զորամաս, ագրեսիա:

### Ներածություն

Գաղտնիք չէ, որ ՀՀ-ն պատերազմող երկիր է և մշտապես գտնվում է արտաքին կոնֆլիկտների կիզակետում: Այս տեսանկյունից նայելիս ակնհայտ է դառնում կոնֆլիկտ երևույթին համակողմանի տիրապետելու անհրաժեշտությունը, հատկապես զինված ուժերի ներսում ապահովելու համար զինձառայողների ոչ կոնֆլիկտային փոխհարաբերությունները: Թեմայի **արդիականությունը** կայանում է նրանում, որ ՀՀ զինված ուժերում ուղղակիորեն անհրաժեշտ է անընդհատ պահպանել ներքին խաղաղությունն ու հնարավորինս զերծ մնալ ներսում առաջացող կոնֆլիկտներից: Կարևոր է ինֆորմացված լինել կոնֆլիկտների մասին և իմանալ դրանց կանխարգելման ու հարթման ուղիները: Եվ այս ամենից ելնելով մեր աշխատանքի հիմնական **նպատակն** է ուսումնասիրել զինված ուժերի ներսում առաջացած կոնֆլիկտներն իրենց յուրահատկություններով հանդերձ և դրո՞նել դրանց կոնստրուկտիվ հանգուցալուծումներն ու հետագա կանխարգելիչ միջոցներ աջառարկելը: Հետազոտության **խնդիրներն** են՝

- Ուսումնասիրել և համակարգված ձևով ներկայացնել ժամանակակից հոգեբանության մեջ առկա մոտեցումները ագրեսիայի և կոնֆլիկտի պրոբլեմների վերաբերյալ,
- Ուսումնասիրել զինձառայության պայմաններում ագրեսիայի դրսևորումների յուրահատկությունները և դրանց կապը զինձառայողների ագրեսիվությանմակարդակի հետ,
- Ուսումնասիրել զինձառայությանը բնորոշ կոնֆլիկտները՝ բացահայտելով դրանց էթիոլոգիան, կանխարգելման և լուծման հոգեբանական օրինաչափությունները,
- Փորձարարական ուսումնասիրության ենթարկել ժամկետային զինձառայողների մոտ ագրեսիայի արտահայտման ուրույն դրսևորումները և բացահայտել դրանց կապը զինձառայության-

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

նը բնորոշ կոնֆլիկտային վարքի հանդեպ կանխատրամադրվածության հետ,

- գիտական հավաստի մեթոդների օգնությամբ բացահայտել դեպի կոնֆլիկտային վարքը հետազոտվողների կանխատրամադրվածությունը,
- Էմպիրիկ հետազոտության արդյունքում ստացված տվյալները ենթարկել քանակական և որակական վերլուծության:

Հայտնի փաստ է, որ զինվորական ծառայությունը մարդկային գործունեության այն տեսակներից է, որն ունի յուրահատուկ բնույթ, պահանջում է բարձր պատասխանատվություն, լիովին տարբերվում է սոցիալական գործունեության այլ տեսակներից: Գաղտնիք չէ, որ բանակն ավտորիտար (սահմանափակելով զինվորների մի շարք ազատություններ / խոսքի, վարքի, շփման և այլն/), փակ, տղամարդկային, իր հստակ կանոններով առաջնորդվող կառույց է և սրանով իսկ արդեն ենթադրում է հստակ տարբերություններ քաղաքացիական կյանքից և սույն պատճառներից ելնելով պարարտ հող է ստեղծվում կոնֆլիկտների առաջացման և ագրեսիվ վարքի դրսևորման համար: Ըստ ռազմական փորձագետ, հոգեբան Դավիթ Ջամայանի ուսումնասիրությունների՝ զինվորական կոլեկտիվներում կոնֆլիկտները պետք է տարբերակել ըստ այն հանգամանքի, թե ովքեր են կոնֆլիկտի մեջ ներգրավված սուբյեկտները: Ըստ այդմ, հարկավոր է տարբերել այն կոնֆլիկտները, որոնք առաջանում են.ա/ ժամկետային զինծառայողների միջև, բ/ ժամկետային զինծառայողների և սպաների միջև, գ/ սպայակազմի շրջանում: Վերջին երկու դեպքերում հարկավոր է հստակեցնել վերադասենթակա կոնֆլիկտը: Զինծառայողների միջև ծագող կոնֆլիկտների թվին են պատկանում նաև ծագող դերային կոնֆլիկտները: Դերային կոնֆլիկտ [1, էջ 166] կարող է առաջանալ այն դեպքում, երբ որոշակի դերի նկատմամբ խմբի անդամների սպասումներն այդ դերն իրագործողը չի արդարացնում: Ահա, երբ խմբի դերային սպասումները չեն արդարանում, առաջանում է դերային կոնֆլիկտ: Գոյություն ունի դերային կոնֆլիկտի երեք հիմնական տեսակ՝ միջդերային, ներդերային ինչպես նաև անձի և նրա ստանձնած դերի միջև: Բանակում առավել հաճախ հանդիպում են ներդերային կոնֆլիկտները: Միջդերային կոնֆլիկտ ա-

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ռաջանում է այն դեպքում երբ միևնույն մարդը կատարում է միաժամանակ երկու դեր և երբ այդ դերերը վարքի նույն դևի նկատմամբ տարբեր պահանջներ են ներկայացնում: Օրինակ՝ միջդերային կոնֆլիկտի մեջ է հայտնվում այն սերժանտը որը միաժամանակ ունի պաշտոնական դիրք՝ ջոկի հրամանատար է սակայն դրա հետ մեկտեղ նաև ստորաբաժանման ոչ ֆորմալ լիդերների խմբի անդամ է: Ջոկը լիարժեք ղեկավարելու համար հարկավոր է հետևել համազորային կանոնորոշյունների պահանջներին: Սակայն այդ դեպքում հնարավոր չի լինի մնալ ոչ ֆորմալ լիդերների խմբում: Նման դեպքերում շատ սերժանտներ ղեկավարում են ջոկը ոչ ֆորմալ լիդերների խմբում ընդունված փողոցային-ցածրակարգ գաղափարների համաձայն: Այս դեպքում արդեն առաջանում է ներդերային կոնֆլիկտ: Ներդերային կոնֆլիկտ առաջանում է այն ժամանակ, երբ անձը կատարում է մեկ դեր, բայց դրա կատարման ձևերի մասին կան իրարամերժ հակասական պատկերացումներ: Ներդերային կոնֆլիկտը բաժանվում է երկու տարատեսակի: Առաջին տարատեսակը հետևյալն է. անձը լինելով տարբեր խմբերի անդամ կատարում է այնպիսի մի դեր, որի մասին իր համար նշանակալից երկու խմբերի կարծիքները իրարամերժ են, անհամատեղելի: ներդերային կոնֆլիկտի վիճակում է գտնվում այն նորավարտ սպան, որին ստորաբաժանման ոչ ֆորմալ կյանքում համարում են «տղա ոչ թե սպա»:

Սպայի մասնագիտությունը ընտրած երիտասարդներից ումանց անձնային կառուցվածքում փողոցային ցածրարժեք գաղափարներն այնքան խորն են արմատացել, որ զինվորական ուսուցման տարիներին գրեթե չեն փոխվում, արդյունքում ձևավորվում է սպա, որի պատկերացումն իր դերի մասին ստեղծվել է այդ գաղափարների ազդեցության տակ [2, էջ 61]: Ծառայողական դերի նման ընկալումը անխուսափելիորեն հանգեցնում է իր վերադասի հետ կոնֆլիկտի, քանի որ վերադասը սպայից պահանջում է կատարել իր դերը համաձայն պաշտոնական պարտականությունների: Այդպիսի նորավարտ սպաները հայտնվում են ներդերային կոնֆլիկտի մեջ, քանի որ փորձում են համատեղել անհամատեղելին. ղեկավարել իրենց ստորաբաժանումը՝ ենթակաների հետ իրենց պահելով «տղավարի»: Ընդ որում, նման սպա-

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ների շրջանում տարածված է «հոգով սպա» պիտակը, որով նրանք բնորոշում են այն սպաներին ովքեր սեփական սպայական դերը ընկալում են համաձայն կանոնադրության կանոնադրության պահանջների և պետերի հրամանների համաձայն: Մենք բարեբախտաբար ունենք իրենց սպայական դիրքի հետ նույնացած երիտասարդ սպաներ, որոնք, ինչը շատ կարևոր է, ուժեղ անհատականություններ են և լիովին տիրապետում են իրենց պարտականություններին:

Ներդերային կոնֆլիկտի երկրորդ տարատեսակի դեպքում անձը նույնպես կատարում է մեկ դեր: Սակայն այս դեպքում նույն խմբի անդամներն են ունենում տարբեր, իրար հակասող պատկերացումներ այն մասին թե ինչպես այն պետք է կատարել: Օրինակ, վերադասի աշխատանքի ոճը կարող է տարբերվել ենթակայի աշխատանքի ոճից: Այս դեպքում նրանց միջև գոյություն ունեցող հակասություններն այն մասին, թե ինչպես է հարկավոր աշխատել՝ կարող են առաջացնել ներդերային կոնֆլիկտ:

Ներդերային կոնֆլիկտ կարող է ստեղծվել նաև հավասար մակարդակի պետերի միջև նաև այն դեպքում, երբ նրանցից յուրաքանչյուրը հավակնում է նույն պարտականություններին և իրավունքներին: Այս դեպքում կոնֆլիկտի կողմերը կարող են մեղադրել մեկը մյուսին ուրիշի դերի մեջ մտնելու սեփական պարտականությունների, իրավունքների շրջանակներից դուրս գալու մեջ: Ենթակաների համար նման իրավիճակներում կողմնորոշվելը չափազանց բարդ է: Կոնֆլիկտն անձի և իր դերի միջև առկա է այն դեպքում, երբ անձը կատարում է այնպիսի մի դեր, որը չի համապատասխանում իր անձնային առանձնահատկություններին: Օրինակ՝ հրամանատարի դիրքում է գտնվում այնպիսի մեկն, ով չունի լիդերի որակներ և չի կարողանում իրականացնել իր դերը: Զինվորական կոլեկտիվներում ենթակա-վերադաս կոնֆլիկտ է դառնում հոգեբանական անհամատեղելիությունը: [2, էջ 63]: Կարող են համատեղելի չլինել ենթակայի և վերադասի խառնվածքի տիպը, բնավորության գծերը, ինտելեկտուալ մակարդակը, արժեքային համակարգը, տարիքային առանձնահատկությունները և այլն: Ենթակա-վերադաս կոնֆլիկտի պատճառ կարող է լինել վերադասը, եթե նրա հաղորդակցության կուլտուրան ցածր է, եթե չունի ապրումակցման ունակություն,



## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Եթե իր խոսքի տերը չէ, եթե անհարգալից, կոպիտ վերաբերմունք ունի ենթակայի հանդեպ, եթե չունի լսելու ունակություն: Պետք է հիշել, որ ոչ բոլորն են հանդուրժում վիրավորանք սեփական հասցեին: Եթե վերադասը խուսափում է նոր նախաձեռնություններից՝ դա համարելով ավելորդ գլխացավանք, եթե ունի կարծրացած մտածողությունն ամեն ինչում առաջնորդվում է շաբլոնով, ապա վերադաս-ենթակա կոնֆլիկտի պատճառ կարող է դառնալ ենթակայի նորարարություններով հագեցած ցանկացած նախաձեռնությունը: Ենթակա-վերադաս կոնֆլիկտի պատճառներից է վերադասի թերարժեքությունը: Եթե դա կայուն է, խորը, ապա կարող է դրսևորվել վարքի յուրատեսակ ձևերով՝ մասնագետ-ենթակաների կարծիքը հաշվի չառնելով, նրանց արհամարհելով, երբեմն ուղղակի վիրավորանքներով կամ նվաստացումով, արհեստական պայմանականություններով, ենթակաների վրա ինքնանպատակ իշխանություն բանեցնելով: Այս ամենը թերարժեքությունը փոխհատուցելու, ինքնահաստատվելու անառողջ ձևեր են, որոնք կարող են հանգեցնել կոնֆլիկտի: Արդեն միայն ենթակայի՝ իրենից ավելի խելացի լինելու պատճառով թերարժեք պետը կարող է թշնամաբար տրամադրվել իր ենթակայի հանդեպ, նախանձել, խանգարելով նրա ծառայողական առաջընթացին: Ինքնահաստատված պետի հետ հարաբերվելը շատ ավելի հեշտ է: Այս դեպքում օրինակ, նա չի առաջնորդվում արհեստական պաշտանականություններով: Մասնագետներն առանձնացնում են ենթակա-վերադաս կոնֆլիկտի այնպիսի պատճառներ, ինչպիսիք են ենթակաների միջև ծառայողական ծանրաբեռնվածության անհավասար բաշխվածությունը, վերադասի կողմից սեփական համաերկրացիներին բացահայտորեն հովանավորելը և նախապաշարվածությունը ծագումով այլ շրջանները ենթակաների նկատմամբ: Ենթական կարող է դառնալ ենթակա-վերադաս կոնֆլիկտի պատճառ այն դեպքում, եթե անտարբեր է, անփույթ իր պարտականությունների հանդեպ, եթե ցածր է նրա մտավոր զարգացման մակարդակը կամ մասնագիտական պատրաստվածությունը, եթե հաճախ ստում կամ թաքցնում է հրամանատարից իրականությունը և այլն: Նկատվել է, որ մարդիկ ուրիշների աշխատանքի արդյունքը գնահատելիս, համեմատում են դրանք այլ մարդկանց համանման գործունեության գերազանց արդյունքների հետ, նման դեպքում, որպես կանոն ուրիշների

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ձեռքբերումները թերագնահատվում են: Մինչդեռ սեփական վարքը գնահատելիս մարդիկ համեմատում են իրենց ձեռք բերածը ուրիշների թերի, վատ արդյունքների հետ: Նման համեմատությունները կարող են զինվորական կոլեկտիվում վերադասի և ենթակայի միջև կոնֆլիկտի պատճառ դառնալ, երբ ենթակայի կարծիքով ինքն առաջադրանքը լավ է կատարել, մինչդեռ վերադասը միանգամայն այլ սպասումներ ուներ:

Գաղտնիք չէ նաև այն փաստը, որ հաճախ կոնֆլիկտների հիմնական պատճառ է դառնում մարդկային ագրեսիվությունը: Ինչպես գիտենք զինվորական կոլեկտիվը հիմնականում տղամարդկային է, իսկ տղամարդիկ աչքի են ընկնում ագրեսիայի բարձր աստիճանով, հետևաբար ագրեսիայի ակտեր զինվորական կոլեկտիվում ավելի հաճախ կարելի է հանդիպել: Զինվորական կոլեկտիվում հաճախ ենք հանդիպում վերբալ ագրեսիայի, այստեղ վերբալ ագրեսիան նրանց կենցաղի անբաժան մասն է կազմում և ոչ ֆորմալ հարաբերություններում վերածվել է նրանց սովորական խոսակցական բառամթերքի: Իրականում վտանգավոր ագրեսիայի կարող ենք հանդիպել, երբ վերբալը վերաճում է և դառնում ոչ վերբալ ագրեսիա: Տարբեր տիպի խոսակցությունները վերածվում են ֆիզիկական ագրեսիայի և կոնֆլիկտ է առաջանում՝ հանգեցնելով տիպի հետևանքների: Սա, իհարկե ամենը չէ, մասնագետներն առանձնացրել են մի քանի հիմնական դրդապատճառներ, որոնք զինվորական կոլեկտիվում կարող են պատճառ դառնալ ագրեսիայի առաջացման և կոնֆլիկտների ստեղծման: Դրանցից են օրինակ՝ «*Ձեռքի գործոն*» անվանումը ստացած եզրույթը: Այն իրերը, երևույթները, որոնք անմիջականորեն կապ ունեն ագրեսիայի և բռնության հետ, ավելի են նպաստում ագրեսիվ վարքի առաջացմանը: Ինչպես պատկերավոր կերպով ներկայացրել է ամերիկացի հոգեբան Լ.Բերկովեցը /1968թ./ «Մատը ճնշում է գործադրում ձգանի վրա, բայց և ձգանն էլ կարող է ճնշում գործադրել մատի վրա»: Այս էֆեկտին կարելի է ուշադրություն դարձնել հատկապես զինվորական կոլեկտիվում, քանի որ զինամթերքը նրանց առօրյայի անբաժան մասն է: Հաշվի առնելով նաև այն փաստը, որ հիմնականում այստեղ են այն տարիքային խմբի ներկայացուցիչներն, ովքեր ինքնահաստատման կարիք ունեն և կարող են իրենց ուժը ցուցադրել տարատեսակ չմտածված քայլերի

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ձևով, այսինքն կարող են վերցնել իրենց զենքը և ինչ-որ «հնարքներ» ցուցադրել իրենց լավ զգալու համար և անդառնալի հետևանքների պատճառ դառնալ: Ամեն անգամ վերակարգ ընդունողին զենք տալուց առաջ սպան պետք է համոզվի, որ զինվորը առողջ հոգեբանական վիճակում է և որ իրեն մտահոգող, անհանգստացնող հարցեր չկան: Այնպես որ զենք վստահելը բավականին բարդ գործընթաց է [3, սր. 302]: Պատճառներից մյուսը «պարտադրվածի էֆֆեկտ» ասվածն է, մարդկային հոծ բազմության կուտակումների արդյունքում առաջանում է նեղվածքի, տարածքների, օդի չհերիքելու զգացողություն, որն էլ իր հերթին բերում է տհաճ հույզեր և հասցնում ագրեսիայի: Չինվորական կոլեկտիվի գրաֆիկն ու առօրյան այնպիսին է, որ սա շատ հանդիպող երևույթ է: Մարդիկ շատ են, երբեմն ստիպված են լինում մի փոքր սենյակում նախատեսվածից մեծաքանակ մարդկանցով հավաքվել, իհարկե այդ մարդկանց մեջ կարող են լինել նաև իրար համար տհաճ մարդիկ, սակայն քանի որ նրանք ստիպված են գտնվել նույն վայրում, ապա պետք է հանդուրժեն այդ փաստը և զսպեն իրենց ագրեսիան: Չպետք է մոռանալ նաև, որ ցանկացած մարդ իր առօրյայի ընթացքում ունի որոշակի անընդհատություններ և, որ դրանք սովորական են դառնում մարդկանց համար այնքան ժամանակ քանի դեռ չեն խախտվել: Եվ ահա, երբ մարդու համար սովոր այս ամենն ինչ-ինչ պատճառներով խաթարվում է, մարդը սկսում է տհաճ էմոցիաներ ունենալ, որը վերաճում է ագրեսիայի: Մասնագետների կողմից հայտնի է այն, որ մարդկանց մոտ յուրահատուկ ագրեսիա է առաջացնում աղտոտված օդը իր տհաճ բույրերով: Իսկ ինչ վերաբերում է զինծառայողներին, ապա այս խնդրին նրանք առավել հաճախ են բախվում: Պատճառներից մյուսը կարող է լինել կլիմայական պայմանները: Ըստ վիճակագրական տվյալների, որոշակի եղանակային պայմաններ ինքնին նպաստում են հակաօրինական վարքի առաջացմանը՝ մեծացնելով քրեական վարքի դրսևորման դեպքերի քանակը: Ապացուցված է այն, որ զանգվածային անկարգություններ, ցույցեր, ըմբոստացման ակտեր առավել հաճախ տեղի են ունենում հենց տարվա ամենաշոգ ժամանակաշրջանում և արդեն վաղուց ապացուցված փաստ է շոգ եղանակի և ագրեսիայի նորմայի սահմաններից բարձրացման կապը:


## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նմանատիպ գործոնների ազդեցության տակ զինծառայության պայմաններում առաջանում է կոնֆլիկտային իրավիճակներ և ազդեցիկ վարքի ցուցադրում: Այս երկուսի կապը հստակ հասկանալու և կանխարգելելու համար մեր կողմից իրականացվել է հետազոտական աշխատանք մի քանի մեթոդների հիման վրա: Սույն փորձարարական հետազոտությունն անցկացվել է ՀՀ ՊՆ հակատանկային-հրետանային թիվ N ուսումնական զորամասում: Ուսումնասիրությունն անցկացվել է 2019 թ-ի հունվարից մինչև սույն թվականի ապրիլ ամիսը: Հետազոտական աշխատանքին մասնակցել են 100 ժամկետային զինծառայողներ: Հիմնականում աշխատել ենք չորս մեթոդով. հոգեբանական զրոյց և դիտում և երկու թեստ՝ Բասս-Պերրիի «Անձի ազդեցիկության ախտորոշման հարցաշար /BPAQ/»(հավելված 1) և Բ. Թոմասի «Կոնֆլիկտային վարքի նկատմամբ անձի կանխատրամադրվածության ախտորոշում»(հավելված 2): Առաջին թեստը միտված է բացահայտելու զինծառայողների մոտ ֆիզիկական և խոսքային ազդեցիկ ափսոսանքի ինչպես նաև՝ թշնամանքի և զայրույթի աստիճանի բացահայտմանը: Իսկ երկրորդ թեստը բացահայտում է կոնֆլիկտային իրավիճակում հայտնվելիս նրանց վարքի կանխատրամադրվածությունը:

Առաջին թեստի արդյունքները հետևյալն էին.՝ հետազոտության մասնակիցների 47%-ի(տես՝ նկար 1) մոտ գերակայում էր մրցակցության ցուցանիշը: սա արդարացված ցուցանիշ է քանի, որ զինծառայողները հիմնականում այն տարիքային խմբին են պատկանում, որում ներքին մղող ուժ է հանդիսանում Ես-ի ինքնահաստատումը, որը դրսևորվում է այլ տղաների հետ տարբեր ճանապարհներով մրցակցելիս: Հետազոտվողների 41%-ը(տես՝ նկար 1) հակված էին համագործակցային վարքի, Համագործակցության ցուցանիշի բարձրությունը կայանում էր նրանում, որ զինծառայության պայմաններն են այդպիսին, այստեղ բոլորն ունեն մի նպատակ, մի խնդիր և պահանջվում է համագործակցային հարաբերություններ լավ ծառայություն իրականացնելու համար: Կոնֆլիկտային իրավիճակում դիրքերի զիջմանը հակված էին հարցվողների 7%-ը (տես՝ նկար 1) սա ամբողջ զորքի տվյալներով բավական ցածր ցուցանիշ է, բացատրվում է նրանով, որ առաջին հերթին կոնֆլիկտային իրավիճակում զիջելը անձնային հատկանիշ է և երկ-

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

րորդ՝ զինձառայության պայմաններն ուսումնասիրելիս հասկանում ենք, որ կան զինվորներ, որոնք այդքան էլ շատ չեն ցանկանում խառնվել մնացածի հարցերին, որ իրենք էլ հարցեր չունենան, այդ իսկ պատճառով գերադասում են զիջողի դիրք գրավել, «անցավ գլուխը ցավի տակ չդնել» հայտնի ասացվածքը կիրառելով: Կոնֆլիկտից խուսափել ցանկացողները կազմում էին հարցվողների 3%-ը, (տես՝ նկար 1) սա նույնպես արդարացվում է վերը նշած ասացվածքով, ուղղակի այն տարբերությամբ, որ այս դեպքում զինձառայողները փորձում են իսպառ վերացնել իրենց կյանքից ցանկացած տեսակի կոնֆլիկտ մնացած զինվորների հետ և մաքսիմում խուսափում են մնացածի հետ շփումներից, սրանով իսկ զերծ մնալով նաև հետագայում սպառնացող կոնֆլիկտներից իսկ կոմպրոմիսային վարք նախընտրում էին հարցվողների 2%-ը(տես՝ նկար 1)սա նույնպես անձնային հատկանիշների շնորհիքն է մեծ հաշվով:




**Նկար 1. Ք.Թոմասի «Կոնֆլիկտային վարքի նկատմամբ անձի կանխատրամադրվածության ախտորոշում» թեստից ստացված արդյունքներ**

Հաջորդ թեստը, որը նույնպես հետաքրքրական արդյունքներ տվեց, դա Բասս-Պերիի «Անձի ագրեսիվության ախտորոշման հարցաշար /BPAQ/» -ի արդյունքներն էին: Այս թեստը միտված էր որոշելու զին-

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ծառայողների մոտ ագրեսիայի տարբեր տեսակների գերակայության աստիճանը: Այն որոշում էր ֆիզիկական, վերբալ ագրեսիան, անձի մեջ զայրույթի և թշնամանքի առկայության աստիճանը: Ըստ ստացված արդյունքների հարցվողների 55%-ի(տես՝ նկար 2) մոտ բարձր էր վերբալ ագրեսիան: Հաշվի առնելով զինծառայության պայմաններում ընդունված վարքուբարքը, նիստուկացր դրանում առկա ընդունված խոսելաճը, սա սպասելի արդյունք էր: Այո՛, ինչպես հայտնի է զինվորական կոլեկտիվներում ընդունված լեքսիկոն են համարվում ցածրակարգ և հայհոյախառն արտահայտությունները: Իսկ հայհոյաքներն իհարկե վերբալ ագրեսիայի առաջին ցուցիչն են: Ֆիզիկական ագրեսիայի հակված էին հարցվողների 38%-ը (տես՝ նկար 2), սա նույնպես ունի իր բացատրությունը: Եթե այս ցուցանիշը փորձենք բացատրել ֆիզիոլոգիայի տեսանկյունից, ապա առաջին բանը, որ կասենք դա տղաների մոտ առկա ֆիզիկական ագրեսիայի հակվածության ցուցանիշն է՝ ի տարբերություն իգական սեռի: Զայրույթի մակարդակը բարձր էր զինծառայողների 6%-ի (տես՝ նկար 2) մոտ սա նորմալ ցուցանիշ է համարվում: Իհարկե կան իրավիճակներ զինծառայության պայմաններում, որոնք միանշանակ կարող են զայրույթի պատճառ դառնալ, բայց քանի, որ մեր մոտ ցուցանիշը նորմայի վրա է, ապա կարող ենք ասել, որ անհանգստանալու պատճառներ չունենք: Զինվորական կոլեկտիվում մեծ մասամբ զայրույթի պատճառ են դառնում կենցաղային մանր հարցերը: Թեստի վերջին ցուցիչին անդրադառնալիս պարզեցինք, որ թշնամանքի զգացումը առկա էր հարցվողների 1%-ի(տես՝ նկար 2)մոտ: Հստակ կարող եմ ասել, որ թշնամանքի օբյեկտը ոչ թե մեկ այլ զինվորի անձն է, այլ ստեղծված իրավիճակները, որոնք կոնկրետ մարդկանց չեն գոհացնում և նրանք չունենալով դրանց լուծման ուղիները սկսում են թշնամական տրամադրությունների տարածումը: Սա բավական քիչ տոկոս է անհանգստանալու համար:

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ



**Նկար 2. Բասս-Պերիի «Անձի ազդեցիկության ակտորոշման հարցաշար /BPAQ/»**

Ամփոփելով մեր կողմից իրականացվող հետազոտության արդյունքները, կարող ենք ասել, որ վեր վարկածը հաստատվեց մասնակիորեն: Քանի որ, մեր վարկածը հետևյալն էր. *որքան բարձր է զինձառայողի մոտ ֆիզիկական ազդեցիկության մակարդակը, այնքան բարձր է կոնֆլիկտային իրավիճակում նրա մրցակցային վարքի դրևորումը*: Իսկ ահա հաստատվեց միայն վարկածի այն մասը, որը վերաբերում էր կոնֆլիկտային վարքի կանխատրամադրվածության մրցակցային տարրին: Ինչպես և մենք էինք կարծում, զինձառայողների մոտ բարձր է մրցակցային տարրը կոնֆլիկտային իրավիճակներում: Սա դրսևորվում է և՛ ֆորմալ հարաբերություններում, և՛ ոչ ֆորմալ պայմաններում հարաբերվելիս: Մրցակցությունն այստեղ դիտվում է որպես բավականին կոնստրուկտիվ երևույթ, քանի որ սա առողջ երևույթ է և ըստ հայտնի տեսական հիմքերի մրցակցային դաշտից համագործակցայինն անցում կատարելը հոգեբանորեն ավելի դյուրին է: Սրանով և ապահովվում է ցանկացած կոնֆլիկտի հեշտ և մաքսիմալ անվնաս հաղթահարումը: Ըստ մեր վարկածի, կոնֆլիկտային կանխատրամադրվածության ժամանակ բարձր է մրցակցային տարրը և ահա մասով այն հաստատվում է: Իսկ ինչ վերաբերում է ազդեցիային և դրա տար-

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

րերին, մեր վարկածի մեջ նշվում էր որ բարձր ֆիզիկական ագրեսիայի ժամանակ է դիտվում մրցակցային վարքը, սակայն մեր կողմից իրականացվող թեստի արդյունքները ցույց տվեցին, որ ագրեսիայի տեսակներից առավել բարձր տոկոս է զբաղեցնում վերբալ ագրեսիան: Այս մասով մեր վարկածը չհաստատվեց, որը նորմալ երևույթ է ցանկացած տեսակի հետազոտական աշխատանք կատարելիս: Վերբալ ագրեսիան ավելի բարձր է քանի որ հայտնի է, որ զինծառայության պայմաններում առավել ընդունված խոսելաոճ է հայիոյախառն արտահայտություններով խոսելը, քանի որ, սա բացառապես տղամարդկային կառույց է: Իսկ ֆիզիկական ագրեսիան ցածր ցուցանիշ ցույց տվեց, քանի որ, այժմյան զինվորի ինքնագիտակցությունը ավելի բարձրացել է և նրանք ցանկացած կոնֆլիկտի դեպքում նախընտրում են խոսելով հաղթահարել այն և իրավիճակը չի հասնում ֆիզիկական ագրեսիային: Մեծ հաշվով սա շատ լավ ցուցանիշ է:

### Եզրակացություն

Մեր կողմից իրականացված տեսական և փորձարարական աշխատանքների արդյունքում եկանք հետևյալ եզրահանգումների.

- Ձինվորները կոնֆլիկտայնություն են դրսևորում, քանի որ, իրենք իրենց ներսում էլ դեռ կռիվ են տալիս իրենց անձը բարեհաջող ցուցադրելու և զորամասում բարենպաստ դիրք գրավելու համար: Սա այս տարբին բնորոշ երևույթներից մեկն է,
- Կոնֆլիկտների ժամանակ մրցակցային վարքի դրսևորման դեպքում, այն տեղափոխելը ֆորմալ դաշտ, ամենակոնստրուկտիվ լուծումն է առկա կոնֆլիկտը հաղթահարելու համար:
- Ձինծառայության պայմաններում առավել հաճախ հանդիպող կոնֆլիկտներն են դերային կոնֆլիկտները:
- Ձինծառայության պայմաններում մարդկային ագրեսիայի առաջացման դեպքում այստեղ կան շատ բարենպաստ պայմաններ, որոնք նպաստում են անձի ագրեսիվության կոնստրուկտիվ սպառմանը,



## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- Հայոց բանակում բացակայում է թշնամական ագրեսիան միմյանց նկատմամբ: Իրար հետ կոնֆլիկտող կողմերը չեն ատում իրար, միմյանց թշնամի չեն համարում այլ կոնֆլիկտի հիմնական պատճառն է նրանց անձի ինքնահաստատման ակտերը:
- Վերոհիշյալ եզրահանգումներից բխում են հետևյալ **առաջարկները**.
- Սպա-հոգեբանի գիտելիքների մշտական հարստացում, մասնագիտական վերապատրաստումների, սեմինարների, գիտական հավաքների, փորձի փոխանակումների իրականացում,
- Սպայական անձնակազմին հոգեբանական գիտելիքների և տեղեկատվության տրամադրում, առկա խնդիրների դեպքում սպաներին պրակտիկ լուծումների առաջարկում մասնագետների կողմից,
- Ժամկետային զինծառայողների գրաֆիկի ճիշտ կազմում, զինվորական գործում առավելագույն ներգրավվում, որ այլևս ժամանակ չունենան ոչ ֆորմալ շփումներում անիմաստ թեմաներից կոնֆլիկտներ ստեղծել,
- Ժամկետային զինծառայողների մոտ համագործակցային հարաբերությունների ամրապնդում, ընդհանուր նպատակների ամենօրյա գիտակցում, որը կնպաստի նրանց հարաբերությունների բարելավմանը և հետևաբար՝ միմյանց հետ կոնֆլիկտների մեջ մտնելու ցանկության նվազմանը:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Ալբերտ Նալչաջյան., «Սոցիալական կոնֆլիկտներ», «Ձանգակ» հրատ., Երևան 2004
2. Դավիթ Ջամալյան «Ռազմական հոգեբանության հիմունքներ» մաս 2-րդ, Երևան 2008
3. С.В. Литвинцев, В.К. Шамрей; «Военная Психиатрия» Санкт-Петербург 2001 г.

**ТИПИЧНЫЕ КОНФЛИКТЫ В УСЛОВИЯХ ВОЕННОЙ СЛУЖБЫ И ИХ  
СВЯЗЬ С УРОВНЕМ АГРЕССИВНОСТИ ЛИЧНОСТИ  
ВОЕННОСЛУЖАЩЕГО**

**Ануш Баграмян**

Филиал ЕУ в г. Гюмри

В статье рассматриваются особенности возникновения конфликтов, причины их возникновения, методы и пути предотвращения конфликтов в условиях военной службы.

Сделана попытка выявления связи между конфликтогенным поведением и уровнем агрессивности личности военнослужащего. Эмпирическая часть исследования была проведена с января 2019 года по апрель 2020 включительно в противотанковой-противопехотной учебной части НМО РА.

**Ключевые слова:** Военнослужащий, агрессивное поведение, конфликт, предотвращение, адаптация, воинская часть, агрессия

**TYPICAL CONFLICTS IN THE MILITARY SERVICE AND THEIR  
RELATIONSHIP WITH THE LEVEL OF AGGRESSIVENESS OF THE  
SOLDIER'S PERSONALITY**

**Anush Baghramyan**

EU, Gyumri Branch

The article discusses the features of the emergence of conflicts, the reasons for their occurrence and methods and ways of preventing conflicts in military service. An attempt has been made to identify the connection between conflict behavior and the level of aggressiveness of a soldier's personality. The empirical part of the study was conducted from January 2019 to April 2020 inclusive in the anti-tank and anti-personnel training unit N of the RA Ministry of Defense.

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

---

**Keywords:** Soldier, aggressive behavior, conflict, prevention, adaptation, military unit, aggression.

*Տրվել է պայագրության՝ 12.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 10.11.2020թ.*

## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### «ԴԱՐԻ ԳՈՐԾԱՐՔԸ» ԵՎ ԻՍՐԱՅԵԼԱ-ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԹՐԱՄՓԻ ՓՈՐՁԵՐԸ

*Արտակ Հովհաննիսյան*

*ԵՀ, Գյումրու մասնաճյուղ, պ.գ.թ., դոցենտ  
artakh76@mail.ru, +374 55 012070*

ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփի խրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման գործընթացում բեկում մտցնելու փորձերը պայմանավորված էին և՛ նախընտրական շրջանում վերջինիս տրված խոստումներով, և՛ այս հարցում աննախադեպ հաջողության հասնելու ձգտումով: Այդ բարդ խնդրի լուծման նպատակով Թրամփն առաջարկեց այսպես կոչված հակասական «Դարի համաձայնագիրը», որն ընդհանուր առմամբ ենթադրում էր խաղաղ կարգավորման ծրագիր՝ հիմնված երկու պետությունների փոխադարձ ճանաչման վրա և 50 միլիարդ դոլարի ներդրում որպես կարգավորման աջակցություն:

**Հիմնաբառեր.** Թրամփ, դարի գործարք, Երուսաղեմ, «օրինակա-նացման մասին օրենք», Արևմտյան ափ, Գազա, «երկու պետությունների ստեղծում»

**Ներածություն:** Պաղեստինյան հակամարտության կարգավորման հարցում ԱՄՆ-ի հանրապետական կուսակցության դիրքորոշումը տևական ժամանակ ավելի ընդունելի է եղել Իսրայելի վարչապետ Բեն-ջամին Նեթանյահուի համար՝ սկսած 1998թ. Ուայ-Փլանթեյշնի համաձայնագրի կնքումից [17, էջ 68]: Դա է պատճառը, որ վերջինս ակնհայտ խանդավառությամբ ողջունեց Դոնալդ Թրամփի նախագահությունը: Գաղտնիք չէ, որ Նեթանյահուի հարաբերությունները նախագահ Օբամայի հետ լարված էին: Իսրայելի քաղաքական ղեկավարության այդ ոգևորությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Թրամփը իր նախագահական քարոզարշավի ընթացքում մի շարք հայտարարու-թյուններ էր արել, որոնք ենթադրում են.

- Թրամփը Իսրայելի դաշնակիցն է,
- Թրամփը վստահություն չունի մուսուլմանական աշխարհի հանդեպ, քանի որ, կարծում է իսլամը ժամանակակից ահաբեկ-

## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

չության աղբյուր է, որը թիրախավորում է Արևմուտքին և մասնավորապես ԱՄՆ-ին:

- Թրամփը ցանկություն հայտնեց հաջողության հասնել այնտեղ, որտեղ մինչ այդ ձախողվել էին շատ մարդիկ: Նա կցանկանար խաղաղություն բերել Մերձավոր Արևելքին և լուծել իսրայելա-պաղեստինյան հակամարտությունը:
- Նախագահի թիմը չի պնդում, որ անաչառ միջնորդ է, քանի որ թիմի մեծ մասի համակարանքը Իսրայելի կողմն է[4, p.382]:

Նպատակ և արդիականություն: Հոդվածում նպատակ է դրված ներկայացնել ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփի փորձերը իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման ուղղությամբ, ներկայացնել «դարի գործարքը կամ համաձայնագիրը»՝ ցույց տալով այդ համաձայնագրի հակասական և անիրատեսական կողմերը:

**Հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը:** Արաբաիսրայելական հակամարտության ուսումնասիրությամբ զբաղվել են հայկական, ռուսական, արևմտյան և արաբական արևելագիտական դպրոցների ականավոր ներկայացուցիչները: Խնդրո առարկա հարցին իրենց աշխատություններում անդրադարձել են Ն. Հովհաննիսյանը[21], Ե. Աբգարյանը, Ս.Ավանեսովը[22], Ա. Թոփալյանը, Ռ. Կարապետյանը[23], Շ. Կարամանուկյանը[24], Հ. Սարգսյանը, Ա. Հովհաննիսյանը[17]:

Նախընտրական քարոզչության ընթացքում հարցազրույց տալով «Ուոլ սթրիթ ջորնալ»-ին՝ հայտարարեց, որ կօգտագործի գործարարի իր հմտությունները կողմերին բերելու բանակցությունների սեղանի շուրջ: Այդ բանակցություններն ընդհատվել էին դեռևս ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Բերրիի միջնորդության ժամանակ, երբ Պաղեստինի ինքնավարության նախագահ Աբասը դաշինք կնքեց ՀԱՄԱՍ-ի հետ[1]: Բոլորին հետաքրքրում էր այն հանգամանքը, թե ինչպես է Թրամփը կողմերին մղելու բանակցությունների վերսկսման, եթե ինքը արևմտյան ափում հրեական բնակավայրերի կառուցումը չի համարում անօրինական և խոչընդոտ բանակցությունների համար[9]:

Անշուշտ, Թրամփը համաշխարհային քաղաքականության մեջ նոր երևույթ է: Նա առաջին նախագահն է Դուայթ Էյզենհաուերից հե-

## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

տո, ով նախագահ է դարձել, առանց քաղաքականության մեջ նախնական փորձի: Արդար է ասել, որ Թրամփը փորձագետ չէ նաև Մերձավոր Արևելքի գործերով: Նա գիտի իսրայելա-պաղեստինյան հակամարտության որոշ բարդությունների մասին, բայց չի տիրապետում մանրամասներին: Փաստերի և մանրամասների ուսումնասիրության համար բաց լինելը չի կարող հանգեցնել այս հարցում Թրամփի աշխարհայացքի վերափոխման, բայց կարող է ստիպել նրան վերանայել որոշակի հարցեր: Թրամփը, կայացած գործարար և հասկանում է հաջողության ու ձախողման գինը: Նա նաև գիտի հայտարարությունների և գործողությունների տարբերությունը: Այն, ինչ ասում են քարոզարշավում, անպայմանորեն չի ենթադրում իրականացնում: Թրամփը գիտակցում է, որ դժվար է իրականացնել որոշակի գաղափարներ: Որոշ հարցեր ավելի բարդ են, քան նա ակնկալում էր: Երուսաղեմի հարցը դրանցից մեկն է:

Թրամփը հայտարարեց, որ ԱՄՆ դեսպանատունը Թել Ավիվից տեղափոխելու է Երուսաղեմ: Նա նշանակեց դեսպան Իսրայելում, ով սատարում է այդ քայլին: Հետագա ընթացքը ապացուցեց, որ խնդիրը ավելի բարդ է, քան կարծում էր նա սկզբում: Որպես սկսնակ քաղաքական գործիչ, նա կարող էր անել բազմաթիվ անպատասխանատու հայտարարություններ, բայց որպես նախագահ նա պատասխանատու է ամերիկացիների անվտանգության համար տարածաշրջանում:

Թրամփը սկսեց հասկանալ, որ քաղաքականության մեջ ֆինանսները բարդ մատրիցայի միայն մեկ կողմն են:

Հրեաները պաշտպանում են Երուսաղեմում ԱՄՆ դեսպանատան և բոլոր մյուս դեսպանատների տեղափոխման որոշումը, նրանց համար Երուսաղեմը Իսրայելի հավերժական մայրաքաղաքն է: Միացյալ Նահանգները, Միացյալ Թագավորությունը և այլ երկրներ ունեն Պաղեստինի հարցով առաքելություններ Արևելյան Երուսաղեմում:

Երկու պետությունների հայեցակարգի համաձայն՝ Արևելյան Երուսաղեմը պետք է լինի Պաղեստինի մայրաքաղաքը: Արևմտյան Երուսաղեմը կլինի Իսրայելի մայրաքաղաքը:[18] Այլընտրանքորեն, Երուսաղեմը հռչակվելու է միջազգային տարածք, սուրբ և հարգված բոլոր կրոն-

## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ների կողմից, և համատեղ ղեկավարվելու է Իսրայելի և Պաղեստինի կամ միջազգային հանրության կողմից որպես ամբողջություն[3, p.62]:

Թրամփի նախագահության առաջին ամսվա ընթացքում Իսրայելի ղեկավարությունը փորձեց Թրամփին՝ ցանկանալով ուսումնասիրել նրա արձագանքը: Թրամփի երդմնակալությունից մի քանի օր անց Իսրայելի կառավարությունը հավանություն տվեց մոտ 5500 նոր տների կառուցմանը Արևմտյան ափի և Արևելյան Երուսաղեմի հատվածում: Սկզբում ինչպես Սպիտակ տունը, այնպես էլ Պետդեպարտամենտը վրդովված էին և խնդրեցին պաշտոնական մեկնաբանություն տալ: Մի քանի օրից Սպիտակ տունը հայտնեց, որ աջակցում է երկու պետություններ ստեղծելու որոշմանը՝ ասելով, որ բնակավայրերը ընդլայնելու միակողմանի քայլերը խարխլել են նախագահ Թրամփի ջանքերը՝ խաղաղություն հաստատելու համար:

Այնուամենայնիվ, Իսրայելի կառավարությունը շարունակեց նոր բնակավայրերի կառուցումը: Թրամփի հայտարարությունը ոչ մի ազդեցություն չունեցավ նրանց վրա, քանի որ համոզված էին, որ Թրամփը չի գործի այնպես, ինչպես նախագահ Օբաման, ում հետ նրանք հստակ տարաձայնություն ունեին: Իսրայելում կարծում էին, որ նախագահ Թրամփը պատկանում է սեփական ճամբարին: Որպես ապացույց, Իսրայելը 2017-ի փետրվարի 6-ին կրկին Թրամփին ենթարկեց փորձությունների:

2017-ի փետրվարին իսրայելական Կնեսետն ընդունեց «օրինականացման մասին օրենքը», որը հետադարձ ուժով օրինականացնում էր հրեական 55 բնակավայր և մոտ 4000 բնակելի միավորներ, որոնք կառուցվել են Արևմտյան ափին պաղեստինցիների մասնավոր հողատարածքներում: 2017թ. խորհրդանշական էր անեքսիայի համար, քանի որ լրանում էր «վեցօրյա պատերազմի» և Արևմտյան ափի ու Գազայի օկուպացիայի 50-ամյակը: Նախնական հողատերերը պետք է կամ կանխիկ փոխհատուցում ստանային կամ այլընտրանքային հողեր, նույնիսկ այն պարագայում, եթե նրանք համաձայն չէին հրաժարվել իրենց սեփականությունից: Այս շինություններն անօրինական են ըստ Իսրայելում գործող օրենսդրության, ինչպես նաև ըստ միջազգային իրավունքի: Այս քայլը խաթարում էր ինչպես խաղաղության հնարավորություն-

## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ները, այնպես էլ աշխարհում Իսրայելի դիրքերը: Իսրայելի ընդդիմության առաջնորդ Իսահակ Հերցոգը օրենքը անվանեց «շատ լուրջ վտանգ» Իսրայելի համար: Օրենքը դատապարտվեց նաև իրավապաշտպան կազմակերպությունների կողմից, որոնց կարծիքով Նեթանյահուն «պատրաստ է վտանգել ինչպես իսրայելցիների, այնպես էլ պաղեստինցիների ապագան, որպեսզի բավարարի փոքր խմբի շահեր՝ սեփական քաղաքական գոյատևման համար»: Իսրայելի «Բեթզեյլի» իրավապաշտպան խումբը փաստեց, որ օրենքը պարզապես «հողերի զանգվածային բռնագրավման ևս մեկ դեպք է, որը տասնամյակներ շարունակ իրականացվում է» իսրայելական իշխանությունների կողմից գրավված Պաղեստինի տարածքում: Մերձավոր Արևելքի խաղաղության գործընթացում ՄԱԿ-ի խոսնակ Նիկոլայ Մլադենովի կարծիքով օրինագիծը ստեղծում էր «շատ վտանգավոր նախադեպ, որը կարող է Իսրայելին կանգնեցնել միջազգային քրեական դատարանի առջև:»[19]: Իսրայելի ամենամոտ դաշնակիցներից մեկը՝ Գերմանիան, կոչ արեց Իսրայելին վերանայել իր դիրքորոշումը: Գերմանիայի արտգործնախարարության ներկայացուցիչը մտահոգություն հայտնեց՝ ասելով, որ օրինագիծը խախտում է միջազգային օրենսդրությունը և խաթարում է «երկու պետությունների ստեղծման» հարցում իր հանձնառությունը: Օրենքը դատապարտվել է նաև Եվրամիության, Ֆրանսիայի, Բրիտանիայի, Թուրքիայի, Հորդանանի և պաղեստինցիների կողմից: Սպիտակ տան խոսնակ Շոն Սփայսերը պարզապես հայտարարել է, որ այդ հարցը կքննարկեն Նախագահ Թրամփը և վարչապետ Նեթանյահուն: Մինչդեռ իսրայելական դիսկուրսում «օկուպացիա» բառը գործնականում բացակայում է:

2017-ի փետրվարի 15-ին Թրամփը Սպիտակ տանը հանդիպեց Նեթանյահունին: Նեթանյահուն առաջին ղեկավարն էր, որին Թրամփը հանդիպել է որպես նախագահ, ինչը խոսում է Իսրայելի և ԱՄՆ-ի փոխադարձ հետաքրքրությունների մասին: Քանի որ Թրամփը նոր էր ստանձնել նախագահի պաշտոնը, կարելի էր սպասել, կարելի էր հուսալ, որ Թրամփը կարող է հաջողության հասնել, իսկ փորձառու Նեթանյահուն հույս ուներ, որ Թրամփը չի մղի Իսրայելին անել այն, ինչ ինքը չի ցանկանում: Իսրայելի Կրթության նախարար Նաֆթալի Բենե-



## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

թը նույնիսկ ԹՎիթերում գրառում կատարեց. «Սա դարաշրջանի ավարտն է ... Պաղեստինյան դրոշը իջավ և փոխարինվեց իսրայելական դրոշով: Վարչապետը ցուցաբերել է քաջություն և ամրապնդել Իսրայելի անվտանգությունը»:

Համատեղ մամուլի ասուլիսում Թրամփը հայտարարեց, որ . «Այսպիսով, ես նայում եմ երկու պետությունների և մեկ պետության գաղափարին և ինձ դուր է գալիս այն, որը ընդունում են երկու կողմերը: Ես կարծում էի, որ որոշ ժամանակ երկու պետությունների ստեղծումը կարծես թե կարող էր ավելի հեշտ լինել, եթե Իսրայելը և պաղեստինցիները երջանիկ լինեին, ես ուրախ եմ» [20]: ԹՎում է, թե երկու ընկերների միջև պանդոկում խոսակցություն է, և ոչ թե լուրջ ասուլիս: Սա հուշում էր, որ Նախագահ Թրամփը քիչ բան է հասկանում հակամարտության բարդության մասին և չի հասկանում իր խոսքերի հավանական ազդեցությունը: Երկու և մեկ պետության լուծումները շատ տարբեր են: Նրանք տարբեր իրականություններ են:

Նույն անհոգ տոնով Թրամփը խոսելով հրեական բնակավայրերի մասին՝ Բիբիին խորհուրդ տվեց. «Ինչ վերաբերում է բնակավայրերին, ես կցանկանայի, որ դուք մի փոքր ձգձգեք բնակավայրերի կառուցումը»: Դա ամենախիստ նկատողությունն էր, որը կարող էր անել նախագահ Թրամփը: Ի պատասխան Նեթանյահուն Թրամփին խնդրեց պաշտոնապես ճանաչել ԱՄՆ-ի կողմից Իսրայելի ինքնիշխանությունը Գոլանի բարձունքների նկատմամբ: [25]

Թրամփի վարչակազմը իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման հարցում կարող է ընտրել երեք տարբերակներից մեկը.

- Իսրայելի աջակողմյան ուժերի իդեալական տարբերակը- Պաղեստինյան հողերի հաշվին խնդիրը լուծել հոգուտ Իսրայելի: Նեթանյահուն իրեն պրագմատիկ առաջնորդ համարելով հանդերձ՝ դեմ չէ քայլ առ քայլ անեքսիայի ենթարկել պաղեստինյան հողերը: Առաջին անեքսիայի դեպքում Իսրայելը կվերահսկի արևմտյան ափի 20 տոկոսը, Իսկ C գոտու անեքսիայի դեպքում՝ 50 տոկոսը[2]:

## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- Օպտիմալ տարբերակ-աջակցել համադաշնության ստեղծմանը: Քանի որ Արևմտյան ասիան ու Գազայի հատվածը չափերով փոքր են և միմյանցից մեկուսացված, ապա Արևմտյան ասիան ու Հորդանանը կկազմեն մի համադաշնություն, ինչպես մինչև 1967թ. պատերազմն էր, իսկ Գազան և Եգիպտոսը կկազմեն երկրորդ համադաշնությունը[3, p.42]: Հետագայում այս երկրներն ու Իսրայելը կկազմեն նոր համադաշնություն: Այս տարբերակը քիչ հավանական է, քանի որ բացակայում է խաղաղությունը, փոխադարձ վստահությունը և երկրների բարի կամքը՝ նույնիսկ ԱՄՆ-ի անվերապահ աջակցության պայմաններում:
- Իրատեսական, ոչ բռնի տարբերակ-երկու պետությունների ստեղծում: Այս տարբերակը ամենարդարն ու ամենաիրավականն է[4, p.73]: Կողմերը փոխադարձ ընդունելի տարբերակի կարող են հանգել: Երկու պետությունների ստեղծումը միակ արդյունավետ, կենսունակ և երկարաժամկետ որոշումն է՝ փոխշահավետ կողմերի համար: Բացի այդ, այս տարբերակը մասնակիորեն կյանքի կկոչի ՄԱԿ-ի 1947 թ. բանաձևը: Ներկայումս անհնար է տեսնել, որ կողմերը միասին նստեն և հասնեն համապարփակ համաձայնության, որը կլուծի բոլոր վեճերը և վերջ կդնի ռազմական գործողություններին:

Խաղաղության հասնելու երկու հիմնական խոչընդոտները Իսրայելի կողմից նոր բնակավայրերի կառուցումն է և պաղեստինյան ահաբեկչությունը: Այս երկու հարցերը պատշաճ կերպով լուծված չէին նախորդ նախորդ բանակցություններում:

Իսրայելը և Պաղեստինի իշխանությունը կամ չեն ցանկանում կամ չեն կարող դադարեցնել բնակավայրերի աճը և ահաբեկչության ու բռնության շարունակվող գործողությունները: Այսպիսով, անհրաժեշտ է հակամարտության մեջ երրորդ կողմի մասնակցությունը: Երրորդ կողմերը պետք է աջակցեն այս խնդիրների լուծմանն ուղղված ջանքերին՝ սերտորեն համակարգելով իրենց կառուցողական քայլերը՝ վստահություն հաստատելու համար: Երրորդ կողմերը պետք է ներառեն Միացյալ Նահանգներին և Արաբական պետությունների լիգային[5]:

## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պաղեստինի ինքնավարությունը չափազանց թույլ և չափազանց փխրուն է հակամարտությունը հաջողությամբ լուծելու համար իր շատ համեստ միջոցներով: Պաղեստինյան ինքնավարությանը անհրաժեշտ է ավելի ուժեղ պետության օգնությունը, լեգիտիմությունը և կարողությունները, որը որոշակի հետաքրքրություն ունի հակամարտության լուծման հարցում: Մինչ այժմ ոչ ԱՄՆ-ը, ոչ Արաբական պետությունների լիգան միայնակ են կարողացել կրել այդ բեռը: Բայց ԱՄՆ-ի և Արաբական պետությունների լիգայի համակարգված ջանքերը՝ հիմնական խոչընդոտները հաղթահարելով՝ վստահություն կառուցելու համար, կարող են հաջողակ լինել՝ Իսրայելը և Պաղեստինին տանելով դեպի հարցի լուծում:

Մթնոլորտում, որը չի խաթարվել ոչ բնակավայրի կառուցմամբ, ոչ էլ տեռորով, կարող են ձեռնարկվել հետագա կառուցողական քայլեր [6, p.94]: Համապատասխան տարածքային ջրերում ձկնորսության, բանտարկյալների դանդաղ, բայց կայուն ազատման, իսրայելական մեկուսացված բնակավայրերի տարհանման և էական փոփոխությունների, Իսրայելի և Պաղեստինի ուսումնական ծրագրում բարիդրացիության գաղափարի ամրապնդման, բազմակարծության ու բազմազանության ընդունման, մշակույթի և կրոնի տարբերությունների ճանաչման, միմյանց ավանդույթներին հարգանքով վերաբերվելու քաղաքականությունը կարող է լծակներ ստեղծել խաղաղ գոյակցության համար [7, p.210]: Յուրաքանչյուր տարիքային խմբում պետք է ուսումնասիրվեն այն կենսական հասկացությունները, որպեսզի հնարավոր լինի մյուսներին հասկանալու համար: Այս ծրագիրը շատ կարևոր է երկու կողմերի միջև խաղաղ հարաբերությունների և վստահության հաստատման համար [8, p.21]:

Այն ծրագիրը, որը Թրամփը անվանեց «դարի գործարք», ներկայացվեց Իսրայելի հետ բանակցություններից հետո, բայց առանց այն պաղեստինցիների մասնակցության, որոնք Թրամփի վարչակազմի հետ բոլոր կապերը խզել են 2017-ին Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու որոշում կայացնելուց հետո:

Առաջարկվող պլանը նախատեսում է Իսրայելի կողմից իրականացված անեքսիայի ճանաչում Արևմտյան ափի մեծ հատվածների, նե-

## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

րառյալ անօրինական բնակավայրերի և Հորդանան գետի հովտի հատվածը, որը Իսրայելին տալիս է հնարավորություն մշտական արևելյան սահման ունենալ Հորդանան գետի երկայնքով և մասնակիորեն մեկուսացնել Պաղեստինը:

«Դարի համաձայնագիր» -ի 2 մասերի / քաղաքական և տնտեսական/, 23 բաժինների և 181 էջերի հիմնական կետերն էին

1. Իսրայելա-պաղեստինյան խաղաղ կարգավորման ծրագիր, որը հիմնված է երկու պետությունների փոխադարձ ճանաչման վրա,
2. Գազայի հատվածը և Արևմտյան ափը կապվում էին նոր արագընթաց երկաթուղով, Արևելյան Երուսաղեմը ճանաչվում էր որպես Պաղեստինի մայրաքաղաք: Միևնույն ժամանակ, Թրամփը ամբողջ Երուսաղեմը անվանում էր «Իսրայելի անբաժան մայրաքաղաք»: Խնդիրը բարդանում էր նաև նրանով, որ ըստ Թրամփի ծրագրի նախատեսվում էր Աբու Դեսսի բնակավայրը, Երուսաղեմի անմիջական հարևանությամբ, դարձնել ապագա Պաղեստինյան պետության մայրաքաղաք: Կարծում ենք հակասությունն ակնառու է:
3. ԱՄՆ-ը մտադիր է Պաղեստինում իսրայելական բնակավայրերը ճանաչել որպես Իսրայելական տարածք, սակայն 4 տարով սառեցնել նոր հրեական բնակավայրեր կառուցելու ծրագիրը:
4. Խաղաղության գործընթացը կսկսվի, եթե Պաղեստինի իշխանությունները դադարեցնեն աջակցությունը Գազայի հատվածում գործող «ՀԱՄԱՍ» շարժմանը և հրաժարվեն ռազմական մեթոդներից: ՀԱՄԱՍ և Իսլամական Ջիհադ կառույցները պետք է զինաթափվեն:
5. Պաղեստինի բանտարկյանների, բացի քերական և ահաբեկչական գործերով, ազատ արձակում
6. Վաշինգտոնը 50 միլիարդ դոլարի ներդրում է առաջարկում՝ որպես կարգավորման աջակցություն:
7. Պաղեստինի փախստականների հարցերով ՄԱԿ-ի գործակալության վերացում [12]

## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ներթանյահուն աջակցեց Թրամփի ծրագրին և հայտարարեց պատրաստակամության մասին՝ անհապաղ սկսել խաղաղ բանակցությունները պաղեստինցիների հետ: Համառ շարժումը ասում է, որ գործարքը «չարժի թանաք»: Պաղեստինի առաջնորդ Մահմուդ Աբասը և ՀԱՄԱՍ-ի ներկայացուցիչները կտրականապես մերժեցին ԱՄՆ նախագահի ծրագիրը:

Պաղեստինի նախագահ Աբբասը Արաբական պետությունների լիգայի արտաքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ հայտարարեց. «Նրանք ինձ ասացին, որ Թրամփը ցանկանում է ինձ ուղարկել հարյուրամյակի գործարքը՝ կարդալու համար, ես ասացի, որ ես չեմ կարդալու: Թրամփը խնդրեց, որ ես հեռախոսով խոսեմ իր հետ, ես ասացի՝ ոչ, և որ նա ուզում է ինձ ուղարկել նամակ, ուստի ես հրաժարվեցի այն ստանալուց »[10]: Աբբասը Լիգային ներկայացրեց մի քարտեզ, որը ցույց էր տալիս Պաղեստինի աստիճանական աշխարհագրական կրճատումը չորս փուլից՝ 1948 թվականից մինչև Մերձավոր Արևելքի վերաբերյալ Թրամփի «դարի ծրագիրը»: նույնիսկ առաջին դասարանցի երեխան չի կարող նկարել Թրամփի քարտեզը, նա երբեք չի իմանա, թե ինչպես դա անել [10]:

Աբասը սպառնաց խզել անվտանգության հարցերով համագործակցությունը ինչպես Իսրայելի, այնպես էլ ԱՄՆ-ի հետ: 2020թ. փետրվարի 11-ին ՄԱԿ-ի Ախ-ում Աբբասը պաշտոնապես հայտարարեց ծրագրի մերժման մասին[13]:

Արաբական պետությունների լիգայի ղեկավար Ահմեդ Աբուլ-Գեյթը հայտարարեց, որ ծրագրի քաղաքական շրջանակի նախնական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այն «անտեսում է պաղեստինցիների օրինական իրավունքները»: [10] Նա հատկապես շեշտեց, որ պաղեստինյան կողմի պատասխանը կարող է միայն ձևավորել «արաբական կոլեկտիվ դիրքորոշում», ոչ թե «ԱՄՆ-ի կամայական տեսլականը»: Սակայն իրական քաղաքականության դաշտում ԱՄՆ-ի մերձավոր դաշնակիցներ Արաբական Միացյալ Էմիրությունների, Բահրեյնի և Օմանի դեսպանները մասնակցեցին ծրագրի մեկնարկին Վաշինգտոնում, իսկ Սաուդյան Արաբիան և Եգիպտոսը բարձր գնահատեցին Թրամփի

## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ջանքերը և կոչ արեցին վերսկսել բանակցությունները՝ առանց մեկնաբանելու ծրագրի բովանդակությունը[10]:

Արաբական լիգայի պետությունների դիրքորոշումը իրականում միասնական չէր: Մասնավորապես, Եգիպտոսը խորայեցիներին և պաղեստինցիներին կոչ արեց «ուշադիր ուսումնասիրել» ծրագիրը և որ ինքը պաշտպանում է մի որոշում, որը վերականգնում է պաղեստինյան Ժողովրդի բոլոր «օրինական իրավունքները»՝ ընդհուպ «անկախ և ինքնիշխան պետություն ստեղծելուն գրավյալ Պաղեստինյան տարածքներում»:

Հորդանանը վերահաստատեց մինչև 1967թ. պատերազմը եղած սահմաններում Պաղեստինյան պետություն ստեղծելու իր հանձնառությունը, որը կներառի Իսրայելի կողմից բռնակցված Արևմտյան ափը և Արևելյան Երուսաղեմը:

Քաթարը ողջունեց «կայուն և արդար խաղաղություն» հաստատելու ջանքերը, բայց նախազգուշացրեց, որ դա հնարավոր չէ առանց պաղեստինցիների տրվելիք զիջումների:

Վերլուծաբանները նշում են, որ Թրամփի ծրագրին արաբական «պառակտված» արձագանքը անակնկալ չէ, քանի որ բոլորը կարիք ունեն Վաշինգտոնի աջակցությանը տարածաշրջանային ընդհանուր թշնամու՝ Իրանի դեմ, հատկապես «Հունվարին Միացյալ Նահանգների և Իրանի միջև կարճատև ռազմական դիմակայությունը Պարսից ծոցի որոշ երկրների համոզեց, որ Վաշինգտոնը նրանց միակ պաշտպանն է»[10]:

Պարսից ծոցի երկրներ՝ Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն և Բահրեյնը, որոնք ավանդաբար հանդես են եկել պաղեստինյան կողմում, վերջին տարիներին շրջվում են դեպի Իսրայել, քանի որ նրանք Իրանը համարում են տարածաշրջանային ավելի լուրջ սպառնալիք: «Կարծում եմ, որ այս երկրները ընդունեցին այն մտտեցումը, որ իմ թշնամու թշնամին իմ ընկերն է», կարծում է Ալ-Ջազիրայի վերլուծաբան և պաղեստինյան խաղաղ բանակցությունների նախկին իրավական խորհրդատու Դիանա Բուբոն: Կարելի է պաղեստինցիների հաշվին չեզոքացնել Իրանին [10]: Այնուամենայնիվ, Արաբական պետությունների լիգան մերժեց այն [16]:

## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տարածաշրջանային մեկ այլ խոշոր խաղացող և Մերձավորարևելյան հնգյակի անդամ Ռուսաստանը, ներքաշված լինելով սիրիական ճգնաժամում, հայտարարեց, որ «այս պահի դրությամբ մենք կարող ենք միայն ասել, որ պլանին լիովին աջակցել է Իսրայելը, այն ստացել է մի շարք այլ երկրների աջակցություն, բայց այդպիսի գործարքի ուղղակիորեն ներգրավված կողմի՝ պաղեստինցիների կողմից խստորեն մերժվել է: Մենք շարունակում ենք վերլուծել իրավիճակը: Ինչպես գիտեք, Ռուսաստանը շարունակում է մնալ Մերձավոր Արևելքի հնգյակի պատասխանատու անդամ: Անհրաժեշտության դեպքում, Ռուսաստանը պատրաստ է շարունակել բոլոր ջանքերը գործադրել՝ հնարավոր ամեն ինչ անելով Մերձավոր Արևելքում կենսունակ խաղաղության հաստատման համար»[11]: Ռուսաստանը հայտարարեց, որ ծրագիրը ոչ մի իրական հնարավորություն չի ընձեռնում հակամարտության կարգավորման համար[14]: Իրանը, Լիբանանը և Թուրքիան խստորեն դատապարտեցին ծրագիրը՝ այն անվանելով «մղձավանջ, ամոթալի և զավթողական» [15]:

### Եզրակացություն

Իսրայելա-պաղեստինյան հակամարտությունը կարգավորելու համար անհրաժեշտ են համարձակ որոշումներ կայացնողներ, ովքեր օգտվում են իրենց տրամադրված հնարավորություններից և օգտվում են իրենց ժողովուրդների առավելագույն աջակցությունից և տրամադրած ռեսուրսներից: Նախագահ Թրամփը՝ որպես խորամանկ գործարար, գիտի, որ բարձր «ներդրումները» մեծ ջանք ու եռանդ են պահանջում:

Հիմնախնդրի լուծման համար նրան անհրաժեշտ են երեք բան.

- Իսրայելի առաջնորդ, որը հավատարիմ է խաղաղություն հաստատելու իր ժողովրդի համար և պատրաստ է վճարել անհրաժեշտ գինը.
- Պաղեստինի առաջնորդ, որը հավատարիմ է խաղաղություն հաստատելու իր ժողովրդի համար և պատրաստ է վճարել անհրաժեշտ գինը.

## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- Երկու առաջնորդների ընդհանուր կարծիքը, որ եկել է խաղաղության ժամանակը: «Ժամանակը եկել է» նշանակում է, որ երկու առաջնորդներն էլ կարծում են, որ բավականաչափ արյուն է թափվել, որ նրանք պետք է ամրագրեն պահը, քանի որ իրերը կարող են վատթարանալ իրենց ժողովրդի համար, և որ նրանք կարող են խրախուսել իրենց ժողովրդին խաղաղության պայմանագիրն ընդունելու համար և փոխել իրականությունը դեպի լավը:

Նախագահ Թրամփը կարող է հրատապության զգացողություն սերմանել Իսրայելում և Պաղեստինում: Նա կարող է օգնել վստահություն, բարի կամք և անվտանգություն կերտել: Միացյալ Նահանգները պաղեստինցիների համար տնտեսական միջավայրը համախմբելու ներուժ ունի, կարող է ամրապնդել անվտանգությունը երկու կողմից, բռնության բոլոր ձևերի նկատմամբ զրոյական հանդուրժողականություն պահանջել կողմերից, դադարեցնել Իսրայելի կողմից հրեական առկա բնակավայրերի ընդլայնումը: ԱՄՆ-ը կարող է Իսրայելին երաշխիքներ տալ, որպեսզի նա կարողանա անվտանգ ապամոնտաժել անցակետերը, որպեսզի կյանքը դյուրին դարձնի պաղեստինյան խաղաղ բնակիչների համար և միջազգային հանրությանը ներգրավի վստահության կառուցման գործընթացում:

### Օգտագործված գրականության ցանկ

1. See The Clinton Parameters – Clinton Proposal on Israeli-Palestinian Peace,  
[https://www.jewishpeacelobby.org/clinton\\_parameters.htm](https://www.jewishpeacelobby.org/clinton_parameters.htm), 03.10.2017
2. For a map of the Occupied Palestinian Territory see  
<https://www.ochaopt.org/content/west-bank-area-c-map-february-2011>. For more maps on this issue see the UN Office for the Coordination of Humanitarian Affairs: Occupied Palestinian Territory website at <https://www.ochaopt.org/maps>. 05.10.2017



## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

3. Eiland Giora, “Regional Alternatives to the Idea of Two States for Two People”, BASA Center Publications (Ramat Gan: Bar Ilan University, 2010, Hebrew); Benny Morris, “*One State, Two States*” (New Haven: Yale University Press, 2009).
4. Cohen-Almagor Raphael, “Two-State Solution – The Way Forward”, Annual Review of Law and Ethics, Vol. 20 (2012): 381-395; R. Cohen-Almagor, “Breaking the Israeli-Palestinian Deadlock – Two State Solution”, Global Education Magazine: International Day of Peace (September 21, 2014): 58-63 and “Breaking the Israeli-Palestinian Deadlock”, Retos International, Vol. 5, No. 11 (2014); R. Cohen-Almagor, “Suggestions for Israeli-Palestinian Agreement”, New Directions (Kivunim Hadashim), No.30 (June 2014): 144-159 (Hebrew) and “Resolvendo o Conflito Israelense-Palestino – uma Solução Bi-Estatal”, Oriente-Se, Vol. 1 (February 2016): 72-79.
5. See the Arab Peace Initiative 2002, <https://www.theguardian.com/world/2002/mar/28/israel7>
6. Aliewi Amjad, O’Connell Enda, Geoff Parkin and Karen Assaf, “Palestine Water: between Challenges and Realities,” in Elizabeth G. Matthews (ed.), The Israel-Palestine Conflict (London: Routledge, 2011): 114-138; Hillel Shual, “Is the Conflict over Shared Water Resources between Israelis and Palestinians an Obstacle to Peace?,” in Elizabeth G. Matthews (ed.), The Israel-Palestine Conflict: 93-113.
7. Salem Aweiss, “Culture of Peace and Education”, in Elizabeth G. Matthews (ed.), The Israel-Palestine Conflict: 224-246; Daniel Bar-Tal, “Challenges for Constructing Peace Culture and Peace Education”, in Elizabeth G. Matthews (ed.), The Israel-Palestine Conflict: 209-223.
8. Jay Rothman, From Confrontation to Cooperation (London: Sage Publications, 1992).
9. Трамп хочет «окончательного» решения израильско-палестинского конфликта  
<https://www.rt.com/usa/366699-trump-ultimate-deal-israel-palestine/>,  
13 ноября, 2016 00:02

## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

10. Лига арабских государств отвергает план Трампа по Ближнему Востоку. <https://www.aljazeera.com/news/2020/02/arab-league-holds-emergency-meeting-trump-plan-200201105251740.html>
11. Кремль пересматривает план Трампа по израильско-палестинскому конфликту <https://tass.com/politics/1114045>. 29.01, 13:51
12. Golan Heights decision may come as forerunner of US 'deal of the century' <https://tass.com/world/1050653,27.03.2019>
13. Аббас заявил, что "сделка века" нарушает международное право. РИА Новости (20200211T2035+0300). 12 февраля 2020.
14. Слуцкий заявил об отсутствии реального решения в предложенной Трампом "сделке века". ТАСС. 29 января 2020.
15. Javad Zarif. Сообщение Джавада Зарифа в Твиттер (англ.). @JZarif (2020T11:53). Дата обращения 29 января 2020. МИД Турции назвал "сделку века" Трампа планом узурпации палестинских земель. ТАСС. Дата обращения 29 января 2020.
16. Arab League rejects Trump's Middle East plan: communique, Reuters (February 1, 2020).
17. Հովհաննիսյան Ա., ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելապաղեստինյան հակամարտության հանդեպ, ՀՀ ԳԱԱ, Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2002, 76 էջ:
18. [https://www.e-ir.infopresident-trump-and-the-israeli-palestinian-conflict/#\\_edn1/2017/03/10/](https://www.e-ir.infopresident-trump-and-the-israeli-palestinian-conflict/#_edn1/2017/03/10/)
19. [https://www.e-ir.infopresident-trump-and-the-israeli-palestinian-conflict/#\\_edn1/2017/03/10/](https://www.e-ir.infopresident-trump-and-the-israeli-palestinian-conflict/#_edn1/2017/03/10/)
20. Donald Trump and the Israeli-Palestinian Conflict, Raphael Cohen-Almagor, 03. 10> 2017, <http://www.e-ir.info/2017/03/10>
21. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն. Հ. IV. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան. 1918-2005թթ., Հորդանան, Մավրիտանիա, Մարոկկո, Պաղեստինի Ինքնավարություն, Սաուդյան Արաբիա, Սիրիա, Սուդան, Քուվեյթ, Օման, «Չանգակ-97», Երևան, 2007, 767 էջ:
22. Ավանեսով Ս. Ս. - Մերձավոր և Միջին Արևելքում ագրեսիվ բլոկներ ստեղծելու հարցի շուրջը (1953-1958 թթ.), Արևելագիտական

- ժողովածու: Հ. 1., Խմբ. կղև.՝ Հ. Մ. Եգանյան, Հ. Գ. Ինճիկյան, Ե. Ղ. Սարգիսով: ՀՍՍՌ ԳԱ Արևելագիտության սեկտոր: Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960:
23. Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Եր., 2019, 528 էջ:
24. Կարամանուկյան Շ., «Արաբագիտության հարցեր» (հոդվ. ժող.), ռուս., Ե., 1996:
25. Царегородцева Г. И. Признание Голанских высот как шаг Д. Трампа в историю ближневосточного конфликта // Россия и Америка в XXI веке. 2020. Выпуск № 1 [Электронный ресурс]. Доступ для зарегистрированных пользователей. URL: <https://rusus.jes.su/s207054760009047-8-1/> (дата обращения: 17.11.2020).

### «СДЕЛКА ВЕКА» И ПОПЫТКИ ТРАМПА УРЕГУЛИРОВАТЬ ИЗРАИЛЬСКО-ПАЛЕСТИНСКИЙ КОНФЛИКТ

#### Артак Оганнисян

Филиал ЕУ в г. Гюмри, к.и.н., доцент

Попытки президента США Дональда Трампа добиться прорыва в израильско-палестинском конфликте были обусловлены его «предвыборными обещаниями» и его стремлением к беспрецедентному успеху. Для решения этого сложного вопроса Трамп предложил так называемый противоречивый «Договор века», который в целом предусматривал мирное урегулирование на основе взаимного признания двух государств и 50 миллиардов долларов инвестиций в поддержку урегулирования.

**Ключевые слова.** Трамп, Сделка века, Иерусалим, «Закон о легализации», Западный берег, Газа, «Создание двух государств»

THE DEAL OF THE CENTURY AND TRUMP'S ATTEMPTS TO RESOLVE  
THE ISRAELI-PALESTINIAN CONFLICT

**Artak Hovhannisyan**

EU, Gyumri Branch, PhD in History, Associate Professor

US President Donald Trump's attempts to break through the Israeli-Palestinian conflict were driven by his "election promises" and his desire for unprecedented success. To address this complex issue, Trump proposed the so-called controversial "Treaty of the Century", which generally provided for a peaceful settlement based on mutual recognition of the two states and \$ 50 billion investment to support the settlement.

**Keywords.** Trump, Deal of the Century, Jerusalem, Legalization Law, West Bank, Gaza, Two State Creation

*Տրվել է պայագրության՝ 05.09.2020թ.*

*Գրախոսվել է՝ 25.10.2020թ.*

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

### ԴԵՖՈՐՄԱՑՎՈՂ ՊԻՆԴ ՄԱՐՄՆԻ ՄԵԽԱՆԻԿԱ ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ՕՊՏԻՄԱԼ ՁՈՂԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

#### **Բագրատ Գեղամյան**

ԵՊՀ, Մեխանիկայի ամբիոն, ֆ.-մ.գ.թ., դոցենտ  
geghamyambagrat@gmail.com +374 91 287108

#### **Վարդան Հայրապետյան**

ԵՀ, ՏՏ և կիրառական մաթեմատիկայի ամբիոն, փ.գ.դ., պրոֆեսոր  
vardan.hayrapetyan@mail.ru +374 91 362000


Ձողերը և ձողային կառուցվածքները մեծ թվով կիրառություններ ունեն փեխանիկայում և փարբեր բնույթի կառույցներում: Ձողերն աշխատում են այս կամ այն ուժային ազդեցությունների դաշտերում, ինչով պայմանավորված կարևորվում են դրանց դեֆորմացիաները քննարկող խնդիրները: Առանձնապես կարևոր են որոշակի նպատակային առումներով լավագույն ձողերի նախագծման խնդիրները: Հոդվածում դիտարկվում է միայն երկայնական փայտանույններ կատարող ձողի օպտիմալ նախագծման խնդիր, որտեղ նպատակի ֆունկցիոնալը ձողի զանգվածն է, իսկ սահմանափակումը՝ ազատ փայտանույնների հիմնական հաճախության փոքր արժեքը: Խնդիրը լուծվում է վարիացիոն եղանակով: Ելնելով ստացված լուծումների բնույթից, ձողի կետերի փեղափոխությունների վերադրման սկզբունքի համաձայն, հոդվածն ավելի ընդհանուր խնդիր է հանգեցվում. ցույց է փոխվում այս խնդիր լուծման վերադրելիությունը հեղինակի կողմից նախկինում հետազոտված զուտ ոլորային ազատ փայտանույններ կատարող ձողի օպտիմալ լուծման հետ:

**Հիմնաբառեր.** Ձող, օպտիմալ, երկայնական փայտանույններ, փոփոխական հաստություն:

Դիտարկենք  $l$  երկարությամբ ձող, որը կոշտ ամրացված է իր գագաթնային նիստերից մեկում (նկար 1), իսկ մյուս նիստում հաղորդված նախնական կտրուկ ազդեցության դադարեցումից հետո ձողը կատարում է զուտ երկայնական ազատ տատանումներ: Ձողին ամրացնենք

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Ox կոորդինատական առանցքը: Ձողի հաստությունը նկարագրվում է  $h(x)$  փոփոխական ֆունկցիայով, իսկ  $x$  կոորդինատին ուղղահայաց նիստի կետերի տեղափոխությունները առանցքի ուղղությամբ տրվում են  $u(x)$  ֆունկցիայով:



Գրականության մեջ հայտնի են այսպիսի ձողերի հետազոտությանը նվիրված մի շարք աշխատանքներ [2,3,4]: Այդ աշխատանքներում որոշվում են ձողերի կետերի տեղափոխության  $u(x)$  արժեքները, սեփական տատանումների հիմնական արժեքները կամ քննարկվում են այլքների տարածման հարցեր:

Փոփոխական հաստությամբ ձողի երկայնական ազատ տատանումները նկարագրվում են երկրորդ կարգի եզրային խնդրով, որի ստացման հիմքում ընկած է ձողի անվերջ փոքր տարրերի (նկար 1) շարժման հավասարումը.

$$\rho h \frac{\partial^2 w(x,t)}{\partial t^2} dx = \frac{dN(x)}{dx} dx \quad (1),$$

որտեղ  $w(x,t)$ -ն  $x$  նիստի կետերի տեղափոխությունն է ժամանակի  $t$  պահին,  $\rho$ -ն ձողի նյութի խտությունն է,  $h(x)$ -ը ձողի լայնական հաստույթի մակերեսն է,  $N(x)$ -ը՝ այդ հաստությամբ առկա ճիգը: Հաշվի առնելով, որ  $N(x) = \sigma h = \varepsilon E h$ , որտեղ  $\sigma$  լարումը և  $\varepsilon = \partial w / \partial x$  հարաբերական երկարացումը կախված են  $\sigma = \varepsilon E$  Հուկի օրենքով, (1) հավասարումից կստացվի անջատվող փոփոխականներով հետևյալ դիֆերենցիալ հավասարումը.

$$\frac{\partial}{\partial x} \left( E h \frac{\partial w}{\partial x} \right) = \rho h \frac{\partial^2 w}{\partial t^2} \quad (2)$$

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Կատարելով փոփոխականների  $w(x,t)=u(x)\cos\lambda t$  օրենքով անջատում (2) մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարման մեջ, կստացվի սովորական դիֆերենցիալ հավասարում.

$$\frac{d}{dx}\left(Eh\frac{du}{dx}\right) + \lambda^2 \rho hu = 0 \quad (3),$$

որտեղ  $\lambda$ -ն տատանումների հաճախությունն է:

1 նկարին համապատասխան եզրային պայմանները կլինեն.

$$u(0) = 0, \quad N(l) = Eh(l)\frac{du(l)}{dx} = 0 \quad (4)$$

Նշենք, որ հայտնի է [մասնավորաբար՝ 3] հաստատուն հաստությամբ ձողի երկայնական տատանումների հիմնական հաճախության բանաձևը.

$$\omega = \frac{\pi}{2l} \sqrt{\frac{E}{\rho}}, \quad (5)$$

Այս աշխատանքում դիտարկենք օպտիմալ նախագծման հետևյալ խնդիրը.

Գտնել երկայնական ազատ տատանումներ կատարող ձողի այնպիսի փոփոխական լայնական հատույթ, որի դեպքում ձողի զանգվածն ընդունում է փոքրագույն արժեք բոլոր այն համասեռ նյութից պատրաստված ձողերի դասում, որոնք մի եզրով կոշտ ամրացված են, դրանց երկարությունը  $l$  է, և կատարում են երկայնական ազատ տատանումներ տրված հաճախությամբ:

Մաթեմատիկական նշագրմամբ օպտիմալ նախագծման խնդրի ձևակերպումը կներկայացվի.

Բավարարելով (3), (4) եզրային խնդիրը (5) արժեքի դեպքում, գտնել այսպիսի  $H(x)$  ֆունկցիա, որի դեպքում

$$M = \int_0^l h(x) dx \xrightarrow{F(x)} \min \quad (6)$$

Ձևակերպված օպտիմալացման խնդիրը լուծելու համար կիրառենք վարիացիոն սկզբունք[6]: Դա կարելի է կատարել երկու եղանակով.

ա) Խնդիրը բերել Մայեր-Բուլցի խնդրի[5]

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

բ)  $v(x)$  համալուծ ֆունկցիայի ներմուծմամբ կազմենք ընդլայնված ֆունկցիոնալ, (3), (4) եզրային խնդրում և (6) ինտեգրալում  $u(x)$ ,  $h(x)$  անհայտ ֆունկցիաներին տանք համապատասխանաբար՝  $\delta u(x)$ ,  $\delta h(x)$  վարիացիաներ և պահպանել միայն առաջին կարգի անվերջ փոքրերը, այնուհետ՝ վարիացիոն սկզբունքից ստանալ լրացուցիչ հավասարում և եզրային պայման,  $v(x)$  համալուծ ֆունկցիայի նկատմամբ:

Կիրառենք երկրորդ եղանակը՝

$$\int_0^l \left( v \left( \frac{d}{dx} \delta h \frac{du}{dx} \right) + \frac{d}{dx} \left( h \frac{d\delta u}{dx} \right) + \omega^2 h \delta u + \omega^2 u \delta h \right) + \delta h dx = 0 \quad \omega^2 = \lambda^2 \rho / E \quad (7)$$

Մասերով ինտեգրում կատարելով  $\delta u(x)$ ,  $\delta h(x)$  աճերը հանենք ածանցման նշանների տակից և ինտեգրալատակ արտահայտությունները խմբավորենք ըստ  $\delta u(x)$ ,  $\delta h(x)$  աճերի: Պահանջենք, որ  $\delta u(x)$ -ի գործակիցն ի հաշիվ  $v(x)$  ֆունկցիայի լինի 0: Այդ դեպքում վարիացիոն սկզբունքից կհետևի, որ  $\delta h(x)$ -ի գործակիցն էլ է 0: Մասերով ինտեգրում կատարելու արդյունքում, ինտեգրալից դուրս արտահայտություններից մի մասը 0 է համաձայն (4) եզրային պայմանների, իսկ մնացած մասի համար պահանջվում է, որ 0 լինեն ի հաշիվ  $v(x)$  ֆունկցիայի: Արտաքստելով  $v(x)$  ֆունկցիան, ստացվում է հետևյալ հավասարումը.

$$\left( \frac{du}{dx} \right)^2 = \omega^2 u^2 + c \quad (8)$$

Այստեղ,  $c = \text{const} > 0$ , դա համապատասխանում խնդրի էությունները, քանի որ (3), (4) եզրային խնդիրը սեփական արժեքի խնդիր է, իսկ սեփական արժեքի խնդիրների լուծումները որոշվում են հաստատուն արժեքի ճշտությամբ:

(3), (4) և (8) ոչ գծային եզրային խնդիրը հանդիսանում է օպտիմալության անհրաժեշտ պայման: Այս համակարգը լուծելու համար նախ ինտեգրենք (8) հավասարումը, որի լուծումը տեղադրելով (3) հավասարման մեջ, կստանանք որոնելի  $h(x)$  օպտիմալ լուծումը: Հարկ է նշել, որ ստացված օպտիմալության անհրաժեշտ պայմանները նմանատիպ են [1] աշխատանքում դիտարկված փոփոխական հաստությանը զուտ ոլորային տատանումներ կատարող գլանային թաղանթի օպտիմալության պայմանների համակարգին և դրա լուծումները



## ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

համանման են այստեղ դիտարկվող միայն երկայնական տատանումներ կատարող ձողերի օպտիմալ լուծումների հետ, երբ ձողերի երկու նիստերն ազատ են:

(8) դիֆերենցիալ հավասարման լուծումն է

$$u(x) = \frac{1}{\omega} Sh \omega x \quad (9)$$

Այս ֆունկցիան տեղադրելով (3) հավասարման մեջ,  $h(x)$  ֆունկցիայի նկատմամբ ստացվում է առաջին կարգի դիֆերենցիալ հավասարում, որի լուծումն է

$$h(x) = \frac{1}{Ch^2 \omega \alpha} \quad (10)$$

Միայն երկայնական և միայն ոլորային ազատ տատանումների դեպքում խնդիրների լուծման համանմանությունը թույլ է տալիս տեղափոխությունների վերադրման սկզբունքի համաձայն վերցնել որպես ձողի կետերի տեղափոխությունների վեկտոր ( $u(x)$ ,  $v(\alpha)$ ) վեկտորը, իսկ փոփոխական օպտիմալ հաստության օրենք՝ երկու դեպքերում նույն տեսքն ունեցող (10) ֆունկցիան այն ազատ տատանումների համար, երբ միաժամանակ տեղի են ունենում երկայնական և ոլորային տեղափոխություններ:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Гегамян Б.П. Некоторые задачи оптимального проектирования анизотропных неоднородных пластин и оболочек. Диссертация на соискание ученой степени к.ф.м.н., Ереван, 1985
2. S. Timoshenko, D. Young Vibration problems in engineering. 440p, New York, 1955.
3. И. Биргер, Р. Мавлютов Сопротивление материалов 560с., Москва, 1986.
4. А. Курдюмов Вибрация корабля. 320с., Ленинград, 1961.
5. Арман Ж.-Л. П. Приложения теории оптимального управления системами с распределенными параметрами к задачам оптимизации конструкций. М., Мир, 1977
6. Баничук Н.В. Введение в оптимизацию конструкций М., Наука, 1986

### ОПТИМАЛЬНОЕ ПРОЕКТИРОВАНИЕ СТЕРЖНЕЙ СОВЕРШАЮЩИХ ПРОДОЛЬНЫЕ КОЛЕБАНИЯ

**Баграт Гегамян**

ЕГУ, кафедра Механики, к.ф.-м.н., доцент

**Вардан Айрапетян**

ЕУ, Кафедра Информационной технологии и прикладной математики,  
д. ф.-м.н., профессор

Стержни и стержневые конструкции имеют широкое применение в технике и строительстве. Стержни работают в различных силовых полях. Важное значение имеет решение задач, в которых определяются деформации различного рода. Особенно важны задачи, которые посвящены определению оптимальных форм стержней. В статье рассматривается задача оптимального проектирования стержня, совершающего чисто продольные колебания. Здесь функционалом цели является масса стержня, а ограничением – фиксированная величина основной частоты свободных продольных колебаний. Задача решается вариационным методом. В связи с характером полученных решений, согласно принципу суперпозиции перемещений, в статье задача приводится к более общему виду: оптимальное проектирование стержня, совершающего одновременно крутильные и продольные колебания. Решением этой задачи определяется, используя рассмотренные ранее автором решения задачи оптимального проектирования стержня, совершающего чисто свободные колебания.

**Ключевые слова:** Стержень, оптимальный, продольные колебания, переменная толщина.

OPTIMAL DESIGN OF RODS PERFORMING LONGITUDINAL  
VIBRATIONS

**Bagrat Geghamyan**

YSU, Chair of Mechanics, PhD in Mathematics, Associate Professor

**Vardan Hayrapetyan**

EU, Chair of Applied Mathematics and IT, Doctor of Sci., Professor

Rods and rod structures are widely used in engineering and construction. The rods operate in different force fields. It is important to solve problems in which deformations of various kinds are determined. Especially important are tasks that are devoted to determining the optimal shape of the rods. The article deals with the problem of optimal design of a rod performing purely longitudinal vibrations. Here, the target functional is the mass of the rod, and the constraint is a fixed value of the fundamental frequency of free longitudinal vibrations. The problem is solved by the variational method. In connection with the nature of the solutions obtained, according to the principle of superposition of displacements in the article, the problem is reduced to a more general form: optimal design of a rod that performs simultaneously torsional and longitudinal vibrations. The solution of this problem is determined using the previously considered by the author of the solution to the problem of optimal design of a rod performing purely free vibrations.

**Keywords:** rod, optimal, longitudinal oscillations, variable thickness.

*Տրվել է տպագրության՝ 20.10.2020թ.  
Գրախոսվել է՝ 03.11.2020թ.*

## НЕОБХОДИМЫЕ ИННОВАЦИИ В ТУРОПЕРАТОРСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В УСЛОВИЯХ РАЗВИТИЯ САМОТУРИЗМА

*Амаяк Даниелян*

*ЕУ, кафедра Туризма и сервиса, к.т.н., доцент  
hdanielian@mail.ru, +374 77 530548*

*В статье анализируются факторы, иницирующие развитие самостоятельного туризма в условиях глобальной информатизации общества. Приводится статистика показателей самостоятельной организации путешествий туристами разных стран, в том числе выезжающих в Армению. Анализируются результаты социальных опросов, направленных на выявление факторов стимулирующих туристов самим организовывать туры. Такими факторами выступают возраст, образование, экономичность, стремление к инкультуризации в современном информационном обществе, гибкость туров и др. На основе проведенных анализов положительных и проблемных сторон неорганизованного туризма, в статье формулируются инновационные методы, которые необходимо внедрить туроператорам в условиях распространения самотуризма, чтобы избежать потери рынка потребителей без ущерба личностных предпочтений туристов.*

**Ключевые слова:** *самостоятельный туризм, факторы стимулирующие, возраст, образование, экономичность, инкультуризация, инновационные методы, туроператоры.*

Одновременно со стремительным развитием интернет-технологий наблюдается и стремительное развитие туристической отрасли. И это закономерно, поскольку представление в свободном интернет-пространстве, в частности, туристическими порталами, туристических достопримечательностей различных стран, организуемых в мире привлекательных культурных, спортивных и других мероприятий, традиций и национальных особенностей различных народов пробуждает желание посещения этих стран и территорий.

Однако, одновременно с повышением желания осуществления путешествий с развитием интернет технологий развиваются и системы онлайн-бронирования и решительно набирает обороты и неорганизованный туризм, в последнее время получивший новый термин: «самостоятельный туризм» или «самотуризм» (на англ. Selftourism).

На сегодняшний момент, заинтересованные стороны сходятся во мнении, что при неизбежном расширении сферы самостоятельного туризма будет наблюдаться и отток части клиентов из организованного туристического рынка.

По результатам исследования холдинга «Ромир», уже в 2010 году 71% россиян не пользовались услугами турфирм, а предпочитали самостоятельно организовывать свой отдых [1]. Так, на российском рынке доля покупок турпродукта онлайн составила 47 %, а 80% туристов, согласно опросам, готовы отказаться от услуг турфирм [2]. Конечно, в других странах этот показатель намного выше. Например, для жителей США и Западной Европы совершать покупки через интернет является обычным делом. По оценкам экспертов, доля туристов, которые ищут информацию для планирования поездки в интернете составляет, по разным данным, от 60 % до 86 % [3]. Причем по данным исследования, проведенного туроператором «ТУ1», интернет как основной источник поиска информации для планирования путешествия важен для всех возрастных категорий туристов. Для организации поездки люди ищут информацию в Интернете (86%) или спрашивают друзей и родственников (71%) [4]. Значительное количество туристов используют различные онлайн-сервисы для сравнения цен и выбора наиболее подходящего варианта. Более того, часть путешественников совершает покупку прямо в интернете, используя кредитную карту.

Как показывает анализ зарубежных и отечественных публикаций, на рынке туризма тенденция изменения поведения потребителей в сторону большей самостоятельности и независимости от туристских предприятий усиливается поскольку это не только удешевляет поездку, но и позволяет спланировать маршрут в большем соответствии со своими предпочтениями и пожеланиями. Кроме того, следует отметить,

что для самостоятельного туриста значимым фактором является фактор инкультурации, выражаемый в приобретении дополнительных знаний и развитии познавательной активности как следствие свободного выбора туристом ценностей культуры, туристских дестинаций, темпов и объемов ознакомления с достопримечательностями [5].

Независимый, самостоятельно путешествующий турист может посещать именно те достопримечательности, которые его интересуют, как и посещать те заведения, которые его привлекают. Тогда как путешествуя организованно, он, как правило, вынужден осматривать и посещать только достопримечательности и заведения, предусмотренные программой тура оператора. Заметим, что иногда, стремясь ознакомить туристов с как можно с большим количеством городов, туроператорами составляется чересчур насыщенная программа. В результате участники группы буквально бегом осматривая достопримечательные места не успевают должным образом познакомиться с ними и насладиться их красотами.

Важна роль интернета и на протяжении всего времени поездки: самостоятельный турист продолжает пользоваться различными туристскими онлайн-сервисами для поиска информации, а также бронирования и покупки товаров и услуг в течении всего путешествия. Важно упомянуть и влияние, которое оказывают посты из социальных сетей о путешествиях на подписчиков. 34% опрошенных россиян отметили, что «отпускные снимки» в социальных сетях значительно вдохновляют их на совершение своих собственных путешествий [3].

Нельзя недооценивать и роль социальных сетей и после его завершения путешествий. При самостоятельном планировании путешествия значительную роль оказывают отзывы, рекомендации и истории, опубликованные в туристических социальных сетях и персональных блогах путешественников.

Рассмотрим некоторые аспекты, которые могут побудить самостоятельно спланировать путешествие, а именно: возраст, образование и страна проживания туриста.

## ՀԲՈՍԱՇՐԶՈՒԹՅՈՒՆ

### ВОЗРАСТНАЯ ХАРАКТЕРИСТИКА И ОБРАЗОВАНИЕ

Согласно приведенным в литературе исследованиям среди самостоятельных туристов, в частности среди китайских, преобладают люди в возрасте 25–34 лет (39,7%) и 35–44 лет (34,7%). Кроме того, было выявлено, что подавляющее большинство самостоятельных туристов (68%) имеют высшее образование, либо являются студентами вузов (19%) [5].

### СТРАНА ПРОЖИВАНИЯ

Интересна информация о туристах, посещающих Армению. Согласно исследованиям большинство из них организуют собственное путешествие [6]. Только 2,7% туристов пользуются услугами туроператоров. В основном это туристы, которые приезжают из Израиля, Словении, Японии и Дании. На рис 1. представлены основные страны–поставщики туристов в Армению с указанием процента туристов, пользующихся и не пользующихся услугами туроператоров и агентов.




Рис 1. Организация путешествий в Армению по странам.


Интересно заметить, что по данным «Ipsos Comcon», основным фактором выбора самостоятельной организации путешествия является

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

не фактор экономии (более того, как правило, самостоятельные путешествия зачастую обходятся дороже пакетных туров), а желание туриста получить «максимум впечатлений за свои деньги» [7]. Кроме того, самостоятельные туристы нередко жертвуют сервисом и часто выбирают места проживания с минимальной звездностью. Продолжительность поездок самостоятельных туристов варьируется. Некоторые отправляются в путешествие лишь на несколько дней, у других же период путешествия длится более двух недель.

Основными положительными сторонами в самостоятельной организации отдыха, по оценкам туристов (Рис. 2), являются самостоятельность и независимость от турагентства (37 %), экономичность (33 %), а также разнообразие направлений отдыха (30 %) [8].

- Самостоятельность и независимость от турагентства
- Экономичность
- Разнообразие направлений отдыха



**Рис. 2. Положительные стороны в самостоятельной организации отдыха по оценкам туристов.**

Чтобы определиться с подходами и инновационными методами, которые необходимо внедрить туристическим предприятиям в условиях распространения неорганизованного туризма рассмотрим более подробно факторы, на основе которых складываются предпочтения туристов к самостоятельному планированию поездок. Путем опросов



установлены 8 причин, которые определяют предпочтение туриста путешествовать самостоятельно [9]:

### **Причина 1. Личная**

Планируя путешествие самостоятельно, турист создает «идеальное» путешествие, соответствующее его предпочтениям и экономическим возможностям. Не нужно подстраиваться к пакетным предложениям и другими путешественниками, поездка, которую он совершает, является более личной.

### **Причина 2. Гибкость**

Выбирая бронирование своих собственных рейсов, мест проживания и туров, обеспечивается максимальная гибкость. Можно выбрать что и когда ты хочешь сделать, а в том случае, если какое-то особое мероприятие или дестинация особенно заинтересовало вас, можно отменить прежние действия или переместить их.

### **Причина 3. Дешевле**

Бронирование самостоятельно может обойтись дешевле. Нет никакой дополнительной компании, которая зарабатывает деньги за обслуживание.

### **Причина 4. Отмена**

Бронируя самостоятельно, турист не привязывается к пакетному предложению, и можете найти другие, более подходящие действия, которые можно сделать во время поездки.

### **Причина 5. Адаптируемый**

Если турист влюбляется в посещаемое место и хочет остаться там еще на день или больше, он спокойно может это сделать, или наоборот, если разочарован, то может сократить свое прибывание в конкретном месте.

### **Причина 6. Исследования**

Самостоятельное планирование поездки может быть отличным способом исследования и удовлетворения желания инкультурации. Турист может больше общаться с жителями посещаемой страны, что позволяет глубже окунуться в культуру и традиции местного населения и, соответственно, получить больше впечатлений и эмоций.

### **Причина 7. Время**

Экономия времени на экскурсиях. Самостоятельный путешественник может не ехать на место встречи с группой и не обязан кого-то ждать из группы, что раздражает в организованном отдыхе.

У самостоятельного туриста нет ограничений по времени. Он планирует время посещения объектов по своему усмотрению и всегда может изменить свои планы.

### **Причина 8. Выбор**

Пакетные предложения часто бывают очень ограниченными так как предлагают путешествие только в определенное время с определенной авиакомпанией и в определенную гостиницу. Бронируя самостоятельно, турист может забронировать путешествие в удобное для себя время и выбрать услуги удовлетворяющие его по качеству.

### **Проблемы неорганизованного туризма**

Помимо положительных для туриста сторон самостоятельного туризма, конечно существует и ряд присущих ему проблем. Анализ публикаций показывает, что основными проблемами неорганизованного туризма являются:

- Вопросы медицинской страховки, визовые формальности, вопросы безопасности за границей.
- Больше времени на организацию поездки. Многие недалёковидные лица отправляются в путь неподготовленными должным образом.
- В случае возникновения непредвиденных обстоятельств, в неорганизованной поездке туристу придется самому решать возникшую проблему. В организованной поездке эту функцию, как правило, выполняет представитель кампании.
- Много проблем возникает из-за незнания иностранных языков.
- Отсутствие возможности оформить отдых в рассрочку.

Несмотря на существование представленных проблем неорганизованного туризма все же, исходя из приведенных данных следует ожидать увеличения доли туристов, склонных к самостоятельному планированию своих туров.

## ՀԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

---

Какие же инновационные методы необходимо внедрить туристическим предприятиям в условиях распространения самотуризма, чтобы избежать потери рынка потребителей.

Исследование туристического рынка и работ, посвященных опisanной проблеме, позволили сформулировать нижеприведенные предложения, направленные на привлечение склонных к самостоятельной организации поездок туристов без ущемления их личностных предпочтений.

Туроператорам необходимо:

1. Создавать сайты скрытого операторства, предоставляя большой выбор услуг без акцента на турфирму - у туриста должно складываться впечатление, что он сам строит свой тур.
2. Организовывать специализированные туры, которые трудно делать самостоятельно.
3. Организовывать больше мероприятий во время туров, с акцентом на общение туристов между собой, поскольку значительная часть туристов стремится к такому общению. В частности, можно организовывать спортивные, культурные и другие мероприятия.
4. Обеспечить большую гибкость туров и возможность общения с местным населением.
5. Предлагать туры в новые, мало изученные страны и территории.
6. Предоставлять больше гарантий по безопасности.

Разумеется, помимо предлагаемых, могут быть и другие методы привлечения туристов в условиях развития предпочтения к самотуризму и туроператоры должны позаботиться о разработке новых подходов и методов привлечения и обслуживания туристов в условиях глобальной информатизации общества.

### Литература

1. Российские туристы научились обходиться без турфирм – Ա, <http://www.travel.ru/news/2010/09/03/182914.html> (11.08.2020թ.)
2. Статьи по теме сборы в отпуск % от экспертов – Ա, <https://www.summerhotels.ru/read/oprosy-turistov/> (11.08.2020թ.)
3. Э.Ф. Галимьянова. Феномен онлайн туризма. 2018 – Ա, <https://www.elar.urfu.ru/bitstream/10995/62558> (11.09.2020թ.)
4. Туроператор TUI выяснил, какой отдых выбирают российские туристы – Ա, [https://saletur.ru/Россия/news/100477\\_Туроператор\\_TUI](https://saletur.ru/Россия/news/100477_Туроператор_TUI) (12.09.2020թ.)
5. Рябова Т.В., Эртман Е.В. Самостоятельный туризм как средство инкультурации личности // Сервис plus. Т. 11. 2017. № 3. С. 31-38. DOI: 10.22412/1993-7768-11-3-4 – Ա, <https://www.philosoph.ru/service-plus/1993-7768-11-3-4> (11.09.2020թ.)
6. Հետաքրքրաշարժ գրաստորոշումն – Ա, [https://movsisyantourism.blogspot.com/2016/10/blog-post\\_9.html](https://movsisyantourism.blogspot.com/2016/10/blog-post_9.html) (14.09.2020թ.)
7. Выездной туризм. Итоги 2016. Прогнозы на 2017 – Ipsos Connect - Ա, <https://www.ipsos.com/ipsos-comcon/ru-ru/vyezdnoi-turizm-itogi2016-prognozy-na-2017> (15.09.2018թ.)
8. Самостоятельный туризм в современных условиях. №65-1, 15.05.2017 Социологические науки. Шашмурина В. А. – Ա, <https://www.novainfo.ru/article/13053> (15.09.2020թ.)
9. 8 Reasons Travelling Independently – Ա, <https://www.studentuniverse.co.uk/blog/travel-advice> (16.09.2020թ.)

## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

### ՏՈՒՐՕՊԵՐԱՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՆՔՆԱՏՈՒԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

#### Հմայակ Դանիելյան

ԵՀ, Զբոսաշրջության և սպասարկման ամբիոն, տ.գ.թ., դոցենտ

Հոդվածում վերլուծվում են անկախ զբոսաշրջության զարգացմանը նպաստող գործոնները՝ հասարակության գլոբալ տեղեկատվայնացման պայմաններում:

Ներկայացվում է տարբեր երկրներից ժամանած զբոսաշրջիկների, այդ թվում, Հայաստան ճանապարհորդողների կողմից անկախ ճանապարհորդության կազմակերպման ցուցանիշների վիճակագրությունը:

Հոդվածում վերլուծվում են սոցիալական հարցումների արդյունքները, որոնք ուղղված են ինքնուրույն զբոսաշրջության խթանող գործոնների բացահայտմանը:

Նման գործոններն են տարիքը, կրթությունը, տնտեսությունը, ժամանակակից տեղեկատվական հասարակության մեջ ինկլյուտուրացիայի ձգտումը, շրջագայությունների ճկունությունը և այլն:

Հիմնվելով ոչ կազմակերպված զբոսաշրջության դրական և խնդրահարույց ասպեկտների վերլուծության վրա, ձևակերպվում են նորարարական մեթոդներ, որոնք նպատակահարմար է ներդնել տուրօպերատորներին որպեսզի խուսափել սպառողական շուկայի կորստից ինքնատուրիզմի տարածման պայմաններում՝ չխախտելով զբոսաշրջիկների անձնական նախասիրությունները:

**Հիմնաբառեր.** Ինքնազբոսաշրջություն, զբոսաշրջիկներին խթանող գործոններ, տարիք, կրթություն, տնտեսողություն, ինկլյուտուրիզացում, նորարարական մեթոդներ, տուրօպերատորներ:

---

THE NECESSARY INNOVATIONS IN THE TOUR OPERATING  
ACTIVITIES IN THE CONDITIONS OF THE SELF-TOURISM  
DEVELOPMENT

**Hmayak Danielyan**

EU, Chair of Tourism and Service

ScD in Technical, Associate Professor

The article analyzes the factors initiating the development of independent tourism in the context of global informatization of society. There is presentation of the statistics of indicators on the self-organized traveling by various countries' tourists, including those traveling to Armenia. Under the analysis are the results of social surveys aimed at identifying factors that stimulate tourists to organize tours by themselves. Such factors are age, education, economy, the longing for inculturation into the modern information society, the flexibility of tours, etc. Based on the analysis of the positive and problematic aspects of unorganized tourism, which nowadays shows considerable boost, the article formulates innovative methods that should be undertaken by tour operators in order to avoid the loss of the consumer market without narrowing the personal preferences of tourists.

**Keywords:** Selftourism, factors stimulating tourists, age, education, economical, inculturization, innovative methods, tour operators.

*Ընդունվել է տպագրության՝ 09.10.2020թ.*

*Գրախոսվել է՝ 02.11.2020թ.*

## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

### ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

*Արմինե Մաբենյան*

*ԵՀ, Զբոսաշրջության և սպասարկման ամբիոն  
matentsyana@gmail.com, +374 99 845283*

Հոդվածում ներկայացված են զբոսաշրջության զարգացման նպատակով պատասխանատու պետական մարմինների ստեղծման գործում աշխարհի տարբեր երկրների փորձի ուսումնասիրության արդյունքները: Հեղինակի կողմից հիմնավորված է կարծիքը ժամանակակից պայմաններում զբոսաշրջության ոլորտի պետական կառավարման չորս հիմնական մոդելների առկայության վերաբերյալ: Դիտարկված է մոդելների տարածումը աշխարհի զբոսաշրջային մակրոտարածաշրջաններում, ինչն իր հերթին հիմնավորված է զբոսաշրջության ոլորտի պետական կառավարման այս կամ այն մոդելը կիրառող երկրների սոցիալ-տնտեսական զարգացման որոշ օրինաչափությունների վերլուծության արդյունքներով:

**Հիմնաբառեր.** Զբոսաշրջություն, պետական կարգավորում, ազգային զբոսաշրջային վարչակազմ, զբոսաշրջային արդյունաբերություն, կառավարման մոդել:

Զբոսաշրջության զարգացումը աշխարհի շատ երկրների համար հնարավորություն է ստեղծում զգալի միջոցներ ավելացնել պետությունում, մուլտիպլիկատիվ էֆեկտի շնորհիվ բարձրացնել տնտեսության հարակից ոլորտների եկամտաբերությունը և բարելավել զբոսաշրջային դեստինացիաների ենթակառուցվածքների վիճակը: Երկրների մեծ մասում զբոսաշրջության բազմաբնույթ ազդեցությունը տնտեսության վրա կարգավորվում է գործադիր իշխանության համակարգում հատուկ ստեղծված կենտրոնական մարմնի կողմից: Այնուամենայնիվ, զբոսաշրջության ոլորտի պետական կառավարման աստիճանը նույնական չէ աշխարհի տարբեր երկրներում և կախված է վերջիններիս տնտեսական զարգացման մակարդակից: Այս հանգամանքը զբոսաշրջության ոլորտի պետական կարգավորման մի քանի հիմնական մոդելների ի

## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

հայտ գալու պատճառը հանդիսացավ: Այդ մոդելների ուսումնասիրության հիման վրա հնարավոր է հետևել զբոսաշրջային բիզնեսի կազմակերպման որոշակի օրինաչափությունների:

Վերջին տարիների հետազոտությունների և հրապարակումների վերլուծությունը ցույց է տալիս, որ օտարերկրյա գիտնականների աշխատություններում [3-7] մեծ ուշադրություն է դարձվում զբոսաշրջային արդյունաբերության պետական կարգավորման ինստիտուցիոնալ և կազմակերպչական մեխանիզմների ուսումնասիրությանը: Սակայն մի շարք հարցեր՝ կապված զբոսաշրջության ոլորտի պետական կարգավորման ընդունված մոդելների հիմնավորման, համակարգման և բնութագրման, ինչպես նաև աշխարհի ենթա- և մակրոտարածաշրջաններում դրանց տարածման վերլուծության հետ, մինչ այժմ մնում են չլուծված, ինչն էլ թույլ է տալիս այս ուսումնասիրությունն արդիական համարել:

Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ զբոսաշրջության զարգացման հաջողությունը ուղղակիորեն կախված է նրանից, թե ինչպես է ոլորտն ընկալվում պետական մակարդակում, որքանով է այն վայելում պետական աջակցությունը: Չնայած բազմաթիվ երկրների զբոսաշրջության ոլորտում պետական կառավարման անհրաժեշտությունն ակնհայտ է, դրա իրագործման համար անհրաժեշտ են հատուկ մոտեցումներ: Մի կողմից, զբոսաշրջության ոլորտը, որպես բազմաճյուղ համալիր, իր տնտեսական գործունեությունը կոորդինացնելու կարիքը շատ ավելի ուժեղ է զգում, քան որևէ այլ արդյունաբերական ոլորտ: Մյուս կողմից, պետության չափազանց մեծ ներկայությունն ու կարգավորիչ մեծ լռակաները ճնշում են ձեռնարկատիրական նախաձեռնության դրսևորմանը, որն ուղղակիորեն ընկած է շուկայական հարաբերությունների կայացման և զարգացման հիմքում: Բացի այդ, զբոսաշրջության ոլորտը յուրաքանչյուր երկրի համար ունի վիթխարի տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային նշանակություն, որի արդյունքում ոլորտի պետական կառավարման իրազեկ միասնական մարմինների ձևավորումը բավականին բարդ գործընթաց է:

Համաշխարհային պրակտիկան վկայում է այն մասին, որ գոյություն չունի որևէ կատարյալ բանաձև, որը պետությանը հնարավորություն կտա ձևավորել զբոսաշրջության ոլորտի կառավարման օպտի-



## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

մալ կառուցվածք: Ուսումնասիրելով զբոսաշրջային գործունեության պետական կարգավորման սկզբունքները՝ կարող ենք առանձնացնել մի քանի բնութագրական դրույթներ, որոնք ներկա պահին առկա են զբոսաշրջության համաշխարհային շուկայում.

- Երկրում զբոսաշրջության բոլոր ասպեկտների կոշտ, ավտորիտար կառավարում:
- Զբոսաշրջության ոլորտի միավորումը տնտեսության հարակից ոլորտների հետ՝ համակցված նախարարության շրջանակներում:
- Ազգային զբոսաշրջային վարչակազմի կողմից ոլորտի գործունեության կարգավորման և կորդինացման մեղմ մոտեցումներ:
- Անտարբերություն տուրիզմի՝ որպես սոցիալ-տնտեսական երևույթի նկատմամբ:

Այսպիսով, այժմ աշխարհում գոյություն ունեն զբոսաշրջության կառավարման տարբեր կազմակերպական համակարգեր՝ ինքնուրույն կամ հարակից ոլորտների համակցված նախարարություններից մինչև կառավարությանն ուղղակիորեն ենթակա ազգային վարչակազմեր: Բացի այդ, որոշ երկրներ զբոսաշրջային գործունեությունը կարգավորում են միայն տարածաշրջանային (տարածքային) կառավարման մարմինների մակարդակում, իսկ մյուսները զբոսաշրջության ոլորտի վրա պետական ազդեցության լծակներ առհասարակ չունեն:

Նշված ձևերի բազմազանությունը բացատրվում է առանձին պետությունների զարգացման սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանների առանձնահատկություններով, ազգային տնտեսության մեջ զբոսաշրջության կարևորության աստիճանից, շուկայական հարաբերությունների զարգացման մակարդակից և զբոսաշրջության մասշտաբներով: Հարկ է նշել, որ իր գործառույթներն իրականացնելու համար տուրիզմի ոլորտում պետական կառույցը պետք է հարաբերություններ հաստատի էկոնոմիկայի, ֆինանսների, առևտրի, մշակույթի, կրթության, գյուղատնտեսության, տրանսպորտի և այլ նախարարությունների հետ: Միևնույն ժամանակ, տնտեսության զբոսաշրջային հատվածում շատ դժվար է հասնել ցանկալի փոխզիջման՝ արդյունավետ միջգերատեսչական փոխգործակցության կազմակերպման և անհրաժեշտ ապակենտրոնացման մակարդակի միջև:

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ միջազգային պրակտիկայում զբոսաշրջության ոլորտի պետական կարգավորման չորս հիմնական մոդել է ձևավորվել: Նման մոդելավորման էությունը կայանում է զբոսաշրջության ոլորտի կազմակերպմանը պետության միջամտության աստիճանի որոշման մեջ: Այսպես, առաջին մոդելը նախատեսում է զբոսաշրջության անկախ նախարարության ստեղծում, որն օժտված է այս ոլորտի զարգացման գործում ամենալայն լիազորություններով: Յուրաքանչյուր հաջորդ մոդելում իշխանական գործադիր մարմնի ազդեցությունը զբոսաշրջային արդյունաբերության վրա աստիճանաբար նվազում է, ընթույ մինչև դրա բացակայությունը որոշ երկրներում:

Աշխարհի բոլոր 193 երկրներում զբոսաշրջության պետական կարգավորման համակարգի որոշ ուսումնասիրությունների արդյունքում կարելի է եզրակացնել, որ ամենատարածվածը երկրորդ մոդելն է, որում կառավարության կառուցվածքում ստեղծվում է համակցված բազմապրոֆիլային նախարարություն, որը զբոսաշրջությունը միավորում է հարակից ոլորտների հետ: Աշխարհի երկրների 41%-ը դա է նախընտրում: Պետությունների մեկ երրորդը (31%) հավատարիմ է երրորդ մոդելին, երբ զբոսաշրջության ոլորտում գործադիր կենտրոնական մարմինը կարող է լինել կամ բազմապրոֆիլային նախարարություն կամ պետական կառույց (վարչակազմ, կոմիտե, դեպարտամենտ և այլն), որն ուղղակիորեն ենթարկվում է կառավարությանը: Աշխարհի յուրաքանչյուր հինգերորդ երկիրը (21%) ունի զբոսաշրջության առանձին նախարարություն, այսինքն՝ այն կանգնած է առաջին մոդելի վրա, և պետությունների միայն 7%-ը առհասարակ ներգրավված չէ կենտրոնացված իշխանական մակարդակով զբոսաշրջության արդյունաբերության կարգավորման գործընթացում:

Աղյուսակ 1-ում, որը կազմվել է Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՄԱԿՁՀԿ) պաշտոնական կայքում [1-2] և տարբեր պետությունների զբոսաշրջային վարչակազմերի էջերում ներկայացված տեղեկատվության սեփական վերլուծության հիման վրա, բերված են տվյալներ տուրիզմի ոլորտում պետական կարգավորման այս կամ այլ մոդելն ընտրած երկրների մասին, որոնք բաշխված են ըստ աշխարհի զբոսաշրջային մակրոտարածաշրջանների:

## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1

**Զբոսաշրջության պետական կառավարման մոդելների բաշխումն  
ըստ երկրների թվի և աշխարհի զբոսաշրջային  
մակրոարածաշրջանների**

		ՄՈԴԵԼՆԵՐ						Ընդամենը երկիր
		I	II		III		IV	
		Զբոսաշրջության ինքնուրույն նախարարություն	Համակցված նախարարություն՝ զբոսաշրջության և այլ նյութական ոլորտների	Համակցված նախարարություն՝ զբոսաշրջության և այլ ոչ արտադրական ոլորտների	Ազգային զբոսաշրջային վարչակազմ՝ բազմապրոֆիլային նախարարության կազմում	Ազգային զբոսաշրջային վարչակազմ՝ երկրի կառավարությանն առընթեր	Զբոսաշրջության ոլորտում գործարարի իշխանության կենտրոնական մարմնի բացակայություն	
Երկրների թիվն ըստ աշխարհի	Եվրոպա	3	6	13	21	10	2	55
	Ամերիկա	15	8	3	5	4	-	35
	Ասիա և Օվկիանիա	7	6	8	3	9	6	39
	Աֆրիկա	11	16	16	2	1	5	51
	Մերձավոր Արևելք	5	-	2	1	4	1	13
<b>Ընդամենը երկիր</b>		<b>41</b>	<b>36</b>	<b>42</b>	<b>32</b>	<b>28</b>	<b>14</b>	<b>193</b>
			<b>78</b>		<b>60</b>			

Ըստ աղյուսակ 1-ի, զբոսաշրջության արդյունաբերության պետական կառավարման առաջին մոդելը պայմանականորեն կարելի է անվանել «լատինաամերիկյան», քանի որ այն առավել տարածված է Հա-

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

րավային և Կենտրոնական Ամերիկայի երկրների շրջանում: Այսպես, ամերիկյան մայրցամաքի 35 երկրներից 15-ը (43%) ներկայումս ունեն զբոսաշրջության անկախ նախարարություն. Բարբադոս, Հաիթի, Գրենադա, Դոմինիկյան Հանրապետություն, Կուբա, Սենթ Վինսենթ և Գրենադիններ, Ճամայկա (Կարիբյան ենթաշրջան); Բելիզ, Հոնդուրաս, Սալվադոր (Կենտրոնական Ամերիկա ենթաշրջան); Վենեսուելա, Բրազիլիա, Պարագվայ, Էկվադոր (Հարավային Ամերիկա ենթաշրջան) և Մեքսիկա, որը ՄԱԿՀԶԿ մեթոդաբանության համաձայն (քաղաքակրթական առումով) նույնպես վերագրվում է հարավամերիկյան ենթաշրջանին:

Աֆրիկայի երկրներից 11-ը (այսինքն՝ այս մակրոտարածաշրջանի յուրաքանչյուր հինգերորդ պետությունը) նույնպես հավատարիմ են առաջին մոդելին. դրանք գտնվում են հիմնականում Արևմտյան (Բուրկինա Ֆասո, Գանա, Կոտ դ'Իվուար, Տոգո) և Կենտրոնական Աֆրիկայում (Կամերուն, Կոնգո, Չադ):

Մերձավոր Արևելքի երկրների մոտ 40%-ը (13-ից 5-ը) նույնպես կանգնել են զբոսաշրջության ոլորտում պետական կարգավորման առաջին մոդելի վրա՝ Եգիպտոս, Եմեն, Լիբանան, Օման, Սիրիա:

Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում զբոսաշրջության նախարարություններ գոյություն ունեն Հարավարևելյան Ասիայի (Կամբոջա, Մալայզիա) և Հարավային Ասիայի (Հնդկաստան, Մալդիվներ, Պակիստան), ինչպես նաև Օվկիանիայում (Նոր Զելանդիա, Ֆիջի), այսինքն՝ միայն յոթ պետություններում:

Եվրոպայում առաջին մոդելը լայն տարածում չի գտել: Միայն երեք պետություններ (Իտրվաթիան, Չեռնոգորիան և Իսրայելը<sup>1</sup>) ունեն զբոսաշրջության ինքնուրույն նախարարություններ:

Այսպիսով, զբոսաշրջության ոլորտում պետական կառավարման **առաջին մոդելը** բնորոշ է հիմնականում զարգացող երկրներին: Այն ենթադրում է ուժեղ և հեղինակավոր նախարարության գոյություն, որի շրջանակներում կենտրոնացված է զբոսաշրջության արդյունաբերության վրա էական վերահսկողություն: Հաշվի առնելով այն փաստը, որ

---

<sup>1</sup> ՄԱԿՀԶԿ մեթոդաբանության համաձայն Իսրայելը վերագրվում է Եվրոպա մակրոտարածաշրջանին:

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Նման երկրներում զբոսաշրջության զարգացումը բարձրացված է պետական քաղաքականության աստիճանի, դրա ղեկավար մարմինները շատ մեծ լիազորություններ ունեն ներդրումների, հետազոտությունների, կադրերի վերապատրաստման, գովազդատեղեկատվական և բազմաթիվ այլ աշխատանքների ոլորտում: Զբոսաշրջության նախարարության գործունեությունը նպատակաուղղված է նաև տուրիստական ճանապարհորդությունների խրախուսմանը և նրանց անվտանգության անհրաժեշտ մակարդակի ապահովմանը, սահմանային և մաքսային ձևականությունների պարզեցմանը, տեղավորման միջոցների և զբոսաշրջության արդյունաբերության այլ ձեռնարկությունների կառուցման խթանմանը, տուրիզմի ոլորտում տնտեսական և սոցիալական մշտադիտարկման համազգային ցանցի ստեղծմանը և այլն:

Սովորաբար, զբոսաշրջության անկախ նախարարություններն ունեն բավականին ճյուղավորված կառուցվածք, որը, ի լրումն զբոսաշրջության ազգային գրասենյակի, որը, որպես կանոն, զբաղվում է արտերկրում երկրի առավելությունների գովազդմամբ և շուկայավարական գործունեությամբ, ներառում է տարբեր գերատեսչություններ՝ ներդրումային, հարկային, գույքի, ինչպես նաև մասնագիտական կրթության, տնտեսագիտություն և վիճակագրության, սերտիֆիկացման, լիցենզավորման և այլ ստորաբաժանումներ: Զբոսաշրջության գործունեության կառավարման այս մոտեցումն արդյունավետ է այն դեպքերում, երբ զարգացող երկրները, առնվազն, ունեն բարենպաստ բնակլիմայական պայմաններ զբոսաշրջության զարգացման համար: Կարող ենք առանձնացնել զբոսաշրջության պետական կառավարման առաջին մոդելի հետևյալ բնութագրական առանձնահատկությունները՝

- ներգնա տուրիզմի ճանաչումը որպես կոշտ արժույթի ավելի շահավետ աղբյուր տնտեսության մյուս ճյուղերի համեմատությամբ,
- զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման ասպարեզում օտարերկրյա ներդրումների ապահովում, որը կապիտալ ներդրումների ամենաարդյունավետ ոլորտներից մեկն է,
- տուրիզմի հատվածում փոքր և միջին բիզնեսի զարգացմանը պետական աջակցության տրամադրում,

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

- զբոսաշրջության անվտանգության արդյունավետ համակարգի կազմակերպման անհրաժեշտություն, հատկապես, եթե երկրում առկա է տարբեր տեսակի ռիսկերի բարձր մակարդակ,
- պետական բյուջեից զգալի միջոցների հատկացում՝ երկիրը որպես հայտնի զբոսաշրջավայր գովազդելու, միջազգային ցուցահանդեսներին և տոնավաճառներին մասնակցելու, անհրաժեշտ ինտերնետային ռեսուրսի ստեղծման համար և այլն:

Հարկ է նշել, որ պետական կարգավորման առաջին մոդելն ընտրած երկրներին բնորոշ է որոշակի հետամնացություն՝ առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործման, նորագույն սարքավորումների ձեռքբերման, ինչպես նաև որակյալ կադրերի պատրաստման հարցերում: Զարգացող երկրների համար ազգային զբոսաշրջային արդյունքի խթանումը Եվրամիության երկրներում, ինչպես նաև ԱՄՆ-ում, Կանադայում, Չինաստանում և Ճապոնիայում, պահանջում է զգալի ֆինանսական միջոցներ, ուստի նրանք հաճախ ստիպված են հետևել տարածաշրջանային համագործակցության քաղաքականությանը՝ միջազգային շուկայում իրենց սեփական զբոսաշրջային ծառայությունների իրացումն ապահովելու համար:

**Երկրորդ մոդելը** ենթադրում է համկցված նախարարության ստեղծում, որը, բացի զբոսաշրջությունից, զբաղվում է նաև հարակից այլ ոլորտների կարգավորումներով: Այսպես, օրինակ, զբոսաշրջությունը սովորաբար զուգորդվում է կամ նյութական ոլորտի ճյուղերի հետ (արդյունաբերություն, էներգետիկա, առևտուր, տրանսպորտ, կապ), կամ ոչ արտադրական ոլորտի ճյուղերի հետ (մշակույթ, սպորտ, տեղեկատվություն, շրջակա միջավայրի պաշտպանություն և այլն):

Մակրոտարածաշրջանային համատեքստում այս մոդելը առավել բնորոշ է աֆրիկյան երկրներին (տե՛ս Աղյուսակ 1), բայց անիմաստ է այն համարել հենց «աֆրիկյան»: Չնայած այս մայրցամաքի երկրներ օտարերկրյա զբոսաշրջիկների ժամանման բարձր ցուցանիշների, աֆրիկյան երկրները բացարձակ թվով դեռ շատ քիչ այցելուներ են ընդունում և սպասարկում: Շատ դեպքերում, աֆրիկյան պետությունները չունեն բավականաչափ զարգացած նյութատեխնիկական բազա զբոսաշրջության համար, հնարավորություն չունեն վարձել տուրիստական

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

բիզնեսի որակյալ մասնագետներ և չեն կարող զբոսաշրջիկներին համաշխարհային ստանդարտներին համապատասխանող բարձրորակ ծառայություններ մատուցել:

Չնայած այն հանգամանքին, որ աֆրիկյան երկրների համար միջազգային զբոսաշրջությունը կոշտ արժույթի հիմնական աղբյուրներից մեկն է, այդ պետությունների աղքատությունն ու տնտեսական թերզարգացումը նրանց ստիպում է ստեղծել ոչ թե անկախ, այլ համակցված նախարարություններ, որտեղ զբոսաշրջությունն առավել հաճախ զուգորդվում է սոցիալ-տնտեսական զարգացման համար մեծ նշանակություն ունեցող այլ ոլորտների հետ: Հարկ է նշել, որ այս մայրցամաքի 32 պետությունների կեսը ստեղծել են զբոսաշրջության նախարարություններ, որոնք միավորված են նյութական ոլորտի՝ հիմնականում արհեստագործության ճյուղերի հետ (Բենին, Մալի, Մարոկկո, Նիգեր, Սենեգալ, Մավրիտանիա, Գվինեա), առևտրի զարգացման հետ (Նիգերիա, Գաբոն, Ուգանդա, Բուրունդի), ինչպես նաև նոր տարածքների ակտիվ յուրացման հետ (Ալժիր): Պետությունների մյուս կեսում զբոսաշրջության պետական կարգավորումը համակցվում է մշակույթի (Եթովպիա, Գամբիա, Սիեռա Լեոնե, Լիբերիա, Հասարակածային Գվինեա), շրջակա միջավայրի պահպանության (Լեսոտո, Նամիբիա, Չամբիա, Մադագասկար, Տանզանիա), ինչպես նաև էկզոտիկ ոչ արտադրական հատվածների հետ, օրինակ՝ վայրի բնության ուսումնասիրության (Մալավի, Բոտսվանա, Սուդան):

Պետք է ընդգծել, որ վերջին տասնամյակում երկրորդ մոդելը նաև բնորոշ է դարձել Հարավային, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներին, որտեղ ենթակառուցվածքների զարգացումը, զբոսաշրջության ոլորտում ներդրումներ ներգրավելը և ազգային զբոսաշրջության արտադրանքը համաշխարհային շուկաներում խթանելը այս երկրների զբոսաշրջության ազգային վարչակազմերի կարևորագույն խնդիրներն են: Եվրոպական երկրների շրջանում առավել տարածված է զբոսաշրջության համադրությունը ոչ արտադրական հատվածների, հատկապես մշակույթի (Ադրբեջան, Անդորրա, Ալբանիա, Հունաստան, Թուրքիա, Ուկրաինա) և սպորտի (Ռուսաստանի Դաշնություն, Բելառուս, Ղազախստան, Լեհաստան, Սան Մարինո) հետ: Զբոսաշրջության և

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Նյութական արդյունաբերության համատեղ նախարարություններ գոյություն ունեն միայն եվրոպական 6 երկրներում՝ Իսպանիայում, Իսլանդիայում, Լյուքսեմբուրգում, Բուլղարիայում, Ռումինիայում և Կիպրոսում:

Ամերիկայում երկրորդ մոդելը տարածված է Կարիբյան ենթաշրջանի երկրների (Բահամներ, Սենթ Լուչիա, Դոմինիկա) միջև, որտեղ զբոսաշրջությունը՝ ընդհանուր նախարարության ներքո, համատեղվում է քաղաքացիական ավիացիայի հետ, ինչպես նաև Հարավային Ամերիկայում (Արգենտինա, Կոլումբիա, Գայանա, Պերու, Սուրինամ), որտեղ զբոսաշրջությունը կառավարվում է առևտրի, հեռահաղորդակցության և արդյունաբերության որոշ ճյուղերի հետ միասին:

Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում երկրորդ մոդելի ներկայացուցիչները տարբեր պետություններ են, սկսած ներկայումս ակտիվորեն զարգացող երկրներից (Բանգլադեշ, Աֆղանստան, Մյանմար, Վիետնամ, Վանուատու, Կիրիբատի, Պալաու) և նոր արդյունաբերական հսկաների կատեգորիային պատկանող Ինդոնեզիայից, Թաիլանդից, Կորեայի Հանրապետությունից, մինչև նրանց, ովքեր վաղուց ի վեր հայտնի էին որպես բարձր զարգացած, օրինակ՝ Ճապոնիան: Հարկ է նշել, որ Ճապոնիան այժմ երկրորդ մոդելից անցել է երրորդին՝ ստեղծելով գործադիր կենտրոնական մարմին, որը կոչվում է «Հողերի, ենթակառուցվածքների, տրանսպորտի և զբոսաշրջության նախարարություն», մասնավորապես՝ ներգնա տուրիզմի զարգացման վրա կառավարության ազդեցությունն ընդլայնելու և վերջինիս անհրաժեշտ պետական աջակցություն ցուցաբերելու համար:

Մերձավոր Արևելքի երկրներից միայն երկուսն են ընտրել երկրորդ մոդելը՝ Հորդանանը և Իրաքը, և ստեղծել են զբոսաշրջության և հնագիտության համատեղ նախարարություններ, որոնք ընդգծում են զբոսաշրջության պատմական ուղղվածությունը այս երկրներում: Այսպիսով, զբոսաշրջության ոլորտում պետական կարգավորման երկրորդ մոդելը հիմնականում բնորոշ է ինչպես զարգացող, այնպես էլ անցումային տնտեսություն ունեցող երկրներին, և առանձին դեպքերում՝ այն զարգացած երկրներին, որոնք ցանկանում են ավելի շատ ուշադրություն դարձնել զբոսաշրջությանը: Այս բոլոր պետություններին միավո-



## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

րող գործոնը միջազգային ասպարեզում որպես հիմնականում ընդունող զբոսաշրջային շուկաներ դիրքավորվելու նրանց ցանկությունն է:

Ելնելով զբոսաշրջության գործունեության կազմակերպման ուսումնասիրության արդյունքներից այն երկրներում, որոնք այլ տեսակի տնտեսական գործունեության հետ համակցված զբոսաշրջության նախարարություններ ունեն, կարելի է եզրակացնել, որ երկրորդ մոդելի բնութագրական առանձնահատկությունները հետևյալն են՝

- զբոսաշրջության հոշակումը երկրի տնտեսության և մշակույթի զարգացման գերակա ուղղություն,
- զբոսաշրջության և նյութական ու ոչ նյութական այլ ճյուղերի զարգացման մեջ հավասարակշռություն ձեռք բերելու անհրաժեշտությունը,
- լիազորությունների հստակ բաշխում տուրիզմի կենտրոնական և տարածաշրջանային վարչակազմերի միջև,
- երկրի՝ որպես ամենապոպուլյար տուրիստական ուղղության լայնածավալ գովազդը միջազգային զբոսաշրջային շուկաներում:

**Երրորդ մոդելը** բնութագրվում է անկախ մասնագիտացված կառույցի՝ Ազգային զբոսաշրջային վարչակազմի (ադմինիստրացիայի) ստեղծմամբ որևէ խոշոր նախարարության կազմում կամ ուղղակիորեն երկրի կառավարությանն առընթեր: Հարկ է նշել, որ երրորդ մոդելը նպատակահարմար է անվանել «եվրոպական»՝ հաշվի առնելով դրա ամենամեծ տարածումը հենց այս մակրոտարածաշրջանի երկրներում (տե՛ս Աղյուսակ 1): Միննույն ժամանակ, եվրոպական 21 երկիր զբոսաշրջությունն ընդգրկում է բազմապրոֆիլային նախարարություններում, օրինակ՝ տնտեսական գործերով նախարարություններ (Շվեյցարիա, Գերմանիա, Դանիա, Ֆինլանդիա, Ավստրիա, Ֆրանսիա, Մոնակո, Պորտուգալիա, Սերբիա, Մակեդոնիա, Սլովակիա, Սլովենիա, Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Վրաստան, Հայաստան), Արդյունաբերության և առևտրի նախարարություններ (Նորվեգիա, Շվեդիա), Տարածաշրջանային զարգացման նախարարություն (Չեխիա) և Մշակույթի, սպորտի և զանգվածային լրատվության նախարարություն (Մեծ Բրիտանիա): Մնացած երկրները ստեղծել են Ազգային զբոսաշրջային

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

վարչակազմեր կառավարությանն առընթեր (Վատիկան, Հունգարիա, Մոլդովա, Իտալիա, Լիխտենշտեյն, Մալթա, Նիդեռլանդներ, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան):

Աֆրիկայի մայրցամաքում, ընդհակառակը, կան միայն առանձին դեպքեր, երբ պետությունները ստեղծում են Ազգային զբոսաշրջային վարչակազմ, որն ունի հարաբերական անկախություն: Այսպիսով, բազմապրոֆիլային նախարարությունների ենթակայության տակ գտնվող Ազգային զբոսաշրջային վարչակազմեր ստեղծվեցին Հարավաֆրիկյան Հանրապետությունում և Ռուանդայում, իսկ կառավարության անմիջական ենթակայությամբ՝ միայն Մոզամբիկում:

Ամերիկյան, Մերձավոր Արևելքի և Ասիա-խաղաղովկիանոսյան մակրոտարածաշրջաններում երրորդ մոդելը ընտրում են տնտեսական զարգացման տարբեր փուլերում գտնվող երկրները՝ գերպետություններից (ԱՄՆ, Կանադա, Չինաստան) մինչև փոքր կղզային պետություններ, որոնք մեծ ազդեցություն չունեն միջազգային տնտեսական հարաբերությունների վրա (Սամոա, Միկրոնեզիայի Դաշնային Նահանգներ, Մարշալյան կղզիներ և այլն), սակայն, որոնց համար զբոսաշրջությունը տնտեսական զարգացման ամենակարևոր ճյուղն է, որի արդյունքում Ազգային զբոսաշրջային վարչակազմը ստանում է բավականաչափ լայն լիազորություններ՝ իր իսկ գործառույթները կատարելու համար: Նման երկրներում այդ կառույցի ղեկավարն առավել հաճախ ունենում է այսպես կոչված «առանց պորտֆելի նախարար» կարգավիճակ:

Այսպիսով, պետական կարգավորման երրորդ մոդելը հիմնականում բնորոշ է այն երկրներին, որտեղ զբոսաշրջության ոլորտն ընկնում է տնտեսական թեքում ունեցող նախարարությունների իրավասության տակ, ինչը երկրի տնտեսության կառուցվածքում զբոսաշրջության ոլորտի կարևոր դերի լրացուցիչ ապացույցն է:

Ազգային զբոսաշրջային վարչակազմի՝ որպես զբոսաշրջության ոլորտում գործադիր կենտրոնական մարմնի կոմպետենցիաները ներառում են.

1) Զբոսաշրջային գործունեության կազմակերպման համար կարգավորիչ դաշտի մշակում և կատարելագործում:

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

2) Զբոսաշրջության զարգացման վերաբերյալ նախարարությունների, կենտրոնական վարչությունների և տարածաշրջանային իշխանությունների միջև հարաբերությունների համակարգում:

3) Միջազգային զբոսաշրջային փոխանակումների զարգացման տեսանկյունից այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների հաստատում:

4) Ազգային զբոսաշրջային արդյունքի խթանում արտերկրում:

5) Տուրիստական բիզնեսի տեղեկատվական սպասարկման իրականացում:

Զբոսաշրջության ոլորտում պետական կառավարման երրորդ մոդելի բնութագրական առանձնահատկությունները հետևյալն են՝

- տուրիզմի արդյունաբերության կողմից տնտեսության կառուցվածքում որոշակի ու երևելի տեղ զբաղեցնելը,
- հնարավորությունների ակտիվ որոնում պետության և մասնավոր բիզնեսի, կենտրոնի և մարզերի շահերը ներդաշնակեցնելու տեսանկյունից,
- որոշումների կայացման հարցում Ազգային զբոսաշրջային վարչակազմի կողմից հարաբերական անկախության ձեռքբերում,
- ազգային զբոսաշրջային վարչակազմի հստակ բաժանում երկու գործառույթային կառույցների՝ վարչական և շուկայավարման: Միևնույն ժամանակ, վարչական մասի լիազորությունները պետական կառավարման գլոբալ խնդիրներ են (օրենսդրական կարգավորիչ դաշտի մշակում, վիճակագրական տեղեկատվության մշակում, գիտական հետազոտությունների անցկացում, շրջանների գործունեության համակարգում, միջպետական մակարդակում միջազգային համագործակցություն): Շուկայավարման բաժնի իրավասությունը ներառում է արտերկրում երկրի գրավիչ զբոսաշրջային իմիջի ստեղծում, ներառյալ մարքեթինգային հետազոտություններ և գովազդ, մասնակցություն միջազգային ցուցահանդեսներին, օտարերկրյա ներկայացուցչությունների ղեկավարում: Հենց այս կառույցն է, որ ստանում է պետական ֆինանսավորման հիմնական մասը, ունի ընդարձակ կառուցվածք և զգալի թվով անձնակազմ:

## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Տնտեսապես զարգացած երկրներում նկատվում է կենտրոնական գործադիր իշխանության դերի նվազման ընդհանուր միտում, ինչը հանգեցնում է պետական ծախսերի կրճատմանը, այդ թվում՝ զբոսաշրջության զարգացման ոլորտում: Արդյունքում, տեղի է ունենում Ազգային զբոսաշրջային վարչակազմի մարքեթինգային կառուցվածքի աստիճանական անցում դեպի խառը ֆինանսավորում, որն ընդհանուր առմամբ ներառում է միջոցներ ինչպես պետական բյուջեից, այնպես էլ տնտեսության մասնավոր հատվածից (տուրիզմի ոլորտում համագործակցության փոխշահավետ ձևերի ներմուծման շնորհիվ):

**Չորրորդ մոդելը** ենթադրում է տուրիզմի ոլորտում գործադիր կենտրոնական մարմնի բացակայություն: Ներկայումս այն գործում է աշխարհի միայն 14 երկրներում, որոնց թվում՝ Բելգիա և Ղրղզստան (մակրո-տարածաշրջան Եվրոպա), Կորեայի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետություն, Արևելյան Թիմոր, Նաուրու, Սողոմոնյան կղզիներ, Տոնգա, Տուվալու (Ասիա և Օվկիանեա մակրոտարածաշրջան), Գվինեա-Բիսաու, Կոնգո, Կենտրոնաֆրիկյան Հանրապետություն, Սան-Տոմե և Պրինսիպե, Սոմալի (Աֆրիկա մակրոտարածաշրջան), Քուվեյթ (Մերձավոր Արևելք մակրոտարածաշրջան):

Ըստ վերը թվարկված երկրների տնտեսական վիճակի վերլուծության արդյունքների, պարզվել է, որ այս մոդելը միավորում է ինչպես բարձր զարգացած պետություններին, որոնք ունեն մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի բարձր մակարդակ (Բելգիա, Քուվեյթ), այնպես էլ այս ցուցանիշով վարկանիշի վերջին տեղերը զբաղեցնող երկրներ: Այսպիսով, այս երկրներում տուրիզմի կառավարման կենտրոնական պետական մարմնի բացակայությունը չի կարող նույն կերպ մեկնաբանվել:

Նախ, պետական կարգավորման չորրորդ մոդելի կիրառմանը հակված են այն երկրները, որոնք նախընտրում են տուրիզմի զարգացման հիմնախնդիրները լուծել կամ տարածաշրջանային մակարդակով, կամ ինքնուրույն՝ բացառապես տնտեսվարող սուբյեկտների կողմից՝ հիմնվելով շուկայական տնտեսության սկզբունքների վրա: Այս մոտեցումն արդյունավետ է զարգացած երկրներում, որտեղ գերակշռում են տարբեր չափերի և մասնագիտացումների մասնավոր զբոսաշրջային ձեռնարկություններ: Միևնույն ժամանակ կարևոր է ընդհանուր և զբո-

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

սաշրջային ենթակառուցվածքների զարգացման բարձր մակարդակը, զբոսաշրջիկների անվտանգության ապահովման համակարգի արդյունավետությունը և բանկային, ապահովագրական և բժշկական ծառայությունների մատուցման զարգացած համակարգը:

Բացի այդ, երկիրը բոլոր առումներով պետք է գրավիչ լինի օտարերկրյա զբոսաշրջիկների համար, ունենա բարձր հեղինակություն, այլ կերպ ասած՝ կայացած զբոսաշրջային բրենդ, և համաշխարհային շուկայում իր տուրիստական արդյունքի հատուկ գովազդի կարիք չունենա: Թերևս այս դեպքում հնարավոր է զբոսաշրջության ոլորտը պահել առանց պետական հատուկ կարգավորող մարմինների: Այնուամենայնիվ, երկրների ճնշող մեծամասնությունը չի օգտվում այդ հնարավորությունից. Նույնիսկ ԱՄՆ-ն, որտեղ 1997 թվականից վերացվել է Զբոսաշրջության և ճանապարհորդությունների ազգային վարչությունը, այժմ վերադարձել է կառավարման երրորդ մոդելին և ստեղծել բազմապրոֆիլային նախարարության ներքո Ազգային զբոսաշրջային ադմինիստրացիա:

Մնացած դեպքերում չորրորդ մոդելը բնորոշ է այն երկրներին, որոնք կա՛մ պատշաճ ուշադրություն չեն դարձնում տուրիզմի զարգացմանը, կա՛մ տնտեսական զարգացման անբավարար մակարդակ ունեն, կա՛մ քաղաքական անկայուն վիճակում են և այլն:

Այսպիսով, աշխարհի տարբեր երկրներում զբոսաշրջության պետական կառավարման ձևերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ երկրների մեծ մասը տուրիզմի ոլորտի աշխատանքների համակարգման համար համատեղում են պետական կառավարման և շուկայի ինքնակարգավորման տարրերը: Այս հանգամանքը հանգեցնում է զբոսաշրջության գործունեության մեջ կառավարության միջամտության մի քանի հիմնական մոդելների ձևավորմանը, որոնք արտացոլում են խնդրի ամբողջ շրջանակը՝ զբոսաշրջության համար հատուկ նախարարությունների ստեղծումից մինչև տուրիստական ձեռնարկություններին տարածաշրջանային կառույցների միջոցով իրենց շահերը ներկայացնելու հնարավորություն ընձեռելը:

Զարգացած տնտեսություններով երկրներում զբոսաշրջության արդյունաբերության պետական կարգավորումը կարող է նվազագույնի

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

հասցված լինել: Եվ ընդհակառակը, զարգացող երկրներն ու անցումային տնտեսություն ունեցող երկրները պետք է պետական մակարդակով ավելի մեծ ուշադրություն դարձնեն զբոսաշրջության զարգացմանը: Ուլորտի խնդիրներից պետության ամբողջական հեռացումը, վերահսկողության և նախաձեռնողական միջամտության բացակայությունը, թողնելով վնասակար ազդեցություն զբոսաշրջային գործունեության բոլոր մասնակիցների վրա, կարող է զգալիորեն արգելակել երկրում տվյալ ոլորտի կայացումը՝ հետ մղելով երկիրը համաշխարհային զբոսաշրջային շուկայի զարգացման ուղիներից:

### Օգտագործված գրականության ցանկ

1. UNWTO e-library // Tourism Statistics / Country-specific. – URL: <https://www.unwto.org/action/doSearch?ConceptID=2469&target=topic> (25.08.2020թ.)
2. United Nations World Tourism Organization Regional Departments – URL: <https://www.unwto.org/regional-departments> (28.08.2020թ.)
3. Sharply R., Miraji U. Tourism and Governance in Small Island Developing States (SIDS) // Wiley Online Library. – 2014 (01). – URL: <https://onlinelibrary.wiley.com/doi/epdf/10.1002/jtr.1904> (02.09.2020թ.)
4. Tourism Governance in OECD Countries // Tourism Trends and Policies 2018. – OECD Publishing, Paris. – URL: <https://doi.org/10.1787/tour-2018-en> (04.09.2020թ.)
5. Волостных В.В., Александров В.Л. Государственное управление в сфере туризма // Управленческое консультирование. Раздел «Общество и реформы». – 2017, № 6 – С. 111-120.
6. Ништ С.А., Огнева С.В. Государственное регулирование туриндустрии: возможные пути развития // Вестник ассоциации вузов туризма и сервиса. Раздел «Социально-экономические исследования в туризме и сервисе в России и за рубежом». – 2015, № 2, том 9 – С. 3-13.

7. Трухачев А.В., Варивода В.С. Государственное регулирование в сфере туризма на региональном уровне // Фундаментальные исследования. Раздел «Экономические науки». – 2014, № 11 (часть 1) – С. 155-160.

### МОДЕЛИ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ СФЕРОЙ ТУРИЗМА В РАЗНЫХ СТРАНАХ МИРА

**Армине Матенцян**

ЕУ, Кафедра Туризма и сервиса

В статье представлены результаты изучения опыта разных стран по созданию государственных органов, ответственных за развитие туризма. Автором обосновано мнение о существовании четырех основных моделей государственного управления в сфере туризма в современных условиях. Рассмотрена распространенность моделей в туристских макрорегионах мира, что, в свою очередь, основано на результатах анализа некоторых закономерностей социально-экономического развития стран, применяющих ту или иную модель государственного регулирования в сфере туризма.

***Ключевые слова:** Туризм, государственное регулирование, национальная туристская администрация, индустрия туризма, модель управления.*

### MODELS OF TOURISM STATE REGULATION IN DIFFERENT COUNTRIES OF THE WORLD

**Armine Matentsyan**

EU, Chair of Tourism and Service

The article presents the results of studying the experience of different countries in creating state bodies responsible for the development of tourism. The opinion on existence of four main models of state

## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

---

administration in tourism field is substantiated by the author. The spreading of models in the world tourist macroregions is also considered. This, in its turn, is based on the results of the analysis of some socio-economic development patterns in the countries which apply any models of state regulation in the field of tourism.

**Keywords:** Tourism, state regulation, national tourism administration, tourism industry, management model.

*Ընդունվել է տպագրության՝ 05.10.2020թ.  
Գրախոսվել է՝ 02.11.2020թ.*



## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

### ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

#### *Արմինե Մապենցյան*

*ԵՀ, Զբոսաշրջության և սպասարկման ամբիոն  
matentsyana@gmail.com, +374 99 845283*

Հոդվածում քննարկվում է Հայաստանում զբոսաշրջության և սպասարկման ոլորտի որակյալ կադրերի պատրաստման խնդիրը: Ընդգծվում է, որ այս հարցում հիմնական դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ է զարգացնել բազմաստիճան մասնագիտական կրթության փոխկապակցված համակարգ, որի կենտրոնական օղակը կկազմեն բարձրագույն կրթական հաստատությունները: Հիմնավորվում է այն գաղափարը, որ զբոսաշրջության ոլորտում որակյալ և արդյունահեն կրթություն ապահովելու համար, ակադեմիական տեսական գիտելիքների տրամադրմանը զուգահեռ, անհրաժեշտ է կիրառել ուսուցման կազմակերպման պրակտիկա-կողմնորոշված մոտեցում (*practice-oriented approach*): Ներկայացված են զբոսաշրջային կրթության ոլորտում առաջատար երկրների փորձի ուսումնասիրության որոշ արդյունքներ: Բերված են մի շարք եվրոպական հեղինակավոր մասնագիտացված կրթահամալիրների գործունեության օրինակներ, որոնք կարող են կիրառելի լինել հայաստանյան բուհերում:

**Հիմնաբառեր.** *Զբոսաշրջության արդյունաբերություն, մասնագիտական կադրերի պատրաստում, բարձրագույն կրթություն, աշխատանքային պահանջներ, պրակտիկա-կողմնորոշված ուսուցում:*

Զբոսաշրջության և սերվիսի բնագավառի առանցքային խնդիրներից է որակյալ կադրերի պատրաստումը: Զբոսաշրջային ձեռնարկության, ինչպես նաև հյուրընկալման բազմապրոֆիլային ոլորտի ցանկացած ճյուղում սպասարկման կազմակերպման հաջողությունն ուղղակիորեն կախված է անձնակազմից, նրա մասնագիտական գիտելիքներից և հմտություններից: Ոլորտի կադրային ներուժը, էական դերակատարություն ունենալով երկրում մատուցվող ծառայությունների և հյու-

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

րընկալման կազմակերպման որակի ապահովման գործում, անմիջականորեն ազդում է երկրի զբոսաշրջային գրավչության և վարկանիշի ձևավորման գործընթացների վրա: Հայաստանում զբոսաշրջության արդյունաբերության արագ զարգացումը և այս կապակցությամբ վերջին երկու տասնամյակների ընթացքում ոլորտի համար կադրերի պատրաստմամբ զբաղվող բավական մեծ թվով ուսումնական հաստատությունների հայտնվելը դեռևս ամբողջությամբ չեն լուծել ուսուցման որակի խնդիրը: Ազգային զբոսաշրջային շուկայում մշտապես նկատվում է որակյալ կադրերի, հատկապես մենեջերական միջին և բարձր օղակի մասնագետների որոշակի պակաս:

Զբոսաշրջության և սերվիսի ոլորտի կադրերի նախապատրաստումն ունի մի շարք առանձնահատկություններ. աշխատողի արհեստավարժությունը ենթադրում է ոչ միայն անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների, այլև մի շարք անձնական որակների առկայություն, ինչպես, օրինակ՝ բարեկրթություն և վարվելակարգ, հաղորդակցման փայլուն հմտություններ, էթիկական նորմերի իմացություն, սթրեսակայունություն, հոգեբանական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն, տարբեր երկրների և ժողովուրդների ավանդույթների և սովորույթների իմացություն, օտար լեզուներին և ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներին գերազանց տիրապետելու հակվածություն, վերլուծական մտածելակերպ, խնդիրների գնահատման և լուծումներ առաջարկելու նախաձեռնողականություն, և այլն:

Հայաստանում զբոսաշրջության արդյունաբերության մասնագետների պատրաստումը համեմատաբար նոր գործ է (տուրիզմի և հյուրընկալման ոլորտի կրթություն առաջարկող առաջին ֆակուլտետները երկրում հայտնվել են միայն 2000-ականների սկզբին): Խորհրդային շրջանի սոցիալ-տնտեսական լիովին այլ իրավիճակում, գործնականում չկային զբոսաշրջային հատուկ կրթություն առաջարկող ուսումնական հաստատություններ: Սուղ տնտեսության պայմաններում տուրիզմի ոլորտի աշխատատեղերը բավականին գրավիչ էին, քանի որ դրանք ապահովում էին պակաս սթրեսային աշխատանք, ստեղծում էին գոնե երկրի ներսում հետաքրքիր ճանապարհորդությունների և լրացուցիչ

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

(հաճախ՝ ստվերային) վաստակի հնարավորություն: Այս աշխատատեղերը լրացվում էին ամենատարբեր հիմնական կրթությամբ մասնագետներով: Զբոսաշրջության ոլորտում մասնագիտական վերապատրաստման հիմքը կազմում էին լավագույն դեպքում 1-2 ամսվա դասընթացները, որոնք կազմակերպվում էին Որակավորման բարձրացման ինստիտուտի կողմից՝ Արհմիությունների Համամիութենական կենտրոնական խորհրդին կից գործող էքսկուրսիոն բյուրոների և հանրահայտ «Ինտուրիստ» համակարգի աշխատակիցների համար:

Ներկայումս մեր երկրում ձևավորվել է զբոսաշրջության և սպասարկման ոլորտի կադրերի պատրաստման բազմամակարդակ համակարգ, որն ապահովում է միջին մասնագիտական, բարձրագույն (բակալավրիատ և մագիստրատուրա), հետբուհական կրթություն, ինչպես նաև լրացուցիչ՝ անհրաժեշտ հմտությունների խորացմանն ուղղված մասնագիտական վերապատրաստման տարբեր ծրագրեր: Կադրերի պատրաստման այս համակարգում կենտրոնական է դարձել զբոսաշրջության ոլորտի բարձրագույն մասնագիտական կրթության օղակը, որը տարբեր բուհերում իրագործվում է «Զբոսաշրջություն» և «Սերվիս», ինչպես նաև «Կառավարում» («Տուրիզմի կառավարում» նեղ մասնագիտացմամբ) մասնագիտական կրթական ծրագրերի միջոցով: [1]

Այնուամենայնիվ, զբոսաշրջության ոլորտի կադրեր պատրաստող կրթական հաստատություններն այսօր էլ բախվում են բազմաթիվ դժվարությունների. նեղ մասնագիտացումների ընտրությունը, դասընթացների և դրանց բովանդակության որոշումը, անհրաժեշտ ժամաքանակների սահմանումը, տեսության և պրակտիկայի օպտիմալ հարաբերակցության պահպանումը, նյութատեխնիկական բազայի ապահովումը, կրթական գործունեություն իրականացնելու համար հավատարմագրեր ունենալու անհրաժեշտությունը և այլն: Իսկ բիզնես ոլորտի ձեռնարկությունները շարունակում են պնդել, որ գործում են որակյալ կադրերի պակասի պայմաններում: Հայաստանում վաղուց ի վեր ձևավորվել է աշխատանքի ընթացքում մասնագիտական գիտելիքներ և հմ-

---

<sup>1</sup> Ավելի վաղ գործում էին նաև «Սոցիալ-մշակութային ծառայություն և զբոսաշրջություն» և «Սոցիալ-մշակութային գործունեություն» մասնագիտական կրթական ծրագրերը:

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

տություններ ստանալու «ավանդույթ»: Զբոսաշրջային ձեռնարկությունների ղեկավարներից շատերը անձնակազմի հավաքագրման ժամանակ բնավ չեն առաջնորդվում հավակնորդի մոտ հատուկ մասնագիտական կրթության մասին դիպլոմի առկայությամբ՝ դա բացատրելով համալսարանների շրջանավարտների պատրաստվածության ոչ բավարար մակարդակով: Աշխատաշուկան կամ պահանջում է մի քանի տարվա աշխատանքային փորձ ունեցող և «ոտքի վրա ամուր կանգնած» մասնագետի, կամ էլ կենտրոնանում է երիտասարդ աշխատողին անհրաժեշտ գործառույթները հնթացս սովորեցնելու վրա:

Քանի որ զբոսաշրջության և հյուրընկալման արդյունաբերությունը գործնական աշխատանքի ոլորտ է, որտեղ պրակտիկ հմտություններն ու կարողությունները ավելի են կարևորվում, քան հիմնարար տեսական գիտելիքը, ապա ծագող հարցերի պատասխանները պետք է փնտրել հենց գործնական հարթությունում: Դեպի աշխատաշուկայի պահանջները կողմնորոշված արդյունահեն ուսուցումը, այսինքն՝ ուսանողի մոտ գործնական կարողությունների զարգացումը, ուստի և գործնական պարապմունքներին և արտադրական պրակտիկային մեծ քանակությամբ ժամերի հատկացումը պետք է լինի բուհի շրջանավարտին աշխատանքի ընդունելու կարևոր նախապայմաններից մեկը:

Աշխատանքային գործունեության նախապատրաստման ժամանակ կարևոր դեր են խաղում կրթության այնպիսի ձևերը, ինչպիսիք են ոլորտի հայտնի մասնագետների հետ հանդիպումերը, գործնական սեմինարները, ամառային թեմատիկ դպրոցները, մասնագիտական հմտությունների մրցույթները՝ փորձագիտական համայնքների կողմից շնորհվող սերտիֆիկատներով ու մրցանակներով, դրամաշնորհային ստեղծագործական նախագծերում ընդգրկումը, բուհի բազայի վրա պրակտիկ հմտությունները հղկելու համար ոլորտային ձեռնարկությունների մոդելների ստեղծելն ու ուսանողների ուժերով դրանց աշխատացնելը, և այլն: Մեր երկրի բուհական գործունեության պրակտիկայում ուսումնառության այդպիսի ձևաչափերը դեռ հազվադեպ են կյանքի կոչվում, ինչպես նաև դեռևս թույլ են աշխատաշուկայի և կրթական համակարգի միջև կապն ու ակտիվ փոխգործակցության մեխանիզմները:

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Այս առումով, կարևոր է ուսումնասիրել տուրիզմի արդյունաբերության համար կադրերի պատրաստման միջազգային փորձը, որն անհամեմատ ավելի երկար և հարուստ պատմություն ունի: 1893 թվականին Լոզանում (Շվեյցարիա) բացվեց École Hôtelière de Lausanne-ը՝ առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը, որն առ այսօր մասնագետներ է պատրաստում հյուրընկալման ոլորտի համար և համարվում է աշխարհի լավագույն բուհերից մեկը [2]: Ավելի ուշ՝ 20-րդ դարի սկզբին եվրոպական տարբեր երկրներում բացված ուսումնական հաստատություններում ստեղծվեց «Ճանապարհորդություններ և տուրիզմ» մասնագիտացումը: Այսօր էլ նշված երկու ուղղությունները՝ հյուրընկալման կազմակերպումն ու տուրիզմի կառավարումը, մնում են հիմնական և առաջարկվում են աշխարհի հարյուրավոր բուհերի կողմից՝ առանձին կամ համակցված կրթական ծրագրերի շրջանակներում:

Ներկայումս զբոսաշրջության ոլորտի կադրերի պատրաստման ճանաչված առաջատարներն են Շվեյցարիան, Ավստրիան, Իսպանիան, Իռլանդիան, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ավստրալիան և Նոր Զելանդիան [3-4]: Այս երկրների կրթական հաստատություններում մասնագետների պատրաստման համակարգի հիմնական առանձնահատկությունը դեպի գործնականը կողմնորոշումն է (practice-oriented approach), տեսության և պրակտիկայի ճիշտ համադրությունը: Ուսումնառությունը տեղի է ունենում իրականությանը հնարավորինս մոտեցված պայմաններում, որի համար կիրառվում են կրթական համալիրի բազայի վրա ստեղծվող այսպես կոչված ուսումնական պոլիգոններ՝ տարբեր մասնագիտացված մոդուլներով, օրինակ՝ մոդուլ «տուրիստական գործակալություն», մոդուլ «հյուրանոց» (ընդ որում, առանձնացված գործառույթային ենթամոդուլներով՝ «ընդունարան», «հյուրանոցային համար» կամ «լոբբի-բար»), մոդուլ «ռեստորան», մոդուլ «էքսկուրսիոն բյուրո» և այլն: Այս նույն սկզբունքով, համապատասխան ֆակուլտետի բազայի վրա կարող են գործել նաև տրանսպորտային-լոգիստական, գովազդային, գիտանախագծային և զանազան այլ ուսումնական մոդուլներ (ըստ նեղ մասնագիտացումների), որոնց հարթակներում որոշակի պարբերականությամբ ուսանողների առջև կարող են

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

հանդես գալ ոլորտի լավագույն մասնագետները՝ փորձի փոխանցման տարբեր ծրագրերով:

Ավելորդ է ասել, որ ուսանողի կողմից նման պայմաններում ձեռք բերված նախնական հմտությունները պետք է նաև գործնականորեն փորձարկվեն և ամրապնդվեն իրական արտադրական պրակտիկայի ժամանակ, որին անհրաժեշտ է տրամադրել շատ ավելի մեծ ժամաքանակ, քան սահմանվում է մեր կրթական ծրագրերով: Վերը նշված երկրների ՄՈՒՀ-երում պրակտիկան, որպես կանոն, անցկացվում է ուսումնառության առաջին իսկ կուրսից սկսած մինչև կրթական ծրագրի ավարտը՝ ամեն տարի նվազագույնը 4 ամիս տևողությամբ, տվյալ երկրում և երկրի սահմաններից դուրս գտնվող առաջատար կազմակերպություններում:

Սույն հոդվածի հեղինակը, Ավստրիայում որակավորման բարձրացման 6-ամյա դասընթացներ և ստաժավորում անցնելու ժամանակ, անձամբ ուսումնասիրել է զբոսաշրջության ոլորտի կադրեր պատրաստող մի քանի հեղինակավոր միջազգային բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթության կազմակերպման համակարգերը: Լինելով Վիեննայի Տնտեսագիտության և բիզնեսի կառավարման համալսարանի Տուրիզմի և ժամանցի ինստիտուտում (Vienna University of Economics and Business Administration / Institute for Tourism and Leisure Studies), Վիեննայի «Մոդուլ» համալսարանում (MODUL University Vienna), Կրեմս ան դեր Դոնաու քաղաքի Կիրառական գիտությունների համալսարանում (IMS University of Applied Sciences Krems), Բադ Լեոնֆելդենի Տուրիզմի Արևմտա-արևելյան քոլեջում (West-East College für Tourismus, Bad Leonfelden)՝ հեղինակը կարող է վկայել, որ բոլոր այս հաստատություններում կրթական գործընթացները կազմակերպվում են վերը նկարագրված եղանակով, իսկ արտադրական և նախադիպլոմային պրակտիկաներն անցկացվում են նշված կրթօջախների պաշտոնական գործընկեր հանդիսացող խոշոր անդրազգային տուրօպերատորական և հյուրանոցային կորպորացիաներում, որոնք գործում են Ավստրիայում և արտերկրում:

Անհրաժեշտ է զարգացնել փոխգործակցությունը կրթական հաստատությունների և զբոսաշրջության ոլորտի հասարակական հատվա-

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Ժի միջև, որը միավորում է ոլորտի փորձագիտական հանրության առավել հայտնի ու ակտիվ ներկայացուցիչներին: Համալսարանների և զբոսաշրջության արդյունաբերության ոչ առևտրային միավորումների (միությունների, ասոցիացիաների, ֆեդերացիաների, գիլդիաների) միջև համագործակցության հուշագրերի շրջանակներում հնարավոր է իրականացնել հետևյալը.

- Մասնագիտական արդի թեմաների շուրջ կազմակերպել համատեղ խորհրդաժողովներ և գիտաժողովներ ուսանողների ակտիվ ներգրավմամբ:
- Անցկացնել զբոսաշրջության և հյուրընկալման ոլորտի մասնագիտացումների համար կրթական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակմանն ուղղված միջոցառումներ:
- Օգտագործել հասարակական կազմակերպությունների ազդեցությունը՝ տուրիզմի և հյուրընկալման արդյունաբերության լավագույն ձեռնարկությունների հետ պայմանագրերի կնքման և տարեկան քվտաների հատկացման համար, որպեսզի ուսանողների ուսումնաարտադրական և նախադիպլոմային պրակտիկաների կազմակերպման գործընթացը լինի կանխատեսելի և երաշխավորված:
- Զբոսաշրջության ոլորտի լավագույն փորձագետներին ներգրավել որոշակի դասընթացների շրջանակներում գործնական պարապմունքներ, սեմինարներ և վարպետաց դասեր անցկացնելու նպատակով:

Ի վերջո, Հայաստանում զբոսաշրջության զարգացման հետագա հաջողությունը կախված է նրանից, թե արդյո՞ք ոլորտում կաշխատեն ամենաբարձր չափանիշներով կրթված՝ լայն մասնագիտական մտահորիզոն ունեցող կադրեր: Պրակտիկա-կողմնորոշված մոտեցումը՝ հիմնարար ակադեմիական տեսական գիտելիքների մատուցմանը զուգընթաց, կարող է ապահովել բուհում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի իրական արդյունահեռությունն ու մրցունակությունը՝ զբոսաշրջության խիստ մրցակցային աշխատաշուկայի համար որակյալ մասնագետներ պատրաստելու գործում:

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

### Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ կառավարության որոշում 23 հոկտեմբերի 2014 թվականի N 1191-Ն «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին» – URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=93665> (31.08.2020թ.)
2. École Hôtelière de Lausanne – URL: <https://info.ehl.edu/hospitality-management-programs> (07.09.2020թ.)
3. QS World University Rankings / Hospitality & Leisure Management – URL: <https://www.topuniversities.com/university-rankings/university-subject-rankings/2019/hospitality-leisure-management> (10.09.2020թ.)
4. The best universities for Hospitality and Tourism degrees – URL: <https://www.kaplanpathways.com/about/news/best-universities-for-hospitality-and-tourism-degrees/> (10.09.2020թ.)
5. Брель О.А., Губанова М.И. Тенденции развития профессионального туристского образования в современном социокультурном пространстве // Профессиональное образование в России и за рубежом, 2 (22) 2016. – С. 55-59.

### НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПОДГОТОВКИ СПЕЦИАЛИСТОВ СФЕРЫ ТУРИЗМА И СЕРВИСА В РАМКАХ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ

**Армине Матенцян**

ԵՄ, Кафедра туризма и сервиса

В статье рассматривается проблема подготовки специалистов для сферы туризма и сервиса в Армении. Подчеркивается, что для преодоления основных трудностей в данном вопросе необходимо развивать взаимосвязанную систему многоуровневого профессионального образования, центральным звеном которой будут высшие учебные заведе-



ния. Обоснована идея о том, что для обеспечения качественного, продуктивного образования в сфере туризма, параллельно с предоставлением академических теоретических знаний, необходимо применять практико-ориентированный подход в обучении (practice-oriented approach). Представлены некоторые результаты изучения опыта ведущих стран в сфере туристского образования. Приведены примеры из деятельности ряда авторитетных европейских специализированных образовательных учреждений, которые могут быть применены в вузах Армении.

**Ключевые слова:** *Индустрия туризма, подготовка профессиональных кадров, высшее образование, требования рынка труда, практико-ориентированное обучение.*

### **SOME ISSUES ON PREPARING SPECIALISTS FOR TOURISM AND SERVICE SPHERE WITHIN HIGHER EDUCATION**

**Armine Matentsyan**

EU, Chair of Tourism and Service

The article deals with the problem of preparing specialists for tourism and service sphere in Armenia. In order to overcome the main difficulties in this field, it is necessary to develop an interconnected system of multi-level professional education, the central link of which will be represented by the higher educational institutions. The idea is substantiated by the statement that in order to ensure a high-quality, effective education in tourism sphere, in line with providing academic theoretical knowledge, it is necessary to apply a practice-oriented approach in teaching. Some results of the analysis of leading countries' experience in the field of tourism education are presented by the author. Examples which are stated from the activities of several top European specialized educational institutions can be applied in the universities of Armenia.

## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

---

**Keywords:** *Tourism industry, preparation of professional personnel, higher education, labor market requirements, practice-oriented education.*

*Ընդունվել է տպագրության՝ 05.10.2020թ.  
Գրախոսվել է՝ 02.11.2020թ.*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### **Ա. Ճուղորդյան, Ն. Կիրակոսյան, Ն. Խաչատրյան**

Փոփոխությունների կառավարման մեթոդաբանական հարցեր .....3

### **Л. Тумян, А. Анисян**

Пути выявления и устранения препятствий на внутреннем рынке  
ЕАЭС ..... 11

### **Ա. Հովհաննիսյան, Ա. Սիմոնյան**

Կառավարելիության նորմայի արդի վիճակը ՀՊՏՀ կառուցվածքային  
որոշ ստորաբաժանումների օրինակով ..... 25

### **H. Mahjoub**

Manageral aspects of blockchain and smart contracts in supply chains .....38

### **Հ. Դավթյան**

Մոտիվացիոն միժոցառումների հիմնական ձևերը, գործոնները և  
դրանց ոչ արդյունավետ լինելու պատճառները..... 47

### **Ա. Հանիսյան, Լ. Թումյան**

Նոր տեսակի կորոնավիրուսային (covid-19) համավարակի  
ազդեցությունը եվրասիական տնտեսական միության, այդ թվում՝  
Հայաստանի Հանրապետության առևտրի վրա .....56

### **B. Tajfirouz**

The concept of interrilation between female labor resource management  
and enhancement of human development index .....83

### **B. Soury**

Payment settlement entities liquidity management issues in RA .....94

### **А. Аветян**

Некоторые особенности и проблемы стратегии управления  
городским хозяйством «Умный город» ..... 106

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### **Թ. Մանասերյան**

Հայաստանի գյուղատնտեսության արդի հիմնախնդիրները և  
պետության դերը..... 114

**Ա. Քթոյան, Ե. Մանուկյան, Ա. Շիրինյան, Ա. Մատինյան,  
Դ. Հարությունյան**

Կրթության բյուջետային ծախսերի արդյունավետության  
գնահատումը գործոնային վերլուծության գործիքակազմի  
կիրառմամբ.....125

**Կ. Հաջյան**

Առողջության ապահովագրության շուկայի ֆինանսական ներուժի  
ավելացման հնարավորությունները Հայաստանի  
Հանրապետությունում ..... 145

**ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**Ն. Տոնոյան, Լ. Խաչատրյան**

Սահմանադրական բարեփոխումների բացթողումները և նոր  
բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը  
Հայաստանի Հանրապետությունում ..... 164

**Ա. Թադևոսյան**

Մեղադրյալի դատավարական կարգավիճակին առնչվող որոշ  
հիմնահարցեր ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի  
նախագծի լույսի ներքո .....174

**Դ. Թումասյան, Մ. Մելիքսեթյան**

Փոխապատվաստման վիրահատություն կատարելու կանոնները  
խախտելու ընդհանուր քրեաիրավական բնութագիրը ..... 186

**Ա. Բիշարյան**

Տեղական ինքնակառավարման մոդելները. համեմատական-  
իրավական վերլուծություն ..... 199

**Լ. Սուքիասյան**

Ընտրական իրավունքի սահմանափակման գերմանական մոդելը..... 216

**Ա. Մուշեղյան**

Դատական համակարգի անկախության հիմնախնդիրները .....226

**Ա. Գրիգորյան**

Իրավաբանական անձը որպես վնասի հատուցման  
սահմանադրական իրավունքի կրող. ոչ նյութական վնասի  
վերաբերող հիմնահարցեր ..... 235

**Ձ. Ապրեսյան**

Սեփականությունից զրկման սահմանադրական տարրերը և կարգը..... 252

**Ձ. Սմբատյան**

Անձի լաված լինելու իրավունքը խախտելը որպես վարչական ակտի անվավերության հիմք (վարչական իրավախախտումների համատեքստում) ..... 267

**Հ. Ղազարյան**

Վարչական ակտի պարտադիր վերադասության կարգով բողոքարկման հիմնախնդիրները ..... 279

**Լ. Սարգսյան**

Եվրոպական դատարանի դիրքորոշումները՝ որպես դատական իշխանության նկատմամբ վստահության բարձրացման երաշխիք ..... 299

**Մ. Մինասյան**

Մարդու իրավունքների և ոստիկանության էթիկայի հարաբերակցությունը եվրոպական փորձի համատեքստում ..... 312

**Ա. Մուշեղյան**

Դատավորների հավակնորդների թեկնածուների ընտրման և պատրաստման որոշ ասպեկտներ Հայաստանի Հանրապետությունում հաշվի առնելով նաև Ֆրանսիայի Հանրապետության և Իսպանիայի Թագավորության փորձը ..... 321

**Ձ. Սմբատյան**

Գրավոր վարչական ակտի մասին հասցեատիրոջն իրազեկելու և իրազեկման պատշաճության շուրջ ծավալվող հիմնահարցերը ..... 332

**В. Петросян**

МКНР и репродуктивные права: прогресс, пробелы и дальнейшие перспективы ..... 343

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

**Գ. Նիկողոսյան, Վ. Մանուկյան**

Իրական թվի ամբողջ կամ կոտորակային մաս պարունակող որոշ հավասարումների և անհավասարումների մասին ..... 355

**ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Հ. Թովմասյան, Ա. Դարբինյան**

Անգլալեզու զբոսաշրջային գովազդի բառագործառական  
առանձնահատկությունները .....369

**A. Khachatryan**

Key issues in translation quality assessment .....384

**E. Davtyan**

Linguistic manifestations of gender conditioned by sex characteristics.....396

**G. Gasparyan**

The study of graffiti from multimodal communication perspective.....412

**ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Ա. Նաղոյան, Գ. Մինասյան**

Զինծառայողի ապահարմարված վիճակի ազդեցությունը  
դրսևորվող վարքի վրա ..... 424

**Մ. Քելոյան**

Հոգեբանական հասունության որոշ բաղադրիչների շարժընթացն  
աջակցող մասնագիտությունների ուսանողների շրջանում ..... 435

**Ն. Հարությունյան**

Հայ երիտասարդների հոգեբանական առանձնահատկությունները  
սերունդների տեսության տեսանկյունից..... 443

**Ա. Բաղրամյան**

Զինծառայության պայմաններին բնորոշ կոնֆլիկտները և դրանց  
կապը զինծառայողի անձի ագրեսիվության մակարդակի հետ..... 452

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**Ա. Հովհաննիսյան**

«Դարի գործարքը» և իսրայելա-պաղեստինյան հակամարտության  
կարգավորման Թրամփի փորձերը .....468

**ՄԱԹԵՄԱՏԻԿԱ**

**Բ. Գեղամյան, Վ. Հայրապետյան**

Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա երկայնական  
տատանումներ կատարող օպտիմալ ձողերի նախագծում .....485

**ՋԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ**

**А. Даниелян**

Необходимые инновации в туроператорской деятельности в  
условиях развития самотуризма..... 492

**Ա. Մատենցյան**

Զբոսաշրջության ոլորտի պետական կառավարման մոդելները  
աշխարհի տարբեր երկրներում.....503  
Բարձրագույն կրթության շրջանակներում զբոսաշրջության և  
սպասարկման ոլորտի մասնագետների պատրաստման որոշ  
խնդիրներ .....521

**Խմբագրության հասցեն. Հայաստանի Հանրապետություն,  
Երևան 0037, Դավիթ Անհաղթի 10**

**Հեռ.** (374 10) 24 00 38

**Ֆաքս** (374 10) 24 00 38

**Վեբ կայք** <http://www.eua.am>

**Էլ. փոստ.** [info@eua.am](mailto:info@eua.am)

Համակարգչային ձևավորումը՝ Մ. Գևորգյանի  
Սրբագրությունը՝ Գ. Պետրոսյանի

Ստորագրված է տպագրության 05.12.2020թ.

Ֆորմատ՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ:  
Տպագրական 33.5 մամուլ: Տպաքանակ՝ 100:

Եվրոպական համալսարան հրատարակչություն,  
Երևան 0037, Դավիթ Անհաղթի 10

Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչության տպարանում:  
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Գևորգ Քոչարի փ. 21:  
Հեռ.՝ (+374 10) 52-88-00:  
E-mail: [astghik59@gmail.com](mailto:astghik59@gmail.com)